ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1918-1920 ԹԹ.

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԵՄՀ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1918-1920 ԹԹ.

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Պ 505

*Հրատարակության է երաշխավորել*
*Երևանի պետական համալսարանի*
*գիտական խորհուրդը*

Գրախոսներ՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս ***Աշոտ Մելքոնյան***
պատմ. գիտ. դոկտ., պրոֆ., Իրանի Իսլամական
Հանրապետությունում Հայաստանի
Հանրապետության առաջին արտակարգ և
լիազոր դեսպան ***Վահան Բայբուրդյան***

**Պետրոսյան Գեղամ**

Պ 505 Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918 – 1920 թթ., գիրք առաջին/ Գ. Հ. Պետրոսյան: – Եր.: ԵՊՀ հրատ., 2023, 484 էջ:

Գրքում համակողմանի քննության են առնվում Տրապիզոնի, Բաթումի թուրք-անդրկովկասյան, մասնավորապես հայ-թուրքական դիվանագիտական առաջին և երկրորդ բանակցային գործընթացները Առաջին աշխարհամարտի տարիներին տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների, սուր հակասությունների, ռազմաքաղաքական և տնտեսական շահերի բախման բարդագույն պայմանների համատեքստում:

Անկողմնակալ հայացքով հանգամանորեն վերլուծվում և ամբողջացվում են աշխարհաքաղաքական բարդ պայմաններում վերականգնված Հայոց անկախ պետականության արտաքին քաղաքականության և դիվանագիտության առանցքային մի շարք հիմնախնդիրներ Հայաստանի Հանրապետության գոյության առաջին շրջանում (1918 թ. հունիս-նոյեմբեր):

Աշխատությունը նախատեսված է միջազգայնագետների, դիվանագետների, պատմաբանների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանների համար: Կարող է օգտակար լինել բուհերի միջազգային հարաբերությունների և պատմության ֆակուլտետների բակալավրի ուսանողների և մագիստրանտների համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2599-6

© ԵՊՀ հրատ., 2023
© Պետրոսյան Գ., 2023

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГЕГАМ ПЕТРОСЯН

# МЕЖДУНАРОДНОЕ ПОЛОЖЕНИЕ И ВНЕШНЯЯ ПОЛИТИКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В 1918-1920 ГГ.

КНИГА ПЕРВАЯ

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
2023

*Рекомендовано к публикации ученым советом*
*Ереванского государственного университета*

Рецензенты: докт. ист. наук, проф., академик
НАН РА **Ашот Мелконян,**
докт. ист. наук, проф., чрезвычайный
и полномочный посол Республики Армения
в Исламской Республике Иран **Ваан Байбурдян**

**Гегам Петросян**

Международное положение Республики Армения и внешняя политика в 1918-1920 гг., книга первая / Г. А. Петросян: - Ер.: изд. ЕГУ, 2023, 484 с.

В книге рассматривается первый и второй турецко-закавказский, в частности, армяно-турецкий дипломатический переговорный процесс в регионе в годы Первой мировой войны в контексте сложных геополитических перипетий, острых противоречий, столкновения военно-политических, экономических интересов.

Подробно анализируются внешнеполитические и дипломатические вопросы восстановленной в сложных условиях армянской независимой государственности в первый период существования Республики Армения (май-ноябрь 1918 г.).

Книга рассчитана на международников, дипломатов, историков, политологов и широкую читательскую аудиторию и может быть полезна для студентов факультета международных отношений.

© Издательство ЕГУ, 2023
© Петросян Г., 2023

YEREVAN STATE UNIVERSITY

GEGHAM PETROSYAN

# INTERNATIONAL SITUATION AND FOREIGN POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA IN 1918-1920

BOOK ONE

YEREVAN
YSU PUBLISHING HOUSE
2023

*Recommended for publication by the*
*Academic Council Yerevan State University*

Reviewers: Doctor of History, Prof., Academician
of NAS RA **Ashot Melkonyan**,
Doctor of History, Prof., Ambassador Extraordinary
and Plenipotentiary of the Republic of Armenia to the
Islamic Republic of Iran **Vahan Bayburdyan**

Gegham Petrosyan
International Situation and Foreign Policy of the Republic of Armenia in 1918-1920, book one, G. H. Petrosyan: - Yerevan, YSU Publishing House, 2023, 484 p.

The book examines the first and second Turkish-Transcaucasian, in particular, the Armenian-Turkish diplomatic negotiation process in the region during the First World War in the context of complex geopolitical upheavals, sharp contradictions, clashes of military-political and economic interests.

The foreign policy and diplomatic issues of the Armenian independent statehood restored in difficult conditions in the first period of the existence of the Republic of Armenia (May-November 1918) are analyzed in detail.

The book is intended for international affairs specialists, diplomats, historians, political scientists and a wide readership and may be useful for students of the Faculty of International Relations.

© YSU Publishing House, 2023
© Petrosyan G. 2023

Իմաստությունը ոչ յուսալքման, ոչ էլ աջ ու ձախ ամբաստանելու մէջ է: Ընկերային կեանքի փոթորկայոյզ վայրկեաններին մեծագոյն առաքինությունը մտքի ու գործի հաւասարակշռությունը պահպանելն է: Ոչ լալ պէտք է, ոչ զայրանալ, այլ՝ հասկանալ: Հասկանալուց յետոյ միայն կարելի է ուղղել անցեալի սխալները եւ գծել ապագայ կեանքի ճշմարիտ ճանապարհը: Հասկանա՛լ, - իսկ հասկանալու համար անհրաժեշտ է տեղեակ լինել իսկական փաստերին եւ ազատ մնալ խուժանավարական յոխորտանքներից ու թեթեւ, չհիմնաւորուած եզրակացութիւններից:

Սիմոն Վրացեան

Мудрость не в отчаянии и не в огульных обвинениях. Великое благородство секунд исполненной бурь и волнений социальной жизни состоит в уравновешивании мысли и дела. Не надо ни плакать, ни гневаться, надо понять. Лишь поняв, можно исправить ошибки прошлого и начертить правильный путь будущей жизни. Понять, а чтобы понять, необходимо знать реальные факты и быть свободным от угроз бесчинствующей толпы и от поверхностных, необоснованных заключений.

Симон Врацян

Wisdom is not in despair and not in sweeping accusations. The great nobility of seconds of social life filled with storms and unrest lies in the balancing of thought and deed. No need to cry or get angry, you need to understand. Only by understanding can one correct the mistakes of the past and draw the right path for the future life. To understand, and in order to understand, it is necessary to know the real facts and be free from the threats of the rampaging crowd and from superficial, unfounded conclusions.

Simon Vratsyan

# ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

1918 թ. մայիսի վերջին՝ երկարատև ընդմիջումից հետո, վերականգնվեց Հայոց անկախ պետականությունը: 2023 թվականի մայիսի վերջին հայ ժողովուրդը նշելու է տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների և վայրիվերումների բարդագույն պայմաններում ծնունդ առած Հայաստանի առաջին Հանրապետության հայուրհինգամյակը: Այն մեծ խորհուրդ ունի: Անկախությունը ձեռք բերվեց ազգային զարթոնքի, ժողովրդական-ազատագրական պայքարի շնորհիվ՝ ազգամիջյան լարված հարաբերությունների, ինչպես նաև դիվանագիտական և ռազմական դիմակայությունների բարդագույն պայմաններում:

1918-1920 թթ. Հայաստանի առաջին Հանրապետության պատմության մասին գրվել են ստվարածավալ հատորներ, լույս են ընծայվել բազում հոդվածներ թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքում: Ընդհանուր առմամբ, այդ կարևորագույն ու բախտորոշ ժամանակաշրջանի վերաբերյալ գրեթե չկա որևէ դրվագ, որ դուրս մնացած լինի պատմաբանների ուշադրությունից: Սակայն որքան էլ արտառոց թվա, առ այսօր հրապարակի վրա չկա հայ պատմաբանների, միջազգայնագետների, քաղաքագետների կողմից կատարված մի ամբողջական ուսումնասիրություն, որը խորությամբ, համապարփակ ու նորովի ներկայացնի Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը, արտաքին քաղաքականությունը և դիվանագիտական բանակցային գործընթացները հանրապետության գոյության երեք փուլերում, այսինքն՝ անկախ պետականության վերականգնումից մինչև հանրապետության անկումը 1920 թ.

դեկտեմբերին: Մինչդեռ այդ հիմնախնդիրը ամբողջական ու համընդգրկուն ներկայացնելը ունի արդիական մեծ հնչեղություն, ամենից առաջ հանրապետության արտաքին քաղաքականության և դիվանագիտության պատմության համար՝ այն ճշմարտացիորեն և անկողմնակալ գնահատելու տեսակետից:

**Հայաստանի առաջին Հանրապետության պատմությունը, իր արտաքին և ներքին քաղաքականության մեջ տեղի ունեցած կտրուկ շրջադարձերով պայմանավորված, բաժանվում է երեք հիմնական փուլերի.**

**1. 1918 թ. հունիս-նոյեմբեր**. դեռևս շարունակվում էր Առաջին աշխարհամարտը, Անդրկովկասը զավթել էին թուրք-գերմանական զորքերը, հայ ժողովուրդը ծվարել էր փախստականներով ու սովյալներով լի մի բուռ հողի վրա (շուրջ 12 հազար քառակուսի կիլոմետր):

**Այս փուլին բնորոշ էին Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու կառավարության՝ օրվա հրամայականից բխող արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները:**

**2. 1918 թ. դեկտեմբեր-1920 թ. ապրիլ**. ավարտվեց Առաջին աշխարհամարտը: Ուժը կորցրին օսմանյան Թուրքիայի հետ 1918 թ. հունիսի 3-ի պարտավորագիրը և հունիսի 4-ի դաշնագիրը: **Քաղաքական նոր պայմաններում Հայաստանի Հանրապետությունը դրսևորեց արևմտյան կողմնորոշում**՝ ակնկալելով, որ Համաձայնության պետությունները կգնահատեն հայ ժողովրդի ներդրումը պատերազմի հաղթության գործում և, հաշվի առնելով նրա կրած մեծ զոհողությունները, կլուծեն հայության արդար պահանջը՝ ստեղծել միացյալ ու անկախ Հայաստան:

**Այս փուլում Հայաստանի Հանրապետությունը, դուրս գալով շրջափակումից, շարունակեց հարաբերություններ հաստատել ոչ միայն իր հարևանների, այլ նաև Ռուսաստանի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների և այլ երկրների հետ:** Հանրապետությունն աստիճանաբար ընդարձակեց իր սահմանները՝ ներառելով գրեթե ամբողջ Արևելյան Հայաստանը (70 հազար քառակուսի կիլոմետր):

**3. 1920 թ. մայիս-դեկտեմբեր**. գեներալ Անտոն Դենիկինի Կամավորական բանակի պարտությունից հետո ավարտվեց Ռուսաստանի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների հետ Առաջին հանրապետության հարաբերությունների երկամյա գործընթացը: **Քաղաքական նոր պայմաններում Հայաստանի Հանրապետությունը սկսեց բանակցել Խորհրդային Ռուսաստանի հետ:**

**Սույն հետազոտության շրջանակներում ընթերցողին ներկայացվող առաջին գրքում (1918 թ. հունիս-նոյեմբեր) հիմնախնդիրը համակողմանի քննության է առնվում Առաջին աշխարհամարտի տարիներին տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների, սուր հակասությունների, ռազմաքաղաքական և տնտեսական շահերի բախման բարդագույն պայմանների համատեքստում:** Դիվանագիտական բանակցային գործընթացների տրամաբանությունը ամբողջացնելու նպատակով քննության են առնվում նաև Տրապիզոնի, Բաթումի թուրք-անդրկովկասյան, մասնավորապես հայ-թուրքական դիվանագիտական առաջին և երկրորդ բանակցային գործընթացները, օսմանյան Թուրքիայի կողմից ռազմաքաղաքական մարտավարության և դիվանագիտական փակուղիների պայմաններում Հայոց ազգային կենտրոնական խորհրդի և

նրա արտաքին հարաբերությունների բաժնի վիթխարի ջանքերը:

Անկողմնակալ հայացքով հանգամանորեն վերլուծվում և ամբողջացվում են Հայոց անկախ պետականության արտաքին քաղաքականության և դիվանագիտության առանցքային մի շարք հիմնախնդիրներ Հայաստանի Հանրապետության գոյության առաջին փուլում (1918 թ. հունիս-նոյեմբեր):

Անկասկած, տարածաշրջանային լրջագույն մարտահրավերների պայմաններում հայ դիվանագիտությունը դրսևորել է նաև անփորձություն, ունեցել խարխափումներ, սխալներ՝ պայմանավորված և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներով: Դրանք այսօր կարիք ունեն նորովի և հանգամանալից վերլուծության ու մեկնաբանության, ինչը քաղաքական և գիտական շատ կարևոր նշանակություն ունի, հատկապես անցյալի քաղաքական դասերը հաշվի առնելու և դրանք չկրկնելու առումով:

Մերօրյա դեպքերն ու ցավալի իրադարձությունները մեկ անգամ ևս հաստատում են, որ պատմությունը կարծես թե կրկնվում է: Հայաստանի Հանրապետությունն այսօր գործ ունի նույն երկրների՝ թշնամիների ու բարեկամների հետ, և դարձյալ օրակարգում են արտաքին քաղաքական, դիվանագիտական համանման դժվարություններ ու խնդիրներ: Ըստ էության, փոխվել է միայն ժամանակը:

Հիմնախնդիրը ամբողջացնելու նպատակով մենագրությունում ներառվել են հեղինակի որոշ հրապարակումներ:

Սույն գիրքը անշուշտ կունենա նաև իր հաջորդ հատորները, որոնցում համակողմանիորեն քննության կառնվեն և կամբողջացվեն հանրապետության արտաքին քաղաքականության և դիվանագիտության առանցքային մի շարք հիմ-

նախնդիրներ Հայաստանի Հանրապետության գոյության երկրորդ և երրորդ փուլերում:

Պատմությունը «եթե»-ներ չի ընդունում: Անցյալի պատմությունը պետք է ճանաչել այնպիսին, ինչպիսին եղել է՝ իր ողջ ողբերգականությամբ և վեհությամբ հանդերձ: Միայն այդ դեպքում կարող ենք լավ հասկանալ նաև այսօրվա մարտահրավերների էությունը, դրանց ակունքները և լուծման հեռանկարները:

*Հեղինակի կողմից*

# ВМЕСТО ПРЕДИСЛОВИЯ

В конце мая 1918 года, после долгого отсутствия, была восстановлена государственность Армении. В конце мая 2023 года армянский народ отметит 105-летие Первой Республики Армения, созданной в условиях сложнейших геополитических процессов и перипетий в регионе. Независимость была достигнута благодаря пробуждению национального самосознания, народно-освободительной борьбе на фоне напряженных межнациональных отношений, а также в условиях сложнейшего дипломатического и военного противостояния.

Об истории Первой Республики Армения 1918-1920 гг. были написаны объемистые тома, издано множество статей как в Армении, так и в диаспоре. В общей сложности почти нет эпизода, связанного с этим важнейшим и судьбоносным историческим периодом, который остался бы вне поля зрения историков. Однако, как ни странно, по сей день нет ни одного целостного исследования, подготовленного историками-международниками, в котором на глубинном уровне и в новом свете были бы представлены международное положение Республики Армения, внешняя политика и дипломатические переговорные процессы на трех этапах существования республики, то есть начиная с восстановления независимой государственности до падения республики в декабре 1920 г. Между тем представление этой проблемы в целостном и всеобъемлющем виде крайне актуально, и, в первую очередь, для истории внешней политики и дипломатии с точки зрения ее правильной и объективной оценки.

**История Первой Республики Армения, обусловленная резкими поворотами, имевшими место в ее внешней и внутренней политике, делится на три основных этапа:**

1. июнь-ноябрь 1918 года: еще продолжалась Первая мировая война, Закавказье было захвачено турецко-германскими войсками, армянский народ, включая беженцев и обездоленных и изнуренных голодом своих собратьев, занимал маленький клочок земли (около 12000 кв. км.).

Для этого исторического этапа при премьер-министре Республики Армения Оганнес Каджазнуни характерны были те основные направления внешней политики, которые были обоснованы императивом дня.

2. декабрь- 1918 г. - апрель 1920 г.: закончилась Первая мировая война. Потеряли силу взятые обязательства перед Турцией от 3 июня 1918 года, а также договор от 4 июня. **В новых политических условиях Республика Армения стала придерживаться западной ориентации**, надеясь на то, что страны Антанты оценят вклад армянского народа в победу и, учитывая огромные его жертвы, откликнутся на справедливые требования армян, касающиеся создания объединенной независимой Армении.

**На этом этапе Республика Армения, выйдя из блокады, продолжила политику налаживания отношений не только с другими странами и со своими соседями, но и с несоветскими (антибольшевистскими) государственными образованиями России**. Республика постепенно расширила свои границы, включив в свой состав почти всю Восточную Армению (70000 кв. км.).

3. май- декабрь 1920 г.: после поражения Добровольческой армии генерала Антона Деникина завершился двухлетний процесс формирования отношений Республики Армения с несоветскими (антибольшевистскими) государственными образованиями России. **В новых политических условиях Армения изменила свой политический вектор, начав переговоры с Советской Россией.**

**В рамках данного исследования в представляемой читателю первой книге (июнь-ноябрь 1918 г.) проблема всесторонне рассматривается в контексте геополитических процессов в регионе в годы Первой мировой войны в сложнейших условиях острых противоречий, столкновения военно-политических и экономических интересов.** С целью целостного анализа логики дипломатических переговорных процессов рассматриваются также дипломатические переговоры в Трапезунде, турецко-закавказские в Батуми, в частности, армяно-турецкий первый и второй переговорный процесс, огромные усилия Армянского национального центрального совета и его отдела по внешним сношениям в условиях военно-политической тактики Османской Турции и создавшихся дипломатических тупиков.

Проводится объективное детальное исследование ряда ключевых проблем внешней политики и дипломатии независимого государства Армении на первом этапе существования (июнь-ноябрь 1918 г.).

Несомненно, в условиях серьезных вызовов в регионе армянская дипломатия проявила также неопытность, допустив ошибки, обоснованные как объективными, так и субъективными причинами. Последние, на сегодняшний день, нуж-

даются в скрупулёзном анализе и комментариях, что имеет важное политическое и научное значение, в особенности с точки зрения имевших место политических ошибок, дабы не повторить их в будущем.

Сегодняшняя ситуация и печальные события еще раз подтверждают, что история повторяется. В настоящее время Армения имеет дело с теми же странами - вражескими и дружественными, и вновь на повестке дня стоят идентичные внешнеполитические и дипломатические вопросы. По сути, изменилось лишь время.

Для целостного представления проблемы в монографии нашли место также ряд публикаций автора.

Настоящая монография, несомненно, будет иметь продолжение. В следующих томах предметом исследования станут ряд ключевых проблем, касающихся внешней политики и дипломатии Республики Армения, охватывающих второй и третий этап ее существования.

История не любит сослагательного наклонения. Историю прошлого надо знать в ее объективном виде - во всем ее драматизме и величии. Лишь при таком подходе мы можем постичь суть сегодняшних политических вызовов, понять их истоки и перспективы решения.

***От автора***

# INSTEAD OF A PREFACE

In late May 1918, after a long break, the independence of Armenia was restored. On May 28 2023, the Armenian people will celebrate the 105th anniversary of the First Republic of Armenia created in the conditions of the most complex geopolitical processes and ups and downs in the region. Independence was achieved thanks to the awakening of national self-consciousness, the people's liberation struggle against the backdrop of tense interethnic relations, as well as in the face of the most difficult diplomatic and military confrontation.

Many volumes have been written about the history of the First Republic of Armenia of 1918-1920, many articles have been published both in Armenia and the Diaspora. Perhaps, there is no episode associated with this most important and fateful historical period that would remain the attention of historians. However, oddly enough, to this day there is not a single holistic study prepared by historians and specialists in international relations, that would deeply present the international position of the Republic of Armenia, its foreign policy and diplomatic negotiation processes during the three stages of the existence of the Republic in a new light – from the restoration of independent statehood until the fall of the republic in December 1920. Meanwhile, it is extremely important to introduce this problem in a complete and comprehensive way, and, first of all, for the sake of history of foreign policy and diplomacy to assess it correctly and impartially.

**The history of the First Republic of Armenia, determined by the sharp turns that took place in its foreign and domestic policy, is divided into three main stages:**

1. June-November 1918: The First World War was still going on, the Transcaucasia was captured by the Turkish-German troops, the Armenian people, including refugees and their destitute and starving brethren, occupied a small piece of land (about 12,000 sq. km.).

**This historical period under Prime Minister Hov. Kajaznuni was characterized by those main directions of foreign policy that were justified by the imperative of the day.**

2. December 1918 - April 1920: The First World War ended. The obligation concluded with Turkey on June 3, 1918 and the allied treaty of June 4 became invalid. **In the new political conditions, the Republic of Armenia demonstrated Western orientation,** hoping that the Entente countries would appreciate the contribution of the Armenian people to the victory and, taking into consideration its huge sacrifices, respond to the just demands of the Armenians regarding the creation of a united independent Armenia.

**At this stage, the Republic of Armenia, having overcome the blockade, continued the policy of establishing relations not only with its neighbors, but also with non-Soviet (anti-Bolshevik) state entities in Russia and other countries.** The Republic gradually expanded its borders, including almost all of Eastern Armenia (70,000 sq. km.).

3. May-December 1920: after the defeat of the Volunteer Army of General Anton Denikin, the two-year process of forming relations between the Republic of Armenia and the non-Soviet

(anti-Bolshevik) state formations of Russia was completed. **Under the new political conditions, Armenia changed its political vector by starting negotiations with Soviet Russia.**

In the first book within the framework of this study presented to the reader (June-November 1918) the problem has been comprehensively considered in the context of geopolitical processes, the most difficult conditions of acute confrontations, clash of military-political and economic interests in the region during the First World War. For the purpose of a holistic analysis of the logic of the diplomatic negotiation processes, the diplomatic negotiations in Trebizond, the Turkish-Transcaucasian negotiations in Batumi, in particular, the Armenian-Turkish first and second negotiation processes, the huge efforts of the Armenian National Central Council and its department for foreign relations in the context of the military-political tactics of Ottoman Turkey and the resulting diplomatic impasses have been focused on.

A detailed impartial study of a number of key problems of foreign policy and diplomacy of the independent statehood of Armenia during the first stage of the existence of the Republic (June-November 1918) has been made.

Undoubtedly, in the face of serious regional challenges, Armenian diplomacy also demonstrated inexperience, made mistakes, for both objective and subjective reasons. Today all this needs a serious analysis and comments, which is of great political and scientific importance, especially from the point of view of the political mistakes so as not to repeat them in the future.

The current situation and sad events once again confirm that history repeats itself. At present, Armenia is dealing with the same countries – hostile and friendly, and again identical foreign policy

and diplomatic issues are on the agenda. In fact, only time has changed.

For a general presentation of the problem, a number of publications of the author have also found a place in the monograph.

This monograph will undoubtedly have a continuation. The following volumes will research a number of key issues related to the foreign policy and diplomacy of the Republic of Armenia, covering the second and third stages of its existence.

History takes no ifs. One must have an impartial picture of the history of the past - with all its drama and grandeur. Only with this approach can we comprehend the essence of current political challenges, understand their origins and prospects for solutions.

***By Author***

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

## 1. Հայոց ազգային ժողովի և Հայոց ազգային խորհրդի ստեղծումը (1917 թ. փետրվար-հոկտեմբեր)

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը ցնցեց ոչ միայն բուն Ռուսաստանը, այլև անգամ հսկայածավալ կայսրության հեռավոր ծայրամասերը, այդ թվում՝ Կովկասը:

Հայաստանով մեկ նույնպես ծայր առան ինքնաբուխ, ինչպես նաև կազմակերպված ցույցեր, քայլերթեր և այլն:

Հետհեղափոխական ժամանակաշրջանում տեղի ունեցան հայ ժողովրդի համար շրջափուլային, բախտորոշ պատմական կարևորագույն իրադարձություններ: Գլխավորը, իհարկե, 1918 թ. մայիսի վերջին հայկական անկախ պետականության վերականգնումն էր, որը ձեռք բերվեց ազգային զարթոնքի, ժողովրդական և ազատագրական պայքարի, ազգամիջյան լարված հարաբերությունների, ինչպես նաև տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների, սուր հակասությունների, ռազմաքաղաքական և տնտեսական շահերի բախման, դիվանագիտական և ռազմական դիմակայությունների պայմաններում:

Փետրվարյան հեղափոխության հետևանքով Ռուսաստանում իշխանությունն անցավ Պետական դումայի ժամանակա-

վոր կոմիտեին, իսկ մարտի 3-ին վերջինիս փոխարեն ստեղծ-վեցին ժամանակավոր կառավարություն և բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդներ, որով և երկ-րում հաստատվեց երկիշխանություն: Մարտի 7-ին Կովկասի փոխարքան և կենտրոնական իշխանության մյուս ներկայա-ցուցիչները, չսպասելով երկրամասի կարգավիճակի մասին ժամանակավոր կառավարության որևէ որոշման, հեռացան Թիֆլիսից: Մարտի 9-ին ժամանակավոր կառավարությունը Կովկասի փոխարքայության փոխարեն ստեղծեց **Անդրկովկա-սյան հատուկ կոմիտե** (ՕԶԱԿՈՄ), որի կազմում ընդգրկվեցին Պետական դումայի անդրկովկասցի հինգ անդամներ (Վ. Խառ-լամով, Մ. Պապաջանյան, Պ. Պերկերզև, Մ. Զաֆարով և Կ. Աբաշիձե)*: Մարտի 18-ին հասնելով Թիֆլիս՝ իր գործունե-ությունը սկսեց Անդրկովկասյան հատուկ կոմիտեն, որն օժտված էր գերագույն իշխանության իրավասությամբ[1] և երկ-րամասի հետագա գործունեությունը կազմակերպելու, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատում պատերազմի իրավուն-քով գրավված շրջաններում քաղաքացիական վարչություն կազմելու ու կառավարելու լիազորությամբ: Նույն օրը՝ մարտի 18-ին, ՕԶԱԿՈՄ-ի հատուկ հրահանգով հանձնարարվում է տեղերում ստեղծել իշխանության նոր մարմիններ՝ գործադիր կոմիտեներ, որոնց վրա էր դրվում հողային, աշխատանքային, պարենավորման և այլ հարցերի կազմակերպումը[2]: Սակայն

---

* Ժամանակավոր կառավարությունը, ընդառաջելով վրաց մենշևիկների ցանկությանը, որոշ ժամանակ անց Պ. Պերկերզևի փոխարեն Անդրկովկա-սյան հատուկ կոմիտեի կոմիսար նշանակեց Ա. Չխենկելուն:

[1] Տե՛ս **Վ. Հ. Մելիքյան**, 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը և Հայաստա-նը, Երևան, 1997, էջ 61:

[2] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 313, ց. 1, գ. 1, թ. 70:

Անդրկովկասյան հատուկ կոմիտեին հաջողվեց իրականացնել այս ծրագրերի միայն մի մասը: Դրա պատճառը երկրամասում շարունակ խորացող քաղաքական, տնտեսական, սոցիալական ու կառավարման ճգնաժամն էր: Անդրկովկասյան հատուկ կոմիտեն չկարողացավ կարգավորել նաև տարածաշրջանում ազգամիջյան հարաբերությունների հարցերը, որոնք առանձնակի սրության էին հասել դեռևս ցարիզմի օրոք և սպառնում էին վերաճել ազգամիջյան ընդհարման: Փետրվարյան հեղափոխությունը «Կովկասը կը մատնէր ազգամիջեան խառնարանի մը,- գրում է Կ. Սասունին:- Յեղափոխութեան եւ համամարդկային իտէալներու անուան տակ, ազգային պայքարն էր որ կը մղուեր: Վրացին, թուրք-թաթարը եւ հայը կովկասեան բեմի վրա իրենց տեղն ու դիրքը կորոշէին»[3]:

Երկրամասն ուներ չափազանց խայտաբղետ ազգային կազմ, հասարակական-քաղաքական բազմապիսի ուժեր, որոնց շահերը ոչ միայն խիստ հակասական էին, այլև երբեմն թշնամական: Ժամանակավոր կառավարությունը, հաշվի առնելով այս հանգամանքը, որոշեց Անդրկովկասյան հատուկ կոմիտեն կազմել ազգային սկզբունքով: Այսինքն՝ ժամանակավոր կառավարությունը Անդրկովկասում ստեղծում էր իր տեղական մարմինը: Այդ առիթով Ալ. Խատիսյանը գրում է. «Ինքը, կեդրոնական իշխանութիւնը հաշուի էր առած տեղական ազգութեանց շահերը եւ ջանացած էր չափով մը գոհացում տալ անոնց»[4]: Սակայն Անդրկովկասյան հատուկ կոմիտեն իր

---

[3] **Կ. Սասունի**, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Թրքահայոց գաղթաշարժերը և անոնց դերը՝ Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Պեյրութ, 1966, էջ 141-142:

[4] **Ալ. Խատիսեան,** Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 5:

կառավարման ութ ամիսներին երկրամասում չկարողացավ կայուն ու վերահսկելի իրավիճակ ստեղծել: Ավելին՝ տեղերում կառավարման նոր մարմիններ ստեղծելու նրա անհաջող ու անվճռական փորձերն է՛լ ավելի նպաստեցին անիշխանության տարածմանն ու հաստատմանը. «Անդրկովկասին վերաբերող քիչ թե շատ կարեւոր նշանակութիւն ունեցող ոչ մէկ հարց չէր կարող լուծում ստանալ… ազգային հարցի լուծումը իր ամբողջութեան մեջ յետաձգուած էր մինչեւ Սահմանադիր ժողով»[5]: Իշխանության հին կառույցների վերացումը և նորերի ստեղծումն առաջ բերեցին խառնաշփոթ ու խիստ անկայուն վիճակ, և Ժամանակավոր կառավարության նշանակած Անդրկովկասյան հատուկ կոմիտեն շատ շուտով զրկվեց հեղինակությունից և հեղափոխությունը ղեկավարելու ունակությունից:

**Շարունակ վատթարացող քաղաքական, տնտեսական, սոցիալական պայմանները և անիշխանության հանգեցրած կառավարման ճգնաժամը անհրաժեշտություն առաջացրին՝ տեղական առանձնահատկությունները հաշվի առնելով 1917 թ. վերջերին ստեղծել նաև երրորդ իշխանությունը (բազմիշխանություն)՝ հանձինս հայոց, վրաց և թաթարների Ազգային խորհուրդների:** Լեոն այդ առնչությամբ գրում է. «Դրանք իսկապես ազգային կառավարություններ էին, յուրացնում էին գերագույն վարչական գործառնություններ. տուրքեր նշանակել, զորաժողով հայտարարել և այլն: Այդ ազգային կառավարություններով իրապես սկիզբ եր դրվում յերկրի բաժանման յերեք ազգությունների մեջ, այնպես վոր կենտրոնական կովկասյան կառավարությունը ստիպված եր լինում շատ անգամ

[5] «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1933, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 72:

այդ ազգային անջատականությունների ցանկություններին և վորոշումներին հարմարվել»[6]:

Քաղաքական բարդ ու լարված պայմաններում ձևավորված Ազգային խորհուրդները, ի հակակշիռ իշխանության մյուս մարմինների, աստիճանաբար ձեռք բերեցին լայն ժողովրդականություն և ազդեցություն ոչ միայն Անդրկովկասում, այլև նրա սահմաններից դուրս: Դրանցից առանձնապես եռանդուն գործունեություն ծավալեց **Հայոց ազգային կենտրոնական՝ խորհուրդը՝՝,** որը ձևավորվեց 1917 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում գումարված արևելահայերի համախորհրդակցության (համագումարի) ժամանակ[7]: Վերջինիս մասնակցում էին հայ հասարակության գրեթե բոլոր խավերը՝ քաղաքական կուսակցությունների, մտավորականության, հոգևոր դասի ներկայացուցիչները: Հոկտեմբերի 2-ի նիստը նախագահող Հովի. Քաջազնունին հրապարակում է

---

[6] **Լեո**, Անցյալից, Հուշեր, Թղթեր, Դատումներ. Հայոց հարց. – Հայ հեղափոխական դաշնակցություն. Համաշխարհային պատերազմ. – Հեղափոխություն, Թիֆլիս, 1925, էջ 363:

՝ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը՝ որպես գերագույն գործադիր մարմին, ստեղծումից օրեր անց դարձավ «կենտրոնական» (Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհուրդ), որովհետև իր հրահանգներով և ցուցումներով համակարգում էր տարածաշրջանի, Ռուսաստանի խորհրդային և հակախորհրդային պետական կազմավորումների, Ուկրաինայի և այլ երկրների հայաշատ քաղաքների Հայոց ազգային խորհուրդների գործունեությունը:

՝՝ Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի նստավայրը հայաշատ Թիֆլիսն էր: Այն արևելահայերի հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային և կրթական խոշոր կենտրոն էր: Այստեղ էին հաստատվել արևելահայ մտավորականության սերուցքը և տարածաշրջանի հայ քաղաքական գործիչների հիմնական մասը:

[7] Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմ.՝ Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան, պատ. խմբ.՝ Ա. Վիրաբյան, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2004, էջ 159-225:

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական (բոլշևիկների) կուսակցության Թիֆլիսի կոմիտեի (քարտուղար՝ Ա. Միկոյան) հայտարարությունը. «Թե՛ այդ կուսակցությունը (բոլշևիկյան - Գ. Պ.), թե՛ ինչպես նաև Թիֆլիսի կոմիտեն, նաև Շուշվա և Ալեքսանդրապոլի իրենց կազմակերպությունները բոյկոտ են հայտարարել ազգային համախորհրդին և կարգադրել, որ իրենց անդամները նրան չմասնակցեն»[8]: Բոլշևիկյան կոմիտեն հրավիրվելիք հայկական ազգային խորհրդակցության վերաբերյալ սեպտեմբերի 19-ի իր բանաձևում նշում է. «…. եռանդուն կերպով բողոքել այդ դավաճանության դեմ, նշանակել այն որպես նացիոնալիստական, հակաբանվորական և հակառևոլյուցիոն»[9]:

Համահավաքը քննարկեց Ժամանակավոր կառավարությանն առնչվող և հայ ժողովրդի առջև ծառացած էական մի շարք հարցեր, որոնք հրատապ էին տվյալ ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակում: Ռուսական բանակը ազատագրել էր Արևմտյան Հայաստանը, ռուսական պետական կառավարման համակարգը մուտք էր գործել ազատագրված հայկական նահանգներ, և, բացի այդ, հետփետրվարյան յոթ ամիսներին երկրում խորացող ռազմական, քաղաքական ու տնտեսական ճգնաժամի հետևանքով հասունանում էր հեղափոխության պոռթկման նոր վտանգ:

Համախորհրդակցությունը լսեց և քննարկեց քաղաքական, տնտեսական, վարչական կառավարման, ազգամիջյան հարաբերությունների, փախստականների և պարենավորման, իշխանության և ռազմաճակատի ամրապնդման, դպրոցների

---

[8] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 21, թ. 8:

[9] Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 270:

ազգայնացման և այլ հարցեր[10]: Ներկայացվեց նաև Հայոց ազգային բյուրոյի* հաշվետվությունը (զեկուցողներ՝ Ալ. Խատիսյան, Ն. Աղբալյան), որը ներառում էր այդ մարմնի ղեկավարած կամավորական շարժումը, հայկական կոտորածների շարժառիթները, արևմտահայերի նկատմամբ վերաբերմունքը, ռուսական կողմնորոշում ընդունելու իրարամերժ մոտեցումները, Հայաստանի ինքնավարության հարցում ցարական Ռուսաստանի կեղծ խոստումները, անհաջողության և ձախողումների պատճառները և անելիքները Փետրվարյան հեղափոխությունից հետո տարածաշրջանում ստեղծված իրավիճակում[11]:

Ա. Խաչատրյանը, անդրադառնալով Ազգային բյուրոյի ղեկավարած կամավորական շարժման հարցի քննարկմանը, խիստ անաչառ գնահատական է տալիս. «**Թէ Թուրքիայի քա-**

---

[10] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17, թ. 1:

* Հայոց ազգային բյուրոն ստեղծվել է 1912 թ. Թիֆլիսում, Ռուսական կայսրության հայաշատ կենտրոնների համագումար-խորհրդակցությունում: Նրա կազմում ընդգրկվել են հայ ազգային գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունների, մտավորականների և հոգևոր դասի ներկայացուցիչներ: Նպատակն էր աջակցել Ամենայն հայոց կաթողիկոսին Հայկական հարցի լուծումը պաշտպանելու գործում և սերտ կապ պահպանել արտասահմանյան ազգային պատվիրակությունների և Կ.Պոլսի պատրիարքարանի հետ: Ազգային բյուրոն հիշյալ բոլոր հիմնարկությունների հետ աջակցում էր հայանպաստ քարոզչությանը Ռուսաստանում և այլուր: Առաջին աշխարհամարտի տարիներին բյուրոն ռուսական բանակի կազմում կազմակերպել է հայ կամավորական զինված ջոկատներ՝ Օսմանյան կայսրության դեմ կռվելու համար: Էայն գործունեություն է ծավալել նաև Թուրքիայի կողմից ցեղասպան քաղաքականության հետևանքով հայրենազրկված հայ փախստականներին օթևանով, սննդամթերքով և անհրաժեշտ այլ պարագաներով ապահովելու ուղղությամբ: 1917 թ. հոկտեմբերի 13-ին Թիֆլիսում հրավիրված համախորհրդակցության վերջին նիստով Ազգային բյուրոյի գործունեությունը դադարեցվեց:

[11] Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 4, 214-223:

**ղաքականութեան և հայերու կոտորածի վերաբերեալ արտայայտութիւնները՝ իբր թէ կովկասահայերու կամաւորական շարժումն է պատճառը այս ահաւոր կոտորածին և այլն, միանգամայն զուրկ են պատմական հիմքէ և կը հաստատեն այսպես մտածողներու տգիտութիւնը թուրք ծրագրի և դիւանագիտութեան նկատմամբ»**[12]:

Համախորհրդակցությունը քննարկեց նաև «ազգամիջյան և ինքնորոշման» հարցերը: Իրողություն է, որ համախորհրդակցությունը պաշտպանում էր Ռուսաստանի ժամանակավոր կառավարության քաղաքականությունը և Անդրկովկասն ու Հայաստանը ընդունում էր մի ընդհանուր պետության սահմաններում, սակայն ակնարկում էր նաև ինքնավարություն և ազգային պետականություն ունենալու անհրաժեշտության մասին, ազգամիջյան հարցի լուծումը տեսնում էր ազգերի ինքնորոշման իրավունքի կենսագործման մեջ: Համահավաքում ընդունված «ազգամիջյան և ինքնորոշման մասին» բանաձևում ասվում էր. «Ընդունելով ազգերի ինքնորոշման իրավունքը, հայ ժողովուրդը պիտի ձգտի իրականացնել իր այդ իրավունքը պետականության հիմունքներով և սկզբունքներով, անդրկովկասյան ժողովուրդների դեմոկրատիայի փոխադարձ համաձայնությամբ»[13]: Համախորհրդակցության նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ «պետականության հիմունքներն ու սկզբունքները» կարող էին և պետք է լինեին ինքնավարության որևէ ձև կամ կարգավիճակ: Ընդ որում, հարցի լուծումն ակնկալվում էր միայն Ռուսաստանի սահմանադիր ժողով հրավիրելուց հետո, այդտեղ մշակված և ընդունված

[12] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 644, թ. 11:
[13] Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 211:

որոշումների հիման վրա: Հարցի նախապատրաստության ուղղությամբ կարևոր աշխատանք էր կատարվել 1917 թ. ամռանը Պետրոգրադում կայացած խորհրդակցության ժամանակ, որին մասնակցել էին նաև Ալ. Խատիսյանը (Խատիսով) և Ա. Շահխաթունյանը (Շահխատունի): Վերջինս առաջարկության նախագիծ էր մշակել Անդրկովկասում տեղական ինքնակառավարման (զեմստվոյի) համակարգ հաստատելու և երկրամասը նոր սահմանաբաժանման ենթարկելու մասին: Փաստորեն, համախորհրդակցությունը հայոց մեջ համոզմունք ձևավորեց մտածելու նաև հայկական անկախ պետականության անհրաժեշտության մասին:

Անշուշտ, Հայոց ազգային բյուրոյի գործունեության պատմությունը առանձին ուսումնասիրության նյութ է: Ընդամենը նշենք, որ համախորհրդակցությունում այդ հարցերի՝ անկաշկանդ ու անկեղծ մթնոլորտում կայացած քննարկումները և քննադատությունները վեր հանեցին անցյալի սխալները՝ պատմական դասեր քաղելով, որի շնորհիվ նոր պայմաններում կյանքի կոչվեց համազգային միասնական պատասխանատու մարմին՝ ավելի կայուն ու զերծ հավակնությունների պառակտիչ ախտանիշից:

Այսպիսով, պատմական դեպքերի բերումով համախորհրդակցությունը իրականացրեց իր հիմնական և գլխավոր նպատակը, այն է՝ ստեղծեց համազգային միասնական պատասխանատու մարմին՝ հանձին **Հայոց ազգային խորհրդի**, որը փորձելու էր լուծել հայության առջև ծառացած բազմազան և բազմաբնույթ խնդիրները: Դրանով դադարեց Հայոց ազգային բյուրոյի գործունեությունը: Համախորհրդակցության վերջին նիստում՝ հոկտեմբերի 13-ի երեկոյան, միահամուռ համաձայնությամբ առաջարկվում է ընտրել ազգային հարցերի կառա-

վարման երկու մարմին՝ **Ազգային ժողով և Ազգային խորհուրդ**: Ազգային ժողովը լինելու էր գերագույն օրենսդիր մարմին Անդրկովկասի և հայկական գավառների համար: Այն բաղկացած էր 35 անդամից, որոնցից 25-ը առաջադրված էին չորս կուսակցություններից, հինգը՝ Արևմտահայ ազգային խորհրդից, մեկական թեկնածու՝ Ամենայն հայոց կաթողիկոսի, Պետրոգրադի, Մոսկվայի, Նոր Նախիջևանի (ներառյալ Ռոստովի) և Բաքվի հայկական կոմիտեների կողմից[14]: Սակայն պատմական դեպքերի բերումով Հայոց ազգային ժողով գումարվեց միայն մեկ անգամ՝ 1918 թ. ապրիլի 15-18-ը Թիֆլիսում[15]: Նիստում քննարկվեց Անդրկովկասի անկախությունից (ապրիլի 22) հետո Սեյմի հայ խմբակցության անդամների և Հայոց ազգային խորհրդի փոխհարաբերությունների հարցը:

Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը Ազգային ժողովի գերագույն գործադիր մարմինն էր, որն ուղենշելու էր արևելահայոց քաղաքականությունը թե՛ Անդրկովկասում և թե՛ ամբողջ պետության մեջ: Այն բաղկացած էր 15 անդամից (նախագահ՝ Ավ. Ահարոնյան, քարտուղար՝ Ն. Աղբալյան), որոնցից 12-ը կուսակցությունների ներկայացուցիչներ էին, 3-ը՝ անկուսակցականներ[16]: Ինչպես նշվեց, իրադարձությունների բերումով Ազգային ժողով գումարվեց ընդամենը մեկ անգամ, և Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը իր ձեռքում կենտրոնացրեց հայկական քաղաքական շահերը ներկայացնելու և ազգային հարցերի լուծումներով զբաղվելու իրավասությունները: Այս խորհուրդը, փաստորեն, Անդրկովկասում իշխանության միակ մարմինն էր՝ օժտված լայն լիազորու-

---

[14] Տե՛ս նույն տեղը, էջ 223-224:
[15] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 124, թ. 1-22:
[16] Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 224:

թյուններով: Իր գործառույթները իրականացնելու նպատակով Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը ձևավորեց տարբեր բնագավառների՝ տնտեսական, ֆինանսական, զինվորական, գաղթականական, արտաքին հարաբերությունների և այլ բաժիններ: Արտաքին հարաբերությունների բաժինը ղեկավարում էր Ազգային խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանը[17]: Բաժինը բանակցում էր տարածաշրջանի և այլ երկրների հետ:

**Այսպիսով, պատմական դեպքերի բերումով Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը փաստացի իրականացնում էր օրենսդիր և գործադիր մարմինների գործառույթներ, ինչը ապագա հայկական անկախ պետականության ստեղծման հիմք դարձավ: Հենց այս մարմինն էր, որ 1918 թ. մայիսի 30-ին ստանձնեց Անդրկովկասի հայկական գավառների կառավարումը:**

[17] Տե՛ս **Լեռ**, նշվ. աշխ., էջ 363-364:

## 2. Անդրկովկասի ներքին և արտաքին քաղաքական դրությունը (1917 թ. հոկտեմբեր – 1918 թ. փետրվար)

1917 թ. հոկտեմբերի 25-ի (նոյեմբերի 7-ի) բոլշևիկյան հեղաշրջումը նոր ցնցումներ առաջացրեց Ռուսաստանում. երկրի մասնատման լուրջ սպառնալիք էր ստեղծվել: Ճիշտ է, փետրվարյան հեղափոխությունը տապալեց միապետությունը, սակայն այդ շրջանում Ռուսաստանի միասնությանը դեռևս լուրջ վտանգ չէր սպառնում: Իշխանությունը գրաված բոլշևիկների ծայրահեղականությունն ու անհանդուրժողականությունը երկիրը մղեցին քաղաքացիական պատերազմի՝ Ռուսաստանը բաժանելով թշնամական ճակատների: Այդ առնչությամբ Ռուբեն Տեր-Մինասյանը նկատում է. «…. այն ժամանակ կային երեք Ռուսաստան՝ Դենիկինի, Կոլչակի, Լենինի: Երեքն ալ համահավասար ուժեղ, երեքն ալ նոյնքան հավակնություններ ունէին, որ տերը պիտի դառնան ամբողջական Ռուսաստանի, բայց երեքն ալ միմյանց թշնամի»[18]: Հոկտեմբերյան հեղաշրջմամբ բոլշևիկները հրաժարվեցին Փետրվարյան հեղափոխության և Ժամանակավոր կառավարության հռչակած ժողովրդավարական արժեքներից ու զարգացման տեսլականներից:

Երկրամասի ազգային-քաղաքական հիմնական ուժերն ու կուսակցությունները հեղաշրջումն ընդունեցին որպես դավաճանություն և հրաժարվեցին բոլշևիկների իշխանությունը ճանաչելուց: Թեև Կովկասը դե յուրե դեռևս Ռուսաստանի մաս էր

---

[18] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ե հատոր, Թեհրան, 1982, էջ 262:

համարվում, սակայն գոյատևում էր ինքնուրույն և գրեթե անկախ: Կովկասի հետ Ռուսաստանից կտրված վիճակում հայտնվեց նաև հայ ժողովուրդը:

Բոլշևիկյան զինված հեղաշրջումը, բնականաբար, քաղաքական իրավիճակի էական փոփոխությունների հանգեցրեց նաև Անդրկովկասում: Ստեղծված նոր պայմաններում երկրամասի կայունությունը պահպանելու միակ ուղին և երաշխիքը համարվում էին քաղաքական կողմնորոշումը դեպի Ժամանակավոր կառավարությունը և տեղական ինքնակառավարման խելամիտ կազմակերպումը մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումը: Քանի որ Անդրկովկասյան հատուկ կոմիտեն Փետրվարյան հեղափոխությանը հաջորդած ութ ամիսներին չէր կարողացել հաստատել կառավարման կայուն վարչակարգ, անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու Անդրկովկասի նոր իշխանություն: Երկրամասի ազգային-քաղաքական ուժերի և կուսակցությունների միջև ձեռք բերված համաձայնությամբ, առանց լուրջ տարաձայնությունների, Հատուկ կոմիտեն 1917 թ. նոյեմբերի 15 (28)-ին Թիֆլիսում իշխանությունը փոխանցեց նոր կառավարությանը՝ **Անդրկովկասյան կոմիսարիատին**, որին էր հանձնվում ամբողջ Անդրկովկասի կառավարումը:

Կառավարությունը կազմվելու էր ազգային ներկայացուցչականության սկզբունքով, սակայն վրաց մենշևիկները, լավագույնս դասեր քաղելով Փետրվարյան հեղափոխությունից, քաղաքական պայքարից մեկուսացրին «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությանը՝ հապճեպ ստանձնելով կոմիսարիատի առանցքային պաշտոնները և իրենց գերիշխող

դերն ապահովելով[19], իսկ մենշևիկ Ե. Գեգեչկորին՝ որպես կոմիսարիատի նախագահ, միաժամանակ ստանձնեց արտաքին հարաբերությունների ու աշխատանքի նախարարությունների կոմիսարների պաշտոնները, Ա. Չխենկելին՝ ներքին գործերի նախարարության կոմիսարի պաշտոնը: Կառավարությունում հայերին տրվեցին արտաքին հարաբերությունների նախարարության գծով կոմիսարի քարտուղարի (Միք. Թումանյան) և երեք նախարարության՝ ֆինանսների (Խ. Կարճիկյան), պարենավորման (Գ. Տեր-Ղազարյան), խնամատարության (Հ. Օհանջանյան) կոմիսարների պաշտոնները: Երեք օր անց Անդրկովկասյան կոմիսարիատը երկրամասի ժողովուրդներին ուղղված իր առաջին ուղերձում կոչ արեց համատեղ ուժերով լուծելու ներքին և արտաքին երեք կարևոր խնդիրներ՝ 1. Սահմանադիր ժողովի հրավիրում, 2. ազգային հարց, 3. Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի կնքում:

Սակայն նոր կառավարությունը ի վիճակի չեղավ որևէ դրական փոփոխություն բերելու երկրամասի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության բնագավառներում: Այդ ժամանակաշրջանում ազգամիջյան բախումներն է՛լ ավելի սուր բնույթ էին ստացել: Բացահայտ էին հայ ժողովրդի շահերը ոտնահարող վրաց-թաթարական գործարքները: Հայերի, վրացիների և կովկասյան թաթարների հակամարտության և տարաձայնությունների պատճառները գլխավորապես այդ ժողովուրդների քաղաքական տարբեր կողմնորոշումների ու տարածքային սահմանների հարցերն էին:

---

[19] Տե՛ս **Վ. Մելիքյան**, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը, Երևան, 2010, էջ 247:

Անդրկովկասյան կոմիսարիատը երկրամասի ժողովուրդներին ուղղված իր առաջին կոչում թեև հայտարարում էր, որ, որդեգրելով ռուսական հեղափոխության հռչակած՝ ազգությունների լիիրավ ինքնորոշման տեսակետը, կոմիսարիատը միջոցներ կձեռնարկի շուտափույթ և արդարացիորեն վճռելու Անդրկովկասի ազգային խնդիրը[20], սակայն նրա առաջին իսկ քայլերը նոր դժվարությունների հանդիպեցին: Նոյեմբերի 24-ին հրապարակված դեկրետով, որի հեղինակը ներքին գործերի կոմիսար Ա. Չխենկելին էր, Անդրկովկասում կազմվում էին զեմստվոներ՝ ինքնակառավարման տեղական մարմիններ, բայց միայն այն նահանգներում ու գավառներում, որտեղ սահմանները ազգային հատկանիշներով վերանայելու խնդիր չկար: Դեկրետի ծանոթագրությունում նշվում էր, որ վարչական սահմանների տեսակետից անվիճելի են ճանաչվում Բաքվի, Քութայիսի և Սև ծովի նահանգները, Բաթումի և Դաղստանի շրջանները, Սուխումի և Զաքաթալայի գավառները, Թիֆլիսի նահանգի Թիֆլիսի, Սղնաղի, Թելավի, Թիանեթի, Դուշեթի, Գորիի և Ախալցխայի գավառները, Կարսի նահանգի Արդահանի և Օլթիի գավառները:

Դեկրետում միաժամանակ ամրագրված էր, որ դրա հրապարակման օրից մեկ ամսվա ընթացքում Անդրկովկասյան կոմիսարիատը վիճելի նահանգներում և գավառներում կատարում է վարչական սահմանների բաժանում՝ նոր հաստատված տարածքներում ստեղծելով զեմստվոյական հաստատություններ[21]: Ըստ դեկրետի, փաստորեն, սահմանների տեսակետից վիճելի էին ճանաչվում Երևանի նահանգը, Գանձակի նա-

[20] Տե՛ս «Հորիզոն» լրագիր, Թիֆլիս, 19 նոյեմբերի 1917 թ.:
[21] Տե՛ս «Աշխատավոր» լրագիր, Թիֆլիս, 2 դեկտեմբերի 1917 թ.:

հանգի Գանձակի, Ղազախի, Ջիվանշիրի, Շուշիի, Զանգեզուրի և Կարյագինոյի գավառները, Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի և Բորչալուի գավառները[22]: Վիճելի էին հայտարարված նաև մյուս նահանգների այն բոլոր գավառները, որոնցում հայերը բացահայտ մեծամասնություն էին:

Դեկրետով ամրագրված վրաց-թաթարական համագործակցությունը խոչընդոտում էր հայերի տարածքային պահանջները արդար լուծելու հնարավորությունները: Ըստ այդմ՝ դեկրետը նոր վեճերի և առճակատումների առիթ տվեց՝ է՛լ ավելի սրելով հայ-վրացական ու հայ-թաթարական հարաբերությունները: «Մի ամանի մեջ ամփոփուած երեք ժողովուրդները մնում էին իրարու հակառակ եւ նույնիսկ թշնամի»[23],- գրում է Ռուբեն Տեր-Մինասյանը:

Ներքին հակասություններին ու հակամարտություններին շուտով ավելացավ նաև արտաքին ճնշումը Օսմանյան կայսրության կողմից: Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումից երկու օր անց կովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի գլխավոր հրամանատար, ֆերիք (գեներալ) Մեհմեդ Վեհիբ փաշան նամակ-առաջարկով դիմեց ռուսական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Մ. Պրժևալսկուն՝ առաջարկելով «հանուն մարդասիրության վերջ տալ եղբայրասպան պատերազմին» և կնքել զինադադար: Քողարկելով զինադադարի առաջարկի իրական դրդապատճառներն ու նպատակները՝ թուրքական հրամանատարությունը մտադիր էր շարունակել վաղօրոք մշակված իր զավթողական պլանները:

---

[22] Տե՛ս նույն տեղը: Նաև **Վ. Մելիքյան**, Իշխանության հարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան Կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը, էջ 137:

[23] **Ռուբէն**, նշվ. աշխ., էջ 134:

Դեպի Կովկաս ռազմական արշավանք ծավալելու համար օսմանյան բանակին անհրաժեշտ էր ժամանակ շահել և համախմբել ուժերը: 1917 թ. նոյեմբերի 21-ին (դեկտեմբերի 4) զինադադարի կնքման առաջարկը դրվեց Անդրկովկասյան կոմիսարիատի քննությանը[24], և որոշվեց «ընդառաջ երթալ այս առաջարկին», ուստի ճակատի զորավար Ե. Վիշինսկուն հանձնարարվեց համաձայն իրեն տրված լիազորությունների սկսել զինադադարի բանակցություններ[25]: Դեկտեմբերի 5-ին (18) ստորագրվեց Երզնկայի զինադադարը[26], որով պատերազմող կողմերի միջև սահմանագիծ էր հաստատվում Սև ծովից մինչև Վանա լիճը[27]: Նախքան զինադադար կնքելը՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, կովկասյան ճակատի առանձին զորամասերում սկիզբ էին առել ռազմաճակատի քայքայումն ու դասալքությունը: Այդ առիթով ականատես Ա. Խաչատրյանը գրում է. «Ռուս յոգնած և բարոյալքուած բանակը փոխանակ պահելու իր դիրքերը, սպասելով վերջնական հաշտութեան, կը լքէ իր դիրքը և «դէպի տուն» նշանաբանով կը դիմէ դէպի Ռուսաստան: Այս քայքայումն ինքնին արդէն մեծ վտանգ մըն էր Հայաստանին ու հայ ժողովուրդին: Վերադարձող զօրքը ոչ միայն կոչնչացնէր շատ բան, այլ, որ **աւելի վատթարն է, իրենց մթերքը կուտային թուրքերուն և զենքը՝ քիւրտերուն**:

Այսպէս, ճակատը կը պարպուէր ռուս զինուորներէն և երկրի պաշտպանութիւնը կը յանձնուէր հայերուն»[28] (այս և հետա-

---

[24] Տե՛ս **Վ. Մելիքյան**, նշվ. աշխ., էջ 145-181:

[25] **Ա. Խաչատրյան**, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2010, էջ 67:

[26] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 29, թ. 121:

[27] Տե՛ս «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1934, մարտ-ապրիլ, էջ 82:

[28] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 68:

գա բոլոր ընդգծումները մերն են. - Գ. Պ.): Վտանգի տակ էին դրվում ոչ միայն պատերազմի ընթացքում ռուսական զորքերի գրաված՝ Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները, այլև ողջ Արևելյան Հայաստանը: Հայությունը կրկին հայտնվում էր ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի առջև:

Երզնկայի զինադադարից հետո կովկասյան ճակատում (կովկասյան ճակատը ձգվում էր Տրապիզոնից մինչև Ուրմիա լիճ՝ 750 կիլոմետր երկարությամբ) ռուսական զորքերի դասալքությունը զանգվածային բնույթ ստացավ: Ճակատը դատարկվում էր արագորեն, և թուրքական ներխուժման վտանգն ավելի ու ավելի իրական էր դառնում: Դասալիքներին փոխարինում էին նոր կազմավորվող հայկական ազգային զորամասերը, որոնք մեն-մենակ էին մնում թշնամու դեմ: Հայոց ազգային կենտրոնական խորհրդի որոշմամբ ձևավորվեց 50 հազարանոց գունդ՝ գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ[29], որի առաջնահերթ առաքելությունն էր պաշտպանել Արևմտյան Հայաստանը: Այդ օրերին անշեղորեն աճում էր Հայոց ազգային կենտրոնական խորհրդի հեղինակությունը: Խորհուրդը եռանդուն կերպով համախմբեց հայոց բոլոր ուժերը՝ դիմակայելու ներքին ու արտաքին թշնամուն, ու նաև փորձեց արագ զարգացող դեպքերի ընթացքը շրջել հնարավորինս ի նպաստ հայերի: Վրացական ուժերի դիմադրությունն անհուսալի էր, քանի որ ձևական բնույթի էր, թեև վտանգը նրանց էլ էր սպառնում: Այդ առիթով Լ. Շանթը գրում է. «Վրաստանը չէ կրած, մասնաւորապէս, օսմանեան թուրքերու լուծը, եւ չէ ենթարկուած այն անձանց ու մոլեգնոտ գազանութիւններուն ու ոչնչացման, ինչպէս հայերս ենք եղած:

---

[29] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս II, թ. 465:

Եւ այս իրողութեան հետեւանքն այն է, որ ոչ միայն անոնք չունեին թուրքի ատելութիւնը, այլ եւ մեծ վախ մը չունին Թուրքիայի կովկասեան ձգտումներու սպառնալիքէն, նոյնիսկ կը հաւատան, որ հիմա իսկ Թուրքիայի հետ կապուելով կրնան ազատուիլ ռուսներու ճանկէն: Եւ ատոր համար ալ մշտական յարաբերութեան, բաց ու ծածուկ համաձայնութիւններու եւ առուտուրի մէջ էին Թուրքիայի հին ու նոր վարիչներուն հետ, թէ պատերազմի նախօրեակին, թէ պատերազմի ելեւէջներու միջոցին, թէ զինադադարի շրջանին»[30]: Կովկասյան թաթարները ոչ միայն չէին պատրաստվում մասնակցելու կռվին, այլև անհամբերությամբ սպասում էին ցեղակից թուրքական բանակի օր առաջ ժամանելուն: Ռուբեն Տեր-Մինասյանը դեռ 1917 թ. նոյեմբերի 27-ին (դեկտեմբերի 9) Հայոց ազգային կենտրոնական խորհրդում ասել էր. «Զինադադարը միջոց է, որով աշխատում են (թուրքերը - Գ. Պ.) Կովկասի թաթարներին ոտքի հանել»: Նրանք թուրքերի ներխուժման ու հաղթանակի մեջ էին տեսնում իրենց ազգային-քաղաքական տենչերի իրականացումը: Ա. Խաչատրյանը գրում է. «Կովկասի թաթարների վերաբերմունքը Կովկասի գործերում սկզբէն սկսած շատ որոշ է, մարդիկ վրացիներու պէս չեն թաքցներ իրենց մտադրութիւններն ու ձգտումները, որ է. նախ՝ միանգամ ընդմիշտ անջատուել Ռուսաստանէն և երկրորդ՝ յառաջապահն դառնալ օսմաններուն՝ Կովկասին տիրելու համար: Այս երկրորդ կէտի իրագործման համար անհրաժեշտ էր մէջտեղէն վերացնել հայերու յարուցած արգելքը, որ կրնայ կատարուել հայերու ջախջախումով և բնաջնջումով, որ և օսմաններուն ալ բուն նպատակակէտն էր և անոնց կողմէն թելադրուած թաթարնե-

[30] **Լեւոն Շանթ**, Մեր անկախութիւնը, Երևան, 2011, էջ 136:

րուն: Հոս ուրեմն Կովկասի թաթարներն ու օսմանեան թուրքերը կը միանան իրարու ընդհանուր համաթուրք իդեալին շուրջ»[31]:

Օսմանյան կառավարությունը Երզնկայի զինադադարը և կովկասյան ճակատից ռուսական զորքերի հեռանալը ճարպկորեն օգտագործեց իր ռազմատենչ ու զավթողական պլանները իրականացնելու համար: Ստեղծված նպաստավոր պայմանները նա փորձեց օգտագործել երկու հիմնական ճանապարհով՝ **դիվանագիտական և ռազմական**: Մեծ խորաթափանցություն պետք չէր հասկանալու թուրքերի ակնհայտ մտադրությունը. դիվանագիտական բանակցային գործընթացների մարտավարությունը մղելով առաջին պլան՝ նախ փորձում էին ժամանակ շահել թուրքական բանակի ուժերը համախմբելու և համալրելու համար, իսկ մյուս կողմից՝ թուլացնելու երկրամասի ժողովուրդների, մասնավորապես հայության դիմադրողական ոգին: Թուրքերը, ինչպես հետագա դեպքերը ցույց տվեցին, որդեգրել էին դիվանագիտական բանակցությունները ռազմական հաջողություններով ամրապնդելու քաղաքականությունը, որը նրանք կիրառեցին նաև Հայաստանի նկատմամբ: Առաջ անցնելով նշենք, որ այս ռազմավարությունը արդարացրեց իրեն. Թուրքիան, բռնազավթելով հայկական տարածքները, ճնշում գործադրելով հայ-թուրքական բանակցային գործընթացների վրա (1918 թ.՝ Տրապիզոն, Բաթում, 1920 թ.՝ Ալեքսանդրապոլ և այլն), յուրացրեց Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները և Արևելյան Հայաստանի զգալի մասը:

---

[31] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 64:

Երզնկայի զինադադարի կնքումից մի քանի օր անց թուրքական կառավարությունը դիմեց Անդրկովկասյան կոմիսարիատին՝ հաշտության բանակցություններ սկսելու առաջարկով: Ուշագրավ է թուրքական կողմի առաջարկած հարցադրումը, թե՝ «ի՞նչ կը մտածէ Անկախ Անդրկովկասի կառավարութիւնը հաշտության պայմաններու մասին Թուրքիոյ հետ», և թե՝ «Էնվեր փաշան մտադիր է անկախ Անդրկովկասի մայրաքաղաքը ղրկել պատուիրակներ հաշտության դաշնագիր կնքելու համար»: Ալ. Խատիսյանը, անդրադառնալով երկու անգամ կրկնված «անկախ» արտահայտությանը, գրում է. «…. տաճիկները կուզէին ներշնչել կովկասեան իշխանութեան, թէ իրենք կը կամենան գործ ունենալ միմիայն անկախ կառավարութեան մը հետ: Տաճիկներու համար անկախ Կովկասը մի բաղձալի պատնեշ մըն էր Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ: Թիֆլիսի մէջ այդ բանը զգացին, բայց դեռ ոչ ոք չէր ուզեր բացահայտօրէն խօսիլ Ռուսիայէն անջատուելու մասին: Յամենայն դէպս ուշադրութեան արժանի է, որ անկախութեան գաղափարը եւ այդ գաղափարի հրահրումը եկան Թուրքիայէն»[32]:

Անդրկովկասյան կոմիսարիատի մի քանի նիստերում ծավալված բուռն քննարկումներից հետո որոշվեց թուրքական կողմին հայտնել, որ հաշտության կնքման առաջարկի վերջնական պատասխանը հայտնելու են երեք շաբաթից՝ Սահմանադիր ժողովի որոշումներից, Ռուսաստանի բոլոր կառավարությունների հետ խորհրդակցելուց և նրանց կարծիքը ստանալուց հետո: Սակայն կոմիսարիատը դեռ տեղյակ չէր, որ բոլշևիկները հունվարի 5-ին (18) ցրել էին Սահմանադիր ժողովը: Մինչև կոմիսարիատի պատասխանն ստանալը թուր-

[32] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, փետրվար, էջ 110-111:

քական բանակը Մեհմեդ Վեհիբ փաշայի հրամանատարությամբ, խախտելով Երզնկայի զինադադարը, 1918 թ. հունվարի վերջին հարձակման անցավ ճակատի ամբողջ երկայնքով՝ շարժվելով դեպի Անդրկովկաս: Ռուս-թուրքական պատերազմը վերածվեց թուրք-անդրկովկասյան պատերազմի (հիմնական ծանրությունն ընկած էր հայկական ուժերի վրա: Վրացիների մասնակցությունը չնչին էր, իսկ մուսուլմանական դիվիզիան ընդհանրապես չէր մասնակցում): Թուրքերը հարձակման պատրվակ էին բռնում հայերի կողմից Արևմտյան Հայաստանում մահմեդական ազգաբնակչության նկատմամբ իբր կիրառվող հետապնդումներն ու բռնությունները[33]: Մեհմեդ Վեհիբ փաշան «…. ընդարձակ գրութեամբ մը կդիմէ ռուս հրամանատար Օդիշելիձէին,- գրում է Ա. Խաչատրյանը,- թուելով այն բոլոր սպանութիւններն ու բռնութիւնները իսլամներու վրայ, որ իբր թէ հայերը կը կատարեն Երզնկայի մէջ և իր շրջանում: Հակառակ զօրավար Օդիշելիձէի հերքումին, թէ հայերու գործած բռնութիւններու մասին իր ստացած բոլոր տեղեկութիւնները խիստ չափազանցուած են եւ բնաւ չեն համապատասխանէր իրականութեանը (փետրուար 12), Վեհիբ փաշան կը հեռագրէ, թէ իր բանակը յառաջ կը քալէ օգնութեան հասնելու նահատակուող իսլամներուն և այլն»[34]:

Այդ հաղորդագրությունից ակնհայտ է դառնում նաև, թե ինչպիսի խորամանկությամբ էր Մեհմեդ Վեհիբ փաշան փորձում կովկասյան թաթարներին ոտքի հանել հայերի դեմ: Այս ամենն է՛լ ավելի լարեց և խորացրեց թշնամական հարաբերությունները հայերի և կովկասյան թաթարների միջև:

---

[33] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 5-7:

[34] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 69:

Չափազանց բարդ ու լարված ռազմաքաղաքական նոր իրադրությունում **1918 թ. փետրվարի 10-ին (23) Թիֆլիսում գումարվեց Անդրկովկասյան սեյմը** (օրենսդիր մարմին, պառլամենտ), որն ընդունեց կոմիսարիատի հրաժարականը և նրա փոխարեն կազմեց նոր կառավարություն՝ բաղկացած զանազան նախարարություններից[35]: Այս իրողությամբ, փաստորեն, Անդրկովկասն անջատվեց Ռուսաստանից, սակայն համապատասխան հայտարարություն չարվեց. շարունակում էին Անդրկովկասը համարել Ռուսաստանի մի մասը: Անդրկովկասյան սեյմը ձևավորվեց ազգային ու քաղաքական շահերով խիստ հակադիր երեք առավել ազդեցիկ՝ վրաց-մենշևիկյան, «Հայ հեղափոխական դաշնակցություն» և թաթար «Մուսավաթ» կուսակցությունների ներկայացուցիչների փոխհամաձայնությամբ:

Փետրվարի 15-ին (28) Անդրկովկասյան սեյմը թուրքերի առաջարկների և երկրամասի ռազմական ու քաղաքական իրավիճակի հարցերի բազմակողմ և բուռն քննարկումներից հետո որոշեց դիվանագիտական բանակցություններ սկսել ոչ միայն Թուրքիայի, այլ նաև վերջինիս դաշնակից Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի հետ միաժամանակ[36]: Նույն օրը Սեյմն այդ որոշման մասին հեռագրով տեղեկացրեց Մեհմեդ Վեհիբ փաշային[37]: Ռուսական քաղաքական շրջաններում մեծ վրդովմունքով ու զայրույթով ընդունեցին թուրքերի հետ հաշտության դիվագիտական բանակցություններ սկսելու Անդրկովկասյան սեյմի հայ անդամների համաձայնությունը: Սեյմի հայ ներկայացուցիչ Ալ. Խատիսյանը այդ

[35] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 39:
[36] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 32-34:
[37] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 29, թ. 122-123:

առիթով գրում է. «…. անոնք (ռուսները - Գ. Պ.) կը մոռնային, որ ոչ թէ մենք էինք Ռուսիայէն հեռացեր, այլ ինքը Ռուսիան էր լքեր մեզ»[38]:

Թուրքիայի հետ դիվանագիտական բանակցություններ վարելու նպատակով Սեյմի ձևավորած հանձնաժողովը մշակեց հաշտության գլխավոր հիմնադրույթները, որոնք հաստատվեցին փետրվարի 16-ի (մարտի 1) նիստում: Դրանք էին.

1. Ստեղծված պայմաններում Անդրկովկասյան սեյմը իրեն իրավասու էր համարում Թուրքիայի հետ կնքել հաշտություն (սա պարունակում էր բոլշևիկյան Ռուսաստանից անջատվելու սաղմեր):

2. Ձեռնամուխ լինելով հաշտության բանակցություններին՝ Անդրկովկասյան սեյմն իր առջև խնդիր էր դրել Թուրքիայի հետ կնքելու վերջնական հաշտություն:

3. Կնքվելիք հաշտության պայմանագրի հիմքում պետք է դրվեր նաև ռուս-թուրքական պետական այն սահմանների վերահաստատումը, որոնք գոյություն ունեին նախքան Առաջին աշխարհամարտի սկիզբը:

4. **Պատվիրակությունը ձգտում էր Արևելյան Անատոլիայի ինքնորոշմանը, մասնավորապես Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը թուրքական պետականության շրջանակներում**[39]:

Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդի ընդունած «հայերի առավելագույն պահանջները» հիմնականում բխում էին Անդրկովկասյան սեյմի առաջարկություններից՝ որոշ մասնակի տարբերություններով:

---

[38] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 24:

[39] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 43, նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, էջ 83-84:

Դիվանագիտական բանակցությունների վայր ընտրվեց Տրապիզոնը (որպես չեզոք քաղաք)։ Փետրվարի 16-ի նույն նիստում հաստատվեց նաև պատվիրակության կազմը, որի մեջ հայ ժողովրդի ներկայացուցիչներից ընդգրկվեցին Ալ. Խատիսյանը, Հովհ. Քաջազնունին և Մ. Թումանյանը (պատվիրակության քարտուղար)։ Նրանց խորհրդականներն էին Լեոն (Հայկական հարցի գծով), Ռուբեն Տեր-Մինասյանը (ռազմական գծով) և Մ. Բունիաթյանը (տնտեսական, ֆինանսական գծով)։ Հաջորդ օրը՝ փետրվարի 17-ին, Անդրկովկասյան սեյմի հաշտության պատվիրակությունը, ըստ Թուրքիայի հետ ձեռք բերած նախնական համաձայնության, պատվիրակության նախագահ, ներքին գործերի կոմիսար Ա. Չխենկելիի գլխավորությամբ մեկնեց Տրապիզոն և տեղ հասավ փետրվարի 23-ի երեկոյան[40]։

Թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցային գործընթացների վրա ճնշում գործադրելու նպատակով օսմանյան Թուրքիան դեռևս շարունակում էր կիրառել իր ավանդական քաղաքականությունը։ Թուրքերը մի կողմից բանակցում էին, իսկ մյուս կողմից՝ շարունակում ռազմական առաջխաղացումը։ Այս առիթով Ա. Խաչատրյանը գրում է. «Վեհիբի բանակը կը շարունակէ իր յառաջ խաղացումը դէպի Կարին, և թուրք ու քիւրդ հրոսախումբերով արիւն ու աւեր սփռելով իր արշաւանքի երկու կողմերը։ Զօրավար Լեբեդինսկին հարկ կը տեսնէ դիմում ընել Վեհիբ փաշային խնդրելով, որ դադարեցնէ իր յառաջ խաղացումը, որովհետև նոյն շրջանի թէ բանակի զինուորները և թէ քրիստոնեայ ազգաբնակչութիւնը խուճապի մատնած է և ահաւոր աղէտներ յառաջ կուգան։ Այս դիմումին

[40] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 29, թ. 123։

իբր պատասխան փետրուար 22-ին զօրավար Օդիշելիձէն կը հաղորդէ Լեբեդինսկուն, թէ Վեհիբ վճռական կերպով յայտնէր է, որ պէտք է յառաջ խաղայ՝ մինչև որ հանդիպի ռուս զօրքի:

Եւ Օդիշիլիձէն զօրք կը խնդրէ՝ գոնէ Կարին պաշտպանել կարողանալու համար:

Վեհիբի այս վճռական արտայայտութեամբ այլևս ոչ մէկ տարակոյս տեղիք կը մնար կարծելու, թէ թուրքերին պէտք է արգելուեն իրենց ծրագիրը գործադրելէ, այսինքն ամբողջ Կովկասը գրաւելէ, քանի որ ինչպէս ամենուն, նոյնպես և Վեհիբին շատ լաւ հայտնի էր, որ Կովկասում ռուս զօրք չկայ, ուրեմն հիւսիսային Կովկասը պիտի լինէր իրենց ապագայ սահմանը: Բայց թուրք դիւանագէտներին ու ռազմավարներին ոգևորողն այս պարագային միայն երկրակալական անյագ ձգտումը չէր, այլ նույնպէս ամէնուն յայտնի համիսլամական ու համաթրքական շողշողուն հեռապատկերի իրականացման հնարաւորութիւնը»[41]:

Փետրվարի 17-ի (մարտի 3) երեկոյան, երբ անդրկովկասյան պատվիրակությունը պատրաստվում էր մեկնելու Տրապիզոն, Բրեստից անակնկալ ստացվում է ՌՍՖԽՀ արտժողկոմի տեղակալ Լ. Կարախանի (հայազգի) հեռագիր-հաղորդագրությունը այն մասին, որ Խորհրդային Ռուսաստանը Բրեստ-Լիտովսկում*, առանց հաշտության պայմանները քննարկելու, ստորագրել է դաշնագիր Քառյակ միության պետություններ Թուրքիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի հետ[42]: Դաշնագրի 4-րդ հոդվածում, որը վերաբերում էր

---

[41] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 69-70:

* Բրեստ-Լիտովսկի դաշնագրով Խորհրդային Ռուսաստանից անջատվեցին Լիտվան, Կուռլանդիան, Էստլանդիան և Բելոռուսիայի մի մասը: Ուկրաինան և Բելոռուսիան ճանաչվում էին որպես ինքնուրույն պետություններ:

[42] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս III, թ. 398:

Կովկասին, ասված էր. «Ռուսաստանը կանի այն ամենը, ինչ որ իրենից կախված է, որպեսզի ապահովի իր զորքերի դուրս բերումը Արևելյան Անատոլիայի նահանգներից (Արևմտյան Հայաստան – Գ. Պ.) և վերջիններիս կանոնավոր վերադարձը Թուրքիային:

Ռուսական զորքերը պետք է անհապաղ դուրս բերվեն նաև Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերից: Ռուսաստանը չի միջամտի այդ մարզերի պետական-իրավական և միջազգային իրավական նոր կազմակերպման գործին, այլ այդ մարզերի բնակչությանը հնարավորություն կտա դրացի պետությունների, մանավանդ Թուրքիայի համաձայնությամբ հաստատելու նոր կարգ»[43]: Փաստորեն, այդ հաշտության դաշնագրով Խորհրդային Ռուսաստանը, առանց Անդրկովկասի մասնակցության ու համաձայնության, Թուրքիային էր զիջում նաև Կարսի, Բաթումի ու Արդահանի մարզերը, այսինքն՝ արմատապես փոփոխության էին ենթարկում Կովկասի 1914 թ. սահմանները՝ հօգուտ Օսմանյան կայսրության: **Թուրքիային էր հանձնվում ոչ միայն ամբողջ Արևմտյան Հայաստանը, որը տարածվում էր Արարատ լեռան լանջերից մինչև Էրզրում, Երզնկա, Մուշ և Հայկական Տավրոս, տարածքներ, որոնք ազատագրվել էին այնքան մեծ ջանքերի գնով, այլ նաև Արևելյան Հայաստանի մի զգալի մասը, այդ թվում և այնպիսի տարածքներ, ինչպես օրինակ՝ Սուրմալուն, որոնք երբևէ թուրքական տիրապետության տակ չէին եղել: Իրականում օսմանյան Թուրքիային էր հանձնվում Անդրկովկասի կեսը:** Փաստորեն հօդս էին ցնդում Անդրկովկասյան սեյմի մշակած՝ Թուրքիայի

[43] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 426:

հետ դիվանագիտական բանակցությունների գլխավոր հիմնադրույթները և, հետևաբար, բանակցային ողջ գործընթացը:

Նույն օրը Անդրկովկասյան սեյմի ներքին գործերի կոմիսար, պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին և կառավարության նախագահ Ե. Գեգեչկորին, ի լուր աշխարհի բոլոր երկրների կառավարությունների, Թիֆլիսից հաղորդեցին, որ Անդրկովկասը հայտարարում են Ռուսաստանից անջատված, հետևաբար չեն ճանաչում Բրեստ-Լիտովսկի հաշտության անարդար դաշնագիրը և մերժում են ընդունել այդ պայմանների ստորացուցիչ դրույթները: Սակայն Մեհմեդ Վեհիբ փաշան, հենվելով այդ դաշնագրի վրա, պահանջում էր անհապաղ թուրքերին հանձնել Կարսը, Բաթումը և Արդահանը: Նա դառնում էր է՛լ ավելի անզիջող իր պահանջներում ու վերաբերմունքում: Ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում թուրքերն էլ ավելի մեծ ուժգնությամբ էին շարունակում ռազմական ուժով ամրագրել իրենց անօրինական, անարդարացի պահանջները: Նման պայմաններում, այնուամենայնիվ, Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովը փետրվարի 27-ին (մարտի 12) սկսեց իր աշխատանքները՝ հույս ունենալով պահպանել 1914 թ. սահմանները[44]: Հենց այս հարցի շուրջ էլ Տրապիզոնում բանակցություններ ընթացան կողմերի միջև:

[44] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 104:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
# ԹՈՒՐՔ-ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՐԱՊԻԶՈՆՈՒՄ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ

## 1. Տրապիզոնի բանակցություններում թուրքերի կողմից Անդրկովկասն անկախ հռչակելու շարժառիթներն ու նպատակները. Հայկական հարցի արծարծումները

Ինչպես նշվեց նախորդ գլխում, Անդրկովկասի կառավարության հետ դիվանագիտական բանակցություններ վարելու և հաշտության դաշնագիր կնքելու առաջարկի նախաձեռնողն օսմանյան կառավարությունն էր: Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ այդ ամենը Թուրքիայի ղեկավարության կողմից նախապես մշակված, ծրագրված ռազմաքաղաքական մարտավարություն էր, որով նա փորձում էր անդրկովկասյան ժողովուրդներին (բացառությամբ ցեղակից և կրոնակից կովկասյան թաթարների) փակուղի մղել՝ իրականացնելու իր ռազմավարական նպատակները և տարածքային ազդեցության գոտիներով ապահովագրելու իր անվտանգությունը հյուսիսային հարևանից՝ Ռուսաստանից: Ըստ այդմ՝ Թուրքիան ձգտում էր իր ռազմական հաջողությունները բանակցող կողմերին պարտադրելու ճանապարհով դիվանագիտական բանակցությունների նժարը իր օգտին թեքելու քաղաքականություն վարել: Դիվանագիտական բանակցային գործընթացների մարտավարությունը մղելով առաջին պլան՝ նա փորձում էր նախ շեղել, մոլորության մեջ գցել, ապա թուլացնել

Անդրկովկասի կառավարության և ժողովուրդների, մասնավորապես հայության զգոնությունը և դիմադրողական ոգին: Դրան զուգահեռ՝ թուրքերը ձգտում էին նաև հաշտության, որպեսզի ժամանակ շահեին և համախմբեին իրենց ռազմական ուժերը պատերազմի ճակատներում[45]:

Օսմանյան Թուրքիան իր որդեգրած ավանդական քաղաքականությունը գործադրեց Տրապիզոնի թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցային գործընթացների թե՛ նախօրեին, թե՛ ընթացքում և թե՛ հետագայում: Թուրքերը մի կողմից բանակցում էին, իսկ մյուս կողմից ակտիվորեն շարունակում էին զենքի ուժով պարտադրել և ամրագրել իրենց անօրինական պահանջները: Այդ առիթով Ալ. Խատիսյանը գրում է. «Բոլոր պարագաներուն ալ թուրքերու գործելակերպը նոյնն էր, բանակցիլ և միաժամանակ պատերազմիլ իրենց կամքը լիովին պարտադրելու համար: Թէ որքան ծանր կերպով անոնք (թուրքական ռազմական արշավանքները - Գ. Պ.) կանդրադառնային միաժամանակ տեղի ունեցող հաշտութեան մեր բանակցութեանց (Տրապիզոնի - Գ. Պ.) վրայ: Նոյն պատմութիւնը յետագային ինձ հետ կրկնուեց երկու անգամ եւս նոյն թուի մայիսին Պաթումի մէջ եւ 1920 թ. նոյեմբերին Ալեքսանդրապոլի մէջ»[46]:

Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը* փետրվարի 23-ի (մարտի 8) երեկոյան հասավ Տրապիզոնի

---

[45] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 123, թ. 11:

[46] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, ապրիլ, էջ 83:

* Պատվիրակությանը տեղափոխում էր ռումինական «Կառլոս թագավոր» հածանավը: Նրա կազմը բազմանդամ էր՝ 40 հոգի: Նրանցից 11-ը պատվիրակության անդամներ էին, իսկ 29-ը՝ խորհրդականներ, քարտուղարներ, պատմագետներ, ռազմական գծով սպաներ և այլն: Այս ամենից բացի՝ նրանց ուղեկցում էր նաև Անդրկովկասի տարբեր ազգերի 50 ներկայացու-

նավահանգիստ, իսկ թուրքական հանձնախումբը միտումնավոր ձգձգում էր իր ժամանումը: Նրանց նպատակն ակնհայտ էր. մինչև թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցությունների սկսվելը մի կողմից հնարավորինս շատ տարածքներ զավթել, իսկ մյուս կողմից բարոյահոգեբանական ճնշում գործադրել Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության վրա: Թուրքերի որդեգրած այդ ավանդական քաղաքականությունը շարունակական եղավ Տրապիզոնի դիվանագիտական բանակցային ամբողջ գործընթացում:

Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը իրավունք չուներ անգամ ափ իջնելու և ստիպված էր մինչև Կոստանդնուպոլսից թուրքական պատվիրակության ժամանումը չորս օր մնալ իրեն փոխադրող հածանավի վրա[47]: Այդ առնչությամբ Լեոն գրում է. «Իսկ վորքան ստորացում ամբողջ պատվիրակության համար: Որեր են անցնում, թյուրք պատվիրակությունը չկա ու չկա, իսկ մեր Կարլուշկայի մեջ արդեն սով է սկսվում: Վո՛չ ափ ենք իջնում, վո՛չ հետ ենք գնում: Ափ իջնող-

---

ցիչներից կազմված պահակախումբ: Փաստորեն, պատվիրակության անդամների և նրանց ուղեկցողների թիվը հասնում էր 90-ի: Նման մեծ կազմը վկայում էր Անդրկովկասի երեք գլխավոր ազգերի ներկայացուցչների միջև սուր հակասությունների և միմյանց նկատմամբ անվստահության մասին: Թուրքերից մեկը Տրապիզոնում հեգնել էր. «Եթե «բանակցային կողմի» ամբողջ ազգաբնակչությունն է եկողը, շատ քիչ է, իսկ եթե միայն պատվիրակությունն է, շատ-շատ է»: Տե՛ս **З. Авалов**, Независимость Грузіи въ международной политикѣ 1918-1921 гг. Воспоминанія. Очерки. Paris, 1924, էջ 34:
Տրապիզոնում պատվիրակությանը հատկացվել էր հույն մեծահարուստ Թերֆիլատիսի տունը: Խորհրդաժողովի աշխատանքները ընթացել են թուրքական պատվիրակության նստավայրում: Հաշտության խորհրդաժողովում տեղի են ունեցել վեց լիակատար նիստեր և ոչ պաշտոնական փոխադարձ այցելություններ, ինչպես նաև մասնավոր զրույցներ: 38 օրվա ընթացքում Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը ունեցել է 46 նիստ:
[47] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 100:

ները միայն մեր թուրք (կովկասյան թաթարներ – Գ. Պ.) ընկերակիցներն են: Գնում են, ամբողջ որը մնում, յերեկոյան վերադառնում ուրախ ու գոհ, ինչպես ավետյաց յերկրից»[48]:

Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության՝ Տրապիզոն ժամանելու պահին քաղաքն արդեն գրավված էր թուրքական զորքերի կողմից: Այն այլևս չեզոք քաղաք չէր, այլ թուրքական, նրանք «զգում էին իրենց իբրև իրենց տանը, դրության տերեր»[49]:

Երկու օր անց՝ փետրվարի 25-ին (մարտի 10), հետևեցին Մեհմեդ Վեհիբ փաշայի երկու հայտնի սպառնալից հեռագրերը, որոնցով նա Անդրկովկասի կառավարությունից պահանջում էր զորքերը անհապաղ դուրս բերել Կարսից, Արդահանից և Բաթումից:

Պատվիրակությունը մեկուսացվել էր արտաքին աշխարհից, և այդ դրությունը պահպանվեց Տրապիզոնի դիվանագիտական բանակցությունների գրեթե ողջ ընթացքում: «.... Արտաքին պայմանները, - գրում է Լեոն,- գնալով ավելի ու ավելի աննպաստ եյին դառնում մեր պատվիրակության համար: Ամենից առաջ հենց այն վոր մեր Կարլուշկան, մնալով անփող ու անպարեն, գնացել էր Բաթում... Մեզ համար, հարցն, ի հարկե, այդ դեպքերը չեյին, այլ այն, վոր մենք մնացինք աշխարհից կտրված, գերիներ թյուրքերի ձեռքին: .... Մենք մեզ զգում եյինք անտանելի դրության մեջ: .... Գլխավորն այն եր, վոր մենք ռադիո հեռագիր չունեյինք և չեյինք կարողանում վոչ լուր ուղարկել, վոչ ստանալ»[50]:

---

[48] **Լեո**, նշվ. աշխ., էջ 381:
[49] Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 310:
[50] **Լեո**, նշվ. աշխ., էջ 383-384:

Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության ընդհանուր նիստը լսեց ստեղծված իրավիճակի և հետագա անելիքների մասին հարցը: Երկար քննարկումներից հետո որոշվեց, որ հաջորդ օրը՝ փետրվարի 27-ի (մարտի 12) առավոտյան, պատվիրակությունը կվերադառնա Բաթում, քանի որ թուրքական պատվիրակության հետ հարաբերությունները իսպառ բացակայում էին, և դեռևս հայտնի չէր, թե նա երբ է ժամանելու Տրապիզոն[51]: Սակայն նիստի ավարտից քիչ անց թուրքական կողմը գրավոր տեղեկացրեց, որ Կոստանդնուպոլսից արդեն Տրապիզոն է ժամանել հինգ հոգուց բաղկացած պատվիրակությունը՝ Օսմանյան կայսրության ռազմածովային ուժերի շտաբի պետ Հուսեյն Ռաուֆ բեյի (ծագումով՝ չերքեզ) նախագահությամբ: Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը վերանայեց իր որոշումը, իսկ թուրքերը թույլատրեցին նրանց նավից ցամաք իջնել: Նույն օրը պատվիրակությանը հայտնի դարձավ, որ թուրքերը գրավել են Էրզրումը[52]: «Փողոցով անցնող թյուրք զորաբաժինների յերգերի մեջ,- գրում է Լեոն,- բարձրաձայն շեշտվում եր «ալլեման-ոսմանի» յեղբայրությունը: Մեր պատվիրակությունը կուչ եր յեկել, զգում եր ծանրացած մթնոլորտի ճնշումը: Իսկ մեր թուրք (թաթարներ - Գ. Պ.) ընկերակիցները փայլում եյին ուրախությունից, շարունակ կանգ եյին առնում Թյուրքիայի մեծ քարտեզի առաջ»[53]: Այդպիսի բարոյահոգեբանական լարվածության և փոխադարձ անվստահության պայմաններում սկսվեց Տրապիզոնի հաշտության բանակցային գործընթացը, որը տևեց փետրվարի 27-ից (մարտի 12) մինչև ապրիլի 1-ը (14):

---

[51] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 100:
[52] Տե՛ս նույն տեղը:
[53] **Լեո**, նշվ. աշխ., էջ 385:

Թուրքական պատվիրակության ժամանումից հետո Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին այցելեց Հուսեյն Ռաուֆ բեյին: Վերջինս հաճոյախոսությունից հետո նրան առաջարկեց քննարկել հաշտության բանակցությունների տեխնիկական և կազմակերպչական ձևաչափի հարցերը: Նա նախ կտրուկ բացառեց ռուսերենի օգտագործումը՝ որպես բանակցային ընդհանուր լեզու, այնուհետև պահանջեց բացատրություն, թե ինչու է ռուս գեներալ Ե. Լեբեդինսկին (կովկասյան ռազմաճակատի հրամանատար) ընդգրկված Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության կազմում: Ա. Չխենկելին հակադարձեց՝ ասելով, որ «գեներալ Ե. Լեբեդինսկին ենթարկվում է միայն Անդրկովկասյան սեյմին: Թուրքերը դրանով բավարարվեցին»[54]: Հուսեյն Ռաուֆ բեյն առաջարկեց նաև, որ հաշտության խորհրդաժողովի նախագահողը լինի իրենց պատվիրակությունից, քանի որ այն տեղի է ունենալու թուրքական տարածքում, իսկ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության անդամներն ընդամենը իրենց հյուրերն են: Իրականում թուրքերը խստիվ բացառեցին Ա. Չխենկելու՝ հաշտության խորհրդաժողովի աշխատանքները հերթով նախագահելու առաջարկը: Հարցը չսրելու համար պատվիրակությունը ընդունեց թուրքերի առաջարկը, սակայն գրավոր հայտնեց իր բողոքը[55]:

Նույն օրը կայացան երկու պատվիրակությունների ներկայացուցիչների փոխայցելությունները և մասնավոր զրույցները, որոնց ընթացքում, ինչպես գրում է Ալ. Խատիսյանը, «…. այնուամենայնիվ միշտ,- զգացվում էր թուրքերի հետ

---

[54] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 101:

[55] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 140-141:

մեր հարաբերությունների անորոշությունը»[56]: Այդ ժամանակ էլ թուրքական կողմը հասկացնել տվեց, որ մտադրություն չունի լուրջ դիվանագիտական բանակցություններ վարելու Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության հետ: Հայտնի դարձավ նաև, որ նրանք Տրապիզոն են եկել ոչ թե հաշտություն, այլ ընդամենը տնտեսական, առևտրական ու այլ դաշնագրեր կնքելու համար: Թուրքական պատվիրակությունը Տրապիզոնի հանդիպումը ներկայացնում էր որպես հաշտության խորհրդաժողով և ոչ թե դիվանագիտական բանակցություններ: Նրա անդամները պնդում էին, որ հարցի լուծումը ամրագրվել է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրում, և բոլորովին անհրաժեշտություն չկա դիվանագիտական բանակցություններ վարելու: Փոխարենը Անդրկովկասի պատվիրակությունը պետք է անվերապահորեն և անհապաղ Թուրքիային հանձնի Արդահանը, Բաթումը, Կարսը՝ իրենց գավառներով, հակառակ պարագայում թուրքական բանակը հարկադրված կլինի դաշնագրով համաձայնեցված սահմաններին հասնելուց հետո ռազմական ուժով շարունակել առաջխաղացումը դեպի Անդրկովկաս: Այդ առիթով Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության քարտուղար Մ. Թումանյանը գրում է. «Թուրքերը բնաւ չեն ուզեր մեր ժողովն անուանել «հաշտութեան կոնֆերանս», այնպէս, որ մեզի համար հաշտութիւն՝ անոնց համար կռիւ է, այս պատճառով ալ անոնք միշտ կաշխատեն անուանել պարզաբար «Տրապիզոնի կոնֆերանս»»[57]:

1918 թ. մարտի 1-ին (14) տեղի ունեցավ Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովի պաշտոնական բացումը: Նիստը

---

[56] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 102:

[57] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 73:

նախագահող Հուսեյն Ռաուֆ բեյը քաղաքավարական ձևերի տակ թաքնված երկդիմի, կեղծ, առերես սիրալիրությամբ ողջունեց Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությանը՝ հայտարարելով, որ թուրքական կառավարությունն անկեղծ ցանկություն ունի բարիդրացիական հարաբերություններ հաստատելու Անդրկովկասի ձևավորվելիք հանրապետության հետ[58]: Նենգափոխելով պատմական իրողությունը և ճշմարտությունը՝ Հուսեյն Ռաուֆ բեյը հայտարարեց. «Թուրքիայի և Անդրկովկասի ժողովուրդների բոլոր ռազմական գործողությունները ցարիզմի դեմ երկու հարյուր տարվա ընդհանուր փառապանծ պատմության ընթացքում ավելի են կապել այդ ժողովուրդներին: Այդ ժողովուրդները կապող շղթա են ոչ միայն պատմական և աշխարհաքաղաքական հարաբերությունները, այլև ավելի շատ ազգակցական կապերը, որոնք բխում են մեր ընդհանուր անցյալից: Հենց այդ պատճառով անդրկովկասյան և թուրք ժողովուրդները կազմված են այժմ նույն կրոնից ու ազգություններից և ունեն գրեթե միանման պատմություն»[59]: Փաստորեն, թուրքական պատվիրակության նախագահը, նենգափոխելով ամբողջ պատմական ճշմարտությունը, վիրավորում էր Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության ոչ կրոնակից և ոչ ցեղակից հայերի ու վրացիների ազգային արժանապատվությունը, ինչը, ինչպես գրում է Ալ. Խատիսյանը, «...բնականաբար, շփոթութիւն եւ տհաճութիւն պատճառեցին մեզ»[60]: Բեյը փորձում էր իբր ապացուցել անցյալում անդրկովկասյան ու Օսմանյան կայսրության ժողովուրդների ճակատագրերի պատմական ընդհանրությունը:

---

[58] Տե՛ս **Հ. Ավետիսյան**, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 114:

[59] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 101, նաև գ. 9, թ. 61-65, արձանագրություն N 19:

[60] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 32:

Այնուհետև մարտի 2-ի (15), 3-ի (16) և 4-ի (17) հաշտության բանակցություններում Հուսեյն Ռաուֆ բեյն արել է այնպիսի հայտարարություններ, որոնք այլևս անհնարին էին դարձնում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հետ դիվանագիտական բանակցություններ վարելու հնարավորությունը: Նա, շրջանցելով հաշտության դաշնագիր կնքելու լիազորությունների և պայմանների մասին հարցը, պատվիրակության անդամներին հայտարարել է, որ դիմում է նրանց ոչ թե իբրև պետության պատվիրակների, այլ ընդամենը Օսմանյան կայսրության՝ մայր երկրի գիրկը վերադարձող անջատված տարածքների ժողովուրդների ներկայացուցիչների[61] (նկատի ուներ Բաթումի, Արդահանի և Կարսի հանձնումը Թուրքիային):

Հուսեյն Ռաուֆ բեյը բանակցությունների ժամանակ հրապարակայնորեն հայտարարեց, որ Թուրքիայի կառավարությունը չի ճանաչում Անդրկովկասը որպես ինքնուրույն պետություն, և առաջարկեց պատվիրակությանն անել որոշակի հայտարարություն առ այն, թե որն է իրենց հանրապետության ձևի, քաղաքական ու վարչական կազմակերպության էությունը[62], արդյոք առկա՞ են այն բոլոր պայմանները, որոնք պահանջում է միջազգային իրավունքը պետություն կազմելու համար: Անշուշտ, միամտություն կլինի կարծել, թե թուրքական պատվիրակությունն իրազեկ չէր, որ, միջազգային իրավունքի չափանիշերի համաձայն, Անդրկովկասն իր անկախության մասին դեռևս հայտարարություն չէր արել: Սակայն թուրքական կողմը, խախտելով նույն միջազգային իրավունքի նորմե-

[61] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 101:
[62] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 74:

ը, առաջարկել էր հաշտություն կնքել Անդրկովկասի հետ: Այդ ամենն արվում էր այն պայմաններում, երբ Անդրկովկասը թեև ձևականորեն, սակայն իրավական առումով դեռևս Խորհրդային Ռուսաստանի մաս էր, և թուրքական կառավարությունն ու Գերմանիան միասին Բրեստ-Լիտովսկում հաշտության բանակցություններ էին վարում Խորհրդային Ռուսաստանի հետ[63]:

Մարտի 7-ին (20) Տրապիզոնի հաշտության բանակցությունների 4-րդ նիստում Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին, ի պատասխան թուրքական կողմի հայտարարությունների, նշեց, որ Ռուսաստանում բոլշևիկյան հեղաշրջումից հետո Անդրկովկասում ստեղծվել է նոր՝ ինքնուրույն կառավարություն, որն այժմ պատասխանատու է Սեյմի առջև, և այն, փաստորեն, մի պետություն է, որն արդեն մտել է միջազգային հարաբերությունների ոլորտ: Նա նաև շեշտեց, որ Թուրքիայի կառավարությունն ինքն է առանձին բանակցություններ վարելու և հաշտության դաշնագիր կնքելու առաջարկ արել, հետևաբար նա ճանաչել է Անդրկովկասյան ինքնուրույն իշխանության գոյությունը, որը ներկայացնում է պետություն[64]: Այնուհետև Ա. Չխենկելին հաշտության խորհրդաժողովի նիստում, ի պատասխան Ռաուֆ բեյի, պաշտոնապես հայտարարեց, որ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը չի ճանաչում բոլշևիկյան Ռուսաստանի իշխանությունը և մարտի 3-ին նրա ստորագրած Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի՝ Կովկասին վերաբերող դրույթները, քանի որ այն իրավական ոչ մի հիմք չունի

[63] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 179-180:
[64] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 159:

և կնքվել է առանց իրենց գիտության ու համաձայնության, ուստի ոչ մի պարտավորեցնող ուժ չունի միջազգային իրավունքի տեսանկյունից: Ա. Չխենկելին նաև հայտարարեց, որ Տրապիզոնի հաշտության բանակցությունները նույնպես միջազգային-իրավական բնույթի ակտ են, թեև Անդրկովկասը պաշտոնապես չի հռչակել իր անկախությունը և տերություններին դեռևս նոտաներ չի հղել այդ մասին[65], սակայն պետականության կարգավիճակ է ձեռք բերել, և այդ գործընթացը սկսված է:

Առարկելով Ա. Չխենկելուն՝ Հուսեյն Ռաուֆ բեյը հանդես եկավ պաշտոնական նոր հայտարարությամբ. **կտրուկ պահանջեց, որ մինչև Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովի ավարտն Անդրկովկասի կառավարությունը հրապարակայնորեն հռչակի իր անկախությունը՝** միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան, և միջոցներ ձեռնարկի, որպեսզի մյուս պետությունները ճանաչեն իրեն[66]: «**Մենք էլ ձեզ կճանաչենք սուվերեն պետություն,** - հայտարարեց Հուսեյն Ռաուֆ բեյը: **- Մենք մեծ ուրախությամբ կաջակցենք ձեզ սեփական պետություն կազմելու, որը մեր շահն է ընդդեմ Ռուսաստանի**: Դրա փոխարեն մենք ձեզ կօգնենք ինչպես կամենաք, օրինակ՝ զորքեր կուղարկենք ձեզ համար ընդդեմ բոլշևիկների: Դա պետք է նաև Հայկական հարցի համար. կօգնենք հայկական տերիտորիայի (իմա՝ պետության – Գ. Պ.) կազմումին Կովկասի սահմանում»[67]: Ավելի ուշ՝ ապրիլի 1-ին (14), Տրապիզոնում Հուսեյն Ռաուֆ բեյը Ալ. Խատիսյանի հետ մասնավոր զրույցում հայտնում է. «Մենք չենք ուզում հայկա-

---

[65] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 180-181:
[66] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 178-181:
[67] Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 310:

կան շահերը լրիվ անտեսել: Մենք ուզում ենք Կովկասը բաժանել ոչ թե երկու, այլ երեք մասի: Սրան դուք կարող եք վստահել միանգամայն»[68]: Անշուշտ, Հուսեյն Ռաուֆ բեյի դիվանագիտական հաճոյախոսությունը բխում էր Թուրքիայի շահերից և ուներ խորքային լուրջ դրդապատճառներ:

Այնուհետև Հուսեյն Ռաուֆ բեյը մարտի 7-ի հաշտության բանակցությունների 4-րդ նիստում վերապահում է անում՝ հայտարարելով, որ երբ կնքվում էր Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, Անդրկովկասը Խորհրդային Ռուսաստանից չէր անջատվել, ուստի հաշտության այդ դաշնագիրը պարտադիր է Անդրկովկասի համար, և եթե վերջինս այսօր հռչակի իր անկախությունը, ապա այդ փաստը հետադարձ ուժ չի ունենա, քանի որ Անդրկովկասն իրավունք չունի վիճարկելու դրա օրինականությունը[69]: Դրանով թուրքական կողմը պարզորոշ հասկացնել տվեց, որ Անդրկովկասն անկախ հռչակելու դեպքում անգամ Բաթումը, Արդահանը և Կարսը՝ իրենց գավառներով, իրավականորեն չեն կարող երկրամասի մաս կազմել: Փաստորեն, Անդրկովկասի խաղաղաբար պատվիրակությունը հայտնվեց դիվանագիտական փակուղու առջև. թուրքական կողմը կտրուկ մերժեց Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի՝ Կովկասին վերաբերող դրույթները չճանաչելու՝ Ա. Չխենկելու մարտի 7-ի հայտարարությունը:

Ակնհայտ է, որ Անդրկովկասն անկախ հռչակելու թուրքական պատվիրակության պնդումները և ճնշումները ունեին Թուրքիայի շահերից բխող, զավթողական նկրտումներով

---

[68] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 108:
[69] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 101:

պայմանավորված լուրջ դրդապատճառներ: Երկու պատվիրակությունների նախագահների մասնավոր զրույցների ժամանակ Հուսեյն Ռաուֆ բեյը Ա. Չխենկելուց չթաքցրեց, թե ինչով է պայմանավորված Անդրկովկասն անկախ հռչակելու Թուրքիայի վճռականությունը: «Թուրքիան,- ասում է նա,- ատելի է Ռուսաստանի համար, և նրան (Թուրքիային – Գ. Պ.) անհրաժեշտ է Կովկասի անկախությունը որպես բուֆեր Ռուսաստանի դեմ: Եթե Կովկասը կարող է այդ դերը կատարել, ապա կարելի է խոսել ամրոցները (Բաթում, Կարս – Գ. Պ.) նրան վերադարձնելու մասին: Սակայն հարց է, թե արդյոք կարո՞ղ է Կովկասը դառնալ ամուր ինքնուրույն միասնություն (իմա՝ պետություն – Գ. Պ.), և երկրորդ՝ կարելի՞ է վստահ լինել, որ հավատարմորեն կպաշտպանի Թուրքիայի շահերը:

…**Կովկասն անկախ պետք է լինի, որովհետև երկյուղում ենք, թե հարմար առիթի դեպքում Կովկասը դարձյալ կշրջվի Ռուսաստանի կողմը: Չէ՞ որ Ռուսաստանը մի 20 տարի հետո նորից կհառնի: Եվ մի՞թե Ռուսաստանը կարող է հրաժարվել ողջ երկիրը վառելիքով ապահովող Բաքվից**»[70]:

Անտարակույս, թուրքերն ունեին մտավախություն՝ անկախության հռչակումից հետո կարո՞ղ է արդյոք ստեղծվել Անդրկովկասի ինքնուրույն, միասնական, ամուր պետություն, որը կծառայեր իբրև բուֆեր՝ պատնեշ, Թուրքիայի և Ռուսաստանի միջև: Սակայն նման հավանականությունը քիչ իրատեսական էր, որովհետև առկա էին մի շարք լուրջ հանգամանքներ և խոչընդոտներ: Օսմանյան կայսրությանը քաջ հայտնի էին այդ երկրամասի երեք գլխավոր ազգերի միջև եղած խորը հակասությունները և հակամարտությունները, որոնց գլխա-

[70] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 101:

վոր պատճառը նրանց քաղաքական տարբեր կողմնորոշումներն էին ու տարածքային վեճերը, որոնք երբեմն վերածվում էին ազգամիջյան արյունալի բախումների: Թուրքերին հայտնի էր նաև վրացիների և կովկասյան թաթարների բացահայտ հակառուսական դիրքորոշումը (անվիճելի էր կովկասյան թաթարների թուրքական կողմնորոշումը), սակայն նրանք վստահ չէին, թե վրացիները կարո՞ղ են թուրքական կողմնորոշում որդեգրել: Իսկ հայերի ավանդական ռուսական կողմնորոշման պատճառով թուրքերը մտավախություն ունեին, որ Արևելյան Հայաստանը կարող է Ռուսաստանի մաս կազմել, որը լիովին հակասում էր իրենց ռազմավարական շահերին: Վերջապես, նման իրավիճակում Թուրքիան վստահ չէր, որ վրաց-թաթարական հակառուսական կողմնորոշումը կարող է բավարար լինել՝ սեփական ուժերով պաշտպանվելու Ռուսաստանից: Այդ ամենը հաշվի առնելով՝ թուրքերը վճռական էին տրամադրված Բաթումը, Արդահանը և Կարսը որպես ռուսներից պաշտպանվելու ամրոցներ պահելու հարցում: Ավելի ուշ Ռաուֆ բեյը Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության նախագահի հետ մասնավոր զրույցում դարձյալ կրկնում է իր մտահոգությունը. «10-20 տարի հետո Ռուսաստանը ամրապնդվելուց հետո վերադառնալու է Կովկաս, հետևաբար Անդրկովկասը պետք է հասկանա Թուրքիային և նրան ընդառաջ գնա»[71]: Ահա ինչու Թուրքիան, օգտվելով նման նպաստավոր պահից, ձգտում էր տարածքային զավթումներով վերջնականապես ապահովելու իրեն Ռուսաստանից սպասվող վտանգից, որը ոչ հեռավոր ապագայում կարող էր իրական սպառնալիք դառնալ իր սահմանների համար: Այդ

[71] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 104:

իսկ պատճառով նա հայտարարում է, որ Կարսը, Արդահանը և Բաթումը պետք է մնան իր ազդեցության ոլորտում՝ իբրև ռազմական ամրոցներ[72]: Կարսը պետք է մնար Էրզրումի պաշտպանության համար, իսկ Բաթումը՝ որպես ռազմական ուժեղ բազա Սև ծովում Ռուսաստանի և Բուլղարիայի դեմ, որը սպառնալիք էր Կոստանդնուպոլսին: Խ. Կարճիկյանը գրում է. «Կովկասի գրավումը քաղաքական մի ծրագիր է և անհրաժեշտություն Տաճկաստանի համար: Բաթումի ու Կարսի գրավումն առաջին փուլն է՝ դյուրացնելու այդ»[73]:

**Այսպիսով, Թուրքիայի ակնհայտ նպատակն էր՝ Անդրկովկասն անկախ հռչակելով՝ այն վերջնականապես, փաստացի և իրավականորեն կտրել Ռուսաստանից և թույլ, անօգնական այդ երկրամասը զավթելով՝ այն ներառել իր ազդեցության ոլորտը և ապահովել իր անվտանգությունը Ռուսաստանից**:

Բնավ պատահական չէր, որ մարտի 7-ի (20) Տրապիզոնի հաշտության բանակցությունների 4-րդ նիստում թուրքական պատվիրակությունը պաշտոնապես մերժեց նաև Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության պահանջները Արդահանի, Բաթումի և Կարսի գավառների նկատմամբ: Ռաուֆ բեյը հայտարարեց, որ հաշտության դաշնագիր կնքելու համար դիվանագիտական բանակցությունները կարող են սկսվել միայն այն ժամանակ, երբ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը կհրաժարվի այդ երեք գավառների նկատմամբ հավակնություններից: Պատվիրակության թաթար ներկայացուցիչ Մ. Հաջինսկին, պաշտպանելով թուրքական կողմի պնդումները, ասաց. «Ինձ համար մի բան պարզ է, որ թուրքե-

[72] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 123, թ. 5:
[73] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 122, թ. 1:

րի համար կարևորը մեր անկախության հռչակումն է, միայն մեր անկախությունը կտա հնարավորություն բանակցությունների համար: Բրեստի հաշտությունը նրանց համար անխախտելի է. հաշտություն կնքելու համար հարկավոր է անկախության հռչակումը (Անդրկովկասի – Գ. Պ.) և Կարսից, Արդահանից, Բաթումից հրաժարվելը: Եվ ուրիշ ոչինչ»[74]:

Չուշացան Տրապիզոնում թուրքերի հետ դիվանագիտական բանակցությունների ընթացքում քննարկված մի շարք այլ հարցերի շուրջ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության (բացառությամբ պատվիրակության կովկասյան թաթարների ներկայացուցիչների) հակադարձումների ու անհամաձայնությունների ծանր հետևանքները: Անդրկովկասի կառավարությունը իր պատվիրակությանը հղած հեռագրում տեղեկացնում էր. «Թուրք զօրքերը մտան Կովկասի սահմանները, հաշտութեան բանակցութիւն չի կարելի այսպիսի պայմաններում. երկդիմի դրութիւն մը կստեղծուի, պէտք է կեցնել զօրքի առաջ խաղացումը»[75]: **Տրապիզոնի հաշտության բանակցություններում իրենց այդ անօրինական, անարդարացի և զավթողական պահանջները պարտադրելու նպատակով թուրքերը մի կողմից բանակցում էին, իսկ մյուս կողմից՝ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության վրա բարոյահոգեբանական ճնշում գործադրելու և խուճապի մատնելու նպատակով շարունակում էին իրենց ռազմական գործողությունները՝ վիճելի տարածքները գրավելու համար**: «Ֆրոնտից եկած ամեն մի վատ լուր,- գրում է Ալ. Խատիսյանը,- ուժ էր տալիս թշնամուն»[76]:

---

[74] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 101:

[75] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 73-74:

[76] Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 310:

Այդպիսին էր թուրքական դիվանագիտության ռազմավարությունը և մարտավարությունը Տրապիզոնի հաշտության բանակցություններում: Այդ առիթով Ալ. Խատիսյանը գրում է. «Ես գտնում եմ, որ նման պայմաններում այլևս անհնար է շարունակել բանակցությունները, և անհրաժեշտ է դուրս գալ դժոխային պայմաններից»[77]: Իսկ պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության համար ստեղծված դրությունը բնութագրեց որպես բանտային պայմաններ[78]:

Այս իրավիճակում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը Տրապիզոնում ձգտում էր ուղիներ որոնելու՝ շարունակելու դիվանագիտական բանակցությունները թուրքերի հետ: «Նախ որովհետև,- գրում է Ա. Խաչատրյանը,- Չխենկելին և իր ընկերները գիտէին, որ «Ճակատի դրութիւնը շատ գէշ է: Մեր զօրքն ու հրամանատարներն իրենց պարտականութեան բարձրութեան վրայ չեն: Երկիրն անիշխանութեան մատնրուած է, կռուել չեն կարող»: Երկրորդ Չխենկելին կը խոստովանէ. - «Հոս եկանք շատ անպատրաստ կերպով: Մեր տկարութիւնը մեր մեջէն միութեան բացակայութիւնն է»:

Եւ, իրաւ է, ինչ կը ներկայացներ Կովկասի պատուիրակութիւնը՝ կովկասեան ցեղերու խառնուրդ մը, որոնք միայն ցեղային ատելութիւն ունէին իրարու դէմ միայն իբր պատմական փաստ յիշելով, այլև իրենց ազգային ձգտումներով ու շահերով տրամագծօրէն իրարու հակառակ էին: Եւ թուրքերը շատ մօտէն գիտէին այս բանը, ուստի առանց կարևորութիւն տալու զանազան դիմումներուն՝ յառաջ խաղացումը կասեցնելու՝ Կովկասի սահմաններում բուռն ուժով յառաջ կը տանէ-

[77] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 100-101:
[78] Տե՛ս նույն տեղը:

ին իրենց նուաճումը, միւս կողմէն, անուշ և երկդիմի խօսքերով կզբաղցնէին պատուիրակութիւն, աշխատելով միշտ աւելի խորացնել անոնց միջև եղած արդէն բացած ճեղքը»[79]:

Այսպիսով, **Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովում աճող դիվանագիտական ճնշմամբ և տարածքային ռազմական զավթումներով թուրքական պատվիրակությունը շարունակում էր պարտադրել իր ամենագլխավոր պահանջները՝ Անդրկովկասը հանդիսավորությամբ հռչակել անկախ, անվերապահորեն ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, անհապաղ Օսմանյան կայսրությանը հանձնել Բաթումը, Արդահանը, Կարսը՝ իրենց գավառներով:**

Այնուհանդերձ, Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը ստեղծված հակամարտ տրամադրությունների և ձգտումների պայմաններում փորձում էր դուրս գալ դիվանագիտական փակուղուց ու շարունակել բանակցությունները և հաշտության բանակցությունների օրակարգ մտցնել Անդրկովկասյան սեյմի հաստատած՝ Թուրքիայի հետ հաշտության 3-րդ և 4-րդ գլխավոր հիմնադրույթները:

Մինչ այդ Հուսեյն Ռաուֆ բեյի հանձնարարությամբ երկու պատվիրակությունների փոխայցելությունների ժամանակ և մասնավոր զրույցներում շոշափվեց փետրվարի 16-ին (մարտի 1) Անդրկովկասյան սեյմի հաստատած 4-րդ հիմնադրույթը, որում ամրագրված էր, որ պատվիրակությունը կողմ է Արևելյան Անատոլիայի ինքնորոշմանը, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը թուրքական պետության շրջանակներում[80]: Հուսեյն Ռաուֆ բեյը և թուրքական

---

[79] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 74:

[80] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 43, նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 84:

պատվիրակության առաջին քարտուղար Իսմայիլ Համի բեյը Ալ. Խատիսյանի և Հովի. Քաջազնունու հետ մասնավոր զրույցներում ներկայացրին Հայկական հարցի «լուծման» իրենց առաջարկը: Հուսեյն Ռաուֆ բեյը առաջարկում էր Թուրքիայի և Անդրկովկասի բնակչության փոխանակություն: Թուրքական կողմը պնդում էր, որ Արևմտյան Հայաստանի 300 հազար հայ փախստականներին հարկ է թողնել Արևելյան Հայաստանում, իսկ նրանց փոխարեն Արևմտյան Հայաստան մշտական բնակության տեղափոխել նույնքան մահմեդական բնակչություն[81]: Դա նշանակում էր, որ թուրքական կողմը մերժում էր Հայկական հարցի լուծման պահանջը: Բնականաբար, Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության հայ անդամներ Ալ. Խատիսյանը և Հովի. Քաջազնունին կտրուկ մերժեցին, «որովհետեւ ան,- գրում է Ալ. Խատիսյանը,- կը զրկէր մեզ իրաւունքէ պահանջել Թրքահայաստանը, որ թուրքերը կուզէին տեղաւորել Անդրկովկասէն տարուած մահմեդական տարրեր»[82]: Հուսեյն Ռաուֆ բեյը հայ պատվիրակների առարկության առիթով պաշտոնապես հայտարարեց. «**Հայերը չհամաձայնեցին իրենց (թուրքերի – Գ. Պ.) պահանջներին, նրանք՝ ռուսահայերը (արևելահայերը – Գ. Պ.), նույնպես կարող են ենթարկվել կոտորածի, ինչպես տաճկահայերը** (արևմտահայերը – Գ. Պ.)»[83]: Ի դեպ, Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության պատվիրակության նախագահի այդ պաշտոնական հայտարարությունը մեկ անգամ ևս փաստում է, որ Արևմտյան Հայաստանում և հայաբնակ այլ վայրերում ցեղասպանություն և հայրենազրկում է կատարվել: Օսմանյան կառավարությունը, դեռ

[81] Տե՛ս **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 32:
[82] Նույն տեղում:
[83] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 123, թ. 1:

19-րդ դարի կեսերից սկսած, Արևմտյան Հայաստանի բնակչության ժողովրդագրական կազմը հիմնովին փոխելու հեռահար նպատակով պարբերաբար և հետևողականորեն իրականացնում էր իր ավանդական քաղաքականությունը, այն է՝ ոչ միայն բացառել ցեղասպանության պատճառով հայրենազրկված արևմտահայ փախստականների վերադարձն իրենց հայրենի օջախներ, այլև Արևմտյան Հայաստանում բնակեցնել Անդրկովկասի և այլ երկրամասերի մահմեդական բնակչությանը և միջազգային հանրությանը հրամցնել, թե Արևմտյան Հայաստանում չկա մի տարածք, որտեղ հայերը մեծամասնություն են կազմում: Թուրքիայի ղեկավարությունը հուսադրում էր քրդերին, որ Արևմտյան Հայաստանը հայկական տարրերից իսպառ մաքրելուց հետո իրական պայմաններ կստեղծվեն քրդական ինքավարություն կազմավորելու համար: Քրդերը, հրապուրված պետականություն ունենալու հեռանկարով, Արևմտյան Հայաստանում և հայաշատ այլ վայրերում դարձան Հայոց ցեղասպանության և հայրենազրկման ամենագործուն մեղսակիցները: Թուրքերի հետ նրանք տիրացան Արևմտյան Հայաստանի տարածքում ապրող հայության ողջ ունեցվածքին: Ցեղասպանության և հայրենազրկության «հետևանքով Արևմտյան Հայաստանի տարածքում քրդական էթնիկական տարրը ձեռք բերեց գերակշիռ դիրք և կազմեց մեծամասնություն: Կարծես թե իրականանում էր երիտթուրքերի կողմից քրդերին խոստացված ինքնավար Քրդստան ստեղծելու գաղափարը: Սակայն իրականում հենց այդ ժամանակվանից սկսած, թուրքական պետության համար օրակարգի անհետաձգելի հարց էր դառնում նաև «քրդական պրոբլեմի» լուծումը: Նկատի ունենալով Օսմանյան կայսրության մեջ բնակվող քրդական տարրը՝ «Միասնություն և առաջադիմություն» կո-

միտեի ղեկավարներից մեկը գրել է. «Մեր երկիրը պետք է մաքրել ոչ թուրք տարրերից»»[84]:

Այսօր ցեղասպանության սպառնալիքը բումերանգի պես ուղղվել է մասնավորապես Արևմտյան Հայաստանում բնակվող քրդերի դեմ (Արևմտյան Հայաստանը քրդերը համարում էին իրենց «հայրենիքը»):

Տրապիզոնում երկու պատվիրակությունների փոխադարձ այցելությունների ժամանակ և մասնավոր զրույցներում թուրքական կողմը չէր թաքցնում Օսմանյան կառավարության պաշտոնական դիրքորոշումը. «Այլևս թույլ չեն տա հայերին վերադառնալ Թուրքահայաստան»[85]: Նրանք հայտարարեցին նաև, որ Հայկական հարցը «Թուրքիայի համար բացարձակապես ընդունելի չէ, և նույնիսկ ավելորդ է Թուրքահայաստանի ինքնավարության մասին խոսելը. այնտեղ (Արևմտյան Հայաստանում – Գ. Պ.) հայեր չկան և չեն լինի, քանզի որտեղով անցնում է թուրք զինվորը, այնտեղ այլևս հայ չի մնա»[86]: Դրա համար էլ թուրքերը խորհուրդ էին տալիս Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության վրաց և թաթար անդամներին այլևս չբարձրացնել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը, այլ «լեզու գտնեն և գործեն համերաշխ առանց հայերի»[87]:

Հուսեյն Ռաուֆ բեյը և նրա պատվիրակության անդամներն անզիջում ու վճռական էին իրենց բոլոր պահանջներում: Տրապիզոնի մարտի 8-ի (21) հաշտության բանակցությունների

---

[84] Տե՛ս **Վ. Բայբուրդյան,** Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008, էջ 227:
[85] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 103:
[86] Նույն տեղում:
[87] Նույն տեղում:

5-րդ նիստում նա կտրուկ մերժեց և անթույլատրելի համարեց Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության առաջարկը՝ Անդրկովկասյան սեյմի հաստատած 4-րդ գլխավոր հիմնադրույթը՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը օրակարգ մտցնելը, և այն պաշտոնապես որակեց «միջամտություն Թուրքիայի ներքին գործերին»[88]: Նա զայրույթով հայտարարեց, որ «վերջին դարերի թուրքական պատմության ամբողջ ընթացքում մեծ պետությունները Թուրքիային խեղդել են այդ հարցով (Հայկական – Գ. Պ.)»[89]: Այնուհետև Հուսեյն Ռաուֆ բեյը գրավոր վերջնագիր ներկայացրեց Ա. Չխենկելուն՝ պահանջելով պատասխանել ամենակարճ ժամկետում՝ 3-4 օրվա ընթացքում[90]: Այդ առիթով Ալ. Խատիսյանը գրում է. «Այս հայտարարությունը ուժեղ ազդեցություն գործեց պատվիրակության վրա: Հարցի լրջության պատճառով հայտարարվեց, որ անհրաժեշտ է մեծ ընդմիջում՝ հետագա քայլերի մասին սեփական կառավարություններին հարցում անելու համար»[91]:

Տրապիզոնում ժամանակավորապես ընդհատվեցին հաշտության դիվանագիտական բանակցությունները, սակայն շարունակվեցին Հայկական հարցի շուրջ երկու պատվիրակությունների փոխադարձ դիվանագիտական այցելությունները և մասնավոր զրույցները, որոնց ընթացքում թուրքական կողմը դարձյալ շարունակում էր համառորեն մերժել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը և վճռականորեն պնդել իր

---

[88] BOA. YB., f. 21, dos. 7/4, nr. 9 (Թուրքիայի կառավարությանը կից օսմանյան արխիվ): Շնորհակալություն ենք հայտնում թուրքագետ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արսեն Ավագյանին՝ բարյացակամ վերաբերմունքի և թուրքական (օսմանյան) արխիվներից մեզ նյութեր տրամադրելու համար:

[89] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 143.

[90] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 102:

[91] Նույն տեղում:

գլխավոր պահանջները: Փաստորեն, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը մնաց երկու պատվիրակությունների մասնավոր զրույցների շրջանակներում: Հովհ. Քաջազնունու հարցադրմանը Ա. Չխենկելին պատասխանեց. «Մասնավոր զրույցների ժամանակ ամեն անգամ (Հուսեյն Ռաուֆ բեյից – Գ. Պ.) ստանում եմ նույն ձևական պատասխանը. «Դա Թուրքիայի գործն է»»[92]: Ալ. Խատիսյանի հետ զրույցում վերջինս ասել է, որ «ամեն մի հայի մեջ նստած է եղել մի ռուս լրտես»[93], «հայերը դավաճանել են Թուրքիային, որ մինչև պատերազմը (Առաջին աշխարհամարտ – Գ. Պ.) թուրքերն առաջարկել են իրենց հետ միության մեջ լինել ռուսների դեմ, այնքան էին նրանց (հայերին – Գ. Պ.) վստահում: Բայց հայերը փախչում էին բանակից, գնում էին Ռուսաստան և կռվում էին թուրքերի դեմ: Նրանց մոտ գտնում էին ռումբեր, արկեր, թնդանոթներ և ծածկագրեր՝ Անգլիայից ու Ֆրանսիայից, որ դարձյալ բերվում էին Ուրֆայով (Կիլիկիա): Եթե թուրքերը հայերի դեմ միջոցներ չձեռնարկեին, ապա ռուսներն արդեն Կոստանդնուպոլսում և Ալեքսանդրեթում կլինեին»[94]:

Նույն օրը՝ մարտի 8-ի (21) երեկոյան, կայացան Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության մի քանի ընդհանուր նիստեր: Ա. Չխենկելու առաջարկությամբ ստեղծվեց մի հատուկ հանձնախումբ՝ կազմված պատվիրակության 17 անդամներից և Հովհ. Քաջազնունու, Գ. Լասխիշվիլիի և Ի. Հայդարովի գլխավորությամբ՝ նրանց Թիֆլիս գործուղելու՝ Սեյմին և կառավարությանը զեկուցելու հաշտության խորհրդաժողովում ստեղծված երկու պատվիրակությունների առճակա-

---

[92] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 142.
[93] Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 311:
[94] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 105:

տումների, անհամաձայնությունների մասին և նրանցից նոր լիազորություններ ու հանձնարարականներ ստանալու՝ թուրք-անդրկովկասյան ընդհատված բանակցությունները շարունակելու համար: Սակայն հատուկ հանձնախումբը «իր կողմից ոչ մի հանձնարարական կամ գաղափար չի ուղարկում, այլ միայն ներկայացնում է գործի սեփական միակ կողմը»[95],- գրում է Ալ. Խատիսյանը:

Հաջորդ օրը՝ մարտի 9-ին (22), հատուկ հանձնախումբը մեկնեց Թիֆլիս: Մարտի 12-ին (25) Թիֆլիսում հրավիրված՝ Անդրկովկասյան սեյմի նախագահության, կառավարության և խմբակցությունների ներկայացուցիչների միացյալ ժողովում հանձնախմբի ղեկավարներ Հովհ. Քաջազնունին, Գ. Լասխիշվիլին և Ի. Հայդարովը ներկայացրին Տրապիզոնում կայացած հաշտության բանակցությունների հինգ նիստերի արձանագրությունները, դիվանագիտական բանակցային գործընթացներում ստեղծված անհամաձայնությունները և հակամարտությունների ամբողջ պատկերը[96]: Նրանք հաղորդեցին նաև, որ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը իր հանձնախմբի անդամներին «հանձնարարել է Սեյմին տեղեկացնել բանակցությունների իրավիճակի մասին, իսկ պատվիրակությունն ինքը (հատուկ հանձնախումբ – Գ. Պ.) չունի ընդհանուր կարծիք այն մասին, թե ինչ փոփոխություններ կարելի է մտցնել Սեյմի հաստատած դրույթներում»[97]: Իրազեկումից հետո միացյալ ժողովում ծավալվեց մտքերի փոխանակություն երկու հարցերի շուրջ. առաջին՝ Անդրկովկասի անկախության հռչակման, և երկրորդ՝ փետրվարի 16-ին (մարտի 1) Սեյմի

---

[95] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 102:
[96] Տե՛ս BOA, УВ., f. 21., dos. 7/3, nr. 1-5:
[97] Նույն տեղում, nr. 1-3:

հաստատած 3-րդ և 4-րդ հաշտության գլխավոր հիմնադրույթները վերանայելու և Թուրքիային որոշ զիջումներ անելու:

Առաջին հարցի քննարկման ժամանակ Սեյմի բոլոր խմբակցությունները, բացառությամբ «Մուսավաթի», մահմեդական սոցիալիստական դաշինքի (բլոկի) և Ռուսաստանի մահմեդականների կուսակցության, արտահայտվեցին Անդրկովկասն անհապաղ անկախ հռչակելու դեմ՝ առաջարկելով, որ այն առանձին հատուկ կետով ամրագրվի ապագա հաշտության դաշնագրում[98]: Մահմեդական խմբակցության ներկայացուցիչ Մ. Մեհտիևը, պաշտպանելով Թուրքիայի պահանջը, հայտարարում է, որ եթե Անդրկովկասն անկախ չհռչակվի, ապա իրենց խմբակցությունը կհրաժարվի սատարել Տրապիզոնի հաշտության բանակցությունները[99]:

Միացյալ ժողովում հնչեցին Սեյմի նախագահության, կառավարության անդամների՝ Ի. Ծերեթելիի, Խ. Կարճիկյանի, հատուկ հանձնախմբի ղեկավարներ Հովհ. Քաջազնունու, Գ. Լասխիշվիլիի և այլոց կարծիքներն Անդրկովկասն անկախ հռչակելու պարագայում երկրամասում ձևավորվելիք տարածքային սահմանների, քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ առճակատումների ու դժվարությունների լրջագույն հետևանքների մասին: Ի. Ծերեթելին, դեմ արտահայտվելով Անդրկովկասն անհապաղ անկախ հռչակելուն, նշեց, որ այդ դեպքում «ստիպված կլինենք որոշել Անդրկովկասի պետության տարածքային սահմանները, և քանի որ այդ սահմաններում կներառվեն վեճի առարկա երեք մարզերը (Բաթում, Արդահան, Կարս – Գ. Պ.), ո՛չ Թուրքիան, ո՛չ դաշնակցային այլ

---

[98] Տե՛ս նույն տեղը:

[99] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 145:

տերություններ չեն ճանաչի մեր անկախությունը, և մեր առաջարկությունը կդիտեն որպես վերջնագիր»[100]:

Այնուհետև երկրորդ հարցի շուրջ ծավալվեց բանավեճ՝ Թուրքիային զիջումներ անելու առավելագույն և նվազագույն չափը որոշելու համար, որպեսզի հնարավորություն ստեղծվի Տրապիզոնում թուրքական պատվիրակության հետ շարունակելու ընդհատված դիվանագիտական բանակցությունները: Սակայն Սեյմի անդամ Ի. Ծերեթելիի առաջարկով միաձայն ընդունվեց, որ նպատակահարմար չէ զիջումների հարցը քննարկել ու որոշում կայացնել միացյալ ժողովում, այլ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության նախագահ, արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելիին պետք է լիազորել լայն իրավունքներով, իսկ պատվիրակության մյուս անդամները կունենան նրա խորհրդականների կարգավիճակ: Նրան իրավունք էր վերապահվում իր իսկ պատասխանատվությամբ ինքնուրույն քայլեր կատարելու այս կամ այն զիջումների համար, իսկ ավելի կարևոր խնդիրների դեպքում՝ հարցում անելու Սեյմին և կառավարությանը: Որոշվեց նաև, որ Տրապիզոնի հաշտության բանակցությունների պաշտոնական քայլերը կատարվելու են Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության անդամների ընդհանուր նիստերում նախապես քննարկվելուց ու հավանության արժանանալուց հետո[101]: Ա. Չխենկելուն իրավունք վերապահվեց հաշտության դաշնագիր ստորագրել Թուրքիայի հետ: Սակայն հետագա իրադարձությունները մեկ անգամ ևս ցույց տվեցին, թե Սեյմի՝ մեծամասնություն կազմող վրացական ներկայացուցիչները

---

[100] BOA, УВ., f.21, dos. 7/3, nr. 3:

[101] Տե՛ս նույն տեղը:

մարտի 13-ին (26) ինչու Ա. Չխենկելուն նման լայն իրավունքներով լիազորեցին: Իրականում Ա. Չխենկելին և նրա պատվիրակությունը ոչ թե նպաստեցին Անդրկովկասին սպառնացող վտանգը կանխելուն, այլ, շրջանցելով հայկական խնդիրները, ընդամենը պաշտպանեցին վրացական շահերը դիվանագիտական բանակցությունների ամբողջ ընթացքում, որը ցավալի հետևանքներ ունեցավ ոչ միայն հայերի, այլև իրենց՝ վրացիների համար:

Մարտի 16-ին (29) հատուկ հանձնախումբը վերադարձավ Տրապիզոն: Նույն օրն էլ հրավիրվեց Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության 39-րդ ընդհանուր նիստը, որտեղ լսվեցին հատուկ հանձնախմբի անդամների զեկույցները Թիֆլիսի միացյալ ժողովում ու Սեյմում քննարկված հարցերի և ընդունված որոշումների մասին[102]: Նույն օրը՝ երեկոյան, Ա. Չխենկելիի հետ մասնավոր զրույցում Հուսեյն Ռաուֆ բեյը Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունից պահանջեց մինչև մարտի 21-ը (ապրիլ 3) պատասխան տալ[103]:

Մարտի 18-ին (31) Տրապիզոնում Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության ընդհանուր նիստում (նախագահող՝ Ա. Չխենկելի) քննարկվեց Սեյմի հաստատած 3-րդ և 4-րդ հաշտության հիմնադրույթների վերանայման և Թուրքիային որոշ զիջումներ անելու հարցը: Այն իր աշխատանքն սկսեց Սեյմի 4-րդ գլխավոր դրույթի՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը թուրքական պետականության շրջանակներում հարցի քննարկումից, որտեղ նոր տարաձայնություններ առաջացան պատվիրակության անդամների միջև:

---

[102] Տե՛ս նույն տեղը, nr. 3-5:
[103] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 104:

Ընդհանուր նիստում Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցի շուրջ հանգամանալից, փաստարկված զեկուցումներով հանդես եկան Ալ. Խատիսյանը և Հովի. Քաջազնունին: Ալ. Խատիսյանը նախ ներկայացրեց հարցի համառոտ պատմությունը, այնուհետև՝ 1915 թ. ցեղասպանության և հատկապես Տրապիզոնում կատարված ոճրագործությունների մասին մանրամասներ, ապա կարևորեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնախնդրի լուծման անհրաժեշտությունը: Տարածքների մասին խոսելիս Ալ. Խատիսյանը նշեց, որ Արևմտյան Հայաստանում հայերը հետապնդում են ինչպես էթնիկ, այնպես էլ քաղաքական, տարածքային նպատակներ. «Սա նկատի առնելով՝ մենք պետք է հասնենք այն բանին, որ որոշվի անգամ նվազագույն տարածք՝ խիստ որոշարկված սահմաններով, որտեղ հայ բնակչությանը և Թուրքիայի՝ այդտեղ բնակվող մյուս ժողովուրդներին պետք է տրվեն ինքնավար (ինքավարության) իրավունքներ: Այդպիսի տարածք կարող է լինել Բայազետի սանջակը, Էրզրումի վիլայեթը, Մուշի սանջակը և Բիթլիսի վիլայեթի հյուսիսային մասը՝ առանց Բատմանսուի (Տիգրիսի վերին հոսանք – Գ. Պ.) հարավային շրջանի»[104]: Վերջում Ալ. Խատիսյանը հայտնեց, որ հայերի ցանկությունն է իրենց հայրենիքում ստանալ մի անկյուն, որտեղ կարող են ապրել ինքնավար կյանքով՝ թուրքական կառավարության հովանու ներքո: Եզրափակելով իր խոսքը՝ զեկուցողը նշեց. «…Վանա լիճը՝ Մուշի, Ալաշկերտի և Վանի երեք դաշտավայրերով, հայ ժողովրդի ուշադրության կիզակետն է: … Իր ներքին գործերը վարելու համար այդ շրջանի բնակչությունը պետք է օգտվի ինքնակառավարման

[104] BOA, УВ., f. 21, dos. 7/4, nr. 1:

իրավունքներից՝ օրենսդիր ներկայացուցչական ժողովով և ընտրովի կենտրոնական գործադիր մարմնով: Նրան է տրվում ինքնակառավարվող տարածքում բնակվող բոլոր ժողովուրդների ներկայացուցիչներից միլիցիա կազմավորելու իրավունքը: … Հայ-թուրքական հարաբերությունների ամենամռայլ պայմաններում հայերի շրջանում անջատողականության գաղափար անգամ չէր ծագում: Ինքնակառավարվող Հայաստան՝ Թուրքիայի սահմաններում. այսպիսին էր թուրքահայերի մշտական կողմնորոշումը»[105]:

Ալ. Խատիսյանը կարևորել է նաև ցեղասպանության պատճառով հայրենազրկված արևմտահայ փախստականների վերադարձը իրենց հայրենի օջախներ. «Այժմ ես և իմ ընկեր Քաջազնունին ելույթ ենք ունենում ռուսահայերի անունից՝ որպես Անդրկովկասի սեյմի անդամ պատվիրակներ, մենք գիտենք մեր եղբայրների ցանկությունները, և մենք նաև գիտենք, որ առանց Թուրքիայում Հայկական հարցը լուծելու անհնար է Անդրկովկասում կարգուկանոն հաստատելը. Անդրկովկասը և այնտեղ բնակվող ժողովուրդները չեն կարողանա վերացնել ներքին տարաձայնությունները միմյանց միջև, եթե հայերին Թուրքիայում տեղավորելու հարցը և հայ փախստականների տուն վերադառնալը չստանան իրենց դրական լուծումը: Այսպիսին են Արևելյան Անատոլիայի հայերին տեղավորելու գործի հիմնական դրույթները: Ցավոտ հարցի լուծման այս միջոցը ամենավճռական ձևով, ի դեպ, կլուծի Անդրկովկասում բնակվող թուրքահայերի՝ հայրենիք հանգիստ վերադառնալու հույժ կարևոր հարցը»[106]: Այնուհետև որոշ դրույթներ լուսաբա-

---

[105] Նույն տեղում, nr. 2:

[106] BOA, УВ ., f. 21, dos. 7/4, nr. 5 (նկատի ունի Արևմտյան Հայաստանը):

նելու համար Ալ. Խատիսյանը բերում է Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների, հատկապես այդտեղի հայերի թվի մասին ընդհանուր վիճակագրական տվյալներ: Դրանք քաղված էին 1914 թ. Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության հրատարակած «Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու»-ից և 1913 թ. գերմանացի գիտնական Յ. Լեփսիուսի հրապարակած տվյալներից: Ըստ դրանց՝ Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում ընդհանուր բնակչությունը 2 600 000 էր, իսկ հայերի թիվը հասնում էր 1 034 400[107]-ի: Եզրափակելով իր խոսքը՝ Ալ. Խատիսյանը նշում է, որ ներկայացված հիմնավորումները էական հիմք են թափանցելու հիմնահարցի մանրամասների մեջ. «Ինչ վերաբերում է հայերի պահանջները կենսագործելու միջոցին, ապա պետք է հուսալ, որ Թուրքիայի և Անդրկովկասի համար ընդունելի պատվավոր խաղաղությունը կնքելու գործն իր ձեռքը վերցրած անդրկովկասյան ժողովրդավարությունը, հատկապես Վրաստանի և մահմեդականների ժողովրդավարությունը կանեն այն, ինչ առաջ չէր հաջողվում միջազգային դիվանագիտությանը, և թուրքահայերի պատմության մեջ կբացվի լուսավոր նոր էջ»[108]:

Ա. Չխենկելին, արձագանքելով Ալ. Խատիսյանի զեկուցմանը, ընդհանուր նիստի մասնակիցներին հիշեցնում է. «Մենք ունենք Օսմանյան պատվիրակության՝ մարտի 8-ի պատասխանը, որը վերաբերում է հայկական հարցին (կարդում է): Մենք Սեյմում ունենք այս հարցի հայտնի դրվածքը, որն արտահայտված է մեր 4-րդ թեզիսում: Առաջարկում եմ պատվիրակությանը հարցի դրվածքը փոխելու հնարավորու-

[107] Տե՛ս BOA, YB. f. 21, dos. 7/4, nr. 7:
[108] Նույն տեղում:

թյան պաշտոնական քննարկմամբ զբաղվել»[109]: Կարծես թե Ա. Չխենկելին ուղղորդում էր պատվիրակության անդամներին 4-րդ հիմնադրույթը հանել օրակարգից: Իսկ Հովհ. Քաջազնունին, հակադրվելով Ա. Չխենկելուն, նշեց, որ խաղաղության դաշնագրի ստորագրման հետ միաժամանակ սուլթանը հատուկ պայման է հայտարարում Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը սուլթանի իշխանության (ինքնավարության) ներքո՝ ունենալով սեփական կառավարություն և միլիցիա: Ինքնավար Արևմտյան Հայաստանը սուլթանին ամենամյա տուրք է վճարելու: Իսկ ինքնավարության սահմանների, տարածքները բնակեցնելու, կառավարման ձևի և այլ հարցերը կձևակերպվեն, «եթե լինի օսմանյան պատվիրակության սկզբունքային պատասխանը՝ քննարկման և համաձայնության հարց դարձնել Թուրքահայաստանի հիմնախնդիրը վերը նշված ուղղությամբ:

Թուրքիայի կողմից պարտավորության ձևը և հայտարարության ձևը դիվանագիտական տեխնիկայի հարց են, ինչին մենք էական նշանակություն չենք տալիս»[110]:

Սակայն վրաց և թաթար պատվիրակության անդամներն իրենց ելույթներում Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցում ընդհանուր առմամբ դրսևորեցին մերժողական կեցվածք: Գ. Լասխիշվիլին հայտարարեց. «Մենք հնարավորություն չունենք Հայկական հարցի լուծմանը հասնելու: Այդ պատճառով ես կարծում եմ, որ Սեյմի դրույթներից 4-րդ կետը պետք է հանել: Մենք պետք է բացատրենք թուրքերին, որ սա միջամտություն չէ իրենց գործերին, որ Անդրկովկասը չի կա-

[109] BOA, УВ., f. 21, dos. 7/4, nr. 8:
[110] Նույն տեղում:

րող հանգիստ ապրել և ազատ զարգանալ, եթե Թուրքիայի սահմաններում հայկական հարցը լուծում չստանա: Ես կարծում եմ, որ Թուրքիայի հետ պետք է կնքվի հատուկ համաձայնագիր համաներման և փախստական հայերի՝ Թուրքիա՝ իրենց լքած գավառները վերադառնալու մասին: Սրանից ավելի, դժբախտաբար, մենք ոչինչ անել չենք կարող»[111]: Խաղաղարար պատվիրակության անդամ Խաս-Մամեդովը, պաշտպանելով թուրքերի պահանջները, իր ելույթում ասաց. «Այժմ ես կխոսեմ ոչ թե որպես խաղաղարար պատվիրակության անդամ, այլ որպես անդրկովկասցի, որպես հասարակական և քաղաքական գործիչ: Ես նույնպես կարծում եմ, որ այն ձևը, որով շարադրվել էին Սեյմի պահանջները Հայաստանի վերաբերյալ, ոչ այլ ինչ է, քան միջամտություն Օսմանյան պետության ներքին գործերին»[112]: Իսկ վրաց պատվիրակ Գ. Գվազավան, առարկելով Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարին, շեշտեց. «Միակ բանը, որ հնարավոր է, համընդհանուր համաներման պահանջն է փախստականների… և այլոց նկատմամբ: Սա հսկայական նշանակություն կունենա հայ փախստականների համար: Այդ պատճառով ես առաջարկում եմ ամբողջովին հանել 4-րդ կետը»[113]: Մ. Հաջինսկին նույնպես հակադրվեց Հովի. Քաջազնունուն՝ դրանք որակելով առավել վերջնագրային, քան նույնիսկ Սեյմի պահանջների 4-րդ հիմնադրույթն է, և առաջարկեց հարցը դնել «գոնե պատերազմող կողմերի քաղաքացիների համար համաներման և հայ փախստականների՝ Թուրքիա վերադառնալու ձևով»[114]:

---

[111] Նույն տեղում, nr. 9:
[112] Նույն տեղում, nr. 15:
[113] Նույն տեղում, nr. 14:
[114] Նույն տեղում, nr. 9:

Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցի շուրջ գրեթե նույն մերժողական ելույթները հնչեցին խաղաղարար պատվիրակության մյուս անդամների կողմից, և արդյունքում հիմնախնդիրը տեղափոխվեց «համաներման» դաշտ, որը նույնպես Թուրքիան մերժեց:

Ալ. Խատիսյանը, իր եզրափակիչ ելույթում առարկելով նախորդ բանախոսներին, մեկ անգամ ևս համառոտ ներկայացրեց հիմնախնդրի քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական, անվտանգության խիստ կարևորությունը ոչ միայն հայերի, այլ նաև Անդրկովկասի ժողովուրդների համար: Ալ. Խատիսյանը, չհամաձայնելով նախորդ բանախոսների հետ, «առաջարկում է ցույց տալ Օսմանյան պատվիրակությանը, որ Անդրկովկասի պատվիրակությունը նպատակ չի ունեցել հատուկ դիպչելու Օսմանյան կայսրության ներքին գործերին, և նշել այն հիմքերը, որոնցով Հայկական հարցը կարգավորելու համար մտավ Անդրկովկասի պատվիրակության առաջ քաշած դրույթների մեջ: Մենք պետք է մեր պատասխանում առաջին հերթին նշենք Անդրկովկասն ու Օսմանյան կայսրությունը բնակեցնող ժողովուրդների բարեկամական հարաբերությունները, և երկրորդ հերթին այն, որ Անդրկովկասի սահմաններում մի քանի հարյուրհազար թուրքահպատակ հայ փախստականներ կան, որոնց հետագա ճակատագիրը անքակտելիորեն կապված է Անդրկովկասի երկրամասի պարենային, տնտեսական և այլ շահերին, և Թուրքիայում Հայկական հարցի այս կամ այն լուծումից է կախված Անդրկովկասի ներքին կյանքի հանգիստ կազմակերպումը: Ես համաձայն չեմ Գ. Գվազավայի հետ, որը առաջարկություն մտցրեց 4-րդ կետը հանելու մասին, քանզի այս կամ այն կետը կարող է հանել միայն Սեյմը: Սեյմի շնորհած նոր լիազորու-

թյունները մեր նախագահին իրավունք չեն տալիս հիմնադրույթներից այս կամ այն կետը հանելու: Եթե մեզ առաջարկում են, ինչպես դա արեց Գ. Լասխիշվիլին, Հայկական հարցի լուծումը հետաձգել մինչև համաշխարհային նոր խորհրդաժողովը, ապա, իմ խորին համոզմամբ, այդ ժամանակ Հայկական հարցի լուծումը կարող է ավելորդ լինել, որովհետև եթե բանակցությունները չհանգեցնեն ցանկալի արդյունքների, ապա դա կարող է հանգեցնել հայերի նոր ջարդերի»[115]: Փաստորեն, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնահարցը շարունակեց մնալ երկու պատվիրակությունների անպտուղ քննարկումների թեմա:

Այսպիսով, ստեղծված պայմաններում ակնհայտ էր, որ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության երկու հայ անդամներ՝ Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջազնունին, չէին կարող դիվանագիտական դաշտում որևէ դեր խաղալ և քիչ թե շատ ազդեցություն գործել բանակցային գործընթացների վրա: Այնուամենայնիվ, հայ պատվիրակները փորձեցին բարձրացնել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնահարցը, որը թուրքերի և խաղաղարար պատվիրակության որոշ անդամների կողմից որակվեց որպես միջամտություն Թուրքիայի ներքին գործերին: Երկու պատվիրակությունների մասնավոր զրույցներում թուրք պատվիրակները բացահայտ հայտարարեցին, որ իրենց պայմանները չընդունելու պարագայում իրենք ոչ միայն կկոտորեն Թուրքիայի տարածքում բնակվող շուրջ 200 հազար հայերին, այլև չեն խնայի կովկասահայերին: Այսքանով էլ փակվեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնահարցը Տրապիզոնի բանակցություններում:

---

[115] BOA. УВ., f. 21, dos. 7/4, nr. 21:

## 2. Թուրքիային տարածքային զիջումներ անելու հարցը Տրապիզոնի բանակցություններում

Ինչպես վերը նշվեց, Տրապիզոնի դիվանագիտական բանակցային գործընթացներում առանցքային տեղ էին գրավում նաև տարածքային և սահմանային խնդիրները:

Օսմանյան Թուրքիայի կողմից տարածքային նոր զավթումները և Տրապիզոնում գտնվող Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության վրա աճող դիվանագիտական ճնշումը վերջինիս հարկադրեցին վերանայելու նաև Սեյմի՝ 1918 թ. փետրվարի 16-ին (մարտի 1-ի) հաստատած 3-րդ հիմնադրույթը, որում ամրագրված էր՝ կնքվելիք հաշտության դաշնագրում պետք է վերահաստատվեն ռուս-թուրքական պետական այն սահմանները, որոնք գոյություն ունեին մինչև Առաջին աշխարհամարտը[116]: Սակայն ստեղծված ծանր և անբարենպաստ պայմաններում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը բանակցային փակուղուց դուրս գալու համար հարկադրված էր Թուրքիային տարածքային որոշ զիջումներ անել:

1918 թ. մարտի 19-ին (ապրիլի 1) Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության երկու ընդհանուր բանակցային նիստերում քննարկվեց Սեյմի 3-րդ հիմնադրույթը վերանայելու և Թուրքիային տարածքային զիջումներ անելու հարցը: Այստեղ բախվում էին երկրամասի երեք գլխավոր ազգությունների շահերը. վրացիները չէին ուզում Թուրքիային զիջել Բաթումը, իսկ հայերը՝ Կարսը: Վրաց և թաթար պատվիրակու-

[116] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 43, նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 84:

թյան անդամները բանակցային նիստերում ոչ թե դնում էին տարածքների փոխզիջումների հարցը, այլ փորձում էին իրենց տարածքները պահպանելու հաշվին թուրքերին զիջել հայկական հողերը: «Վրացիների համար,- գրում է Լեոն,- շատ պարզ եր խնդիրը, պետք եր տալ Կարսը և պահել Բաթումը: Թուրքերն ել (կովկասյան թաթարներ – Գ. Պ.) միացան այդ առաջարկությանը: Բայց ի՞նչ անել Կարսի շրջանի 100 հազար հայությունը, ի՞նչպես պաշտպանել Յերևանի նահանգը և մանավանդ նրա հաղորդակցության միակ ճանապարհը, յերկաթուղին, վոր բավական յերկար տեղ քերում ե Արփաչայի ափը և այսպիսով կընկներ թյուրքերի վոչ թե թնդանոթային կամ հրացանային կրակի տակ, այլ ատրճանակների գնդակների տակ: Այս նկատառումները, վորոնց պաշտպանողը յես եյի խորհրդակցական ժողովներում, բերին այն եզրակացության, վոր, յեթե կարելի յե սակարկություններ անել, պետք ե ընդունվի դրա համար այն սկզբունքը, վոր Թյուրքիային զիջվեն միայն թուրքաբնակ յերկրները: Բաթումը և Կարսը վորոշվում եր չզիջել»[117]: Այդ առաջարկությունների հիման վրա սահմանային տեղագրություն կազմելու նպատակով Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը ստեղծեց երեք անձից բաղկացած հանձնախումբ, որի մեջ մտան պատվիրակության՝ Հայկական հարցի գծով խորհրդական Լեոն, վրացի պատմագետ Յ. Ինգորավան և կովկասյան ռազմաճակատի շտաբի մի ռուս սպա, որը լավատեղյակ էր սահմանների տեղագրությանը[118]: «Սկսեցինք աշխատել,- գրում է Լեոն,- բայց առաջին իսկ քայլերից դժվարություններ հարուցանում եր վրացական տենդեն-

---

[117] **Լեո**, նշվ. աշխ., էջ 386:
[118] Տե՛ս նույն տեղը:

ցիան – որքան կարել յե շատ բան տալ Կարսի շրջանից՝ Արդահանի և Բաթումի շրջաններում զիջողություն քիչ անելու համար: … Բայց և այնպես, «իմ ու քո»-ի խիստ հարցեր եյին բարձրանում: Այսպե՞ս պիտի յերեք ազգերն ընդհանուր ույժերով յերկիրը պաշտպանեյին: Յես չեյի ծածկում իմ զարմանքն ու դիմադրում եյի չափազանց անդեն մանր-մունր ազգայնական սակարկություններին: Այս մասին, ի հարկե, իմաց տրվեց Չխենկելիին, վոր ինձանից բացատրություն պահանջեց և ստացավ սպանիչ մանրամասնություններով»[119]:

Ինչպես վերը նշվեց, Թուրքիային տարածքային զիջումներ անելու հարցը դարձավ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության անդամների տարաձայնությունների ու բուռն վիճաբանությունների առանցքային թեման: Պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին, հիմք ընդունելով պատվիրակության ընդհանուր բանակցությունների նիստերում հնչած կարծիքները, կազմեց Թուրքիային տարածքային զիջումներ անելու իր նախագիծը, որն էլ հրապարակեց մարտի 21-ի (ապրիլի 3) նիստում: Ըստ այդ նախագծի՝ Թուրքիային էր հանձնվելու Օլթիի ամբողջ գավառը, Արդահանի գավառի կեսից ավելին և Կարսի ու Կաղզվանի շրջանների զգալի մասը[120]: Նախագծին դեմ արտահայտվեցին խաղաղարար պատվիրակության հայ անդամներ Հովհ. Քաջազնունին և Ալ. Խատիսյանը: Վերջինս գրում է. «Սա մեր բողոքի պատճառն է դառնում: Երեկոյան կողմ կազմվում է վերջնական նախագիծը, ըստ որի՝ 34 հազար վերստից հանձնվում է 8 հազարը: Մենք դժգոհ ենք մնում, որովհետև այն ամենը, ինչ տրվում է (Թուրքիային – Գ.

---

[119] Նույն տեղում, էջ 386-387:

[120] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 104:

Պ.), տրվում է մեր հաշվին և ոչինչ՝ Բաթումի շրջանի հաշվին»[121]:

Մարտի 23-ին (ապրիլի 5) Տրապիզոնի հաշտության բանակցությունների 6-րդ նիստում Ա. Չխենկելին հրապարակեց Թուրքիային տարածքային զիջումներ անելու ծրագիրը, որն էլ ուղարկվեց Կոստանդնուպոլիս[122]: Մինչև այնտեղից պատասխան ստանալը հայտարարվեց ընդմիջում, սակայն շարունակվեցին թուրք-անդրկովկասյան պատվիրակությունների դիվանագիտական փոխայցելությունները և մասնավոր զրույցները վիճելի մի քանի հարցերի շուրջ: Այդ հանդիպումների ժամանակ թուրքական պատվիրակության նախագահ Հուսեյն Ռաուֆ բեյը, անդրադառնալով Հայկական հարցին, ընդգծում է. «Եթե Անդրկովկասի կառավարությունը ցանկանում է Թուրքիայի հետ բարեկամություն հաստատել և խաղաղություն կնքել, նա պետք է տարածքներ զոհաբերի և մի կողմ դնի Հայկական հարցը: … Ճիշտ է, հայերը խոսում են Թուրքիայի սահմաններում Հայաստանի ինքնավարության մասին, **բայց դա ինքնիշխանության վաղուց հայտնի նախաբանն է. այդպես եղավ Բալկաններում թուրքական գավառների հետ:** Այժմ էլ Թուրքիայում կա արքայազն Սաբահ Էդդինի*՝ «Թուրքիայի այդ դավաճանի» կուսակցությունը: Այդ պատճառով

---

[121] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 105:

[122] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 188:

* Աբդուլ Համիդի քրոջ որդին: 1900 թ. տեղափոխվելով Եվրոպա՝ ստեղծեց «Ապակենտրոնացման և անհատական նախաձեռնության լիգա» կազմակերպությունը, սկսեց հրատարակել «Առաջադիմություն» թերթը: Նա դարձավ Թուրքիայի բազմաթիվ ազգությունների կենտրոնախույս ձգտումների գաղափարախոսը: 1908 թ. հեղաշրջումից հետո վերադառնալով Թուրքիա՝ իր շուրջը համախմբեց երիտթուրքերից դժգոհ տարրերին: Տե՛ս **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 263:

կարծում եմ, որ Անդրկովկասի հայերը պետք է ընդհանրապես հանեն 4-րդ կետը»[123] (խոսքը Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի այն հոդվածի մասին է, որի համաձայն՝ Կարսի մարզում պետք է կայանար հանրաքվե): **Հաջորդ օրը՝ մարտի 24-ի (ապրիլի 6) ուշ երեկոյան, Անդրկովկասյան խաղաղաբար պատվիրակության տարածքային զիջումների ծրագրի պատասխանը տրվեց Հուսեյն Ռաուֆ բեյի վերջնագրով.** «Պարո՛ն նախագահ, օսմանյան կայսրության կառավարությունը պնդում է 1918 թ. մարտի 21-ի իր արած հայտարարությունը և խնդրում է Անդրկովկասի հարգելի պատվիրակությանը վերջնական պատասխան տալ իրեն այդ մասին 48 ժամվա ընթացքում»[124]: Վերջնագրից երևում է, որ թուրքական կողմին չէր բավարարել Անդրկովկասյան պատվիրակության՝ տարածքային զիջումների ծրագիրը:

Փաստորեն, թուրքերը վերջնագրով պահանջում էին անվերապահորեն ճանաչել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը և անհապաղ ազատել Թուրքիային տրվելիք բոլոր շրջանները: Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության թաթար անդամները պահանջեցին անհապաղ ընդունել թուրքական վերջնագիրը: Այդ առնչությամբ պատվիրակության՝ Հայկական հարցի գծով խորհրդական Լեոն գրում է. «Մեր թուրք (կովկասյան թաթարներ – Գ. Պ.) ընկերակիցները, վորոնք փրփուրը բերանին ապացուցում էին, թե Թյուրքիան հենց այժմ իսկ իրավունք ունի գրավել ստացած յերկրները, թե

[123] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 105:
[124] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 152, տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 155-156:

չպետք է առհասարակ անհաճո բան անել նրան, այլ խոսել հաշտ ու քաղցր լեզվով»[125]:

Վրաց պատվիրակության անդամները՝ Ա. Չխենկելիի գլխավորությամբ, հայերից գաղտնի դիվանագիտական բանակցություններ էին վարում թուրքերի հետ՝ Բաթումը չհանձնելու համար: Հուսեյն Ռաուֆ բեյը Ալ. Խատիսյանի հետ մասնավոր զրույցում հայտնել էր, որ վրացիները վեց անգամ խնդրել են Բաթումը զիջել իրենց, սակայն իրենք չեն համաձայնել, իսկ աջարներն էլ ուղղակի հայտարարել են, որ Բաթումի խնդիրը իրենց գործն է, և իրենք թույլ չեն տա տնօրինել իրենց քաղաքը[126]: Սակայն Հուսեյն Ռաուֆ բեյը Ալ. Խատիսյանին ասել էր նաև, որ իրենք ոչ մի զիջում չեն անի և Բաթումից ոչ մի պայմանով չեն հրաժարվի:

Թուրքական վերջնագիրը ծանր իրավիճակ էր ստեղծել. այն չընդունելու պարագայում պատերազմական գործողություններն ավելի էին սաստկանալու, և Թուրքիան զավթելու էր Անդրկովկասը: Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունն իր ընդհանուր նիստում որոշեց շատ տարածքներ զիջել Թուրքիային: Մարտի 25-ին (ապրիլի 7) Ա. Չխենկելին հեռագիր հղեց Թիֆլիս իր կառավարությանը՝ նշելով, որ անհրաժեշտ է առավելագույն տարածքային զիջումներ անել Թուրքիային: Պետք է թուրքերին հանձնել ամբողջ Կարսի նահանգը, Արդահանի շրջանի հյուսիսային մասերը և Բաթումի նահանգի Արդվինի շրջանը: Ա. Չխենկելին, եզրափակելով հեռագիրը, նշում էր. «Ես համոզված եմ, որ թուրքերը չեն զիջիր է՛ւ Պաթումը: Վէհիպ փաշան որոշապէս ըսաւ այդ, բայց տար-

---

[125] **Լեռ**, նշվ. աշխ., էջ 390:

[126] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 108:

բերութիւնը այն է, որ անոնք գոնէ կը սակարկեն անոր շուրջ: Գալով Կարսին՝ զայն պահպանել դիւանագիտական ճամբով բացարձակապէս անկարելի է: Կարսի մասին թուրքերը խօսիլ անգամ չեն ուզեր: Ես գիտեմ, որ հարցին այս կերպ դրուիլը կը սպառնայ Անդրկովկասի եւ Սէյմի միութեան, բայց դժբախտաբար, ուրիշ ելք չկայ: Թուրքերը շատ լուրջ կերպով սկսած են պատերազմ մղել»[127]:

Թուրքերն իրենց վերջնագիրն ամրագրեցին Անդրկովկասյան ռազմաճակատում տարածքային նոր զավթումներով: Դեռ մարտի 23-ին (ապրիլի 5), խախտելով Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, նրանք ներխուժել էին Անդրկովկասի սահմանները, գրավել Սարիղամիշը, Արդահանը և Բաթումի գավառի որոշ մասը[128]: Փաստորեն, թուրքական զորքերը արդեն գրավել էին այն տարածքները, որոնք Անդրկովկասյան կառավարությունը համաձայնել էր զիջել Թուրքիային: Նրանք, շարունակելով իրենց որդեգրած ռազմաքաղաքական մարտավարությունը, մի կողմից բանակցում էին Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հետ, իսկ մյուս կողմից, կովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշայի գլխավորած զորաբանակով նոր տարածքներ զավթելով՝ ճնշում էին գործադրում դիվանագիտական բանակցային գործընթացների վրա և պարտադրում իրենց անարդար պահանջները վերջնագրի լեզվով: Ա. Չխենկելիի հետ մասնավոր զրույցում Վեհիբ փաշան սպառնացել էր, որ ամենակարճ ժամանակահատվածում պետք է ավարտվեն թուրք-անդրկովկասյան բանակցություն-

---

[127] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 34:
[128] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 105:

ները, այլապես թուրքական զորքերն արյունոտ բախումներ կունենան Անդրկովկասում, և այդ ժամանակ ընդհանրապես անիմաստ կլինի որևէ բանակցություն վարել[129]: Այս իրավիճակում Անդրկովկասյան կառավարությունը խաղաղարար պատվիրակությանը հեռագրով հրահանգեց, որ «պէտք է յայտնել թուրք պատուիրակութեան, թէ քանի որ թուրք զօրքերը մտած են Անդրկովկասի սահմանները, հաշտութեան բանակցութիւնները պէտք է դադրին եւ այս մասին պիտի հաղորդուի Անդրկովկասի ժողովուրդներուն»[130]: Նույն օրը երեկոյան Անդրկովկասյան կառավարությունը երկրորդ հրահանգը հղեց խաղաղարար պատվիրակությանը, որ համաձայն է զիջելու Կարսի նահանգը և Արդվինի շրջանը, սակայն հայերը դիմադրում են և չեն ուզում Կարս քաղաքը հանձնել թուրքերին[131]:

Ստեղծված չափազանց բարդ ու լարված ռազմաքաղաքական նոր իրադրությունում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունն առաջին անգամ իր ընդհանուր նիստում բարձրաձայնեց՝ «ավելի լավ է շատ արագ ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը»[132]: Պատվիրակության անդամները, բացառությամբ թաթարների, երկյուղում էին, որ թուրքական զորքերն առաջ են շարժվում և վիճելի տարածքները ամբողջովին կգրավեն զենքի ուժով և հաշվի չեն առնի Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը:

2018 թ. Ստամբուլում լույս տեսած «Առաջին համաշխարհային պատերազմը և Ադրբեջանը (Օսմանյան արխիվային

---

[129] Տե՛ս նույն տեղը:
[130] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 35:
[131] Տե՛ս նույն տեղը:
[132] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 105:

փաստաթղթեր)» վավերագրական ժողովածուն, որտեղ ներառված են բազմաթիվ ու բազմաբնույթ արխիվային վավերագրեր, փաստում է կովկասյան թաթարների անվերապահ աջակցությունը օսմանյան Թուրքիային: Բերենք մեկ-երկու օրինակ: Այդ օրերին Հարավային Կովկասի շեյխ ուլ իսլամ Ախունդ մոլլա Մուհամմեդ Փիշնամազզադեն Տրապիզոնում Օսմանյան պատվիրակության նախագահին ուղղված նամակում գրում է. «**Մեր ազգը** (կովկասյան թաթարներ – Գ. Պ.) **միայն մեկ ցանկություն ունի, այն է՝ միավորվել մեր մեծ եղբայր Օսմանյան Բարձր պետության հետ և հնարավորինս շուտ Անդրկովկասում** (Հարավային Կովկաս) **հյուրընկալել օսմանյան բանակին»**[133]: Իսկ մարտի 15-ին մահմեդականների Ազգային խորհրդի գործադիր կոմիտեն կովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշային հղած նամակում հայտնում է. «Գյանջայի նահանգի Աղդաշի շրջանի ձեր 70 հազար թուրք (կովկասյան թաթարներ – Գ. Պ.) որդիները մեր վաղեմի հայրենիք հանդիսացող Թուրքիայի և փառավոր սուլթանի սուրբ դրոշի տակ մտնելու որոշում են ընդունել և պատրաստ են իրենց հոգիները տալու»[134]:

Ա. Չխենկելին ակտիվորեն շարունակում էր ուղիներ որոնել՝ դիվանագիտական բանակցությունների միջոցով կանխելու Բաթումից ութ կիլոմետր հեռու գտնվող թուրքական զորքերի ռազմական գործողությունները:

Մոտենում էր Թիֆլիսից թուրքական վերջնագրին պատասխանելու վերջին ժամկետը (մարտի 26-ը (ապրիլի 8)),

---

[133] Birinci Dünya Savaşı ve Azerbaycan (Osmanlı Arşiv belgeleri), Istanbul, 2018, s. 446:

[134] Նույն տեղում, էջ 444:

որով վերջնականապես որոշվելու էր «պատերազմի կամ խաղաղության» հարցը[135]: Այդ առնչությամբ Ալ. Խատիսյանը գրում է. «Ընդհանրապես տրամադրությունը շատ ծանր էր ու մռայլ. զգացվում էր, որ մենք միասնական չենք և թույլ ենք, որ բանակը չի կարող մեզ սատարել, և դրա համար էլ մենք կարծես հանձնվում ենք «հաղթողների ողորմածությանը»[136]:

Այս չափազանց ծանր ու աննպաստ պայմաններում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը կանգնած էր երկընտրանքի առջև. կա՛մ ընդունել օսմանյան Թուրքիայի վերջնագիրը, կա՛մ խզել դիվանագիտական բանակցությունները և վերադառնալ Թիֆլիս: Ընդհանուր նիստերում երկար ու բուռն քննարկումների և վիճաբանությունների հետևանքով խաղաղարար պատվիրակությունը որոշեց ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, և մարտի 26-ին (ապրիլի 8) Ա. Չխենկելին հեռագրեց Թիֆլիս՝ Անդրկովկասյան սեյմին և կառավարությանը. «Արդահանը վերցված է, Կարսի ճակատագիրը կլուծվի մոտ օրերս, Բաթումի երկաթուղագիծը հավանաբար կկտրեն. թուրքերը գտնվում են Բաթումից ութ վերստի վրա: Մեր տակտիկան՝ չշտապել, մինչև որ պատրաստվենք, չարդարացավ. մեր զորքերն ու նրանց առաջնորդները իրենց բարձրության վրա չեն կանգնած: Երկիրն առանց իշխանության ու կարգապահության չի կարող պատերազմել: **Անհրաժեշտ եմ գտնում իսկույն ևեթ լիազորություն ստանալ՝ ընդունելու Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը**»[137]: Փաստորեն, Ա. Չխենկելին դարձավ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը ընդունելու կողմնակիցը:

---

[135] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 106:
[136] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 104:
[137] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 223, թ. 3:

Այդ մասին հայ պատվիրակներ Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջազնունին հեռագրով տեղեկացրին Անդրկովկասյան սեյմի «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության խմբակցությանը. «Մեր պարտքն ենք համարում դաշնակցություն կուսակցության ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ **ստեղծված իրավիճակում Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի ճանաչումը չարյաց փոքրագույնն է»**[138]:

Սակայն մինչև Սեյմի և կառավարության կողմից հարցի քննարկումը Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությանը հայտնի դարձավ, որ դրանց անդամները հակված չեն ընդունելու Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը: Ա. Չխենկելին Ի. Ծերեթելիից, Ն. Ժորդանիայից, Ն. Ռամիշվիլիից և Ե. Գեգեչկորիից ստացել էր հեռագրեր, որոնցում նրանք հայտարարում էին, թե «Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը ճանաչելու առաջարկությունը բացարձակապես անընդունելի են համարում. կարծում են, որ այդ արարքը քաղաքական և ազգային ինքնասպանություն է Վրաստանի և մենշևիկների կուսակցության համար, և որ իրենք գերադասում են նվաճված լինել, և այդ պատճառով էլ ոչ մի կերպ չեն կարող համաձայն լինել Ա. Չխենկելիի և խաղաղարար պատվիրակության առաջարկությանը»[139]:

Հաջորդ օրը Ա. Չխենկելին Հուսեյն Ռաուֆ բեյին տեղեկացրեց, որ պատրաստ է Կարսը հանձնելու թուրքերին և անձամբ համաձայն է ու պնդում է ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, սակայն ինքը պետք է ստանա Անդրկովկասյան սեյմի և կառավարության համաձայնությու-

---

[138] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 107:

[139] Նույն տեղում:

նը, որից հետո թուրքական կողմին կտեղեկացնի իրենց որոշման մասին մինչև մարտի 28-ի (ապրիլի 10) երեկոյան ժամը 7-ը[140]: Սակայն, Թիֆլիսից Սեյմի և կառավարության վերջնական պատասխանը նշված ժամանակում չստանալով, Ա. Չխենկելին, օգտվելով իր արտակարգ լիազորություններից, մարտի 28-ին (ապրիլի 10) ընդունեց թուրքական վերջնագրի պայմանները և գրավոր պատասխանեց պատվիրակության նախագահ Հուսեյն Ռաուֆ բեյին. «Անդրկովկասյան հաշտության պատվիրակությունը, ի պատասխան օսմանյան պատվիրակության նախագահի 1918 թ. ապրիլի 6-ի նամակի, պատիվ ունի հայտարարելու, որ ինքը ընդունում է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը և պատրաստ է դրա հիման վրա շարունակելու հետագա բանակցությունները»[141]:

Մարտի 31-ին (ապրիլի 13) թուրքական պատվիրակության նախագահը Ա. Չխենկելուն հաղորդեց՝ իր կառավարությունը, տեղեկանալով, որ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը ճանաչել է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, անհրաժեշտ է համարում իր դաշնակիցներ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի մասնակցությունը թուրք-անդրկովկասյան բանակցություններին և միաժամանակ կարծում է, որ **Անդրկովկասը հնարավորինս շուտ պետք է հռչակի իր անկախությունը**[142]: Թուրքական կողմը դրանով իհարկե փորձում էր դյուրացնել Անդրկովկասի գրավումը:

---

[140] Տե՛ս նույն տեղը, թ. 106:

[141] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 152, նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 160:

[142] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 152, նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 162:

Հենց նույն օրը հայտնի դարձավ, որ Վեհիբ փաշան մարտի 30-ին (ապրիլի 12) վերջնագիր էր ներկայացրել Բաթումի պարետ, գեներալ Գեդևանովին, որ եթե մինչև մարտի 31-ի (ապրիլի 13) ժամը 16-ը կամովին չհանձնեն քաղաքը՝ զինամթերքով հանդերձ, և դուրս չբերեն զորքը, ապա ինքը կհրամայի ռմբակոծել և գրոհով վերցնել այն[143]:

Ա. Չխենկելին երկու բարեխոս էր գործուղել՝ Վեհիբ փաշային խնդրելու հետաձգել Բաթումի ռմբակոծումը մինչև Անդրկովկասյան սեյմից պատասխան ստանալը, սակայն Վեհիբ փաշան մերժել էր: Այդ մասին Ա. Չխենկելին հեռագրեց Բաթում՝ Մդիվանիին, և խորհուրդ տվեց առանց դիմադրության թուրքերին հանձնել Բաթումի ռազմական ամրոցը: Այդ որոշմանը խստորեն հակադրվեց Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հայ անդամ Ալ. Խատիսյանը, որը հետագայում այդ առնչությամբ գրում է. «Ես կտրուկ, անվերապահ հայտարարեցի, որ նա (Ա. Չխենկելի – Գ. Պ.) իրավունք չունի դա անելու, որ դա կառավարության իրավունքն է, ոչ թե նրա: Ներկա էր Քաջազնունին: Այս առիթով Ա. Չխենկելին ինձ հայտնեց, որ ինքը մասնավոր խորհուրդ է տվել: Ես հայտարարեցի. խաղաղարար պատվիրակությանը տրվող մասնավոր խորհուրդները բացարձակապես անընդունելի են: Չխենկելին նաև ասաց, որ ինքը հեռագրել է Բաթումից ուղարկել վրացի սպաներ և Բաթումի քաղաքային ինքնավարությունից մեկ ներկայացուցիչ … ամրոցը և քաղաքը հանձնելու պայմանները պարզելու համար: Այս ամենին Վեհիբ փաշան պատասխանել է, որ ինքը որպես զիջում կարող է … իր զորքերը չմտցնել քաղաք: Չխենկելին հեռագրում ընդհանրապես հիմ-

[143] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 107:

նավորում էր իրադրությունը որպես «անելանելի իրադրություն» ներկայացնող ինչ-որ պառակտիչ նամակով, մատնանշում էր Գեգեչկորիին՝ որպես իր տեղեկատվության աղբյուրի: Այս վիճակում մենք ստիպված էինք միայն տեղեկանալ նրա տված ցուցումների մասին, որոնք թուրքերին ցույց էին տալիս մեր անօգնականությունը»[144]:

Նույն օրը՝ կեսօրին, Ն. Չխեիձեի ղեկավարությամբ Թիֆլիսում հրավիրվեց Անդրկովկասյան սեյմի նախագահության, կառավարության և կուսակցությունների խմբակցությունների ներկայացուցիչների միացյալ ժողովը, որտեղ քննարկվեցին թուրքական վերջնագրի պայմանները, այսինքն՝ պատերազմի կամ խաղաղության հարցը: Ե. Գեգեչկորին Անդրկովկասյան կառավարության անունից հայտարարեց, որ ռազմական հրամանատարության համոզմամբ բանակը հուսալի վիճակում է և կարող է թուրքերի հարձակումից պաշտպանել Բաթումը[145]: Իսկ Ի. Ծերեթելին հավելեց, «որ ավելի լավ է մեռնել ռազմի դաշտում, քան մահացու հարված հասցնեն մեզ»[146]: Երկար ու բուռն քննարկումների արդյունքում միացյալ ժողովը միաձայն ընդունեց որոշումների հետևյալ նախագիծը.

1. Պատերազմ հայտարարել Թուրքիային՝ հանուն Անդրկովկասի սահմանների պաշտպանության:

2. Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը ետ կանչել Տրապիզոնից:

3. Զենքի տակ առնել երկրի՝ զենք կրելու ունակ բոլոր մարդկանց:

---

[144] Նույն տեղում:

[145] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 163-164:

[146] Նույն տեղում, էջ 164:

4. Արտակարգ մի կոչ ուղղել ժողովրդին՝ բացատրելով հաշտության բանակցությունների ամբողջ ընթացքը, շեշտելով պատերազմի հրամայականությունը:

5. Սեյմի հաստատմանը ներկայացնել այս որոշումների նախագիծը[147]:

Նույն օրը՝ երեկոյան, հրավիրվեց Անդրկովկասյան սեյմի նիստ, որտեղ հնչեցին կրակոտ, ռազմաշունչ, հուզիչ ու սուր քննադատական բազմաթիվ ելույթներ օսմանյան Թուրքիայի և նրա վերջնագրի պայմանների ու միացյալ ժողովի ընդունած որոշումների նախագծի մասին: Այստեղ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել Անդրկովկասի ողջ ազգաբնակչությանն ուղղված կոչից մի հատված. «Մեզնից պահանջում էին ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որ կնքուած է առանց Անդրկովկասի ժողովուրդների գիտութեան ու հաւանութեան: Պահանջում էին իրենց հանձնել մեր լաւագոյն նաւահանգիստը՝ Բաթումը: Մենք ամեն բան արինք բանակցութիւնների ու խաղաղ ճանապարհի միջոցով համոզելու համար թիւրք կառավարութեանը, որ նա հրաժարուի Բաթումից: Յանուն խաղաղութեան մենք բազմաթիւ զիջումներ արինք. բայց չէինք կարող հրաժարուել Բաթումից, որը մեր միակ ելքն է դէպի ծովը և միակ ճանապարհը քաղաքակիրթ Եւրոպայի հետ հաղորդակցելու: Մեր բոլոր ջանքերն ի դերեւ ելան, հանդիպելով Թիւրքիայի յամառութեանը: Յաւիտենական ստրկութեան օղակն է ձգուած մեր բոլոր ժողովուրդների վզին:

Թո՛ղ ուրեմն ջախջախուի թշնամու յառաջխաղացումը՝ բախւելով մեր վճռականութեանը – մինչեւ մեր վերջին շունչը

---

[147] Տե՛ս **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 76, նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 163-166:

պաշտպանելու այնքան սերունդների արիւնով ներկուած մեր երկիրը: Ամենքն ի զէն: Ամենքն ի պաշտպանութիւն ազատութեան ու հայրենիքի»[148]:

Սակայն հետագա իրադարձությունները եկան մեկ անգամ ևս փաստելու, որ այդ հուզիչ և ռազմաշունչ կոչը, մեղմ ասած, անկեղծ չէր ոչ միայն վրացիների, այլև հատկապես կովկասյան թաթարների կողմից: Նիստում մահմեդականների խմբակցությունը հայտարարեց, որ իրենց ազգակիցները կրոնական ընդհանրության պատճառով հրաժարվում են թուրքերի դեմ հայտարարված պատերազմին մասնակցելուց[149]: Անժխտելի իրողություն է՝ թե՛ Անդրկովկասյան սեյմը և թե՛ կառավարությունը ծանոթ էին մահմեդականների այդ մտայնությանը, բայց և այնպես Սեյմում նրանց «յայտարարութիւնը սառ ջուր մը կը լեցնէր ոգևորուած տրամադրութեան վրայ»[150]: Սեյմի անդամ Ի. Ծերեթելին «դիմում է ֆրակցիային (մահմեդական - Գ. Պ.) և շպրտում է նրա դեմքին «դավաճաններ» անունը»[151]:

Կառավարության նախագահ Ե. Գեգեչկորին իր կրակոտ ելույթում հայտարարեց. «Կառավարությունը կարծում է, որ չի մարել Անդրկովկասյան դեմոկրատիայի ազատության ոգին, որ «վառոդամանում դեռ վառոդ կա», որ եթե մենք թույլ ենք, ապա ոչ այնքան, որպեսզի մեզ ստրուկներ դարձնեն: Այդ պատճառով էլ մենք մտածում ենք, սեյմի քաղաքացի՛ անդամներ, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ընդունումը կնշանակեր, որ Անդրկովկասը՝ որպես անկախ հանրապետություն,

---

[148] **Յ. Իրազեկ**, Մոտիկ անցեալից, Պատմական դէպքեր եւ ապրումներ 1917-1922, Պէյրութ, 1956, էջ 18:
[149] Տե՛ս **Լեռ**, նշվ. աշխ., էջ 392:
[150] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 77:
[151] **Լեռ**, նշվ. աշխ., էջ 392:

կդադարի գոյություն ունենալուց և կդառնա թուրքական իմպերիայի գավառը: Կառավարությունը նման խայտառակություն չի կարող թույլ տալ: Կառավարությունը կհավաքի իր բոլոր ուժերը, իր ամբողջ հզորությունը, որպեսզի անհրաժեշտ հակահարված տա թուրքական կառավարության բռնի շահախնդրությանը»[152]:

Ուշագրավ է Անդրկովկասյան սեյմի՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության խմբակցության անդամ Մ. Հարությունյանի ելույթը. «Նախ իբրև հայ և իբրև դաշնակցական … մենք հավատացած ենք, որ Թուրքիան չի բավարարվի այն պայմաններով, որոնք նա պահանջում է Բրեստ-Լիտովսկի դաշնագրի համաձայն: Նա ավելի առաջ կգնա: Նա վստահ է ներքին հայտնի տարրերի աջակցության վրա: Եվ հենվելով այդ տարրերի և իր կազմակերպված ուժերի վրա, դիմացն ունենալով կազմալուծված զորամասեր՝ նա մտածում է հասնել Բաքու և մեկընդմիշտ իրականացնել Կոստանդնուպոլիսը Բաքվի հետ մուսուլմանական հոծ զանգվածներով միացնելու իր հին ծրագիրը…

Մենք համոզված ենք, որ առաջին հերթին հայերն են դատապարտված մահվան, իսկ երկրորդ հերթին՝ վրացիները, այնպես որ մեզ համար ոչ մի փրկություն չկա: Ես լիազորված եմ դաշնակցության խմբակցության կողմից հայտարարելու, որ մենք կտանք ոչ միայն զորակոչային տարիքը, այլև, հավանաբար, զենք կրելու ընդունակ մեր ամբողջ ժողովուրդը կզինվի և կգնա ռազմաճակատ՝ մեր հողերը պաշտպանելու: Պարտվելու և մեռնելու դեպքում մենք՝ հայերս, կմեռնենք զենքը ձեռքներիս»[153]:

---

[152] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 168.
[153] Նույն տեղում, 174-177, տե՛ս նաև **А. Ставроский**, Закавказье после октября, Москва-Ленинград, 1925, էջ 25-26:

Կրակոտ և սուր քննադատական ելույթներից հետո այդ օրը երեկոյան Սեյմը միաձայն հաստատեց միացյալ ժողովի որոշումների նախագիծը և հեռագրեց Տրապիզոն՝ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության նախագահ, արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելուն. «Այսօր՝ երեկոյան, Անդրկովկասի սեյմի նիստում միաձայն ընդունվեց հետևյալ բանաձևը. նկատի ունենալով այն, որ Անդրկովկասի սահմանների հարցի վերաբերյալ Թուրքիայի ու Անդրկովկասի միջև հաշտություն ձեռք չի բերված, Անդրկովկասյան պատվիրակությանն առաջարկվում է անհապաղ վերադառնալ Թիֆլիս»[154]: **Փաստորեն, Սեյմը պատերազմ հայտարարեց Թուրքիային այն դեպքում, երբ իրականում նա դեռ ակտիվորեն շարունակում էր իր ռազմական առաջխաղացումն Անդրկովկասի սահմաններում՝ զենքի ուժով լուծելու Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի պահանջները:**

Սեյմի որոշման համաձայն՝ ամբողջ Անդրկովկասում պաշտոնապես հայտարարվեց ռազմական դրություն, իսկ պատերազմը ղեկավարելու համար ստեղծվեց արտակարգ լիազորություններով օժտված կոլեգիալ մարմին, որի մեջ մտնում էին կառավարության նախագահ, ռազմական նախարար Ե. Գեգեչկորին, ներքին գործերի նախարար Ն. Ռամիշվիլին և ֆինանսների նախարար Խ. Կարճիկյանը[155]:

Բայց և այնպես, երկրամասի երեք գլխավոր ազգությունների միջև առկա խորը հակասություններն ու հակամարտությունները, որոնց գլխավոր պատճառը նրանց քաղաքական տարբեր կողմնորոշումներն էին ու ազգային-տարածքային

---

[154] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 183-184:

[155] Տե՛ս նույն տեղը, էջ 183:

սահմանների վեճերը, հնարավորություն չտվեցին Անդրկով-կասում ստեղծելու միացյալ ճակատ՝ թուրքական ռազմական սպառնալիքին դիմակայելու համար: Ինչպես վերը նշվեց, մահմեդականները Սեյմի նիստում հայտարարել էին, որ չեն կռվելու թուրքերի դեմ: Թուրք-անդրկովկասյան պատերազմի հիմնական ծանրությունն ընկած էր հայկական ուժերի վրա (վրացիների մասնակցությունը չնչին էր, իսկ մահմեդական դիվիզիան ընդհանրապես չի մասնակցել): Ալ. Խատիսյանի վկայությամբ՝ հասարակական կարծիք էր ձևավորվել, որ «վրացական զորամասերը, որպես կանոն, նահանջում են թուրքերի հարձակումների ժամանակ … վրացիները բոլորո-վին պատրաստ չեն պատերազմին»[156]:

Նույն օրը՝ մարտի 31-ի (ապրիլի 13) երեկոյան, առանց վրացական զորքերի որևէ դիմադրության, Բաթումը հանձն-վեց թուրքական զորամասերին: Կամովին թուրքերին հանձն-վեցին Բաթումի պարետը և վրացական առաջին դիվիզիայի հրամանատարը՝ իր շտաբով: Այնուհետև թուրքական զորքե-րը գրավեցին Աբասթումանը և շարունակեցին առաջխաղա-ցումը Քութայիսի ու Թիֆլիսի նահանգներում: Այս առիթով Ա. Խաչատրյանը գրում է. «Կովկասի Հանրապետութեան այնքան մեծ աղմուկով յայտարարած պատերազմը կը վերջանար խայ-տառակ պարտութեամբ մը: Վրաց ճակատի վրայ դիմադրու-թիւնն այնքան թոյլ եղաւ, որ 48 ժամէն Բաթումի պէս ուժեղ բերդաքաղաք մը իր բոլոր ռազմական հարստութեամբ աւար կը դառնար օսմանեան չնչին ուժով յարձակւող զօրքի ձեռքը և քանի մը օրուան մէջ օսմանեան զինուորներն արդէն Վրաստա-նի սիրտ՝ Քութայիսի նահանգումն էին»[157]:

---

[156] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 109:

[157] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 78:

Կարսի շրջանում հայկական զորամասերը 10 օր շարունակ կատաղի դիմադրություն ցույց տվեցին թուրքերին: Բաթումի հանձնումից հետո Անդրկովկասյան սեյմը համոզվեց, որ այլևս ի վիճակի չեն համախմբելու երկրամասի բոլոր ուժերը և պատերազմը շարունակելու:

Ապրիլի 1-ին (14) կառավարության նախագահ Ե. Գեգեչկորին հեռագիր հղեց Ա. Չխենկելուն՝ հրահանգելով Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությանն անմիջապես վերադառնալ Թիֆլիս: Այդ մասին Ա. Չխենկելին հայտնեց թուրքական պատվիրակությանը. «Անդրկովկասյան պատվիրակությունը, նկատի ունենալով իր կառավարությունից ստացված հրահանգները, պատիվ ունի հայտնելու օսմանյան պատվիրակությանը, որ ինքն անհրաժեշտաբար պետք է այսօր մեկնի Թիֆլիս»[158]: Թուրքերը անշուշտ շատ լավ հասկացան, թե ինչու է Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը մեկնում Տրապիզոնից: Նույն օրը՝ երեկոյան, խաղաղարար պատվիրակությունը վերադարձավ Թիֆլիս: Բաժանումից առաջ թուրքական պատվիրակության նախագահ Հուսեյն Ռաուֆ բեյը Հայկական հարցի մասին մեկժամանոց առանձնազրույց ունեցավ խաղաղարար պատվիրակության հայ անդամ Ալ. Խատիսյանի հետ:

**Այսպիսով, Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ «հաշտութեան փոխարէն Տրապիզոնէն մենք կը տանէինք մեր երկրին պատերազմ»[159]:**

---

[158] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 152:

[159] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 36:

## 3. Պատերազմի և հաշտության հարցը Ալեքսանդրապոլի արտակարգ խորհրդակցությունում. Անդրկովկասի անկախացումը

Ինչպես վերը նշվեց, ապրիլի 1-ին (14) Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը իր կառավարության հրահանգով անմիջապես ետ կանչվեց Թիֆլիս: **Փաստորեն, Անդրկովկասյան սեյմը ընդհատեց Տրապիզոնի դիվանագիտական բանակցությունները Թուրքիայի հետ և պատերազմ հայտարարեց նրան այն դեպքում, երբ թուրքերը դեռ շարունակում էին իրենց ռազմական առաջխաղացումը Անդրկովկասի սահմաններում՝ զենքի ուժով լուծելու Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի պահանջները:** «Նոյն միջոցին,- գրում է Ա. Խաչատրյանը,- մեր սահմաններու վրայ կը շարունակուէր արիւնհեղութիւնը և օսմանեան բանակը կը շարունակէր իր յառաջ խաղացումը»[160]: Նույն օրն էլ Անդրկովկասյան սեյմին և կառավարությանը հայտնի դարձավ, որ Բաթումը հանձնվել է թուրքական զորամասերին:

Բաթումի անկումը ճակատագրական նշանակություն ունեցավ Անդրկովկասի ռազմաքաղաքական հետագա զարգացումների վրա. վրացիների համար պատերազմը անիմաստ դարձավ: Սկսվեց վրացական զորամիավորումների անկանոն նահանջը: Այդ առնչությամբ Ալ. Խատիսյանը գրում է. «Վրաց իշխող կուսակցութեան մէջ ծայր էին տուած լուրջ տարակարծութիւններ պատերազմը շարունակելու մասին: Անոնք կը զգային որ իրենց ժողովուրդը չուզեր կռուիլ Պաթումի անկումէն յետոյ: Միւս կողմէ, գտած էին միջոց մը ինքզինքին ապահո-

[160] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 77:

վելու համար թուրքերէն: Եվ այդ միջոցը համաձայնութիւնն էր Գերմանիոյ հետ: Այս պարագան բախտորոշ ազդեցութիւն մը ունեցաւ դէպքերու ընթացին վրայ»[161]:

Իսկ Անդրկովկասի պաշտպանության ու ժողովուրդների փոխհարաբերությունների տեսակետից չափազանց անհնպաստ էր հատկապես կովկասյան թաթարների խաղացած դերը. նրանք թուրքերի հաղթանակն ու ռազմական ներխուժումը համարում էին իրենց ազգային–քաղաքական ձգտումների իրականացում: Թաթարները դեռ մարտի 31-ին (ապրիլի 13-ին) Անդրկովկասյան սեյմի նիստում հայտարարել էին, որ այդ պատերազմում իրենցից օգնություն և աջակցություն թող չսպասեն, որ իրենք չեն կռվելու ցեղակից թուրքերի դեմ[162]: **Փաստորեն, թուրք-անդրկովկասյան պատերազմի հիմնական ծանրությունն ընկավ հայկական ուժերի վրա. այն վերածվեց թուրք-հայկական պատերազմի:**

Այսպիսով, հայերը մնում էին միայնակ թուրքերի դեմ՝ զրկված քաղաքական տարբեր կողմնորոշումներ և ազգային նեղ շահեր հետապնդող երկու հարևանների աջակցությունից, կտրված արտաքին աշխարհից և ներքին ու արտաքին հակառակորդներով շրջապատված:

Ստեղծված բարդ ու լարված իրադրությունում անհրաժեշտ էր անհապաղ քննարկել հետագա քայլերը Բրեստ-Լիտովսկի դաշնագրի՝ պատերազմի և հաշտության շուրջ: Անհրաժեշտ էր նաև ստուգել հայկական զորամիավորումների մարտունակությունը և ինքնապաշտպանական գործի հնարավորությունները: Այդ նպատակով Անդրկովկասյան

---

[161] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 39:
[162] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 19, թ. 14:

սեյմի դաշնակցական խմբակցության և «Հայ հեղափոխական դաշնակցության» Արևելյան բյուրոյի նախաձեռնությամբ 1918 թ. ապրիլի 6-8-ը (19-21) Ալեքսանդրապոլում հրավիրվեց արտակարգ խորհրդակցություն[163]: Բազմամարդ հավաքին մասնակցում էին Անդրկովկասյան սեյմի և կառավարության բոլոր հայ անդամները, Հայոց ազգային կենտրոնական խորհրդի կազմը, կուսակցությունների ներկայացուցիչները, Երևանի, Կարսի մարզային կոմիսարները և Ալեքսանդրապոլի մի քանի ազգային գործիչներ: Խորհրդակցությունը նախագահում էր Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանը[164]:

Արտակարգ խորհրդակցությունը լսեց Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության անդամներ Ալ. Խատիսյանի և Հովհ. Քաջազնունու զեկուցումները Տրապիզոնի հաշտության դիվանագիտական բանակցային գործընթացների արդյունքների մասին[165]: Այնուհետև քննարկման դրվեց Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրն անվերապահորեն ընդունելու թուրքերի պահանջը: Քննարկվող հարցի շուրջ հնչեցին երկու իրարամերժ կարծիքներ: Մի մասը գտնում էր, որ պետք է ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, քանի որ այլընտրանք չկա, իսկ մյուս մասը՝ ամեն գնով շարունակել պատերազմը և ոչ մի դեպքում չընդունել այն: Առաջին կարծիքին կողմնակից էին Հովհ. Քաջազնունին, Ալ. Խատիսյանը և Մ. Պապաջանյանը (Պապաջանով): Հովհ. Քաջազնունին մանրամասն ներկայացրեց իր գրավոր հիմնավորումը (ռուսերենով), թե ինչու հայերի համար չարիքի փոքրագույնն է Բրեստ-

[163] Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 307-332:
[164] Տե՛ս նույն տեղը, էջ 307:
[165] Տե՛ս նույն տեղը, էջ 310-311:

Լիտովսկի հաշտության դաշնագիրը, և ինչու Թուրքիան բնավ չի հրաժարվի դրանից[166]: Նա կարծում էր, որ «չճանաչել դաշնագիրը նշանակում է պատերազմ հայտարարել նրան կամ ավելի շուտ շարունակել պատերազմը, որ փաստացի մենք շարունակում ենք հիմա: Մենք ի զորու չենք և չենք կարող կռվել թուրքերի դեմ»[167]: Մ. Պապաջանյանը, պաշտպանելով Հովի. Քաջազնունու կարծիքը, իր ելույթում վստահեցնում էր, որ այս պատերազմում հայերը այլևս չպետք է իրենց հույսը կապեն հարևան վրացիների հետ. նրանք չեն կռվելու: Այնուհետև, անդրադառնալով հայկական զինուժի ու ռազմաճակատի անմխիթար վիճակին, նա կոչ էր անում ընդունելու այն. «Եթե ես համոզված լինեի, որ 2 ամիս կդիմանա Կարսը, այլ կերպ կխոսեի: Եթե չենք կարող պահել, պետք է լավ գնով զիջել»[168]:

Այնուհետև ապրիլի 7-ի (20) արտակարգ խորհրդակցության երրորդ նիստում ընթերցվում է Ալեքսանդրապոլ չժամանած Խ. Կարճիկյանի գրավոր կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ, որն ուղարկել էր Թիֆլիսից[169]: Հովի. Քաջազնունու և Մ. Պապաջանյանի դիրքորոշմանն ու ներկայացրած գրեթե բոլոր փաստարկներին միանգամայն հակառակ կարծիք ուներ Խ. Կարճիկյանը: Նա ընդգծում էր. «Պատմական ամենախոր և ճակատագրական սխալը կատարած պիտի լինենք, եթե հիմա ընդունելու լինենք Բրեստի դաշնագիրը ու այդպիսով դադարեցնենք պատերազմը»[170], քանի որ միևնույնն է՝ դա չէր կա-

---

166 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 21, թ. 113-120:
167 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 21, թ. 115:
168 Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 321:
169 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 122, թ. 1-4:
170 Նույն տեղում, թ. 1:

սեցնելու թուրքական առաջխաղացումը ու դառնալու էր հայ և վրացի ժողովուրդների բնաջնջման պատճառ: Խ. Կարճիկյանը համոզված չէր, որ հաշտությունը հնարավորություն կընձեռի ժամանակ շահելու և զորքն ուժեղացնելու, քանի որ վստահ էր, որ Կարսը հանձնելուց հետո ժողովուրդն ու բանակը այնպես կբարոյալքվեն, որ «ոչ մի զինվոր չի մնալ զենքի տակ»[171]: Վրացիների հետ զինակցության հարցում ևս Խ. Կարճիկյանի կարծիքը տարբեր էր: Նա խորհուրդ էր տալիս հոռետես չլինել վրացական ուժերի նկատմամբ և, ի դեմս նրանց, տեսնում էր դաշնակիցների: Ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա ընթացքը, Խ. Կարճիկյանը եթե կասկած չուներ թուրքերի ռազմական առաջխաղացման հարցում, ապա վրացիների՝ հայերին դաշնակից լինելու խնդրում սխալվում էր:

Խ. Կարճիկյանը ընդգծում էր, որ Ռուսաստանը չի հաշտվի Անդրկովկասը կորցնելու հետ, իսկ եթե անգամ մտադրություն չունենա Կովկաս վերադառնալու, «…և նա վերջնականապես հաշտվի Անդրկովկասի անջատման մտքի հետ, դրա հետ չի հաշտվելու հայությունը, որը միշտ պիտի զգա իր գլխեն տեղական թրքության ու Տաճկաստանի կախված թուրը ու իր հայացքը հառելով դեպի հյուսիս, առիթներ պիտի փնտրե Ռուսաստանին ներս բերելու ու ազատագրելու:

… Եթե իսկապես Ռուսաստանը փորձե ներս գալու, բնական է որ Կովկասի քրիստոնեա ժողովուրդները չեն դուրս գալու ու զենքով դիմադրելու նրան»[172]:

Խ. Կարճիկյանը, ընդհանրացնելով իր նկատառումները, ներկայացնում է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրն ընդունելուց հետո ուրվագծվող հնարավոր երեք իրավիճակ.

---

[171] Նույն տեղում, թ. 3:

[172] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 122, թ. 2:

1. կա՛մ, դաշնագրին ոչ մի նշանակություն չտալով, Թուրքիան անմիջապես առաջ է շարժվելու և գրավելու է Անդրկովկասը, 2. կա՛մ կանգ է առնելու որոշված սահմաններում և հարկադրելու է Անդրկովկասն անկախ հայտարարել, ապա, փաստորեն, այն իր կազմի մեջ ներառելու որպես Թուրքիայի նահանգ, և 3. կա՛մ նա գրավում է երկրամասը, եթե հայերը հրաժարվում են անկախություն հայտարարելուց ու մնում են որպես Ռուսաստանի մի մասը:

Ըստ Խ. Կարճիկյանի՝ 3-րդ իրավիճակն անխուսափելի է, քանի որ կովկասյան թաթարների համար դեռ հանդուրժելի էր անկախ Անդրկովկասը, իսկ երբ խնդիրը գա Ռուսաստանի կազմում մնալուն, տարակույս չկա, որ կովկասյան թաթարները ամեն միջոց ձեռք են առնելու, որպեսզի հրավիրեն Թուրքիային՝ միացնելու իրենց ազգակից պետությանը[173]:

Եզրափակելով իր խոսքը՝ Խ. Կարճիկյանը անում է հետևյալ եզրահանգումը. «Ես գտնում եմ, որ պատերազմը դադարեցնելը մեզ համար ինքնասպանության նշանակություն ունի: Իսկ մեր անվերջ տատանումները և հասարակական զանազան խմբակցությունների ու օրգանների ագիտացիան հոգուտ Բրեստի դաշնագրի, մեծապես թուլացնում է մեր դիմադրական ուժը, անվստահություն ներշնչում կռվողներին և կազմալուծում առաջ բերում թիկունքում: Վճռականապես պետք է որոշել ու ցուցադրել, որ կռիվը շարունակվելու է և որ անհույս մի կռիվ չէ, որը անվիճելի կերպով տանում է մեզ դեպի կորուստ»[174]:

Չնայած քննարկվող հարցի նկատմամբ լուրջ տարաձայնություններին՝ ապրիլի 8-ի (21) հինգերորդ՝ վերջին նիստում

---

[173] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 122, թ. 4:

[174] Նույն տեղում:

Ալեքսանդրապոլի արտակարգ խորհրդակցության մասնակիցների ճնշող մեծամասնությունը որոշեց մերժել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը և շարունակել պատերազմը ու ամրապնդել հայկական զինված ուժերն ու ինքնապաշտպանական գործը: Սակայն իմաստազրկվեց խորհրդակցության ընդունած որոշումը, երբ նույն օրը Թիֆլիսից ստացվեց հաղորդագրություն այն մասին, որ **վրաց Ազգային խորհուրդը որոշել է անկախություն հայտարարել**[175]: Իսկ Անդրկովկասյան կառավարության թաթար նախարարները վերջնագիր են ներկայացրել՝ պահանջելով ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը և կնքել հաշտություն Թուրքիայի հետ, այլապես իրենք և Սեյմի մյուս թաթար անդամները դուրս կգան Սեյմից ու կառավարությունից և կհայտարարեն իրենց անկախությունը[176]:

Այս հանգամանքները ստիպեցին խորհրդակցության մասնակիցներին շտապել Թիֆլիս և այնտեղ քննարկել ու որոշել անկախության և իշխանության հարցերը: Նրանք վերադարձան Թիֆլիս, «ուր հայերի համար,- գրում է Ս. Վրացյանը,- ստեղծուել էր չափազանց փափուկ դրութիւն. կամ նրանք պիտի համաձայնէին թուրքերի և վրացիների հետ և հրաժարուէին ո՛չ միայն Տաճկահայաստանից, այլև ամբողջ Կարսի նահանգից, առանց անգամ երաշխիք ունենալու գէթ յետագա ապահովութեան և կամ պիտի մերժէին տաճկական վերջնագիրը. այն ժամանակ վրացիներն ու թուրքերը անջատ հաշտութիւն պիտի կնքէին, Անդրկովկասի միութիւնը պիտի վերանար, և հայ

---

[175] Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 331:
[176] Տե՛ս **Ս. Վրացեան**, Անկախ եւ Միացեալ Հայաստան (Ուրուագիծ), Երեւան, 1920, էջ 10:

ժողովուրդը պիտի մնար մենակ, կտրուած ամբողջ աշխարհից, շրջապատուած թշնամիներով…»[177]:

Ինչպես վերը նշվեց, Բաթումի անկումից հետո երկրամասում ստեղծվել էր ռազմաքաղաքական չափազանց ծանր իրադրություն: Այդ պայմաններում Անդրկովկասյան սեյմը որոշեց վերսկսել ընդհատված դիվանագիտական բանակցությունները օսմանյան Թուրքիայի հետ հաշտության դաշնագիր կնքելու վերաբերյալ: **Իսկ դրա համար անհրաժեշտ էր նախ հռչակել Անդրկովկասի անկախությունը և նրա անջատումը Ռուսաստանից, որը օսմանյան Թուրքիայի անվերապահ պահանջն էր: Վերջինս ուզում էր, որ Անդրկովկասն իր կարգավիճակին միջազգային-իրավական տեսք տա, այսինքն՝ իրեն անկախ հռչակի: Այլապես միջազգային իրավունքի սուբյեկտ օսմանյան Թուրքիայի և Անդրկովկասի միջև դիվանագիտական բանակցություններն ու հնարավոր արդյունքները զուրկ կլինեին իրավական պարտավորեցնող ուժից[178]: Թուրքիայի անվերապահ պահանջն էր՝ Անդրկովկասն անկախ հռչակելով՝ այն վերջնականապես, փաստացի և իրավականորեն կտրել Ռուսաստանից և թույլ, անօգնական այդ երկրամասը զավթելով՝ այն ներառել իր ազդեցության ոլորտը և այդպիսով ապահովել իր անվտանգությունը Ռուսաստանից, որը ոչ հեռավոր ապագայում կարող էր իրական սպառնալիք դառնալ իր համար:**

Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու և անկախություն հռչակելու թուրքական ծրագրի նկատմամբ վրացիների շրջանում ձևավորվել էին քաղաքական երկու տարբեր կողմ-

---

[177] Նույն տեղում:

[178] Տե՛ս **Ա. Եսայան**, Հայաստանի միջազգային-իրավական դրությունը (1920-1922), Երևան, 1967, էջ 34:

նորոշումներ՝ ռուսական և գերմանա-թուրքական: Առաջինի կողմնակիցները՝ Ն. Ժորդանիան, Ե. Գեգեչկորին և այլք, ցանկանում էին շարունակել պատերազմը և դեմ էին Անդրկովկասը Ռուսաստանից վերջանականապես անջատելուն: Երկրորդ՝ հաղթող հոսանքը (Ա. Չխենկելի, Ն. Ռամիշվիլի) գտնում էր, որ Վրաստանի անկախության համար ռուսական վտանգն ավելի մեծ է, քան թուրքականը[179]:

Թաթարները Անդրկովկասյան սեյմում այլևս չէին թաքցնում, որ ամբողջովին Թուրքիայի կողմն են: Նրանք, պաշտպանելով ու զարգացնելով թուրքերի տեսակետը, պահանջում էին Անդրկովկասը անհապաղ հռչակել անկախ և դադարեցնել պատերազմը: Նրանք հայտարարեցին. «Մուսուլմանական դեմոկրատիայի կրոնական զգացումը թույլ չի տալիս նրանց գործուն մասնակցութիւն ունենալու Թիւրքիայի դէմ մղուող պատերազմի մէջ»[180]:

Թաթարների համար Անդրկովկասի անկախությունը նշանակում էր երկրամասի անջատում Ռուսաստանից: «Այս գործը,- գրում է Ա. Խոնդկարյանը,- նրանք (թաթարները – Գ. Պ.)՝ այդ հեռուն նայող ու վերին աստիճանի զգուշաւոր քաղաքագէտները՝ ուզում էին անպատճառ գլուխ հանել վրացիների ու հայերի մեղսակցութեամբ, որից յետո դէպքերի ընթացքը նրանց համար պարզ էր՝ Թիւրքիան գալու է Անդրկովկաս»[181]:

Սեյմի վրաց ղեկավարները Անդրկովկասի անկախության ծրագիրն առաջ քաշեցին այն համոզումով, որ նախ՝ այն կդյուրացնի հաշտությունը Թուրքիայի հետ՝ թիկունքում

---

[179] **Յովի. Քաջազնունի**, Հ. Յ. Դաշնակցութիւնն անելիք չունի այլ եւս, Վիեննա, 1923, էջ 27:

[180] Նույն տեղում, էջ 26-27:

[181] «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1933, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 73:

ապահովելով Գերմանիայի հովանավորությունը, որի հետ վաղուց գաղտնի բանակցությունների մեջ էին, և երկրորդ՝ **վերջ կտա հայերի՝ ռուսական** և թաթարների՝ թուրքական քաղաքական կողմնորոշումներին, ու Անդրկովկասի երեք գլխավոր ազգերին կմիացնի սեփական՝ անդրկովկասյան հայրենիքի սին գաղափարով:

Անշուշտ, հայերի համար անընդունելի էին թաթարների հեռահար ծրագրերը, և մյուս կողմից չէին կիսում նաև վրաց մենշևիկ ղեկավարների «միամիտ» ակնկալիքները, որովհետև շատ լավ գիտեին, որ թաթարների նպատակը ոչ թե անկախ հայրենիքն է, այն էլ՝ հայերի ու վրացիների հետ, այլ ընդամենը Թուրքիայի գերիշխանությունը: Բացի այդ, առաջնորդվելով ինքնապաշպանական բնազդով, հայ ժողովուրդը չէր ուզում բաժանվել Ռուսաստանից:

Սեյմի հայ անդամներին միանգամայն հասկանալի էր, թե ինչպիսի ծանր հետևանքներ կունենա Անդրկովկասի անկախությունը հայ ժողովրդի համար, բայց և ընդդիմանալ վրացիներին ու թաթարներին չէին կարող, քանի որ կհայտնվեին խիստ մեկուսացված վիճակում: Իսկ «Պատերազմի ամբողջ պատասխանատութիւնը թուրքերուն հետ,- գրում է Ալ. Խատիսյանը,- Հ. Յ. Դաշնակցութիւնը իր վրա չէր կրնալ վերցնել, իսկ այդպէս, պիտի ըլլար, եթե ան գործէր հակառակ վրացիներուն»[182]: Այդ հիմնական պատճառներն էին, որ Անդրկովկասյան սեյմի՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցությունը ստիպված էր համաձայնել անկախությանը: Եվ պատահական չէր, որ թե՛ խմբակցությունը և թե՛ Թիֆլիսի Հայոց

[182] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 40:

ազգային (կենտրոնական) խորհուրդը չեն ողջունել Ռուսաստանից Անդրկովկասի անջատումը և նրա անկախությունը:

Այդ առնչությամբ ուշագրավ է Հովի. Քաջազնունու ընդհանրական գնահատականը. «…. մենք չէինք դրութեան տէրը, ոչ իսկ մեր սեփական բախտի տէրը: … Հեշտ սրտով չէր, որ մենք արինք այդ: Բայց չանել չէինք կարող: Եթե հակառակ արտահայտուէինք, Անդրկովկասեան դաշնակցական (դաշնային – Գ. Պ.) Հանրապետութիւնը իսկոյն պիտի քանդուէր, վրացիներն ու ազրբեյջանցիներն իսկոյն պիտի հաշտուէին թուրքերի հետ ու թողնէին մեզ մենակ երես առ երես Վէհիպ փաշայի բանակի դէմ- մենակ, որովհետեւ Ռուսաստանը (ոչ բոլշեւիկեանը, ոչ հակաբոլշեւիկեանը) այն ժամին չէր կարող հասնել օգնութեան, եթե նոյն իսկ կամենար: Ոչ միայն մենակ, այլ նաեւ թիկունքից մեծապէս վտանգուած, որովհետեւ պարզ էր, որ թուրքերի հետ միասին մեզ պիտի զարնէին նաեւ ազրբեյջանցիները (ո՞վ գիտէ, գուցէ եւ վրացիները՝ Ախալքալակը, Լօռին ու Փամբակը ամբողջովին գրավելու համար):

Մենք ամենքից աւելի կարիք ունէինք Անդրկովկասեան դաշնակցութեան, չէինք ուզում՝ որ նա քանդուի, իսկ եթե քանդուելու է – որքան կարելի է ուշ քանդուի: Ահա թէ ինչու հարկադրուած էինք հետեւելու մեր դաշնակից դրացիների քայլերին»[183]:

Կարճ ժամանակ անց Անդրկովկասյան սեյմում հաղթեց վրացիների՝ գերմանա-թուրքական քաղաքական կողմնորոշում ունեցող թևը[184]: **Ապրիլի 9-ին (22) Սեյմը հանդիսավորու-**

---

[183] **Յովի. Քաջազնունի**, նշվ. աշխ., էջ 28:

[184] Տե՛ս **Վ. Մելիքյան,** Անդրկովկասյան Սեյմի քաղաքական կողմնորոշման փոփոխման հիմնահարցը և երկրամասի անկախության հռչակումը, «Հայագիտության հարցեր» հանդես, 2014, N 3, էջ 105-125:

**թյամբ հայտարարեց, որ Անդրկովկասն անջատվում է Ռուսաստանից և կազմում է անկախ պետություն՝ Անդրկովկասի Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետություն[185] (այն գոյատևեց ընդամենը մեկ ամիս չորս օր և լուծարվեց մայիսի 26-ին):**

Սեյմի 22-րդ նիստում «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցությունը, ինչպես վերը նշվեց, թեև ներքուստ դժգոհ, բայց ստիպված հանդես եկավ Անդրկովկասի անկախության օգտին: Սեյմի անդամ Հովհ. Քաջազնունին խմբակցության անունից նիստում հայտարարեց. «Քաղաքացիներ, Սեյմի անդամներ. դաշնակցության ֆրակցիան, միանգամայն որոշակի կերպով գիտակցելով այն մեծ պատասխանատվությունը, որ նա իր վրա է առնում ներկա պատմական մոմենտին, միանում է Անդրկովկասի ինքնուրույն պետության հայտարարմանը»[186]:

Սեյմում հնչեցին նաև հայտարարություններ Անդրկովկասը Ռուսաստանից անջատվելու վերաբերյալ և նրա անկախության դեմ: Բանախոսներից ձախ էսէռ Լ. Թումանովը (Թումանյան) հայտարարեց. «Պետք է անկեղծորեն խոստովանել, որ Անդրկովկասի անկախության գաղափարը գալիս է թուրք իմպերիալիստներից… այդ հարցը Անդրկովկասի կենաց ու մահվան հարցն էր: Ինչո՞ւ դուք չեք դիմում հանրաքվեի օգնությանը: Հավատացա՞ծ եք արդյոք դուք, որ եթե այդ հարցը վճռվեր ազատ քվեարկության ճանապարհով, ժողովուրդը չէր ասի՝ չեմ ցանկանում այն անկախությունը, որ գալիս է թուրքական

---

[185] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 19, թ. 28: Տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 221:

[186] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 19, թ. 20, տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 215:

սուլթանի մահակի տակից … անկախություն, որը հռչակված է այնպիսի պայմաններում, ինչպիսին ներկայումս գոյություն ունի Անդրկովկասում, դա նշանակում է անցում դեպի Թուրքիայի կողմից լրիվ ստրկացմանը: Անդրկովկասը չափազանց թույլ տնտեսական ուժեր ունի ներկայումս իր սեփական կողմնորոշումն ունենալու համար: Անդրկովկասի անկախ հռչակելը ոչ այլ ինչ է, եթե ոչ կողմնորոշում դեպի Թուրքիան, և այդ փաստը դուք ոչ ոքից չեք կարողանա թաքցնել»[187]:

Խորհրդային կառավարությունը արձագանքեց և նոտա հղեց Անդրկովկասյան սեյմին: Մոսկվայում օսմանյան Թուրքիայի և Ստամբուլում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչներ չլինելու պատճառով ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը Մոսկվայում գերմանական դեսպան Միհրբախին ուղղված 1918 թվականի մայիսի 15-ի նոտայում իր բողոքը հայտնեց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու դեմ[188]:

Հարկ է նշել, որ իմաստազրկվեցին Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը ընդունել-չընդունելու բոլոր քննարկումները, երբ հայտնի դարձավ, որ դեռ Անդրկովկասյան սեյմի վստահությանը չարժանացած՝[189] կառավարության նոր նա-

---

[187] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 19, թ. 11-12, տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 207:

[188] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 434-435:

[189] Երբ ապրիլի 9-ին (22) Սեյմը հռչակեց Անդրկովկասյան հանրապետության անկախությունը և որոշեց վերսկսել հաշտության դիվանագիտական բանակցությունները Թուրքիայի հետ, կառավարության նախագահ Ե. Գեգեչկորին, նկատելով այն որպես անվստահության դրսևորում, հրաժարական տվեց և հեռացավ քաղաքական հարթակից: Անդրկովկասյան սեյմի նախագահ Ա. Չխեիձեն նույն օրը՝ երեկոյան, գրավոր դիմեց Ա. Չխենկելիին՝ ձևավորելու կառավարության նոր կազմ: Իրականում ապրիլի 9-ից (22)

խագահ, արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելին, առանց կառավարության և հայկական կողմի իմացության, ապրիլի 10-ին (23) հրաման էր արձակել կարճ ժամկետում Կարսը դատարկելու ու առանց դիմադրության այն անհապաղ օսմանյան Թուրքիային հանձնելու մասին[190]:

Ինչպես նշել ենք, ապրիլի 1-ին (14) Տրապիզոնում ընդհատվել էին դիվանագիտական բանակցային գործընթացները Թուրքիայի հետ, սակայն Ա. Չխենկելին Թիֆլիսից շարունակում էր պահպանել հարաբերությունները և վերսկսել էր բանակցությունները թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշայի հետ: Ա. Չխենկելին ապրիլի 10-ի (23) երեկոյան հեռագրեց Վեհիբ փաշային, որ Անդրկովկասյան կառավարությունը ընդունում է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և խնդրում է դադարեցնել ռազմական գործողություններն

---

մինչև 13-ը (26) Ա. Չխենկելին Անդրկովկասը ղեկավարեց առանց Սեյմի լիազորության: Միայն ապրիլի 13-ին (26) Սեյմը վստահություն հայտնեց Ա. Չխենկելիին և նրա կազմած կառավարությանը, որի ծրագիրն էր՝ անկախություն և հաշտություն: Անդրկովկասյան սեյմը և կառավարությունը կազմվեցին երեք գլխավոր ազգերի (հայեր, վրացիներ և կովկասյան թաթարներ) քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից՝ գրեթե հավասար թվով:

Կառավարության կազմում հայերից ընդգրկվեցին Ալ. Խատիսյանը (ֆինանսների նախարար), Հովհ. Քաջազնունին (պետական խնամատարության նախարար), Ա. Երզնկյանը (աշխատանքի նախարար) և Ա. Սահակյանը (պարենավորման նախարար): Իսկ երբ ապրիլի 11-ին (24) կառավարության հայ նախարարները տեղեկացան Կարսը թուրքերին հանձնելու Ա. Չխենկելիի կարգադրության մասին, հայտարարեցին, որ իրենք անկարող են մնալ կառավարության մեջ: Ստեղծված կառավարական ճգնաժամը լուծվեց փոխադարձ համաձայնությամբ. հայ նախարարները վերադառնում են կառավարություն պայմանով, որ գեներալ Ի. Օդիշիլիձեն հեռացվում է պաշտոնից, Մ. Հարությունյանը նշանակվում է արտաքին գործերի նախարարի օգնական, սակայն վերջինս, առանց Ա. Չխենկելիի (միաժամանակ արտաքին գործերի նախարար) գիտության, ոչ մի կարգադրություն չպետք է աներ:

[190] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 109:

ու վերսկսել դիվանագիտական բանակցությունները՝ Թուրքիայի հետ ամենաարագ ժամկետներում հաշտություն կնքելու համար[191]: «Մասնաւորապէս հայկական շրջանակները,- գրում է Ալ. Խատիսյանը,- վրդովուած էին այդ գաղտնի եւ ինքնագլուխ բանակցութիւններէն. Այդ վրդովմունքը կատաղութեան հասաւ, երբ Չիէնկելին ինքնագլուխ կերպով կարգադրած էր յանձնել Կարսը թուրքերուն»[192]: Եվ հերթական անգամ հայկական կողմը կանգնեց կատարված փաստի առաջ: Ապրիլի 12-ին (25) թուրքական զորքերը գրեթե առանց կռվի գրավեցին հայկական ճակատը պաշտպանող միակ ամուր հենարանը՝ Կարսը: Այդ առնչությամբ Յ. Իրազեկը գրում է. «Կարսի անկումը աղէտներից ահաւորագոյնն էր ամբողջ Անդրկովկասի և առաւելապէս հայերի համար: Ուստի, մասնաւորապէս հայոց մէջ, վրդովմունքն ընդհանուր ու աննկարագրելի էր, իսկ առաջացրած յուսալքումն ու խուճապը հսկայական - թէ՛ բովանդակ հայութեան, թէ՛ մանաւանդ, զօրքի շարքերում: Առանձնապէս յանձնման ամբողջ արարողութիւնը, իր ստոր ու դաւադրական բնույթով, չափազանց վիրաւորական»[193]:

Փաստորեն, օսմանյան Թուրքիան, խախտելով Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի 4-րդ հոդվածի պայմանները, ռազմական ուժով գրավեց Բաթումը, Արդահանը, Կարսը: «Եվ միաժամանակ, - գրում է Զ. Ավալովը, - ապացուցված էր, որ դեռ չկազմակերպված, ցնցված Անդրկովկասը զուրկ է ամենապարզ պատերազմական գործողություններ կատարելու

---

[191] Տե՛ս նույն տեղը: Տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 224:
[192] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 39:
[193] **Յ. Իրազեկ,** նշվ. աշխ., էջ 22:

կարողությունից»[194]: Անդրկովկասյան սեյմը և կառավարությունը վերջնականապես համոզվեցին, որ այլևս ի վիճակի չեն համախմբելու երկրամասի բոլոր ուժերը պատերազմը շարունակելու համար:

Փաստորեն, Բաթումի անկումից հետո երկրամասում արագորեն իրար հաջորդեցին մի շարք բախտորոշ քաղաքական իրադարձություններ. Անդրկովկասն անջատվեց Ռուսաստանից՝ հռչակվելով անկախ պետություն, Կարսը հանձնվեց թուրքերին, և նրանց հետ հաշտության բանակցությունների վերսկսման հարցը կրկին դարձավ օրակարգային:

Այսպիսով, Անդրկովկասյան սեյմի՝ ռազմաշունչ տրամադրությամբ հայտարարված պատերազմն ավարտվեց պարտությամբ, որի պատճառը, անշուշտ, երկրամասի երեք գլխավոր ազգերի միջև կուտակված ներքին և արտաքին խորը հակասություններն ու հակամարտություններն էին, նրանց քաղաքական տարբեր կողմնորոշումներն ու ազգային-տարածքային սահմանային վեճերը, միմյանց նկատմամբ անվստահությունը և անհանդուրժողականությունը, որոնք հնարավորություն չտվեցին երկրամասում ստեղծելու միացյալ ճակատ՝ թուրքական ռազմական սպառնալիքին դիմակայելու համար: Անկասկած, ռազմական առումով ևս Անդրկովկասը ի վիճակի չէր լուրջ դիմադրություն կազմակերպել օսմանյան բանակի դեմ:

Պատմական դեպքերը, դիվանագիտական բանակցային գործընթացներն ու ռազմաքաղաքական իրադարձությունները ցույց տվեցին նաև, որ Սեյմը և կառավարությունը ժամանակին չկարողացան ապահովել Անդրկովկասի երեք գլխա-

---

[194] **З. Авалов**, նշվ. աշխ., էջ 33:

վոր ազգերի շահերի ներդաշնակությունը և ի վիճակի չէին ձևավորել միասնական արտաքին քաղաքականություն և ճկուն դիվանագիտություն: Ինչպես վերը նշվեց, դրա հիմնական պատճառներից էին երեք գլխավոր ազգերի քաղաքական տարբեր կողմնորոշումները և դրանից բխող լուրջ հետևանքները: Յուրաքանչյուրը գործում էր իր ազգային շահերից ելնելով: Այդ իրողությունները մեկ անգամ ևս ապացուցեցին Անդրկովկասի երեք հիմնական ազգերի՝ նույն պետության կազմում հետագա համակեցության անհնարինությունը:

Անդրկովկասում վերջին օրերին իրար հաջորդած քաղաքական իրադարձությունների բերումով Հայոց ազգային ժողով[195] գումարվեց ընդամենը մեկ անգամ՝ 1918 թ. ապրիլի 15-ից (28)-18-ը (մայիսի 1)* Թիֆլիսում[196]: Հայոց ազգային ժողովի արտակարգ նիստերին մասնակցում էին Հայոց ազգային կենտրոնական խորհրդի բոլոր անդամները և հայ քաղաքական կուսակցությունների անդամներ ու արևմտահայ ներկայացուցիչներ: Նիստերը նախագահում էր Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանը:

Արտակարգ նիստերում քննարկվեց Անդրկովկասի անկախությունից (ապրիլի 22-ին), Կարսի անկումից հետո Սեյմի «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցության և Հայոց ազգային կենտրոնական խորհրդի փոխհարաբերու-

---

[195] Տե՛ս մանրամասն **Գ. Պետրոսյան,** Հայոց ազգային ժողովի և Հայոց ազգային խորհրդի ստեղծման պատմությունից (1917թ. փետրվար-հոկտեմբեր), «Հայագիտության հարցեր» հանդես, № 2, 2016, էջ 51-58:

* Անդրկովկասի կառավարությունը ընդունել է որոշում՝ մտցնել Նոր Գրիգորյան տոմար՝ ապրիլի 17-18 գիշերվա ժամը 12-ին հաջորդող չորեքշաբթին համարելով մայիսի 1-ը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 109): *Ապրիլի 18-ից հետո տեղի ունեցած դեպքերը կներկայացնենք նոր տոմարով:*

[196] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 124, թ. 1-22:

թյունների հարցը: Ավ. Ահարոնյանը ապրիլի 15-ի (28) առաջին նիստի բացման խոսքում մտահոգություն հայտնեց. «Ազգային քաղաքականությունը վարում է Սեյմի հայ անդամների ֆրակցիան՝ առանց Ազգային խորհրդի որևէ մասնակցության», սակայն եղած ձախողումների համար լայն հասարակայնության կողմից «պատասխանատու են ճանաչվում» Հայոց ազգային խորհրդի անդամները[197]:

Այս խնդիրն ավելի սրվեց Կարսի անկումից հետո: Ազգային խորհրդի անդամ Ս. Մամիկոնյանն իր ելույթում փաստեց, որ Անդրկովկասյան սեյմի ձևավորումից հետո «Ազգային օրենսդիր մարմինը» փաստացի սահմանափակել է Ազգային խորհրդի դերը, հեղինակությունն ու իրավունքները հայությանը վերաբերող առանցքային որոշումներ կայացնելիս, քանի որ կառավարության առջև հայության շահերը ներկայացնում էր Սեյմի՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցությունը, ինչը հանգեցրեց Հայոց ազգային խորհրդի հեղինակության նվազմանը[198]:

Հայոց ազգային ժողովը արձանագրեց, որ Սեյմի «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցությունը շրջանցել է Հայոց ազգային կենտրոնական խորհրդի դիրքորոշումը Անդրկովկասի անկախության ապրիլի 9-ի (22) հայտարարության մասին: Սեյմի որոշումից հետո՝ ապրիլի 12-ին (24), Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը հայտարարել էր, որ դեմ է Անդրկովկասի անկախությանը. Սեյմը ոտնահարել է ժողովրդի իրավունքը, քանի որ նման ակտի համար հարկավոր էր հանրաքվե անցկացնել, և խորհուրդը անհրաժեշտ է

---

[197] Տե՛ս նույն տեղը, թ. 2:
[198] Տե՛ս նույն տեղը, թ. 2-3:

համարել այդ մասին բարձրաձայնել մամուլում: Սակայն Ավ. Ահարոնյանը նպատակահարմար չհամարեց դա, այլ առաջարկեց սպասել Հայոց ազգային ժողովի որոշմանը[199]: Բուռն քննարկումների արդյունքում Ազգային ժողովը ձայների բացարձակ մեծամասնությամբ որոշեց. «Ազգային խորհրդի որոշումը հայտարարել մամուլի մեջ, որ ինքը (Ազգային ժողովը – Գ. Պ.) դեմ է Անդրկովկասի անկախ հայտարարելուն՝ համարել չեղյալ»[200]: Ապրիլի 16-ի (29) երկրորդ նիստում Ավ. Ահարոնյանն իր կարծիքը հայտնեց Անդրկովկասի անկախության մասին. «Անկախության հարցը ինձ թվում է, որ ավելի աղետաբեր պիտի լինի մեզ համար, քան Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունելը: Ահա՛ թե ինչու Թուրքիան պահանջ է դրել Անդրկովկասն անկախ հայտարարել և այդ պահանջը նա բանակցություններ սկսելու պայման է հայտարարել»[201]:

Ապրիլի 18-ի (մայիսի 1) վերջին՝ երրորդ նիստում Ազգային ժողովը քննարկեց Սեյմի «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցության և Հայոց ազգային կենտրոնական խորհրդի փոխհարաբերությունների հարցը: Քննարկումն այնքան բուռն ու լարված էր, որ անգամ Հայոց ազգային կենտրոնական խորհրդի շատ անդամներ հրաժարականի դիմում ներկայացրին: Բանն այն էր, որ Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը Անդրկովկասի՝ վերջին օրերի քաղաքական բախտորոշ իրադարձություններին (Անդրկովկասի անկախությունը, Թուրքիայի հետ դիվանագիտական բանակցային գործընթացի վերսկսումը, Կարսի անկումը) ոչ միայն չի մասնակցել, այլև անգամ տեղեկացված չի եղել: Ազգային ժողովը որո-

---

199 Տե՛ս նույն տեղը, թ. 4:

200 Նույն տեղում, թ. 8:

201 Նույն տեղում:

շեց. «Բոլոր քաղաքական բնույթ ունեցող խնդիրները նախապես քննության առնել Ազգային խորհրդի մեջ՝ համաձայն Ազգային համագումարի տված որոշումների»[202]: Դրանից հետո Ազգային խորհրդի անդամները հետ վերցրին իրենց հրաժարականի դիմումները[203]:

Այսպիսով, Ալեքսանդրապոլի և Թիֆլիսի (Հայոց ազգային ժողովի) արտակարգ նիստերի քննարկումները մեկ անգամ ևս փաստեցին, որ երկրամասում ստեղծված ռազմաքաղաքական աննպաստ պայմաններում հայ քաղաքական ուժերը ուշացումով էին արձագանքում իրադարձություններին և ներկուսակցական, միջկուսակցական շահերի ու տարաձայնությունների հետևանքով էլ չկարողացան ժամանակին գործունեության ճկուն, միասնական մոտեցում մշակել, ինչն էլ, անշուշտ, բացասաբար ազդեց քաղաքական, դիվանագիտական գործընթացների վրա:

---

[202] Նույն տեղում, թ. 21:
[203] Տե՛ս նույն տեղը, թ. 22:

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
# ԲԱԹՈՒՄՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ. ԵՐԵՔ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

## 1. Անդրկովկասի արտաքին քաղաքական դրությունը Բաթումի դիվանագիտական բանակցությունների նախօրեին

Ինչպես նշվեց նախորդ գլխում, 1918 թ. ապրիլին Անդրկովկասում իրար հաջորդեցին ռազմաքաղաքական մի շարք բախտորոշ իրադարձություններ: Թուրքիան, խախտելով Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի 4-րդ հոդվածի դրույթները, ռազմական ուժով գրավեց Բաթումը, Արդահանը, Կարսը: Նրա ճնշմամբ Անդրկովկասն անջատվեց Ռուսաստանից և հռչակվեց անկախ պետություն: Դրանով Թուրքիան վերջնականապես փակեց Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի վերանայման խնդիրը: Իսկ Անդրկովկասի անկախությունը Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությանը ոչ միայն ազատում էր Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի կապանքներից, այլ նաև տարածքային զավթումների նոր հնարավորություն էր ընձեռում:

Ի դեպ, Թուրքիայի ռազմածովային ուժերի նախարար Ջեմալ փաշան 1918 թ. մայիսի 10-ին Բաթումում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության անդամների հետ զրույցում պատճառաբանում էր, թե «դուք միանգամից չճանա-

չեցիք Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և դրանով մեզ համար առիթ ստեղծեցիք ձեզ նոր պահանջներ ներկայացնելու»[204]: Միամտություն կլիներ հավատ ընծայել Ջեմալ փաշայի խոսքերին: Հակառակ նրա պնդմանը՝ անկախ Անդրկովկասի հետ դիվանագիտական բանակցային գործընթացների վերսկսման քողի տակ Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը, թաքցնելով զինադադարի իրական դրդապատճառները և նպատակները, լայն հնարավորություն ստացավ շարունակելու վաղօրոք մշակած ռազմատենչ ու զավթողական պլանները. նախ շեղել, մոլորության մեջ գցել, ապա թուլացնել երկրամասի կառավարության և ժողովուրդների զգոնությունն (մասնավորապես հայերի) ու դիմադրողական ոգին, շարունակել և գրավել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի սահմաններից դուրս նկատված ողջ Անդրկովկասը: Դրանով օսմանյան կառավարությունը թևակոխեց իր ռազմաքաղաքական առաջնահերթությունների իրականացման հաջորդ՝ նոր շրջանը: Այդ պայմաններում թուրքական ներխուժման վտանգն ավելի ու ավելի իրական էր դառնում, և այս անգամ արևելահայությունն էր հայտնվելու ցեղասպանության և հայրենազրկության սպառնալիքի առջև, ինչպես դա տեղի ունեցավ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ մյուս վայրերում:

Իր համար նպաստավոր նոր պայմաններում օսմանյան կառավարությունը դարձյալ կիրառեց վաղուց արդեն իրեն արդարացրած ավանդական ռազմաքաղաքական մարտավարությունը. մի կողմից բանակցել, իսկ մյուս կողմից, ռազմական ուժով Անդրկովկասից նոր տարածքներ զավթելով,

[204] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 110:

ճնշում գործադրել դիվանագիտական բանակցային գործընթացների վրա ու սպառնալով վերջնագրի լեզվով՝ պարտադրել իր անարդար պահանջները:

Հարկ է նշել, որ այդ մարտավարությունը Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը կիրառեց ոչ միայն Տրապիզոնի, այլ նաև Բաթումի թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցային գործընթացների թե՛ նախօրեին, թե՛ ընթացքում և թե՛ հետագայում:

Սակայն Անդրկովկասյան սեյմի և կառավարության՝ քաղաքական տարբեր կողմնորոշումներ ունեցող և տարբեր շահեր հետապնդող անդամները չկարողացան ժամանակին արագ ու ճիշտ կողմնորոշվել Թուրքիայից սպասվող նոր ծանր հետևանքների սարդոստայնում: Ավ. Ահարոնյանի գնահատմամբ՝ «Անդրկովկասյան սեյմը և կառավարությունը հեռու էին այդ սպառնալիքի ողջ լրջությունը գիտակցելուց և ի զորու չէին լուծելու իրենց առջև ծառացած այդպիսի ծանր պարտականությունը»[205]: Նրանք այն կարծիքին էին, որ Տրապիզոնի բանակցություններում Թուրքիայի՝ հաշտության դաշնագիր ստորագրելու երկու հիմնական պահանջները կատարված են. ստանալով Բրեստ-Լիտովսկի դաշնագրով նախատեսված Բաթումը, Արդահանը, Կարսը՝ թուրքերը կանգ կառնեն, կբավարարվեն դրանով, և վերջ կդրվի պատերազմին: Նման մտայնությունը հետևանք էր նաև այն համոզման, որ Անդրկովկասը Ռուսաստանից անջատվելուց և անկախ հայտարարվելուց հետո թուրք-անդրկովկասյան հաշտության բանակցությունների վերսկսման հարցը արդեն դարձել էր օրա-

[205] Le Statute International de I՛Arménie, Dictionnaire Diplomatique, Académie Diplomatique Internationale, t. vol 1, p. 197, 1934 (շնորհակալություն Ա. Ենոքյանին՝ Փարիզից բերված նյութը տրամադրելու համար):

կարգային: Անդրկովկասյան կառավարության նոր նախագահ, արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելին դեռ 1918 թ. ապրիլի 10-ի (23) երեկոյան հեռագրել էր թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշային, որ իր կառավարությունը ընդունում է Բրեստ-Լիտվսկի հաշտության դաշնագիրը և խնդրում է դադարեցնել ռազմական գործողություններն ու վերսկսել Տրապիզոնում ընդհատված (ապրիլի 1-ի (14)) դիվանագիտական բանակցությունները՝ Թուրքիայի հետ ամենակարճ ժամկետներում հաշտություն կնքելու համար: «Մեր առաքելութիւնը այս անգամ,- գրում է Ալ. Խատիսյանը,- մեզ շատ դիւրին կը թւէր: Կը մտածէինք թէ պէտք է երթալ եւ ստորագրել դաշնագիր մը համաձայն Պրէսթ-Լիթովսքի պայմաններուն»[206]: Սակայն նրանց բոլոր հույսերն ի դերև ելան, երբ հայտնի դարձավ, որ թուրքերին չի բավարարում զինադադարը, և նրանք չեն պատրաստվում վերսկսելու դիվանագիտական բանակցային գործընթացն Անդրկովկասի հետ: «Բայց մի՞թե տաճիկներն այժմ կուզէին բանակցել Անդրկովկասի հետ,- գրում է Յ. Իրազեկը,- ու իրենց յառաջխաղացութիւնը կանգնեցնել: Կարսի, ինչպէս և Բաթումի անկումով ամբողջ Անդրկովկասի բանալիները այլևս նրանց ձեռքերում էին գտնուում և, ուրեմն, ինչո՞ւ հաշտութեան գալ, երբ նուազագոյն զոհաբերութեամբ անգամ կարելի էր ուզած շրջանները գրաւել»[207]: Ապրիլի 12-ին (25)՝ Կարսը գրավելուց հետո, թուրքերը շարունակեցին իրենց ռազմական առաջխաղացումը՝ արդեն ներկայացնելով տարածքային նոր պահանջներ՝ ողջ Անդրկովկասը գրավելու և ներթափանցելու Իրան, միջինա-

---

[206] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 49:
[207] **Յ. Իրազեկ,** նշվ. աշխ., էջ 23:

սիական երկրներ՝ իրենց երազած պանթուրքիստական ծրագրերն իրականացնելու համար: Դրանով օսմանյան Թուրքիան սպառնում էր նաև կայսերական Գերմանիայի ռազմաքաղաքական և տնտեսական շահերին: Նա փակում էր Գերմանիայի ճանապարհը՝ ներթափանցելու Մերձավոր Արևելք, և միաժամանակ զրկում երկրամասի՝ վերջինիս խիստ անհրաժեշտ բնական հարստություններից օգտվելու հնարավորությունից: Այդ հանգամանքն առաջ բերեց Գերմանիայի խորը զայրույթը, և վերջինս որոշեց չափավորել թուրքերի ախորժակն ու թույլ չտալ խախտել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը: Եվ վերջապես, հարկ է նկատել, որ երկրամասի երկաթուղային ցանցը խիստ անհրաժեշտ էր կռվող կողմերից յուրաքանչյուրին, քանզի նպաստելու էր այն երկրի ուժեղացմանը, որն այն կընդգրկեր իր ազդեցության ոլորտում: Կարսն ու Բաթումը գրավելով՝ թուրքերն արդեն բռնել էին երկաթուղու այն ծայրը, որ միացնում էր թուրքական ռազմաճակատն Իրանին, իսկ այդ ճանապարհը տանում էր դեպի Բաքվի նավթը և Միջին Ասիա: «Ցավը, սակայն, այն էր,- գրում է Զ. Ավալովը,- որ թուրքերի ներխուժումն Անդրկովկաս անմիջապես և ճակատագրականորեն առաջ էր բերում բազմապիսի և վտանգավոր բարդություններ: Իրան տանող երկաթուղին անցնում էր հայկական գավառներով. թուրքերը հրապուրվում էին այստեղ ևս շարունակելու հայերի բնաջնջման այն քաղաքականությունը, որ պատերազմի (Առաջին աշխարհամարտ – Գ. Պ.) ընթացքում կիրառել են Թուրքիայում (Արևմտյան Հայաստան – Գ. Պ.): Եվ դրանով գործողության մեջ էին դրվում փոխադարձ ջարդը, թշնամությունը հայ և թաթար բնակչության միջև»[208]:

---

[208] **З. Авалов**, նշվ. աշխ., էջ 48-49:

Այսպիսով դժվար չէ նկատել, թե ինչու երկրամասում բախվեցին երկու դաշնակիցների՝ Թուրքիայի և Գերմանիայի աշխարհաքաղաքական, տնտեսական շահերը:

Գերմանիային Անդրկովկասում ռազմաքաղաքականից ոչ պակաս հետաքրքրում էր տնտեսական խնդիրը, մանավանդ Առաջին աշխարհամարտի այն օրերին, երբ նրանք առավել սուր էին զգում վառելանյութի և բնական այլ պաշարների կարիքը: Այդ առնչությամբ Գերմանիայի գլխավոր շտաբի ղեկավար, գեներալ Է. Լյուդենդորֆը գրում է. «Մենք Բաքվի նավթի վրա հույս կարող ենք դնել միայն, եթե այն մեր ձեռքում լինի: Ես հիշում եմ, թե Գերմանիայում վառելանյութի ինչպիսի մեծ պակաս կար, ձմռանը ինչ դժվարություններ ունեինք լուսավորության հետ կապված, և թե դրանք ինչպիսի հետևանքներ ունեցան մեզ համար: 7-րդ բանակի հարձակման անցնելուց հետո բանակի վառելիքի պաշարները սպառվեցին: Վառելիքի կարիքը շատ էր զգացվում: Ուկրաինայի երկաթուղին նույնպես նավթի կարիք շատ ուներ: Մենք փորձեցինք առավելագույնի հասցնել Ռումինիայի նավթի շահագործումը: Բայց և այնպես չէինք կարողանում այդ պակասը լրացնել: Այժմ դա հնարավոր էր թվում, եթե այն բերեինք Անդրկովկասից, հատկապես Բաքվից, եթե միաժամանակ լուծեինք փոխադրամիջոցի հարցը… Ամենավճռորոշ հարցը մնում էր այն, թե ինչպես հասնել Բաքու»[209]:

Դեռ Առաջին աշխարհամարտից առաջ գերմանացիներին մեծապես հետաքրքրում էին Վրաստանի բնական հարստությունները (խիտ անտառները), առանձնապես Ճիաթուրիի

---

[209] **Э. Людендорф**, Мои воспоминания о войне 1914-1918 гг. (Военные мемуары), Москва, Вече, 2014, с. 597.

մանգանը, որը խիստ անհրաժեշտ էր Գերմանիայի մետաղաձուլարաններում: 1918 թ. մարտի 29-ին (ապրիլի 11) Տրապիզոն մեկնած գերմանական հատուկ դիվանագիտական հանձնախումբը բանակցեց Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Չխենկելիի հետ՝ Ճիաթուրիի մանգանը գնելու և Գերմանիա արտահանելու առաջարկով: «Գերմանացիների կողմից,- գրում է Ալ. Խատիսյանը,- մարգանեցի գործի ապշեցուցիչ արագ օգտագործման փաստը պարզորոշ վկայում է, որ նրանք հետևում էին մեր բանակցությունների ընթացքին և ոչ մի ավելորդ ժամ չկորցնելով՝ հայտնվեցին ընձեռած իրավիճակի օգուտները քաղելու: Գերմանական ճարպկության ապշեցուցիչ պատկեր. Բաթումում դեռ հրետանային համազարկեր են, Անդրկովկասի կառավարությունից և թուրքական կայսրությունից զինադադարի հրաման դեռ չկար, և գերմանացիներն արդեն ուզում են սկսել առևտուրը»[210]: Զ. Ավալովի գնահատմամբ՝ «Այդ սև քարի (այդպես է վրացերեն կոչվում մանգանը) վրա էր կառուցվում գերմանա-վրացական հարաբերությունների շենքը, մտածում էինք մենք ոչ առանց հիմքի»[211]: Այդ աջակցության դիմաց գերմանացիները խոստանում էին ապահովել և պաշտպանել Վրաստանի անվտանգությունը, նրա սահմանները:

Գերմանացիներին Արևելյան Հայաստանը տնտեսապես հետաքրքիր չէր, սակայն այդ տարածքով էր անցնում երկրամասի երկաթուղային հանգույցի մի մասը, որտեղ բախվում էին Թուրքիայի և Գերմանիայի ռազմաքաղաքական ու տնտեսական շահերը: Դրանից ելնելով՝ գերմանացիներն իրենց շա-

---

[210] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 107:
[211] **З. Авалов**, նշվ. աշխ., էջ 106:

հերից բխող խոստումներ էին տալիս՝ «աջակցելու» հայերին: Սակայն թուրքերի հետ հակամարտության մեջ գտնվող, Հայոց ցեղասպանության և հայրենազրկության մեղսակից Գերմանիայի համար այլևս ընդունելի չէր դաշնակից Թուրքիայի հետ առանց այն էլ լարված հարաբերությունները խորացնելը: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը և քաղաքական իրադարձությունները, երկրամասում Քառյակ միության երկրների շահերի բախման պայմաններում հայկական դիվանագիտությունը ժամանակին չկարողացավ կանխատեսել ապագան և արագ ու ճիշտ նախապատրաստվել: Մեր կարծիքով՝ թուրքական ռազմական առաջխաղացումը կանխելու և Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը լուծելու նպատակով հայկական տարբեր պատվիրակությունների դիվանագիտական ջանքերը Բեռլինում, Վիեննայում, Կոստանդնուպոլսում[212] իրատեսական չէին, և բնական է, որ չարժանացան Գերմանիայի և նրա դաշնակիցների «շոշափելի» աջակցությանը: Հետագայում Ալ. Խատիսյանը խոստովանում է. «Մենք ուշացած էինք, ինչպես քանի մի անգամ ուշացանք մեր վերջին տարիներու պատմութեան մէջ: Պատճառը միշտ ալ այն էր, որ մենք գերագնահատեցինք մեր սեփական ուժերը եւ ստորագնահատեցինք թշնամիին ուժերը»[213]:

Այսպիսով, Գերմանիայի աշխարհաքաղաքական և տնտեսական շահերն անհրաժեշտաբար նրան մղեցին իր հո-

---

[212] Տե՛ս ՀԱԱ (հայկական պատվիրակությունների արձանագրություններ), ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 9-125, գ. 12, թ. 22-102, գ. 13, թ. 7-9, ֆ. 4033, ց. 2, գ. 962, թ. 88, 93, 96-97 և այլն: Նաև **Հ. Ավետիսյան**, նշվ. աշխ., **Ա. Հայրունի**, Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին, Երևան, ԵՊՀ հրատ., 2013:

[213] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 52:

վանավորության տակ առնելու Վրաստանն ու Ադրբեջանը: Գերմանիան պահանջեց Թուրքիայի ռազմաքաղաքական կառավարությունից դադարեցնել առաջխաղացումն ու տարածքային բռնազավթումները երկրամասում և դիվանագիտական բանակցային սեղանի շուրջ նստել Անդրկովկասի հետ: Նրա ճնշմամբ **1918 թ. ապրիլի 27-ին Կոստանդնուպոլսում կնքվեց գերմանա-թուրքական գաղտնի դաշնագիր, որով Անդրկովկասը բաժանվեց ազդեցության ոլորտների Թուրքիայի և Գերմանիայի միջև**[214]**:** Ըստ դաշնագրի՝ Թուրքիային էին անցնում Անդրկովկասում նրա գրաված բոլոր հայկական տարածքները, ինչպես նաև Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին ու Ադրբեջանը: Անդրկովկասի մնացած տարածքները, մասնավորապես Վրաստանն անցնում էր Գերմանիայի ազդեցության ոլորտ: Եվ, այնուամենայնիվ, թուրքերը կարողացան հետագայում կորզել Անդրկովկասի երկաթուղով զորքերի անարգել տարանցման իրավունքը՝ իբր հյուսիսային Իրանում անգլիական զորքերի առաջխաղացումը կանգնեցնելու համար, մինչդեռ Թալեաթ-Էնվեր տանդեմը ձգտում էր դեպի Բաքու:

Թուրքական զորքերի անարգել տարանցումը ընդամենը դիվանագիտական հնարք էր. նույն օրը՝ ապրիլի 27-ին, գերմանա-թուրքական դաշնագիրը շրջանցելու նպատակով Թուրքիան գաղտնի դաշինք կնքեց մուսավաթականների հետ, որով բացվում էր թուրքերի ճանապարհը դեպի Բաքվի նավթը և Թուրքեստանի բամբակը: Հետագայում գերմանացիները

---

[214] Տե՛ս **Г. Пипия,** Политика Германии в Закавказье в 1918 году, Сборник документов, Тбилиси, 1971, էջ 10, **նույնի՝** Германский империализм в Закавказье 1910-1918 гг., Москва, 1978, էջ 101-102: Տե՛ս նաև **Ա. Խաչատրյան,** նշվ. աշխ., էջ 9, **Հ. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 185:

հասկացան, որ խաբված են, բայց արդեն ուշ էր: Մինչև գերմանական զորքերի տարանցման նախապատրաստության ավարտը Էնվերի եղբայր Նուրի փաշան կարողացավ գրավել Բաքուն[215]: Այդ քայլը նոր մարտահրավեր էր՝ ուղղված Գերմանիայի շահերին, որն ավելի էր խորացնելու առանց այն էլ լարված հարաբերությունները Թուրքիայի հետ: Եվ դա պատահական չէր: Շուտով, ի պատասխան Թուրքիայի, վրաց-գերմանական գաղտնի բանակցությունների արդյունքում Վրաստանը ստացավ Գերմանիայի «հովանավորի» հրավեր: Իսկ մի քանի ամիս անց՝ 1918 թ. օգոստոսի 27-ին, Գերմանիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքվեց Բրեստ-Լիտովսկի լրացուցիչ դաշնագիրը, որով Գերմանիան լուծում էր Բաքվի նավթի նկատմամբ իր պահանջների բավարարման հարցը[216]: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը կարողացավ իր ծրագրերն իրականացնել Անդրկովկասում:

Երկրամասն ազդեցության ոլորտների բաժանելու գերմանա-թուրքական դաշնագրի կնքման հաջորդ օրը՝ ապրիլի 28-ին, Թուրքիայի ռազմաքաղաքական կառավարությունը համաձայնեց Անդրկովկասի հետ նստել բանակցային սեղանի շուրջ: Փոխադարձ պայմանավորվածությամբ այս անգամ որոշվեց հաշտության բանակցությունները նշանակել Բաթումում:

---

[215] Տե՛ս **Э. Людендорф**, նշվ. աշխ., էջ 598:
[216] Տե՛ս **Ա. Խաչատրյան,** նշվ. աշխ., էջ 9:

## 2. Անդրկովկասյան պետության կազմալուծումը. երեք անկախ հանրապետությունների ստեղծումը (1918 թ. մայիս)

1918 թ. մայիսի 1-5-ը Թիֆլիսում ձևավորվեց Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության՝ Բաթում ուղարկվելիք բազմանդամ կազմ՝ 45 հոգի[217]: Նրանցից 6-ը պատվիրակության անդամներ էին, իսկ 39-ը՝ խորհրդականներ, քարտուղարներ, զինվորականներ և այլն: Նման ստվար կազմը վկայում էր Անդրկովկասյան երեք գլխավոր ազգերի ներկայացուցիչների միջև սուր հակասությունների և փոխադարձ անվստահության մասին: Պատվիրակությունը դարձյալ գլխավորում էր անկախ Անդրկովկասյան հանրապետության արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելին, որը միաժամանակ ներկայացնում էր Վրաստանի շահերը: Վրաց պատվիրակության երկրորդ անդամը Ն. Նիկոլաձեն էր, գլխավոր խորհրդականները՝ Զ. Ավալովը և Ռիխիլաձեն, իսկ հայկական կողմից ներկայացված էին Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջազնունին (խորհրդականներ՝ Ս. Վրացյան, Մ. Պապաջանյան, Հ. Օհանջանյան և ուրիշներ)[218]: Թաթարներից ընդգրկվեցին Մ. Հաջինսկին, Մ. Ռասուլ-Զադեն և այլք:

Թուրքական պատվիրակության նախագահն էր արդարադատության և արտաքին գործերի նախարար Հալիլ բեյը: Պատվիրակության կազմում էին նաև կովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշան, Թեֆիկ Սելիմը և Նասրեդդին բեյը: Նրանց հետ ժա-

---

[217] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 109: Նաև **З. Авалов**, նշվ. աշխ., էջ 34:
[218] Տե՛ս «Հորիզոն» լրագիր, Թիֆլիս, 19 մայիսի 1918 թ.:

մանեցին երկրի ռազմածովային ուժերի նախարար Ջեմալ փաշան և շուրջ 200 այլ պաշտոնյաներ՝ Բաթումի շրջաններում թուրքական կառավարման վարչություն ստեղծելու համար[219]:

Գերմանիան ներկայացնում էր թուրքական կառավարությունում գերմանական հրամանատարության լիազոր ներկայացուցիչ, Թուրքիային ոչ ցանկալի անձ գեներալ ֆոն Լոսովը: Պատվիրակության կազմում էին նաև Վ. ֆոն Շուլենբուրգը, Օ. ֆոն Վեզենդոկը (քարտուղար): «Գերմանիան՝ Բաթումում, նշանակում էր մի սանձ Թուրքիայի բերնին, իսկ դա ամենակարևորն էր»[220], - գրում է Զ. Ավալովը:

Դիվանագիտական բանակցություններին մասնակցելու համաձայնություն տրվեց նաև Հյուսիսային Կովկասի ու Դաղստանի մահմեդական ժողովուրդների պատվիրակներին (Հայդար բեյ Բամմատով և Զ. Դեմիրխանով)[221]:

Մայիսի կեսին Գերմանիայի ռազմաքաղաքական կառավարությունը առաջարկել էր իր միջնորդությունը՝ Անդրկովկասը Խորհրդային Ռուսաստանի հետ հաշտեցնելու և ապահովելու վերջինիս ներկայացուցչի մասնակցությունը Բաթումի դիվանագիտական բանակցություններին: Մոսկվայում Գերմանիայի դիվանագիտական ներկայացուցիչ Միհրբախի միջոցով ներկայացված առաջարկին (նոտային) ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի ժամանակավոր տեղակալ Գ. Չիչերինը մայիսի 15-ի նոտայով պատասխանել էր. «Անհրաժեշտ է ռուսական կառավարության լիազոր ներկայացուցչին ներգրավել այն բանակցություններին, որոնք

---

[219] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24 (մաս II) թ. 306:
[220] **З. Авалов**, նշվ. աշխ., էջ 37:
[221] Տե՛ս **Հ. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 190:

Բաթումում տարվում են մեկ կողմից գերմանական և օսմանյան կառավարությունների և մյուս կողմից այսպես կոչված անդրկովկասյան կառավարությունների միջև:

Պնդելով, որ ռուսական կառավարության պատգամավորները պետք է մասնակցեն Բաթումում տեղի ունեցող բանակցություններին, Ժողովրդական Կոմիսարիատը շեշտում է, որ դա բնավ չի նշանակում, թե ռուսական կառավարությունը մտադիր է ճանաչել այսպես կոչված անդրկովկասյան կառավարությունը, ըստ որում ավելացնում է, որ առանց իր մասնակցության կնքված պայմանագիրը նա իրեն իրավունք չի վերապահի ճանաչել»[222]: Ի վերջո, ռուսական կողմին չթույլատրվեց մասնակցել Բաթումի բանակցություններին:

Մայիսի 6-ի երեկոյան անկախ Անդրկովկասյան հանրապետության խաղաղարար պատվիրակությունը ժամանեց Բաթում՝ թուրքերի հետ հաշտության դաշնագիր ստորագրելու համոզումով: Սակայն պատվիրակությունը մեկնեց հանպատրաստից՝ չունենալով արտաքին միասնական քաղաքականություն և իբրև դրա հետևանք՝ նաև դիվանագիտական անհրաժեշտ ռազմավարություն: Բանն այն էր, որ Անդրկովկասյան սեյմը և կառավարությունը ի զորու չէին կյանքի կոչելու երկրամասի առջև ծառացած հրատապ և կարևորագույն առաջնահերթությունները: Դրա հիմնական պատճառներն Անդրկովկասյան երեք գլխավոր ազգերի միջև խորացող ներքին ու արտաքին հակասությունները և հակամարտություններն էին, որոնցից գլխավորները, ինչպես նշել էինք, նրանց քաղաքական տարբեր կողմնորոշումներն ու ազգային-տա-

[222] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 434-435:

բածքային սահմանային վեճերն էին, միմյանց նկատմամբ անվստահությունն ու անհանդուրժողականությունը: Այս ամենն անկարելի դարձրեց երկրամասում հավաքական միակամություն, ամուր և կայուն միասնական պետություն ստեղծելու հնարավորությունը: «Անդրկովկասի պետական-քաղաքական կեանքը,- գրում է Յ. Իրազեկը,- բոլորովին նմանում էր առակի սայլին, որին լծուած հայերը, վրացիներն ու թուրքերը (թաթարներ – Գ. Պ.) միանգամայն տարբեր շահեր ու տարբեր նպատակներ հետապնդելով, ոչ միայն իրար չէին օգնում, այլ ընդհակառակը, իրար խանգարում ու վնասում էին»[223]: Դժվար չէ նկատել, որ այդ ամենի պատճառով հնարավոր չդարձավ նաև ստեղծել միացյալ ճակատ՝ թուրքական տարածքային զավթումները կասեցնելու, ինչպես նաև միասնական արտաքին քաղաքականություն և ճկուն դիվանագիտություն բանեցնելու համար: Ահա թե ինչու թե՛ Տրապիզոնի և թե՛ Բաթումի դիվանագիտական բանակցային գործընթացներում Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունների երեք գլխավոր ազգերի ներկայացուցիչներից յուրաքանչյուրը գործում էր հանուն սեփական շահերի: Բանակցությունների ընթացքում տեղի էին ունենում ոչ պաշտոնական, անդրկուլիսյան հանդիպումներ, մասնավոր զրույցներ. թաթարները հանդիպում էին թուրքերի, վրացիները՝ թուրքերի և գերմանացիների, հայերը՝ գերմանացիների հետ: Սակայն, բացառությամբ թաթարների, հայ և վրաց պատվիրակության անդամների շահերը համընկնում էին. երկուսն էլ ձգտում էին թուրքերից անկախ և ազատ ապրելու: «Տարբեր վիճակի մեջ էին ադրբեջանցիները,- գրում է Զ. Ավալովը:- Նրանք, ի դեմս թուրքերի, սկսել էին տեսնել

[223] **Յ. Իրազեկ,** նշվ. աշխ., էջ 15:

իրենց ազգակիցների, որոնք կարող էին շատ հարցերում օգնել իրենց. ոչինչ չէր ստիպում խեթ հայացքով նայել Բաթումի բանակցություններին»[224]: Կովկասյան թաթարների մասնակցությունը Տրապիզոնի և Բաթումի հաշտության բանակցություններին ընդամենը դիվանագիտական խորամանկություն էր՝ քողարկելու իրենց աջակցությունը թուրքական ծրագրերի իրականացմանն Անդրկովկասում: Նրանց իրական նպատակն էր Թուրքիայի ազդեցության տարածմամբ Անդրկովկասում ապահովել իրենց շահերը:

Ահա այդպիսի բարդ ու լարված ռազմաքաղաքական պայմաններում պետք է սկսվեին Բաթումի թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցային գործընթացները, որտեղ ի սկզբանե ուրվագծվում էին նաև երկրամասի տարածքային նոր կորուստներ, առանց այն էլ ջլատված Անդրկովկասյան անկախ պետության լուծարման անխուսափելի գործընթաց: Հովհ. Քաջազնունու հավաստմամբ՝ «Սեյմի մեջ միշտ աճող ներքին անհամաձայնութիւնները այլ եւս չէր կարելի հաշտեցնել ոչ մի կոմպրոմիսով. պայթումը անխուսափելի էր ու անյապաղ»[225]:

Մինչ գերմանական պատվիրակության ժամանումը մայիսի 6-10-ը Բաթումում տեղի ունեցան թուրքական և Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունների համատեղ ճաշկերույթներ, փոխայցելություններ և մասնավոր զրույցներ[226]: Թուրքական պատվիրակության անդամները, և Բաթում ժամանած Ջեմալ փաշան ու թուրքական բարձրաստիճան այլ պաշտոնյաներ այդ ժամանակն օգտագործեցին

---

[224] **З. Авалов**, նշվ. աշխ., էջ 36:
[225] **Հովհ. Քաջազնունի,** նշվ. աշխ., էջ 29:
[226] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24 (մաս II), թ. 306:

ճշգրտելու, պարզելու Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության երեք գլխավոր ազգերի, առանձնապես հայ և վրացի ներկայացուցիչների ակնկալիքները, հավակնությունները, պահանջները և այլն, ինչպես նաև ապակողմնորոշելու նրանց: Միաժամանակ նրանք փորձեցին նաև բարոյահոգեբանական ճնշում գործադրել նրանց վրա և իրարանցում առաջացնել սկսվող դիվանագիտական բանակցություններում:

Մայիսի 6-ի երեկոյան՝ Վեհիբ փաշայի հրավիրած ճաշկերույթից հետո (մասնակցում էր շուրջ 120 մարդ), տեղի ունեցավ Հալիլ բեյի և Ալ. Խատիսյանի առանձնազրույցը: Հալիլ բեյը փորձում էր պարզել, թե արդյոք հայկական կողմը շարունակո՞ւմ է հավատարիմ մնալ ռուսական իր ավանդական կողմնորոշմանը: Նա, դիմելով Ալ. Խատիսյանին, ասում է. «Կովկասի անկախությունն ինձ շատ է հետաքրքրում, և ես Ռուսաստանի դեմ եմ գործելու, որ այդ պատճառով էլ Կովկասը պետք է տեսնել ուժեղ և միասնական, բայց իրենք երկյուղում են, որ մենք չենք կարող դրան հասնել»[227]: Նա զրույցի ավարտին նշում է, որ իրենց շատ է հետաքրքրում նաև այն հարցը, «թե մենք արդյոք կկարողանանք դիմակայել Ռուսաստանին, եթե նա շարժվի դեպի Կովկաս»[228]: Սակայն Հալիլ բեյի հարցը Ալ. Խատիսյանը թողնում է անպատասխան, և դրանով ավարտվում է նրանց կարճատև առանձնազրույցը:

Հաջորդ օրը՝ մայիսի 7-ին, թուրքական շոգենավի վրա ճաշկերույթի հրավիրվեցին Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության անդամները: Այդ ընթացքում թուրքական կողմը ջանասիրաբար փորձում էր բարոյահոգեբանական

---

[227] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 109:
[228] Նույն տեղում:

ճնշում գործադրել և խուճապի մատնել պատվիրակության հատկապես հայ անդամներին: Երիտթուրքական կենտրոնական կոմիտեի անդամներից դոկտոր Բահաեդդին Շաքիրը, դիմելով հայ պատվիրակներին, ասում է. «Հայերը կանգնած են մեր համաիսլամական և համաթրքական սրբազան իտէալներու իրականացման ճամբուն վրայ, եւ մենք անխուսափելիօրէն կը բախուինք անոնց հետ: Ատիկա վեր է եւ դուրս է մեր անձնական զգացումներէն ու տրամադրութիւններէն: Մենք հարկադրուած ենք տարերայնօրէն ոչնչացնել մեր ճամբուն վրայէն այն ամէնը, ինչ որ արգելք կը հանդիսանայ մեր ազգային սրբազան իտէալներուն: **Եվ յետոյ դուք միշտ ռուսներուն հետ էք. դուք անոնց առաջապահն էք. իսկ ռուսները մեր ոխերիմ թշնամիներն են, պատմական թշնամիները: Մտածեցէք այս մասին, փոխեցէք ձեր հոգեբանութիւնը եւ օրիէնտացիան: Դուք թշնամի էք եւ ես ալ թշնամի եմ, բայց մենք ընկերակիցներ ենք. մենք կը հասկնանք կենդանի մարմնի կեանքը, եւ անոր մէջ չկայ մարդասիրութիւն կամ կամքի տկարութիւն»**[229]: Այդ առնչությամբ Ալ. Խատիսյանը գրում է. «Ես հարկաւ պատասխանեցի իրեն ինչ որ պէտք էր, բայց ակներեւ էր որ մենք կը խօսէինք տարբեր լեզուներով, ու մենք բաժնուեցանք առանց որեւէ կերպով համոզած ըլլալու զիրար»[230]:

Մայիսի 10-ին Ջեմալ փաշան Բաթումից մեկնելուց առաջ ցանկություն էր հայտնել Հալիլի ու Վեհիբի հետ այցելել Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության երեք գլխավոր ազգերի ներկայացուցիչներին:

---

[229] **Ալ. Խատիսեան**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, օգոստոս, էջ 126:
[230] Նույն տեղում:

Զ. Ավալովը այդ առնչությամբ գրում է. «Նրանք ցանկացել էին ավելի մոտիկից ծանոթանալ մեր պատվիրակների հետ: Երեքով պինդ նստեցին բազմոցին՝ ամբողջովին գրավելով այն: Սուրճը տրված է: Այս կողմը՝ փոքրիկ հյուրասենյակում, ամբողջ բազմությամբ տեղավորվել են անդրկովկասյան պատվիրակները: Ես հրավիրված եմ որպես «աշխատակից»: Սկզբում ազատ խոսակցություն: Այնուհետև մեր հյուրերը խնդրում են՝ մեր ազգային հատվածներից յուրաքանչյուրն արտահայտվի անկեղծորեն»[231]: Ալ. Խատիսյանը խոսք է բացում թուրքական պետության շրջանակներում Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցի լուծման մասին: Ի դեպ, այդ հարցը դեռևս 1918 թ. ապրիլի 8-ին (21) Տրապիզոնի հաշտության բանակցությունների օրակարգից հանվել էր թուրքերի պահանջով՝ պաշտոնապես այն որակելով որպես միջամտություն Թուրքիայի ներքին գործերին: Ջեմալ փաշան Ալ. Խատիսյանին պատասխանում է. «Հայկական հարցի մասին կարելի է խոսել շաբաթներով, բայց ես, այնուամենայնիվ, մի քանի բառ կասեմ: ....Թուրքիային անմարդկային հարված էր հասցված արտաքին ուժերի կողմից. սա բնական է, բայց բալկանյան ժողովուրդների և հայերի հասցրած հարվածները մահացու էին: Ահա թե ինչու ստիպված ինքնապաշտպանության միջոցներ կիրառվեցին: Եվ հայերի համար եկան սև օրեր: .... Ահա թե ինչու ես խորհուրդ եմ տալիս չբարձրաձայնել այդ հարցը և չդնել այն հիմա: Թողեք ժամանակը բուժի վերքերը: Չէ՞ որ այժմ թուրքերի և հայերի միջև վստահություն չկա, իսկ առանց դրա բանակցություններն անհնար են: Պետք է հանել

[231] **З. Авалов**, նշվ. աշխ., էջ 50-51:

այդ հարցերը, պետք է դրանք վերացնել, և այդ ժամանակ մենք կկարողանանք համաձայնության գալ»[232]:

Այնուհետև Ալ. Խատիսյանը թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ Ջեմալին, Հալիլին ու Վեհիբին հիշեցնում է նրանց «բարյացակամ» վերաբերմունքը 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման օրերին քրիստոնյաների և իր հայ ընկեր Գրիգոր Զոհրապի (հայ գրող, հրապարակախոս, փաստաբան – իրավագետ, հասարակական-քաղաքական գործիչ. 1908-1915 թթ. ընտրվել է Թուրքիայի մեջլիսի պատգամավոր) նկատմամբ: «Խատիսյանը, ըստ երևույթին, ցավոտ տեղը կոխեց,- գրում է Զ. Ավալովը, - Ջեմալ փաշան լուրջ դեմք ընդունեց և խորհուրդ տվեց այդ հարցը չշոշափել»[233]: Իրողությունն այն էր, որ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման օրերին Հալիլ բեյը ձերբակալությունից խուսափելու համար պատսպարվել էր Գր. Զոհրապի բնակարանում: «Բայց երբ,- գրում է Ալ. Խատիսյանը,- 1915 թ. Զոհրապի կինը յուսահատօրէն դիմած էր Խալիլ պէյին, խնդրելով պաշտպանել իր ամուսինը, ան կտրուկ կերպով մերժած էր որեւէ օգնութիւն ընծայել»[234]: 1915 թ. Հայոց ցեղասպանության և հայրենազրկության առաջին օրերին Գր. Զոհրապը ձերբակալվեց, իսկ մայիսի 20-ին սպանվեց աքսորի ճանապարհին:

Բանակցությունների նախօրեին Բաթումում ակտիվորեն շրջանառվեց թուրքերի օժանդակությամբ վրացական պետություն ստեղծելու թեման: «Էնվեր փաշան,- գրում է Ալ. Խատիսյանը,- խնդրել էր ցույց տալ վրաց իշխաններին, որոնք կարող

---

[232] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 110:

[233] **З. Авалов**, նշվ. աշխ., էջ 51:

[234] **Ալ. Խատիսեան**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բոստոն, էջ 120:

են կազմավորել վրացական կառավարություն: Նա ուզում էր անձամբ գնալ Քութայիս, որպեսզի այնտեղ հռչակեր վրացական անկախ պետություն»[235]: Այդ նպատակով Թիֆլիս էր մեկնելու նաև Հալիլ բեյը[236]: Մայիսի 10-ին Բաթումում Ջեմալը, դիմելով վրաց պատվիրակության անդամներին, նշում էր. «Թուրքերը վրացիների հետ որևէ խնդիր չունեն, այդ պատճառով էլ հաջողություն եմ մաղթում վրացական պետության կազմավորման գործում»[237]:

Հարկ է նշել՝ դեռ Առաջին աշխարհամարտի սկզբին Թուրքիայի և Վրաստանի միջև կնքվել էր վրաց-թուրքական հակառուսական գաղտնի դաշնագիր[238], ըստ որի՝ թուրքերը պարտավորվում էին օգնել վրացիներին՝ անջատվելու Ռուսաստանից: Այդ նույն ժամանակ էլ Վրաստանի անկախության գործընթացն իրականացնելու նպատակով գաղտնաբար ստեղծվել էր «Վրաստանի ազատության կոմիտեն», որը վրաց ժողովրդին նախապատրաստելու էր անկախության[239]: Այդ գործընթացն ավելի ակտիվացավ 1917 թ. Ռուսաստանում Փետրվարյան հեղափոխությունից և Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Տրապիզոնի դիվանագիտական բանակցությունների ընթացքում թուրքական պատվիրակության նախագահ Ռաուֆ բեյն անգամ ակնարկում էր «Անդրկովկասը երեք մասի բաժանելու»[240] մասին:

---

[235] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 110:
[236] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24 (մաս II) թ. 307:
[237] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 110:
[238] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 29, թ. 134:
[239] Տե՛ս **Ց. Իրազեկ,** նշվ. աշխ., էջ 14:
[240] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 108:

Առաջին հայացքից թվում էր, թե Վրաստանի անկախության նախադրյալները գրեթե ստեղծվել են, և թուրքերը փորձում են օժանդակել դրա իրականացմանը: Սակայն հարց է առաջանում, թե ինչու թուրքերի համար դա դարձավ օրակարգային հատկապես Բաթումի դիվանագիտական բանակցությունների նախօրեին, երբ ռազմաքաղաքական իրավիճակն արմատապես փոխվել էր երկրամասում: Բանն այն է, որ թուրքերն արդեն բռնազավթել էին Բաթումը, Արդահանը, Կարսը և շարունակում էին իրենց ռազմական առաջխաղացումը՝ գրավելու ամբողջ Անդրկովկասը: Մինչդեռ թուրքերի այդ տարածքային բռնազավթումներն ամբողջովին հակասում էին դաշնակից Գերմանիայի շահերին, և վերջինիս ճնշմամբ Կոստանդնուպոլսում, ինչպես վերը նշվեց, կնքվել էր գերմանա-թուրքական գաղտնի դաշնագիր (ապրիլի 27), որով Վրաստանն անցնում էր Գերմանիայի ազդեցության ոլորտ: Իսկ դա հանգիստ չէր տալիս Թուրքիայի ղեկավարությանը, որովհետև այն հակասում էր վերջինիս աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերին:

Կարծում ենք՝ պատահական չէր, որ Վրաստանում Գերմանիայի ազդեցությունը չեզոքացնելու նպատակով Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը որոշեց վրացիների անկախացմամբ սեպ խրել վրաց-գերմանական ձևավորվող հարաբերությունների մեջ՝ խափանելով դրանք: Այդպես Վրաստանը, կորցնելով Գերմանիայի հովանավորությունը, գրավվելու էր Թուրքիայի կողմից, իսկ Գերմանիան էլ կորցնելու էր իր ազդեցությունը ոչ միայն Վրաստանում, այլ նաև ամբողջ երկրամասում: Թուրքերի կողմից այդ դիվանագիտական ծուղակի նախապատրաստումը չէր վրիպել վրացի և գերմանացի դիվանագետների ուշադրությունից, ուստի Բաթումում

էլ ավելի եռանդուն շարունակվեց նրանց գաղտնի աշխատանքը: Թուրքական վերջնագրից խուսափելու համար անհրաժեշտ էր մինչև այն ներկայացնելը «**թուրքական արշավանքին հակազդել Գերմանիայի աջակցությամբ անկախ Վրաստանով**»[241]:

Առաջ անցնելով նշենք, որ երբ մայիսի 26-ի երեկոյան Հալիլ բեյը Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության որոշմամբ վերջնագիր էր ներկայացրել Ա. Չխենկելիին՝ փոխանցելու Անդրկովկասյան կառավարությանը, վերջինս գրավոր պատասխանել էր, որ այլևս հնարավոր չէ գրությունը հանձնել ըստ պատկանելության, որովհետև անկախ Անդրկովկասյան պետություն այլևս գոյություն չունի. Սեյմը լուծարվել է չորս ժամ առաջ, իսկ Վրաստանն էլ հռչակել է իր անկախությունը[242]: Այդ քայլը վրացի և գերմանացի դիվանագետները նախապատրաստել և իրականացրել էին Թուրքիայից գաղտնի: «**Մեր անդրկուլիսյան գաղտնի աշխատանքը,** - գրում է Զ. Ավալովը, - **անցավ աննկատ: Թվում է՝ ոչ ոք չի հասկանում, թե ինչ է լինելու այսօր և վաղը»**[243]: Թուրքերը հասկացան, որ խաբված են: Թեև թուրք պատվիրակության համար այդ պահին անսպասելի էր անկախ Անդրկովկասի կազմալուծումը, բայց և այնպես դա նրանց հանկարծակիի չբերեց. նրանց վաղուց հայտնի էր, որ Անդրկովկասյան ազգերի միությունը արհեստածին է ու ժամանակավոր, հետևաբար չէր կարող երկար գոյատևել և իբրև բուֆերային պետություն-պատնեշ ծառայել Թուրքիայի և Ռուսաստանի միջև: Ուստի պատահական չէր նաև, որ այդ հարցի լուծումը թուրքերը

---

[241] **З. Авалов** նշվ. աշխ., էջ 59:
[242] Տե՛ս նույն տեղը, էջ 56-62:
[243] Նույն տեղում, էջ 60:

համարում էին ռազմական ուժով ամբողջ Անդրկովկասը գրավելը:

Հարկ է նշել նաև, որ այդ օրերին՝ մինչև Անդրկովկասյան պետության կազմալուծումը, վրացական մամուլը շատ հետևողականորեն նախապատրաստում էր հասարակական կարծիքը Վրաստանը անկախ պետություն հռչակելու վերաբերյալ: Նման բնույթի հոդվածներ էին հրապարակվում սոցիալ-դեմոկրատների օրգան «Էրթոբայի», ազգային դեմոկրատների «Սաքարթվելոյի» և սոցիալիստ-ֆեդերալիստների «Սախալխո-Սաքմեի» էջերում[244]:

Ինչևիցե, ակնհայտ էր նաև, որ Անդրկովկասյան պետության լուծարումը և Վրաստանի անկախության հռչակումն իրականացվեցին նպաստավոր այն պահին, երբ Գերմանիայի և Վրաստանի միջև արդեն պատրաստ էին ռազմաքաղաքական, տնտեսական, ֆինանսական, անվտանգության և մի քանի այլ բնույթի փոխշահավետ համաձայնագրերի նախագծեր, որոնք գաղտնի ստորագրվելու էին Փոթիում: Այդ առնչությամբ Զ. Ավալովը գրում է. «**Վրաստանի անկախությունն ու տարածքային ամբողջությունն ապահովվում են Գերմանիայի կողմից**: … Ժամանակավոր համաձայնությունը Գերմանիայի հետ, որի վրա ջանասիրաբար աշխատում ենք (ավելի ճիշտ՝ համաձայնությունները. մի քանի վավերագիր կլինի), …. վրացական ժամանակավոր կառավարությունը Գերմանիային տրամադրում է օգտագործելու Վրաստանի նավահանգիստներում գտնվող բոլոր նավերը:

---

[244] Տե՛ս **Է. Զոհրաբյան**, Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում, Երևան, 2000, էջ 98:

Եթե դաշնագիր կողմին հաճելի է, ինչո՞ւ չզիջել նրան այն, ինչ անգամ գոյություն չունի բնության մեջ: Ինչպե՞ս: Համաձայնություն վրաց նավերի մասին: Գերմանիայի հետ: … **Եվ այսպես սեպը սեպով հանիր, բայց մենք թուրքերից պաշտպանվում ենք գերմանացիներով**»[245]:

Ի դեպ, մայիսի 28-ին Փոթիում ստորագրված վրաց-գերմանական գաղտնի համաձայնագրերը Բեռլինը չվավերացրեց, սակայն պատմական այդ վճռորոշ պահին գերմանական զինվորների ներկայությունը վրացական տարածքում Թուրքիայի ոտնձգություններից Վրաստանի սահմանների անվտանգության գրավական էր[246]: Շուտով Թիֆլիսում վրացական դրոշի կողքին բարձրացվեց նաև Գերմանիայի դրոշը:

Եվ այնուամենայնիվ, Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը դաշնակից Գերմանիայի հետ սուր հակասությունների և բախումների պայմաններում համառորեն շարունակեց իր աշխարհաքաղաքական և տնտեսական շահերի իրականացմանը միտված քայլերը երկրամասում:

Մայիսի 11-ին Բաթումի ակումբի շենքում տեղի ունեցավ հաշտության բանակցությունների հանդիսավոր պաշտոնական բացումը: **Թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցությունները ընթացան երկու փուլով.**

I. **մայիսի 11-26-ը՝ անկախ Անդրկովկասյան հանրապետության հետ մինչև վերջինիս լուծարումը,**

II. **մայիսի 30-ից հունիսի 4-ը՝ Անդրկովկասյան երեք անկախ հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և**

---

[245] **З. Авалов**, նշվ. աշխ., էջ 58-60:

[246] Տե՛ս Российский государственный военный архив (այսուհետև՝ РГ ВА), ф. 39720, оп. 1, д. 49, л. 1-5:

**Աղրբեջանի հետ միաժամանակ, սակայն յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին:**

Հարկ է նշել, որ բանակցային գործընթացի հանդիսավոր բացումից հետո մինչև մայիսի 26-ը պաշտոնական բանակցային նիստեր այլևս չգումարվեցին, թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցությունները դարձյալ մտան փակուղի, բայց տեղի ունեցան ոչ պաշոնական անդրկուլիսային փոխադարձ հանդիպումներ ու բանակցություններ: Նիստը նախագահելու գործը ստանձնեց թուրքական պատվիրակության ղեկավար Հալիլ բեյը: Նա իր ողջույնի խոսքն արտասանեց թուրքերենով՝ «...հիշելով Կովկասի գլխին ծագած «ազատության գեղեցիկ աստղը»: Թուրքիայի փափագը բարիդրացիություն հաստատելու մասին և այլն»[247]: Պատասխան խոսքով հանդես եկավ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին:

Դիվանագիտական բանակցությունները դեռ չսկսված՝ հայտնի դարձավ, որ երկու պատվիրակությունների միջև առկա են սկզբունքային տարաձայնություններ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրն իբրև բանակցությունների հիմք ընդունելու հարցի շուրջ: Իրողությունն այն էր, որ այդ դաշնագիրը որպես բանակցությունների միակ հիմք ընդունելով՝ Անդրկովկասը հարկադրված չէր լինի տարածքային նոր զիջումներ անելու Թուրքիային՝ բացառությամբ այնտեղ նախատեսված Բաթումի, Արդահանի և Կարսի: Այդ հանգամանքը կարևորելով՝ Ա. Չխենկելին իր ելույթում հայտարարեց, որ սկսվող բանակցությունները պետք է դիտել որպես Տրապիզոնի բանակցությունների ուղղակի շարունակություն և Հալիլ բեյին հիշեց-

[247] **З. Авалов**, նշվ. աշխ., էջ 40:

րեց, որ դեռևս 1918 թ. մարտի 28-ին (ապրիլի 10) Տրապիզոնում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը թուրքական վերջնագրին գրավոր հայտարարել է. «Ի պատասխան օսմանյան պատվիրակության նախագահի՝ 1918 թ. ապրիլի 6-ի գրության՝ պատիվ ունեմ հայտնելու, որ ընդունում եմ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և պատրաստ եմ հետագա բանակցությունները վարելու այդ դաշնագրի հիման վրա: Անդրկովկասյան պատվիրակության նախագահ, Արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելի»[248]: Բանակցային նիստում Հալիլ բեյը կտրուկ մերժեց Ա. Չխենկելիի առաջարկած՝ բանակցությունները վարելու հիմքը և հրապարակեց օսմանյան կառավարության տեսակետը, ըստ որի՝ թուրքական կողմը հրաժարվում է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի հիման վրա բանակցելու իր նախկին դիրքերից և առաջ է քաշում նոր պահանջներ: Հալիլ բեյը Ա. Չխենկելիին նաև հիշեցրեց, որ Տրապիզոնի բանակցությունների ժամանակ նա նման հայտարարություն արել է կայսերական կառավարությանը, բայց դա չի վավերացվել Անդրկովկասյան կառավարության կողմից, որը հետ է կանչել իր պատվիրակությանը, որին հետևել են դիվանագիտական բանակցությունների խզումը և ռազմական գործողությունների վերսկսումը Թուրքիայի և Անդրկովկասի միջև[249]: Հալիլ բեյն իր դիրքորոշումը հիմնավորեց այն բանով, որ «թուրքական բանակը Բրեստ-Լիտովսկի դաշնագրից հետո ոչ թե ռուսական բանակի, այլ Անդրկովկասյան զորքերի դեմ է կռվել: Եվ քանի որ այդ պատճառով երկու կառավարությունների փոխհարաբերությունների բնույթն այժմ փոխվել է, ես

[248] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 160, 313-316.
[249] Տե՛ս նույն տեղը, էջ 314:

չեմ կարող ընդունել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը որպես ներկա բանակցությունների միակ հիմք»[250]: Հալիլ բեյը կտրուկ հայտարարեց նաև, որ թուրքական կառավարությունն այլևս չի կարող սահմանափակվել տարածքային այն ձեռքբերումներով, որոնք նախատեսված էին Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով: Այդ առնչությամբ ուշագրավ է Զ. Ավալովի գնահատականը. «Մենք շարունակում էինք հիմնվել նաև այս առարկության վրա, որ թուրքերը իրավունք չունեին պահանջելու Բրեստ-Լիտովսկի իրենց զիջումներից ավելին: Այստեղ մեր դիրքը բավականին թույլ էր, բայց և այնպես ստիպված էինք համառել, որովհետև այդ էր Ա. Չխենկելու գլխավոր փաստարկը դեռևս Տրապիզոնի խորհրդաժողովի վերջից սկսած: Այս տեսակետը թուլանում էր (այսինքն՝ չեն ծագել նոր հանգամանքներ, որ փոխեին մեր միջև եղած միջազգային դրությունը, ուստի չեն կարող լինել նաև նոր պահանջներ) այնպիսի փաստերի պատճառով, ինչպիսիք էին Սեյմի բարձրացրած ռազմահայրենասիրական ամբողջ աղմուկը՝ իբրև հետևանք այն բանի, որ թուրքերը չէին ցանկանում հրաժարվել Բաթումից և Կարսից, Սեյմի ընդունած մի շարք ռազմաշունչ բանաձևերը, պատվիրակությունը Տրապիզոնից հետ կանչելը և այլն:

Այս փաստարկների հետևանքով թուրքերը հնարավորություն ստացան պնդելու, որ Չխենկելու՝ Տրապիզոնում արած հայտարարությունը Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը ընդունելու մասին «չեղյալ է հռչակված» Գեգեչկորու կառավարության կողմից, և որ Անդրկովկասյան հանրապետության կողմից պատերազմի վերսկսումը պատճառ եղավ միջազգային դրու-

[250] Նույն տեղում, էջ 315:

թյան փոփոխության, որը այժմ Թուրքիային իրավունք է տալիս նոր պահանջներ ներկայացնելու: Մի խոսքով՝ այս կետում մեր ոտքի տակի հողը ամուր չէր»[251]:

Ինչպես տեսնում ենք, Ա. Չխենկելիի դիվանագիտական ջանքերը որևէ դրական արդյունք չտվեցին: Իհարկե, ավելորդ է ասել նաև, որ, միևնույնն է, թուրքերը որևէ այլ առիթ կգտնեին նախապես պատրաստված ռազմավարական հեռահար ծրագրերն իրականացնելու համար:

Ստեղծված իրավիճակում Հալիլ բեյն իրեն իրավունք վերապահեց բանակցությունների հիմք ընդունելու թուրքերի կողմից նախապես պատրաստված «Խաղաղության ու բարեկամության» մասին դաշնագրի նախագիծը, որտեղ, տարածքային պայմաններից զատ, ամրագրվում էին տնտեսական, առևտրական, ռազմաքաղաքական և չափազանց ծանր այլ պահանջներ: Իրողությունն այն էր, որ հարկադրական համաձայնությամբ Հալիլ բեյն Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությանը հանձնեց մի կնքված ծրար, որում դաշնագրի նոր նախագիծն էր: Եվ դրանով փակվեց հաշտության բանակցությունների առաջին և վերջին լիագումար նիստը: «Երեկոյան մենք իմացանք թուրքերի պահանջների մասին,- գրում է Ալ. Խատիսյանը,- և հուսահատության մեծ սարսափ ապրեցինք»[252]: Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության բոլոր հույսերն ի դերև ելան: Նրանք հասկացան, որ խաբված են, բայց արդեն ուշ էր:

Ուշագրավ է այդ իրադարձություններին Հովհ. Քաջազնունու տված գնահատականը. «**Բրեստ-Լիտովսկի պայմանա-**

---

[251] **З. Авалов** նշվ. աշխ., էջ 46:
[252] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 110:

**գիրը, որի մասին մի ամիս առաջ, Տրապիզոնում, լսել անգամ չէինք ուզում, այժմ դառել էր մեր միակ ու ամենամեծ իղձը: Բայց թուրքերը մնում էին անողոք, պինդ բռնել էին մեր կոկորդից, բաց չէին թողնում»**[253]:

«Օսմանյան կայսերական կառավարության և Անդրկովկասյան Դաշնության խաղաղության ու բարեկամության դաշնագրի» թուրքական նախագիծը բաղկացած էր 12 հոդվածից և 3 հավելվածից: «Փաստաթուղթը պարունակում է քաղաքական, տնտեսական, իրավական և ռազմական տեսակետներ, և որ ինքը (Հալիլ բեյը - Գ. Պ.) անձամբ Անդրկովկասյան պատվիրակության հետ վիճաբանություններ կսկսի քաղաքական հարցերի շուրջ… Այն հարցերը, որոնք վերաբերում են երկու երկրներին՝ կարծարծե՞ն երկու հետաքրքրվող կողմերը»[254]:

Հալիլ բեյը ներկայացրեց նոր ծանր պահանջներ ամբողջ Անդրկովկասի համար ընդհանրապես և Հայաստանի ու հայության համար մասնավորապես: Ըստ դաշնագրի նախագծի՝ Թուրքիան հավակնում էր տարածքային նոր բռնազավթումների: Թուրքերը, Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի ճշտված սահմաններից բացի, պահանջում էին Թիֆլիսի, Քութայիսի և Երևանի նահանգների ընդարձակ տարածքները, որոնք հիմնականում բնակեցված էին հայերով: Կարսի մարզից բացի՝ հավակնում էին զավթել նաև Ալեքսանդրապոլը, Էջմիածնի գավառի մեծ մասը, Սուրմալուն, Շարուրը, Նախիջևանը, Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին: Հայաստան փաստորեն չէր լինի. մնում էր միայն լեռնային փոքր տարածություն Արագածի և Սևանա լճի միջև: Մյուս կողմից՝ կով-

---

[253] **Հովհ. Քաջազնունի,** նշվ. աշխ., էջ 29:

[254] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 20, թ. 23, տե՛ս նաև **Հ. Ավետիսյան**, Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս, Երևան, 1998, էջ 60:

կասյան թաթարները, «որոնց պաշտօնական պատուիրակներից զատ Բաթում էր եկել մի բազմամարդ պատգամաւորութիւն Սուլթանօվի գլխաւորութեամբ,- գրում է Ս. Վրացյանը,- պահանջում էին Ղարաբաղը, Զանգեզուրը, Դարալագեազն ու Բասարգէչարը, անգամ Երևան քաղաքը՝ վեհանձնօրէն հայերին թողնելով Էջմիածինը իբրև մայրաքաղաք»[255]:

Փաստորեն, թուրքական դաշնագրի նոր պահանջները լայն հնարավորություններ էին ստեղծում Թուրքիայի համար ոչ միայն ապահովելու իր ռազմաքաղաքական ազդեցությունն ամբողջ Անդրկովկասում, այլև սահմանակից դառնալու Ադրբեջանի և Իրանի այն տարածքներին, որոնց բնակչությունը հիմնականում ծագումով թուրք էր կամ թրքախոս: Այդտեղից ճանապարհ էր բացվում նաև դեպի Անդրկովկասյան և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու ժողովուրդների երկրամասեր: Այդ պահանջները դյուրացնում էին նաև Թուրքիայի ռազմական գործողությունների ծավալումը Հյուսիսային Իրանում՝ անգլիական զորքերի առաջխաղացումը կասեցնելու համար: Դա իրականացնելու նպատակով հաշվի էր առնվում նաև Անդրկովկասի երկաթուղով թուրքական զորքերի անարգել տարանցումը:

Նախագծի երկրորդ հոդվածով օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ռազմական օգնություն ցուցաբերել Անդրկովկասյան կառավարությանը՝ երկրի ներսում կարգուկանոն ապահովելու և արտաքին հարձակումներից երկիրը պաշտպանելու համար:

Երրորդ հոդվածով Անդրկովկասյան կառավարությունն իր հերթին պարտավորվում էր արմատախիլ անել իր տարած-

---

[255] Տե՛ս **Ս. Վրացեան**, Անկախ եւ Միացեալ Հայաստան (Ուրուագիծ), էջ 13:

քում գործող զինված «բանդաները» և անհրաժեշտության դեպքում ապավինել Թուրքիայի աջակցությանը՝ զինաթափելու և ցրելու այդ կարգի բոլոր խմբավորումները[256]:

Ինչպես տեսնում ենք, 2-րդ և 3-րդ հոդվածների նախագծերի համաձայն՝ Անդրկովկասն իրականում հայտնվում էր կործանման եզրին. զրկվում էր ինքնիշխանությունից ու երկրի անվտանգությունն ապահովելու հնարավորությունից:

«Թաթարները ցնծութեան մէջ էին այդ առթիւ,- գրում է Վ. Մինախորյանը:- Հայերը ահաբեկուած՝ թէ՛ հողային նոր կորուստների եւ թէ՛ «զինուած խմբերը» արմատախիլ անելու առթիւ: Գալով վրացիներին, նրանց համար ոչ միայն խաչ էր դրուում Տրապիզոնի բանակցութիւններից ժառանգութիւն մնացած ակնկալութիւնների վրայ, այլ եւ չքանում էր Վրաստանի կենսական շահերը պաշտպանելու հնարաւորութիւնը»[257]:

Ստեղծված իրավիճակը զարմանք և խորը զայրույթ առաջ բերեց Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության ոչ միայն հայ և վրացի անդամների, այլ նաև գերմանացիների շրջանում: Թուրքիայի այդ նկրտումները, ինչպես վերը նշվեց, հակասում էին նաև Գերմանիայի աշխարհաքաղաքական և տնտեսական շահերին երկրամասում: Երբ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը ծանոթացավ դաշնագրի նախագծի հոդվածներին և հավելվածներին, սկսվեց երկու պատվիրակությունների միջև հուշագրերի և նոտաների փոխանակման անպտուղ գործընթացը, որը շարունակվեց մինչև անկախ Անդրկովկասյան պետության կազմալուծումը:

---

[256] Տե՛ս **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 81:

[257] **Վ. Մինախորեան**, Բաթումի խորհրդաժողովը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1936, ապրիլ, էջ 123:

Մայիսի 13-ին ֆոն Լոսովի խորհրդով ու աջակցությամբ Ա. Չխենկելին հուշագիր ներկայացրեց Հալիլ բեյին, որտեղ հիմնավորում էր Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության պահանջները[258]. թուրքերը առաջին հերթին պետք է հրաժարվեին Անդրկովկասում իրենց ծավալապաշտական ծրագրերից: Պատվիրակության պահանջները որքան էլ համոզիչ ու արդարացի էին, բայց և այնպես խիստ ուշացած էին և չէին համապատասխանում ստեղծված իրավիճակին: Թուրքերը լավ էին հասկանում, որ դրության տերն են: Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության առաջարկությունները զանց առնելու համար նրանք շարունակեցին իրենց ռազմական գործողությունները՝ Անդրկովկասից նոր տարածքներ զավթելով, ճնշում գործադրելով բանակցությունների վրա, ստեղծելով դիվանագիտական ծուղակներ, սպառնալով պարտադրել դաշնագրի նախագծի պահանջները վերջնագրի լեզվով: Փաստորեն, այդ նույն օրերին Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը այն նույն վիճակում էր, որի մեջ հայտնվել էր Տրապիզոնի դիվանագիտական բանակցությունների ընթացքում:

Նույն օրը՝ առավոտյան, Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջազնունին ֆոն Լոսովի հետ երկժամյա զրույցի ժամանակ վերջինիս մանրամասնորեն ներկայացրին հայության ծանր վիճակը ստեղծված նոր իրադրությունում: «Լոսովն ամեն ինչ լավ հասկացավ,- գրում էր Ալ. Խատիսյանը,- և ասաց, որ այդ մասին կհայտնի իր կառավարությանը, … սակայն արդեն 3-րդ օրն է՝ հեռագրային կապ չունի… դիտմամբ են նրան (ֆոն Լոսովին - Գ. Պ.) զրկել Բեռլինի հետ խոսելու հնարավորությունից»[259]:

---

[258] Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, էջ 268-269:

[259] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 110:

Կեսօրին ֆոն Լոսովի խորհրդով և միջնորդությամբ Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջազնունին հանդիպեցին նաև Հալիլ բեյին և Վեհիբ փաշային: Շուրջ երեք ժամ տևած բանակցությունների ընթացքում շոշափվեցին հիմնականում հայկական տարածքային հարցերը: Հայ պատվիրակները փորձում էին փոքր-ինչ մեղմել թուրքերի զավթողական ձգտումները, սակայն ապարդյուն: Հալիլ բեյը հայտարարեց. «Իհարկե, մեր պահանջները սարսափելի են, բայց հայերի արարքներն Երևանի և Բաքվի նահանգներում ստիպում են մեզ չեզոքացնել հայերի ազդեցությունը և մասնակցությունը Անդրկովկասյան կառավարության ճակատագրում. այդպիսին է երիտթուրքական կոմիտեի վերջին որոշումը»[260]: Այնուհետև նա հիշեցրեց հայ պատվիրակներին, «որ այս պատերազմում (Առաջին աշխարհամարտ - Գ. Պ.) հայերը ջախջախված են Ռուսաստանի հետ միասին: Եվ դրա համար խորհուրդ ենք տալիս հայերին, որ դադարեցնեն հարձակումները և կոռեկտ պահեն իրենց»[261]: Վեհիբ փաշան նաև զգուշացնում էր՝ եթե հայերը մերժեն տրամադրել Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին, ապա, միևնույնն է, ոչինչ չի կարող խանգարել իրականացնելու իրեն տրված առաջադրանքը. «Եթէ ես նպատակ ունենայի գրաւել զօրքով Երևանի նահանգը, բնաւ պէտք չունէի դիմել խաբէութեան, քանի որ կրնայի յայտնապէս նոյնը կատարել ուզած բոպէին, չվախնալով, թէ պիտի հանդիպէի ոևէ լուրջ դիմադրութեան… Ձեր մերժումը կը բարդէ ու կը դժուարացնէ միայն խնդիրը, բայց չի կանգնեցներ իմ որոշումը, որովհետև եթէ դուք չհամաձայնէք յօժարակամ թոյլ տալ մեր զօրքի փո-

[260] Նույն տեղում:
[261] Նույն տեղում:

խաղրութիւնը, այն ատեն պիտի կատարեմ ուժով, եթէ չտաք երկաթուղին, մենք կանցնենք հանդիսաւոր զօրանցքով»[262]:

Ինչպես տեսնում ենք, թուրքերը ոչ միայն անզիջում էին, այլև անթաքույց սպառնում էին հայերին ռազմական ուժով: Այնուամենայնիվ, Հովի. Քաջազնունին ներկայացրեց հայ պատվիրակության տեսակետը. «Երբ դուք պահանջում եք Ախալքալաքը, Ախալցխան, Ալեքսանդրապոլը, Էջմիածինը և Սուրմալուն, երբ դուք պատրաստվում եք մահացու հարված հասցնել հայ ժողովրդի քաղաքական, գուցե և ֆիզիկական գոյությանը, մեր միջև չի կարող լինել ոչ մի համաձայնություն, ոչ մի հարցի շուրջ: Նախ պետք է որոշել սահմանների մասին հարցը, որի լուծումից կախված են մնացած հարցերը: Ես գիտեմ, որ մերժման դեպքում դուք կգործադրեք ուժ և դա մեզ սպառնում է պատճառել մեծ վնասներ: Բայց և այնպես, եթե դուք չհրաժարվեք հավակնություններից, ձեր զորքերի անցման համաձայնությունը մենք չենք տա: Իմ ընկերն (Ալ. Խատիսյան - Գ. Պ.) ասաց ձեզ, որ դա շատ դժվար է, ես ասում եմ, որ դա անհնար է»[263]:

Նույն օրը՝ երեկոյան, տեղի ունեցավ նաև երկու պատվիրակությունների նախագահների հանդիպումը, որի ժամանակ Հալիլ բեյը դարձյալ նույն պատճառաբանությամբ համոզում էր, որ «անգլիացիներն ուժեղացել են Իրանում, հետևաբար պետք է շուտափույթ գրավեն Թավրիզը: Այդ պատճառով էլ անմիջապես, առանց ոչ մի օր ժամանակ կորցնելու պետք է Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղով թուրքական զորքեր ուղարկել Թավրիզ: Անդրկովկասյան կառավարությունը

---

[262] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 101:
[263] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ.13:

պետք է դա անմիջապես թույլ տա, քանի որ իրավիճակը կարող է ճգնաժամային դառնալ»[264]: Ա. Չխենկելին հակադարձում է Հալիլ բեյին, որ թուրքական զորքերի տարանցման համար ճանապարհ կբացեն այն ժամանակ, երբ Թուրքիան ճանաչի Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը: Այդ առնչությամբ Ալ. Խատիսյանը գրում է. «Կարծիքն առայժմ այսպիսին է, որ եթե Գերմանիան երաշխավորում է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, ապա մենք զորքերի (թուրքական - Գ. Պ.) տեղափոխության թույլտվություն կտանք: Լոսովն ինքն է այն կարծիքի, որ սկզբից պետք է լուծել տարածքային խնդիրները, հետո զորքերի տեղաշարժը թույլ տալ»[265]: Հալիլ բեյը հայտարարեց, որ ինքը հապաղում է Կոստանդնուպոլսին հարցում անել Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ճանաչման մասին, քանի որ իր կառավարությունն Անդրկովկասին կներկայացնի միաժամանակ երկու վերջնագիր՝ առաջին՝ տարածքները զիջելու, երկրորդ՝ թուրքական զորքերի համար ճանապարհ բացելու[266]:

Ուշ գիշերին Հալիլ բեյը և Ա. Չխենկելին բաժանվեցին: Վերջինս այն համոզումն ուներ, որ Անդրկովկասյան կառավարությունը կարող է թուրքական զորքերի տեղափոխելու թույլտվություն տալ միայն այն պայմանով, եթե թուրքերը հրաժարվեն տարածքային պահանջներից. երկու կողմերն էլ պարտավորվեցին հարցում անել իրենց կառավարություններին:

Մայիսի 14-ին, ի պատասխան Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության (մայիսի 13) հուշագրի, Հալիլ բեյը նույն «հիմնավորումով» Ա. Չխենկելուն ուղղված հուշագրով

---

[264] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 110:
[265] Նույն տեղում, թ. 111:
[266] Տես նույն տեղը:

պահանջեց Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին տրամադրել թուրքական զինված ուժերին՝ տարանցելու՝ Իրանում անգլիացիների գործողություններին հակազդելու համար[267]: Իրականում այդ քողարկված տարանցումը միայն պատրվակ էր ամբողջ «Հայաստանը տիրելու»[268], ապա, ճանապարհ բացելով դեպի Թիֆլիս, այնտեղից անցնելու և Բաքվի նավթին տիրելու ու վերջնականապես թուլացնելու Գերմանիայի ազդեցությունը Անդրկովկասում և այլն:

Մայիսի 15-ին Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանության միջոցով ֆոն Լոսովը հեռագիր հղեց Բեռլին՝ արտաքին գործերի նախարարություն. «Զուտ հայկական տարածքներ հանդիսացող Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի և Երևանի նկատմամբ Թուրքիայի չափից դուրս պահանջները ցույց են տալիս, որ նրանք ձգտում են գրավելու Բրեստի դաշնագրով չնախատեսված տարածքներ, կողոպտելու տնտեսապես եկամտաբեր Կովկասը և լիովին իրականացնելու նաև հայերի բնաջնջումը Անդրկովկասում:

…Երեկոյան թուրքերը վերջնագրով պահանջեցին իրենց հանձնել Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին՝ այդ մասին նախօրոք չհայտնելով և չստանալով իմ համաձայնությունը: Ես բողոքեցի դրա դեմ: Կարևորագույն և ամենահրատապ հարցերը մեկ ժամում կարելի է կարգավորել իմ միջնորդական առաջարկի հիման վրա, որ հետևյալն է.

1. Թուրքերը պետք է Բրեստի դաշնագիրը ճանաչեն որպես հիմք,

---

[267] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 111:

[268] **Serpil Sürmeli**, Türk-Gürcü İlişkileri (1918-1921), Ankara: AKDTYK Atatürk Araştırma Merkezi, 2001, s. 125.

2. Թուրքերի պահանջը զսպելու նպատակով Ախալցխայի մահմեդական շրջանը սահմանը ճշգրտելու պատրվակով փոխանակել Բաթումից հյուսիս ընկած վրացական շրջանի և Կարսից արևելք գտնվող զուտ հայկական մասի հետ, որով Կարս ամրոցը կմնա թուրքերին:

Առաջարկի ընդունվելուց հետո կարող է սկսվել թուրքական զորքերի տարանցումը Կարս-Ջուլֆա երթուղով, սակայն միայն Գերմանիայի ղեկավարությամբ և երաշխիքով: Ուստի խնդրում եմ Ձեզ ուղարկել փոքր հանձնախումբ, որը կաշխատի ինձ հետ Թիֆլիսում, ինչպես նաև գերմանական գումարտակ, որը կստանձնի Ալեքսանդրապոլից մինչև Ջուլֆա ընկած երկաթուղու կայարանների պաշտպանական և կարգապահական ծառայությունը ապահովելու գործը: Դա անվերապահորեն պահանջում են կովկասցիները, քանի որ նրանք մեծ անվստահություն ունեն թուրքերի նկատմամբ: Նրանք ամենայն վճռականությամբ մերժում են թուրքական ղեկավարության ազդեցությունը Կովկասյան երկաթուղում»[269]: Ավելորդ է ասել, որ ֆոն Լոսովը՝ որպես Գերմանիայի ներկայացուցիչ Բաթումի հաշտության խորհրդաժողովում, մտահոգված էր ոչ թե հայերի և Հայաստանի հարցով, այլ իր երկրի շահերով Անդրկովկասում, թեև երբեմն անկեղծորեն կրկնում էր այն միտքը, թե «Գերմանիան պատասխանատուութիւն ունի հայկական հարցում, եւ թէ անհրաժեշտ է հայերի նոր կոտորածների առաջն առնել»[270]:

---

269 «Deuschland und Armenien 1914-1918: Sammlung diplomatischer Aktenstücke». Herausgegeben und Eingeleitet von Dr. Johannes Lepsius. Der Tempelverlag in Potsdam, 1919, s. 383-384.

270 **Արտ. Աբեղեան**, Վրաստանի անկախութիւնը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1926, սեպտեմբեր, էջ 79:

Ինչևէ, ֆոն Լոսովի վերը նշված հեռագրին կարևորություն չտրվեց, և Գերմանիայի կառավարությունը գործնական քայլեր չձեռնարկեց՝ թուրքական ռազմական առաջընթացը կանխելու և Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի պահանջները պահպանելու համար: Սակայն Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հայ անդամները և հայ քաղաքական գործիչներն Անդրկովկասում ստեղծված ռազմաքաղաքական ծանր պայմաններում չկարողացան արագ և ճիշտ գնահատել Գերմանիայի և նրա դաշնակից Թուրքիայի միջև խորը հակասությունների և շահերի բախումից սպասվող ոչ նպաստավոր պայմանները հայության համար: Նրանք, Վրաստանի օրինակով ընդունելով գերմանական կողմնորոշումը[271], շարունակեցին էլ ավելի ապավինել Գերմանիայի անպտուղ աջակցությանը: Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ «այսպիսի պայմաններու մէջ, շրջապատուած ամէն կողմէ թշնամիներով, մեր միակ յոյսը կը մնար գերմանացիներու միջամտութիւնը: Մենք քննութեան առնելով ստեղծուած կացութիւնը, եկանք այն եզրակացութեան, թէ ճիշդ է Հայոց Ազգային Խորհուրդի տեսակէտը. պատրաստեցինք քարտէսներ, թուական տեղեկութիւններ եւ գրաւոր զեկուցում՝ որոշելով յանձնել զանոնք զօր. Լոսովին եւ ընթացք տալ Ազգային Խորհուրդի հրահանգին անյապաղ: **Քաղաքականապէս մենք ուրիշ բան չէինք ըներ, բայց եթէ կը հետեւէինք վրացիներու օրինակին**»[272]:

Իրականում հայերի օգտին Գերմանիայի պաշտոնական և ոչ պաշտոնական նախազգուշացումները Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությանը ընդամենը դիվանագիտական

---

[271] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 103:

[272] **Ալ. Խատիսեան**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բոստոն, էջ 125:

խաղեր էին, որոնցով փորձում էին ձերբազատվել Հայոց ցեղասպանության և հայրենազրկության մեղսակցության փաստից: Եվ պատահական չէր, որ Գերմանիան իր «օգնության դիմաց հայկական պատվիրակություններին (Բեռլինում և այլուր - Գ. Պ.) պատասխանում էր, թե իրենց օգնությունից առաջ հայերը պետք է հրաժարվեն Գերմանիայի մեղսակցության շուրջ ծավալած քարոզչությունից»[273]: Հարկ է նշել, որ Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը անթաքույց հասկացնում էր նաև Բաթումի և Բեռլինի հայ պատվիրակներին, որ երկրամասում ստեղծված բարդ ու հակասական իրադրությունում չի կարող հանուն հայերի վտանգել իր հարաբերությունները դաշնակից Թուրքիայի հետ:

Ինչպես վերը նշվեց, մայիսի 14-ին Հալիլ բեյը նույն «հիմնավորումով» պնդեց և պահանջեց թույլատրել Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղով զորքերի տարանցումը Իրան, սակայն այդ մասին Ա. Չխենկելին գրավոր տեղեկացվել էր հաջորդ օրը՝ մայիսի 15-ին ժամը 6-ին, երբ Վեհիբ փաշան նախօրոք երեք ժամ էր տվել հայկական կողմին Ալեքսանդրապոլը դատարկելու համար, սակայն, առանց պատասխանի սպասելու, նրանց զորքերն անցան Արփաչայը (Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով որոշված սահմանագիծը) և հայկական ուժերի մի քանի ժամ տևած անկանոն դիմադրությունից հետո գրավեցին Ալեքսանդրապոլը և շարժվեցին դեպի Ղարաքիլիսա: Հայկական զորքերը ստիպված եղան անկանոն նահանջել. մի մասը՝ դեպի Ջաջուռ, իսկ մյուս մասը՝ երկաթուղու ուղղությամբ դեպի Արարատյան դաշտ՝ հակառակորդին թողնելով մարտական ողջ տեխնիկան և պարենը: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն հեռագիր հղեց Բաթում՝

[273] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 34:

հայ պատվիրակներին, որում մասնավորապես ասվում էր. «Խնդրում եմ ամենքին ներկա դեպքերի և պատերազմական գործողությունների ժամանակ պաշտպանել ամբողջ Կովկասի խաղաղ ազգաբնակչությանը, ինչպես նաև պատերազմական գործողությունների շրջանում և այլ վայրերում գտնվող հայ ժողովուրդը կոտորածներից, նաև հինավուրց պատմական Էջ-միածնի վանքը ու մեր նախնիների գահը, բոլոր նվիրական հուշարձաններով պահպանել ավերումից ու թալանից»[274]:

Երզնկայի, Էրզրումի, Սարիղամիշի, Բաթումի, Կարսի, Արդահանի, ինչպես նաև Ալեքսանդրապոլի գրավումը միջազ-գային մի շարք նորմերի, իրավունքների ու զինադադարի պայմանների ոտնահարում էր, որը բանակցությունները վերջ-նականապես մտցնում էր փակուղի:

Բաթումում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրա-կության թաթար անդամները մեծ ցնծությամբ ընդունեցին Ալեքսանդրապոլի գրավումը, որը քայլ առ քայլ ճանապարհ էր բացում դեպի Բաքու: Այդ առնչությամբ թուրք հեղինակ Ս. Սյուրմելին գրում է. «Թաթարները ցանկանում էին միավորվել Թուրքիայի հետ: Նրանց համար ազգակցական կապը բոլոր տեսակի կապերից վեր էր: Բացի դրանից՝ Բաքուն գտնվում էր բոլշևիկների ձեռքում, և այդ վտանգից ազատվելու համար անհրաժեշտ էր Թուրքիայի օգնությունը»[275]: Ստեղծված պայ-մաններում «Տանջալի են նաև մեր զրույցները (Բաթումի դի-վանագիտական - Գ. Պ.) կուլիսներում: Թաթարները ճզմում են մեզ Թուրքիայի սպառնալիքով»[276],- գրում է Ալ. Խատիսյանը:

---

[274] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 94, թ. 23:

[275] **Serpil Sürmeli**, Türk-Gürcü İlişkileri (1918-1921), Ankara: AKDTYK Atatürk Araştırma Merkezi, 2001, s. 125.

[276] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 111:

Անդրկովկասյան սեյմի՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության խմբակցության անունից Խ. Կարճիկյանը հեռագիր հղեց Բաթումում գտնվող խաղաղարար պատվիրակությանը, որ խնդրեն ֆոն Լոսովին՝ միջնորդի՝ թուրքական ռազմական առաջընթացը կանգնեցնելու: Հարկավոր էր առաջ քաշել հետևյալ երեք պահանջները. 1. գերմանացիները պետք է պաշտպանեն Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին, 2. հայկական զորքերը պետք է մնան իրենց դիրքերում՝ երկաթուղու երկու կողմերի վրա, 3. խաղաղարար պատվիրակության այդ երաշխիքները ստանալուց հետո պետք է կոչ հղեն ժողովրդին՝ հանգիստ մնալ իրենց տեղերում[277]:

Մայիսի 19-ին Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հայ և վրացի անդամներն անմիջապես դիմեցին ֆոն Լոսովին և Հալիլ բեյին՝ այդ երեք պահանջները իրագործելու խնդրանքով: Սակայն ֆոն Լոսովը հայտնեց խաղաղարար պատվիրակության անդամներին, որ վստահ չէ, թե թուրքերը կհարգեն իր միջնորդությունը, բայց և այնպես այդ մասին կտեղեկացնի նաև իր կառավարությանը: Չուշացավ նաև Հալիլ բեյի և Վեհիբ փաշայի արձագանքը: Դիմելով խաղաղարար պատվիրակությանը՝ հայտնեցին. «Ի՞նչի են պէտք ձեզ գերմանացիները: Մենք ինքներս կարող ենք ձեզ հետ համաձայնութեան գալ: Թող բնակչութիւնը մնայ իր տեղը»[278]: Ինչպես երևում է, նրանց կողմից այդ պահանջները իրականացնելու որևէ երաշխիք չտրվեց, և խաղաղարար պատվիրակությունը ստիպված այլևս որևէ կոչ չուղղեց ժողովրդին: Ավելին՝ Ալեք-

---

[277] Տես **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 57:
[278] Նույն տեղում:

սանդրապոլի գրավումից հետո թուրքական զորքերը շարունակեցին իրենց ռազմական գործողությունները՝ դրանք վերածելով թուրք-հայկական պատերազմի:

Ստեղծված չափազանց բարդ ու լարված պայմաններում Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը մայիսի 17-ին Բաթում էր գործուղել նոր պատվիրակություն (Հ. Օհանջանյան, Մ. Պապաջանյան)՝ պաշտոնապես դիմելու Գերմանիայի կառավարությանը՝ սատարելու Հայաստանին ֆոն Լոսովի միջոցով: Մայիսի 19-ին Ալ. Խատիսյանի, Հովհ. Քաջազնունու և Բաթում ժամանած նոր պատվիրակության անդամների խնդրանքով ֆոն Լոսովը զրուցել էր Հալիլ բեյի հետ՝ պարզաբանում ստանալու նախ Ալեքսանդրապոլի անսպասելի հրետակոծության, այն գրավելու, ապա ներկայացված երեք պահանջներն իրականացնելու վերաբերյալ: Սակայն Հալիլ բեյը նույն պատասխանն էր տվել, ինչ օրեր առաջ ասել էր Բաթումում Ալ. Խատիսյանի և Հովհ. Քաջազնունու հետ հանդիպման ժամանակ. «Հայերը պարտվել են ու պետք է հնազանդվեն: .... Հայերի գործերը շատ վատ են»[279]:

Հայաստանի տարածքով թուրքական զորքերի առաջխաղացումը մեծ սպառնալիք էր ստեղծել նաև Վրաստանի համար, ինչը պահանջում էր հայ-վրացական միացյալ ճակատ կազմել՝ Թուրքիայի ռազմական առաջխաղացումը կանգնեցնելու համար: «Բայց արդեն ուշ էր: Անվերջ ընդհարումների հետեւանքով, - գրում է Վ. Մինախորյանը, - հայերը այլեւս հիւծուած էին: Որով՝ եթէ կարելի էր նրանց դեռ վրացական ազգային շահեր պաշտպանելու համար օգտագործել, բնաւ հնարաւոր չէր նրանց հետ քաղաքականօրէն բախտ կապել:

[279] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 111:

Ահա այդպիսի պայմանական ներդաշնակ ընթացք ստացան այդ օրերին հայ-վրացական յարաբերութիւնները»[280]:

Մինչդեռ Բաթումի դիվանագիտական բանակցություններ-ի կուլիսներում այդ նույն օրերին ոչ միայն հայ, այլ նաև վրաց պատվիրակության անդամները հայտնվել էին կատարված փաստի առջև, որից միայն «երկու ելք կար, - շարունակում է Վ. Մինախորյանը, - կամ վերջ տալ դիւանագիտական խաղերին եւ խզելով յարաբերութիւնները գոնե վերջին պահին երկրի մէջ կամք ու շարժում ստեղծել՝ թշնամու դէմ պաշտպանելու համար, կամ զիջումների ճամբան բռնել:

Աւելորդ է ասել, որ վերջին ուղղությամբ էլ գնաց Չխենկելիի քաղաքականութիւնը, մինչեւ սպառուեցին զիջումներ անելու իրական հնարաւորութիւնները»[281]: Այդ մասին է վկայում Ա. Չխենկելիի՝ մայիսի 18-ի նամակը՝ ուղղված Հալիլ բեյին. «Անդրկովկասի հանրապետության պատվիրակությունը անհրաժեշտ է համարել որքան կարելի է թեթևացնել ստեղծված լուրջ կացությունը և ձեռք է առել միջոցներ, որպեսզի **թուրքական զորքերի՝ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղով Իրան տեղի ունենալիք փոխադրումը արգելքների չհանդիպի**»[282]: Իրողությունն այն էր, որ այդ զիջումներն իրականացվեցին հայկական տարածքների և Ալեքսանդրապոլ – Ջուլֆա երկաթուղու հաշվին: Ի դեպ, թուրքական զորամասերը, օգտվելով հայ – վրացական միացյալ ճակատ ստեղծելու անհնարինությունից (թուրքերին հայտնի էր, որ վրացիները ի վիճակի չեն պատերազմ մղելու) և ռազմաճակատի անպաշտպանությունից, լայնածավալ ռազմական գործողություններ

---

[280] **Վ. Մինախորեան**, նշվ. աշխ., էջ 127:

[281] Նույն տեղում, էջ 128:

[282] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 286.

սկսեցին Սարդարապատի, Ղարաքիլիսայի և Բաշ-Ապարանի ուղղությամբ, որտեղ դրսևորվեց օսմանյան թուրքերի դեմ մենամենակ մնացած հայ ժողովրդի միասնական կամքը և տեղի ունեցան հայկական զինված ուժերի հերոսամարտերը:

Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության՝ մայիսի 19-ին ֆոն Լոսովին ուղղված միջնորդության առաջարկի պաշտոնական գրավոր պատասխանը ի վերջո տրվեց հինգ օր անց՝ մայիսի 24-ին: Այդ գրությամբ ֆոն Լոսովը տեղեկացրեց խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Չխենկելիին, որ Հալիլ բեյը մերժել է իր միջնորդությունը[283]: Իսկ հաջորդ օրը նա գրավոր հայտնեց նույն Ա. Չխենկելիին, որ հրաժարվում է իր հետագա մասնակցությունից Բաթումի դիվանագիտական բանակցություններին՝ տալով հետևյալ պարզաբանումը. «Պատիվ ունեմ հայտնելու Ձեզ, որ ես ստացել եմ հավաստի տեղեկություններ, որոնց համաձայն՝ Անդրկովկասյան հանրապետությունը և Անդրկովկասյան կառավարությունը գտնվում են քայքայման շրջանում: Նկատի ունենալով այս հանգամանքը, որը չէր նախատեսված, ինչպես նաև այն, որ ես անհրաժեշտ լիազորություններ չունեմ Անդրկովկասյան համադաշնության լուծարման պարագայում շարունակելու բանակցությունները, քանի որ ինձ լիազորություններ էին տրված Անդրկովկասյան կառավարության հետ բանակցելու հիմքերով, ես պետք է խնդրեմ նոր հրահանգներ, և այդ առթիվ անհրաժեշտ է, որ անձամբ հարաբերության մեջ մտնեմ գերմանական համապատասխան իշխանությունների հետ: Որպեսզի իզուր ժամանակ չկորցնեմ, ես որոշեցի այս երեկոյան մեկնել Բաթումից «Միննա Հորն» գերմանական շոգենա-

[283] Տե՛ս նույն տեղը, էջ 306:

վով»[284]: Մեղմ ասած՝ ֆոն Լոսովի պարզաբանումն ընդամենը դիվանագիտական խաղ էր: Նրան վաղուց հայտնի էր, որ Անդրկովկասյան հանրապետությունը արհեստածին է և չի կարող երկար գոյատևել: Մինչդեռ վրաց և գերմանացի դիվանագետները, ելնելով երկրամասում իրենց ռազմաքաղաքական, առևտրատնտեսական, անվտանգության և այլ շահերից, գաղտնի նախապատրաստեցին անկախ Անդրկովկասյան հանրապետության վերջնական կազմալուծումը: Բանն այն էր, որ նախապես համաձայնեցված և ստորագրելու պատրաստ գերմանա-վրացական մի քանի գաղտնի փոխշահավետ համաձայնագրերի նախագծեր իրականացնելու համար անհրաժեշտ էր՝ Վրաստանը նախապես հռչակվեր առանձին անկախ պետություն: Եվ պատահական չէր, որ ֆոն Լոսովը, Ա. Չխենկելիին հանձնելով իր գրավոր պարզաբանումը, նույն օրը՝ երեկոյան (մայիս 25), Բաթումից գաղտնի մեկնեց Փոթի՝ պաշտոնապես ստորագրելու այդ համաձայնագրերի նախագծերը: Փաստորեն, դրանով գերմանական զինվորների ներկայությունը ապահովում էր Վրաստանի պաշտպանությունը, երկաթուղիների վերահսկողությունը և նրա սահմանների անվտանգությունը թուրքական ոտնձգություններից: Իսկ Գերմանիան, համաձայն տնտեսական մի քանի համաձայնագրերի, իրավունք էր ստանում շահագործելու Վրաստանի բնական հարստությունները[285]: Այդ իրադարձությունների առնչությամբ Զ. Ավալովը հավաստում է. «**Արդեն անկարելի էր դառնում Անդրկովկասյան միացյալ արտաքին քաղաքականությունը: Ուստի և նրա ամեն մեկ մասը պարտավոր էր առանձ-**

[284] Նույն տեղում, էջ 307:
[285] Տե՛ս ՐԳ ԲԱ, ֆ. 39720, օп. 1, д. 49, л. 5:

**նաբար մտածել իր մասին:** Մենք Բաթում եկանք այն վստահությամբ, որ Վրաստանը պատրաստ էր այդ քայլին: Իսկ որ նա պարտավոր էր գործել ինքնուրույնաբար, վերջնականապես պարզվեց այն բանից հետո, երբ թուրքերը գրավեցին Վրաստանի մուսուլմանաբնակ մասերը: Թուրքերին մենք ուժով դուրս քշել չէինք կարող: Միակ ելքը մնում էր գերմանական քաղաքականությունը: Իսկ դրա համար էլ անհրաժեշտ էր, որ հանդես գար անկախ Վրաստանը. համաձայնություն Գերմանիայի հետ և գերմանական որոշ աջակցություն: Օրվա գործնական վիճակը հարցը ստիպում է դնել այդպես: Այդ էր օրվա պահանջը: Ամենից առաջ, հենվելով Գերմանիայի վրա, պաշտպանվել թուրքերից և կազմակերպվել: ….Գերմանական պատվիրակության անդամների հետ ունեցած սրտաբաց զրույցների ժամանակ պատրաստվեց Վրաստանի արդեն պարզորոշ դիրքը՝ ի նախատեսություն Անդրկովկասյան միության անխուսափելի քայքայման: Միայն մի քանի մարդ իրազեկ էր այս գաղտնիքին»[286]: Այդ հարցը թաքուն պահվեց Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հայ անդամներից:

Մայիսի 25-ին Բաթում էր ժամանել Վրաստանի ազգային խորհրդի նախագահ Նոյ Ժորդանիան՝ Վրաստանի անկախության հռչակման շուրջ Ա. Չխենկելիի հետ խորհրդակցելու: Այստեղ էլ տեղի ունեցավ նրա, գեներալ Օդիշելիձեի, Հովի. Քաջազնունու և Ալ. Խատիսյանի հանդիպումը: «Ժորտանիան պատմեց Թիֆլիսի մէջ իշխող տրամադրութիւններու մասին,- գրում է Ալ. Խատիսյանը,- հաղորդեց, որ հայերը կը շարունակեն պատերազմիլ թուրքերու հետ, որ թուրքերը սանձարձա-

[286] **З. Авалов**, նշվ. աշխ., էջ 55-56:

կօրէն կը շարունակեն իրենց առաջխաղացքը, եւ յայտնեց թէ այդպիսի պայմաններու մէջ վրացիներուն ուրիշ բան չի մնար, բայց եթէ յայտարարել Վրաստանի անկախութիւնը:

- Ինչպէ՞ս, բացագանչեցի ես. չէ՞ որ մենք ու դուք միասին պատերազմի մէջ ենք, ընդհանուր պատերազմի մէջ ընդհանուր թշնամիին դէմ: Ինչպէ՞ս կարող էք լքել մեզ, երբ մենք դեռ արիւն կը թափենք: Միթէ՞ ազնիւ բան է այս:

- Ազնիւ բան է այն, ինչ օգտակար է ժողովուրդին,- պատասխանեց Ժորտանիան:

- Այո՛, ըսի ես, իսկ մե՞նք:

- Մենք չենք կարող խեղդուել ձեզ հետ միասին,- պատասխանեց Ժորտանիան: Մեր ժողովուրդը կ՚ուզէ փրկել այն ինչ որ կարող է: Դուք ալ պարտաւոր էք համաձայնութեան լեզու մը գտնել թուրքերուն հետ: Ուրիշ ելք չունիք»[287]:

**Այսպիսով, դժվար չէ նկատել, թե ինչու էր Բաթումի թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցությունների ընթացքում Վրաստանի և Գերմանիայի պատվիրակությունների կողմից ի սկզբանե նախապատրաստվում առանց այն էլ ջլատված Անդրկովկասյան անկախ հանրապետության վերջնական կազմալուծման գործընթացը:** Վերջապես մայիսի 26-ի կեսօրին՝ ժամը 3-ին, Թիֆլիսի քաղաքային վարչության սրահում Անդրկովկասյան սեյմը իր արտակարգ և վերջին նիստում Բաթումի դիվանագիտական բանակցությունների հաշվետվությունը ներկայացնելուց հետո ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունեց հետևյալ որոշումը. «Նկատի ունենալով, որ պատերազմի ու խաղաղության հարցում ի հայտ են եկել արմատական տարաձայնություններ Անդրկովկասի ան-

[287] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 111: Տե՛ս նաև **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 65:

կախ հանրապետությունը կազմող ժողովուրդների միջև, և դրանով իսկ անհնար է դարձել Անդրկովկասի անունից խոսող մեկ հեղինակավոր իշխանության հանդես գալը, Սեյմը հաստատում է Անդրկովկասի (դաշնության) կազմալուծումը և վայր է դնում իր լիազորությունները»[288]: Փաստորեն, Վրաստանը անկախ հռչակելու լուրը արագացրեց վերջնագրի ներկայացումը[289]: Նույն օրը՝ երեկոյան ժամը 9-ին, թուրքական պատվիրակության նախագահ Հալիլ բեյը Ա. Չխենկելիին ներկայացրեց վերջնագիր՝ երեք օրվա ընթացքում իր առաջարկները (լիովին ընդունել Բաթումում մայիսի 11-ին Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության ներկայացրած թուրքական պայմանները) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ, այն դեպքում, երբ Սեյմը ընդամենը չորս ժամ առաջ կազմալուծվել էր, և այլևս անկախ Անդրկովկասյան հանրապետությունը գոյություն չուներ: Իսկ Վրաստանն էլ գերմանական պատվիրակության հետ գաղտնի համաձայնությամբ մեծ հանդիսավորությամբ նույն սրահում հռչակել էր իր անկախությունը[290]: Ինչպես վերը նշվեց, Անդրկովկասյան հանրապետության կազմալուծումը և Վրաստանի անկախության հռչակումն իրականացվեցին վերջինիս համար նպաստավոր այն պահին, երբ նրա ու Գերմանիայի միջև արդեն պատրաստ էին Փոթիում ստորագրվելիք ռազմաքաղաքական, տնտեսական, առևտրային, ֆինանսական, անվտանգության և այլ գաղտնի համաձայնագրերի փոխշահավետ մի քանի նախագծեր[291]:

---

[288] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 330.
[289] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 113:
[290] Տե՛ս **З. Авалов**, նշվ. աշխ., էջ 56-62:
[291] Տե՛ս РГ ВА, ф. 39720, оп. 1, д. 49, л. 1-4:

Մայիսի 28-ին մուսուլմանների Ազգային խորհուրդը, ոգևորված Անդրկովկաս ներխուժած ցեղակից օսմանյան Թուրքիայի անվերապահ աջակցությունից ու հովանավորությունից, հռչակեց «Արևելակովկասյան Մուսուլմանական Հանրապետության» անկախության մասին, որը հենց այդ ժամանակ **թուրքերի կողմից առաջին անգամ կոչվեց «Ադրբեջան»**[292]: Կովկասյան թաթարների կառավարող մարմինը ժամանակավոր մայրաքաղաք ընտրեց Գյանջան (Գանձակը), քանի որ Բաքուն բոլշևիկների ձեռքում էր՝ Ստեփան Շահումյանի գլխավորությամբ:

Ի դեպ, Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության թաթար անդամները դիմել էին Հալիլ բեյին հետևյալ խնդրանքով. **«Հարգարժա՛ն պարոն, մեր ժողովուրդն (թաթարները – Գ.Պ.) անկախություն չի ուզում, մենք էլ չենք ուզում: Մենք ցանկանում ենք Օսմանյան պետության մի մաս կազմել»**[293]:

Այդ հանդիպման մասնակից Նաքի Քեյքուրունը (հետագայում՝ 1918-1920 թթ., Ադրբեջանի Հանրապետության Ազգային անվտանգության տնօրեն) գրում է, որ Հալիլ բեյը այդ պահանջին պատասխանեց հետևյալը. **«Մենք մեր սվինը հասցրինք Կովկաս: Եթե դուք նույնիսկ չցանկանայիք միանալ մեզ, մենք ձեզ մեր սվինի ուժով կստիպեինք միանալ մեզ: Սակայն դրա հնարավորությունը չկա: Մեր միավորումը չեն ընդունի ո՛չ թշնամի** (Ռուսաստան – Գ. Պ.), **ո՛չ էլ բարեկամ** (Գերմանիա – Գ. Պ.) **պետությունները: Մենք ձեզ օգնում ենք և**

---

[292] Տե՛ս **Ա. Սիմոնյան,** Զանգեզուրի գոյապայքարը 1917-1920 թթ., Երևան, 2017, էջ 78:

[293] **Naki Keykurun,** Azerbaycan istiklal mücadelesinden hatıralar (1905-1920), İstanbul, 1998, s. 111:

**կշարունակենք օգնել: Անհրաժեշտ քանակությամբ զորք կուղարկենք, որ դուք անկախանաք և անկախ ապրեք: Բազմակողմանի աջակցություն կցուցաբերենք ձեզ: Մեր հայրենիքի պես կպաշտպանենք նաև ձեր հայրենիքը: Վերադարձեք ձեր տները և պաշտպանեք ձեր հռչակվելիք անկախությունը»**[294]:

Մայիսի 30-ին Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը իրեն հայտարարեց հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն (մայիսի 31-ին այն հրապարակվեց մամուլում)՝ դնելով ազգային անկախ պետականության շինարարության հիմքը: Անդրկովկասյան սեյմի կազմալուծումից հետո դադարեցվեցին նաև հաշտության խաղաղարար պատվիրակության լիազորությունները, և արդեն նախկին պատվիրակության անդամները Բաթումից վերադարձան Թիֆլիս[295]:

---

[294] Նույն տեղում, էջ 112:

[295] Տե՛ս «Հորիզոն» լրագիր, Թիֆլիս, 28 մայիսի 1918թ.:

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
# ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ. ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ. ԲԱԹՈՒՄԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

## 1. Բաթումի բանակցությունները. Հայաստանի անկախացումը

1918 թ. մայիսի 25-ի երեկոյան Բաթումում գտնվող Անդրնդրկովկասյան խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին Թիֆլիսից հաղորդագրություն ստացավ այն մասին, որ վրաց Ազգային խորհուրդը Վրաստանի անկախության հռչակագիր է նախապատրաստել և մայիսի 26-ին՝ ժամը 1-ին, այն կներկայացնի Սեյմի քննարկմանը: Հաղորդագրությունում ասվում էր նաև, որ որոշման ընդունվելուց հետո պատվիրակության նախագահին օսմանյան Թուրքիայի հետ առանձին բանակցություններ սկսելու մանդատ կուղարկվի[296]: Հարկ է նշել նաև, որ նույն օրը՝ երեկոյան, վրաց Ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիան Վրաստանի անկախանալու մասին հայտնել էր նաև Բաթումում հայ պատվիրակ Ալ. Խատիսյանին:

Լուրը անսպասելի չէր, բայց մեծ անհանգստություն և շփոթմունք առաջացրեց պատվիրակության հայ անդամների շրջանում: Նրանց մտահոգությունը անտեղի չէր: Վրաստանի անկախանալով Թուրքիայի դեմ հայ-վրացական միասնական ռազմական ճակատ ստեղծելը (Բաթումի անկումից հետո վրացական զորքերը գրեթե չեն մասնակցել թուրքերի դեմ

[296] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 112:

ռազմական գործողություններին) վերջնականապես դառնում էր անհնարին: Փաստորեն, Հայաստանը ամբողջապես մեկուսանում էր հարևաններից և մնում էր մեն-մենակ օսմանյան Թուրքիայի դեմ: Այնինչ 1918 թ. մայիսի կեսերից Գերմանիան գործնական լուրջ քայլեր էր ձեռնարկել՝ պաշտպանելու Վրաստանը Թուրքիայի ռազմական ոտնձգություններից և ապահովելու նրա տարածքային ամբողջականությունը: Ավելորդ է խոսել թաթարների մասին: **Նրանց նպատակն էր ոչ միայն ապահովել Թուրքիայի ազդեցությունը Անդրկովկասում, այլև դառնալ ցեղակից օսմանյան պետության մաս**[297]:

Ստեղծված ծանր ու վտանգավոր իրավիճակը մեղմելու նպատակով Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջազնունին մայիսի 25-ին՝ երեկոյան ժամը 10-ին, «Միննա - Խորն» նավի վրա հանդիպեցին գերմանական պատվիրակության ղեկավար ֆոն Լոսովին (նա շտապում էր մեկնել Փոթի՝ մայիսի 28-ին ստորագրելու վրաց-գերմանական գաղտնի համաձայնագիրը), որպեսզի խնդրեն նրան միջնորդել իր կառավարությանը՝ Վրաստանի օրինակով ընդունելու Հայաստանի հովանավորությունը, սակայն նրանց ջանքերը հաջողություն չունեցան: Ֆոն Լոսովը հայ պատվիրակների խնդրանքին արձագանքեց ընդամենը մի քանի խորհուրդներ տալով. նախ՝ պատվիրակություն ուղարկել Բեռլին՝ բողոքելու Թուրքիայից Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը (1918 թ. մարտի 3) կոպտորեն խախտելու համար, ապա՝ Հայաստանը հռչակել անկախ՝ բացառելով ռազմական բախումը թուրքերի հետ: Նա խորհուրդ տվեց նաև հաշտության դաշնագիր կնքել օսմանյան Թուրքիայի և

---

[297] Տե՛ս **Naki Keykurun,** Azerbaycan istiklal mücadelesinden hatıralar (1905-1920), İstanbul, 1998, էջ 111-112, նաև **Serpil Sürmeli**, Türk-Gürcü İlişkileri (1918-1921), Ankara: AKDTYK Atatürk Araştırma Merkezi, էջ 125:

Քառյակ միության անդամ մյուս պետությունների հետ միաժամանակ[298]: Հայ պատվիրակները այդ մասին անմիջապես հեռագրով տեղեկացրին Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդին և «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությանը:

Ինչպես վերը նշվեց, կայսերական Գերմանիայի համար Արևելյան Հայաստանը տնտեսապես հետաքրքիր չէր, հետևաբար նրան ձեռնտու չէր խորացնել առանց այն էլ լարված հարաբերությունները դաշնակից Թուրքիայի հետ: Գերմանիային հետաքրքրում էին Վրաստանի բնական հարստությունները և Բաքվի նավթը: Եվ ամենևին էլ պատահական չէր, որ վրացի և գերմանացի դիվանագետները, ելնելով երկրամասում իրենց ռազմաքաղաքական, առևտրատնտեսական, անվտանգության և այլ շահերից, գաղտնի նախապատրաստեցին անկախ Անդրկովկասյան հանրապետության վերջնական կազմալուծումը և Վրաստանի անկախության հռչակումը: **Կարծում ենք՝ ստեղծված իրավիճակում Անդրկովկասյան հանրապետության վերջնական կազմալուծումը և Վրաստանի անկախության հռչակումը հարցի լուծման միակ ելքն էին, որը միանգամայն բնական էր և ճիշտ:** Եվ այդ ամենը իրականացվում էր քաղաքական նպաստավոր այն պահին, երբ Վրաստանի ու Գերմանիայի միջև արդեն ստորագրության էր պատրաստ մայիսի 24-ին խմբագրված ժամանակավոր գաղտնի դաշնագրի նախագիծը՝ ռազմաքաղաքական, տնտեսական, անվտանգության և այլ ոլորտների մասին:

Մայիսի 26-ի կեսօրին Բաթումում Մ. Պապաջանյանը առանձնազրույց է ունենում թուրքական պատվիրակության

[298] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 112:

ղեկավար Հալիլ բեյի հետ: Վերջինս իրազեկում է, որ նույն օրը վերջնագիր է ներկայացնելու Անդրկովկասյան կառավարությանը, իսկ նրա գոյություն չունենալու դեպքում՝ Անդրկովկասյան երեք գլխավոր ժողովուրդների՝ հայերի, վրացիների և թաթարների ազգային խորհուրդներին՝ պատասխանի սպասելով 72 ժամ: Նա հայտնում է նաև. «**Եթե հայերը ցանկանան ընդունել թուրքական վերջնագիրը, ապա իրենք դեմ չեն լինի, եթե հայերը իրենց 10 հազար քառակուսի վերստի վրա կառուցեն առանձին պետություն, որին իրենք կճանաչեն և նրա հետ կկնքեն հաշտության դաշնագիր: Իրենք դարձյալ չեն առարկի, եթե հայերն ուզենան համադաշնություն հաստատել մուսուլմանների հետ»**[299]:

Նույն օրը՝ երեկոյան, Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության որոշմամբ Հալիլ բեյը Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության նախագահի անունով վերջնագիրը ներկայացրեց այն պահին, երբ մի քանի ժամ առաջ կազմալուծվել էր անկախ Անդրկովկասյան հանրապետությունը, իսկ վրաց Ազգային խորհուրդը Վրաստանը հռչակել էր անկախ հանրապետություն: Քաղաքական զարգացումների այդ նոր պայմաններում Հալիլ բեյը հայտարարեց, որ խնդիրը փակված չէ. հասցեատերը փոխվել է, ուստի այժմ վերջնագիրը կներկայացնի Անդրկովկասյան երեք գլխավոր ժողովուրդների համապատասխան ազգային խորհուրդներին կամ կառավարություններին առանձին-առանձին[300]: Եվ իսկապես, երեկոյան ժամը 10-ին թուրքական պատվիրակության նախագահի ներկայացրած վերջնագիրն ընդունեց ոչ թե անդրկովկասյան միացյալ պատվիրակությունը, այլ նրա հայ, վրացի և թաթար

---

[299] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 113:
[300] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 29, թ. 133:

անդամներն առանձին-առանձին, որովհետև միացյալ պատվիրակությունը ներկայացնող Անդրկովկասյան սեյմը հրաժարվել էր պատերազմի ու խաղաղության հարցը քննարկելուց՝ այն թողնելով ազգային խորհուրդներին: Հալիլ բեյը պահանջեց 72 ժամվա ընթացքում ամբողջությամբ ընդունել կամ մերժել թուրքական վերջնագիրը՝ **սահմանային նոր փոփոխություններով**[301]:

Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հայ անդամները թուրքական դաշնագրի նախագծի բովանդակությանը ծանոթ էին դեռ Բաթումի դիվանագիտական բանակցությունների առաջին օրերից (մայիսի 11-ից): Հալիլը ներկայացրել էր պահանջներ ամբողջ Անդրկովկասին ընդհանրապես և Հայաստանին ու հայությանը մասնավորապես: Ըստ դրա՝ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի սահմաններից (Կարս, Բաթում, Արդահան) դուրս Թուրքիան պահանջում էր Թիֆլիսի, Քութայիսի և Երևանի նահանգներից ընդարձակ տարածքներ: Բաթումում շուրջ երկու շաբաթ տևած դիվանագիտական բանակցությունները համաձայնության չհանգեցրին, և Հալիլ բեյը մայիսի 26-ին, իր առաջարկած խաղաղության և բարեկամության դաշնագրին կցելով այդ նոր պահանջները, այն ներկայացրեց վերջնագրի լեզվով: Թուրքերը հայերին տարածքային նոր պահանջներ էին ներկայացնում՝ հանձնել Ալեքսանդրապոլի ամբողջ գավառը, Երևանի և Էջմիածնի գավառների մեծ մասը՝ Էջմիածին քաղաքով հանդերձ: Թուրքիան պահանջում էր նաև Շիրակի և Արարատյան դաշտավայրերը գրեթե ամբողջությամբ՝ հայությանը զրկելով ամենակենսական տարածքներից:

---

[301] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 56:

Եվ բնավ պատահական չէր, որ թուրքական պատվիրակությունը շտապեց վերջնագիրը ներկայացնել մայիսի 26-ին՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտերի այդ ճակատագրական պահին: Իհարկե, նրանք համոզված էին, որ հայ զինվորների հերոսական դիմադրության պայմաններում չեն կարող պատերազմն արագ ավարտել: **Տվյալ պահին թուրքերին անհրաժեշտ էր վերջնագրի պարտադրանքով օր առաջ իրենցով անել Բրեստ-Լիտովսկի հաշտության սահմաններից դուրս զավթած հայկական ընդարձակ տարածքները, ապա, հաշտության դաշնագիր ստորագրելով, ապահովել իրենց թիկունքը հայկական զորքերի ռազմական հարձակումներից և կարճ ճանապարհ հարթել՝ շուտափույթ հասնելու Բաքու: Ահա թե ինչու օսմանյան Թուրքիան պետք է հանդուրժեր մի փոքրիկ Հայաստանի գոյությունը:** Նաև պատահական չէր, որ հաջորդ օրը՝ մայիսի 27-ի կեսօրին, Հալիլ բեյի և Վեհիբ փաշայի (թուրքական պատվիրակության անդամ, կովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի գլխավոր հրամանատար) հրավերով Բաթումում տեղի ունեցավ հանդիպում Ալ. Խատիսյանի և Հովի. Քաջազնունու հետ: Զրույցի ընթացքում Վեհիբ փաշան հայտնեց, որ նույն օրը կգրավեն Ղարաքիլիսան և այնտեղ կմնան չորս օր ու կսպասեն վերջնագրի պատասխանին: Վեհիբ փաշան ակնկալում էր վերջնագրի պատասխանը ստանալ հայկական կառավարության անունից: «Ինքը և Վեհիբ փաշան,- այնուհետև շարունակում է Հալիլը, - շատ լավ են գիտակցում հայերի և Հայաստանի դրությունը, բայց նաև հույս ունեն, որ հաշտության դաշնագիրը ստորագրելուց հետո համաձայնության կգան թուրքերն ու հայերը տարածքների հարցում: Հայերը թուրքերի շրջանում էլ բարեկամներ ունեն, և որ նրանք կօգնեն հայերին

իրենց գործում»[302]: Նա հայ պատվիրակներին հորդորում է հաղորդել Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին, որ եթե ընդունեն վերջնագիրը, ապա «**թուրքերը ոչինչ չունեն Անդրկովկասի սահմաններում Հայաստանի կազմավորման (իմա՝ պետության – Գ. Պ.) դեմ և որ Անդրկովկասյան դաշնությունը մոտակա ապագայի հարց է»**[303]: Ինչպես վերը նշվեց, այդ մասին մեկ օր առաջ (մայիս 26) Բաթումում Հալիլ բեյը առանձնազրույցում հայտնել էր նաև Մ. Պապաջանյանին:

Հայ պատվիրակների հետ հանդիպման ժամանակ Վեհիբ փաշան խոստովանում է, որ թուրք-հայկական ռազմաճակատներում (իհարկե առանց հիշատակելու Սարդարապատի հերոսամարտը) «հայկական զորքերը լավ են մարտնչում: Անդրանիկը բացառիկ լավ է կատարում իր գործը. մոտ ապագայում կարող եք Եվրոպայում լավ զորք ունենալ: Ըստ Շեֆիկ փաշայի տեղեկության՝ նա նման կռիվ չէր տեսել թուրքական ոչ մի ռազմաճակատում: Չնայած մեր ուժերի տեխնիկական առավելություններին՝ չորս օր տևեց: Կովկասում դուք բռնելու եք բուլղարների տեղը: Եվ իրենք մեծ հույս ունեն թուրք-հայկական ռազմական համաձայնագիր կնքելու»[304]:

Ինչպես տեսնում ենք, մայիսի վերջին մի քանի օրերին հայ պատվիրակության նկատմամբ անբարյացակամ, անգամ թշնամական վերաբերմունքը փոխվեց «բարեկամականի»: Հայոց ազգային կենտրոնական խորհրդի կողմից Բաթում գործուղված (մայիսի 17) Մ. Պապաջանյանը փաստում է, որ մայիսի վերջին օրերին թուրքական պատվիրակները «հաշտության բանակցությունների ընթացքում ավելի լավ էին վերաբերվում

---

[302] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 113:
[303] Նույն տեղում:
[304] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 113:

մեզ»[305]: Նրանք հաճախ էին խոսում Կովկասում հայկական պետություն «ստեղծելու» մասին: Նման ակնարկ արվել էր նաև դեռևս 1918 թ. մարտի 7-ին և ապրիլի 1-ին Տրապիզոնի դիվանագիտական բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակության նախագահ Ռաուֆ բեյի կողմից[306]: **Դժվար չէ նկատել, որ մայիսի վերջերից հայերի և օսմանյան Թուրքիայի հարաբերություններում նոր փուլ էր սկսվում:**

Ստեղծված չափազանց բարդ ու լարված նոր իրավիճակում հայ պատվիրակներն այլընտրանք չունեին, քան ընդունել աննախադեպ ծանր վերջնագիրը և կնքել հաշտություն ու փրկել արևելահայությանը նոր արհավիրքներից: Բայց և այնպես, առանց Թուրքիայի ռազմական և քաղաքական երաշխիքների, այն հղի էր անկանխատեսելի բազմաթիվ ծանր հետևանքներով:

«**Այստեղ վերջնագրի հարցի հետ միասին**,- գրում է Ա - Դոն, - **առաջին անգամ ծագեց հայկական հանրապետություն և կառավարություն հայտարարելու խնդիրը, որի անունից էլ պիտի ընդունվեր ու ստորագրվեր վերջնագիրը**»[307]: Սակայն կար մեծ մտավախություն, որ առանց քաղաքական ծանրակշիռ երաշխիքների Հայաստանի անկախության հռչակումը կարող էր թուրքական լուրջ սպառնալիքի տակ դնել արևելահայության ֆիզիկական գոյությունը. դեռ թարմ էին 1915 թվականի և նրան հաջորդած տարիներին օսմանյան Թուրքի-

---

[305] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 233:

[306] Տե՛ս **Գ. Պետրոսյան**, 1918 թ. Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովը. Հայկական հարցի արծարծումները, «Հայագիտության հարցեր» հանդես, Երևան, 2016, 3(9), էջ 51-53:

[307] **Ա-Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան)**, Հայության երկունքը, Երևան, 2019, էջ 436-437:

այի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից Արևմտյան Հայաստանում և հայաբնակ այլ վայրերում իրագործված հայության ցեղասպանությունը և հայրենազրկումը: Արևմտյան Հայաստանի ամբողջական հայաթափությունից հետո կործանման վտանգն սպառնում էր արդեն Արևելյան Հայաստանին: Ալ. Խատիսյանին և Հովհ. Քաջազնունուն մնում էր վերադառնալ Թիֆլիս՝ ստեղծված իրավիճակի մասին հանգամանորեն զեկուցելու Հայոց ազգային կենտրոնական խորհրդին, «Հայ հեղափոխական դաշնակցություն» և մյուս քաղաքական կուսակցությունների խմբակցությունների հետ քննարկելու և ընդունելու քաղաքականապես իրատեսական որոշում: Հայ պատվիրակների խնդրանքով Հալիլ բեյը ընդունեց վերջնագրի պատասխանի ժամկետը երկու օրով երկարաձգելու (մինչև մայիսի 30-ի երեկոյան ժամը 8-ը) առաջարկը: Մայիսի 28-ի կեսօրին՝ ժամը 2-ին, նրանք Բաթումից վերադարձան Թիֆլիս[308]:

Նրանց վերադարձից երկու օր առաջ՝ մայիսի 26-ի երեկոյան, «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության՝ Թիֆլիսի ներկայացուցչական ժողովի ու թաղային կոմիտեների համատեղ արտակարգ նիստում բուռն վիճաբանություններից հետո ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունվել էր բանաձև, որով առաջարկվել էր Հայոց ազգային կենտրոնական խորհրդին օժտել կառավարական գործառույթներով. «Ի նկատի առնելով այն, որ Անդրկովկասի սեյմի ինքնացրումից և Վրաստանի անկախություն հայտարարելուց հետո լուծվելու է և Անդրկովկասյան կառավարությունը, և հայ ժողովուրդը մնալու է բախտի բերմունքին, ներկայացուցչական ժողովը

[308] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 113:

գտնում է անհրաժեշտ, որ Հայոց ազգային խորհուրդը, ուժեղացնելով իր կազմը, անցնի գործելու հայության կենտրոնում՝ ստանձնելով կառավարական գործառույթներ՝ օժտված դիկտատորական իրավունքներով հայ կյանքի բոլոր երևույթների և գործերի նկատմամբ»[309]: Ս. Վրացյանի գնահատմամբ. «Դաշնակցական ժողովը շատ ճիշտ էր գնահատել վայրկեանի էութիւնն ու նախատեսել անելիքը. **Յետագայ դէպքերը նոյն ուղղութեամբ էլ զարգացան**»[310]:

Մայիսի 28-ի կեսօրին Թիֆլիսում Ալ. Խատիսյանը և Հովի. Քաջազնունին իրազեկվեցին, որ Հայոց ազգային կենտրոնական խորհրդի առավոտյան հրավիրված անտարակույս ամենածանր ու պատասխանատու նիստում քննարկման է դրվել թուրքական վերջնագիրը ընդունելու կամ մերժելու հարցը: Երկար ու բուռն վիճաբանություններից հետո այն մերժվել է[311]: Փորձենք հակիրճ ներկայացնել այդ նիստում թուրքական վերջնագիրը ընդունելու կամ մերժելու՝ հայ քաղաքական կուսակցությունների խմբակցությունների իրարամերժ տեսակետները և նրանց պատճառաբանություններն ու հիմնավորումները:

«Հայ ժողովրդական կուսակցությունը» կողմ էր արտահայտվել՝ հրապարակելով հետևյալ բանաձևը.

I. Երևանի և Գանձակի նահանգների՝ թուրքական գրավումից ազատ մնացած շրջանները ներկայումս կտրված են

---

[309] Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու / Կազմող, առաջաբանի, ծանոթագ. հեղինակ՝ Հ. Կ. Սուքիասյան, խմբ.՝ Ա. Ս. Վիրաբյան, Կ. Հ. Խաչատրյան, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2009, էջ 23:

[310] **Ս. Վրացեան**, նշվ. աշխ., էջ 15:

[311] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 141, թ. 235:

դրսի աշխարհից. մի կողմից շրջապատված են թուրքական զորքերով, մյուս կողմից՝ զինված ադրբեջանցիներով:

II. Հայկական զորքը, ինչպես պաշտոնապես տեղեկացնում է կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանը, մեծ մասամբ կազմալուծված է:

III. Հայկական զորամասը Երևանի նահանգում դեռ շարունակում է կռվել թուրքերի դեմ, բայց այն ևս անկարող է երկար դիմադրել ռազմամթերքի ու պարենի խիստ պակասի պատճառով:

IV. Հայ ժողովրդի մեջ նկատվում են հուսալքվածություն և կռվելու տրամադրության բացակայություն, և նույնիսկ ցանկության դեպքում անկարող է կռվել թուրքական կանոնավոր զորքերի դեմ մանավանդ ռազմամթերքի և պարենի սղության պայմաններում:

V. Անհեռանկար կռիվները ավերիչ հետևանքներ են թողել հայ ժողովրդի կյանքի վրա. նա քայքայվում է ոչ միայն տնտեսապես, այլև ֆիզիկապես, համատարած գաղթը սպառնում է կորստաբեր հետևանքներ ունենալ:

VI. Խաղաղություն կնքելու՝ թուրք կառավարության առաջարկած վերջնագիրը թեև շատ ծանր է և գրավական չէ, թե անպայման պատերազմը իսպառ վերջ կունենա, բայց չընդունելու դեպքում հետևանքը պարզ է. զենքի ուժով նվաճելուց հետո մնացյալ հայկական շրջաններում հայ ժողովրդի հետ կվարվի հաղթողի իրավունքով, իսկ ընդունելու դեպքում հայ ժողովուրդը չի կորցնում այն հույսը, որ եթե ոչ մշտապես, գոնե ժամանակավորապես կդադարեն ռազմական գործողությունները. հայ ժողովուրդը կմնա իր տեղում, գաղթը կընդհատվի, և ապրելու մի որևէ հնարավորություն կստեղծվի,

մինչև սպասվելիք համաեվրոպական վեհաժողովում հայկական խնդիրը կստանա իր լուծումը:

VII. Վերջնագրի ընդունումը կարող է հայերին հնարավորություն տալ ունենալու ազգային մի փոքր տարածք, որ կլինի ապագա ազգային կյանքի սաղմը:

Այս ամենը հաշվի առնելով՝ **«Հայ ժողովրդական կուսակցության» խմբակցությունը որոշեց ընդունել թուրքական վերջնագիրը**[312]**:**

Սակայն վերջնագրի նկատմամբ ճիշտ հակառակ դիրքորոշում ունեին «Հայ հեղափոխական դաշնակցություն» և մյուս քաղաքական կուսակցությունները: Խորհրդի նիստում «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության խմբակցության անունից Խ. Կարճիկյանը վերջնագիրը չընդունելը հիմնավորում է հետևյալ պատճառաբանությամբ. վերջնագրի ընդունումը ոչ մի կերպ չի կանգնեցնի թուրքական ռազմական առաջխաղացումը և հայ զինվորներին զինաթափելու մտադրությունը. այդ է հուշում նրանց որդեգրած քաղաքական կուրսը, և հակառակը պնդելու երաշխիքներ չկան, իսկ հայկական զորքերի զինաթափումը սկիզբն է լինելու հայ ժողովրդի կոտորածի: Վերջագիրը ընդունելով՝ կկորցնենք մեր ինքնապաշտպանական ուժը: Դիմադրությունը շարունակելով՝ մուսավաթը ստիպված կլինի ավելի զիջող լինել հօգուտ հայ ժողովրդի՝ նկատի ունենալով այն, որ վրացիները նույնպես չեն ընդունի վերջնագիրը, հավանաբար ադրբեջանցիները՝ նույնպես, քանի որ շարունակում են դեմ արտահայտվել դրան: Վերջապես, վերջնագրի ընդունումը դեռ չի նշանակում, թե կռիվը դադարում է, որովհետև հայկական շատ ջոկատներ հնարավոր է՝

[312] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 233:

շարունակեն կռիվը: Վերջնագրի չընդունումը ապագա վեհաժողովում մեծ նշանակություն կունենա հայության իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Ահա այս բոլոր հանգամանքները նկատի ունենալով, ինչպես նաև օտարների միջամտության վրա առանձնակի հույս չդնելով՝ **«Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցությունը առաջարկում է չընդունել թուրքական վերջնագիրը[313]:** Սակայն նիստի վերջում լուր ստացվեց, որ հայ պատվիրակներ Ալ. Խատիսյանը և Հովի. Քաջազնունին վերադարձել են Բաթումից և խնդրել են հարցի վերջնական որոշումը հետաձգել՝ երեկոյան նիստում համատեղ քննարկելու և ընդունելու քաղաքականապես իրատեսական որոշում[314]:

Հայոց ազգային կենտրոնական խորհրդի երեկոյան նիստում (ժամը 5:30-7:00) օրակարգի գլխավոր հարցը դարձյալ թուրքական վերջնագիրն էր: Ալ. Խատիսյանը և Հովի. Քաջազնունին հանգամանորեն զեկուցեցին Բաթումի դիվանագիտական բանակցությունների ընթացքի, Անդրկովկասյան հանրապետության կազմալուծման, Վրաստանի անկախացման և մասնավորապես Թուրքիայի կողմից պարտադրված վերջնագրից հետո երկրամասում ստեղծված ռազմաքաղաքական չափազանց բարդ ու լարված նոր իրավիճակի մասին: Ալ. Խատիսյանը իրազեկեց. «Մենք չգիտեինք հայկական զավառների վիճակն ու մեր դիրքը: Հետո իմացանք, որ ուլտիմատումն ուղղված է նաև վրացիներին, որ չէին սպասում: Մենք նորից տեսանք Վեհիբ փաշային և Խալիլ բեյին (մայիսի 27-ին – Գ. Պ.): Մեր հարցին. թե ինչո՞ւ բանակցությունների ընթացքում

---

[313] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 232:
[314] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 235:

շարունակում եք ձեր արշավանքը, Վեհիբ փաշան պատասխանեց, որ դրանք միջոցներ են մեր պահանջները ընդունել տալու համար. գրավված են բոլոր կարևոր ռազմական կետերը... բայց մինչև ուլտիմատումի վերջանալը առաջխաղացում տեղի չի ունենա:

… Խաղաղ ժողովուրդը չի կռվում, շարունակեց նա, բայց հայ զինվորները փայլուն դիմադրություն են ցույց տալիս, իբրև արժանի հակառակորդներ: Սակայն որքան ձեր զորքերը քաջ լինեն, չեն կարողանալու մեզ հաղթել, որովհետև չունեք պետական ապարատ: **Եթե ուլտիմատումը չընդունեք, վերջացրեց նա, մենք կշարունակենք առաջ գնալ դեպի Թիֆլիս, Երևան:** Սահմանների մասին խոսեք Խալիլ բեյի հետ:

Խալիլն բեյն ասաց, որ իբր թե շատ է խոսել Թալեաթի հետ, բայց անօգուտ. **ուլտիմատումը պետք է ընդունել. հակառակ դեպքում ամեն ինչ կորած է:** Ճիշտ է ձեր երկիրը շատ փոքր է, բայց հայ ժողովուրդը աշխատասեր է»[315]: Հարկ է նշել, որ դա օսմանյան Թուրքիայի ավանդական մարտավարությունն էր. մի կողմից բանակցել, իսկ մյուս կողմից, Անդրկովկասից տարածքներ զավթելով, ճնշում գործադրել դիվանագիտական բանակցային գործընթացների վրա և սպառնալիքով, վերջնագրի լեզվով պարտադրել իրենց անարդար պահանջները:

Նիստը նախագահող Ավ. Ահարոնյանը (Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի նախագահ), դիմելով զեկուցողներ Ալ. Խատիսյանին և Հովի. Քաջազնունուն, խնդրեց հայտնել իրենց վերջնական եզրակացությունը թուրքական վերջնագրի մասին: Ալ. Խատիսյանը իր եզրափակիչ ելույթում հայտարա-

[315] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 235-236:

րեց. «Այս բոլոր հանգամանքները և մեր զինվորական դրության անհուսալիությունը այն վիճակն է ստեղծել մեզ համար, որ մենք հարկադրված ենք ընդունելու ուլտիմատումը: Կռիվը շարունակելով՝ մենք մեր հողը կկորցնենք, իսկ **ընդունելով՝ կդառնանք մի իրավական պետություն ապագայի ակնկալություններով:** Ռուսների վրա հույս չունի, Անգլիայից և Ֆրանսիայից օգուտ չի տեսել, միակ հույսը մնացել է Գերմանիան: Իհարկե ուլտիմատումը կարող է չփրկել մեր տերիտորիան, միակ երաշխիքը կարող է լինել չորս պետությունների ստորագրումը: Եթե տաճիկներին բնավ չենք հավատում, այն ժամանակ բանակցություններն ավելորդ են: Բայց ինքը կարծում է, որ **մենք ընդունելով ուլտիմատումը դառնում ենք օբյեկտ միջնորդության ապագայի հեռանկարներով: Դրա համար անհրաժեշտ է, որ Ազգային խորհուրդը հայտարարի անկախություն**, տեղափոխվի մի հայկական վայր, իհարկե ստորագրելով ուլտիմատումը: **Եթե չընդունենք, մեզ սպառնում է կոտորած**»[316]: Ավ. Ահարոնյանի նաև այն հարցումին՝ ի՞նչ երաշխիքներ կան, որ հայկական մնացած տարածքները թուրքերը չեն գրավի և ժողովրդին չեն կոտորի, Հ. Քաջազնունին հավելեց. «**Իմ խորին համոզումով, ուրիշ ելք չկա, բացի ուլտիմատումն ընդունելը, ոչ մի գարանտիա չկա**»[317]: Շարունակվող բուռն քննարկումների արդյունքում ձայների ճնշող մեծամասնությամբ **թուրքական վերջնագիրը ընդունվեց:**

Ուշագրավ է այդ իրավիճակի՝ Ա-Դոյի գնահատականը. «Ծանր րոպեներ, դաժան ժամեր են գլորում Ազգային խորհրդի ժողովներում, ժողովները հաջորդում են իրար, խոսում, վի-

---

[316] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 237:

[317] Նույն տեղում:

ճում, հերքում, պատճառաբանում են դժվար լուծելի հարցի շուրջը: Սեղանի վրա դրված էր հայ ժողովրդի գլխատման ակտը, և պահանջվում էր, որ այդ ակտը սրբագործվի իր՝ գլխատվողի կողմից: Կարելի է և չստորագրել, բայց զորքը, հայ զորքը, որ սկսել էր հերոսական ճիգեր հայտ բերել, փառավոր հաղթություններ տանել, զրկված էր ամեն ինչից՝ հագուստից, ոտնամանից, հացից, նույնիսկ ռազմամթերքից: Նա կորցրել էր ամենը. թողել էր Էրզրումը, Կարսը, Ալեքսանդրապոլը, Ղարաքիլիսան, թողել էր ամեն ինչ թշնամու ձեռքը և այժմ դատարկաձեռն կանգնել թշնամու առաջ: Եվ Երևանի Ազգային խորհուրդը, ընդհանուր հրամանատար Նազարբեկյանը հեռագրում էին. «Հաշտություն, հաշտություն»:

Ժամանակը չէր սպասում, դեպքերը գլորվում էին զահավեժ արագությամբ, պետք էր վերջ տալ մաշող ու սպանող դրությանը և Ազգային խորհուրդը մայիսի 28-ի երեկոյան նիստում, որը վերջանում է գիշերվա ժամը 12 և կեսին, որոշում է տաճկական վերջնագիրն ընդունել՝ դնելով, սակայն հետևյալ պայմանները.

**«1. Էջմիածինը թողնել Հայկական Հանրապետության սահմանների մեջ:**

**2. Գրավելիք վայրերի հայերին զինակոչի չենթարկել:**

**3. Հայկական Հանրապետությունը ներքին կարգապահության և սահմանների պաշտպանության համար պիտի ունենա զինվորական ուժ:**

**4. Փախստական հայերը պիտի վերադառնան իրենց բնակավայրերը»**[318]**»:**

---

[318] **Ա-Դո,** նշվ. աշխ., էջ 437:

Նիստում որոշվեց օսմանյան Թուրքիայի հետ հաշտության դաշնագիր ստորագրելու նպատակով Բաթում գործուղել նոր պատվիրակություն հետևյալ կազմով՝ Ալ. Խատիսյան (նախագահ), Հովհ. Քաջազնունի և Մ. Պապաջանյան՝ նրանց տալով անսահմանափակ լիազորություններ[319]: Իսկ հաջորդ օրվան թողնվեց որոշելու, թե հաշտարար պատվիրակությունը Բաթումում ում անունից պետք է հանդես գա՝ Հայոց ազգային կենտրոնական խորհրդի՞, թե՞ կառավարության[320]: Մայիսի 29-ի նիստում կազմվեց հանձնաժողով (Ավ. Ահարոնյան, Ն. Աղբալյան, Ալ. Խատիսյան և Հովհ. Քաջազնունի)՝ մշակելու և խմբագրելու հայտարարությունը (**կոչ՝ ուղղված հայ ժողովրդին**): Նույն օրը՝ երեկոյան, հեռագիր հղվեց Հալիլին, որ Հայոց ազգային խորհրդի հաշտարար պատվիրակությունը արդեն մեկնել է Բաթում[321]:

Մայիսի 30-ին՝ առավոտյան ժամը 12-ին, Թիֆլիսում՝ Արամյանցի տանը, Ավ. Ահարոնյանը հրապարակեց Հայոց ազգային կենտրոնական խորհրդի հետևյալ հայտարարությունը. «Անդրկովկասյան քաղաքական ամբողջության լուծարումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ՝ **Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմել Հայոց ազգային կառավարություն, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարության բոլոր ֆունկցիաները հայկական գավառ-**

---

[319] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 114:

[320] Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս), էջ 29:

[321] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 238:

**ների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»**[322]: Մայիսի 31-ին այն հրապարակվեց մամուլում: Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը հայկական կառավարության ձևավորումը համարեց վաղաժամ. պետք է սպասել Բաթումի դիվանագիտական բանակցությունների արդյունքին, այսինքն՝ մինչև հայ-թուրքական հաշտության դաշնագրի ստորագրումը: Որոշվեց նաև յոթ օրից առանձին բանակցություններ սկսել թուրքական հրամանատարության հետ, եթե Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդի՝ Բաթում մեկնած հաշտարար պատվիրակությունից մինչ այդ լուր չստացվի: Այդ նպատակով նույնիսկ հատուկ պատվիրակություն ստեղծվեց, որի կազմում էին գեներալ Թ. Նազարբեկյանը (նախագահ), Ա. Մանուկյանը և ուրիշներ[323]:

Դժվար չէ նկատել, որ այս հայտարարության մեջ բացակայում են «Հայաստան», «հանրապետություն» և «անկախություն» բառերը: Հայտարարության մեջ հիշատակություն չկար նաև նրա սահմանների մասին: Հայոց ազգային կենտրոնական խորհրդի այդ հայտարարությունը հայ ժողովրդի մեջ ոչ մի արձագանք չստացավ[324]: Դեպքերի ականատես ու մասնակից Ս. Վրացյանը այդ առնչությամբ գրում է. «Նախ՝ հայ ժողովրդի համար ստեղծել էր այնպիսի անելանելի կացութիւն, որ անկախ պետութիւն կազմելը դառը հեգնանք միայն կարող էր թւալ: Երկրի մեծագոյն մասը տաճիկների ոտքի կոխան էր եղել, ժողովուրդը տնտեսապէս և ֆիզիքապէս քայքայւած կամ Վրաստան ու Հիւսիսային Կովկաս էր ապաստանել և կամ

---

[322] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 239:

[323] Տե՛ս **Հ. Ավետիսյան**, Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս, էջ 129:

[324] Տե՛ս «Զանգ» լրագիր, Երևան, 7 հունիս 1919 թ.:

թափուել էր այն լղարիկ հողամասը, որ ապագայ Հայաստանի հանրապետութեան հիմքը պիտի դառնար: Ամեն տեղ լաց էր, թշուառութիւն ու խուճապ… Ո՞վ սիրտ ունէր այս պայմաններում անկախութեան մասին մտածելու, ո՛վ պիտի իրականացնէր և պաշտպանէր այդ անկախութիւնը:

Երկրորդ պատճառը հոգեբանական էր. այն, ինչ վրացին ու թաթարը շատ հեշտութեամբ իւրացրին անկախութեան գաղափարը, համեմատաբար թեթև սրտով բաժանուեցին Ռուսաստանից, ռուսահայ մտաւորականի համար այդ քայլը մի ծանր ողբերգութիւն էր: Հայ մտաւորականի համար, ստեղծուած պայմաններում, անկախութիւնը հաւասար էր տաճիկ բռնապետութեան վերադարձին, հայ ժողովրդի նահատակութեան մի նոր շրջանի: Եւ դրանով է բացատրւում, որ Հայոց Ազգային Խորհրդի այն նիստը, ուր քննութեան առնուեց «անկախութիւնը», աւելի նման էր սգաւոր տան, ուր ննջեցեալ կայ դրուած…»[325]: Ս. Վրացյանն այնուհետև հավելում է. «**Թեև իսկական առումով** (իմա՝ հայտարարությունը – Գ. Պ.) **անկախութեան հոչակում չէր, բայց դեպքերի բերումով դարձավ այդպիսին**»[326]: Այնուամենայնիվ, անժխտելի իրողություն է, որ մայիսի 30-ի հայտարարությամբ դրվեց ազգային անկախ պետականության շինարարության հիմքը:

Սակայն մինչև 1919 թ. առաջին ամիսները նպատակահարմար չգտան Հայաստանը պաշտոնապես անկախ հոչակել[327]: Այդ հանգամանքը տեղիք տվեց կասկածների, թե Հա-

---

[325] **Ս. Վրացեան**, Անկախ եւ Միացեալ Հայաստան (Ուրուագիծ), էջ 16:

[326] **Ս. Վրացեան,** Հայաստանի հանրապետութիւն, Փարիզ, 1928, էջ 131:

[327] Մանրամասն տե՛ս **Գ. Պետրոսյան,** Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Երևան, 2011, էջ 199-206:

յաստանը, ինչ-ինչ նկատառումներից ելնելով, չի ուզում կտրվել Ռուսաստանից: Սակայն իրողությունն այլ էր: Նորաստեղծ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի ձգձգումը պայմանավորված էր երկրում ստեղծված ներքին ու արտաքին քաղաքական բարդ դրությամբ: Բանն այն է, որ հուսալքության ու անելանելիության զգացումով էր համակվել նաև հանրապետության ղեկավարությունը: **Դեռ որոշված չէին Հայաստանի սահմանները**:

Անշուշտ, անկախության հռչակագրի հրապարակման ձգձգումը բացասական հետևանքներ ունեցավ Հայաստանի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության վրա: Առաջ անցնելով նշենք, որ այդ հանգամանքը խոչընդոտ էր նաև մեծ տերությունների և Փարիզի խաղաղության վեհաժողովի առջև իրենց պահանջները ներկայացնելու առումով: Անկախության հռչակագրի պաշտոնական հրապարակման ձգձգումը պայմանավորված էր նաև Հայաստանի իշխանությունների դրսևորած անորոշ, դանդաղկոտ ու անվճռական կեցվածքով: Բացի այդ, օգտվելով այդ իրավիճակից, երկրի մահմեդական տարրերը առիթը բաց չէին թողնում լայն քարոզչություն ծավալելու և Հայաստանի անկախության դեմ շարունակ խռովություններ կազմակերպելու: 1919 թ. առաջին ամիսներին Կարսում, Վեդիում, Շարուրում, Նախիջևանում, Զանգիբասարում ու Սուրմալուում մահմեդական տարրերը Թուրքիայի և Ադրբեջանի հրահանգներով հրաժարվեցին Հայաստանի Հանրապետության իշխանությունը ճանաչելուց և հայտարարեցին իրենց «անկախության» մասին: Քսանից ավելի մանր ու խոշոր մահմեդական «անկախ իշխանություններ», օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները, փորձում էին ներսից քայքայել Հայաստանի Հանրապետությունը:

Որոշակի դժվարություն էր ստեղծվել նաև արևմտահայության ներգաղթի կազմակերպման գործում: Համաձայնության պետությունների հետ արևմտահայության ներգաղթի խնդիրների շուրջ բանակցելիս միշտ հարց էր ծագում, թե ինչ իրավունքով է Հայաստանի Հանրապետության կառավարությունը միջնորդում արևմտահայերի համար, արդյոք նա վայելո՞ւմ է փախստականների վստահությունը: Նման մոտեցումն անհիմն չէր: Հռչակագրի պաշտոնական հրապարակման ձգձգումը հայության շրջանում առաջ էր բերում տարակարծություններ: Ակնհայտ էր անկախության հարցում արևելահայերի և արևմտահայերի վերաբերմունքի տարբերությունը, որում, անշուշտ, էական դեր էր խաղում ***ռուսական գործոնը:*** Հայաստանի Հանրապետությունում ապրող արևմտահայերը չէին ցանկանում առնչվել Ռուսաստանի հետ: Եվ քանի որ անկախության հռչակագիրը պաշտոնապես դեռ չէր հրապարակվել, նրանք մտավախություն ունեին, որ արևելահայերը փորձում են ժամանակ շահել, չեն ուզում բաժանվել Ռուսաստանից: Ըստ այդմ՝ նրանք դեմ էին Արևելյան Հայաստանում բնակվելուն, եթե այն անկախ պետություն չէր հռչակվելու: Հայաստանի Հանրապետությունում արևմտահայ գաղթականությունը իրեն խորթ էր զգում և գրեթե չէր մասնակցում երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Նրանք կարծում էին, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը խտրական վերաբերմունք է դրսևորում արևմտահայ գաղթականության նկատմամբ: Եվ բնավ պատահական չէր, որ արևմտահայերը փաստորեն խուսափում էին զինվորագրվելուց, ինչը լուրջ խոչընդոտ էր ուժեղ, միացյալ բանակ ստեղծելու ճանապարհին:

Անկախության պաշտոնական հռչակման հապաղումը ևս արևմտահայերի կողմից որակվեց որպես Ռուսաստանին միանալու միտում: Այս հանգամանքը հայության երկու հատվածների միջև սեպ խրելու, միմյանցից խորթանալու նախադրյալներ էր ստեղծում, որը նման ճակատագրական պահին միանգամայն անթույլատրելի էր: 1919 թ. ապրիլի 24-ին Ավ. Ահարոնյանը Փարիզից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղած նամակ-զեկույցում տեղեկացնում էր, որ Պողոս Նուբար փաշան և նրա շրջապատը բազմիցս ասել են, որ վախենում են, «…. ***թէ թուրքահայությունը կուլ կերթա ռուսահայերին: Քանի որ վերջիններս ավելի ուժեղ են թվով, տնտեսապես և իմացականությամբ, «վախի» երկրորդ պատճառն այն է, թէ մենք ամբողջապես ընկերավարականներ ենք, թէ դաշնակցությունը, որ իրենց կարծիքով իշխում է, և թէ մեր միակուսակցությունը, ու վերջապես քաղաքական վախ, թէ ռուսները վերջիվերջո կը զորանան կը գան կովկասյան Հայաստանը տիրելու, հետևապես լավ չէ Թուրքահայաստանը գնա նրան միանալու, այլ լավ է նախ կազմակերպել թուրքահայ պետություն, որին և կգա միանալու իր հոժար կամքով կովկասահայ հանրապետությունը***»[328]: Արևելահայերը, որքան էլ անկախ լինեին, չէին կարող հրաժարվել Ռուսաստանի հովանավորությունից, նրա տնտեսական, քաղաքական ու ռազմական օգնությունից, որն իրենց ապահովության երաշխիք էին համարում: Իսկ արևմտահայերի անհանդուրժողականությունն այս հարցում ինչ-որ չափով կարելի էր հասկանալ: Նրանք, կորցնելով հայրենիքը և գաղթելով Արևելյան Հայաստան, հանրապետությունը կոչում էին

[328] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 119, թ. 76:

սոսկ «Արարատյան»՝ գտնելով, որ հայրենի բուն օրրանը Արևմտյան Հայաստանի տարածքն է: Արևմտահայ գործիչների մեծ մասը ուներ արևմտամետ կողմնորոշում և հետամուտ էր միացյալ, անկախ Հայաստանի գաղափարի իրականացմանը:

Եվ վերջապես, անկախության հռչակագրի ընդունումը ձգձգելու հետևանքով Համաձայնության պետությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարևանների շրջանում ձևավորվել էր այն կարծիքը, թե «հայերը կողմնակից չեն անկախության»[329]: Այդ կարծիքը առանձնապես լայն տարածում էր ստացել Ռուսաստանի հարավի (հակաբոլշևիկյան) ոչ խորհրդային պետական կազմավորումների հսկողության տակ գտնվող շրջաններում:

[329] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս II, թ. 434:

## 2. 1918 թ. հունիսի 3-ի Բաթումի պարտավորագիրը, հունիսի 4-ի հաշտության դաշնագիրը. Թուրքիայի կողմից Հայոց անկախ պետության ճանաչման շարժառիթներն ու նպատակները

Տրապիզոնում կայացած դիվանագիտական բանակցություններին (1918 թ. փետրվար 27 (մարտի 12) – ապրիլի 1 (14)) հաջորդել էին Բաթումի բանակցությունները (առաջին փուլ՝ մայիսի 11-26) օսմանյան Թուրքիայի և Անդրկովկասյան անկախ հանրապետության միջև մինչև մայիսի 26-ին վերջինիս լուծարումը:

Բաթումի բանակցությունների **երկրորդ փուլը** սկսվեց մայիսի 30-ին և շարունակվեց մինչև հունիսի 4-ը՝ արդեն Անդրկովկասյան երեք անկախ հանրապետություններ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ միաժամանակ, սակայն յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին: Սրանով հայերի և օսմանյան Թուրքիայի հարաբերություններում մի նոր փուլ էր սկսվում: Այդ առնչությամբ Ա. Խաչատրյանը գրում է, որ մայիսի վերջին օրերին «Յանկարծ նոր յեղաշրջում մը կը կատարուի անոնց (թուրքերի – Գ.Պ.) տրամադրութեան մէջ»[330]: Հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունները նոր բովանդակություն էին ստացել. օսմանյան կառավարությունը դրսևորում էր շահագրգռություն Արևմտյան Հայաստանի սահմաններից դուրս՝ Հարավային Կովկասում, հայկական պետություն ստեղծելու հարցում, թեև նման ակնարկներ արվել էին դեռևս Տրապիզոնի դիվանագիտական բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակության նախագահ Ռաուֆ

[330] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 100:

բեյի և այլոց կողմից[331]: **Սակայն հարց է ծագում՝ ինչո՞ւ, և որո՞նք էին նրանց այդ քողարկված քաղաքականության հիմնական դրդապատճառները:** Այժմ փորձենք պատասխանել այս հարցերին:

Օսմանյան Թուրքիան, կանխազգալով Քառյակ միության երկրների մոտալուտ պարտությունը Առաջին աշխարհամարտում, ձգտում էր Բաթումի դիվանագիտական բանակցությունների երկրորդ փուլում ստորագրվելիք հաշտության դաշնագրով օր առաջ ամրագրելու իր նկրտումները Բրեստ-Լիտովսկի սահմաններից դուրս՝ մեծ մասամբ հայկական ու հայաբնակ գավառների նկատմամբ և միաժամանակ իրավունք վերապահելով իրեն նաև զինաթափելու ու անհապաղ դուրս բերելու խորհրդային Բաքվից ու նրա արվարձաններից հայկական զինյալ ուժերը*, որոնք բոլշևիկների հետ ռազմական միասնական ուժերով խոչընդոտում էին թուրքական բանակի մուտքը Բաքու** (1918 թ. ապրիլի 25-ին Բաքվում ստեղծվել էր խորհրդային Ժողկոմխորհուրդ՝ բոլշևիկ Ստեփան Շահումյանի գլխավորությամբ): Ինքնըստինքյան հասկանալի էր, որ օսմանյան Թուրքիան չափազանց երկյուղում էր այն բանից, որ

---

331 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 108:

* Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտյան ռազմաճակատից, գերմանական ու ավստրո-հունգարական գերությունից տուն վերադարձող նախկին ցարական բանակի հազարավոր հայ սպաների ու զինվորների մի մասը, հայրենիք տեղափոխվելու ուղիներ որոնելով, արգելափակվեց Բաքվում և նրա արվարձաններում կովկասյան թաթարների կողմից երկաթուղային ուղիներով տեղաշարժը խոչընդոտելու պատճառով: Կովկասյան թաթարները դրանով փորձում էին խափանել նրանց միավորումը հայկական զինյալ ուժերին, տե՛ս **Լեռ,** նշվ. աշխ., էջ 404:

** Բաքվի հայկական զինուժը, հակառակորդին պարտադրելով իր վրա կենտրոնացնել թուրքական բանակի հիմնական խմբավորումները, կանխում էր Երևանին սպառնացող վտանգը: Մանրամասն տե՛ս **Գ. Ստեփանյան**, Համազասպ Սրվանձտյան, Երևան, 2016, էջ 494-655:

իր դաշնակից կայսերական Գերմանիան նույնպես համառորեն ձգտում էր տեր դառնալու Բաքվի նավթին, մանավանդ որ Առաջին աշխարհամարտի պատճառով նրա ռազմական արդյունաբերությունը առանձնապես զգում էր վառելանյութի և այլ բնական պաշարների սուր պակաս: Բայց և այնպես, օսմանյան բանակը համոզված չէր պատերազմի շուտափույթ ավարտվելու մեջ: «**Անտարակոյս,**- գրում է Ա. Խաչատրյանը,- **օսմանեան գերազանց ուժի առջև վերջիվերջոյ տեղի պիտ տար հայ բանակը, և անոնք կրնային գրաւել Երևան, բայց ասով պատերազմը պիտի չվերջանար և պիտի սկսուեր անջատամարտ, որ մեծ դժուարութիւններ պիտի յարուցաներ և շատ դանդաղեցներ իրենց արշաւանքը դէպի Թաւրիզ ու Բագու, այն ինչ իրենց մեծ ծրագրի յաջողութեան համար անհրաժեշտ էր որքան կարելի է շուտով Կասպիս ծովն հասնել...»**[332]: Այդ պահին թուրքական հրամանատարությունը չէր կարող հաշվի չառնել առկա լուրջ խոչընդոտը՝ հայկական ուժեղ զորամասերը և մասնավորապես Դիլիջանի ձորերում գեներալ Անդրանիկ Օզանյանի ներկայությունը՝ իր մարտունակ ջոկատներով, որոնք թույլ չէին տալիս թուրքական զորքերի՝ Ղազախով անցումը Բաքու[333]:

**Դժվար չէ նկատել, որ եթե ստեղծված պայմաններում թուրքական զորքերը Հայաստանի տարածքով, կարճ ճանապարհով շարժվեին Բաքու, թիկունքում, ի դեմս Հայաստանի, կոնենային մի երկիր՝ թշնամական բանակներով: Այդտեղից էլ նրանց շտապողականությունը՝ հաշտություն կնքելու և Բա-**

---

[332] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 102:

[333] Տե՛ս **Հր. Սիմոնյան,** Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, էջ 159:

**թումի դաշնագրով ապահովելու իրենց թիկունքը[334]: Ահա թե ինչու օսմանյան Թուրքիան այդ մի փոքրիկ հատվածի վրա պետք է հանդուրժեր անկախ Հայաստանի գոյությունը, որը մի կողմից կապահովեր իրեն տեղի ուժերի հարձակումներից, իսկ մյուս կողմից հնարավորություն կտար դաշնակից Գերմանիայից արագ ու անարգել հասնելու նավթային Բաքու:** Այնտեղ խորհրդային իշխանությունը վերացնելուց հետո նրանք անցնելու էին Հյուսիսային Կովկաս, այնուհետև՝ Միջին Ասիա և իրականացնելու էին իրենց երազած պանթուրքական ծրագիրը:

Ինչպես տեսնում ենք, ամենևին էլ պատահական չէր օսմանյան կառավարության շտապողականությունը: Առաջ անցնելով նշենք, որ նրանց հեռահար ծրագրերն ամրագրվեցին հունիսի 4-ի Բաթումի հաշտության հիմնական դաշնագրի 5-րդ, 11-րդ ու դրան կից հավելվածի 1-ին, 2-րդ և այլ հոդվածներում, որոնց կանդրադառնանք ստորև:

Հինգշաբթի՝ մայիսի 29-ի ուշ երեկոյան, Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նոր պատվիրակությունը (նախագահ՝ Ալ. Խատիսյան, անդամներ՝ Հովհ. Քաջազնունի և Մ. Պապաջանյան) Թիֆլիսից գործուղվեց Բաթում՝ վերսկսելու առանձին դիվանագիտական բանակցությունները՝ օսմանյան Թուրքիայի հետ հաշտության դաշնագիր կնքելու համար[335]: Հաջորդ օրը՝ մայիսի 30-ին՝ ժամը 14-ին, նրանք Բաթումում էին: Նույն օրը՝ երեկոյան ժամը 5-ին՝ մինչև թուրքական վերջնագրի ստորագրումը, տեղի ունեցավ առաջին հանդիպումը հայերի և թուրք պատվիրակության նախագահ Հալիլ

---

[334] Տե՛ս Le Statut International de I՛Arménie, Dictionnaire Diplomatique, Académie Diplomatique Internationale, 1934, h. 1, էջ 197:
[335] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 238:

բեյի ու ռազմական ներկայացուցիչ, հիմնական բանակցող Վեհիբ փաշայի միջև[336]: Երկու պատվիրակությունների բանակցային լեզուն ֆրանսերենն էր: Հարկ է նշել նաև, որ Բաթումի բանակցությունները դարձյալ ընթանում էին թուրքական բանակի զավթողական առաջխաղացմանը զուգահեռ:

Հայկական պատվիրակությունը պատրաստվել էր թուրքական կողմին ներկայացնելու վերջնագրի պատասխանի երեք տարբերակ՝ ա) վերջնագրի վերապահումով ընդունում՝ մերժելով որոշ կետեր, բ) անվերապահ ընդունում և գ) մեղմված տարբերակ[337]:

Շուրջ մեկ ժամ տևած բանակցությունների ժամանակ հայ պատվիրակները փորձեցին համոզել թուրքական կողմին վերադառնալ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի սահմաններին և զիջումներ անել հայկական որոշ տարածքների պահպանման և այլ հարցերում[338]: Սակայն թուրքերը շարունակեցին պնդել հայկական շահերը խստորեն ոտնահարող նախկին դաշնագրի նախագծի պայմանները, որի բովանդակությանն Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հայ անդամները ծանոթ էին դեռ Բաթումի դիվանագիտական բանակցությունների առաջին օրերից (մայիսի 11-ից), որը մայիսի 26-ին ներկայացրել էին վերջնագրի լեզվով՝ տարածքային նոր պահանջներով[339]: Ըստ այդ վերջնագրի՝ օսմանյան Թուրքիային էին անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը,

---

[336] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 114:

[337] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 55, գ. 8, թ. 114:

[338] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 114:

[339] Մանրամասն տե՛ս **Գ. Պետրոսյան**, Հայոց անկախ պետականության կերտման հարցի շուրջ (1918 թ. մայիս), «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», № 1 (25), 2018, էջ 5-6:

որն արդեն վերագրավված էր նրանց զորքերի կողմից, այլև արևելահայ տարածքների զգալի մասը՝ ողջ Կարսի մարզը, Ալեքսանդրապոլի գավառը և բոլոր երկաթուղիներն ու խճուղիները մինչև Երևան և Էջմիածնի գավառի մեծ մասը՝ Էջմիածին քաղաքով հանդերձ: Օսմանյան կառավարությունը պահանջում էր նաև Շիրակի և Արարատյան դաշտավայրերը գրեթե ամբողջությամբ՝ հայությանը զրկելով ամենակենսական տարածքներից: Լեոյի գնահատմամբ՝ «Տասը հազար քառակուսի վերստ եր այդ Հայաստանը, մեծ մասամբ լեռ ու անապատ՝ Սևանի լճի չորս կողմը հայ ժողովրդի ոչ թե բնակության տեղ, այլ գերեզման: Պետական սահմանն անցնում էր Յերևանի տակով. հայերի ձեռքին մնում էր միայն վեց վերստ յերկարությամբ յերկաթուղի: **Ենվեր փաշան գտել էր, վոր միայն այսպիսի չափ ունեցող Հայաստանը կարող ե յերկյուղ չներշնչել Թյուրքիային:** Իսկությունն այն եր վոր Թյուրքաց Հայաստանը վոչնչացնելուց հետո յերիտասարդ թյուրքերը վոչնչացնում եյին նաև ռուսաց Հայաստանը»[340]:

Ինչպես վերը նշվեց, թուրքական պատվիրակությունը միաժամանակ պահանջում էր հայերից ակտիվորեն միջամտել, որ հայկական զորամասերը անհապաղ դուրս բերվեն խորհրդային Բաքվից ու նրա արվարձաններից: Հայ պատվիրակներն առարկեցին՝ նկատել տալով, որ այդ պահանջը կդիտվի միջամտություն խորհրդային Բաքվի ներքին գործերին[341]: Սակայն թուրքական կողմը աներկբա հայտարարեց, **որ հակառակ պարագայում հարցը կլուծվի ռազմական ուժով.**

---

[340] **Լեո**, նշվ. աշխ., էջ. 404:

[341] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 55, տե՛ս նաև **Ա-Դռ,** նշվ. աշխ., էջ 410, տե՛ս նաև **Հ. Ավետիսյան,** Հայոց ազգային միասնության հաղթանակը 1918 թվականի մայիս, էջ 131:

**«Եթե դուք չեք կարող, ուրեմն զորք է տարվելու: Կվնասի, կտուժեն»**[342]: Ինչպես տեսնում ենք, դարձյալ գործի դրվեց թուրքերի ավանդական գործելակերպը՝ ռազմական սպառնալիքով ճնշում գործադրել Բաթումի բանակցային գործընթացների վրա: Թուրքական ռազմական նոր սպառնալիքներից խուսափելու համար Մ. Պապաջանյանը նրանց դիմեց. «Թույլ տվեք, որ, նախ մեր բարոյական միջոցները գործ դնենք հայ զինվորներին զենքով հայրենիք տեղափոխելու, ճանապարհները բանալով: Հետո դուք արեք այն, ինչ որ կորոշեք»[343]: Եվ այնուամենայնիվ, թուրքական կողմը հայ պատվիրակներին հասկացնել տվեց, որ հետագա բանակցությունները շարունակելու և դաշնագրի նախագծում հնարավոր որոշ տարածքային ու սահմանային զիջումներ կատարելու համար ավելի լավ է ընդունել վերջնագիրը, քանի որ վերջնաժամկետը լրանում է մեկ ժամ հետո[344]: Իհարկե, Հալիլ բեյը «Ազնիվ խոսք տվեց սրբագրելու (տարածքային և սահմանային պահանջները – Գ. Պ.), որքան այդ հնարավոր է: Մենք միաձայն որոշեցինք այդ ձևով ընդունել»[345]: Նույն օրը՝ **մայիսի 30-ի երեկոյան ժամը 7-ին, պատվիրակության նախագահ Ալ. Խատիսյանը ստորագրեց թուրքական վերջնագիրը**, որում ասվում էր. «… Հայաստանի պատվիրակությունը, օժտված լիազորություններով Հայոց ազգային խորհրդի, որն իրեն գերագույն իշխանության օրգան է հայտարարել, սույնով պատիվ ունի հայտնելու Ձեզ… որ ընդունում է հաշտության և բարեկամության Ձեր առաջար-

---

342 Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 44:
343 Նույն տեղում:
344 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 55:
345 ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 55:

կած նախագիծը և, նկատի ունենալով Ձեր… բանավոր համաձայնությունը, նա պատրաստ է անհապաղ վերջնական լիակատար հաշտություն կնքելու համար: Պատվիրակության նախագահ»[346]: Ի դեպ, այդ առնչությամբ Ալ. Խատիսյանը տեղեկացնում է, որ մայիսի 31-ի հայ-թուրքական դիվանագիտական բանակցություններից պարզվեց, որ այդ համաձայնությունը (վերջնագրի վերջնաժամկետի պահին Վրաստանի լռության պարագայում) Կոստանդնուպոլսում շատ լավ տպավորություն է թողել[347]:

Ավելորդ է ասել, որ թուրքական վերջնագիրը վերաբերում էր Անդրկովկասի բոլոր անկախ հանրապետություններին: Ժամանակին վերջնագիրը ստորագրեց նաև ադրբեջանական պատվիրակությունը: Մինչդեռ վրաց պատվիրակությունը, ունենալով կայսերական Գերմանիայի հովանավորությունը, սկզբում լռում էր և չէր ուզում ստորագրել: Նրանց վերջնաժամկետը նույնպես լրանում էր մայիսի 30-ին՝ երեկոյան ժամը 8-ին: «Այս պարագան,- գրում է Ալ. Խատիսյանը,- շատ գէշ տպաւորութիւն ձգեց թուրքերի վրայ»[348]: Եվ այնուամենայնիվ, վրաց պատվիրակությունն ուշացումով՝ հունիսի 1-ի գիշերվա ժամը 1-ին, Հալիլ բեյին գրավոր տեղեկացրել էր, որ իրենք համաձայն են երկաթուղային համաձայնագրին, բայց տարածքային հարցերում՝ ոչ[349]: Այսինքն՝ վրացիները սկզբունքորեն ընդունում էին թուրքական վերջնագիրը, սակայն միայն Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի սահմաններում: Դրանից հետո հայտնի էր դարձել, որ Վեհիբ փաշան, ի պա-

---

[346] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 79, թ. 2:
[347] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 55:
[348] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հոկտեմբեր, էջ 97:
[349] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 114, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 55:

տասխան այդ գրության, գիշերվա ժամը 2-ին հրաման էր արձակել երեք կողմից՝ Բաթումի, Նոթանեբի և Վորոնցովկայի ուղղություններով, արշավելու Թիֆլիսի վրա. վրաց պատվիրակությունը հարկադրված համաձայնել էր ստորագրել վերջնագիրը: Երկու ժամ հետո Վեհիբ փաշան հրաման էր արձակել չեղարկելու հարձակումը[350]: Այդ առնչությամբ Ալ. Խատիսյանը իր օրագրության մեջ արձանագրել է. «Վրացիները բացահայտ իրենց զենքերն էին ճոճում: Վեհիբ փաշան և Խալիլը ասում էին՝ միթե վրացիներն իսկապես կարծում են, որ Վրաստանի պատճառով գերմանացիները կկռվեն Թուրքիայի դեմ: Դրա համար պետք է խելագար լինել: Մենք նրանց հետ միլիոնավոր անքակտելի կապեր ունենք»[351]: Փաստորեն, օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարության պարտադրանքով վրացիները թուրքերին էին զիջելու Ախալքալաքի ու Ախալցխայի բացառապես հայաբնակ գավառները՝ բացի Ախուրիի ու Զեքարի շրջաններից[352]:

Այսպիսով, **թուրքական վերջնագրի ստորագրումն այլընտրանք չուներ: Դա հետևանք էր Հարավային Կովկասում ստեղծված աշխարհաքաղաքական և ռազմաքաղաքական զարգացումների: Հետևապես ստեղծված իրավիճակում արևելահայության փրկության միակ ելքը թուրքական վերջնագրի ընդունումն էր և հաշտություն կնքելը, որքան էլ որ այն ծանր լիներ:**

Հարկ է նշել, որ հարևան վրացիներն ու ադրբեջանցիները, օգտվելով Հայաստանի ծանր վիճակից, փորձում էին վերջի-

---

[350] Տե՛ս նույն տեղը:

[351] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 114:

[352] Մանրամասն տե՛ս **Ա. Մելքոնյան**, Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 285-289:

նիս հաշվին Բաթումի դիվանագիտական բանակցային գործընթացներում հանդես գալ տարածքային և սահմանային պահանջներով:

Վերջնագրի ստորագրումից հետո՝ հաջորդ օրը՝ **մայիսի 31-ի առավոտյան ժամը 10-ին, սկսվեցին հայ-թուրքական դիվանագիտական բանակցությունները**: Հայկական պատվիրակությունը ներկայացրեց իր տարածքային և սահմանային պահանջները՝ հիմնավորումներով հանդերձ, և խնդրեց հեռագրել պաշտոնական Կոստանդնուպոլսին՝ բավարարելու դրանք: Նույն օրը՝ երեկոյան ժամը 5-ին, Հալիլ բեյը ներկայացրեց իր կառավարության փոփոխած նախագիծը[353]: Երեկոյան ժամը 6-ից մինչև հունիսի 1-ի գիշերվա ժամը 2-ը տևած բանակցությունների ժամանակ քննարկվեց դաշնագրի **նախաօրինակը՝** տեքստում կատարելով աննշան փոփոխություններ և տարածքային որոշ զիջումներ հօգուտ հայերի: Հարկ է նշել, որ Սարդարապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտերը ազդեցին Բաթումի դիվանագիտական բանակցությունների ընթացքի վրա, և օսմանյան կառավարությունը հարկադրված էր տարածքային և սահմանային որոշ «զիջումներ» կատարել:

Ի սկզբանե հայտնի էր, որ այդ բանակցությունների ընթացքում օսմանյան պատվիրակությունը դիտարկելու է միայն Հայաստան-Թուրքիա տարածքային ու սահմանային հարցեր և խուսանավելու է հայ-վրացական և հայ-ադրբեջանական սահմանների բաժանման խնդրին անդրադառնալուց՝ այն թողնելով որոշելու երեք անկախ հանրապետությունների՝

[353] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 114:

Թիֆլիսում կայանալիք բանակցությունների ժամանակ[354]: Հայտնի էր նաև, որ վրացիները պահանջում էին հայկական ընդարձակ տարածքներ մինչև Ղարաքիլիսա, իսկ ադրբեջանցիները՝ մինչև Երևան:

**Հունիսի 1-ին՝ ցերեկվա ժամը երեքին, հայկական պատվիրակությունը նախաստորագրեց դաշնագրի նախաօրինակը**՝ հետագա դիվանագիտական բանակցություններում կողմերի միջև վերջնական համաձայնության հասնելու հեռանկարով: Նոթանեբից Ալ. Խատիսյանը և Մ. Պապաջանյանը անմիջապես հեռախոսազրույց ունեցան Թիֆլիսում Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանի ու խորհրդի անդամ Խ. Կարճիկյանի հետ և նրանց իրազեկեցին, որ **դաշնագրի նախաօրինակը ստորագրել են անկախ Հայաստանի Հանրապետության անունից.** «Հալիլ բեյը, ինչպես հենց ինքը բացատրեց, ստորագրելով (նախաստորագրելով – Գ. Պ.) դաշնագիրը՝ դրանով իսկ **իր կառավարության անունից ճանաչեց մեր հանրապետությունն ու անկախությունը**»[355]: Իսկ Վեհիբ փաշան իր գրպանից հանեց «կտոր մը՝ կարմիր խաչ մը,- գրում է Ալ. Խատիսյանը,- սպիտակ ֆոնի վրայ՝ եւ ըսաւ. «Ահա հայկական դրօշակի իմ նախագիծը: Դուք քրիստոնեաներ եք եւ կը պարծենաք այս խորհրդանշով. ես կը կարծեմ, թէ խաչը պետք է ըլլա ձեր խորհրդանիշը»»[356]:

Հայ պատվիրակության անդամները խնդրեցին Հայոց ազգային կենտրոնական խորհրդին. «**Մինչև իրենց Թիֆլիս ժամանելը պատրաստեն Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագիրը, որի անունից իրենք նախաստորագրել**

---

[354] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 84:
[355] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 86:
[356] **Ալ. Խատիսեան,** նշվ. աշխ., էջ 71:

**են դաշնագրի նախաօրինակը,** ինչը միանգամայն անհրաժեշտ է. այլապես ամեն բան անիմաստ կլիներ: Ուստի մենք բոլորս կարծում ենք, որ այդ հռչակումը պիտի կատարվի: Չի կարելի խոսել ինչ-որ «հայկական ծայրագավառների» մասին՝ ասես մենք ինչ-որ անձև հողակտոր ենք՝ անտեր ու անանուն: Հարկավոր է պատրաստել հռչակագիրը, համեստորեն հայտարարել այն, ընտրել կառավարություն, շտապ ուղարկել այն Երևան, սկսել բոլոր գործողությունները, որոնք բխում են դաշնագրից, օգտվելով դրա (հյուպատոսի, ինչը չափազանց կարևոր է զավթված տարածքներում) իրավունքներից, ուղարկել պատվիրակություն Կոստանդնուպոլիս և սկսել կազմակերպել երկիրը»[357]: Ալ. Խատիսյանը հեռախոսազրույցը եզրափակեց հետևյալ համոզումով. «Հզոր է հայոց հողի ոգին: Մենք կբերենք վատ հաշտության դաշնագիր, սակայն կբերենք նաև անկախ Հայաստան՝ տուն, բույն, որտեղ կթրծվի ժողովրդի միտքը: Այդ ամենը կկապի, կմիավորի, կբարձրացնի ոգին, իսկ դա կարևոր է: Ես հավատում եմ մեր Պետությանը»:

Հաջորդ օրը՝ հունիսի 2-ին, Ալ. Խատիսյանը նաև Ավ. Ահարոնյանին նամակով հանգամանորեն ներկայացրեց հայ-թուրքական բանակցությունների արդյունքում թուրքերի կողմից տարածքային և սահմանային որոշ զիջումների մասին: Նա իրազեկում է, որ Վեհիբ փաշան հայ պատվիրակությանը ուղարկեց տարածքային զիջումների **երկու տարբերակ. մեկն ուղղակի զիջում էր, մյուսը՝ փոխանակում:** Հայ պատվիրակությունը վճռականորեն արտահայտվեց **առաջին տարբերակի** օգտին՝ «զիջել» Ալագյազի լանջերն ու Ապարանը՝ 900 քառ. կմ, և Երևանի նահանգի մի մասը՝ 400 քառ. կմ: Ըստ **երկրորդ**

[357] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 63:

**տարբերակի՝** թուրքերը վերցնում էին Բորչալուի գավառի մեկ երկրորդը՝ Ախալքալաքի նահանգի և Կարագյոզների միջև՝ Թիֆլիսից 15 կմ-ի վրա գտնվող լեռնանցքը, և տալիս Հայաստանին շուրջ 2,5 հազար քառ. կմ[358]: Այս տարբերակը ամենևին ընդունելի չէր հայկական պատվիրակության համար, որովհետև Հայաստանը կտրվում էր հարևան Վրաստանից: **Վերջնական արդյունքում Հայաստանին լրացուցիչ տրվում էր ընդամենը 1300 քառ. կմ տարածք՝ Համամլու-Աշտարակ խճուղին և Երևանի նահանգի հարավային մասից մի փոքրիկ հողակտոր:**

Բացի վերը նշված տարածքային փոփոխություններից՝ հայկական պատվիրակության դիվանագիտական ջանքերի շնորհիվ հաջողվեց փոքրիշատե մեղմել նվաստացնող դաշնագիրը՝ նախաօրինակից հանել տալով մայիսի 11-ի դաշնագրի նախագծից՝ 1. իրավունքը՝ միջամտելու Հայաստանի ներքին գործերին, 2. բռնազավթած նահանգների հայ բնակչությունը ներկա պատերազմի ընթացքում ազատվում է զինապարտությունից, 3. Բաքուն բոլշևիկներից ազատագրելու հայերի պարտավորությունը, 4. իրավունքը՝ սեփական ուժերով վերականգնելու Հայաստանի երկաթգծերը և շարժակազմը: Թուրքերի համաձայնությամբ մի շարք ընթացիկ հարցեր լուծվեցին հօգուտ Հայաստանի՝ դրանք, սակայն, չներառելով նախաստորագրված դաշնագրում, քանզի դա ժամանակավոր էր: Դրանք էին՝ 1. թույլատրել հայ զինվորներին ու փախստականներին Ջուլֆայի տարածքով վերադառնալ Պարսկաստանից, 2. պարտավորվել չխոչընդոտելու փախստականների վերա-

---

[358] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 55-56, տե՛ս Հայոց պատմություն, Երևան, 2010, Հ. 4, էջ 23, **Հ. Ավետիսյան,** Հայոց ազգային միասնության հաղթանակը 1918 թվականի մայիս, էջ 132-133:

դարձը Բաթում և Կարս, 3. փախստականներին թույլատրել անհապաղ վերադառնալ Սուրմալու, Ալեքսանդրապոլ[359] և այլն: Առաջ անցնելով նշենք, որ երկու օր անց թուրքական պատվիրակությունը դիվանագիտորեն հրաժարվեց իր որոշ համաձայնություններից, ավելին, որոշակի շարժառիթներից ելնելով, ինչպես վերը նշվեց, դրանք ամրագրեց հունիսի 4-ի Բաթումի հաշտության դաշնագրի և նրան կից հավելվածի հոդվածներում (Բաքուն բոլշևիկներից ազատագրելու հայերի պարտավորությունը, փախստականներին Բաթում և Կարս շուտափույթ վերադառնալ թույլատրելու հանձնառությունը և այլն):

Նույն օրը՝ հունիսի 2-ին, Ալ. Խատիսյանը հունիսի 1-ի Բաթումի հայ-թուրքական նախաստորագրված դաշնագրի մասին Նոթանեբից հեռախոսազրույց ունեցավ նախ Կարսում գտնվող գեներալ Գ. Կորգանյանի հետ և խնդրեց նրան այդ ամենն ամբողջությամբ հաղորդել Արամին (Երևանի հայոց ազգային խորհրդի նախագահ) և Ալեքսանդրապոլ՝ հայկական զորամասի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանին[360]: Նա միաժամանակ Կարսի ճանապարհով բանագնացի միջոցով Թ. Նազարբեկյանին ուղարկեց նախաստորագրված դաշնագրի գլխավոր կետերը՝ խնդրելով անել մի շարք կարգադրություններ ռազմական գործողությունները դադարեցնելու, հայկական զորքերը տարհանելու, ռազմագերիներին փոխանակելու վերաբերյալ[361] և այլն:

Նախաստորագրված դաշնագրի գլխավոր կետերը հետևյալներն էին.

---

[359] Տե՛ս նույն տեղը:
[360] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 56:
[361] Տե՛ս նույն տեղը:

1. Սահմանը սկսվում է Ախալքալաքի նահանգի արևելյան անկյունից ու ձգվում է հարավ՝ Աղ-Բուլաղ կայարանի մոտով ուղիղ գծով և Ալագյազի գագաթով մինչև Էջմիածին, որը կմնա Հայաստանին, ապա՝ երկաթգծին զուգահեռ մինչև Աղ-Բուլաղ, այնուհետև՝ դեպի Արփա ու Շարուր:

2. Մեկ շաբաթվա ընթացքում հայոց և օսմանյան զորքերը պետք է ետ քաշվեն իրենց տարածքները:

3. Պատերազմի ընթացքում օսմանյան Թուրքիան իրավունք ունի տեղափոխելու զորքերը Հայաստանի տարածքով:

4. Ջուլֆայից փախստականներն ու զինվորները ազատ մուտք են ստանում Հայաստան:

5. Պատերազմի դեպքում Հայաստանը կարող է պահել մեկ դիվիզիա՝ տեղաբաշխելով Թուրքիայի գիտությամբ:

6. Ռազմագերիների փոխանակում:

7. Պատերազմի ընթացքում օսմանյան Թուրքիային անցած տարածքներում հայերը կազատվեն զինապարտությունից:

Հայկական պատվիրակությունը, հիմք ընդունելով Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի ընձեռած լիազորությունները, խնդրում է.

1. Դադարեցնել ռազմական գործողությունները Թուրքիայի դեմ:

2. Կապ հաստատել թուրքական հրամանատարության հետ՝ երկու կողմերի զորքերն իրենց տարածքները վերադարձնելու հարցը համաձայնեցնելու համար:

3. Թուրքական զորքերին թույլ տալ Դիլիջանով անցնել Ղազախ:

4. Ռազմական գործողությունները դադարեցնելու հարցում համագործակցել Շեֆքի փաշայի հետ[362]:

Գեներալ Թ. Նազարբեկյանին ուղղված նամակը եզրափակվում է հետևյալ գրառումով. «Ջերմորեն շնորհավորում ենք Ղարաքիլիսայի ճակատամարտի առթիվ, որը գլխավոր հրամանատար Վեհիբ փաշայի կողմից գովեստի և հիացական խոսքերի է արժանացել հայ զինվորների փայլուն գործողությունների համար»[363]:

Ի դեպ, հունիսի 1-ի հեռախոսազրույցում Ավ. Ահարոնյանը և Խ. Կարճիկյանը Բաթումի հայ պատվիրակներին հայտնեցին նաև հետևյալը. **«Բոլորդ էլ նկատի ունեցեք, որ ամբողջովին կտրված ենք Երևանից և Դիլիջանից… ճակատամարտի (Ղարաքիլիսայի – Գ. Պ.) մասին ոչինչ չգիտենք»[364]:**

Իրողություն է, որ արտաքին աշխարհի հետ երկաթուղային և հեռագրային կապի լիովին խզված լինելու պատճառով թե՛ Բաթումի հայկական պատվիրակությունը և թե՛ Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը գրեթե տեղեկություն չէին ստանում հայկական զորքերի գործողությունների մասին, և նրանց հիմնականում առաջինը իրազեկում էին թուրքերը:

Հարկ է նշել, որ հայկական պատվիրակությունը դժգոհել էր, որ Բաթումի բանակցային գործընթացներում թուրքական կողմը չափազանց անզիջում է: Ի պատասխան հայ պատվիրակների՝ Վեհիբ փաշան, ցույց տալով քարտեզը, ասել է. «Դուք կը տեսնէք, որ ճակատագիրը կը քաշէ Թուրքիան արեւմուտքէն արեւելք. մենք հեռացանք Պալքաններէն, կը հեռա-

---

362 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 11, թ. 51:

363 Նույն տեղում:

364 Նույն տեղում:

նանք նաև Ափրիկէէն, **բայց մենք պէտք է տարածւինք դէպի արեւելք. հոն է մեր արիւնը, մեր կրօնքը, մեր լեզուն:** Եւ ասիկա տարերային ձգողութիւն ունի. մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքիստան եւ Ատրբէջան են: **Մենք պէտք է ճամբայ ունենանք դէպի հոն: Եւ դուք՝ հայերդ, կանգնած էք մեր այդ ճամբուն վրայ: Պահանջելով Վանը՝ դուք կը փակէք մեր ճամբան դէպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջեւանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզ իջնելու Կուրի հովիտը եւ երթալու Պաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ճամբան դէպի Ղազախ ու Գանձակ: Դուք պէտք է մէկ կողմ քաշւիք եւ մեզ ճամբայ տաք: Ահա թէ ու՛ր է մեր հիմնական վէճը:** Մեզ պէտք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարաւորութիւն տան մեր բանակներուն առաջ շարժւելու եւ պաշտպանւելու: **Մէկ ճամբան՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որ կը տանի դէպի Գանձակ. միւսը՝ կերթայ Շարուր-Նախիջեւան-Զանգեզուրով Քուրի հովիտը: Դուք կարող էք մնալ անոնց մէջտեղը, այսինքն Նոր-Պայազէտի եւ Էջմիածնի շուրջը»**[365]:

Հայ պատվիրակները Վեհիբ փաշային նկատել տվեցին, որ նա հաշվի չի առնում երեք հանգամանք. «ա) **որ հայերուն թողուած հողամասը չափազանց փոքր է հայ ժողովրդին գոհացում տալու համար, նւազագոյն չափով իսկ.** բ) **որ հայկական հարցը միջազգային խնդիր մըն է եւ չի կարող այդ ձեւով վերնալ մէջտեղէն.** եւ գ) **որ թուրքերուն այժմ գծած Հայաստանի սահմանները աղբիւր պիտի դառնան յաւիտենական թշնամութեան հայերու եւ թուրքերու միջեւ»**[366]:

---

[365] **Ալ. Խատիսեան,** նշվ. աշխ., էջ 70:

[366] Նույն տեղում:

Վեհիբ փաշան հակադարձում է. «Հայկական հարցը միջազգային է, կը՛սէք, եւ պիտի նկատի առնուի հաշտութեան ընդհանուր խորհրդաժողովին մէջ: **Այդ բանը շատ լաւ գիտենք. բայց հէնց ատոր համար ալ մենք առաջինը ըլլալով յանձն կ՛առնենք լուծելու զայն եւ կ՛ընդունինք Հայաստանի անկախ գոյութիւնը:** Գալով թշնամութեան զգացումներուն հողամասի փոքրութեան պատճառով, պէտք է ըսեմ, որ բոլոր պետութիւններն ալ քիչով սկսեր են եւ աստիճանաբար են աճեր: **Կարեւորն այն է, որ մենք բարեկամներ դառնանք եւ փոխադարձաբար պաշտպանենք զիրար: Մեզ պէտք է հայերու նպաստաւոր պրոպագանտը արտասահմանի մէջ»**[367]:

Ինչպես տեսնում ենք, Վեհիբ փաշան առանց վարանելու բացահայտում է օսմանյան Թուրքիայի պետական մակարդակով ծրագրված ռազմավարական քաղաքականության նկրտումները. «Հայերը կանգնած են պանթուրքիզմի ճանապարհին և խանգարում են այդ ծրագրի իրագործմանը»: Դժվար չէ նկատել, որ այդ դաշնագրով օսմանյան Թուրքիան մեծ հնարավորություն էր ստանում հայկական տարածքներով կարճ ճանապարհով արագ թափանցելու Բաքու, Կովկաս, Միջին Ասիա և ավելի հեռուներ: Ինչպես վերը նշվեց, այդ ծրագրի իրագործման համար օսմանյան Թուրքիայի ռազմավարական խնդիրն էր նաև իր հարևանությամբ «հանդուրժել» տնտեսապես թույլ, կենսունակ պետություն դառնալու հնարավորությունից ու բարենպաստ պայմաններից զուրկ, ծովից կտրված, չորս կողմից շրջափակված և վտանգ չներկայացնող փոքրիկ տարածքով Հայաստանի գոյությունը: **Դրանով մի կողմից ժամանակ կշահեր և կապահովեր իր թիկունքը հայկական զինու-**

[367] Նույն տեղում:

**ժի հարձակումներից, իսկ մյուս կողմից Հայաստանի տարածքով ամենակարճ ու հարմարավետ ուղի կբացեր դեպի Բաքու և այլն:**

Վեհիբ փաշան, հայ պատվիրակների հարցադրումներին ի պատասխան, ինչպես վերը նշվեց, փաստորեն խոստովանեց նաև մեկ այլ կարևոր շարժառիթ, որը հարկադրեց իր կառավարությանը ճանաչել Հայաստանի անկախ գոյությունը. «Հայկական հարցը միջազգային է, կը՛սեք, եւ պիտի նկատի առնուի հաշտութեան ընդհանուր խորհրդաժողովին մէջ: **Այդ բանը շատ լաւ գիտենք. բայց հէնց ատոր համար ալ մենք առաջինը ըլլալով յանձն կ՛առնենք լուծելու զայն եւ կ՛ընդունինք Հայաստանի անկախ գոյութիւնը:**» «Առհասարակ պէտք է ըսեմ,- գրում է Ալ. Խատիսյանը,- որ բանակցութեանց այս շրջանը ըստ երեւոյթին կը շոյէր թուրքերուն ինքնասիրութիւնը. կիրագործուէին իրենց ծրագիրները եւ կլուծուէր հայկական հարցը այնպէս, որ դիւրանար ապագայ միջազգային հաշտութեան խորհրդաժողովի մէջ ունենալիք իրենց գործը: Պէտք է նկատի ունենալ, որ թուրքերը շատ կը վախնային հայկական հարցէն ապագայ խորհրդաժողովին մէջ: Այդ մասին ես լսած եմ Ռէուֆ պէյէն, Վէհիպ փաշայէն, Խալիլ պէյէն, Էնվէր փաշայէն եւ շատ մը ուրիշ թուրք գործիչներէ: Այդ էր պատճառը, որ մինչեւ միջազգային խորհրդաժողովը թուրքերը կ՛ուզէին լուծել հայկական հարցը»[368]:

Որքան մոտենում էր օսմանյան Թուրքիայի պարտությունը Առաջին աշխարհամարտում, նա գիտակցում էր այդ ամենի հնարավոր հետևանքները և հարկադրված էր հաշտվելու անկախ Հայաստանի գոյության փաստի հետ մի պայմանով,

---

[368] **Ալ. Խատիսեան,** նշվ. աշխ., էջ 72:

որ այն լիներ Հարավային Կովկասի սահմաններում և ոչ թե Արևմտյան Հայաստանում: Թուրքերի նպատակն էր Արևմտյան և Արևելյան Հայաստանները մեկընդմիշտ անջատել միմյանցից, վերջ տալ մեծ տերությունների միջամտությանը Թուրքիայի ներքին գործերին՝ Հայկական հարցը պատրվակ բռնելով, և փորձել Հայկական հարցը համարել «լուծված» ու կանխել Արևմտյան Հայաստանի հայության համար ինքնավարություն կամ բարեփոխումներ անցկացնելու հնարավոր պահանջը Անտանտի տերությունների ապագա միջազգային վեհաժողովի կողմից: Ըստ այդմ՝ օսմանյան կառավարությունը մինչև վեհաժողովի հրավիրումը Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական կազմը արագ և հիմնովին փոխելու՝ թուրքացնելու հեռահար նպատակով վաղուց ի վեր պարբերաբար և հետևողականորեն իրականացնում էր իր ավանդական քաղաքականությունը, այն է՝ բացառել ցեղասպանության պատճառով հայրենազրկված արևմտահայ փախստականների վերադարձն իրենց հայրենի օջախներ և Արևմտյան Հայաստանում բնակեցնել Անդրկովկասի ու այլ երկրամասերի մուսուլմանների և միջազգային հանրությանը հրամցնել, թե Արևելյան Անատոլիայում չկա մի տարածք, որտեղ հայերը մեծամասնություն են կազմում: Անգամ Արևմտյան Հայաստանը հայաթափելուց հետո օսմանյան ռազմաքաղաքական ղեկավարությունը քրիստոնյա բնակչության նկատմամբ ճնշումներով և ուժի սպառնալիքով անցկացրեց կեղծ հանրաքվե՝ միջազգային հանրությանը ցույց տալու, թե իբր այնտեղ հայությունը ազգային փոքրամասնություն է: Մինչդեռ նրանց պաշտոնական դիրքորոշումն էր՝ այլևս թույլ չտալ արևմտահայե-

րի վերադարձը Արևելյան Անատոլիա[369]: «Թուրքերը,- գրում է Ալ. Խատիսյանը,- կ՛ուզէին ունենալ, յանձին Հայաստանի (Արևելյան – Գ.Պ.), հողամաս մը, ուր կարողանային հաւաքել հայերու մնացորդները Թուրքիոյ սահմաններէն»[370]:

Անդրանիկ Օզանյանը հունիսի 2-ին, Դիլիջանում, ծանոթանալով հայ-թուրքական հաշտության դաշնագրի նախաօրինակի բովանդակությանը, միանգամայն համոզիչ ներկայացնում է էական շարժառիթներից մեկը, որը հարկադրեց Օսմանյան կայսրությանը ընդունելու անկախ Հայաստանի գոյությունը. «Ինչո՞ւ, թուրքերն այդպես շտապում են հայերին անկախ տեսնել: Եթե թուրքը հայի նկատմամբ գործողության մեջ է դնում որևէ ծրագիր, ապա միայն ու միայն նրան հարվածելու և անջատելու համար: Ուրեմն Բաթումում շուտով կնքվելիք պայմանագիրը հայ ժողովրդի դեմ թուրքերի ծրագրած հերթական դավերից մեկն է: Հայը երբեք չպետք է հավատ ընծայի թուրքին, ոչ մի պարագայում չպետք է գլուխ խոնարհի նրա առջև: **Ուրեմն տվյալ պահին անկախ հայկական պետության ստեղծումը բխում է թուրքերի շահերից, ի վնաս հայ ժողովրդի … Հայաստանի ստեղծումով Թուրքիան ուզում է մոռացության տալ Արևմտյան Հայաստանի խնդիրը**»[371]:

Մինչև հաշտության դաշնագրի **հիմնօրինակի** ստորագրելը հայկական պատվիրակությունը որոշեց Բաթումի դիվանագիտական բանակցային գործընթացներում վերջնականապես պարզել հայ-թուրքական ներկա և ապագա հարաբերությունները: Այդ հարցով սկսեց բանակցել անձամբ Վեհիբ փաշայի հետ, քանի որ բանակցային գործընթացներում խնդիրներ լու-

---

[369] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 103, ց. 2, գ. 11, թ. 80:

[370] **Ալ. Խատիսեան,** նշվ. աշխ., էջ 72:

[371] **Հր. Սիմոնյան,** Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, էջ 157-158:

ծողը հիմնականում նա էր, և ոչ թե պատվիրակության նախագահ Հալիլ բեյը[372]: Հունիսի 2-ին Վեհիբ փաշայի հետ բանակցության ժամանակ Ալ. Խատիսյանը փորձեց պարզաբանում ստանալ, թե ինչպես է օսմանյան Թուրքիան գնահատում այդ փոխհարաբերությունները: Նա հստակորեն հայտարարեց, որ հայկական պետությունը թեկուզ և փոքր տարածքով կազմավորելու համաձայնությունը շրջադարձային է Թուրքիայի պատմության մեջ, որ դա հայերի հետ հաշտվելու առաջին քայլն է, և որ դրանից հետո դյուրին կլինի լուծել հայկական մի շարք այլ հարցեր. նրանց այդպիսի տրամադրվածությանը նպաստել են՝ ա) հայերի քաղաքականության հստակությունը (սկզբում՝ թշնամական, այժմ՝ հաշտվողական), բ) Ադրբեջանի հետ հաշտության համաձայնագիրը, գ) ճշգրիտ և ժամանակին պատասխանը վերջնագրին և դ) Ղարաքիլիսայում հայրենիքը պաշտպանող հայերի հերոսությունը, որը նրանց մեջ հարգանք առաջացրեց[373]. իհարկե մոռացության էր մատնված Սարդարապատի հերոսամարտը:

Մինչդեռ իրողությունն ամենևին այլ էր: Ինչպես վերը նշվեց, օսմանյան Թուրքիայի՝ հայկական պետություն կազմավորելու համաձայնությունը նախ և առաջ պայմանավորված էր նրա շահերից բխող բազմազան ու բազմաբնույթ շարժառիթներով ու հեռահար նպատակներով և ոչ թե Վեհիբ փաշայի հիշատակած պատճառներով, որոնք ամենևին էլ չէին կարող էական դեր ու նշանակություն ունենալ: Մինչդեռ Վեհիբ փաշայի ներկայացրած չորրորդ պատճառը կամ շարժառիթը, փաստորեն, հերթական կարևոր, նոր խոստովանություն էր՝

---

[372] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 56:
[373] Տե՛ս նույն տեղը:

**Ղարաքիլիսայում հայրենիքը պաշտպանող հայերի հերոսությունը պարտադրեց Օսմանյան կայսրությանը համաձայնել ճանաչելու հայկական պետության գոյությունը:** Իրադարձությունների ականատես Ա. Խաչատրյանը վկայում է. «Իրական ու կարևորը չորրորդն է՝ հայ զօրքի հերոսական դիմադրութիւնն է, որուն չէին սպասէր և այժմ խորհել կը թելադրէ թուրք դիւանագէտներուն: Թուրք բանակը մինչեւ Ալեքսանդրապոլ գրաւեր էր և Կարինի (Էրզրում – Գ. Պ.) ու Կարսի նման բերդաքաղաքներուն տիրեր է առանց մեծ մը ընելու, և Վեհիբ, արդէն արհամարհելով, կըսէր՝«Ուզած ըոպէին կրնայ հանդիսական զօրանցքով անցնել մինչև Ջուլֆա»: Բայց Սարդարապատի թրքական ջախջախիչ պարտութիւնը և «Ղարաքիլիսէի հերոսական դիմադրութիւնը յարգանք» ներշնչէր էին ռազմագէտ թուրքին»[374]:

Ինչպես տեսնում ենք, Վեհիբ փաշան Ղարաքիլիսայի հերոսամարտը գնահատեց որպես եզակի ճակատամարտ պատերազմի պատմության մեջ, որտեղ հայերը ցույց տվեցին, որ կարող են համարվել աշխարհի **լավագույն զինվորներ**[375]: Ընդհանրապես Ղարաքիլիսան ամրություն է, և ինքը երջանիկ կլիներ, եթե թուրքերն ու հայերը միասին ամրացնեին Ղարաքիլիսան, քանի որ այդ պահին երկուսի քաղաքականությունը պետք է լիներ միատեսակ[376]: Հետևաբար, ինքնանպատակ չէր, երբ Բաթումի դիվանագիտական բանակցությունների ընթացքում Վեհիբ փաշան բազմիցս խնդրանքով դիմել էր հայկական պատվիրակությանը՝ ստեղծելու հայ-թուրքական ռազմական դաշինք (entente)՝ նպատակ ունենալով 10 հազար հայ զինվոր

---

[374] **Ա. Խաչատրյան,** նշվ. աշխ., էջ 101-102;
[375] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 63:
[376] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 114:

ընդգրկել իրենց զորքերի կազմում՝ Անտանտի տերություններ-ի դեմ կռվի նետելու համար այն պահին, երբ մոտենում էր Քառյակ միության երկրների անխուսափելի պարտությունը Առաջին աշխարհամարտում: Այդ առաջարկի հեղինակը, իհարկե, Էնվեր փաշան էր: Սակայն հայկական պատվիրակությունը բանակցությունների ընթացքում դիվանագիտորեն խուսանավեց: «Ոչ մէկ տեսակէտով,- գրում է Ալ. Խատիսյանը,- չէինք կարող ընդունել այս առաջարկը եւ պատրւակ բերելով մեր ժողովրդի ծայրայեղ յոգնածութիւնը, մերժեցինք զայն: Վէհիպ փաշան, սակայն, ցաւով յայտնեց որ այդպիսի դաշինք մը պիտի վերացնէր շատ մը թիւրիմացութիւններ հայերու եւ թուրքերու միջեւ»[377]: Կոստանդնուպոլսի դիվանագիտական գործընթացներում (1918 թ. հունիս-հոկտեմբեր), որոնք, փաստորեն, Բաթումի բանակցությունների շարունակությունն էին, թուրքերը դարձյալ շրջանառեցին այդ առաջարկը, սակայն հայկական պատվիրակությունը (նախագահ՝ Ավ. Ահարոնյան, անդամներ՝ Ալ. Խատիսյան, Մ. Պապաջանյան) դարձյալ դիվանագիտորեն խուսանավեց՝ հաշվի առնելով դրա խիստ վնասակար և անդառնալի հետևանքները հայության համար:

Հարկ է նշել՝ որքան մոտենում էր Քառյակ միության երկրների անխուսափելի պարտությունը Առաջին աշխարհամարտում, այնքան մեծանում էր օսմանյան Թուրքիայի՝ որպես Հայոց ցեղասպանություն ու հայրենազրկություն իրագործողի և վերջինիս դաշնակից կայսերական Գերմանիայի՝ որպես Հայոց ցեղասպանության մեղսակցի՝ պատասխանատվության կանչվելու մտավախությունը: Եվ ամենին էլ պատահական չէր, որ օսմանյան կառավարությունը, ճանաչելով հայկական

---

[377] **Ալ. Խատիսեան,** նշվ. աշխ., էջ 71:

անկախ պետությունը, կարծում էր, թե իբր լուծել է Հայկական հարցը և դրանով նպատակ էր հետապնդում մի կողմից հայերի հետ համերաշխ մտնելու միջազգային վեհաժողով, իսկ մյուս կողմից մոլորության մեջ գցելու համաշխարհային հասարակական կարծիքը Հայոց ցեղասպանության և հայրենազրկության մասին: Հասկանալի է, թե ինչու Հայոց ցեղասպանության և հայրենազրկության գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ Թալեաթ փաշան, Բեռլինում Հ. Օհանջանյանի հետ հանդիպման ժամանակ ասում էր. «Տաճկաստան ել կան հայեր, **պէտք է լինել հայերի հետ բարեկամական յեվ հաշտ հարաբերությունների մէջ յեվ պէտք ե մեր խնդիրները մենք ինքներս մեր մեջ վերջացնենք, որ ապագայում վոչ վոք չը խառնուի մեր փոխադարձ հարաբերությունների մեջ – ակնարկ ապագա համաշխարհային կոնգրեսի վրա**»[378]:

Իրողություն է, որ հայերի օգտին Գերմանիայի պաշտոնական և ոչ պաշտոնական զգուշացումները օսմանյան ռազմաքաղաքական ղեկավարությանը հիմնականում ունեին իրենց շահերից բխող շարժառիթներ. դրանով փորձում էին ընդամենը ձերբազատվել Հայոց ցեղասպանության մեղսակցության փաստից: Բ. Բորյանը* իր պատմադիվանագիտական արժեքավոր աշխատությունում բազմաթիվ անհերքելի և հարուստ փաստերի ու նյութերի խորը և անաչառ հետազոտությամբ եզրակացրել է, որ հայերի գլխովին կոտորածը թելադրված է եղել գերմանական կայսերապետության շահերով, քանզի առանց գերմանացիների իմացության և համաձայնության թուրքերը չէին ձեռնարկի ոչ մի քայլ, իրենց գործողու-

---

[378] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 61:

* Բագրատ Հարությունի Բորյան (1882-1937) – հեղափոխական, գիտնական, պետական գործիչ և դիվանագետ:

թյուններում նրանք ինքնուրույն չէին, և նրանց յուրաքանչյուր քայլը համահունչ է եղել գերմանական կայսրապետության շահերին[379]: Գերմանացի դիվանագետները անթաքույց հասկացնում էին Տրապիզոնի, Բաթումի, Բեռլինի և Կոստանդնուպոլսի հայ պատվիրակներին, որ Հարավային Կովկասում ստեղծված աշխարհաքաղաքական բարդ պայմաններում չեն կարող հանուն հայերի վտանգել իրենց հարաբերությունները դաշնակից Թուրքիայի հետ: Մինչդեռ հայ դիվանագետները և հայ քաղաքական գործիչները այդ պայմաններում չկարողացան արագ և ճիշտ գնահատել Գերմանիայի և նրա դաշնակից օսմանյան Թուրքիայի միջև խորը հակասությունների ու շահերի բախումից սպասվող ոչ նպաստավոր հետևանքները հայության համար և շարունակեցին էլ ավելի ապավինել Գերմանիայի անպտուղ աջակցությանը: Բայց և այնպես գերմանական կողմը իր օգնության դիմաց հայերից պահանջում էր, որ հրաժարվեն Հայոց ցեղասպանության մեջ իր մեղսակցության մասին քարոզչությունից: Օրինակ. այդ հարցի շուրջ Բեռլինում Գերմանիայի արտաքին գործերի նախարարի օգնական Հ. Գյոպտերտի խնդրանքով 1918 թ. հուլիսին տեղի ունեցավ հանդիպում Ավետիք Իսահակյանի հետ: «Գերմանական շրջաններում, - գրում է հայ մեծանուն բանաստեղծը,- այն կարծիքն է տարածված, թե նվաստիս ղեկավարությամբ Շվիցերիայում մղվում է հակագերմանական պրոպագանդ, սակայն ճշմարտությունը այդ չէ, այլ այն, որ ես, որ մի քանի ընկերներով հիմնել ենք «**Հայ մամուլի գործակալություն**» մամուլին ստույգ լուրեր տալու եւ հերքելու ստեղծած, միտումնավոր լուրերը: .... Խոսակցության մեջ հայտնեց (Հ. Գյոպտերտը - Գ.

---

[379] Տե՛ս **Բ. Բորեան,** Հայաստան. միջազգային դիւանագիտութիւնը եւ ԽՍՀՄ-ը, Հ. 1, Երևան, 2018, էջ 518:

Պ.), թե ավստրիական կառավարությունից հենց հիմա նամակ ստացա, որով պատրաստակամություն են հայտնում հայերին օգնելու: (Օգնության ի՞նչ ձեւի մասին չասեց): Իմ հարցին, թե անհրաժեշտ է զորք ուղարկել Հայաստան, նա պատասխանեց, թե մենք մարդու կարիք ունենք, ամեն մի մարդ մեզ պետք է: Ես պատասխանեցի, թե մեկ է, դուք Վրաստան զորք եք ուղարկել եւ մեզ ո՛չ, դա արդեն շատ վատ տպավորություն է թողնելու հայ ժողովրդի վրա, եւ որն ավելի, եւ շա՛տ ավելի կարիք ունի:

.... Հետո դարձավ գլխավոր խնդրին, որի համար ինձ տեսնել էին կամեցել: Ասաց, թե մեր սրտին մոտ է հայ ժողովրդի վիճակը, մենք պիտի անենք, ինչքան որ կարող ենք, չնայելով, որ **դուք հայերդ, պրոպագանդ եք արել, եւ անում եք ու ողջ աշխարհը մեր դեմ գրգռում կոտորածների պատճառով:**

Ես պատասխանեցի, … թե մեզանից անկախ գոյություն ունի ամբողջ ուժեղ պրոպագանդ ավելի Ձեր դեմ, քան թուրքերի՝ Հայոց սարսափելի ջարդերի պատասխանատվության մեջ. Մենք չենք կարող ազդել ամերիկական-անգլիական-ֆրանս-իտալական մամուլի վրա, օր չի անցնում, որ Հայկական ջարդերի մասին չգրվի եւ ձեզ չմեղադրվի. մենք մի բան կարող ենք անել – այն, որ եթե Դուք, որ ամենակարող եք, ճանաչել տաք թուրքին բրեստյան սահմանները, եւ ջարդերը դադարեն, այն ժամանակ մենք կարող ենք մեր կողմից ամեն ջանք գործ դնել ցույց տալով Ձեր դրական աջակցությունը հայ պետություն կազմելու մեջ, ազատելու մեզ վերջնական քայքայումից, եւ դրանով կնպաստեն **պրոպագանդայի դադարեցման**»[380]:

---

[380] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 656, թ. 121- 122:

Զրույցից հետո Ավետիք Իսահակյանը միանգամայն համոզիչ ներկայացնում է իր գնահատականը. «Իմ տպավորությունն այս ամենից, ում որ տեսանք ու խոսեցինք, այն է, որ Գերմանիան ուզում է, ցանկանում է օգնել մեզ եւ ընդունել տալ թուրքերին բրեստյան սահմանագիծը, սակայն դրա իրագործման համար, եթե թուրքերը հակառակեն, չի դիմելու ոչ մի խիստ միջոցի, ոչ թե վախենալով, թե Թուրքիան կանցնի թշնամիների կողմը (հաստատ կասեմ, որ Համաձայնությունը (Անտանտի – Գ. Պ.) չի ընդունի նրան իր ծոցը. պետք չունի. նա ուրիշ հաշիվներ ունի), այլ ուղղակի չուզենալով իր 4 տարվա դաշնակցի հետ սառել, վատանալ: **Հայերին օգնելու մեջ նա (Գերմանիան – Գ. Պ.) միմիայն մի շահ ունի – մորալ, բարոյական, որը սակայն, այնքան չի կշռում, դժբախտաբար, քան մարգանեցը կամ նավթը: Բայց այդ նավթը կամ մարգանեցը նրան չտվին ու չեն տա հատուցումը մի չնչին մասի այն հսկա վնասի, որն ստացան հայկական ջարդի պատճառով**»[381]:

Օսմանյան Թուրքիան երեք անկախ հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի գոյությունը դիտում էր իբրև պատնեշ, բուֆեր՝ Ռուսաստանից պաշտպանվելու համար: Թալեաթ փաշան ասում էր, որ իրենք երաշխավորել են այդ անկախ պետությունների գոյությունը՝ նպատակ ունենալով նաև, որ Թուրքիան այլևս և ոչ մի դեպքում հյուսիսային հարևան Ռուսաստանի հետ չունենա ընդհանուր սահման[382]: Բաթումում ստորագրվելիք հաշտության դաշնագրով օսմանյան կառավարությունը ձգտում էր Հայաստանի կենսագործունեության գլխավոր լծակները առնելով իր վերահսկո-

---

[381] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 656, թ. 122- 123:

[382] Տե՛ս **М. Туманян,** Дипломатическая история Республики Армения (1918-1920 гг.), Ер.: Национальный архив Армении, 2012, էջ 58:

ղության տակ՝ ապահովելու իրենց անվտանգությունը Ռուսաստանից, որը ոչ հեռավոր ապագայում կարող էր իրական սպառնալիք դառնալ իրենց սահմանների համար: 1918 թ. հունիսին Կոստանդնուպոլսում Հայոց ցեղասպանության և հայրենազրկության գլխավոր կազմակերպիչներից Բահաեդդին Շաքիր բեյը հայ պատվիրակության անդամների հետ հանդիպման ժամանակ խոստովանել էր. «**Երիտասարդ թիւրքերի կառավարութիւնը անկարող եղաւ հայկական հարցը տեղահանութիւններով և կոտորածներով լուծել եւ ստիպուած է ճանաչել ներկա Հայաստանի անկախութիւնը ու պիտի ձգտի այդ փոքրիկ պետութիւնից պատուար ստեղծել Ռուսաստանի դէմ**»[383]:

Այսպիսով, **հայոց անկախ պետության ընդունումը և ճանաչումը ոչ թե օսմանյան Թուրքիայի «գթասրտության» դրսևորումն էին հայերի նկատմամբ, այլ ընդամենը պայմանավորված էին նրա շահերից բխող բազմազան ու բազմաբնույթ շարժառիթներով և հեռահար նպատակներով:**

Այժմ վերադառնանք Բաթումի դիվանագիտական բանակցություններին: Պետք է նկատել, որ հայ պատվիրակության անդամները, Նոթաբենից վերադառնալով Բաթում, հունիսի 3-ին նախաձեռնեցին ավարտել նախապատրաստական աշխատանքները՝հաջորդ օրը՝ հունիսի 4-ին, ստորագրելու հայ-թուրքական հաշտության դաշնագրի հիմնօրինակը՝ օսմանյան Թուրքիայի համար նպաստավոր պայմաններով:

Նույն օրը երկու պատվիրակությունների միջև պայմանավորվածություն ձեռք բերվեց Երևանում և Կոստանդնուպոլ-

---

[383] Բժ. **Ա. Բաբալեան,** Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959, էջ 19:

սում դիվանագիտական և ռազմական ներկայացուցիչների փոխանակման շուրջ[384]: Օգոստոսի սկզբին Մեհմեդ-Ալի փաշան (ծագումով՝ բոսնիացի) նշանակվեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը կից դիվանագիտական և ռազմական ներկայացուցիչ, իսկ Ֆ. Թախտաչյանը՝ օսմանյան Թուրքիայում:

Ի դեպ, Հալիլ բեյը անակնկալ մատուցեց հայկական պատվիրակության անդամներին՝ պահանջելով անկախ Հայաստանին գրավոր պարտավորվել, որ չի մտնի դիվանագիտական հարաբերությունների մեջ Թուրքիայի հետ պատերազմող տերությունների հետ[385]: Հալիլ բեյի հետ բանակցելիս Ալ. Խատիսյանը խնդրեց վերացնել այդ պարտավորությունը Հայաստանի համար, քանի որ Վրաստանի նկատմամբ նման արգելքը բացակայում է: Հալիլ բեյը պատասխանեց, որ, միևնույնն է, Անգլիան և Ֆրանսիան ներկայացուցիչ չեն ունենա Վրաստանում, քանի որ վերջինիս հովանավորում է Գերմանիան, իսկ Թուրքիան այնտեղ զորք կպահի: Այնուհետև հավելեց, որ անգամ ինքը չի կարող այդ կետը հանել և խորհուրդ չի տալիս այդ պահանջը մերժել, քանի որ Հայաստանի անկախության ընդունման շուրջ այս երեք շաբաթում տարակարծությունները շատ էին Կոստանդնուպոլսում, ուստի պետք է այն փայփայել[386]: Ալ. Խատիսյանը գրում է. «Յետագային իմացայ, որ երբ մենք բանակցութիւններ կը վարէինք Պաթումի մէջ, կատաղի վէճեր տեղի ունեցեր են Պոլսոյ երիտասարդ թուրքերու կոմիտէին մէջ այդ մասին, թէ ո՛ր աստիճան նպատակայարմար է Կովկասի մէջ պահպանել հայկական պետութիւն մը:

---

[384] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 82, 86:
[385] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 115:
[386] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 115, գ. 11, թ. 79:

Այս մասին ինձ պատմեց Պոլսոյ մէջ, 1918 թ. աշնան, մեծ վէզիր Թալէաթ փաշան հետեւեալ խօսքերով. «Էնուեր փաշան կը գտներ, որ քանի հայերը եղած են և պետք է միշտ ըլլան մեր թշնամիները ու հանգիստ չպիտի թողուն մեր Անատոլուի նահանգները, աւելի լաւ է, որ հիմնապէս բնաջնջուին անոնք նաև Կովկասի մէջ, ինչպէս եղած են Թուրքիոյ մէջ: Իսկ փոքրիկ Հայաստան մը Կովկասի մէջ պատճառ պիտի դառնայ, որ միշտ ձգտի ընդարձակելու իր սահմանները և դառնայ յաւիտենական վտանգ Թուրքիոյ համար: Իսկ ես, շարունակեց Թալէաթ, պատասխանեցի, որ այդ ծրագիրը անկարելի ծրագիր մըն է թեկուզ այն պատճառով, որ այսպէս թէ այնպէս երկու միլիոնի չափ ողջ մնացած հայեր կան այժմ և անհնար է զանոնց բոլորն ալ ոչնչացնել, ուստի աւելի լաւ է, որ անոնց գոհացում տրուի, որուհետեւ եթէ նոյնիսկ 100 000 հայեր մնան աշխարհի երեսին, մեզ հանգիստ չպիտի տան երբեք: Եվ վերջապես, փոքրիկ Հայաստան մը ստեղծելով՝ մենք լուծած կըլլանք հայկական հարցը և այդպես կը ներկայանանք հաշտութեան միջազգային խորհրդաժողովին»»[387]:

Մեջբերելով Թալեաթի այս խոսքերը՝ Ալ. Խատիսյանն ավելացնում է. «Թալէաթ փաշայի տեսակէտը յաղթեր էր և թուրքերը ստեղծեցին փոքրիկ Հայաստանը: Ատկէ ետքը Էնվէր փաշան օր մը պարծենալով ըսաւ ինձ. «Ես լուծեցի շատ դժուարին խնդիր մը, ստեղծեցի Հայաստանը, գոհացում տուի հայերու ազգային պահանջներուն, բայց այդ ըրի այնպիսի ձեւով մը, որ չզոհեցի թրքական հողերէն ոչ մէկ թիզ իսկ»»[388]:

---

[387] **Ալ. Խատիսեան,** նշվ. աշխ., էջ 72:

[388] Նույն տեղում:

Այնուհետև Ալ. Խատիսյանը հավելում է, որ, այնուամենայնիվ, Թուրքիայի հետ պատերազմող տերությունների հետ դիվանագիտական հարաբերությունների արգելման հարցը մնաց փոխզիջումային: Հալիլ բեյը համոզում էր հայկական պատվիրակությանը, որ պարտավորագրի ընդունումն ընդամենը ապացույց կլինի, որ հայերը օրինապահ են[389]:

Այսպիսով, հունիսի 3-ին օսմանյան Թուրքիայի ճնշման ներքո ստորագրելով այդ փաստաթուղթը՝ Ալ. Խատիսյանը ստանձնեց որոշակի պարտավորություն. «Հայաստանի հաշտության պատվիրակությունը, Ձերդ գերազանցության հետ անձնական բանակցության հիման վրա և Օսմանյան կայսրության ու Հայաստանի միջև հաշտության և բարեկամության դաշնագրի կնքման կապակցությամբ պատիվ ունի հաստատելու հետևյալը. **Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է ամբողջ ընդհանուր պատերազմի ընթացքում, ոչ մի դիվանագիտական հարաբերություն չունենալ Օսմանյան կայսերության հետ պատերազմական վիճակում գտնվող պետությունների հետ**»[390]: Ինչպես երևում է այդ փաստաթղթից, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում էր մի կողմից Առաջին աշխարհամարտի ողջ ընթացքում դիվանագիտական հարաբերություն չունենալ ոչ միայն Անտանտի տերությունների, այլ նաև Ռուսաստանի հետ, թեև վերջինս 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով դուրս էր եկել պատերազմից: Ավելին՝ պար-

---

389 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 115, գ. 11, թ. 79:

390 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 32, թ. 6, գ. 23, թ. 76, **Գ. Պետրոսյան,** Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ. հունիս-նոյեմբեր), Երևան, 2004, էջ 31:

տավորագրի տրամաբանական ոգուց բխող նոր պարտավորություններ ամրագրվեցին Օսմանյան կայսրության և Հայաստանի Հանրապետության միջև հունիսի 4-ին կնքված դաշնագրին կից ժամանակավոր լրացուցիչ հավելվածի 2-րդ հոդվածում, որում ասվում էր. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է իր տերիտորիայից անհապաղ հեռացնել այն երկրների սպաներին և քաղաքացիական աստիճանավորներին, որոնք գտնվում են Թուրքիայի կամ նրա դաշնակիցների հետ պատերազմի վիճակի մեջ, ինչպես և նշված պատերազմող երկրների դաշնակիցներին և աստիճանավորներին: Բացի դրանից, ընդհանուր պատերազմի ամբողջ ժամանակամիջոցում Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր ծառայության չի ընդունի ոչ մի սպայի և առհասարակ ոչ ոքի՝ վերոհիշյալ պատերազմող երկրներից կամ նրանց դաշնակիցներից»[391]: Առաջ անցնելով նշենք, որ Բաթումի հաշտության դաշնագիրը և նրան կից լրացուցիչ հոդվածները ուժի մեջ էին մտնում ստորագրման պահից: Մինչդեռ դրանք միջազգային իրավունքի տեսանկյունից իրավական ուժ չունեին, քանի որ այն չէին վավերացրել ո՛չ օսմանյան և ո՛չ էլ Հայաստանի Հանրապետության կառավարությունները, ավելին՝ չէին ճանաչվել նաև Քառյակ միության երկրների, Անտանտի, Խորհրդային Ռուսաստանի և այլ երկրների կողմից:

Հայաստանի Հանրապետության գոյության առաջին փուլում (1918 թ. հունիս-նոյեմբեր)՝ մինչև օսմանյան Թուրքիայի վերջնական պարտությունն Առաջին աշխարհամարտում, թե՛ հունիսի 3-ի Բաթումի պարտավորագիրը և թե՛ հունիսի 4-ի

[391] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 11, թ. 120:

հայ-թուրքական հաշտության դաշնագիրն ու նրան կից լրացուցիչ հավելվածի 2-րդ հոդվածի պահանջները լուրջ խոչընդոտներ հարուցեցին երկրի համար՝ ինքնուրույն և ազատ արտաքին քաղաքականություն և դիվանագիտություն իրականացնելու, մասնավորապես անկախ Հայաստանի համար ավելի քան **կենսական և անվտանգային նշանակություն ունեցող՝ Ռուսաստանի խորհրդային և ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների հետ նորմալ հարաբերություններ հաստատելու**[392]**:** Ազգային հերոս Անդրանիկ Օզանյանը իրավացիորեն նշում էր. «**Շարունակում էր հայության համար կործանարար համարել Ռուսաստանից նրա անջատ գոյությունը»**[393]:

Հունիսի 3-ի երեկոյան ավարտվեցին նախապատրաստական բոլոր աշխատանքները և երկու պատվիրակությունների վերջնական համաձայնությունները՝ հայ-թուրքական հաշտության դաշնագրի հիմնօրինակը և դրան կից լրացուցիչ երեք հավելվածները ստորագրելու համար:

1918 թ. հունիսի 4-ին՝ երեքշաբթի օրը, Բաթումում հանդիսավոր պայմաններում ստորագրվեց «Հաշտության և բարեկամության դաշնագիր Օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև»[394] (ֆրանսերենով): Օսմանյան Թուրքիայի կողմից այն ստորագրեցին թուրքական պատվիրակության նախագահ Հալիլ բեյը, Վեհիբ փաշան, իսկ Հայաստանի Հանրապետության անունից՝ Ալ. Խատիսյանը (պատվիրակության նախագահ), Հ. Քաջազնունին և Մ. Պապաջանյանը:

---

[392] Տե՛ս մանրամասն **Г. Петросян**, Отношения Республики Армения с Россией (1918 -1920 гг.), Ереван, 2012, էջ 29-106:

[393] **Հր. Սիմոնյան,** Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, էջ 162:

[394] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 101-103:

Նույն օրը հայկական պատվիրակության անդամները հեռագիր հղեցին Ամենայն հայոց վեհափառին. «Պատիվ ունենք հայտնելու, որ այսօր ժամը մեկն անց կեսին, մեր կողմից խաղաղության համատեղ պայմանագիր է կնքվել թուրք պատվիրակներ Վեհիբ փաշայի ու Հալիլ բեյի հետ: Վեհիբ փաշան երեկ երեկոյան կարգադրեց դադարեցնել ռազմական գործողությունները: Էջմիածինը մնում է Հայաստանի տարածքում, Երևանը՝ մայրաքաղաք, վաղը չէ մյուս օրը կվերադառնանք Թիֆլիս և այնտեղից մանրամասն զեկուցում կներկայացնենք»[395]:

Նույն օրը՝ երեկոյան ժամը 5-ին, Հալիլ բեյի նախագահությամբ գումարվեց մեկ ժամ տևած լիագումար նիստ՝ հայ-թուրքական հաշտության ու բարեկամության դաշնագրի և երեք հավելվածների պաշտոնական փոխանակման և կարգավորումների արձանագրությունը ստորագրելու համար: Նիստին մասնակցում էին թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, պատվիրակության ամբողջ կազմը, իսկ հայկական կողմից՝ վերոհիշյալ երեք անձինք:

Նիստի բացման խոսքում Հալիլ բեյը նշեց. «Այսօր մեր ստորագրություններն ենք դնում սկզբնական արձանագրության տակ, **որ միջազգային հասարակության մեջ տեղ է բացում Հայաստանի Հանրապետության համար, որ ճանաչում է Հայաստանի գոյությունն ու անկախությունը Կովկասում նոր կազմված պետությունների շարքում:**

Ես չեմ ուզում կանգ առնել և հիշել պայքարի այն ցավալի դեպքերը, որ տեղի ունեցան մեր և հայերի միջև: Ես ուզում եմ միայն նշել, որ վերջին ժամանակներս Օսմանյան կայսերա-

[395] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 177, թ. 9:

կան կառավարությունը մեծ հաստատակամությամբ տիրեց իր զգացումների վրա և ինձ հանձնարարեց ստորագրելու մի փաստաթուղթ, որով ճանաչվում է Հայկական կառավարության գոյությունը: Վստահ եմ, որ հայ ժողովուրդը Օսմանյան կայսերական կառավարության այս որոշման կարևորությունը լավ կըմբռնի, և համաձայնության մի նոր էրա կբացվի մեր ժողովրդի և Ձեր ժողովրդի միջև»[396]:

Ալ. Խատիսյանն իր պատասխան ելույթում հայերեն (ինքը թարգմանեց ռուսերեն և ֆրանսերեն) նշեց. «Հայաստանը երբեք Թուրքիայի սահմաններում չի ձգտել լրիվ ինքնուրույնության, նա միայն ինքնավարության էր ձգտում, այն էլ Թուրքիայի ամբողջական պետականության ներքո[397]: Հայաստանը, որի անունով պատիվ ունիմ խոսելու, երկար տարիներ շատ զոհողություններ է կրել, որպեսզի ազգային գոյության իրավունք ստանա: Այսօր բացահայտ կերպով այդ իրավունքը ստացավ և մտավ անկախ պետությունների շարքը: Այս մեծ օրը մի հանդիսավոր թվական կհանդիսանա հայերի պատմության էջերում: Թեպետ նոր պետության սահմանները մեծ չեն, բայց հայ ժողովրդի ազատության ու կուլտուրայի սերը, նրա աշխատանքի ընդունակությունը, հույս ունիմ, որ արժանավոր տեղ կապահովեն հարևան պետությունների շարքում: Մենք ուզում ենք, որ կայուն խաղաղություն ու հավիտենական բարեկամություն հաստատվի Օսմանյան կայսերության և Հայաստանի Հանրապետության միջև, և մենք հաստատ համոզված ենք, որ մեր հայ եղբայրները, որոնք հեռացել էին Թյուրքիայից կկարողանան շուտով այնտեղ վերադառնալ և Օսմա-

---

[396] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 160-161:
[397] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 115, (Ալ. Խատիսյանի «Օրագիրը»):

նյան կայսերության ազնիվ քաղաքացիներ դառնալ, որին մենք մաղթում ենք երջանկություն, բարգավաճում և խաղաղություն»[398]:

Երեկոյան ժամը 6-ին՝ լիագումար նիստի ավարտից հետո, տրվեց հանդիսավոր մեծ ճաշկերույթ, որի ավարտից հետո՝ հունիսի 5-ի լուսաբացին, Բաթումում սկսվեց հայ-թուրքական փաստաթղթերի արձանագրության ստորագրումը Հալիլ բեյի և Ալ. Խատիսյանի կողմից: Հայկական պատվիրակությունը հունիսի 6-ին վերադարձավ Թիֆլիս*: Իրականում Հայոց ազգային (կենտրոնական) խորհուրդը դաշնագրի ստորագրումից հետո միայն ձեռնամուխ եղավ Հայաստանի օրենսդիր (Հայաստանի խորհրդի) և գործադիր մարմինների ձևավորմանը:

Այսպիսով, հունիսի 4-ի Բաթումի հայ-թուրքական «Հաշտության և բարեկամության դաշնագիրը» առաջին միջազգային փաստաթուղթն էր, որ ստորագրեցին անկախ Հայաստանի պատվիրակները: Այդ դաշնագրով Հայաստանի Հանրապետությունը առաջին միջազգային իրավական ճանաչումը ստացավ[399]:

Հիմնական դաշնագիրը բաղկացած էր 14 հոդվածներից և երեք լրացուցիչ հավելվածներից*: Ըստ այդ դաշնագրի՝ օսմանյան Թուրքիային էին անցնում ոչ միայն Արևմտյան Հայաս-

---

[398] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 161:

* Ալ. Խատիսյանը փաստում է. «Մենք վերադարձանք Թիֆլիս, բերելով մեզ հետ հաշտութեան դաշինքը, որուն բնագիրը այժմ կը պահուի Էջմիածնի թանգարանի մէջ, իսկ պատճէնը տպուած է երեք լեզուներով՝ ռուսերէն, ֆրանսերէն եւ հայերէն» (տե՛ս «**Հայրենիք**», Բոստոն, 1924, հոկտեմբեր, էջ 100):

[399] Տե՛ս **Ա. Եսայան**, Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920-1922, Երևան, 1967, էջ 34:

* Մենք հանգամանորեն չենք անդրադարձել հունիսի 4-ի դաշնագրի այն հոդվածների լուսաբանմանը, որոնք հանրահայտ են:

տանը, այլև Արևելյան Հայաստանի տարածքի զգալի մասը՝ Շարուր-Դարալագյազը, Նախիջևանը, Սուրմալուն, Կարսը, Կաղզվանը, Սարիղամիշը, Լոռին: Հայաստանին մնում էին Նոր Բայազետի գավառը, Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառների՝ ընդամենը 9 հազար քառակուսի վերստ (մոտ 11 հազար քառ. կմ) կազմող տարածքը[400]: Հայաստանից խլվում էին Ալեքսանդրապոլը և երկաթուղին՝ մինչև Ջուլֆա. հանրապետությանը մնում էր ընդամենը 6 վերստ երկաթգիծ (13 կմ), երկաթուղիների վերահսկողությունը անցնում էր Թուրքիային, իսկ պետական սահմանը անցնում էր Երևանից 7 կմ հեռավորության վրա[401]:

Փաստորեն, թուրքերը Անդրկովկասից զավթեցին 38 հազ. քառ. կմ տարածքը՝ մեկ միլիոն 250 հազար ազգաբնակչությամբ: Դրանից Վրաստանը կորցնում էր 10 հազ. քառ. կմ տարածք՝ 350 հազար բնակչությամբ, Հայաստանի Հանրապետությունը՝ 28 հազար քառ. կմ՝ 900 հազար բնակչությամբ: Թուրքերը Անդրկովկասից խլեցին նրա տարածքի 20,6 տոկոսը և ազգաբնակչության 18,5 տոկոսը[402]:

Ինչպես վերը նշվեց, տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական և տնտեսական հակասությունների ու շահերի բախման պայմաններում համառ պայքար ծավալվեց Բաքվի նավթի գրավման համար երկու դաշնակիցների՝ օսմանյան Թուրքիայի և կայսերական Գերմանիայի միջև: Թուրքա-

---

[400] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 101, **Հ. Ավետիսյան**, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 253:

[401] Տե՛ս նույն տեղը:

[402] Տե՛ս **Д. Завриев**, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947, էջ 70-71, տե՛ս նաև **Ե. Սարգսյան,** Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Երևան, 1994, էջ 56-57:

կան բանակի համար դեպի Ադրբեջան տանող ամենակարճ ճանապարհն անցնում էր Հայաստանի տարածքներով: Ուստի Առաջին աշխարհամարտում Թուրքիայի մոտալուտ պարտության պայմաններում եթե թուրքերը շարժվեին դեպի Բաքու, չէին կարող իրենց հետևում թողնել հայկական թշնամական բանակներ: Հենց այստեղից էլ Օսմանյան կայսրության շտապողականությունը. ընդունելով անկախ Հայաստանի գոյությունը, վերջինիս հետ Բաթումում կնքելով հաշտություն՝ **այդ դաշնագրի ուժով մի կողմից ապահովել իր թիկունքը հայկական զորամիավորումների հարձակումներից, իսկ մյուս կողմից իրավունք վերապահել իրեն խորհրդային Բաքվում ու նրա արվարձաններում տեղակայված հայկական զինյալ ջոկատները զինաթափելու և հեռացնելու տարածաշրջանից:**

Եվ իսկապես, օսմանյան Թուրքիայի՝ վերը նշված ռազմավարական նկրտումները բովանդակող պարտավորությունները պարտադրվեցին Հայաստանի Հանրապետությանը: Եվ ամենևին էլ պատահական չէր, որ այդ դաշնագրի ստորագրումից անմիջապես հետո Վեհիբ փաշան Հայաստանի Հանրապետության կառավարությունից պահանջեց անհապաղ կատարել դաշնագրին կից ժամանակավոր լրացուցիչ հավելվածի 1-ին հոդվածի պարտավորությունը. «Հայաստանի Հանրապետության կառավարությունն անհապաղ ձեռնամուխ կլինի իր զորքերի զորացրմանը: Այդ զորքերի քանակը, ինչպես և այն ռազմական օկրուգները, որոնց մեջ դրանք կլինեն, կորոշվեն՝ Օսմանյան կայսերական կառավարության հետ համաձայնեցնելով, ընդհանուր պատերազմի ամբողջ ժամանակաշրջանի համար»[403]:

---

[403] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 11, թ. 120:

Ուշագրավ է, որ այդ հոդվածից բխող տրամաբանական այլ պարտավորություն ամրագրվեց նաև հիմնական դաշնագրի 5-րդ հոդվածում, որը գրեթե ուշադրության չի արժանացել ուսումնասիրողների կողմից: Համաձայն դրա՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է գործուն կերպով հակազդել, որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի և չզինվի իր տերիտորիայի սահմաններում, ինչպես և զինաթափել ու ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թաքնվել այնտեղ»[404]:

Բացի դրանից՝ նույն դաշնագրի 11-րդ հոդվածը նախատեսում էր. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի սույն պայմանագրի ստորագրումից հետո Բաքու քաղաքից էվակուացվեն այնտեղ գտնվող բոլոր հայկական զինվորական ուժերը, ինչպես և ապահովել, որ այդ էվակուացումը առիթ չտա որևէ ընդհարման»[405]:

Ինչպես տեսնում ենք, **Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստիպված էր ստանձնել եռակի պարտավորություն՝ նախ ցրել հայկական զորքը՝ թողնելով ընդամենը 1200 զինվոր... մի կողմից վերջ դնել բոլոր ռազմական գործողություններին թուրքական բանակի թիկունքում, իսկ մյուս կողմից, ինչը շատ ավելի կարևոր էր, հարկադրել հայկական զորաջոկատներին հետ քաշվել խորհրդային Բաքվից:**

Փաստորեն, դաշնագրի և նրան կից լրացուցիչ հավելվածի հոդվածների իրավունքով Վեհիբ փաշան պահանջեց Հայաս-

---

[404] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 102, Հայաստանի միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, էջ 534:

[405] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 103:

տանի Հանրապետության կառավարությունից անհապաղ լուծարել Անդրանիկի զորամասը և վտարել նրան Հայաստանից: Ազգային հերոսը, չընդունելով Բաթումի դաշնագիրը և Հայաստանի կառավարությունը, իր զորքով հեռացավ հանրապետության տարածքից[406]:

Բաթումի հաշտության դաշնագիրը երկար չգոյատևեց՝ պայմանավորված Առաջին աշխարհամարտում օսմանյան Թուրքիայի և նրա դաշնակիցների վերջնական պարտությամբ: Առաջին Հանրապետությունը թևակոխեց իր գոյության երկրորդ փուլը (1918 թ. դեկտեմբեր - 1920 թ. ապրիլ): Այս փուլում Հայաստանի Հանրապետությունը, քաղաքական նոր իրադրության շնորհիվ դուրս գալով շրջափակումից, առժամանակ ազատ էր տնօրինելու իր արտաքին քաղաքական հարաբերությունները ոչ միայն իր հարևանների, այլ նաև Արևմուտքի, քաղաքացիական պատերազմի հորձանուտում գտնվող Ռուսաստանի և այլ պետությունների հետ:

Համաձայն Մուդրոսի զինադադարի 11-րդ հոդվածի (1918 թ. հոկտեմբերի 30-ի)՝ թուրքական զորքերը մինչև դեկտեմբերի սկիզբ պետք է հեռանային Անդրկովկասից: 1919 թ. ապրիլի վերջին հայկական տարածքներն աստիճանաբար ընդարձակվեցին՝ հասնելով մոտ 70 հազար քառակուսի կիլոմետրի՝ ներառելով գրեթե ամբողջ Արևելյան Հայաստանը: Բայց և այնպես, այս փուլում ևս հանրապետության արտաքին քաղաքականության և դիվանագիտության ոլորտում սպասվում էին նոր փորձություններ ու ծանր օրեր:

---

[406] Տե՛ս **Հր. Սիմոնյան**, նշվ. աշխ., հ. Բ. էջ 163-165:

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
# ՀԱՅՈՑ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՈՒՄԸ. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

## 1. Արտաքին գործերի նախարարության ստեղծումը

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում հայ-թուրքական «Հաշտության և բարեկամության դաշնագիրը» ստորագրելուց հետո հունիսի 6-ին հայկական պատվիրակությունը վերադարձավ Թիֆլիս: Փաստորեն, Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը դաշնագիրը ստորագրելուց հետո միայն ձեռնամուխ եղավ Հայաստանի Հանրապետության իշխանության կենտրոնական մարմինների ձևավորմանը: Իշխանության խնդիրը ձգձգվել էր ոչ այնքան ներքաղաքական վեճերի, որքան արտաքին հանգամանքների պատճառով:

Հունիսի 7-ին սկսվեցին Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդի շարունակական նիստերը՝ Ավ. Ահարոնյանի նախագահությամբ, որոնցում քննարկվեցին Հայաստանի անդրանիկ օրենսդիր (խորհուրդ, պառլամենտ) և գործադիր (կառավարություն) մարմինների ձևավորման հարցերը: Առաջին օրը երկարատև ու բուռն քննարկումների արդյունքում Խորհուրդը որոշեց Հովի. Քաջազնունուն (Ռուբեն Իգիթխանյան) ընտրել Հայաստանի Հանրապետության կառավարության նախագահ* (վարչապետ) և նրան հանձնարարել կազմել ժա-

* Հովի. Քաջազնունին պաշտոնավարեց 1918 թ. հունիսի 7-ից մինչև 1919 թ. օգոստոսի 7-ը, սակայն փաստացի՝ մինչև 1919 թ. փետրվար, որովհետև Հայաստանի խորհուրդը 1919 թ. փետրվարի 4-ին ընդունեց օրենք՝ նրան

մանակավոր կառավարություն կոալիցիոն (դաշնագրային) սկզբունքով՝ անձերի ընտրությունը վերապահելով նրան[407]: Որոշվեց նաև Հայոց ազգային կենտրոնական խորհրդին ժամանակավորապես վերապահել օրենսդիր մարմնի (Հայաստանի Հանրապետության խորհուրդ) լիազորություններ և Թիֆլիսից տեղափոխել Երևան: Հունիսի 8-ին «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության Թիֆլիսի ակումբում Ալ. Խատիսյանն իրազեկեց. «Անկախ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը կլինի Երևանը, ուր և շուտով տեղափոխվելու է հայկական կառավարությունը»[408]:

Այդ օրը Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նիստում վարչապետ Հովի. Քաջազնունին հայտնեց, որ կառավարությունը ունենալու է հետևյալ կառուցվածքը՝ 1) ներքին գործերի, լուսավորության, պարենավորման, 2) արտաքին գործերի, 3) զինվորական, ճանապարհների հաղորդակցության, 4) ֆինանսների, առևտրի և արդյունաբերության, 5) արդարադատության, 6) աշխատանքի, երկրագործության և 7) խնամատարության և հասարակական աշխատանքների նախարա-

---

գործուղել Եվրոպա և Ամերիկա՝ հաց, պարեն և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ հայթայթելու համար:

1919 թ. փետրվարի 13-ին Հայաստանի խորհրդում ընթերցվում է Հովի. Քաջազնունու հայտարարությունը, որ գործուղում մեկնելու պատճառով մինչև Խորհրդի որոշումը իրեն փոխարինող է նշանակում ներքին գործերի նախարար Ալ. Խատիսյանին (տե՛ս «Զանգ» լրագիր, Երևան, 26 փետրվարի, 1919): **Իրականում Հովի. Քաջազնունին մեկուսացվեց պետական կառավարման գործընթացից:**

[407] Տե՛ս «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Կազմող, առաջաբանի և ծանոթագր. հեղինակ՝ Հ. Կ. Սուքիասյան, խմբ.՝ Ա. Ս. Վիրաբյան, Կ. Հ. Խաչատրյան, Երկրորդ լրացված և բարեփոխված հրատ., Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2009, էջ 61:

[408] Նույն տեղում, էջ 62:

ություններ[409]: Այնուհետև վարչապետը Խորհրդին ներկայացրեց իր մտահոգությունները՝ նշելով, որ մի շարք հանգամանքների պատճառով իրեն չի հաջողվել կազմել ամբողջական կոալիցիոն կառավարություն*, ուստի որոշել է առայժմ բավարարվել այդքանով՝ առաջնահերթություն տալով ռազմական ու արտաքին գործերի նախարարություններին, իսկ մնացած նախարարական պորտֆելների ձևավորումը հետաձգել մինչև Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը կտեղափոխվի Երևան և այնտեղ վերջնականապես կկազմավորվի ամբողջ կառավարությունը[410]:

Ըստ Հովհ. Քաջազնունու մեկնաբանության՝ հանրապետության կառավարության համակարգում այդ երկու առանցքային նախարարությունները ինքը «… կազմել է գործնական անհրաժեշտությունից դրդված… Մեր դեկլարացիան հաշտության դաշնագիրն է»[411] (1918 թ. հունիսի 4-ի Բաթումի հայ-թուրքական դաշնագիրը): Ճիշտ է՝ Բաթումում ստորագրվել էր հաշտության դաշնագիր, սակայն օսմանյան Թուրքիան շարունակում էր մնալ սպառնալիք նորանկախ հայկական պետության կայացման համար: Ինչպես նշում է ՀՅԴ պաշտոնա-

---

[409] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 251-252:

* Հովհ. Քաջազնունին բանակցությունների մեջ մտավ Հայ ժողովրդական և Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Երկուսն էլ հրաժարվեցին մտնել կոալիցիոն կառավարության կազմ: Հայ ժողովրդական կուսակցությունն ակնկալում էր պատասխանատու պորտֆելներ, սակայն մերժվեց Հայոց ազգային կենտրոնական խորհրդի կողմից: 1918 թ. հունիսի 27-ին Կենտրոնական խորհուրդը Հովհ. Քաջազնունուն հանձնարարեց Հայաստանի անդրանիկ կառավարությունը կազմել ոչ թե կոալիցիոն սկզբունքով, ինչպես որոշված էր, այլ միայն ՀՅԴ անդամներից (տե՛ս «Հորիզոն» լրագիր, Թիֆլիս, 30 հունիսի 1918 թ.):

[410] Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս), էջ 69-66:

[411] Նույն տեղում, էջ 66:

կան «Զանգ» լրագիրը 1918 թ. հունիսի 11-ի խմբագրականում, «Գաղտնիք և անսպասելի չէ, որ Օսմանյան կայսրությունը նորից դրժի իր խոստումը. կնքված հաշտությունը վերաքննելու պատրվակով մեր ֆրոնտում ուժերի այնպիսի փոխհարաբերություն ստեղծվի, որ նոր հարձակումը թշնամու կողմից և մեր պարտությունը լինի անխուսափելի… այսօրվա հրամայական պահանջն է՝ ուժեղացնել ֆրոնտը, ունենալ կազմակերպված բանակ՝ հետագա անակնկալների դիմացն առնելու»[412]: Աներկբա է՝ այդ առանցքային նախարարությունների ստեղծումը օրվա անհետաձգելի հրամայականն էր:

Այսպիսով, դժվար չէ նկատել, որ վարչապետի մտահոգությունները պայմանավորված էին Հայաստանի աշխարհաքաղաքական բարդ իրավիճակով և երկրի առջև ծառացած դժվարագույն խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Ուշագրավ է, որ հունիսի 11-ին Օսմանյան կայսրության արդարադատության և արտաքին գործերի նախարար, Բաթումի թուրքական պատվիրակության նախագահ Հալիլ բեյի հրավերով[413] Թիֆլիսից հայկական պատվիրակություն էր ուղևորվելու Կոստանդնուպոլիս՝ Թուրքիայի և նրա դաշնակից պետությունների (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա) հետ մասնակցելու խորհրդաժողովին՝ Կովկասի նոր անկախ հանրապետությունների և Օսմանյան կայսրության միջև առկա մնացած բոլոր խնդիրները լուծելու համար[414]: Իրականում դա Բաթումի դիվանագիտական բանակցությունների շարունակությունն էր Կոստանդնուպոլսում:

---

412 «Զանգ» լրագիր, Երևան, 11 հունիսի, 1918 թ.:
413 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 116:
414 Տե՛ս **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, Փարիզ, 1928, էջ 157:

Հարկ է նշել, որ հայկական պատվիրակությունը Կոստանդնուպոլիս էր մեկնելու հայ-թուրքական դաշնագիրը վերանայելու, այն է՝ ամրագրված սահմանները համապատասխանեցնելու Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմաններին, ինչպես նաև հարյուրհազարավոր հայ փախստականների դրությունը բարելավելու ակնկալիքով[415]: Ուստի անհրաժեշտ էր նորանկախ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ստեղծումով **իրավականորեն** ժամանակին ամրագրել նաև հայկական պատվիրակության **պետության** մակարդակով մասնակցությունը Կոստանդնուպոլսում կայանալիք բանակցություններին:

Ինչպես տեսնում ենք, ամենևին էլ պատահական չէր Հովի. Քաջազնունու շտապողականությունը, քանզի այդ առանցքային նախարարությունների ստեղծումով ոչ միայն ապահովվելու էին երկրի պաշտպանությունն արտաքին ու ներքին թշնամիներից, այլ նաև մշակվելու և ձևավորվելու էին արտաքին քաղաքականության ռազմավարության հիմնական ուղղություններն ու դիվանագիտական բանակցային գործընթացների իրականացումը կառավարության ղեկավարի՝ վարչապետի անմիջական գլխավորությամբ:

Չնայած քննարկվող հարցի վերաբերյալ տարաձայնություններին՝ Ազգային կենտրոնական խորհուրդը հունիսի 8-ի նիստում ընդունեց հետևյալ որոշումը. «Լսելով կառավարության նախագահ Հովի. Քաջազնունու բացատրությունները կառավարության լրիվ կազմ ունենալու դժվարությունների և աննպատակահարմարության մասին՝ Ազգային խորհուրդը որոշեց առայժմ բավականանալ **արտաքին գործերի, զինվո-**

[415] Տե՛ս «Զանգ» լրագիր, Երևան, 11 հունիսի, 1918 թ.:

**ական և ֆինանսների (եթե հարմար մարդ գտնվի) նախարարություններով՝** մնացած գործերը թողնելով Խորհրդի համապատասխան վարիչներին՝ մինչև Երևան տեղափոխությունը»[416] (ընդգծումը մերն է – Գ. Պ.):

Հովհ. Քաջազնունին Խորհրդի նիստում իրազեկեց, որ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար է հրավիրել Ալ. Խատիսյանին: Այսպիսով, **Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության սկիզբը դրվեց նույն օրը՝ հունիսի 8-ին՝ Ալ. Խատիսյանին նախարար նշանակելու պահից:** Առջևում սպասվում էին նոր փորձություններ ու ծանր օրեր հանրապետության արտաքին քաղաքականության ու դիվանագիտական պայքարի հորձանուտում:

Որպես կանոն՝ ամեն մի նորաստեղծ պետություն ձգտում է անմիջապես դուրս գալու միջազգային ասպարեզ՝ ճանաչել տալու սեփական պետության անկախությունը և բազմաթիվ, բազմաբնույթ կապեր ու դիվանագիտական հարաբերություններ հաստատելու այլ պետությունների հետ՝ դեսպանների մակարդակով: Սակայն այդ խնդրի լուծումը կապված էր լուրջ դժվարությունների հաղթահարման հետ: **Օսմանյան Թուրքիան Հայաստանի Հանրապետությանը դրել էր շրջանակների մեջ՝ թույլատրելով նրան հարաբերությունների մեջ մտնել միայն անմիջական հարևանների և իր դաշնակից Քառյակ միության և նրան հարող պետությունների հետ[417]:**

---

[416]ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 252:

* Կարծում ենք՝ Հայաստանի Հանրապետության դիվանագետի օր պետք է հիշատակել ոչ թե մարտի 2-ը, այլ Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին գործերի նախարարության ստեղծման օրը՝ հունիսի 8-ը:

[417] Մանրամասն տե՛ս **Г. А. Петросян,** Закавказье в дипломатических перипетиях: становление Армянской независимой государственности (февраль 1917 – июнь 1918 гг.), Ер.: изд-во ЕГУ, 2019, էջ 249-298:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ստեղծումից մոտ մեկ շաբաթ անց՝ հունիսի 13-ին, երբ հայկական պատվիրակությունն ուղևորվում էր Կոստանդնուպոլիս, Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանի, Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովի. Քաջազնունու և արտաքին գործերի նախարար Ալ. Խատիսյանի ստորագրությամբ, ինչպես ենթադրվում էր, **առաջին պաշտոնական նոտան** Թիֆլիսից առանձին-առանձին ուղարկվեց Կոստանդնուպոլիս՝ Իրանի, Շվեդիայի, Իսպանիայի, Դանիայի, Հոլանդիայի, Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի, Բուլղարիայի դեսպանությունների հավատարմագրված ներկայացուցիչներին՝ խնդրելով իրենց կառավարություններին տեղեկացնել անկախ Հայաստանի պետականության ստեղծման փաստի մասին[418]:

**Սակայն ամենևին էլ զարմանալի կամ պատահական չէր, որ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության իշխանությունները նման պաշտոնական նոտա չհղեցին Համաձայնության դաշինքի (Անտանտի) և նրան հարող պետություններին:** Այն կարող էր առիթ տալ օսմանյան Թուրքիային՝ ռազմական նոր գործողություններ սկսելու Հայաստանի Հանրապետության դեմ: Բանն այն էր, որ դեռևս Բաթումում հայ-թուրքական հաշտության դաշնագրի ստորագրման նախօրեին՝ հունիսի 3-ին, հայկական պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանը օսմանյան Թուրքիայի պարտադրանքով ստորագրել էր մի փաստաթուղթ և ստանձնել որոշակի պարտավորություն. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պար-

[418] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 1a, 2a, 5a, 7a, 9a:

տավորվում է ամբողջ ընդհանուր պատերազմի (Առաջին աշխարհամարտի – Գ. Պ.) ընթացքում ոչ մի դիվանագիտական հարաբերություն չունենալ Օսմանյան կայսերության հետ պատերազմական վիճակում գտնվող պետությունների հետ»: Պարզ էր, որ նկատի ունեին Համաձայնության դաշինքին և նրան հարող պետություններին: Կարծում ենք՝ ավելորդ է ասել, որ թե՛ հունիսի 3-ի Բաթումի պարտավորագիրը և թե՛ հունիսի 4-ի հայ-թուրքական հաշտության դաշնագրի պահանջները լուրջ խոչընդոտներ հարուցեցին ինքնուրույն և ազատ արտաքին քաղաքականություն և դիվանագիտություն ունենալու հարցում:

Այդ դրությունը երկար չտևեց՝ պայմանավորված Առաջին աշխարհամարտում օսմանյան Թուրքիայի և նրա դաշնակիցների վերջնական պարտությամբ: Նոյեմբերին իր ուժը կորցրեց հունիսի 3-ի պարտավորագիրը և հայտնի դաշնագիրը, թեև դրանք իրավական ուժ չունեին, քանի որ չէին վավերացվել ո՛չ օսմանյան Թուրքիայի և ո՛չ էլ Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմինների կողմից: Պարտված օսմանյան Թուրքիան հարկադրված հեռացավ Անդրկովկասից:

Ստեղծված աշխարհաքաղաքական բարենպաստ նոր իրադրությունում Հայաստանի Հանրապետությունն այլևս ազատ էր տնօրինելու իր արտաքին քաղաքականությունը և կարող էր դիվանագիտական ավելի ակտիվ հարաբերություններ հաստատելու ջանքեր գործադրել Անտանտի և նրան հարող այլ պետությունների հետ: Սակայն առջևում նոր փորձություններ և դժվարին օրեր էին սպասվում:

Ինչպես վերը նշվեց, 1918 թ. հունիսի 13-ի երեկոյան Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանի գլխավորությամբ պատվիրակության անդամները, որոնց

թվում էին Ալ. Խատիսյանը (Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար) և Մ. Պապաջանյանը, Թիֆլիսից ժամանեցին Կոստանդնուպոլիս՝ հունիսի 25-ին մասնակցելու վերը նշված խորհրդաժողովին: Սակայն խորհրդաժողովի ձգձգման պատճառով հայկական պատվիրակությունը հարկադրված Կոստանդնուպոլսում մնաց հունիսի 19-ից մինչև նոյեմբերի սկիզբը[419]:

**Ալ. Խատիսյանի բացակայության պատճառով հունիսի կեսից հանրապետության արտաքին գործերի նախարարի պաշտոնը ժամանակավորապես վարեց վարչապետ Հովի. Քաջազնունին[420]:** Մոտ հինգ ամիսների ընթացքում Ալ. Խատիսյանը և պատվիրակության մյուս անդամները՝ որպես դիվանագիտական առաքելության ներկայացուցիչներ, Կոստանդնուպոլսում լայն գործունեություն ծավալեցին նաև Հայաստանի Հանրապետության արտասահմանյան դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների նշանակման ուղղությամբ այն հեռավոր երկրներում ու քաղաքներում, որտեղ կային հայության ստվար զանգվածներ: Օրինակ, Ուկրաինայի մի շարք հայաշատ քաղաքներում՝ Կիևում, Օդեսայում, Խարկովում և այլուր, կառավարության համաձայնությամբ Հայաստանի ներկայացուցիչներ և հյուպատոսներ նշանակեցին[421]:

Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը և կառավարությունը հուլիսի 19-ի ուշ երեկոյան Թիֆլիսից ժամանեցին Երևան: Հաջորդ օրերին գումարվեցին Թիֆլիսի և Երևանի

---

419 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 131:

420 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 207, թ. 63:

421 Մանրամասն տե՛ս **Գ. Հ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2002:

Հայոց ազգային խորհուրդների համատեղ նիստերը: Օրակարգի հիմնական հարցերից մեկը Հայաստանի Հանրապետության կառավարության վերջնական ձևավորումն էր: Թիֆլիսում նախապես ընտրված չորս թեկնածուներին ներկայացնելուց հետո հուլիսի 24-ին Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը պաշտոնապես հրապարակեց Հայաստանի Հանրապետության անդրանիկ ժամանակավոր կառավարության կազմը. վարչապետ՝ Հովհ. Քաջազնունի, արտաքին գործերի նախարար՝ Ալ. Խատիսյան, ներքին գործերի նախարար՝ Ա. Մանուկյան, ֆինանսների նախարար՝ Խ. Կարճիկյան, զինվորական նախարար՝ գեներալ Հովհ. Հախվերդյան[422]: Կառավարության կառուցվածքում ներառվեց նաև արդարադատության նախարարությունը, որը ժամանակավորապես ղեկավարելու էր Խ. Կարճիկյանը[423], ով հուլիսի 28-ին վարչապետի որոշմամբ ազատվեց նշյալ պաշտոնից, և արդարադատության նախարար նշանակվեց Գ. Տեր-Պետրոսյանը[424] (1918 թ. հուլիսի 28 - նոյեմբերի 4):

Ինչպես նկատում ենք, կառավարության կազմում Ալ. Խատիսյանը հաստատվել էր որպես հանրապետության արտաքին գործերի նախարար, սակայն նրա բացակայության պատճառով Ազգային կենտրոնական խորհրդի **հուլիսի 24-ի նույն որոշմամբ վարչապետ Հովհ. Քաջազնունին դարձյալ մեկտեղեց արտաքին գործերի նախարարի գործառույթները[425]:** Փաստորեն, վարչապետն արտաքին գործերի նախարարի պաշտո-

---

[422] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 2:
[423] Տե՛ս նույն տեղում:
[424] Տե՛ս «Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, Երևան, 1 սեպտեմբերի 1918:
[425] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 2:

նը վարեց մինչև նոյեմբերի 4-ը՝ հանրապետության կոալիցիոն կառավարության ձևավորումը[426]:

Հարկ է նշել, որ 1918 թ. աշնանը Հայաստանի խորհրդի (խորհրդարանի) մեծամասնության և կառավարության միջև առաջացել էին խորը հակասություններ, բանավեճեր և տարաձայնություններ հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության շուրջ: Քննադատության թիրախ էր դարձել կառավարությունը: Ստեղծված ճգնաժամային պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէր կարող արդյունավետ աշխատել և իրականացնել իր գործառույթները: Անհրաժեշտ էր կազմել նոր կառավարություն՝ կոալիցիոն սկզբունքով:

1918 թ. հոկտեմբերի 31-ին Հայ հեղափոխական դաշնակցության և հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչների խորհրդակցությունը քննարկեց նոր կառավարություն կազմելու մասին հարցը. ընդունված որոշման նախագիծը ներկայացրեց Հայաստանի խորհրդի դատին[427]: Ըստ նախագծի՝ նախարարները ընտրվելու էին երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ. առաջարկների հիման վրա վարչապետը կազմելու էր նոր կառավարություն[428]:

Նոյեմբերի 4-ին Հայաստանի Հանրապետության խորհրդի նիստում ընդունվեց կառավարության հրաժարականը. Հովի. Քաջազնունուն հանձնարարվեց դարձյալ ստանձնել վարչապետի պաշտոնը և կազմել կոալիցիոն նոր կառավարություն (նախարարական պորտֆելները բաժանվեցին դաշնակցականների և ժողովրդականների միջև):

---

[426] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 39, թ. 4, գ. 207, թ. 63:
[427] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 199, թ. 1:
[428] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 199, թ. 1:

Խորհուրդը կոալիցիոն կառավարության կազմում **Սիրեկան Տիգրանյանին հաստատեց հանրապետության արտաքին գործերի նախարար[429] (1918 թ. նոյեմբերի 4 -1919 թ. հունիսի 23): Կոալիցիոն կառավարության ձևավորումով արտաքին գործերի նախարարությունն իր սաղմնային դիվանով անջատվեց վարչապետությունից՝ որպես արտաքին հարաբերությունների առանձին գերատեսչական մարմին:** Արտաքին գործերի նախարարությունը գործելու էր կառավարության անմիջական ղեկավարությամբ և իրականացնելու էր պետության արտաքին քաղաքականության, դիվանագիտության ու հյուպատոսական ծառայության ամենօրյա օպերատիվ առաջնահերթությունները և այլն:

Սակայն, երկրի ներքին և արտաքին քաղաքական նոր իրավիճակով պայմանավորված, 1919 թ. օգոստոսի 7-ի պառլամենտի* նիստում Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնակատար (1919 թ. ապրիլի 16-ից), արտաքին գործերի նախարար (1919 թ. հունիսի 24-ից) Ալ. Խատիսյանը ընտրվեց վարչապետ[430] (պաշտոնավարեց մինչև 1920 մայիսի 5-ը), **իսկ օգոստոսի 10-ին դարձյալ ստանձնեց նաև արտաքին գործերի նախարարի պաշտոնը: Փաստորեն, դարձյալ մեկտեղվեցին վարչապետի և արտաքին գործերի նախարարի պաշտոնները: Եվ, այնուամենայնիվ, Ալ. Խատիսյանի վարչապետության շրջանում՝ 1920 թ. ապրիլի 3-ին Հ. Օհանջանյա-**

---

[429] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 2:

* 1919 թ. օգոստոսի 1-ին Հայաստանի Հանրապետության խորհուրդը վերափոխվեց Հայաստանի Հանրապետության պառլամենտի (առաջին ընտրովի պառլամենտ):

[430] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պառլամենտի արձանագրություններ: 1918-1920 թթ.» (գլխավոր խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան): Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2009, էջ 241:

**նին երկրի արտաքին գործերի նախարար նշանակումով[431] դարձյալ պաշտոնապես առանձնացվեցին վարչապետի և արտաքին գործերի նախարարի պաշտոնները:**

Ուշագրավ է, որ ամռանը, երկրի ներքին և արտաքին դժվարագույն դրությամբ պայմանավորված*, **Հ. Օհանջանյանի**[432] (1920 թ. մայիսի 5-ից մինչև նոյեմբերի 23-ը) և **Ս. Վրացյանի**[433] (1920 թ. նոյեմբերի 23-ից մինչև դեկտեմբերի 2-ը) **վարչապետության շրջանում դարձյալ մեկտեղվեցին վարչապետի և արտաքին գործերի նախարարի պաշտոնները:**

* * *

Նորանկախ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը կազմավորման սկզբնական շրջանում գործի անցավ ոչ ամբողջական և ոչ լիարժեք ձևավորված պետական ապարատով, առանց որևէ կազմակերպակառուցվածքային, ֆինանսական միջոցների և արհեստավարժ, փորձառու դիվանագիտական անհրաժեշտ կադրերի:

---

[431] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 189, ց. 1, գ. 10, թ. 1:

* 1920 թ. մայիսի 5-ին Հայաստանի պառլամենտի արտակարգ նիստում վարչապետ Ալ. Խատիսյանը, կարճ հայտարարությամբ ներկայացնելով երկրում ստեղծված տագնապալից դրությունը, ի դեմս Հայաստանն օղակող թուրքական ուժերի, առաջարկեց ընդունել իր կառավարության ամբողջ կազմի հրաժարականը և երկրի ղեկը հանձնել պառլամենտի և Հայաստանի դեմոկրատիայի բացարձակ ու լիակատար վստահությունը վայելող նոր կառավարությանը (տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Երևան, 2000, էջ 184:

[432] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 59, թ. 57, նաև՝ «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ....», էջ 184:

[433] Տե՛ս նույն տեղը, էջ 350:

Ուշագրավ է, որ պատմական դեպքերի բերումով 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Թիֆլիսում ձևավորված Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը փաստացի կատարում էր օրենսդիր և գործադիր մարմինների գործառույթներ: Այն 1918 թ. մայիսի 30-ին ստանձնեց Անդրկովկասի հայկական գավառների կառավարումը և դարձավ հայկական անկախ պետականության ստեղծման հիմքը: Թեև Խորհրդի կառուցվածքում կար արտաքին հարաբերությունների բաժին (ղեկավարում էր Խորհրդի նախագահ Ավ. Ահարոնյանը), սակայն քաղաքական բարդ ու լարված պայմաններում, գործունեության ինն ամիսների ընթացքում չկարողացավ ներգրավել դիվանագիտական փորձառու կադրերի և ձևավորել պատշաճ գործիքակազմ՝ իր գործառույթներն իրականացնելու համար:

Հայաստանի անկախացումից հետո՝ 1918 թ. հունիսի 8 - նոյեմբերի 4-ը, մինչև կոալիցիոն կառավարության ձևավորումը, պարզվում է, որ հանրապետության արտաքին գործերի նախարարությունը գրեթե **միախառնված էր վարչապետության հետ ո՛չ միայն նախարարի անձով, այլև իր դիվանով և գործիքակազմով:** Փաստորեն, հանրապետության արտաքին գործերի նախարարությունը որպես առանձին գերատեսչական մարմին գոյություն չուներ: Ինչպես երևում է արտաքին գործերի նախարարության «Կազմակերպման սկզբնական շրջանի մասին» հակիրճ զեկույցում, «…նախարարութիան դիւան կար թէևս, բայց բոլորովին սաղմնային վիճակում, եւ այնքան սերտօրէն կապակցած, միախառնւած մինիստր Նախագահի (կառավարութիան) դիւանի հետ, որը շատ անգամ

դժուարանում էր զատիլը իրարից այդ երկու տեսականօրէն տարբեր հիմնարկութիւնները»[434]:

Արտաքին գործերի նախարարության դիվանը կազմում էին.

1.հատուկ հանձնարարությունների պաշտոնյա, որը ժամանակավորապես վարում էր նաև դիվանապետի պաշտոնը,

2. ռեգիստրատոր, նույնը նաև՝ էկզեկատոր,

3. թարգման,

4.երկու գրագիր՝ մեկը ֆրանսերենի և թուրքերենի, մյուսը՝ հայերենի և ռուսերենի համար[435]:

Դիվանի կազմում, ըստ կառավարության նախահաշիվների և հաստիքացուցակների, թեև ավելի շատ պաշտոններ էին նախատեսվել, սակայն, բացի վերը նշվածներից, մյուսները մնացել էին թափուր[436]: Արտաքին գործերի նախարար Ալ. Խատիսյանը չուներ տեղակալ կամ օգնական:

1918 թ. հուլիսի 24-ին վարչապետ, արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Հովհ. Քաջազնունու որոշմամբ ներքին գործերի նախարարությունում պաշտոնավարող թարգման Արմենակ Սահակյանը համատեղությամբ նշանակվեց արտաքին գործերի նախարարության դիվանի թարգմանի պաշտոնում[437]:

Արտաքին գործերի նախարարության կազմավորման սկզբնական շրջանի մասին հակիրճ տեղեկանքում ասվում էր. «Կազմակերպչական այդօրինակ վիճակը արդյունք ու արտացոլումն էր նույն ինքն գործի և իրականության անզարգացած

---

[434] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 207, թ. 63-64:
[435] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 207, թ. 64:
[436] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 136, թ. 6, գ. 207, թ. 64:
[437] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 207, թ. 64, գ. 61, թ. 2:

ու անձուկ դրության: Հանրապետության մեջ ողջ կառավարական կազմը դեռ նոր էր կազմակերպվել սկսել. մինիստրն էր հանդիսանում յուրաքանչյուր մասնաճյուղի ո՛չ միայն վարիչն ու ղեկավարը, այլ կենտրոնական ու գլխավոր աշխատողն ու գործավարը, արտաքին քաղաքականության ու հարաբերությունների վերաբերյալ գործերն ու աշխատանքները մանավանդ դեռ շատ էին սակավաթիվ և աղքատիկ»[438]:

Մինչդեռ իրականում, ստեղծված այդ դժվարագույն պայմաններում արտաքին գործերի նախարարության դիվանն իր սահմանափակ կադրերով և սուղ հնարավորություններով ձեռնամուխ եղավ հանրապետության արտաքին քաղաքականության և դիվանագիտության ամենօրյա հարցերի լուծմանը՝ առաջնորդվելով կառավարության ընդունած որոշումներով, հրահանգներով և ցուցումներով:

1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում Հայաստանի Հանրապետության խորհուրդը (խորհրդարանը) կազմեց կոալիցիոն նոր կառավարություն: Սիրեկան Տիգրանյանը հաստատվեց հանրապետության արտաքին գործերի նախարար: **Կոալիցիոն կառավարության ձևավորումով արտաքին գործերի նախարարությունն իր սաղմնային դիվանով անջատվեց վարչապետությունից՝ որպես առանձին գերատեսչական մարմին:** Նորանշանակ նախարարը լայն գործունեություն ծավալեց արտաքին գործերի նախարարության ձևավորման և կայացման ուղղությամբ:

Նախարարության կազմակերպման սկզբնական շրջանի մասին հակիրճ տեսության մեջ ասվում էր. «Կենտրոնական դիվանը պարտ ու պատշաճ հիմքի վրա դնելու համար առա-

---

[438] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 207, թ. 64:

ջին իսկ շաբաթներում զգացվեց մի քանի նոր կարևոր պաշտոնյաներ հրավիրելու անհրաժեշտությունը և ամենից առաջ մի հմուտ դիվանագետի, որով պետք է հիմքը դրվեր մինիստրության կենտրոնական դիվանի կազմակերպմանը. դիվանն է այն անհրաժեշտ ապարատը, մեքենան, առանց որի պաշտոնական գործավարությունը քիչ թե շատ կանոնավոր վիճակ ունենալ չի կարող: Հարկավոր էր հրավիրել նաև մի քանի դիվանագիտական պաշտոնյաներ աշխատանքը խնամքով ու կանոնավոր առաջ տանելու համար: Պետք է հրավիրել մինիստրի օգնական կամ ընդհանուր (գլխավոր – Գ. Պ.) քարտուղարի: Այս բոլորը անհրաժեշտ էր թեթևացնելու համար մինիստրի գործը, քանի որ նրա վրա էր ծանրացած այդ բոլոր հրավիրվելիք պաշտոնյաների անելիք աշխատանքը»[439]:

Նախարարության կազմը աստիճանաբար համալրվեց ունակ նոր դիվանագետներով: 1918 թ. նոյեմբերի 16-ին Ս. Տիգրանյանը արտաքին գործերի նախարարի օգնական նշանակեց Գևորգ Մելիք-Ղարագյոզյանին[440]: Դեկտեմբերի 24-ից օսմանյան բանակի գլխավոր հրամանատար Շեֆքի փաշայի դիվանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ալեքսանդր Տեր-Հակոբյանը[441] 1919 թ. փետրվարի 28-ին նշանակվեց արտաքին գործերի նախարարության ընդհանուր (գլխավոր) քարտուղար[442]:

---

[439] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 207, թ. 67:
[440] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 62, թ. 4:
[441] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 20, թ. 74, գ. 92, մաս I, թ. 18:
[442] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 26, թ. 140, ֆ. 200, ց. 1, գ. 61, թ. 1, գ. 62, թ. 5:

## 2. Արտասահմանյան մշտական դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների հիմնադրումը

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանն ստեղծման առաջին օրերին առանձնահատուկ ուշադրություն նվիրեց արտաքին հարաբերությունների արտասահմանյան մշտական դիվանագիտական ներկայացուցչությունների հիմնադրմանը: Ըստ նախարարության կանոնադրության՝ նրանք էին «Հայաստանի սահմաններից դուրս հանրապետության միակ պատասխանատու ներկայացուցիչը, յուրաքանչյուրն իր գործունեության տարածաշրջանում»[443]: Այդ ներկայացուցչությունները, համաձայն նախարարության դիվանի հանձնարարականների, լիազորված էին իրենց ամենօրյա աշխատանքով պաշտոնապես ներկայացնելու և պաշտպանելու Հայաստանի Հանրապետության քաղաքական և այլ շահերն ու իրավունքները ընդունող պետությունում: Նրանց գործառույթն էր մշտական կապ պահպանել և բանակցություններ վարել երկրի կառավարության և արտաքին հարաբերությունների համապատասխան մարմինների հետ[444] և այլն:

Արտաքին գործերի նախարարության դիվանը կարևորեց նաև Հայաստանի Հանրապետության հյուպատոսական ներկայացուցչությունների ստեղծումն արտասահմանում: Բացառությամբ քաղաքական խնդիրների, որոնցով զբաղվում էին դիվանագիտական ներկայացուցչությունները, հյուպատոսա-

---

[443] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 545, թ. 44:
[444] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 198, մաս I, թ. 239:

կան մարմինների «… ամենամեծ վստահությունը պետք է լինի միջոցներ ձեռք առնել այլ պետությունների սահմաններում ապրող հայկական հատվածների կյանքի ապահովության համար և նրանց կուլտուրական ու քաղաքացիական շահերը պաշտպանել»[445]: Հանրապետության հյուպատոսական մարմինների պարտականությունների կատարումը դրվում էր արտաքին գործերի նախարարության արտասահմանյան մշտական դիվանագիտական ներկայացուցչությունների վրա[446]:

Նախարարությունը չուներ հյուպատոսական ներկայացուցիչներ նշանակելու կարգի և հյուպատոսությունների ու հյուպատոսների վերաբերյալ մշակված հատուկ ժամանակավոր կանոնադրություն կամ նախագիծ, ավելին՝ չուներ նաև հյուպատոսական բաժին: Ի վերջո, 1919 թ. փետրվարի 1-ին կազմվեց արտաքին գործերի նախարարության հյուպատոսական բաժնի օրինագիծ և միայն վեց ամիս հետո՝ հուլիսի 31-ին, ընդունվեց նման բաժին հիմնելու մասին օրենք[447]: 1918 թ. դեկտեմբերի 6-ին, մինչև հյուպատոսական կանոնադրության մասին օրենքի մշակումը և ընդունումը, Հայաստանի Հանրապետության խորհուրդը հռչակում է. «Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակավորապես կիրառվում են Ռուսական կայսրության, Ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի բոլոր օրենքները՝ Հայաստանի խորհրդի բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ: **Արտաքին գործերի նախարարությունը ժա-**

---

445 «Հորիզոն», լրագիր, Թիֆլիս, 30 հունիսի 1918 թ.:

446 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 198, մաս I, թ. 239:

447 Տե՛ս **Գ. Հ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920 թթ.), Երևան, 2002, էջ 56:

**մանակավորապես ղեկավարվում է Ռուսաստանի կայսրության հյուպատոսական կանոնադրությամբ**»[448] (ընդգծումը մերն է- Գ. Պ.):

Կարևոր է նշել, որ իր գործառույթների իրականացման ընթացքում արտաքին գործերի նախարարությունը հանդիպում էր շատ, այդ թվում տեխնիկական դժվարությունների. «Գլխավոր արգելքը աշխարհի հետ հաղորդակցության դժվարությունն ու նույնիսկ խափանված լինելն էր:

Եթե այլ պետություններն ու կառավարություններն ընդհանուր առմամբ ձեռներեցություն ու հետաքրքրություն չէին ցույց տալիս Հայաստանի Հանրապետության հետ հարաբերություններ սկսելու, բայց այդ պետություններում ու երկրներում ապրող հայություն կար – բնիկ այնտեղացի և կամ Հայաստանի շրջաններից գաղթած, որոնք կարիք և պահանջ ունեին իրենց մայր Հայրենիքի հետ կապեր հաստատելու, վերադառնալու և կամ իրենց հարազատ կառավարության հարաբերվելն ու խնամքը վայելելու:

Արտասահմանյան այս հայությունը, մանավանդ այն վայրերում, ուր քիչ ու շատ մեծաթիվ համայնք էր կազմում, իր ձեռներեցությամբ հայկական մարմիններ էր հաստատել և դրանց ինքնաբերաբար կապել Հայաստանի Հանրապետության հետ, այդ եղանակով նա ցանկանում էր և որոշ չափով կարողանում էր իսկ բավարարություն տալ իր մի շարք պահանջներին և ազատել իրեն մի քանի անհարմարություններից ու զրկանքներից»[449]:

---

[448] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 33, թ. 127:
[449] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 207, թ. 66:

Հարկ է նշել նաև, որ քաղաքական հանգամանքներով պայմանավորված՝ առանձին պետություններում Հայաստանի Հանրապետության արտասահմանյան մշտական դիվանագիտական և հյուպատոսական առաքելություններ հիմնադրելու դժվարություններ կային: Օրինակ՝ Առաջին աշխարհամարտում, մինչև Թուրքիայի վերջնական պարտությունը, Հայաստանի Հանրապետությունը, պայմանավորված 1918 թ. հունիսի 3-ի Բաթումի պարտավորագրով, ազատ չէր հարաբերություններ հաստատելու, դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններ հիմնելու այն երկրներում, որոնք գտնվում էին պատերազմական վիճակում Օսմանյան կայսրության դեմ: Ահա թե ինչու հանրապետության արտաքին հարաբերությունների արտասահմանյան մշտական դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների կազմակերպումը սկսվեց այն երկրներում և վայրերում, որտեղ քաղաքական պայմանները թույլատրում էին, և որտեղ Հայաստանը դրանց կարիքն ուներ:

1918 թ. հունիսի 24-ին Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նիստում վարչապետ, արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Հովհ. Քաջազնունին, կարևորելով այդ մարմնի հիմնադրման առաջնահերթությունն ու անհրաժեշտությունը, առաջարկեց Վրաստանում (նստավայրը՝ Թիֆլիս) ստեղծել Հայաստանի Հանրապետության մշտական դիվանագիտական ներկայացուցչություն[450]: Դրա հիմնադրումը Վրաստանում առանձնահատուկ ու առանցքային նշանակություն ուներ Հայաստանի Հանրապետության արտաքին հարաբերությունների բնագավառում: **Հայաստանի**

[450] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 263:

**ընդհանուր շրջափակման պայմաններում արտաքին աշխարհի հետ քաղաքական, դիվանագիտական, առևտրատնտեսական և բազմազան ու բազմաբնույթ այլ կապերի հաստատումը գրեթե ամբողջությամբ իրականացվում էր հարևան Վրաստանի տարածքով, որն իրապես կապող օղակ էր նաև արտաքին գործերի նախարարության և արտասահմանում գործող դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների միջև և այլն:**

Ավելորդ չէ նշել նաև, որ մինչև Հայաստանի անկախությունը Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը ձեռք էր բերել աշխատանքի որոշակի փորձ. իր հրահանգներով և ցուցումներով համակարգում էր տարածաշրջանի և հայաշատ այլ պետությունների, քաղաքների, հայկական համայնքների, ազգային խորհուրդների և բազմաթիվ միությունների գործունեությունը, որոնք նպատակամղված էին հայապահպանման գործին:

Հունիսի վերջին Հովի. Քաջազնունին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ էր նշանակել Լևոն Եվանգուլյանին, սակայն հուլիսի 13-ին Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նիստում նա տեղեկացրեց, որ վերջինս հիվանդության պատճառով հրաժարվել է[451]: Մի քանի օր անց՝ հուլիսի 16-ին, երբ Ազգային կենտրոնական խորհուրդն ամբողջ կազմով և կառավարությունը վարչապետի գլխավորությամբ պատրաստվում էին Թիֆլիսից տեղափոխվել Երևան, Հովի. Քաջազնունին հայտնեց, որ որոշել է Վրաստանում ներկայացուցիչ նշանակել Արշակ Ջամալյա-

[451] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 299:

նին[452]: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հարցմանը Վրաստանի կառավարությունը հայտնել էր իր համաձայնությունը: Ավելի ուշ՝ 1918 թ. հոկտեմբերի 17-ին, Հայաստանում (նստավայրը՝ Երևան) Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ էր նշանակվել Ա. Չումբաձեն, սակայն վերջինս հոկտեմբերի 23-ին հրաժարվել էր հիվանդության պատճառով, իսկ նույն ամսի 29-ին այդ պաշտոնում նշանակվել էր Ս. Մդիվանին[453]:

Հուլիսի 22-ին Երևանում արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Հովհ. Քաջազնունին Ա. Ջամալյանին նշանակեց Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ, իսկ հաջորդ օրը՝ հուլիսի 23-ին, գրավոր հայտնեց իր նշանակման մասին[454]:

Ստանձնելով ներկայացուցչի պաշտոնը՝ նա անմիջապես ձեռնամուխ եղավ իր պարտականությունների կատարմանը՝ անգամ չսպասելով հավատարմագրի պաշտոնական հանձնմանը Վրաստանի արտաքին գործերի նախարարությանը: Ա. Ջամալյանի մտահոգությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ հավատարմագրի հանձնումը հնարավոր է ուշանար տեխնիկական պատճառներով, իսկ «…ընթացիկ գործերը ստիպողաբար պահանջում էին օր առաջ դիվանագիտական հարաբերություններ հաստատել Վրաստանի կառավարության հետ»: Նրա շտապողականությունը թելադրված էր նաև օր առաջ Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության մշտական դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու

---

[452] Տե՛ս «Մշակ», լրագիր, Թիֆլիս, 16 հուլիս, 1918 թ.:
[453] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 26, թ. 46, 75, 84:
[454] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 26, թ. 5, 6, 7:

անհրաժեշտությամբ, որովհետև վերջինի ստեղծմամբ սպասվում էր մեծածավալ ու բազմաբնույթ աշխատանք: Ներկայացուցչության խնդիրն էր բարեկամական, բարիդրացիական, առևտրատնտեսական և տարանցման նորմալ հարաբերություններ հաստատել Հայաստանի և Վրաստանի միջև, ներկայացնել և պաշտպանել Հայաստանի Հանրապետության քաղաքական շահերն ու իրավունքները ինչպես Վրաստանում, այնպես էլ այլ երկրներում՝ սերտորեն գործակցելով հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ և այլն:

Ա. Ջամալյանը նույն օրը՝ հուլիսի 23-ին, իր նշանակման մասին գրավոր տեղեկացրեց պաշտոնական Թիֆլիսում արտասահմանյան դիվանագիտական բոլոր առաքելություններին, հյուպատոսական ներկայացուցիչներին և Վրաստանի պետական կառույցներին: Հուլիսի 25-ին և դրան հաջորդող օրերին հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Նոյ Ժորդանիայի, արտաքին գործերի նախարար Ն. Ռամիշվիլիի և պաշտոնատար այլ անձանց հետ: Նրանց ներկայացրեց իր դիվանագիտական առաքելության նպատակն ու Հայաստանի կառավարության կողմից իրեն տրված լիազորությունները՝ Վրաստանի հետ բազմազան և բազմաբնույթ մշտական կապերի հաստատման մասին:

Հուլիսի 26-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանն Ա. Ջամալյանին գրավոր հանձնեց Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցչության գործունեության հրահանգները, որի գլխավոր կետերն էին.

1. Վրաստանում Հայաստանի կառավարության միակ պատասխանատուն Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչն է:

2. Թիֆլիսում Հայաստանի առանձին նախարարությունների ինչպես անհատական (ֆինանսական, զինվորական գործակալներ և այլն), այնպես էլ միասնական ներկայացուցիչները (պարենավորման և այլ կոմիտեներ) համարվում են հայկական ներկայացուցչության բաղկացուցիչ մասը:

3. Թիֆլիսում Հայաստանի նախարարությունների առանձին ներկայացուցիչները նշանակվում են Հայաստանի կառավարության կողմից՝ համապատասխան նախարարի և դիվանագիտական ներկայացուցչի համաձայնությամբ:

4. Երկրորդ դրույթում հիշատակված բոլոր տեսակի հարաբերությունները ինչպես Վրաստանի նախարարությունների և արտասահմանյան առաքելությունների, այնպես էլ Հայաստանի կառավարության հետ տեղի են ունենում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության միջոցով:

5. Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին իրավունք էր տրվում վերահսկողություն սահմանելու ներկայացուցչության մաս հանդիսացող բոլոր անձանց և հաստատությունների նկատմամբ (դրույթ երկրորդ):

6. Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին իրավունք էր տրվում նաև Հայաստանի կառավարությանը տեղյակ պահելու Թիֆլիսի առանձին նախարարությունների ներկայացուցիչների ծրագրերի մասին, դրանց վերաբերյալ եզրակացություններ անելու:

7. Ինչպես առաքելության խորհրդականը, այնպես էլ պաշտոնատար մյուս անձինք նշանակվում են Հայաստանի կառավարության կողմից՝ դիվանագիտական ներկայացուցչի առաջարկած թեկնածության հիման վրա: Առաքելությունները անմիջականորեն ձևավորվում են դիվանագիտական ներկայացուցչի կողմից:

8. Վրաստանում մինչև հայկական հյուպատոսական կառույցներ ստեղծելը հյուպատոսի պարտականությունները ևս իրականացնելու էր Հայաստանի դիվանագիտական առաքելությունը: Ընդ որում՝ դիվանագիտական ներկայացուցչին իրավունք է տրվում հյուպատոսի պարտականությունները Վրաստանի առանձին քաղաքներում հանձնարարելու առանձին անհատների՝ սեփական հայեցողությամբ՝ խորհրդակցելով արտաքին գործերի նախարարի հետ:

9. Դիվանագիտական ներկայացուցչի հիվանդության կամ բացակայության ժամանակ նրա պարտականությունները դրվում են ներկայացուցչության խորհրդականի վրա[455]:

1918 թ. հուլիսի 22-ի Ա. Ջամալյանի գրավոր հավատարմագիրը (պահպանվում է արխիվում)[456] ուշացումով՝ հուլիսի 31-ի նոր թվագրմամբ[457], հանձնվում է Վրաստանի արտաքին գործերի նախարար Ն. Ռամիշվիլիին, որում ասվում էր. «Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև բարեկամական հարաբերությունների պահպանման նպատակով Արշակ Ջամալյանին նշանակում եմ ներկայացուցիչ Վրաստանի կառավարությունում: Հանձնարարում եմ նրան Հայաստանի Հանրապետության անունից վարել բոլոր բանակցությունները Վրաստանի կառավարության հետ, ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական, իրավական և այլ հարցերով, որոնք կարող են պահանջել երկու կողմերի հարաբերությունները:

Ձեր բարի կամքին ներկայացնելով Ա. Ջամալյանին՝ պատիվ ունեմ խնդրելու վստահել նրան ամեն ինչում, վերաբեր-

---

[455] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 135, թ. 27, 31:
[456] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 26, թ. 122:
[457] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 75, թ. 1:

վել որպես Հայաստանի կառավարությունը ներկայացնող անձի և աջակցել նրա գործունեությանը, որը նպատակադրված է ամուր և բարյացակամ կապերի հաստատմանը բարեկամական Վրաստանի և Հայաստանի միջև:

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Հովի. Քաջազնունի»[458]:

Ա. Ջամալյանը բարդ ու դժվարին պայմաններում զգալի աշխատանք կատարեց, մինչև որ կարգավորեց Վրաստանում (Թիֆլիսում) Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ստեղծման գործը: Դիվանագիտական առաքելությունը բաղկացած էր տասնութ աշխատակիցներից՝ ներկայացուցիչ, խորհրդական, քարտուղար, երկու թարգման, գործավար, իրավախորհրդատու, հատուկ հանձնարարությունների պաշտոնյա, չորս գրագիր, ռեգիստրատոր, տնտեսական խորհրդական, հաշվապահ, մեքենագրուհի, գանձապահ և ցրիչ[459]: Աներկբա է, որ ներկայացուցչությունը նաև արտաքին աշխարհի և Հայաստանի Հանրապետության միջև առանցքային կապող օղակն էր և ծանրաբեռնված կատարում էր մեծածավալ ու բազմաբնույթ աշխատանք Վրաստանում: Այդ և այլ հանգամանքներով պայմանավորված՝ առաքելության աշխատակազմն աստիճանաբար համալրվում էր ունակ դիվանագետներով:

1918 թ. սեպտեմբերի 14-ին արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Հովի. Քաջազնունու համաձայնությամբ Ա. Ջամալյանն առաքելության խորհրդական նշանակեց Մի-

---

[458] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 75, թ. 1:
[459] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 136, թ. 7, 34:

քայել Թումանյանին[460]: Այդ մասին տեղեկացվեցին նաև Թիֆլիսում արտասահմանյան դիվանագիտական և հյուպատոսական առաքելությունների բոլոր ներկայացուցիչները[461]: Մ. Թումանյանին իրավունք էր վերապահվում, համաձայն վերը նշված հրահանգի 9-րդ կետի, ներկայացուցչի հիվանդության կամ բացակայության ժամանակ փոխարինելու նրան և իրականացնելու վերջինիս պարտականությունները[462]:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, կարևորելով Վրաստանի հետ ֆինանսական, առևտրատնտեսական և այլ բնույթի հարցերի կարգավորումը, առաջարկեց կառավարությանը Թիֆլիսի հայկական դիվանագիտական առաքելությունում հիմնել ֆինանսական բաժին: 1918 թ. հոկտեմբերի 25-ին Գեղամ Տեր-Հարությունյանցը նշանակվեց այդ բաժնի ներկայացուցիչ[463]: Այն ուներ չորս աշխատակից՝ ներկայացուցիչ, հաշվապահ, վերահսկիչ և գանձապահ[464]:

Սակայն 1918 թ. դեկտեմբերի հայ-վրացական կարճատև պատերազմի պատճառով, որը պարտադրեց Վրաստանը, խզվեցին դիվանագիտական հարաբերությունները հարևան պետությունների միջև: Դադարեցվեց նաև դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը Վրաստանում: Անգամ առաքելության խորհրդական Մ. Թումանյանը ենթարկվեց տնային կալանքի՝ միլիցիայի հսկողության ներքո, և

---

460 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 26, թ. 8, 41, 73, գ. 73, թ. 8:
461 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 73, թ. 1:
462 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 135, թ. 27, 31:
463 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 26, թ. 82:
464 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 26, թ. 15, 74:

խստագույնս արգելվեց նրա շփումը որևէ անձի հետ[465]: Չանդրադառնալով պատերազմի մանրամասներին՝ միայն նշենք, որ դեկտեմբերի վերջին՝ զինադադարի ստորագրումից հետո, հարևանների միջև լարվածությունը հետզհետե մեղմացավ, և 1919 թ. մարտին հաստատվեցին միջպետական հարաբերություններ[466] և այլն: Թիֆլիսում իր գործունեությունը շարունակեց Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը: 1919 թ. մարտի 6-ին արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ նշանակեց Լևոն Եվանգուլյանին[467] (1919 թ. մարտի 6-ից մինչև 1920 թ. սեպտեմբերի սկիզբ), որն իր հավատարմագիրը հանձնեց Վրաստանի արտաքին գործերի նախարարին[468]: Իսկ 1919 թ. հուլիսի 10-ին դիվանագիտական առաքելությունում ստեղծվեց զինվորական բաժին, և վերջինիս ներկայացուցիչ նշանակվեց գեներալ Ի. Քիշմիշևը[469]: Բաժինն ուներ նաև չորս ծառայող սպաներ[470]:

Դիվանագիտական առաքելության կառուցվածքում կարևոր տեղ էր գրավում նաև «Տեղեկատու բյուրոն» (ղեկավար՝ Ա. Մալխազով)[471], որի նպատակն էր հայ հասարակությանը իրազեկ դարձնել Հայաստանի Հանրապետության ընդհանուր վիճակին, հաղորդել ճշգրիտ և ստույգ տեղեկություններ օտար

---

465 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 73, թ. 7:
466 Տե՛ս **Գ. Հ. Պետրոսյան,** Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Երևան, 2011, էջ 151-168:
467 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 75, թ. 27:
468 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 26, թ. 137, գ. 119, թ. 11:
469 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 43, թ. 275:
470 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 43, թ. 217:
471 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 81, թ. 23, գ. 136, թ. 7, 8:

հասարակությանը և մամուլին, ծանոթացնել Հայաստանի իրադարձություններին և Հայկական հարցի նորագույն շրջանի խնդիրներին: «Տեղեկատու բյուրոն» պետք է իրազեկ լիներ նաև Հայաստանի Հանրապետության թե՛ ֆինանսական, տնտեսական և թե՛ առհասարակ հասարակական կյանքին[472]:

Այժմ վերադառնանք Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելության կազմում հյուպատոսական բաժնի ստեղծման կարևորությանը: Աներկբա է, որ դրա հիմնադրմամբ ապահովվելու էր Վրաստանի սահմաններում ոչ միայն զգալի թվով Հայաստանի քաղաքացիների և փախստական հայ զանգվածների իրավունքների և շահերի պաշտպանությունը, այլև այն կապող օղակ էր արտասահմանի բազմաթիվ հայկական համայնքների և մայր հայրենիքի միջև: Իրողություն է, որ Թիֆլիսը արևելահայերի հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային և կրթական խոշոր կենտրոն էր: Այստեղ էին կենտրոնացել արևելահայ մտավորականության սերուցքը և տարածաշրջանի հայ քաղաքական գործիչների հիմնական մասը: Այստեղ էին ապաստանել նաև Հայոց ցեղասպանության հետևանքով հայրենազրկված փախստականներ, Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտյան ռազմաճակատից տուն վերադարձող հայ սպաներ և զինվորներ՝ հայրենիք տեղափոխվելու ուղիներ որոնելով:

Համաձայն վերը նշված հրահանգի 8-րդ կետի՝ մինչև հյուպատոսական կառույցների ստեղծումը Վրաստանում՝ հյուպատոսի պարտականություններն իրականացնելու էր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելությունը Թիֆլիսում:

---

[472] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 198, մաս II, թ. 98:

1918 թ. օգոստոսի 19-ին Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելության կազմում իր գործունեությունը սկսեց հյուպատոսական բաժինը[473]: Անձնակազմը բաղկացած էր տասը աշխատակցից՝ հյուպատոս, քարտուղար, գործավար, թարգման, գրագիր, թղթատար, հաշվապահ, գանձապահ, սուրհանդակ և ցրիչ[474]: Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Հովի. Քաջազնունու համաձայնությամբ՝ դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանը հյուպատոս նշանակեց Տիգրան Գյոզալյանին, իսկ քարտուղար՝ Վաղարշակ Սահակյանին[475]: Հոկտեմբերի 15-ին հյուպատոսական բաժնին կից գործեց նաև փոստային ծառայությունը, որի ղեկավար նշանակվեց Մ. Պետրոսյանը[476]: Հյուպատոսական բաժինն ուներ նաև իր սուրհանդակային կապը:

Հյուպատոսական բաժինը ծավալում էր ամենօրյա բազմազան ու բազմաբնույթ գործունեություն: Նրա իրավասության մեջ էին մտնում պաշտոնական Թիֆլիսում օտարերկրյա պետությունների առաքելությունների, ներկայացուցչությունների, հյուպատոսական մարմինների հետ կապը պահպանելը, առևտրատնտեսական հարաբերություններ հաստատելը և նրանց ստանձնած պարտականությունները հետևողականորեն կատարելու հսկողությունը:

**Հյուպատոսությունը կարևորագույն օղակ էր նաև պաշտոնական Երևանի և արտասահմանում հայ համայնքների ու հյուպատոսական մարմինների միջև:**

---

[473] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 33, թ. 75:
[474] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 136, թ. 8, 34:
[475] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 33, թ. 50, 75:
[476] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 33, թ. 38:

Հարկ է նշել, որ Հայաստանի առաջին Հանրապետության գոյության երկուսուկես տարում արտասահմանյան մի շարք պետություններում և այլ վայրերում հիմնվել են դիվանագիտական և հյուպատոսական առնվազն 36 ներկայացուցչություններ[477], որոնք իրենց կարևորագույն և մեծածավալ գործունեության ընթացքում ունեցել են նաև որոշակի թերություններ, բացթողումներ և դժվարություններ: 1920 թ. սեպտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանին ուղղված զեկուցագրով նախարարության գլխավոր քարտուղար Ալեքսանդր Տեր-Հակոբյանը հաղորդում է. «Երկու եւ կէս տարւայ գործը եւ մեր ներկայացուցչութեան գործունէութեան ուսումնասիրութիւնը բերում է մեզ այն եզրակացութեան, որ նա ունի շատ պակասաւոր կողմեր որ նա չէ կարողացել տալ Պետութեանը եւ Կառավարութեանը այն մեծ քաղաքական, տնտեսական եւ բարոյական օգուտը եւ աջակցութիւնը, որպիսին նա պիտի տար եւ կարող էր տալ: Մեր ներկայացուցչութիւնը չէ եղել Կառավարութեան աչքն ու լեզուն եւ շահերի պաշտպան օտար երկրներում: Մեր ներկայացուցիչները, շատ քիչ բացառութեամբ, չեն կարողացել ոչ խօսել մեր անունից, ոչ յայտնել մեզ իրենց տեսածը, ոչ պաշտպանել մեր բազմակողմանի շահերը եւ ոչ էլ իրազեկ պահել Կառավարութեանը իրենց եղած երկրի քաղաքական եւ տնտեսական դրութեանը: Թերթեցէք մեր դիւանագիտական ներկայացուցիչների եւ Հիւպատոսների զեկուցումները եւ նամակները: Դուք ամենից առաջ չէք տեսնիլ որեւէ սիստեմ այդ զեկուցումների մէջ: Գրւում են այդ զեկուցումները ոչ պարբերաբար, մեծ մասամբ պատահական հարցերի մասին: Այդ զե-

[477] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 198, մաս I, թ. 239:

կուցումներից դուք չէք կարող պարզել գոնէ մօտաւոր կերպով քաղաքական, տնտեսական եւ ներքին կեանքը այն Պետութեան, որտեղից գրւում է զեկուցումը: Չկան տեղեկութիւններ Հայկական գաղութների մասին, հայ կուսակցութիւնների եւ նրանց գործունէութեան մասին եւ առհասարակ այն հարցերի մասին, որ կարող են հետաքրքրիր լինել Կառավարութեան համար: Օրինակ՝ մինչեւ այժմ Պոլսի մեր ներկայացուցիչը եւ ոչ մի խօսքով չէ ծանօթացրել Ա. Գ. Ն. (Արտաքին գործերի նախարարություն – Գ. Պ.) Պոլսի դրութեան հետ, այնտեղի դաշնակից ոյժերի, քանակի, փոխյարաբերութիւնների հետ: … ներկայացուցիչները եւ Հիւպատոսները կապած են եղել ոչ թէ Մինիստրութեան հետ, այլ Մինիստրի հետ: Եղել են մինչեւ անգամ դէպքեր, երբ ներկայացուցիչը նեղացել է, երբ նրան որոշ ցուցմունք են տուել (ոչ քաղաքական հարցի շուրջը) Մինիստրութիւնից, նա պահանջել է, որ բոլոր գրութիւնները նրան անպայման ստորագրւեն Մինիստրի կողմից:

Շատ դէպքերում շնորհիւ մեր ֆինանսական նեղ վիճակի, Ա. Գ. Մինիստրութիւնը ստիպւած է նշանակել որոշ տեղերում պատւաւոր Հիւպատոսներ, որպեսզի ազատւի ծախսերից: Այդպիսի դէպքերում ի հարկէ հնարաւորութիւն չկայ ընտրութիւն կայացնել ցանկալի ձեւով»[478]:

Այսպիսով, **Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մշտական առաքելությունների հիմնումն ուներ կարևորագույն, առանցքային նշանակություն հանրապետության արտաքին հարաբերությունների բնագավառում: Հայաստանի ընդհանուր շրջափակման պայմաններում՝ Վրաստանի սահմաններում իրենց գոր-**

[478] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 198, մաս I, թ. 239-242:

ծառույթներից զատ, դրանք կապող օղակ էին նաև պաշտոնական Երևանի և արտասահմանյան տարբեր երկրներում և այլ վայրերում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների, հայկական համայնքների ու Հայոց ազգային խորհուրդների միջև:

# ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1918 Թ. ՀՈՒՆԻՍ-ՆՈՅԵՄԲԵՐ)

## 1. Հայաստանի ներքին և արտաքին քաղաքական դրությունը

1918 թ. մայիսի վերջին Արևելյան Հայաստանում վերականգնվեց հայկական պետականությունը, ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը: Այն ծնունդ առավ ներքին և արտաքին չափազանց ծանր պայմաններում: Նորաստեղծ հանրապետության առջև ծառացած ու անհապաղ լուծում պահանջող խնդիրները բազմազան ու բազմաթիվ էին: Դրանք վերաբերում էին երկրի թե՛ ներքին կյանքին, թե՛ արտաքին քաղաքականությանը: Ա-Դո-ի գնահատմամբ՝ «այն երկրամասը, որից ձևակերպվեց Հայաստանի Հանրապետությունը, փոքրիկ բացառությամբ, կազմում էր հայկական գավառների լեռնային ու անբերրի շրջանը: Այդտեղ սովորական տարիներին էլ ազգաբնակչությունը ենթակա էր զրկանքների, իսկ երբ կյանքը դուրս էր գալիս իր բնական ընթացքից, ժողովուրդը մատնվում էր քաղցի, և ահա այս երկրամասի վրա եկել ապաստանել էր ավերված գավառների հարյուրհազարավոր փախստական ժողովուրդը: Երկիրը՝ նեղ, լեռնոտ ու անբերրի, պայմանները՝ արտասովոր ու բացառիկ, իսկ ազգաբնակչությունը՝ բազմա-

պատկված ու կուտակված: Ահա այն դրությունը, որ գահավեժ թափով ընթանում էր դեպի վատթարագույն օրերը»[479]:

Երկիրը անելանելի վիճակից դուրս բերելու համար անհրաժեշտ էին քաղաքական կամք, վիթխարի ջանքեր ու հետևողական աշխատանք:

Հայաստանի առաջին Հանրապետության առաջին վարչապետ Հովի. Քաջազնունին 1918 թ. հունիս-հուլիսին կազմել էր մի ծրագիր-հայտագիր, որում ներկայացնում էր իր գլխավորած ժամանակավոր կառավարության ներքին և արտաքին քաղաքականության ռազմավարության հիմնական ուղղությունները և առաջնահերթությունները[480], որը նա 1918 թ. օգոստոսի 3-ին ներկայացրեց Հայաստանի խորհրդին[481] (խորհրդարան, պառլամենտ):

Հովի. Քաջազնունին հանրապետության առջև ծառացած խնդիրները բաժանում էր երկու խմբի՝ ներքին և արտաքին: Վարչապետը իրատեսորեն ներկայացնում էր երկրի ներքին ծայրահեղ ծանր կացությունը, ստեղծված դրության պատճառները, **որից էլ բխելու էր իր վարելիք արտաքին քաղաքականությունը: Ինչպես հայտնի է, ցանկացած պետության արտաքին քաղաքականություն նրա ներքին քաղաքականության շարունակությունն է, ներքին կացության արտացոլումը և կոչված է լուծելու իր առջև ծառացած խնդիրները, միջազգային նպաստավոր պայմանները օգտագործելու ի շահ իր երկրի:**

---

[479] **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 530:

[480] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 5-15:

[481] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ., Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2009, էջ 10-12:

Հովի. Քաջազնունու հակիրճ բնութագրմամբ՝ երկրում դրությունը հուսահատական էր: Ազգաբնակչության կեսից ավելին փախստականներ և գաղթականներ էին՝ անտուն, մերկ ու քաղցած, գյուղերը քանդված ու ավերված էին, գյուղատնտեսական աշխատանքները՝ կազմալուծված:

Հացի բացակայության և մյուս կենսամթերքների խիստ սակավության պատճառով գյուղացիները կերել էին իրենց սերմացուն, և հերթը հասել էր լծկան անասուններին: Տիրում էր սով բառի բուն իմաստով, որի հետևանքով մեծ տարածում էին ստացել տարափոխիկ հիվանդությունները, մասնավորապես բծավոր տիֆը, իսկ դեղորայք չկար:

Արտաքին աշխարհի հետ կապը կտրված էր, որովհետև միակ երկաթուղային գծին տիրել էին թուրքական զորքերը, ապրանքների ներմուծումը դադարել էր: Զգացվում էր ամենաանհրաժեշտ ապրանքների սուր պակաս: Երկրում տիրում էր կատարյալ քաոս և անիշխանություն: Պետք էր ամեն ինչ սկսել սկզբից, ավերակների վրա կառուցել նոր պետական շենք[482]: Նշենք, որ այդ ամենը հիմնականում թուրքական իշխանությունների ասպատակությունների հետևանքն էր: Հովի. Քաջազնունու հաղորդումից շատ պարզ երևում է, թե ինչ անմխիթար վիճակում էր գտնվում Հայաստան աշխարհն իր ազատության արշալույսին:

1918 թ. դեկտեմբերի 7-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանը օսմանյան Թուրքիայում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ֆ. Թախթաչյանին ուղղած գաղտնի նամակ-հրահանգում գրում էր. «Նրանք (թուրքերը - Գ. Պ.)

---

[482] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 48-50:

տարել են բառիս բուն նշանակությամբ ամեն ինչ, լինի այդ ինչը պետական, հասարակական, թե մասնավոր: Նրանք տարել են ամբողջ հացը, անասունները, պատրաստի վառելիքը, պահեստների և խանութների ապրանքները, երկաթուղու սիմաֆորները, լապտերները, հեռագրաթելերը, շատ տեղերում հեռագրասյուները եւն եւն. մի խոսքով տարել են այն ամենը, ինչ որ որևէ արժեք ներկայացնում է մեր ժողովրդի կամ պետության համար…

4. Գաղթականների վիճակը ուղղակի հուսահատական է. նրանց մի մասը չի կարող վերադառնալ երկիր, որովհետև թուրքերը դեռ այնտեղ են, և նրանց սարսափը մեծ է. այդ գաղթականներն են Տաճկահայաստանցիք, Ղարսեցիք և Էջմիածնի, Սուրմալուի, Շարուրի, Նախիջևանի և Ախալքալաքի որոշ մասերից եկած ժողովուրդը: Գաղթականների մյուս մասը, որ կարողացել է վերադառնալ և վերադարձել է իր բնակավայրը, դատապարտված է սովամահ կամ ցրտահար լինելու, որովհետև ինչպես հիշատակել եմ վերևը, թուրքերը տարել են ապրուստի և վառելիքի բոլոր պաշարները և ավերել են նրանց բնակարանները:

5. Հաղորդակցութեան դժվարությունները Անդրկովկասի սահմաններում անօրինակ չափեր են ընդունել. Բագու գնալը մեզ համար սխրագործություն է համարվում. Գանձակ գնալ նույնպես չենք կարող առանց մեր կյանքը ռիսկի ենթարկելու: Ղարաբաղից կտրված ենք գրեթե մի տարուց ի վեր, Թիֆլիս գնալ-գալը կարելի է 5-6 ձևականություն կատարելու պայմանով, սակայն 3-4 շաբաթը հազիվ մի գնացք է գնում-գալիս Թիֆլիս-Երևան: Հաղորդակցության այս դժվարությունները ուղղակի անհնարին կացություն են ստեղծում մեզ համար ոչ միայն տնտեսական գործառնությունների տեսակետից, այլև

այն տեսակետից, որ գաղթականությունը և պատերազմական մեր գերիները չեն կարողանում օր առաջ իրենց տեղերը վերադառնալ:

6. Հայաստանի պարենավորման վիճակը սարսափելի է: Հաց չեն կարողանում ստանալ ոչ Վրաստանից և ոչ մանավանդ Ադրբեջանից, ուր հացի հսկայական պաշարներ կան, որովհետև վրացիք և ադրբեջանցիք թույլ չեն տալիս գնումներ կատարել և արտահանել: Հաց չենք կարողանում ստանալ և Հյուսիսային Կովկասից և Ուկրաինայից, ուր գնումներ կատարելու հնարավորություն կա, որովհետև նախ հաղորդակցությունն է խիստ դժվարին, երկրորդ ռուսական դրամներ դժվարությամբ ենք ճարում, իսկ մեր Անդրկովկասյան բոնաները այնտեղ չեն վերցնում և երրորդ վրացիք տրանզիտի մեծ դժվարություններ են հարուցանում»[483]:

Հանրապետության ներքաղաքական ու տնտեսական աղետալի վիճակը շարունակվեց մինչև տարվա վերջը: «Հայաստանը ամեն կողմից շրջապատված է թշնամիներով, և մենք բոլորովին կտրված ենք արտաքին աշխարհից, - գրում է Սիմոն Վրացյանը:- Սովն ու համաճարակը, հիվանդությունները շարունակում են իշխել մեր երկրում. տկարները մեռնում են և ուժեղները տկարանում են մեռնելու համար: Եթե այսպես վեց ամիս էլ շարունակվի, Հայաստանի ժողովրդի մեծ մասը կկոտորվի»[484]: Աշխարհից կտրված, անօգնական և թշնամիներով շրջապատված Հայաստանը մի քանի ամսում, մինչև հոկտեմբեր, սպառեց հացի իր աղքատիկ պաշարը: «Կառավարության հավաքած ցորենը սպառվեց,– գրում է բժիշկ Արտաշես

---

[483] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 533, թ. 13-14, ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 102-103:

[484] **Ս. Վրացյան,** Հին թղթեր նոր պատմության համար, Բեյրութ, 1962, էջ 274:

Բաբալյանը,– և սովը իր անողոք ճանկերը խրեց հայ գյուղացու կրծքին: Մեռան հազարներով, տասնյակ հազարներով»[485]:

1918 թվականից երկրում համատարած էին վարակիչ հիվանդությունները (բծավոր տիֆ, խոլերա), որոնք մարդկային հազարավոր կյանքեր խլեցին: Երևանում և Էջմիածնում օրեր էին լինում, որ մահացողների թիվը մի քանի հարյուրից անցնում էր[486]: Ծանր վիճակ էր տիրում նաև բանակում: «Զինվորական հիվանդանոցները բերնե բերան լիքն էին, և հիվանդապահներն ավելի շատ դիակներ կրելով էին զբաղվում, քան հիվանդներին խնամելով: Իսկ այն, ինչ կատարվում էր այդ ժամանակ Սարդարապատում, Ղամարլուում և Իգդիրի շրջանում և գաղթականական բարաքներում վեր է ամեն երևակայությունից: Հարյուրավոր դռներ այս շրջաններում ընդմիշտ փակ մնացին, որովհետև նրանց բոլոր բնակիչները մեռել էին: Մեռելների թիվը այնքան շատ էր և նրանց տերերն այնքան ուժասպառ, որ թաղման գործողություններն էլ չէին կարողանում կատարել: Դիակները օրերով անթաղ մնալով նեխում էին և նոր համաճարակների աղետ պատրաստում: Սովահար շրջաններում կենդանի, շուն, կատու չմնաց, և մարդիկ ձեռնամերձ եղան անասունների լեշերին և մինչև իսկ մարդկային դիակներին»[487], - գրում է Ա. Ջամալյանը: Մինչև 1919 թ. ամառը, ըստ ներքին գործերի նախարարության տվյալների, Հայաստանի Հանրապետությունը բծավոր տիֆի համաճարակի և

---

485 **Ա. Բաբալյան,** Էջեր Հայաստանի անկախության պատմությունից, Գահիրե, 1959, էջ 19:

486 Տե՛ս **Է. Զոհրաբյան,** Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ., Երևան, 2000, էջ 117:

487 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հունիս, էջ 72:

սովի պատճառով կորցրեց շուրջ 192 հազար մարդկային կյանք[488]:

**Հասկանալի է, թե այս ամենի հետևանքով ինչ ծանր բարոյահոգեբանական մթնոլորտ էր տիրում երկրում: Ներքին պառակտվածությունը որդի պես կրծում էր ազգի միասնական ոգին, թուլացնում դիմադրողականությունը, զրկում հանուն պետական ընդհանուր շահի դատելու կարողությունից: Նման պայմաններում չափազանց դժվար էր պետականության կայացումը:**

Դարեր շարունակ պետականությունից զրկված հայ ժողովուրդը հնարավորություն էր ստացել վերակերտելու իր անկախությունը, սակայն հանրապետության յուրաքանչյուր հատված ուներ զանազան տեղական խմբավորումներ, որոնք բոլոր խնդիրներին մոտենում էին հօգուտ իրենց և սեփական շահը շարունակ առաջին գիծ մղում: «Այս բոլոր Երեւանցիները, Վանեցիները, Սասունցիները, Ղարաբաղցիները, Շատախցիները, Նուխեցիները, Արէշցիները եւն. եւն մի այնպիսի սումբուր էին առաջացնում մեր պետական-հասարակական գործերում, որ դժուար է նոյնիսկ պատկերացնել, - գրում է Ա. Ջամալյանը: - Երևանցիք դժգոհ էին Հայաստանի ղեկավարներից, որոնք բոլորն էլ դրսեցիներ լինելով՝ գործեր են կատարում իրենց քաղաքում՝ առանց տեղացիների պատշաճ մասնակցութեան: Այդ պատճառով էլ նրանք խռոված երեխաների պէս կողմնակի դիտողի դեր էին կատարում Հայաստանի իրադարձութիւնների մեջ: Վանեցիք կարծում էին, թե կառավարութիւնը բոլոր խնդիրներից վեր պիտի դասի «Վանայ քաղաքի» եւ շրջանի վերագրաւումը, որպէսզի գաղթական ժողո-

[488] Տե՛ս նույն տեղը:

վուրդը ազատուի իր զրկալից կեանքից: Ղարաբաղցիք ընդհակառակը պնդում էին, որ առաջին հերթին Ղարաբաղի ազատագրութիւնը պիտի լինի կառավարութեան հոգածութեան խնդիրը, որովհետև Ղարաբաղը Հայաստանի ողնաշարն է հանդիսանում:

Սասունցիք մի ուրոյն աշիրէթի պէս ապրում էին իրենց համար, չէին թոյլ տալիս, որ որեւէ մէկը իրենց ներքին գործերին միջամտի, ինչպես որ իրենք էլ չէին միջամտում ուրիշի գործերին, և կառավարական ոչ մի կարգադրութիւն իրենց համար պարտադիր չէին համարում, մինչև որ այդ կարգադրութիւնը չգար իրենց աչքում աշիրաթապետի հանգամանք առած «Ռուբէն Փաշայի» անունով: Արէշցիք չէին կարողանում հասկանալ, թե Հայաստանի կառավարութիւնը ինչպես կարող է որևէ այլ գործով զբաղուել, երբ նա դեռ չի սպանել վերջին թուրքին մեր երկրում: Չէ՞ որ այդ թուրքերը կամ նրանց ազգակիցները ոչնչացրել էին Արէշի և Նուխու 40 000 հայ ժողովուրդը: Եւ այդ պատճառով էլ, այն, ինչ որ կառավարութիւնը չէր անում, նրանք իրենք էին ուզում անել…

Այսպէս և մնացած բոլոր տեղացիները: Բոլորն էլ իրենց առանձին ակնկալութիւններն ունէին Հայաստանի կառավարութիւնից եւ շատ դեպքերում իրենց պահանջների բաւարարումով էին պայմանաւորում այդ կառավարութեանը տալիք օգնութիւնը:

Էլ չեմ խոսում առանձին անհատների կամ փոքրիկ խմբակների մասին, որոնք Ռուսաստանից, Եւրոպայից, Ամերիկայից, Պոլսից, Թիֆլիսից, Բագուից մեծ մասամբ հարկադրաբար գալով մեր երկիրը՝ բերել էին իրենց հետ բազմաթիւ ծրագիրներ, խորհուրդներ, քննադատութիւններ: Սրանցից ամէն մէկը իր բաժին բազմազանութիւնն էր մտցնում մեր իրա-

կանութեան մեջ՝ ցանկանալով Հայաստանի գործերը ձեւել եւ կարել համաձայն իր տեսածի ու լսածի: Չեմ խօսում նաև արտասահմանի հայութեան պէս-պէս վերաբերմունքների մասին դէպի Հանրապետությունն ու նրա գործերը, որոնք ի հարկէ, առանց ազդեցութեան չէին մնում մեր պետական շինարարութեան համար»[489]:

Ահա թե որքան ճշմարիտ է ներկայացնում հանրապետությունում իշխող բարոյահոգեբանական մթնոլորտը Ա. Ջամալյանը:

Դրությունն ավելի էր բարդանում այն առումով, որ հանրապետության ազգաբնակչության մոտ 30% -ը մահմեդական էր, որոնք մշտապես խոչընդոտներ էին հարուցում և սպառնալիք էին նորակազմ պետության գոյության համար: Ինչպես վկայում է Հովի. Քաջազնունին. «Ադրբէյջանի դիրքը մեր հանդէպ եղել է բացահայտօրէն թշնամական, անհերքելի է նաեւ, որ Հայաստանի մահմետական ազգաբնակչութիւնը, խրախուսւած Թիւրքիայի ու Ադրբէյջանի կողմից, հակապետական ընթացք է բռնած եղել: Բայց կարեւորն այն է, որ մենք չենք կարողացել գտնել նպատակայարմար միջոցներ մեր դրութիւնը ապահովելու համար, դրսից ու ներսից. չենք կարողացել գտնել մի քիչ տանելի modus vivendi Ադրբէյջանի հետ, չենք կարողացել վարչական միջոցներով կարգի մէջ պահել մահմետական գաւառակները, հարկադրւած ենք եղել զէնքի դիմելու, զօրքէր շարժելու, աւերելու ու կոտորելու եւ – որ կրկնակի վարկաբեկիչ էր կառավարութեան համար – խոշոր անյաջողութիւնների հանդիպելու. այնպիսի կարևոր վայրերում, ինչպիսի էին Վեդի-Բասարը, Շարուրն ու Նախիջեւանը, մենք

[489] Նույն տեղում, էջ 70-71:

չկարողացանք հաստատել մեր իշխանութիւնը նոյն իսկ զէնքի ոյժով, պարտուեցանք ու նահանջեցինք»[490]: Հայաստանի «...մահմետական ազգաբնակչութեան մեծամասնութիւնը ե՛ւ դրսի թելադրանքների ե՛ւ ներքին տրամադրութիւնների ազդեցութեամբ բացարձակապէս չէր ճանաչում մեր իշխանութիւնը եւ չէր ուզում որեւէ գործ ունենալ պետութեան հետ, - գրում է Ա. Ջամալյանը: -Իսկ փոքրամասնութիւնը, որ տեղ տեղ իր ուժի տկարութեան պատճառով չէր կարող բացարձակապէս դէմ գնալ մեր իշխանութեանը՝ թէեւ երեւոյթապես ճանաչում էր նրան, բայց որեւէ ձեւով աջակից եւ նեցուկ լինել նրան չէր կամենում»[491]: Ավելին, ոչ միայն չէին ճանաչում հայոց իշխանությունը, այլև զինված գործողությունների էին դիմում:

Հայաստանի Հանրապետությունում ռուսները թեև սակավաթիվ էին՝ մոտ 10 հազար, սակայն ազդեցիկ ուժ էին թե՛ պետական մարմիններում և թե՛ բանակում: Նրանք բաժանված էին երկու խմբի՝ գյուղացիներ, որոնք մշտական բնակություն էին հաստատել Հայաստանում ցարական կառավարության վերաբնակեցման քաղաքականության հետևանքով, և պետական պաշտոնյաներ ու ծառայողներ՝ գլխավորապես ռազմական, դատական և հաղորդատվության բնագավառներում: Սակավ բացառությամբ թե՛ առաջինները և թե՛ երկրորդները, որոնք ռուսական տիրապետության ժամանակ արտոնյալ դիրք ունեին Հայաստանում, «շատ վատ էին տրամադրուած մեր պետականութեան հանդէպ: Անկախ այն բանից, որ նրանք հոգեբանօրէն չէին կարող հաշտվել այն մտքի հետ, որ ռուսի երէկուայ հպատակը այսօր տէր ու տիրական է դարձել իր

---

[490] **Հովհ. Քաջազնունի,** նշվ. աշխ., էջ 35-36:

[491] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հունիս, էջ 69:

երկրում՝ նրանց դիւրը չէր գալիս մեր պետութեան ձգտումը՝ հաւասարեցնել հայ գիւղացու եւ ռուս գիւղացու վիճակը հողաբաժանման խնդրում և հայոց լեզուն պետական լեզու դարձնել հանրային բոլոր գործերում: Առաջինը դիւր չէր գալիս ռուս գիւղացիներին, որովհետեւ խախտում էր նրանց առանձնաշնորհեալ դիրքը, իսկ երկրորդը դիւր չէր գալիս մասնաւորապես ռուս պաշտօնեաներին, որովհետև դժուարացնում էր նրանց պաշտօնավարութիւնը Հայաստանում: Այսպիսով՝ յանձին ռուս ազգաբնակչութեան՝ ընդհանուր առմամբ մենք ունէինք մեր պետականութեանը առնուազն անբարեացակամ մի տարր»[492]: Կարծում ենք՝ հարկ չկա փաստեր բերելու, որ անկախացման առաջին ամիսներին երկրում ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտը նույնպես իր քայքայիչ ու ծանր կնիքը դրեց նորաստեղծ Հայաստանի Հանրապետության կառավարության թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքական գործունեության վրա:

Երկիրը ծանրագույն կացությունից դուրս բերելու վճռական հրամայականը նոր ձևավորվող պետական համակարգի արդյունավետ գործունեությունն էր, սակայն լարված էին հարաբերությունները. դեռևս բացակայում էր պետական համակարգի տարբեր թևերի ներդաշնակ, փոխկապակցված աշխատանքը. տարաձայնություններ կային օրենսդիր մարմնի՝ Հայաստանի խորհրդի (խորհրդարան), գործադիր մարմնի՝ կառավարության և գերակա քաղաքական ուժի՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության միջև:

Այդ կապակցությամբ Հանրապետության վարչապետ Հովհ. Քաջազնունին հետագայում գրում է. «Գործնականօրէն՝

[492] Նույն տեղում, էջ 68:

մեր կուսակցութիւնը ձգտում էր իրան ենթարկել, իր հսկողութեան տակ առնել թե՛ օրենսդիր մարմինը, թե՛ կառավարութիւնը: Մենք քաջութիւն չունէինք (ոչ էլ կարողութիւն) բացէ ի բաց կուսակցական դիկտատուրա յայտարարելու. Բայց եւ չէինք ուզում մնալ պարլամենտական կարգերի սահմանի մէջ ու փորձ էինք անում իրականացնել Հայաստանում ԻԹԹԻՀատականների գործելակերպը. Կուսակցական դիկտատուրա ռամկավարական ձեւերի տակ քողարկւած:

Իշխանութեան անհանդուրժելի երկուութիւն էր առաջ եկել. հրապարակում՝ խորհրդարանն ու իր կառավարութիւնը, ստւերի մեջ՝ կուսակցութիւնն ու իր օրգանները:

Հասկանալի է, որ այս երկու կարգի իշխանութիւնները՝ պաշտօնականն ու անպաշտօնը՝ կարող էին միայն խանգարել ու կաշկանդել մէկը միւսին. ձեւական պահանջները թոյլ չէին տալիս, որ կուսակցութիւնը ազատ ու արագօրէն շարժւի, իր կամքը լրիւ արտայայտի. իսկ կուսակցութեան միջամտութիւնը թոյլ չէր տալիս, որ կառավարութիւնը իր գիտցածն անի, իր գիծը տանի»[493]:

Ըստ երևույթին նման վիճակն անխուսափելի էր. ժողովրդավարական քաղաքական-պետական համակարգի ձևավորումը դյուրին խնդիր չէր: Վարչապետը ճիշտ էր պատկերացնում դրա լուծումը. իշխանության գլուխ անցած «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը չպետք է մենիշխանություն հաստատի, այլ պետք է ասպարեզը թողնի խորհրդարանին և կառավարությանը:

Սակայն Հովհ. Քաջազնունուն չհաջողվեց իրականացնել իր տեսակետը և հաղթահարել կուսակցության ազդեցությունը

---

[493] **Յովհ. Քաջազնունի,** նշվ. աշխ., էջ 32:

երկրի քաղաքական կյանքում: Հետևանքը եղավ այն, որ նրան մեկուսացրին պետական կառավարման գործընթացից: Այդ առիթով Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է. **«Քաջազնունու ...բացակայությունը- ըստ էութեան հեռացումը- կը նշանակէր դաշնակցութեան ազդեցութեան ուժեղացումը»**[494] (ընդգծումը մերն է - Գ. Պ.): Ավելին, նա հեռացվեց անգամ երկրից. 1919 թ. փետրվարի 4-ին Հայաստանի խորհուրդը ընդունեց օրենք՝ մինիստր-նախագահ Հովհ. Քաջազնունուն Եվրոպա և Ամերիկա գործուղելու մասին՝ Հայաստանի Հանրապետությանը հաց, պարեն և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ հայթայթելու համար[495]: Սակայն անգլիական հրամանատարության կողմից մուտքի արտոնությունը միտումնավոր ձգձգելու պատճառով Հովհ. Քաջազնունին կարողացավ Ամերիկա մեկնել միայն 1919 թ. մայիսի 29-ին:

Հանրապետությունում ստեղծված ներքին և արտաքին քաղաքական բարդ իրադրությունը ժողովրդի մեծամասնության շրջանում անվստահության մթնոլորտ էր ձևավորել անկախ Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Արևելահայերի մեծ մասի համար անկախությունը անհասկանալի, արհամարհելի և անբովանդակ խոսք էր: «Ռուսահայ գյուղացին և քաղքենի մանր բուրժուան, - գրում է Ա. Ջամալյանը,- որոնք վերջին տարիների վերիվայրումներից շատ էին տուժել եւ տնտեսապես ծանր վիճակի մեջ էին գտնուում՝ երազում էին Ռուսաստանի վերադարձի մասին, որ իր հետ պիտի բերեր էժան հաց, շաքար, կերպասեղեն և կեանքը նորից դարձներ

---

[494] **Ռուբէն,** նշվ. աշխ., էջ 278:

[495] Տե՛ս **Գ. Պետրոսյան,** Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ., հունիս-նոյեմբեր), էջ 16:

այնքան դիւրալի, ինչպես առաջ…»[496]: Գրիգոր Չալխուշյանի հավաստմամբ՝ անկախացման առաջին ամիսներին Հայաստանում ոչ ոք չէր հավատում, որ անկախությունը մնայուն է: Ժամանակի հարց էր թվում նրա գոյությունը, որովհետև պետությունը խարխուլ էր: Արևելահայերը հավատացած էին, որ վերջիվերջո ռուսը պիտի գա և տիրի իրենց նահանգին, իսկ արևմտահայերի համար Հայաստանը Անատոլիան էր[497]: Հայաստանի խորհրդի առանձին անդամներ նույնիսկ չէին ընդունում անկախ Հայաստանի գոյությունը, պահանջում էին երկրի վերամիավորումը Ռուսաստանին: Օրինակ՝ 1918 թ. օգոստոսի 6-ին Հայաստանի խորհրդի չորրորդ նիստում պատգամավոր Ս. Մամիկոնյանը, դիմելով խորհրդարանականներին, հարցնում է. «Արդեո՞ք հենց Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը ինքնին մի կատաստրոֆա չէ»[498]: Դեմ արտահայտվելով երկրի անկախությանը՝ Ս. Մամիկոնյանը պահանջում է «վերականգնել միությունը Ռուսաստանի հետ»[499]:

Կարծում ենք՝ պատահական չէր, որ Հայաստանի Հանրապետության գոյության առաջին շրջանում Հայաստանի խորհուրդը և կառավարությունը նպատակահարմար չհամարեցին պաշտոնապես ընդունել երկրի անկախության հռչակագիրը, իսկ դա, ըստ Ս. Վրացյանի, նաև առիթ տվեց «մտածելու մեր կասկածոտ հարեւաններին. – եւ ոչ միայն հարեւաններին (նկատի ուներ նաև Ռուսաստանին- Գ. Պ.), որ հայերը կողմնակից չեն անկախութեան»[500]: Բնականաբար, հանրապետու-

---

496 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հունիս, էջ 69:
497 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 293, թ. 26:
498 «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1934, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 98:
499 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 80:
500 **Ս. Վրացյան,** Խարխափումներ Յ. Քաջազնունու «Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս» գրքի առթիվ, Պոսթըն, 1924, էջ 64:

թյան արտաքին անկայուն, անորոշ բարդ վիճակն էլ իր բացասական ազդեցությունը ունեցավ երկրի ներքին կյանքի վրա՝ այն ավելի ծանրացնելով:

Այսպիսով, Հայաստանի առաջին Հանրապետության անկախացման առաջին ամիսներին երկիրը գոյատևեց սոցիալ-տնտեսական, քաղաքական անասելի ծանր պայմաններում, որից էլ բխելու էին իր արտաքին քաղաքականության ռազմավարության հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները:

## 2. Հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու ժամանակավոր կառավարության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները

1918 թ. օգոստոսի 1-ը անկախ Հայաստանի տարեգրության ամենանշանավոր պատմական օրերից է: Ժամը 11:30-ին մայրաքաղաք Երևանի քաղաքային ակումբի շենքում հանդիսավոր պայմաններում պաշտոնապես աշխատանքը սկսեց Հայաստանի Հանրապետության անդրանիկ գերագույն օրենսդրական ժողովի՝ Հայաստանի խորհրդի (1919 թ. օգոստոսի 1-ից՝ **պառլամենտ**) առաջին նստաշրջանը: Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդի ժամանակավոր նախագահ, տարիքով ավագագույն պատգամավոր Ավետիք Սահակյանը (հայր Աբրահամ), բացելով Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստը, ասաց. «Քաղաքացինե՛ր, պատգամավորնե՛ր Հայաստանի խորհրդի:

Գերագույն Հայոց Ազգային խորհրդի կողմից ես պատիվ ունեմ այսօր բաց անել անդրանիկ նիստը Հայաստանի խորհրդի և հայտարարել, որ այսուհետև սա է միակ լիազոր մարմինը՝ անփոփոխ իր մեջ Հայաստանի Հանրապետության պետական իշխանությունը:

Այս օրը կդառնա մեզ համար պատմական և կբանա մի նոր, լուսավոր դարաշրջան մեր երիտասարդ պետության կյանքում՝ ինքնուրույն քաղաքական և տնտեսական զարգացման:

Այս օրը կմնա միշտ հիշատակելի և այն պատճառով, որ առաջին անգամ իրականացած ենք տեսնում մեր նեղ հորիզո-

նի սահմաններում գեղեցիկ երազներն ու նվիրական տենչը ինքնորոշման, թեև անհնարին դժվարին պայմաններում:

… Այո՛, մեր հանրապետությունը փոքր է և նեղ իր սահմաններով, նա զրկվել է իր ամենագնահատելի երկրամասերից և չի կարող իր մեջ տեղավորել ամբողջ ազգաբնակչությունը և, կարծես թե, պայմաններ չունի անկախ գոյության համար: Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ միշտ. ես հավատում եմ, որ մեր երկրի սահմանները կընդարձակվեն կյանքի երկաթե ուժով, մեր արդար և անվիճելի իրավունքների պաշտպանությամբ գրավված հողերի վերաբերմամբ և նոր բարեկամական դաշինքով Տաճկաստանի (Թուրքիայի – Գ. Պ.) և նրա դաշնակից պետությունների հետ, որոնց ներկայացուցիչները ներկա են այստեղ: Մենք ընտրել ենք համաձայնության և խաղաղության ուղին, և ուզում եմ հուսալ, որ չենք սխալվում:

Մինչ այդ մենք կկատարենք սրբությամբ և անշեղ կերպով մեր այն պարտականությունները, որոնք բխում են խաղաղության դաշինքից: Թողնե՛նք ապագա հեռանկարները, համենայն դեպս, այսօր, այստեղ, առանց տատանումների և լիակատար վճռականությամբ մենք զցում ենք խարիսխը մեր պետական նավի և դնում ենք հիմքը պետական շենքի՝ ձգտելով միշտ կատարելագործել նրան ի բարօրություն Հայաստանի Հանրապետության բոլոր ազգությունների, իբրև զավակներ մեր հարազատ մայր հայրենիքի»[501]:

Ավ. Սահակյանի բացման խոսքից հետո՝ ժամը 12-ին, «Մեր հայրենիք» օրհներգի հնչյունների ներքո Հայաստանի

[501] «Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ: 1918-1920 թթ.» (այսուհետև՝ Արձանագրություններ), Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2009, էջ 7-8:

խորհրդի շենքի գլխին հանդիսավոր պայմաններում բարձրացվեց Հայաստանի պետական դրոշը՝ **Եռագույնը**[502]: Նույն նիստում էլ Ավ. Սահակյանը ընտրվեց Հայաստանի խորհրդի նախագահ: Փոխնախագահներ ընտրվեցին Գր. Տեր-Խաչատրյանը և Դ. Զուբյանը, իսկ ավագ քարտուղար՝ Պ. Զաքարյանը[503]: Խորհուրդը որոշեց հաջորդ նիստում լսել ժամանակավոր կառավարության ծրագրի նախագծի վերաբերյալ զեկույցը:

Ուշագրավ է, որ Հայաստանի խորհուրդը 1918 թ. օգոստոսին վարչապետ չընտրեց: Իրողությունն այն էր, որ Հայաստանի խորհուրդը, իրեն համարելով Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդի լեգիտիմ իրավահաջորդը, կասկածի տակ չդրեց Հովհ. Քաջազնունու վարչապետությունը[504]:

Հովհ. Քաջազնունին 1918 թ. հունիս-հուլիսին կազմել էր մի ծրագիր-նախագիծ (հայտագիր), որում ներկայացնում էր իր գլխավորած ժամանակավոր կառավարության ներքին և արտաքին քաղաքականության ռազմավարության հիմնական ուղղությունները:

Օգոստոսի 3-ին Հայաստանի խորհրդի երկրորդ նիստում վարչապետը իրատեսորեն ներկայացրեց ժամանակավոր կառավարության ծրագրի նախագիծը:

Ավելորդ չենք համարում այստեղ ամբողջությամբ բերել վարչապետի ելույթի նախաբանում ներկայացված այն հույժ կարևոր փաստարկները, որոնցից էլ շատ պարզ երևում է, թե

---

502 Տե՛ս նույն տեղը, էջ 9:

503 Տե՛ս նույն տեղը:

504 Տե՛ս **Արթուր Վաղարշյան**, Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918 – 1920 թթ.), Երևան, ԵՊՀ, 2012, էջ 24:

ռազմական, քաղաքական և տնտեսական ինչպիսի ծանրագույն դրության մեջ էր գտնվում Հայաստանի Հանրապետությունն իր անկախության նախօրեին և դրանից հետո: «Բացառիկ ծանր պայմանների մեջ գործի է անցել իմ կազմած կառավարությունը, - ասում է վարչապետը: - Նա կոչված է իրականացնելու գործադիր իշխանություն մի պետության մեջ, որ դեռ նոր է ծնունդ առել և տակավին դուրս չէ եկել իր կազմակերպման առաջին շրջանից: Կառավարությունը չունի ոչ մի հենարան անցյալում. նա չի հաջորդում նախկին կառավարության՝ շարունակելու արդեն ընթացքի դրած պետական աշխատանքը, նա նույնիսկ չի ժառանգում կենտրոնական իշխանության կարիքներին հարմարեցված պատրաստի ապարատներ: Նա հարկադրված է սկսելու ամեն բան սկզբից, **անձև քառսից և ավերակների կույտից նա պետք է ստեղծի կենսունակ և աշխատունակ մարմին**:

Մյուս կողմից, կառավարությունը գտնում է երկիրը այնպիսի վիճակի մեջ, որի բնորոշման համար մի բառ կա միայն՝ կատաստրոֆային:

Չորս տարի տևող պատերազմը (Առաջին աշխարհամարտ – Գ. Պ.), մեծ հեղափոխությունը (1917 թ. փետրվարյան հեղափոխությունը – Գ. Պ.), ռուսական զորքերի անկանոն նահանջը մեր սահմաններից, կայսրության տարրալուծումը, պատերազմական ճակատի վրա կրած մեր պարտությունը, տերիտորիաների կորուստը, Անդրկովկասի բաժանումը անջատ պետությունների, այս խորին ցնցումները չէին կարող չթողնել իրենց հետևից ահռելի հետքեր: Տնտեսական կյանքի ու ֆինանսական դրության կատարյալ քայքայում, դադարում ապրանքների ու արդյունաբերության և փոխանակության, կենսամթերքների ծայր աստիճան պակասություն, ամե-

նաանհրաժեշտ առարկաների պակասություն կամ սոսկալի թանկություն, ներմուծման բացարձակ ընդհատում, երկաթուղային հաղորդակցության դադարում, երթևեկության ուրիշ միջոցների պակասություն, ապա՝ հարյուր հազարներով հաշվվող անտուն և անսնունդ գաղթականություն, անապահով կացություն սահմանների վրա և որպես անխուսափելի հետևանք այս բոլորի՝ անիշխանություն: Ահա թե ինչպիսի ծանր պայմանների մեջ կանչվել է աշխատանքի իմ կառավարությունը:

**Այս բացառիկ դրությունը նախորոշում է արդեն կառավարության բնույթը: Նա չի կարող ձգտել բազմակողմանի և լրիվ գործունեության, չի կարող ունենալ լայն ծրագիր և սահմանափակվելու է ամենաանհրաժեշտ ու միանգամայն անհետաձգելի խնդիրներով:**

**Կասեցնել քայքայման պրոցեսը, հանել երկիրը անիշխանական վիճակից ու ստեղծել պետական շինարարության համար անհրաժեշտ պայմաններ, ահա թե ինչպես է ըմբռնում իր կոչումը ներկա կառավարությունը»**[505] (ընդգծումը մերն է – Գ. Պ.):

Այնուհետև խորհրդի նիստում Հովհ. Քաջազնունին հրապարակեց երկիրն այդ խորը ճգնաժամից դուրս բերելու՝ իր գլխավորած ժամանակավոր կառավարության ներքին և արտաքին քաղաքականության բնագավառներում իրականացվելիք ռազմավարական հետևյալ խնդիրները.

---

[505] Արձանագրություններ, էջ 10:

## Ա. ներքին քաղաքականության բնագավառում

1. Հաստատել երկրում տարրական իրավակարգ, կյանքի և գույքի ապահովություն:

2. Բացել հաղորդակցության ճանապարհները՝ անարգել երթևեկության համար:

3. Վերականգնել փոստ-հեռագրական նորմալ հաղորդակցություն թե՛ երկրի ներսում և թե՛ հարևան պետությունների հետ:

4. Եռանդուն միջոցների դիմել՝ կարելվույն չափ մեղմացնելու պարենավորման ճգնաժամը:

5. Տնօրինել գաղթականների և փախստականների վիճակը՝ մասամբ վերադարձնելով իրենց նախկին տեղերը, մասամբ տեղավորվելով նոր վայրերում:

6. Նախապատրաստել Հայաստանի Սահմանադիր ժողովի հրավիրում՝ կարելվույն չափ շուտ:

## Բ. Ֆինանսների քաղաքականության բնագավառում

Հող նախապատրաստել սեփական դրամական համակարգի հիմքը դնելու համար*: Ձեռնարկել անհրաժեշտ քայլեր, որպեսզի երկիրը ապահովվի դրամական միջոցներով, վերականգնվեն արդյունաբերական կյանքը և ապրանքների փոխա-

* Հասկանալի է, որ նորանկախ Հայաստանը մետաղյա դրամ (ոսկի կամ արծաթ) չուներ: Հանրապետության գոյության առաջին շրջանում (1918 թ. հունիս-նոյեմբեր) չուներ նաև իր թղթադրամը և շրջանառության մեջ էր դրել ռուսական ու անդրկովկասյան թղթադրամները: Միայն 1919 թ. օգոստոսին Հայաստանի Հանրապետությունն ունեցավ սեփական թղթադրամը (տե՛ս **А. Р. Тевотросян**, Бумажные денежные знаки Армении, Ереван, 2020):

նակությունը, ինչպես նաև մշակվի հարկերի առողջ համակարգ:

### Գ. Արդարադատության քաղաքականության բնագավառում

Հարմարացնել դատարանը երկրի քաղաքացիական իրավահասկացման և իրավական սովորույթների պայմաններին՝ միաժամանակ մասնակից անելով քրեական դատավարությանը ժողովրդի ներկայացուցիչներին:

### Դ. Զինվորական քաղաքականության բնագավառում

Վերականգնել երկրի զինվորական ուժերը՝ նպատակ ունենալով ստեղծել թվով ոչ մեծ, բայց ոգով ու կարգապահությամբ ուժեղ բանակ[506]:

Դժվար չէ նկատել, որ երկրի ներքին քաղաքականության ոլորտում ժամանակավոր կառավարության ծրագրի նախագծի հիմքում դրվել էին այն հիմնական ու անհետաձգելի ռազմավարական խնդիրները, որոնց լուծմամբ երկիրը դուրս էր բերվելու ծանրագույն ճգնաժամից և ապահովվելու էր փոքրինչ կայունություն: Հովհ. Քաջազնունու գնահատականով, եթե կառավարությանը «… հաջողվի վերը նշված խնդիրների թեկուզ մի մասին բարենպաստ լուծում տալ, ես կհամարեմ, որ նա երկրին մեծ և անգնահատելի ծառայություն է մատուցել…»[507]:

---

[506] Տե՛ս Արձանագրություններ, էջ 10-11:
[507] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 10, թ. 6:

Ինչպես վերը նշվեց, Հայաստանի առաջին Հանրապետության անկախացման առաջին ամիսներին **երկիրը գոյատևեց սոցիալ-տնտեսական, քաղաքական անասելի ծանր պայմաններում, որից էլ բխելու էին իր վարելիք արտաքին քաղաքականության ռազմավարության հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները:**

Խորհրդի նիստում վարչապետ Հովհ. Քաջազնունին ներկայացրեց ժամանակավոր կառավարության **արտաքին քաղաքականության ռազմավարության կենսականորեն կարևոր հետևյալ հիմնական ուղղությունները.**

1. Ամրացնել Օսմանյան կայսրության հետ կնքված հաշտությունը և բարիդրացիական հարաբերություններ հաստատել նրա հետ: Խստիվ կատարել այն բոլոր պարտականությունները, որոնք Հայաստանը հանձն է առել Օսմանյան կայսրության հանդեպ և հետևել, որ Օսմանյան կայսրությունը իր կողմից անի նույնը հանրապետության վերաբերմամբ: Մասնավորապես՝ լուծել Հայաստանից օսմանյան զորքերի դուրս բերելու հարցը և ապահովել գաղթականների վերադարձը:

2. Ադրբեջանի և Վրաստանի հետ փոխադարձ համաձայնության գալով՝ լուծել Հայաստանի և այդ պետությունների սահմանների հարցը՝ հիմք ունենալով էթնիկական սկզբունքը, իբրև միակը, որ համապատասխանում է ռամկավար պետությունների ոգուն և նպատակներին:

3. Լուծարել, համաձայնության գալով Ադրբեջանի և Վրաստանի հետ, ընդհանուր հիմնարկությունները և գույքը, որ մնացել են Անդրկովկասյան Հանրապետությունից[508]:

---

[508] Տե՛ս Արձանագրություններ, էջ 11:

4. Կատարել Բաթումի դաշնագրի պարտավորությունները՝ նույնը պահանջելով նաև Թուրքիայից մինչև Կոստանդնուպոլսի խորհրդաժողովի կողմից դրանց վերանայումը: Մասնավորապես՝ վերահսկել Հայաստանի տարածքով օսմանյան զորքերի տեղափոխությունը[509]:

5. Հաստատել բարիդրացիական հարաբերություններ հարևան պետությունների հետ՝ հատուկ ուշադրություն դարձնելով առևտրական կապերի վերականգնման հարցին[510]:

Այս էր կառավարության ծրագիրը: «Սա կարող է անվանվել պետության գոյությունը ապահովեցնող ամենաանհրաժեշտ գրավականների ծրագիրը,- նշում է վարչապետը:- Պարզ է, որ նա չի ընդգրկում երկրի բազմազան կարիքները իրենց ամբողջությամբ, որ նրա սահմաններից դուրս մնում են մի շարք կարևոր և արդեն հասունացած խնդիրներ: Բայց կառավարությունը չի դնում հերթի այդ խնդիրները, որովհետև նրանց լուծումը այսօրվա պայմանների մեջ համարում է անկարելի: Կառավարությունը չի ուզում սխալների մեջ գցել երկիրը լայն հեռանկարներով և անիրագործելի խոստումներով, չի ուզում վերցնել իր վրա պարտականություններ, որոնց կատարումը վեր է իր ուժերից: Կառավարությունը համոզված է, որ առաջադրած ծրագիրը մաքսիմումն է այսօրվա հնարավորության: Կառավարությունը լարելու է իր ամբողջ ուժն ու կարողությունը այդ մաքսիմումին հասնելու և հույս ունի հաջողությամբ լուծելու դրված խնդիրների գոնե մի մասը, եթե իր կողմն ունենա խորհրդի անվերապահ վստահությունը, գոր-

---

[509] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 5:
[510] Տե՛ս նույն տեղը:

ծուն աջակցությունը»[511]: Սրանով Հովի. Քաջազնունին ամփոփեց իր **ոչ ծավալուն** ռազմավարական ծրագրային հիմնական ուղղությունները:

Օգոստոսի 5-ին Հայաստանի խորհրդի երրորդ նիստում քննարկման դրվեց ժամանակավոր կառավարության ծրագրի նախագիծը, որն ընդունվեց մեծ դժկամությամբ և արժանացավ կուսակցությունների խմբակցությունների և առանձին պատգամավորների սուր քննադատությանը: Օրինակ՝ Սոցիալիստ-հեղափոխական կուսակցության խմբակցության անունից Ա. Խոնդկարյանը հայտարարեց, որ ծրագրի նախագծում համառոտ են ներկայացված հանրապետության արտաքին քաղաքականության խնդիրներն ու մանրամասնությունները: «Պատգամավորին, - նշում է նա, - անհասկանալի են թվում այն շարժառիթները, որոնք ստիպել են կառավարությանը ներկայանալ խորհրդարանին այսպիսի հայտագրով, որի մեջ կառավարության իսկական դիտավորությունները քողարկված են ընդհանուր խոսքերով: Բայց հենց այդ հանգամանքը հնարավորություն չէ տալիս որոշ գաղափար կազմելու կառավարության և նրա քաղաքականության մասին: Այդ պատճառով սոց.-հեղ. ֆրակցիան, դժվարանալով միայն հայտագրի հիման վրա ճշտել իր վերաբերմունքը դեպի Քաջազնունիի դահլիճը, որոշել է մնալ ձեռնպահ վստահության կամ անվստահության բանաձևի քվեարկության ժամանակ»[512]:

Նա զարմանք հայտնեց նաև, որ ոչ մի խոսք չի ասվում Ռուսաստանի հետ ունենալիք հարաբերությունների մասին, ապա հարց բարձարացրեց՝ «արդյո՞ք այդ բացատրվում է նրա-

[511] Արձանագրություններ, էջ 11-12:
[512] Նույն տեղում, էջ 13:

նով, որ ժամանակավոր կառավարությունը Ռուսաստանի հարցը համարում է լուծված, թե՞ ուրիշ նկատառումներ կան»[513]:

Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Ա. Մխիթարյանը իր խմբակցության անունից գոհունակություն հայտնեց օգոստոսի 3-ին խորհրդի նիստում հրապարակված ժամանակավոր կառավարության ծրագրի նախագծի վերաբերյալ. «Կառավարությունը որոշել է հետևել ռեալ քաղաքականության և խուսափել է ծրագրային հայտարարություններից»[514]: Այնուհանդերձ նա իր խմբակցության անունից անընդունելի համարեց ծրագրի նախագծի՝ հատկապես Թուրքիայի հետ հարաբերություններին վերաբերող մասը, որտեղ ասված էր. «Ամրացնել Օսմանյան կառավարության հետ կնքված հաշտությունը և բարիդրացիական հարաբերություններ հաստատել նրա հետ: Խստիվ կատարել այն բոլոր պարտականությունները, որ մենք հանձն ենք առել Օսմանյան կառավարության հանդեպ և հետևել, որ Օսմանյան կառավարությունը իր կողմից անի նույնը մեր վերաբերմամբ, մասնավորապես լուծել օսմանյան զորքերի մեր երկրից դուրս բերելու հարցը և գաղթականների վերադարձը»: Նա մեծ զարմանք հայտնեց, «…թե ինչպես կառավարությունը անտես է անում բովանդակ հայ ժողովրդի տենչն ու կենսական շահերը այնպիսի մի գործում, որից կախված է հայ պետության լինելու-չլինելու հարցը: Մինչդեռ կառավարության պատգամավորները Կ. Պոլսում աշխատում են Օսմանյան պետության և նրա դաշնակից պետությունների համաձայնությամբ վերաքննել Բաթումի դաշ-

[513] Նույն տեղում, էջ 12:
[514] Նույն տեղում, էջ 13:

նագիրը՝ նպատակ ունենալով ընդարձակել մեր պետության սահմանները և հնարավորություն տալ ժողովրդին ապրելու պետական կյանքով. մինչդեռ Հայաստանի խորհրդի բացման հանդիսավոր օրը պ. նախագահը (Ավետիք Սահակյանը – Գ. Պ.), թարգման հանդիսանալով ժողովրդի միահամուռ տենչանքին, հույս հայտնեց, թե **«սահմանները քարացած չեն, որ նրանք կընդարձակվեն կյանքի երկաթե օրենքի ուժով, մեր արդար և անվիճելի իրավունքների պաշտպանությամբ գրավված հողամասերի վերաբերմամբ»**, կառավարությունն իր հայտարարությամբ լիովին հաշտվում է Բաթումի դաշնագրի հետ և խոստանում է նրան ամրապնդել, սրանով կանխորեն գլխատելով իր պատգամավորների գործը և ուղղակի ի չիք դարձնելով նրան»[515]:

Ա. Մխիթարյանը դժկամություն հայտնեց նաև, որ ժամանակավոր կառավարությունը լռում է, թե նորակախ Հայաստանը ինչ հարաբերություն է պահպանելու հարևան նոր և հեռավոր մեծ պետությունների հետ. ինչ կողմնորոշման է հետևելու իր արտաքին քաղաքականության մեջ. մի հանգամանք, որ վճռական նշանակություն ունի մեր երկրի միջպետական հարաբերությունների հաստատման համար:

Նրա կարծիքով՝ ժամանակավոր կառավարության ծրագրի նախագիծը թերի է և շատ մասերում՝ անբավարար: Հետևաբար Հայ ժողովրդական կուսակցության խմբակցությունը հայտարարում է, որ կաջակցի կառավարությանն այն չափով միայն, որ չափով նա կիրագործի ծրագրի նախագծի այն խոստումները, որոնց դեմ խմբակցությունն առարկություն չունի, և

[515] Նույն տեղում, էջ 14:

որչափ նա նկատի կունենա և կաշխատի իրագործել խմբակցության դիտողությունները[516]:

Օգոստոսի 6-ին Հայաստանի խորհրդի չորրորդ նիստում Հովհ. Քաջազնունին տվեց բացատրություններ օգոստոսի 5-ի երրորդ նիստում խորհրդարանականների հնչեցրած սուր քննադատություններին և դիտողություններին, որոնք վերաբերում էին երկրի ներքին և արտաքին ասպարեզներում ժամանակավոր կառավարության վարելիք քաղաքականությանը և այլն:

Նա, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության այս կամ այն քննադատություններին և դիտողություններին, ներկայացրեց իր փաստարկված և հիմնավոր բացատրությունները:

Վարչապետը, հակադրվելով առանձին պատգամավորների տեսակետներին, վճռականորեն հայտարարեց, որ կառավարությունը հավատարիմ է մնալու օսմանյան Թուրքիայի հետ ստորագրած Բաթումի հաշտության դաշնագրի պայմաններին և ոչ մի շեղում թույլ չի տալու. «Այո՛, պիտի ասեմ, որ քանի որ դաշնագրով մենք պարտականություններ ենք հանձն առել, որոնք նոր ակտով փոխված չեն, մենք պիտի կատարենք խստիվ և ուրիշից էլ պիտի պահանջենք նույնն անել: … **Պատգամավորներ Մամիկոնյանը և Մելիքյանը պահանջում են կառավարությունից լինել խիզախ, սակայն, քանի գոյություն ունի ներկա կառավարությունը, նա երկիրը չի դնի նորանոր արկածների և փորձությունների առաջ և ուրիշներին էլ թույլ չի տա նույնը անել»**[517] (ընդգծումը մերն է – Գ. Պ.):

---

[516] Տե՛ս նույն տեղը:

[517] Նույն տեղում, էջ 18:

Հիշեցնենք, որ օգոստոսի 3-ի Խորհրդի նիստում Հովի. Քաջազնունին պատգամավորներին ավելորդ կրքերից զերծ պահելու նպատակով նշել էր. **«Կառավարությունը չի ուզում սխալների մեջ գցել երկիրը լայն հեռանկարներով և անիրագործելի խոստումներով, չի ուզում վերցնել իր վրա պարտականություններ, որոնց կատարումը վեր է իր ուժերից»:**

Իրոք, որ օգոստոսի 3-ի Խորհրդի երկրորդ նիստում Հովի. Քաջազնունին **շրջանցեց** Հայաստանի Հանրապետության իրականացվելիք արտաքին քաղաքականության ռազմավարության ու մարտավարության առանձին կետերի մեկնաբանությունները և հիմնավոր եզրահանգումները, ինչպես նաև զգայուն և բարդ խնդիրները, դրանց ցավոտ ու դժվարին լուծումները, որոնք ներառված էին ժամանակավոր կառավարության ծրագրի **ձեռագիր** նախագծում: **Սակայն հարց է ծագում՝ ինչո՞ւ, և որո՞նք էին խորհրդի նիստում դրանք չհրապարակելու հիմնական դրդապատճառները:** Փորձենք պատասխանել այդ հարցերին:

Ակներև է, որ Հովի. Քաջազնունին, լինելով շրջահայաց և խորաթափանց պետական-քաղաքական գործիչ, ժամանակավոր կառավարության ծրագրի նախագիծը մշակելիս լավագույնս հաշվի էր առել Առաջին աշխարհամարտի տարիներին տարածաշրջանում մեծ տերությունների աշխարհաքաղաքական ուժերի վերադասավորումները, սուր հակասությունները, ռազմաքաղաքական և տնտեսական շահերի բախումները, ինչպես նաև օսմանյան Թուրքիայի կողմից ռազմաքաղաքական մարտավարության և դիվանագիտական փակուղիների բարդագույն պայմանները, որոնց կիզակետում իր քաղաքական ու տնտեսական անասելի խորը ճգնաժամով հայտնվել էր Հայաստանի Հանրապետությունը, և վերջապես՝ արտաքին ու

ներքին գործոնների հարկադրանքը նորանկախ երկրի վրա և այլն:

Այսպես, խորհրդի նիստում չհրապարակված ծրագրի **ձեռագիր** նախագծում* (ռուսերեն), Հովհ. Քաջազնունին գրում է. **«Արտաքին քաղաքականության բնագավառում ես կհետևեմ մի գերակա սկզբունքի՝ հաստատել բարիդրացիական հարաբերություններ հարևան պետությունների հետ՝ բոլոր հնարավոր միջոցներով խուսափելով նրանց հետ ընդհարումից: Դա թելադրված է այն հանգամանքով, որ մեր ժողովրդին, մեր երկրին անհրաժեշտ է հանգիստ, անհրաժեշտ է խաղաղություն, թեկուզ և անկայուն: Մենք հյուծված ենք, ուժասպառ և ի վերջո՝ կազմալույծ: Մենք ընդունակ չենք ուժերի հետագա լարման, մենք չենք դիմանա նոր փորձությունների: Արտաքին իրավիճակի ցանկացած նոր բարդացում սպառնում է մեզ անխուսափելի և վերջնական կործանմամբ: Մենք ջախջախված, պարտված կողմ ենք: Մենք դա պետք է հստակ գիտակցենք, միշտ հիշենք և քաջություն ունենանք համապատասխան եզրակացություններ անելու:**

**Այս պահին մենք կարող ենք ունենալ մեկ նպատակ՝ փրկել հայ ժողովրդի բեկորները և հերոսական փորձ անել դեռևս մեր ձեռքին մնացած փոքր տարածքի վրա պետություն հիմնել:**

**Այս գիտակցությունը պետք է դառնա մեր ներկայիս արտաքին քաղաքականության անկյունաքարը»**[518] (ընդգծումը մերն է – Գ. Պ.):

---

* Ձեռագիր նախագիծն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

[518] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 6-7, տե՛ս **Գ. Հ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), էջ 33-34:

Իրապես, հայ ժողովրդի այս փրկված հատվածը գերմարդկային ճիգերով փորձում էր ոտքի կանգնել, իրեն բաժին ընկած այդ փոքր տարածքի վրա պետություն հիմնել: Իսկ դրա համար նրան անհրաժեշտ էր խաղաղություն, այլապես չէր դիմանա հարևան պետություններից սպասվող նոր փորձություններին, որոնք խիստ անբարյացակամ ու թշնամական վերաբերմունք էին դրսևորում հայ ժողովրդի՝ օրհասական վիճակում գտնվող այս հատվածի նկատմամբ: **Ուրեմն նորաստեղծ հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը հարևան պետությունների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելն էր, ինչն այնքան էլ դյուրին չէր:** Ընդ որում, առավել մեծ էր թուրքական ագրեսիայի վտանգը. թուրքերը դեռևս չէին հրաժարվել պանթուրքական ռազմավարական ծրագրի իրականացման ճանապարհին ընկած գլխավոր խոչընդոտը՝ Հայաստանը, պատմական ասպարեզից վերացնելու գաղափարից:

**Ծրագրի նախագծից ակնհայտ է դառնում, որ արտաքին հարաբերություններում Հայաստանի Հանրապետության համար առաջնահերթ խնդիրն օսմանյան Թուրքիայի նկատմամբ որդեգրելիք քաղաքականությունն էր:** Հովհ. Քաջազնունին իրավացիորեն կարծում էր, որ բոլոր հնարավոր միջոցները պետք է գործադրվեն այդ երկրի հետ հաշտության եզրեր գտնելու համար: Վարչապետը ականատեսն էր Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ օսմանյան Թուրքիայի վարած քաղաքականության. «Թուրքիան մեզ հսկայական չարիք պատճառեց, նա անողոք և դաժան էր մեր նկատմամբ, նա մեր ազգային կառույցին այնպիսի սարսափելի հարված հասցրեց, որի հետևանքներից մենք միգուցե այդպես էլ չապաքինվենք:

Յուրովի լուծելով իր պետական խնդիրները՝ թուրքական պետությունը գիտակցաբար և ծրագրված ոչնչացրեց Արևելյան Անատոլիայի (Արևմտյան Հայաստան – Գ. Պ.) հայությանը՝ դրանով իսկ վերջ դնելով հայ-թուրքական հիմնախնդրին»[519]:

Խախտելով անգամ 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում կնքված հաշտության դաշնագիրը՝ օսմանյան Թուրքիան Արևելյան Հայաստանից անջատեց երկու հայկական մարզերը (Կարսի և Կաղզվանի) և հասավ մինչև Արաքս՝ հաստատվելով Շիրակի և Արարատյան դաշտավայրերի մուտքի մոտ: Հետագայում՝ 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի հաշտության դաշնագրով Թուրքիան անջատեց Հայաստանից ամբողջ Ախալքալաքի գավառը, Ալեքսանդրապոլի գավառի մեծ մասը՝ քաղաքի հետ միասին, Էջմիածնի և Երևանի գավառների լավագույն մասերը ու ամբողջ Սուրմալուի գավառը: Նա Հայաստանին թողեց չափազանց փոքր տարածք՝ ինքնուրույն պետական գոյության համար: Բայց անգամ դրանով չսահմանափակվեց: Խախտելով նույն այդ Բաթումի հաշտության դաշնագիրը՝ թուրքական զորքերը մտան Ղարաքիլիսա, Ջալալօղլի և չէին ցանկանում հեռանալ այնտեղից: Եվ նրանք կարող էին հայտնվել Երևանում[520]:

Թուրքիան խախտում էր նաև Բաթումի հաշտության դաշնագիրը փախստականների հարցի առնչությամբ: Փախստականների վերադարձը որոշ շրջաններ ուղղակի արգելված էին, իսկ մյուս վայրերում ստեղծված էին պայմաններ այն անհնա-

---

[519] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 7:
[520] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 7:

րին դարձնելու համար[521]: Հովի. Քաջազնունին, իբրև պետական-քաղաքական գործիչ, թերևս ամենասթափ ու ճշմարիտ գնահատականն է տալիս թուրքական քաղաքականությանը. «… Թուրքիան Անդրկովկասում ևս, ինչպես Արևելյան Անատոլիայում, ձգտում է քաղաքականապես ոչնչացնել հայկական տարրը և խոչընդոտել հայկական պետության կայացումը: **Այսպիսով մենք հիմքեր չունենք բարեկամական զգացումներ տածելու Թուրքիայի նկատմամբ նրա ոչ անցյալի և ոչ էլ ներկա գործունեության համար: Նմանապես մենք հիմքեր չունենք կարծելու, որ ապագայում Թուրքիան մեր նկատմամբ բարյացակամ կամ գոնե չեզոք դիրք կունենա: Այստեղից կարելի է հանգել այն տրամաբանական եզրակացությանը, որ մենք պետք է խզենք հարաբերությունները Թուրքիայի հետ և, պաշտպանելով մեր կենսական շահերը, պայքարի մեջ մտնենք նրա դեմ: Հենց այդ եզրակացության հետ ես համաձայն չեմ և այն պատճառով, որ համարում եմ այդ պայքարը մեր ուժերից վեր»**[522] (ընդգծումը մերն է – Գ. Պ.):

Հայոց ցեղասպանությունից ու հայրենազրկումից հետո արյունաքամ հայ ժողովուրդը արդյոք ի վիճակի՞ էր այլ ուղի ընտրելու, այսինքն՝ պայքարի մեջ մտնելու օսմանյան Թուրքիայի դեմ այն դեպքում, երբ վերջինս ուներ լավ կազմակերպված, կարգապահ բանակ, որը գտնվում էր Հայաստանի Հանրապետության տարածքում: Ավելին, Թուրքիան իր ձեռքում էր պահում նաև հաղորդակցության գլխավոր ուղիները և ռազմավարական կարևոր նշանակության կենտրոնները: Տրապիզոնի, Էրզրումի, Բաթումի, Կարսի և Ալեքսանդրապոլի գրա-

---

[521] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 7:
[522] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 6-7:

վումից հետո թուրքական բանակը իր տրամադրության տակ ուներ մեծ քանակությամբ զենք, զինամթերք և պարեն[523]:

Ի վերջո, բուն Հայաստանի Հանրապետությունում թուրքերն ունեին ամուր հենարան՝ հանձին մահմեդական բնակչության, որն իրապես պաշտպանում էր օսմանյան Թուրքիային:

Այսպիսով, իրատես վարչապետը եզրահանգում է. «Մենք ի՞նչ կարող ենք հակադրել այդ ահռելի ուժին: Նախկին զորամիավորումների կազմալուծված բեկորներ՝ հյուծված, սոված, վատ զինված…: Իսկ ամենակարևորը և ամենասարսափելին այն է, որ մենք չունենք և մոտ ապագայում չենք կարող ունենալ պետական մեխանիզմ: Մեր «…» կառավարությունը չի կարող կարգուկանոն հաստատել անգամ այն շենքում, որտեղ տեղակայված է:

**Կարո՞ղ է այդպիսի կառավարությունը պատերազմ մղել Թուրքիայի դեմ: Այս հարցին ես կարող եմ տալ միայն մեկ պատասխան՝ ոչ, չի կարող»**[524] (ընդգծումը մերն է – Գ. Պ.):

Նրա կարծիքով, եթե դեռ ինչ-որ մի հնարավորություն կար փրկելու հայ ժողովրդի բեկորները, ապա առաջին հերթին պետք էր օսմանյան Թուրքիայի հետ համաձայնության հանգել. **«Դա նշանակում է, որ մեր պահանջներն ու բողոքները չպետք է հանգեցնեն բախման: Այսպիսին պետք է լինի մեր քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ»**[525] (ընդգծումը մերն է – Գ. Պ.): Այլընտրանք չկար. դա էր թելադրում երկրի օրհասական վիճակը:

---

[523] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 8:
[524] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 8-9:
[525] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 11:

1918 թ. հունիսի 3-ի Բաթումի պարտավորագրով և հունիսի 4-ի հաշտության դաշնագրով Թուրքիան Հայաստանի Հանրապետության համար գծել էր մի շրջանակ, որը հաղթահարելու և արտաքին աշխարհ դուրս գալու համար պահանջվում էին ուժ, ժամանակ ու գերմարդկային վիթխարի ջանքեր: Առաջինը ճանաչելով Հայաստանի Հանրապետության անկախությունը և «ողջունելով Հայկական հարցի վերջնական լուծումը»՝ թուրքական ռազմաքաղաքական իշխանությունները հունիսի վերջին մամուլի էջերում հայտնում էին, որ իբր «… իրենք ստեղծել են Հայաստանը և այդպիսով Հայկական հարցը վերջնականորեն համարում են փակված»[526]:

Հայկական հարցը տասնամյակներ շարունակ կանգնած էր Թուրքիայի կոկորդին. խոշոր պետությունները շահարկում էին այն այդ երկրի ներքին գործերին միջամտելու, այնտեղ իրենց ազդեցությունը հաստատելու նպատակով: Թուրքական պետությունը բնականաբար ձգտում էր որքան հնարավոր է շուտ ազատվել այդ մեծ «գլխացավանքից»: Դրա համար ընտրեց հայությանն ու Հայաստանը պատմական ասպարեզից ջնջելու եղանակը: Այնպես որ, թուրքերի կողմից փարիսեցիություն էր հայտարարելը, թե լուծել են Հայկական հարցը, այն դեպքում, երբ նպաստավոր պահի պատրաստ էին բնաջնջելու հայության վերջին բեկորն անգամ: Բաթումի հաշտության դաշնագիրը մի հերթական քայլ էր այդ ճանապարհին:

Փոքր տարածքի վրա կծկված Հայաստանի Հանրապետությունը ավելի շատ նման էր ընդարձակ բանտի, քան թե անկախ պետության: Օսմանյան Թուրքիան երկիրը շրջապատել և մեկուսացրել էր արտաքին աշխարհից. «Հայաստանը մնա-

[526] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 116-117:

ցել էր մենակ, չորս կողմից շրջապատված թշնամի կամ անբարյացակամ ուժերով, առանց որևէ արտաքին նեցուկի և օգնության»[527],- գրում է Հովի. Քաջազնունին: Եվ ահա, խախտելով Բաթումի հաշտության դաշնագիրը, թուրքերն առանց որևէ առիթի ու առանց նախազգուշացման հուլիսի 7-9-ը կանոնավոր ռազմական գործողություններ սկսեցին Սարդարապատի և էջմիածնի հայկական զորամասերի դեմ՝ գրավելով Խաթունարխ, Չորանքեարա, Նեջիրլու գյուղերը[528]: 1918 թ. հունիս-օգոստոս և հետագա ամիսներին Հայաստանի Հանրապետության տարածքի կեսից ավելին լցված էր թուրքական զորքով, «մնացեալ մասը խճողուած ու խռովայոյզ վիճակի մէջ էր: Հայ ժողովուրդը ապրում էր գերագոյն տագնապի օրեր: **Մտաւորականութիւնը կծկուել ու խեղճացել էր: Հոգեկան հաւասարակշռութիւնն ու կորովը պահած գործիչները մատների վրայ էին համրվում»[529]** (ընդգծումը մերն է – Գ. Պ.): Թուրքերը գտնվում էին Երևանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա և կարող էին ուղղվել այնտեղ՝ վերջնական հարված հասցնելով երկրին: Ճիշտ է, նրանց դեմ կանգնած էր հայկական հուսալի մի զորամաս թե՛ թվով ու թե՛ ներքին կազմակերպվածությամբ ու «դիսցիպլինով» համեմատաբար ուժեղ զորք, «սակայն վերջինս,- գրում է Ա. Ջամալյանը,- ռազմամթերքի սաստիկ պակաս էր զգում և այդ պատճառով երկարատև կռուի դիմանալ չէր կարող»[530]:

---

527 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 48:

528 Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1928, նոյեմբեր, № 11, էջ 119:

529 **Ս. Վրացեան,** Խարխափումներ Յ. Քաջազնունու «Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլ ևս» գրքի առթիվ, Պոսթըն, 1924, էջ 156-157:

530 ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 22, թ. 6, գ. 37, թ. 19:

Հովհ. Քաջազնունին Խորհրդի նիստում անդրադարձավ նաև պատգամավորների այն հարցադրումներին, թե ինչու վարչապետը երկրի արտաքին քաղաքականության մասին խոսելիս, բացի անմիջական հարևաններ Թուրքիայից, Ադրբեջանից և Վրաստանից, մյուս պետությունների հետ ունենալիք հարաբերությունների մասին ոչ մի խոսք չի ասում: Նա շեշտեց. «Դրա պատասխանը շատ կարճ է. նախ իրավական տեսակետից մեր անկախությունը ճանաչել են առայժմ վերոհիշյալ երեք պետությունները և երկրորդ՝ մյուս պետությունների հետ հարաբերություն ստեղծելու տեխնիկական հարմարություն չկա: Ավելի լայն քաղաքական հարաբերություններ սկսելը ապագայի գործ է»[531]:

Իսկ ի՞նչ նկատի ուներ Հովհ. Քաջազնունին, երբ նշում էր, որ «մյուս պետությունների հետ հարաբերություն ստեղծելու տեխնիկական հարմարություն չկա»: Ուշագրավ է, որ ժամանակավոր կառավարության ծրագրի ձեռագիր նախագծում ներառված էր «Ինչպիսի՞ն պետք է լինեն մեր հարաբերությունները Ռուսաստանի, Անգլիայի և Գերմանիայի հետ»[532] կետը, սակայն նա **չհրապարակեց** այն խորհրդարանում:

Բոլորովին պատահական չէր, որ Հովհ. Քաջազնունին խորհրդարանում շրջանցեց ծրագրի ձեռագիր նախագծում տեղ գտած՝ Հայաստանի Հանրապետության ժամանակավոր կառավարության պաշտոնական դիրքորոշումը հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ[533]: Այն պարունակում էր բավականին իրատեսական դատողություններ. «Ռուսաս-

---

[531] Արձանագրություններ, էջ 17:

[532] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 11:

[533] Տե՛ս մանրամասն, **Գ. Հ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), էջ 47-60:

տանի հեռանալը Անդրկովկասից ուղղակի դժբախտություն է Հայաստանի համար: Դա մեզ համար ցանկալի չէր, և եթե Ռուսաստանը երբևէ վերադառնա Անդրկովկաս, կստանա մեր աջակցությունը: Սակայն մեր ընթացիկ քաղաքականությունը չի կարող կառուցվել ռուսական կողմնորոշման վրա: Ներկա պահին Ռուսաստանը մեզ ոչնչով օգնել չի կարող (խոսքը տեղում իրական օգնության և ոչ թե Կոստանդնուպոլսի խորհրդաժողովում դիվանագիտական աջակցության մասին է): Այդ պատճառով ես կարծում եմ, որ **Ռուսաստանի հետ դիվանագիտական խաղերը կարող են կործանարար լինել:**

**Դա կուժեղացնի թուրքերի կասկածամտությունը, և նրանք չեն վարանի դիմելու համապատասխան միջոցների Ռուսաստանի հետ համագործակցությունը խափանելու համար:... Ռուսական կողմնորոշումը քաղաքական ուղղություն է, որը կարող է անհրաժեշտ լինել ապագայում, սակայն այժմ այն կարող է հանգեցնել նոր բարդացումների...»** (ընդգծումը մերն է – Գ. Պ.):

Հարց է ծագում՝ ինչո՞ւ Հովհ. Քաջազնունին բացատրություն չտվեց խորհրդարանում, և ինչո՞ւ իր գլխավորած ժամանակավոր կառավարության ծրագրի ձեռագիր նախագծում ներառված չէին քաղաքական այդ հիմնական դրդապատճառները՝ «Ռուսաստանի հետ դիվանագիտական խաղերը կարող են կործանարար լինել» Հայաստանի համար և այլն:

Հարցն այն է, որ դեռևս 1918 թ. հունիսի 3-ին Բաթումում հայկական պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանը օսմանյան Թուրքիայի ճնշման ներքո ստորագրել էր մի փաստաթուղթ (պարտավորագիր) և ստանձել որոշակի պարտավորություն. **«Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է պատերազմի ամբողջ ընթացքում չպահ-**

**պանել և ոչ մի դիվանագիտական կապ այն պետությունների հետ, որոնք գտնվում են պատերազմական վիճակում Օսմանյան կայսրության հետ»**[534]: Այդ փաստաթղթից ակնհայտորեն բխում է, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում էր մի կողմից՝ պատերազմի ամբողջ ընթացքում կապեր չունենալ Համաձայնության պետությունների (Անտանտի), այդ թվում նաև Ռուսաստանի հետ, **իսկ մյուս կողմից՝ հանրային կարծիքին ներկայացնել այդ փաստաթուղթը նշանակում էր փորձության ենթարկել Հայաստանի Հանրապետության կառավարության վարկը**, որովհետև «ռուսահայերը,- գրում է Ա. Ջամալյանը,- երազում էին ռուսական տիրապետության վերադարձի մասին»[535]: Իրողությունն այն էր, որ հայ քաղաքական ու հասարակական լայն շրջաններին հայտնի չէր այդ փաստաթղթի (պարտավորագրի) գոյության մասին:

Հայ ժողովրդի հիշողության մեջ դեռ թարմ էին 1918 թ. հունիսի 6-ին Սարդարապատի հերոսամարտերի ժամանակ հայտնի դարձած Բաթումի (հունիսի 4-ի) հայ-թուրքական հաշտության դաշնագրի ծանր պայմանները: Հայաստանի խորհրդի շենքի առջև հավաքված ըմբոստ ցուցարարները դուրս էին եկել ընդդեմ դաշնագրի, իսկ սպա Վարդան Առաքելյանը գրգռել էր ժողովրդին չկատարել իշխանության հրահանգները՝ հորդորելով շարունակել պատերազմը: Ցույցը ցրվել էր ոստիկանական ուժով, իսկ հաջորդ օրը նա զինվորական դատարանի կողմից դատապարտվել էր երեք տարվա բանտարկության և զրկվել որոշ իրավունքներից[536]:

---

[534] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 32, թ. 6 (գործավարական թարգմանություն ֆրանսերենից):
[535] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հունիս, էջ 78:
[536] Տե՛ս Արձանագրություններ, էջ 20:

1918 թ. օգոստոսի 10-ին Հայաստանի խորհրդի վեցերորդ նիստում որոշվեց ներում շնորհել սպա Առաքելյանին հետևյալ հիմնավորումով՝ նա «նպատակ չի ունեցել տապալել կառավարությունը, այլ իր հայրենասիրական պարտքն է կատարել… վերականգնել նրա բոլոր իրավունքները»[537]:

Կարծում ենք՝ հունիսի 3-ի ստանձնած պարտավորության համաձայն էր, որ Հովհ. Քաջազնունին Խորհրդի նիստում շրջանցեց նաև Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշումը Համաձայնության պետությունների (Անտանտի) անդամ Անգլիայի վերաբերյալ: Ժամանակավոր կառավարության ծրագրի ձեռագիր նախագծում նշվում է՝ ակնհայտ է, որ Անգլիան եթե անգամ գալիս է դեպի մեզ, ապա այնքան դանդաղ, որ Թուրքիան կհասցնի մի քանի անգամ հաշվեհարդար տեսնել մեզ հետ մինչև առաջին անգլիացին ոտք կդնի Արարատյան դաշտավայր: Հնարավոր է, որ ոչ մեծ անգլիական մի ջոկատ արդեն ժամանել է կամ մոտ ապագայում կժամանի Բաքու: Հնարավոր է, որ այդ առաջին ջոկատին հաջորդեն անգլիական նոր ուժեր՝ թվով թեև փոքր, բայց նյութական միջոցներով ուժեղ: Բաքվի նավթային շրջանը և հյուսիսային Իրանի և Թուրքեստանի դարպասը հանդիսացող նավահանգիստը այնպիսի արժեքավոր ավար են, որ այն ձեռք բերելու համար Անգլիան միջոցներ չի խնայի[538]:

Անգլիան, ըստ վարչապետի, կարող է լուրջ օգնություն ցույց տալ Բաքվին, բայց ոչ Հայաստանին: Իր համար նշանակություն ունենալու դեպքում Անգլիան արագ արշավ կձեռնարկեր դեպի Ջուղա և ապա՝ Արաքսի հոսանքով դեպի վեր:

---

[537] Նույն տեղում:

[538] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 12:

Բայց այդպիսի արշավանք տեղի չի ունենում: Հենց միայն այն, որ թուրքերը չեն շտապում իրենց զորքերը Ալեքսանդրապոլից տեղափոխել Ջուլֆա, այլ ուղարկում են միայն Ելիզավետպոլ, ապացուցում է, որ նրանք Իրանական Ադրբեջանի կողմից հարված չեն սպասում: Մյուս կողմից դժվար է պատկերացնել, թե Երևանի նահանգում անգլիացիներին ինչը կարող էր հետաքրքրել: Ըստ Հովի. Քաջազնունու՝ «Մեր շահերի համար նրանք կձեռնարկեի՞ն արդյոք այդպիսի ծանր և վտանգավոր արշավ Միջագետքից Իրանի տարածքով դեպի Կենտրոնական Անդրկովկաս: **Չունենալով դրան հավատալու հիմքեր, ես կարծում եմ, որ անգլիական կողմնորոշումը ևս իրատեսական չէ և նույնպես կործանարար»**[539] (ընդգծումը մերն է – Գ. Պ.):

Ըստ Հովի. Քաջազնունու՝ այլ է Գերմանիայի դրությունը: Նրա կարծիքով, որպես օսմանյան Թուրքիայի ավագ և հզոր դաշնակից, Գերմանիան կարող է Թուրքիային պարտադրել այս կամ այն վարքագիծը: Բացի դրանից, գերմանական դրոշը արդեն ծածանվում է Անդրկովկասում: Գերմանիան իրական ուժ է, որը իրեն զգալ է տալիս ամեն քայլափոխի: Տվյալ պահին եթե մեկը կարող է պաշտպանել Հայաստանը Թուրքիայից, Գերմանիան է: Նա կարող է օգնել մեզ, եթե ցանկանա: Եվ մենք պետք է անենք ամեն ինչ նրան մեր կողմը գրավելու և մեր գործով հետաքրքրելու համար: Բայց այստեղ անհրաժեշտ է ծայրահեղ զգուշություն. Անդրկովկասի հարցում Գերմանիայի և Թուրքիայի միջև կան անհամաձայնություններ, այստեղ նրանց շահերը բախվում են: Նրանք դաշնակիցներ են, բայց միևնույն ժամանակ նաև մրցակիցներ և այն էլ շատ խանդոտ մրցակիցներ: Նրանք ուշադրությամբ հետևում են իրար, և

[539] Նույն տեղում:

նրանցից յուրաքանչյուրի փոքր-ինչ շեղումը առաջ է բերում մյուսի բողոքը[540]:

Հովի. Քաջազնունին կարծում էր. «Մենք պետք է խնդրենք Գերմանիայի օգնությունը այն դեպքում միայն, երբ ստանանք նրա համաձայնությունը այդ օգնությունը հատկացնելու հարցում և այն պահին, երբ այդ օգնությունը իսկապես կարող է հատկացվել: Այս պայմանների բացակայության դեպքում մենք պետք է հետևենք Սկիլլայի և Խարիբդայի միջև մանևրելու քաղաքականությանը: **Գերմանիայի նկատմամբ զգուշավոր քաղաքականությունը չի կարող վտանգավոր լինել, քանի որ Գերմանիան մեզ չի կասկածի թրքասիրության մեջ, այնինչ Թուրքիան գիտի, որ մենք ամեն պահի պատրաստ ենք անցնելու իր հակառակորդների կողմը: Դրա համար անհրաժեշտ է ծայրահեղ զգուշություն Թուրքիայից պաշտպանվելու նպատակով Գերմանիայի ուշադրությունը գրավելու հարցում…»**[541]:

Եզրափակելով իր խոսքը Հայաստանի խորհրդի չորրորդ նիստում՝ վարչապետ Հովի. Քաջազնունին հայտարարեց. **«Այսպիսին է քաղաքականությունը, որ ես մտադիր եմ վարելու: Այն թելադրված է այսօրվա իրավիճակով: Եթե իրավիճակը փոխվի, իսկ դա մեր օրերում կարող է պատահել ամեն րոպե, և քաղաքական ուղու կտրուկ շրջադարձի կարիք զգացվի, այդժամ ես իմ տեղը կզիջեմ այլոց, որոնք ավելի լավ կգնահատեն ստեղծված իրադրությունը և երկիրը կտանեն նոր ճանապարհով…»**[542] (ընդգծումը մերն է – Գ. Պ.):

---

[540] Տե՛ս նույն տեղը:

[541] Նույն տեղում, թ. 13:

[542] Նույն տեղում, թ. 15:

Օգոստոսի 6-ին մեծ վերապահումով (11 ձեռնպահ) Հայաստանի խորհուրդը հաստատեց ժամանակավոր կառավարության ծրագրի նախագիծը:

Առաջին աշխարհամարտում օսմանյան Թուրքիայի և նրա դաշնակիցների պարտությունից հետո փոխվեց Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը:

## 3. Հայաստանի հարաբերությունները Ադրբեջանի և Վրաստանի հետ

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով քաղաքական և տնտեսական անասելի խորը ճգնաժամի մեջ, հարկադրված էր շարունակել պայքարը իր անմիջական հարևաններ Ադրբեջանի և Վրաստանի հետ՝ վերջիններիս միանգամայն տարբեր քաղաքական կողմնորոշումների, նպատակների ու տարածքային վեճերի պատճառով: Երեք հանրապետությունների միջև կային սահմանային և տարածքային բազմաթիվ կնճռոտ վեճեր, հնուց եկող փոխադարձ անվստահություն, կասկած ու երկյուղ և արմատական տարբերություն արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում: Ադրբեջանը անվերապահորեն, իսկ Վրաստանը աննշան վերապահումներով ձգտում էին մերձենալ օսմանյան Թուրքիային՝ Ռուսաստանի դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու համար, մինչդեռ Հայաստանը Թուրքիայի գերիշխանությունը Անդրկովկասում համարում էր ոչ միայն վտանգավոր, այլև պարզապես լուրջ սպառնալիք իր գոյության համար[543]:

Առաջին աշխարհամարտի հենց սկզբից կովկասյան թաթարները (ադրբեջանցիները) ամբողջովին հակված էին իրենց ցեղակից և կրոնակից օսմանյան Թուրքիայի կողմը, երբ «1917 թվականի վերջերին ռուսական զորքերը լքեցին Կովկասյան ճակատը, և տաճկական (թուրքական - Գ.Պ.) բանակը սկսեց իր հաղթական արշավանքը դեպի հյուսիս, թաթարները՝ համարյա առանց քողարկելու անցան Թուրքիայի կողմը,- գրում է

---

[543] Տե՛ս **Հովհ. Քաջազնունի,** Բաց նամակ Z – ին, Թուրքիա ? թե Ռուսաստան, Երևան, 1990, էջ 15:

Հովի. Քաջազնունին:- Նրանք ոչ միայն չէին ուզում շարունակել պատերազմը Թուրքիայի դեմ, այլև անում էին ամեն իրանց ձեռքից եկածը, որպեսզի Թուրքիան օր առաջ տիրապետի Անդրկովկասին»[544]: Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո «Ադրբեջանը (Անդրկովկասյան Թաթարստանը), հենվելով թուրքական բանակի ներկայության վրա,- շարունակում է Հովի. Քաջազնունին, - նեղում էր Հայաստանի արևելյան (մասամբ էլ՝ հյուսիսային) սահմաններին ու սպառնում էր սրի քաշել այդ կողմերի հայ ազգաբնակչությանը»[545]: Ոչ միայն սպառնում էր, այլև հենց նույն ժամանակաշրջանում սրի էր քաշում տասնյակ հազարավոր հայերի[546]:

Վրաստանի անկախության հռչակումից հետո վրաց կառավարությունը հստակ արտահայտեց իր արտաքին քաղաքական դիրքորոշումը հարևան երկրների և Ռուսաստանի նկատմամբ:

Բաթումի հաշտության դաշնագրի կնքումից հետո Վրաստանը սպառնում էր Հայաստանի Հանրապետությանը և պահանջում վերջ տալ ռուսական քաղաքական կողմնորոշմանը: Դա ինքնին նշանակում էր հրաժարվել հայկական տարածքներից, որդեգրել գերմանա-թուրքական կողմնորոշում և նրանց միջոցով ընդունել Անդրկովկասում Վրաստանի գերիշխանությունը:

Վրացիների համար թուրքական կամ ադրբեջանական վտանգ չկար, որ սպառնար նրանց ֆիզիկական գոյությանը և հարկադրեր փրկության ուղիներ որոնելու. վրացիների հա-

---

[544] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 40:

[545] Նույն տեղում, թ. 48:

[546] Տե՛ս «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.», կազմ. Ս. Միրզոյան, Ա. Ղազիյան, Երևան, 2003, էջ 89:

մար պայմաններն այնպես էին դասավորվել, որ նրանք դրսի օգնության ոչ մի սուր, հրամայական կարիք չունեին[547]:

Հայաստանի ժամանակավոր կառավարության ձեռագիր նախագծում Հովի. Քաջազնունին նշում է. «Վրաստանը արդեն արել է իր ընտրությունը. նա բացահայտորեն տրվել է Գերմանիային: Նա կարող է դա անել առանց ռիսկի, քանի որ Գերմանիան հիմնավորվել էր նրա տարածքում և պաշտպանում էր նրա սահմանները. Վրաստանին հասնելու համար Թուրքիան պետք է անցնի գերմանական զինվորի դիակի վրայով, քայլ, որին նա հեշտությամբ չի դիմի: Մեր իրավիճակը այլ է: Մեր տարածքում դեռևս ոչ մի գերմանական զինվոր, ոչ մի գերմանական դրոշ չկան, և կարելի է հուսալ, որ երբեք էլ չի լինի: Գերմանացիներին հետաքրքրում են Բաթում-Բաքու և Փոթի-Բաքու երկաթուղագծերը, բայց ոչ Երևանի նահանգը: Հնարավոր է, որ Գերմանիայի և Թուրքիայի միջև համաձայնությունը կկայանա հենց Հայաստանի հաշվին, և թուրքերը կշարունակեն տիրել Հայաստանի հողերը: Դրա համար էլ մեր մերձեցումը Գերմանիայի հետ պետք է ընթանա այնպես, որ չառաջացնի Թուրքիայի զայրույթը»[548]:

Օգտվելով արտաքին նպաստավոր պայմաններից՝ 1918 թ. հունիսի առաջին կեսին Նոյ Ժորդանիան և Նոյ Ռամիշվիլին Վրաստանի Ազգային խորհրդի և կառավարության անունից Թիֆլիս հրավիրեցին Հայոց ազգային կենտրոնական խորհրդի ներկայացուցիչներ Ավ. Ահարոնյանին, Հովի. Քաջազնունուն, Ալ. Խատիսյանին, Խ. Կարճիկյանին և Հ. Հախվերդյանին (Հախվերդովին)՝ Հայաստանի և Վրաստանի միջև Բորչալուի

---

[547] Տե՛ս **Ռ. Դարբինեան,** Ռուսական վտանգը, Երևան, 1991, էջ 74:
[548] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 13:

գավառը էթնիկական սկզբունքով բաժանելու հարցը քննարկելու նպատակով[549]: Դիմավորելով հայ պատվիրակներին՝ Ի. Ծերեթելին Վրաստանի Ազգային խորհրդի անունից հայտարարեց, որ իրենց սահմանների մեջ են մտնելու Ախալքալաքի, Ղազախի ու Բորչալուի գավառները և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանը: «…Հայ-վրացական խառը բնակչությամբ բոլոր վիճելի տարածքները պետք է անցնեն Վրաստանին: Ռուսական հեղափոխական դեմոկրատիայի երբեմնի առաջնորդը բերում էր հետևյալ պատճառաբանությունը. հայերը Բաթումի (հունիսի 4-ի հայ-թուրքական հաշտության դաշնագրի – Գ. Պ.) համաձայնությունից հետո չեն կարող քիչ թե շատ կենսունակ պետություն ձևավորել, - գրում է իր հուշերում Ռուսաստանի հարավի զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար, զորավար Ա. Ի. Դենիկինը, - և նրանց համար շահավետ է հզորացնել Վրաստանը, որպեսզի Կովկասում քրիստոնյա ուժեղ պետություն լինի, որը գերմանացիների օգնությամբ կպաշտպանի և՛ իրեն, և՛ հայերին»[550]: Խ. Կարճիկյանը վրդովված բողոքեց Ի. Ծերեթելու հայտարարության դեմ՝ նշելով, որ նրա առաջարկը ոչ այլ ինչ է, եթե ոչ Հայաստանը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև բաժանելու ծրագիր, և այդ առաջարկը հակառակ է Ն. Ժորդանիայի և Ն. Ռամիաշվիլու՝ Հայոց ազգային կենտրոնական խորհրդում արած այն հավաստիացումներին, որ հիշյալ տարածքները պատկանում են հայերին[551]: Անշուշտ չէր կարող

---

[549] Տե՛ս **Ա. Մելքոնյան,** Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, էջ 285-289:

[550] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 295, թ. 31, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 18, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 27, ֆ. 276, ց. 1., գ. 96, թ. 125-126:

[551] Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1957, № 2, փետրվար, էջ 1-2:

պատահել, որ Ի. Ծերեթելին տեղյակ չլիներ այդ հավաստիացումներին: Նա անթաքույց արտահայտում էր Վրաստանի իրական նպատակները՝ զավթել հայկական տարածքները՝ իր թիկունքում ունենալով Գերմանիայի աջակցությունը: Ավելին, նա մեկ այլ առիթով Թիֆլիսում հայտարարել էր. «Ինչ Հայաստանի մասին եք մտածում: Աւելի լաւ չէ՞ր լինի, որ մի մեծ Վրաստան ստեղծուեր և հայերը նրա թևի տակ ապրէին»[552]:

Վրաստանն իր ներքին և արտաքին քաղաքական վիճակը ավելի բարելավեց՝ ընդունելով կայսերական Գերմանիայի իրական հովանավորությունը: 1918 թ. մայիսի 28-ին Փոթիում Գերմանիայի և Վրաստանի միջև կնքվեց ժամանավոր զաղտնի համաձայնություն իրենց հետագա հարաբերությունները որոշելու մասին: Գերմանական կայսերական կառավարության կողմից համաձայնագիրը ստորագրեց զորավար Օ. ֆոն Լոսովը, իսկ վրացական կառավարության կողմից՝ արտաքին գործերի նախարար Ակակի Չխենկելին[553]:

Ըստ այդ համաձայնագրի՝ Գերմանիան մեծ զորախումբ է ուղարկում Թիֆլիս՝ երկրի ներքին կարգուկանոնը պահպանելու և վրացական զորքերի հետ նրա սահմանների անվտանգությունը ապահովելու: Վրաստանի կառավարությունը թույլ էր տալիս, որ Առաջին աշխարհամարտի ողջ ընթացքում Քառյակ միության պետություններ Գերմանիան և Ավստրիան օգտվեն Վրաստանի տարածքում գործող երկաթուղային ցանցից՝ զորքեր և ռազմական հանդերձանք փոխադրելու համար: Այդ նպատակով Թիֆլիսում Գերմանիայի ղեկավարությամբ կազմվելու էր զինվորական հանձնախումբ, որը վրացական

---

[552] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 43:

[553] Տե՛ս «ՎԷմ» ամսագիր, Փարիզ, 1938, № 1, էջ 84, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1935, փետրվար, № 4, էջ 103:

կառավարության հետ համախորհուրդ՝ պետք է կանոնավոր երկաթուղու հաղորդակցությունը: Երկաթուղային կայարանները և ռազմական նշանակություն ունեցող օբյեկտները հսկելու էին գերմանական պահակային զինվորները[554]: Փոթիի նավահանգիստը 60 տարով օգտագործման էր հանձնվելու Գերմանիային: Վերջինս ստորագրեց նաև համաձայնություն, որով Վրաստանին տրամադրվում էր 50 միլիոն ռուբլի վարկ[555]: Հուլիսի 24-ին Վրաստանի կառավարությունը գաղտնի հաստատեց Գերմանիայի և Վրաստանի համագործակցությունը ռազմական, տնտեսական, առևտրային, ֆինանսական և այլ բնագավառներում[556]:

Վրաց-գերմանական համաձայնագիրը նոր որակ ու նպաստավոր ընթացք հաղորդեց նաև Գերմանիայի դաշնակից օսմանյան Թուրքիայի և Վրաստանի փոխհարաբերություններին: Այդ կապակցությամբ բնութագրական է կովկասյան ռազմաճակատի թուրքական զորքերի հրամանատար Հալիլ փաշայի պատվին «Վրացական ակումբի» շենքում կազմակերպված խնջույքում Վրաստանի ռազմական նախարար Գեորգաձեի արտասանած բաժակաճառը, որով նա մաղթեց «հաջողություններ թուրքական քաջարի զորքերին և նրանց դաշնակիցներին»: Պատասխան խոսքում Հալիլ փաշան նշեց, որ Թուրքիան Վրաստանի նկատմամբ լավագույն զգացումներով է լցված, և եթե արտաքին թշնամին սպառնա Վրաստանի անկախությանը, ապա նրանք պետք է միասին պայքարեն նրա դեմ[557]:

---

[554] Տե՛ս «ՎԷՄ» ամսագիր, Փարիզ, 1938, № 1, էջ 84:
[555] Տե՛ս ՊԳ ԲԱ, ֆ. 39720, օп. 1, д. 49, л. 5:
[556] Տե՛ս նույն տեղը, թ. 1-4:
[557] Տե՛ս նույն տեղը, թ. 2:

Վրաց-գերմանական և թուրքական դաշինքն իր սուր ծայրով ամենից առաջ ուղղված էր Հայաստանի Հանրապետության դեմ. Վրաստանն ու օսմանյան Թուրքիան ձգտում էին իրագործել իրենց զավթողական նկրտումները: Այդ դաշինքն ուղղված էր նաև Ռուսաստանի դեմ: Եվ պատահական չէր, որ այդ օրերին վրացական մամուլը ևս չէր թաքցնում Վրաստանի հակառուսական դիրքորոշումը: Այդ քաղաքականությունը դրսևորվեց Վրաստանում բնակվող ռուսների հանդեպ: Վրաստանի կառավարությունը, ելնելով քաղաքական շարժառիթներից, ձերբակալեց Ռուսաստանի նախկին բարձրաստիճան զինվորականների ու քաղաքական «կասկածելի» մի խումբ գործիչների: Այսպես, գեներալներ Ռուբենաուի, Ջունկովսկու, Դուրնովի և այլոց ձերբակալությունից հետո «Сакартвелось Республика» վրացական պաշտոնաթերթը 1918 թ. հուլիսի 8-ի համարում հայտարարեց, թե իբր «… ներքին գործերի նախարարը Թիֆլիսում հայտնաբերել է Վրաստանի անկախության դեմ պայքարող կազմակերպություն, որը նպատակ ուներ … Վրաստանում վերականգնելու ինքնակալական կարգեր»[558]: Այդ կազմակերպության մեջ իբր մտնում էին «ռուս սպաներ, պաշտոնյաներ, բոլշևիկներ և այլ շրջանակների ներկայացուցիչներ: Գործունեության միջոցներից պետք է լինեին մի շարք հաստատությունների պայթեցումը, ահաբեկչական գործողություններ և այլն»[559]:

Նույն թերթը 1918 թ. օգոստոսի 18-ի համարում, քննադատելով հայերի ռուսական կողմնորոշումը, հայտարարում է, որ Վրաստանի և Հայաստանի հարաբերությունները լարված

---

[558] «Сакартвелось Республика», Тифлис, 8 июля, 1918:

[559] Նույն տեղում:

կմնան այնքան ժամանակ, քանի դեռ հայ ժողովրդի ղեկավարները կտրուկ չեն հայտարարել, որ իրենց կողմնորոշումը և քաղաքականությունը արմատապես փոխվել են[560]:

Այսպիսով, Անդրկովկասի երեք ժողովուրդների անկախացումից հետո միանգամայն բարենպաստ իրադրություն էր ստեղծվել Վրաստանի և Ադրբեջանի համար: Հստակ էր նաև նրանց արտաքին քաղաքականության ուղղվածությունը: Գերմանիան պաշտպանում էր Վրաստանի, իսկ օսմանյան Թուրքիան՝ Ադրբեջանի շահերը, և երկուսն էլ՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության: Հայ ժողովրդի քաղաքական դրությունը արմատապես տարբեր էր կովկասյան թաթար և վրաց ժողովուրդների վիճակից այն պատմական պահից ի վեր, երբ ռուսները սկսեցին հեռանալ Անդրկովկասի սահմաններից:

[560] Տե՛ս նույն տեղում, 18 օգոստոսի, 1918:

# ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՌՅԱԿ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

## 1. Քառյակ միության պետությունների շահերի բախումը Անդրկովկասում և իրադրությունը Հայաստանում. Կոստանդնուպոլսում հրավիրվելիք խորհրդաժողովի ձախողման դրդապատճառները

Առաջին աշխարհամարտի տարիներին միջազգային քաղաքական բարդ իրավիճակում Անդրկովկասում ծնունդ առած նորանկախ երեք հանրապետությունները՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, շարունակում էին մնալ մեծ տերությունների՝ ուժերի աշխարհաքաղաքական նոր վերադասավորումների, սուր հակասությունների, ռազմաքաղաքական ու տնտեսական շահերի բախումների կիզակետում: Հիրավի, տարածաշրջանին տիրելու համար պայքար էր ծավալվել ոչ միայն Քառյակ միության և նրան հարող առանձին երկրների, այլ նաև Համաձայնության պետությունների (Անտանտի) ու Խորհրդային Ռուսաստանի միջև: Նրանցից յուրաքանչյուրը, բացահայտ կամ գաղտնի, պայքարում էր հանուն իր աշխարհաքաղաքական ու տնտեսական հեռահար նպատակների:

Քառյակ միության երկրների (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա, Թուրքիա) մոտալուտ պարտության շեմին նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը հայտնվել էր քաղաքական ու տնտեսական խորը ճգնաժամում՝ շարունակելով մնալ օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական

մարտավարության ու դիվանագիտական փակուղիների բարդագույն հորձանուտում: 1918 թ. հունիսի 3-ի Բաթումի պարտավորագրի պահանջները լուրջ խոչընդոտներ հարուցեցին Հայաստանի Հանրապետության համար Համաձայնության պետությունների և նրան հարող այլ երկրների հետ՝ ինքնուրույն և ազատ արտաքին քաղաքականություն վարելու ու դիվանագիտական հարաբերություններ հաստատելու: Բանն այն է, որ այդ պարտավորագրով Օսմանյան կայսրությունը Հայաստանի Հանրապետությանը դրել էր շրջանակների մեջ՝ թույլատրելով նրան դիվանագիտական հարաբերությունների մեջ մտնել միայն անմիջական հարևանների, դաշնակից Քառյակ միության և դրան հարող պետությունների հետ: Թեև հունիսի 4-ին Բաթումում ստորագրվել էր հաշտության դաշնագիր, սակայն օսմանյան Թուրքիան չէր բավարարվում ձեռք բերածով և շարունակում էր մնալ սպառնալիք մի փոքրիկ տարածքի վրա ամփոփված նորանկախ հայկական պետության կայացմանը: Այդ երկրի ռազմական ներխուժման վտանգն ավելի ու ավելի իրական էր դառնում, և այս անգամ արևելահայությունն էր հայտնվել ցեղասպանության ու հայրենազրկման սպառնալիքի առջև, ինչը տեղի ունեցավ Արևմտյան Հայաստանում և մյուս հայաբնակ վայրերում: Լեոն գրում էր. «Թյուրքաց Հայաստանը (Արևմտյան – Գ. Պ.) ոչնչացնելուց հետո երիտասարդ թյուրքերը ոչնչացնում էին նաև ռուսաց (Արևելյան – Գ. Պ.) Հայաստանը»[561]:

Այժմ փորձենք հակիրճ ներկայացնել՝ ինչպիսի՞ ռազմավարություն ու մարտավարություն էին որդեգրել Քառյակ միության պետությունները տարածաշրջանում Առաջին աշ-

[561] **Լեո**, Անցյալից. Հուշեր, Թղթեր, Դատումներ...., էջ 344:

խարհամարտի տարիներին. ինչո՞ւ բախվեցին նրանց աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերը, ինչի՞ հետևանքով Անդրկովկասը բաժանվեց ազդեցության ոլորտների երկու գլխավոր դաշնակիցների՝ կայսերական Գերմանիայի և օսմանյան Թուրքիայի միջև:

**Կարևոր է արձանագրել, որ Ռուսական կայսրության կործանումը, դրան հաջորդած բոլշևիկյան հեղաշրջումը, Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից, ինչպես նաև երեք անկախ հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի ստեղծումը նպաստավոր եղան օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական կառավարության համար՝ իրագործելու համաթուրանական ծրագրերը:**

Ի վերջո, 1918 թ. հունիսի սկզբներին Թուրքիան թեև արդեն մոտ էր պարտությանը, սակայն հետևողականորեն շարունակում էր իրագործել արտաքին քաղաքականության մեջ իր որդեգրած **համաթուրանական** ռազմավարական ու մարտավարական ծավալապաշտական ծրագրերը: Ահա ինչու ամբողջ Արևմտյան Հայաստանը բռնազավթելուց և ապրիլին Կարսը, Արդահանն ու Բաթումը գրավելուց հետո թուրքերը, կոպտորեն խախտելով Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի (1918 թ. մարտի 3) 4-րդ հոդվածով ամրագրված սահմաններն ու պայմանները, շարունակեցին իրենց ռազմական առաջխաղացումը՝ ներկայացնելով արդեն տարածքային նոր պահանջներ ամբողջ Անդրկովկասի, Պարսկաստանի (Իրան), Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու ժողովուրդների երկրամասերի նկատմամբ՝ ձգտելով հասնել մինչև Չինաստան:

**Միանգամայն ակնհայտ է, որ անդրկովկասյան երեք հանրապետությունների անկախ գոյությունն ու յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին դաշնագրերի ստորագրումը անմի-**

**ջականորեն բխում էր օսմանյան Թուրքիայի շահերից՝ իրականացնելու իր ռազմավարական և մարտավարական ծրագրերը:** Այս ամենը պայմանավորված էր տարածաշրջանում առկա ներքին և արտաքին քաղաքական մի շարք նպաստավոր գործոններով, որոնք ճարպկորեն օգտագործեց օսմանյան ռազմաքաղաքական ղեկավարությունն իր ռազմատենչ ու զավթողական պլաններն իրագործելու նպատակով: Բանն այն է, որ տարածաշրջանի երեք գլխավոր ազգերի՝ հայերի, վրացիների և ադրբեջանցիների միջև կուտակված ներքին և արտաքին խորը հակասություններն ու հակամարտությունները, նրանց արտաքին քաղաքական տարբեր կողմնորոշումներն ու ազգային-տարածքային սահմանային կնճռոտ վեճերը, հնուց եկող փոխադարձ անվստահությունն ու անհանդուրժողականությունը, կասկածն ու երկյուղը լայն հնարավորություն տվեցին օսմանյան ռազմաքաղաքական ղեկավարությանը էլ ավելի խորացնելու և պառակտելու Անդրկովկասյան միությունը: Անշուշտ, ստեղծված պայմաններում հնարավոր չէր տարածաշրջանում **միացյալ ուժերով ճակատ կազմել Թուրքիայի ռազմական առաջխաղացումը կանգնեցնելու համար:** Ավելորդ է ասել, որ Անդրկովկասը ի վիճակի չէր ռազմական ուժով լուրջ դիմադրություն կազմակերպել օսմանյան կանոնավոր բանակի դեմ: Բանն այն է, որ թուրք-անդրկովկասյան պատերազմի հիմնական ծանրությունն ընկած էր հայկական զինված ուժերի վրա, ուստի այն վերածվեց թուրք-հայկական պատերազմի: Վրացիների ռազմական մասնակցությունը թուրքերի դեմ չնչին էր: Նրանք վայելում էին Գերմանիայի հովանավորությունը և դրանով ապահով զգում իրենց թուրքական ռազմական հարձակումից: Մահմեդականների դիվիզիան ընդհանրապես չէր մասնակցում ռազմական գործողություն-

ներին: Ավելին, կովկասյան թաթարները բացահայտ հայտարարեցին, որ ոչ միայն չեն կռվելու ցեղակից թուրքերի դեմ, այլև անվերապահորեն աջակցելու են նրանց: Նրանք թուրքերի հաղթանակն ու ռազմական տարածքային զավթումները համարում էին իրենց ազգային-քաղաքական ձգտումների իրականացում[562]: Ի դեպ, օսմանյան զորամասերը, օգտվելով հակաթուրքական միացյալ ուժերով ճակատ ստեղծելու անհնարինությունից և ռազմաճակատի անպաշտպանությունից, լայնածավալ ռազմական գործողություններ սկսեցին Սարդարապատի, Ղարաքիլիսայի և Բաշ-Ապարանի ուղղությամբ, որտեղ նրանց դիմագրավեց թշնամու դեմ մեն-մենակ մնացած հայ ժողովրդի միասնական կամքը:

Միանգամայն ակնհայտ էին նաև **անդրկովկասյան երեք անկախ հանրապետությունների արտաքին քաղաքական տարբեր կողմնորոշումները:** Վրացիները որդեգրել էին գերմանական, իսկ կովկասյան թաթարները՝ անվերապահորեն թուրքական կողմնորոշում, սակայն երկուսն էլ վարում էին բացահայտ հակառուսական քաղաքականություն: Հատկանշական է, որ հայերի արտաքին քաղաքական դիրքորոշումն արմատականորեն տարբեր էր. նրա ավանդական կողմնորոշումը ռուսականն էր: «Նա (հայ ժողովուրդը - Գ.Պ.) շատ լավ ըմբռնում էր, որ իր համար ամենաիրականը,- գրում է Լեոն,- ռուսական օրիենտացիան է և որ առանց Ռուսաստանի չէր կարող գտնել հանգստություն իր պատմական հայրենիքում: Հենց այդ պատճառով էլ վրացիներն ու թուրքերն ատում էին հայերին»[563]: Փաստորեն, անդրկովկասյան գլխավոր ազգերից

---

[562] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 19, թ. 14:
[563] **Լեո**, նշվ. աշխ., էջ 365:

յուրաքանչյուրը գործում էր հանուն սեփական շահերի, ուստի չկարողացավ ժամանակին արագ և ճիշտ կողմնորոշվել օսմանյան Թուրքիայից սպասվող նոր դավադրությունների սարդոստայնում: **Դժվար չէ նկատել նաև, որ այդ ամենի պատճառով անկարելի էր դառնում անդրկովկասյան միասնական արտաքին քաղաքականություն և ճկուն դիվանագիտություն վարելը:**

Թուրքիան, օգտվելով երկրամասում ստեղծված իր համար նպաստավոր պայմաններից, միաժամանակ ռազմական տարածքային զավթումներով, սպառնալիքներով և բարոյահոգեբանական ու դիվանագիտական ճնշումներով, առանց իր դաշնակիցներ Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի հետ համաձայնեցնելու*, 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Անդրկովկասի երեք նորանկախ հանրապետություններից յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին ստորագրեց միայն իր պահանջները բավարարող հաշտության դաշնագրեր: Դրանով Օսմանյան կայսրությունը իրականում լայն հնարավորություն էր ստանում վերջնականապես ապահովելու իր ռազմաքաղաքական և տնտեսական ազդեցությունն ամբողջ տարածաշրջանում: Բանն այն է, որ այդ դաշնագրի և դրան կից լրացուցիչ արձանագրությունների հիման վրա օսմանյան Թուրքիային անցնելիք տարածքների և երկաթուղագծերի մաքրումն ու հանձնումը սկսվել էին **դաշնագիրը ստորագրելուց անմիջապես հետո**, մինչդեռ դաշնագրի ամբողջական վավերացումը պիտի կատարվեր Կոստանդնուպոլսում մեկամսյա

* Ըստ 1916 թ. սեպտեմբերի 28-ի՝ Գերմանիայի և Թուրքիայի միջև կնքված դաշնագրի՝ կողմերը պայմանավորվել էին չկնքել առանձին դաշնագրեր այլ երկրների հետ առանց փոխադարձ համաձայնության, տե՛ս The Middle East and North Africa in World Politics: A Documentary Record – British-French Supremacy, 1914-1945, Yale University Press, 1979, էջ 73-74:

ժամկետում[564]: Փաստորեն, այդ **դաշնագրով օսմանյան Թուրքիան լայն հնարավորություն էր ստանում հայկական տարածքներով, կարճ ճանապարհներով արագ թափանցելու** Կովկաս, Բաքու, Միջին Ասիա և ավելի հեռուներ: «Թուրքիան, – գրում է Ա. Խաչատրյանը,- նոյնիսկ հակառակ զինակցութեան մէջ սովորաբար ընդունուած քաղաքավարութեան՝ առանց իր զինակիցներու մասնակցութեան, անջատ հաշտութեան բանակցութեան սկսեր էր Կովկասեան ժողովուրդներէ կազմուած հանրապետութեան հետ: Նախապէս, ինչպես կ՛ըսէր Պոլսի Բուլգար դեսպանը, խաբեր էր իր զինակիցներն, ըսելով՝ թէ Կովկաս յանձնախումբ կը ղրկէ՝ տեղին վրայ ծանօթանալու Կովկասի գործերու հետ և ոչ թէ դաշնագրութիւն կնքելու: Վերջը, սակայն, հակառակ անոնց կամքին, ներքին դաւերով պառակտելով այս միութիւնը, իւրաքանչիւրի հետ կնքեց իր պահանջներուն միայն բաւարարութիւն տուող դաշնագրութիւն»[565]:

Այսպիսով, **Թուրքիան երեք անկախ հանրապետություններից յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին միայն իր պահանջները բավարարող հաշտության դաշնագրերի ստորագրումը դիտարկում էր որպես հուսալի պատնեշ, բուֆեր՝ իր անվտանգությունը ապահովելու Ռուսաստանից, որը ոչ հեռավոր ապագայում կարող էր իրական սպառնալիք դառնալ իր համար:** Ինչպես նշում է Ալ. Խատիսյանը՝ «...տաճիկների (թուրքերի – Գ. Պ.) համար **անկախ Կովկասը** մի բաղձալի պատնեշ մըն էր Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ»[566]: Փաստորեն, այդ մարտավարությունը Օսմանյան կայսրության ռազմաքա-

---

[564] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 6:

[565] **Ա. Խաչատրյան,** նշվ. աշխ., էջ 114:

[566] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, փետրվար, էջ 110-111:

ղաքական կարևորագույն հանրագումարներից մեկն էր՝ պաշտպանվելու ռուսական վտանգից:

Այնպես որ օսմանյան Թուրքիայի համար ստեղծվում էին ռազմաքաղաքական նպաստավոր նոր պայմաններ՝ Երևան-Ջուլֆա երկաթգծով շարժվելու դեպի Բաքու, իսկ Կարս - Սուրմալու - Նախիջևան - Զանգեզուր (Սյունիք) - Ղարաբաղ (Արցախ) առանցքով ներթափանցելու Իրան, միջինասիական երկրներ՝ համաթուրանական ծրագրերն իրականացնելու համար:

**Ի վերջո, օսմանյան Թուրքիան սպառնում էր նաև տարածաշրջանում ավագ և հզոր դաշնակից կայսերական Գերմանիայի ռազմաքաղաքական և տնտեսական շահերին:** Հովհ. Քաջազնունու գնահատմամբ՝ «նրանք դաշնակիցներ են, բայց միևնույն ժամանակ նաև մրցակիցներ և այն էլ շատ խանդոտ մրցակիցներ: Նրանք ուշադրությամբ հետևում են իրար, և նրանցից յուրաքանչյուրի փոքր-ինչ շեղումը առաջ էր բերում մյուսի բողոքը»[567]: Թուրքիան փակում էր Գերմանիայի ճանապարհը՝ ներթափանցելու Մերձավոր Արևելք, և միաժամանակ զրկում տարածաշրջանի՝ վերջինիս խիստ անհրաժեշտ բնական հարստություններից օգտվելու հնարավորությունից: **Գերմանիային Անդրկովկասում ռազմաքաղաքական խնդիրներից ոչ պակաս հետաքրքրում էր տնտեսականը:** 1918 թ. հուլիսի 26-ին Բեռլինում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Համո Օհանջանյանը պաշտոնական Երևանին հաղորդում է (ըստ Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Օ. ֆոն Լոսովի բացատրության). «**Գերմանիան Հայաստանով շատ ավելի քիչ է հետաքրքրված, քան Վրաստանով՝ թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական տեսակետներից:**

---

[567] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 12:

**Քաղաքականապես Վրաստանը շատ ավելի է շահագրգռում Գերմանիային, քան Հայաստանը**, … **իր երկաթուղու գծով, իր կերոսինոպրովոդով, մարգանեցով և ծովային նավահանգստով:** Վրաստանին նրանք արդեն նույնիսկ փոխառություն են տվել. իսկ **Հայաստանը իր դեռ բոլորովին չպարզված սահմաններով, ընկած Ադրբեջանի և Վրաստանի մեջտեղը, իր անորոշ քաղաքականությամբ, իր չպարզված տնտեսական հնարավորություններով՝ այնքան էլ կարևորություն չի ներկայացնում Գերմանիայի համար օգտագործելու տեսակետից և մնում է միայն մեր խնդրի բարոյական կողմը, պատասխանատվությունը հայկական հարցի վերաբերյալ**»[568]: Ի վերջո, Գերմանիայի քաղաքական և տնտեսական շահերն անհրաժեշտաբար նրան մղեցին իր հովանավորության տակ առնելու Վրաստանը:

Ամենևին էլ պատահական չէր, որ տարածաշրջանում օսմանյան Թուրքիայի վարած այդ քաղաքականությունը առաջ բերեց Գերմանիայի խորը զայրույթը: Վերջինս որոշեց չափավորել թուրքերի չափից ավելի ախորժակը և թույլ չտալ խախտել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով ամրագրված սահմաններն ու պայմանները: Ակնհայտ է, որ երկրամասի երկաթուղային ցանցը խիստ անհրաժեշտ էր պատերազմող կողմերից յուրաքանչյուրին և դրանցից որի ազդեցության ոլորտում հայտնվեր՝ նպաստելու էր այդ երկիրն ուժեղացնելուն: Թեև **գերմանացիներին Արևելյան Հայաստանը տնտեսապես և քաղաքականապես չէր հետաքրքրում**, սակայն այդ տարածքով էր անցնում երկրամասի երկաթուղային հանգույցի մի մասը, որտեղ բախվում էին Թուրքիայի և Գերմանիայի

[568] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 145:

ռազմաքաղաքական ու տնտեսական շահերը: Դրանից ելնելով՝ գերմանացիները համապատասխան խոստումներ էին տալիս՝ «աջակցելու» Հայաստանի Հանրապետությանը: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը և քաղաքական իրադարձություններն ու դիվանագիտական բանակցային գործընթացները, Գերմանիայի աջակցությունը իրատեսական չէր: Ինչպես վերը նշվեց, կայսերական Գերմանիային Արևելյան Հայաստանը տնտեսապես և քաղաքականապես չէր հետաքրքրում, հետևաբար նրան ձեռնտու չէր հանուն հայերի վտանգել և խորացնել առանց այն էլ լարված հարաբերությունները դաշնակից Թուրքիայի հետ:

Այսպիսով, դժվար չէ նկատել, թե ինչու երկրամասում բախվեցին երկու գլխավոր դաշնակիցների՝ Թուրքիայի և Գերմանիայի աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերը: Գերմանիայի շահերն անհրաժեշտաբար վերջինիս մղեցին իր հովանավորության տակ առնելու Վրաստանը: Գերմանիան պահանջեց Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունից դադարեցնել տարածաշրջանում ռազմական առաջխաղացումն ու տարածքային բռնազավթումները և բանակցային սեղանի շուրջ նստել երկրամասի ներկայացուցիչների հետ:

Նրա ճնշմամբ 1918 թ. ապրիլի 27-ին Կոստանդնուպոլսում կնքվեց գերմանա-թուրքական գաղտնի դաշնագիր, որով Անդրկովկասը բաժանվեց ազդեցության ոլորտների օսմանյան Թուրքիայի և կայսերական Գերմանիայի միջև: Ըստ դաշնագրի՝ Օսմանյան կայսրությանն էին անցնում Անդրկովկասում նրա գրաված բոլոր հայկական տարածքները, ինչպես նաև Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին և Ադրբեջանը: Անդրկովկասի մնացած տարածքները, մասնավորապես Վրաստանը, անցնում էին Գերմանիայի ազդեցության ոլորտ:

Պատահական չէր, որ գերմանական դրոշը արդեն ծածանվում էր Վրաստանում[569]: Իսկ դա հանգիստ չէր տալիս Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությանը, հակասում էր իր աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերին տարածաշրջանում: Ի պատասխան դրան՝ նույն օրը՝ ապրիլի 27-ին, գերմանա-թուրքական դաշնագիրը շրջանցելու նպատակով օսմանյան Թուրքիան գաղտնի դաշինք կնքեց մուսավաթականների հետ, որով բացվում էր թուրքերի ճանապարհը դեպի Բաքվի նավթը և Թուրքեստանի բամբակը և այլն:

Ինչպես վերը նշվեց, այսպիսի չափազանց բարդ ու լարված ռազմաքաղաքական իրադրությունում հունիսի 25-ին Կոստանդնուպոլսում իր աշխատանքն էր սկսելու Քառյակ միության պետությունների և այլ երկրների ու կովկասյան նորանկախ հանրապետությունների դիվանագիտական ներկայացուցիչների կողմից գումարվելիք խորհրդաժողովը, որտեղ ի սկզբանե ուրվագծվելու էին նրանց շահերի անխուսափելի նոր բախումները:

**Փաստորեն, հունիսին Կոստանդնուպոլսում գումարվելիք խորհրդաժողովով սկսվելու էր նաև հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների նոր փուլ:** Լ. Շանթի բնորոշմամբ՝ «թուրքերի՝ մեր հանդեպ անկեղծ վերաբերմունքի հետ հույս տածելը մեզ համար խելահեղություն կլինի: Այս ամենը ոչ այլ ինչ է, եթե ոչ կատակերգություն, և հայը շատ լավ գիտի, որ այն, ինչն այս պահին ինքն է անում, ևս սոսկ կատակերգություն է, որը պահանջել են հանգամանքները:

Անձամբ ես կարծում եմ, որ այս խաղը չի կարող վճռորոշ ընթացք ստանալ, նույնիսկ առերևույթ կնքված հաշտությունը

---

[569] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 12:

չի կարող վերջնական լինել, որովհետև մեր և թուրքերի շահերը տրամագծորեն հակադիր են: Հաշտության կոնֆերանսի այս կատակերգությունը տեղի է ունեցել նախ՝ Տրապիզոնի և Բաթումի, այնուհետև՝ Բաթումի և Կոստանդնուպոլսի միջև ու ներկայումս կտեղափոխվի Կոստանդնուպոլսից Բեռլին, իսկ այս վերջին մայրաքաղաքից կրկին Կովկաս: Այսպես, հաջորդաբար, մինչ այն, երբ մեր պայքարի շարունակությանը զուգընթաց, վրա է հասնում վերջապես գերմանացիների պարտությունը և համաշխարհային մեծ կոնֆերանսը»[570]:

Ինչպես նշվեց, հունիսի 4-ին օսմանյան Թուրքիան Բաթումում անդրկովկասյան նորանկախ երեք հանրապետություններից յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին ստորագրեց հաշտության դաշնագրեր: Հայ-թուրքական «հաշտության և բարեկամության» դաշնագրի վերջին՝ 14-րդ հոդվածն արձանագրում է. «Դաշնագիրը կվավերացվի, և վավերացված օրինակների փոխանակումը կկատարվի Կ.Պոլսում, մեկ ամսվա ընթացքում կամ ավելի վաղ, եթե դա հնարավոր կլինի: Այն ուժի մեջ կմտնի այդ փոխանակման օրից»[571]:

Հետևաբար՝ հուլիսի 4-ին լրանում էր Թուրքիայի մայրաքաղաքում Հայաստանի, ինչպես նաև Վրաստանի ու Ադրբեջանի հետ ստորագրված Բաթումի հաշտության դաշնագրերը վավերացնելու համար սահմանված մեկամսյա ժամկետը: Դրանով Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկա-

---

[570] Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հատոր II, աշխատասիրությամբ Ա. Պեյլերյանի, թարգմ. ֆրանս. Վ. Պողոսյանի, Երևան, «Հայաստան» («Գրական հայրենիք»), 2005, էջ 330:

[571] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 6:

վարությունը ձգտում էր իրավականորեն ամրագրել իր տարածքային բռնազավթումները տարածաշրջանում:

Հունիսի 25-ին Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարության նախաձեռնությամբ Կոստանդնուպոլսում հրավիրվելիք խորհրդաժողովում[572] նախատեսվում էր վերադառնալ այդ դաշնագրերի դրույթների վերաքննարկումներին, թուրք-կովկասյան տարածքային և սահմանային առկա բոլոր խնդիրների համատեղ լուծումներին, որոնք «կապված են միմյանց հետ»[573]: Խորհրդաժողովին մասնակցելու էին Քառյակ միության պետությունների և Կովկասյան նորանկախ հանրապետությունների (Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի Լեռնականների) դիվանագիտական ներկայացուցիչները: Կայսերական Գերմանիայի ղեկավարությունն անհրաժեշտ համարեց խորհրդաժողովին հրավիրել նաև Խորհրդային Ռուսաստանին՝ որպես Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը ստորագրող կողմի: Այդ դիվանագիտական քայլն ուներ մարտավարական նշանակություն: Դրանով Գերմանիայի կառավարությունն ակնարկում էր, որ առանց Խորհրդային Ռուսաստանի մասնակցության և համաձայնության հնարավոր չէ խորհրդաժողովում վճռել ռուսական նախկին տարածքներին վերաբերող որևէ կնճռոտ հարց: Բացի այդ՝ ՌՍՖԽՀ-ի պատվիրակության մասնակցությունը կարող էր չափավորել թուրքերի չափից ավելի մեծ պահանջները[574]:

---

572 Տե՛ս Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2009, էջ 177:

573 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 13, թ. 1:

574 Տե՛ս **М. Туманян**, նշվ. աշխ., էջ 47-48:

Առաջ անցնելով նշենք, որ այդ վավերացումների հարցը դիվանագիտական ճանապարհով լուծելու այլընտրանք չկար, ուստի դաշնագրերն ուժի մեջ չմտան: Հարց է ծագում՝ ինչո՞ւ, և որո՞նք էին այդ ռազմավարության և մարտավարության հիմնական դրդապատճառներն ու հետևանքները: Փորձենք պատասխանել այդ հարցերին:

Ինչպես նշեցինք, Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական կառավարությունը, կոպտորեն խախտելով 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով ամրագրված սահմանները և պայմանները, առանց իր դաշնակիցների հետ համաձայնության ու մասնակցության, հունիսի 4-ին Բաթումում անդրկովկասյան երեք նորանկախ հանրապետություններից յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին ստորագրել էր բացառապես իր պահանջները բավարարող դաշնագրեր՝ առաջացնելով Քառյակ միության պետությունների խորը զայրույթը: Բանն այն էր, որ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը կոպտորեն խախտելու հետևանքով Անդրկովկասից բռնազավթված կենսունակ տարածքների 28,6 տոկոսը, որը կազմում էր 38 հազար քառակուսի կիլոմետր՝ մեկ միլիոն 250 հազար ազգաբնակչությամբ[575], Օսմանյան կայսրությունն ամրագրել էր Բաթումի հաշտության դաշնագրերում, ինչն անհամատեղելի էր և հակասում էր տարածա-

---

[575] Տե՛ս **Д. Завриев**, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси. 1947, էջ 70-71, տե՛ս նաև **Ե. Սարգսյան,** Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան- Թուրքիա, Երևան, 1994, էջ 56-57: Ի դեպ, Երևանի նահանգից Օսմանյան կայսրությանը փաստացի անցան Սուրմալուի ողջ գավառը, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների մեծ մասը և Երևանի ու Շարուր-Դարալագյազի գավառների փոքր մասը: Նորանկախ Հայաստանի Հանրապետության տարածքը կազմելու էր մոտ 11 հազար քառակուսի կիլոմետր, տե՛ս **Ե. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 56-57:

շրջանում իր դաշնակիցների աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերին: Եվ բնավ էլ պատահական չէ, որ այդ ամենն ունեցավ իր տրամաբանական հակազդեցությունը Կոստանդնուպոլսում հրավիրվելիք դիվանագիտական բանակցային գործընթացներում:

Հունիսի 26-ին Օսմանյան կայսրության մայրաքաղաքում Գերմանիայի հավատարմագրված դեսպան Իոհան Բերնսդորֆը Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանի և Ալ. Խատիսյանի (պատվիրակության անդամ) հետ հանդիպման ժամանակ ասում է. «**Այդ խնդիրը** (դաշնագրերի վավերացումը – Գ. Պ.) **պետք է առայժմ թողնել բաց, քանի որ Կ. Պոլսի կոնֆերանսը Բաթումի բանակցությունների շարունակությունն է**»[576]: Իսկ ի՞նչ նկատի ուներ Ի. Բերնսդորֆը, երբ նշում էր՝ «Կ. Պոլսի կոնֆերանսը Բաթումի բանակցությունների շարունակությունն է»: Ըստ էության, խորհրդաժողովի քննարկման հիմքում դրվելու էր Բրեստ-Լիտովսկի և Բաթումի հաշտության դաշնագրերի դրույթները դիվանագիտական ճանապարհով վերանայելու և փոփոխելու հարցը: Գերմանիան և Ավստրո-Հունգարիան Կոստանդնուպոլսում հավատարմագրված իրենց դեսպաններին և ներկայացուցիչներին հանձնարարել էին հրավիրվող խորհրդաժողովում համախորհուրդ ջանքեր գործադրել՝ վերաքննելու և փոփոխելու Բաթումի հաշտության դաշնագրերը, որոնք անհամատեղելի էին իրենց շահերին ու նպատակներին, ճնշում գործադրել Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարության վրա՝ կատարելու վերջինիս կողմից կոպտորեն խախտված Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի սահ-

[576] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 13, թ. 4:

մանները և պայմանները: Ի վերջո, նպատակ էր դրվել չվավերացնել անդրկովկասյան նորանկախ հանրապետությունների և Թուրքիայի միջև տարածքային այն սահմանազատումը, որն ամրագրվել էր Բաթումի հաշտության դաշնագրերի համապատասխան հոդվածներում և դրանց կից լրացուցիչ արձանագրություններում[577]:

Այսպիսով, Կոստանդնուպոլսում հրավիրվելիք խորհրդաժողովում Գերմանիան և Ավստրո-Հունգարիան դաշնակից օսմանյան Թուրքիային ներկայացնում էին հետևյալ հիմնական պահանջները.

1. Վերափոխել Բաթումի հաշտության դաշնագրերը, հրաժարվել դրանց վավերացումներից:

2. Ճանաչել 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով ամրագրված սահմանները և պայմանները: (Ի դեպ, 1918 թ. մարտին Տրապիզոնի թուրք-անդրկովկասյան բանակցությունների ժամանակ թուրքական կողմն ինքն էր պահանջում անդրկովկասյան պատվիրակություններից անվերապահորեն կատարել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով ամրագրված պահանջները[578]:)

3. Տեղակայված թուրքական զորքերը ետ քաշել գրավված կովկասյան տարածքներից մինչև Կարս, Արդահան, Բաթում՝ հաշտության դաշնագրով ամրագրված սահմանները:

4. Դադարեցնել տարածաշրջանում թուրքական շարունակվող ռազմական ներխուժումներն ու տարածքային բռնազավթումները և այլն:

---

577 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 13, թ. 1,4:

578 Մանրամասն տե՛ս **Գ. Պետրոսյան,** Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. հայոց անկախ պետականության կերտումը (1917 թ. փետրվար – 1918 թ. հունիս), Երևան, 2018, էջ 39-76:

Սակայն այդ պահանջները թուրք դիվանագետների համար ընդունելի չէին, ուստի բացահայտորեն մերժվեցին: «Եթե Գերմանիան ասոր համար կոնֆերանս կը հրաւիրէ՝ թուրքերու համար պետք չէ: Այդպէս Թուրքիան, - գրում է Ա. Խաչատրյանը, - նախապես կարևորութիւն չտուաւ այս պահանջներուն, սակայն պատերազմի անողոք դարձուածքները եկան զինք բռնադատելու՝ համաձայնութեան մը գալ իր «մեծ դաշնակցի» հետ»[579]:

Կարևոր է արձանագրել, որ ռազմաքաղաքական իրադարձությունները զարգացան այնպես, որ Կոստանդնուպոլսում գումարվելիք խորհրդաժողովը օրեր, շաբաթներ շարունակ հետաձգվում էր ու այդպես էլ չկայացավ: Հարց է ծագում՝ ինչո՞ւ: **Առաջին պատճառը**. դաշնակիցներ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի վերը նշված հիմնական պահանջների կատարումից հրաժարվելու նպատակով Օսմանյան կայսրությունը որդեգրեց խորհրդաժողովի գումարումը ձգձգելու դիվանագիտական մարտավարությունը: **Երկրորդ պատճառը** տարածաշրջանում Քառյակ միության պետությունների միջև գոյություն ունեցող հակասություններն էին, շահերի բախումները. ներքին տարաձայնություններն ու անհամաձայնություններն աստիճանաբար ավելի ու ավելի էին սրվում՝ պայմանավորված գերմանա-թուրքական տարբեր խմբավորումների ռազմական նոր անհաջողություններով ու Առաջին աշխարհամարտում նրանց մոտալուտ պարտությամբ: Ալ. Խատիսյանը հետագայում գրում է. «**Պատերազմի մեծ ճակատներուն վրա, տեղի կունենար ճակատագրական բեկումը: Պատերազմի բախտը կը դաւաճանէր Գերմանիոյ եւ իր զինակիցնե-**

[579] **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 116:

**րուն»**[580], **«Որքան աւելի կը մեծնային այդ անհաջողութիւնները, այնքան աւելի թուրքերը ու գերմանացիները կը խուսափէին կոնֆերանսի մասին խօսելէ»**[581]: Դիվանագիտությունը այլևս անզոր էր կանխելու իրադարձությունների արագ ընթացքը: Փաստորեն, ստեղծված ռազմաքաղաքական նոր իրադրությունում **խորհրդաժողով գումարելն այլևս ընդունելի չէր նաև դաշնակից Գերմանիայի համար:** Եվ ամենևին էլ պատահական չէր, որ վերջինս հարկադրաբար հրաժարվեց այդ դիվանագիտական մարտավարությունից: Այդպես Կոստանդնուպոլսի խորհրդաժողովի գումարումը կորցրեց իր օրախնդիր լինելու իմաստը և վերջնականապես ձախողվեց:

Բայցևայնպես, քննարկման ենթակա կարևորագույն ու հիմնական մի շարք հարցեր, որոնք պետք է արծարծվեին խորհրդաժողովում, քննարկման նյութ դարձան Քառյակ միության պետությունների և հրավիրված տարբեր պատվիրակությունների ներկայացուցիչների՝ Կոստանդնուպոլսում, Բեռլինում, Վիեննայում և այլ քաղաքներում մասնավոր բազմաթիվ փոխադարձ հանդիպումների և դիվանագիտական բանակցությունների ժամանակ:

Անկասկած, մասնավոր փոխադարձ հանդիպումներում և բանակցային գործընթացներում Հայկական հարցը պետք է լուծվեր նույն տրամաբանությամբ՝ քաղաքական ու դիվանագիտական հակասությունների ու շահերի բախումների իրողությունների մեջ: Դժվար չէ նկատել, որ առջևում սպասվում էին նոր փորձություններ ու ծանր օրեր հայկական պատվիրակությունների դիվանագիտական բարդ պայքարի հորձանուտում:

---

580 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, դեկտեմբեր, էջ 108:

581 Նույն տեղում, էջ 101:

## 2. Հայկական պատվիրակությունների բանակցային գործընթացները Կոստանդնուպոլսում, Բեռլինում և Վիեննայում

Այժմ վերադառնանք Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների՝ Հայկական հարցի լուծմանն ուղղված բարդ ու դժվարին բազմաթիվ մասնավոր փոխադարձ հանդիպումների ու դիվանագիտական բանակցային գործընթացների լուսաբանմանը:

1918 թ. հունիսի 11-ի երեկոյան Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը ստացավ հեռագիր[582] օսմանյան Թուրքիայի արդարադատության և արտաքին գործերի նախարար, Բաթումի բանակցություններում թուրքական պատվիրակության նախագահ Հալիլ բեյից, որը Թալեաթ փաշայի անունից հրավիրում էր հայկական կողմին մասնակցելու Կոստանդնուպոլսի խորհրդաժողովին. «Մեր դաշնակիցների ներկայացուցիչները ուզում են բարեկամական դաշն կապել Կովկասի պետությունների հետ և արդեն Պոլսում են: Խնդրում եմ ժամանել նաև Հայաստանի ներկայացուցիչներին՝ Պոլսում բանակցություններ սկսելու»[583]: Հաջորդ օրը՝ հունիսի 12-ին, խորհրդի նիստում քննարկվեց հեռագիրը, և որոշվեց Թուրքիայի մայրաքաղաք ուղարկել պատվիրակություն հետևյալ կազմով. նախագահ՝ Ավ. Ահարոնյան (Հայոց ազգային կենտրոնական խորհրդի նախագահ), անդամներ՝ Ալ. Խատիսյան (Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի առաջին նախարար) և Մ. Պապաջանյան (ռուսական նախկին կայսրու-

[582] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 116:
[583] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 120, թ. 40:

թյան Պետական դումայի պատգամավոր)[584]: Բացի երեք պատվիրակներից՝ իբրև խորհրդականներ հաստատվեցին գեներալ Գ. Կորգանյանը (ռազմական գծով), Գ. Խատիսյանը (ժողովրդագրության գծով) և Մ. Բունիաթյանը (տնտեսական-ֆինանսական գծով)[585]: Պատվիրակության դիվանի կառավարիչ-առաջին քարտուղար հաստատվեց Հ. Քոչարյանը, իսկ երկրորդ քարտուղար՝ Տ. Միրզայանը, քարտուղար-թարգմանիչ՝ Ֆ. Թախտաչյանը, քարտուղարի օգնական-դիվանագիտական կցորդ՝ Լ. Լիսիցյանը, դիվանագիտական ցրիչ՝ Հ. Բերբերյանը և սպասավորներ՝ Ա. Հարությունյանն ու Զ. Սիմոնյանը: Նրանց ուղեկցում էին թիկնապահներ գնդապետ Շահբազյանը և պորուչիկ Ա. Աղաբաբյանը[586]: Պատվիրակությունը լիազորված էր Հայաստանի Հանրապետության կառավարության անունից ստորագրելու դաշնագրեր, համաձայնագրեր, դեկլարացիաներ, խնդրագրեր, հուշագրեր և միջազգային այլ փաստաթղթեր[587]: Ալ. Խատիսյանը գրում է. «Մեզ հրահանգ տրված էր ամէն ջանք թափել ընդարձակելու Հայաստանի սահմանները»[588] և միաժամանակ «մանդատ ունենք չեզոք լինելու և միջազգային բախումներից հեռու մնալու»[589]:

Ավելի վաղ՝ ապրիլ-մայիս ամիսներին, Բեռլինում գործել էր Հայոց ազգային կենտրոնական խորհրդի մեկ այլ պատվիրակություն՝ Ա. Ջամալյան, Գ. Մելիք-Ղարագոզյան, Լ. Նազա-

---

584 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 1, 24, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 253-254, նաև **Ա-Դռ**, նշվ. աշխ., էջ 537:
585 Տե՛ս նույն տեղը:
586 Տե՛ս նույն տեղը:
587 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 1, 2:
588 **Ալ. Խատիսեան,** նշվ. աշխ., էջ 78:
589 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 116:

բյան կազմով[590]: Հայ դիվանագետները փորձում էին Հայկական հարցի լուծման համար օգուտ քաղել Քառյակ միության պետությունների, մասնավորաբար՝ օսմանյան Թուրքիայի և կայսերական Գերմանիայի միջև աշխարհաքաղաքական, տնտեսական ու դիվանագիտական հակասություններից ու շահերի բախումներից: Նախորդիվ Օսմանյան կայսրությունը, կոպտորեն խախտելով Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրում ամրագրված դրույթները և սահմանները, ներխուժել էր Անդրկովկաս, ինչը հակասում էր Գերմանիայի և նրա դաշնակիցների աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերին տարածաշրջանում: Այդ պատճառով էլ պաշտոնական Բեռլինը և նրա դաշնակիցները տարբեր առիթներով պահանջում էին Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարությունից անհապաղ դադարեցնել տարածաշրջանում ռազմական ներխուժումներն ու տարածքային բռնազավթումները: Սակայն վերջինս, անտեսելով դաշնակիցների բողոքներն ու պահանջները, համառորեն շարունակում էր իրականացնել համաթուրանական ռազմավարական, ծավալապաշտական իր ծրագիրը: Այդ առնչությամբ գերմանացի ռազմական և քաղաքական գործիչ, բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ Էրիխ Լյուդենդորֆը գրում է. «Էնվեր փաշան ու թուրքական կառավարությունը ավելի շատ մտածում էին Կովկասում իրենց համաթուրանական նպատակների իրականացման, քան Անգլիայի հետ պատերազմելու մասին»[591]: Մինչդեռ Թուրքիան պաշտոնական Բեռլինի նախազգուշացումներին և պա-

---

[590] Մանրամասն տե՛ս **Ա. Հայրունի**, Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին, Երևան, 2013, էջ 21-38:

[591] **Э. Людендорф**, Мои воспоминания о войне 1914-1918 гг. (Военные мемуары), М., Вече, 2014, էջ 562:

հանջներին շարունակում էր հակադարձել անհիմն ու ստահոդ պատճառաբանություններով՝ լավ գիտակցելով, որ դաշնակից Գերմանիան երբևէ ռազմական ուժի դիրքերից չի խոսի: Գերմանացի ռազմական և քաղաքական մեկ այլ գործիչ՝ Կարլ Մյուլմանը, իր «Գերմանա-թուրքական ռազմական դաշինքը համաշխարհային պատերազմում» ուշագրավ աշխատությունում վկայում է թուրք ռազմաքաղաքական գործիչների չհիմնավորված բազմաթիվ հակադարձումների մասին: Օրինակ, ըստ հեղինակի, օսմանյան Թուրքիայի ռազմական նախարար Էնվեր փաշան, չընդունելով պաշտոնական Բեռլինի նախազգուշացումները և պահանջները, «պատճառաբանում» էր. 1. թուրքական զորքերի առաջխաղացումը Անդրկովկասում անհրաժեշտ է իբր բոլշևիզմի ազդեցության տարածման վտանգը կանխելու համար, 2. տարածաշրջանում մահմեդականների նկատմամբ հայկական «դաժանություններին» վերջ դնելու համար, մի հանգամանք, որին Թուրքիան չի կարող «անտարբեր»[592] նայել և այլն:

Ռազմաքաղաքական ստեղծված իրադրությունում Գերմանիան և նրա դաշնակիցները, ղեկավարվելով սեփական շահերով, ներքին և արտաքին խորը հակասությունների տրամաբանությամբ՝ ձգտում էին Վրաստանին և Հայաստանին հավաստիացնել, թե իրենց մղումներում անկեղծ են, սակայն իրականում «… ամեն կերպ դրդել»[593] նրանց, որպեսզի իրենց բողոքի ձայնը բարձրացնեն Կոստանդնուպոլսում հրավիրվելիք խորհրդաժողովում՝ պահանջելով վերանայել և փոփոխել

---

[592] Տե՛ս **C. Mühlmann**, Das deutsch-türkische Waffenbündnis im Weltkrieg, Leipzig, 1940, էջ 199, տե՛ս նաև **Ե. Սարգսյան,** Դավադիր գործարք. Հայաստան - Ռուսաստան – Թուրքիա, Երևան, 1994, էջ 60:

[593] **Ե. Սարգսյան,** նշվ. աշխ., էջ 61:

Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, տեղակայված թուրքական զորքերը ետ քաշել կովկասյան գրավված տարածքներից մինչև Կարս, Արդահան, Բաթում սահմանները, անհապաղ դադարեցնել ռազմական ներխուժումները տարածաշրջան և «հրաժարվել Բաթումի դաշնագրերը վավերացնելուց»[594]: Հունիսի 23-ին և 26-ին Կոստանդնուպոլսում Գերմանիայի հավատարմագրված դեսպան Ի. Բերնսդորֆը Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանի և Ալ. Խատիսյանի հետ հանդիպման ժամանակ առաջարկում է. «…Այժմ խնդիրը նրանում է, թե ինչպես Թյուրքիային ստիպել՝ Բրեստի պայմանագիրը գործադրել»[595] (վերանայել և փոփոխել – Գ. Պ.), «**Բայց պետք է հնարավորություն լինի նրա վրա պնդելու համար: Շատ լավ կլիներ, եթե Վրաստանը և Հայաստանը փոխադարձ համաձայնությամբ միանային որևէ հիմունքներով**»[596] (ընդգծումը մերն է – Գ. Պ.): Ինչպես տեսնում ենք**, Գերմանիայի և նրա դաշնակիցների դիվանագիտական այդ մարտավարությունն արտահայտում և համընկնում էր նաև անդրկովկասյան նորանկախ հանրապետությունների պահանջներին**: Ավելորդ է ասել, որ յուրաքանչյուրը հետապնդում էր ռազմավարական և մարտավարական միանգամայն տարբեր նպատակներ:

Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը և ռազմաքաղաքական իրադարձություններն ու դիվանագիտական բանակցային գործընթացները Բեռլինում, Կոստանդնուպոլսում, Վիեննայում և այլուր, **հայ դիվանագետների ապավինելը Գերմանիային և նրա դաշնակիցներին զուր էր և անիրատե-**

---

[594] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 117:
[595] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 13, թ. 4:
[596] Նույն տեղում, թ. 1:

**սական, ուստի չարժանացավ նրանց «շոշափելի» աջակցությանը:**

Հայկական պատվիրակությունը, մեծ հույսեր կապելով Գերմանիայի կառավարության հավաստիացումների և աջակցության հետ, մի ընդարձակ հուշագրով դիմել էր պաշտոնական Բեռլինին՝ ազդելու Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության վրա՝ տեղակայված զորքերը ետ քաշելու գրավված հայկական այն տարածքներից, որոնք ամրագրված չէին Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի սահմաններում[597]: Մեկ այլ հուշագրով հայ դիվանագետները խնդրել էին Գերմանիայի աջակցությունը՝ կազմակերպելու ցեղասպանության հետևանքով հայրենազրկված վեց հարյուր հազար արևմտահայ փախստականների վերադարձն իրենց հայրենի օջախներ[598] և այլն: Սակայն ինչ-ինչ պատճառներով հայկական պատվիրակությունը ընդհատել էր իր դիվանագիտական առաքելությունը և մայիսի 30-ին Բեռլինից վերադարձել Թիֆլիս[599]:

Ընդ որում, օրեր անց նույնանման դիվանագիտական առաքելությամբ մեկ այլ պատվիրակություն, որի կազմում էին Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդի ներկայացուցիչներ Հ. Օհանջանյանն ու Ա. Զուրաբյանը, Բաթումի բանակցություններին մասնակցած Գերմանիայի ներկայացուցիչ

---

[597] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 100-101, տե՛ս նաև Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива Министерства иностранных дел кайзеровской Германии (новые документы), Сост., отв. ред. В. Микаелян, Ер., 1995, էջ 506-507, տե՛ս նաև История иностранной интервенции в 1918 г., Документы. Ер., 1970, էջ 178:

[598] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 63, ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, III մաս, թ. 398, ց. 2, գ. 11, թ. 2, 80, 102-103:

[599] Տե՛ս **Հ. Ավետիսյան,** Հայկական հարցը 1918 թվականին, էջ 259:

գեներալ Օ. ֆոն Լոսովի առաջարկով և նրա հետ հունիսի 3-ին ուղևորվեց Բեռլին: Հ. Օհանջանյանի հրավերով պատվիրակությանը միացան նաև Ջեյմս Գրինֆիլդը (հայ էր մոր կողմից, Առաջին աշխարհամարտից առաջ հայ-գերմանական կոմիտեի նախագահ, Բեռլինի համալսարանի դոցենտ)[600] և մեծանուն գրող և դիվանագետ Ավետիք Իսահակյանը[601]: Կարճ ժամանակ անց պատվիրակությունը հանդես եկավ Հայաստանի Հանրապետության կառավարության անունից և իր ակտիվ ու դժվարին դիվանագիտական առաքելությունը ծավալեց Բեռլինում, Վիեննայում և եվրոպական այլ քաղաքներում՝ այդ մասին պարբերաբար իրազեկելով Կոստանդնուպոլսի հայկական պատվիրակությանը: Բեռլինում պատվիրակությունը գործեց շուրջ հինգ ամիս՝ հունիսից մինչև նոյեմբերի սկզբները[602]:

Այժմ վերադառնանք Ավ. Ահարոնյանի գլխավորությամբ Կոստանդնուպոլիս մեկնող Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը, որն իր դիվանագիտական բարդ ու դժվարին բանակցային գործունեությունը ծավալելու էր **բեռլինյան հայկական պատվիրակության հետ համախորհուրդ:** Նրանց նպատակն էր խորհրդաժողովում ներկայացնել և պաշտպանել Հայկական հարցը:

1918 թ. հունիսի 13-ի երեկոյան պատվիրակության հիմնական կազմը՝ Ավ. Ահարոնյանի գլխավորությամբ, ուղևորվեց Թիֆլիսից և նույն ամսի 19-ին՝ երեկոյան ժամը 4-ին, հասավ Կոստանդնուպոլիս, իսկ Մ. Պապաջանյանը, Մ. Բունիա-

---

[600] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 47:

[601] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 656, թ. 121-124, 146-147, ց. 2, գ. 11, թ. 100-101:

[602] Տե՛ս **Г. А. Петросян,** Отношения Республики Армения с Россией (1918-1920 гг.), Ереван, 2012, էջ 46-47:

թյանը, գնդապետ Շահբազյանը և Հ. Բերբերյանը ժամանեցին հունիսի 24-ին[603]: Հունիսի 19-ին օսմանյան Թուրքիայի մայրաքաղաք ժամանեցին միաժամանակ նաև Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակությունները[604]: Կոստանդնուպոլսի նավահանգստում կայանած «Գեներալ» նավի վրա նրանց դիմավորեց Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարության հատուկ պաշտոնյա, Աթենքում նախկին դեսպան Մուխթար բեյը[605]: Պատվիրակության դիվանի կառավարիչ-առաջին քարտուղար Հակոբ Քոչարյանը հայտնում է, որ Մուխթար բեյին հանձնարարված էր «արտաքին գործերի նախարարության կողմից ընդունել հայկական, վրացական ու Ադրբեջանի պատվիրակությունները և նրանց համար անհրաժեշտ կարգադրություններ անելու և հոգատարություն անելու: … Մեզ համար արդեն պատրաստված են երկու լավագույն հյուրանոցներում «Perapalace» - ը՝ վրացիների համար, «Թոքաթլյան»-ը՝ մեզ համար: Իրենց ավտոմոբիլներով մեզ հասցրին և տեղավորեցին հյուրանոցներում, որտեղ ամենայն հարմարություններով մինչև օրս ապրում ենք: Մյուս օրը (հունիսի 20-ին – Գ. Պ.) նույն պաշտոնյան հայտնեց մեզ, որ երկու ավտոմոբիլ դրվում են մեր տրամադրության տակ ամեն օր առավոտից մինչև գիշեր, նույնպես և երկու պաշտոնյաներ դնում են՝ ամեն տեսակ հարմարություններ մեզ տալու համար»[606]:

Հունիսի 23-ին Ավ. Ահարոնյանը Հայոց ազգային կենտրոնական խորհրդին իրազեկեց ուշագրավ հետևյալ տեղեկու-

---

603 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 117, ց. 2, գ. 12, թ. 42:

604 Տե՛ս նույն տեղը:

605 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 39, «Զանգ» լրագիր, Երևան, 7 օգոստոսի, 1918 թ.:

606 ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 39, նաև **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 537:

թյունը. «Հայաստանի պատվիրակութեան ժամանումը Պոլիս շշմեցուցիչ տպաւորութիւն է գործում թէ թիւրք և թէ հայ հասարակութեան վրա: … Ժամանման լուրը տպագրւում է թերթերում իբրև մի սենսացիոն նորութիւն, որը միանգամայն անսպասելի էր ամբողջ Պոլսի, ամբողջ Թիւրքիայի համար:

Թիւրք հասարակութիւնը ուղղակի շշմում է, իմանալով … Հայաստանի պատւիրակութեան գալը, որովհետև մինչև այժմ նա սովոր էր կարդալ, թէ հայութիւնը բնաջնջւել է Կովկասում, թէ ամբողջ Կովկասը Տաճկաստանին է հպատակեցված, բայց հիմա յանկարծ տեսնում է հայութիւնը ոչ միայն չի ջնջւած, այլ, ընդհակառակը, մի առանձին պետութիւն է կազմած, որի ներկայացուցիչները եկել են Պոլիս:

Շշմում և միանգամայն ցնցւում է նաև Պոլսի հայութիւնը: Սա ևս կարծում էր, որ հայ տարրը Կովկասում այլևս չկայ, որ նա ազգովին բնաջնջւել է, որովհետև տաճիկ կառավարութիւնը և տաճկական թերթերը այդպէս էին հաւատացրել նրան, և սակայն յանկարծ լսում է, որ հայութիւնը ոչ միայն կայ, այլ ընդհակառակը, պետութիւն էլ է հիմնել և իր պատւիրակութիւնը Պոլիս ուղարկել: Գիշերով թագուն տնից տուն են գնում հայերը, իրար շշնջում այդ, ըստ երևոյթին անհաւատալի լուրը և նրա ստուգութեան մէջ հաւաստիանում»[607]:

Խորհրդաժողովը շարունակ հետաձգվում էր: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը հարկադրված Կոստանդնուպոլսում մնաց հունիսի 19-ից մինչև նոյեմբերի 1-ը[608]: Առաջ անցնելով նշենք, որ այդ ընթացքում արտաքին գործերի նախարար Ալ. Խատիսյանը և պատվիրակության մյուս ան-

[607] «Զանգ» լրագիր, Երևան, 1 դեկտեմբերի, 1918 թ.:
[608] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 131:

դամները՝ որպես դիվանագիտական առաքելության ներկայացուցիչներ, Կոստանդնուպոլսում լայն գործունեություն ծավալեցին նաև Հայաստանի Հանրապետության արտասահմանյան և հյուպատոսական ներկայացուցիչների նշանակման ուղղությամբ այն հեռավոր երկրներում ու քաղաքներում, որտեղ կային հայության ստվար զանգվածներ: Երևան վերադարձից առաջ՝ հոկտեմբերի 21-ին, Ավ. Ահարոնյանը հեռագիր հղեց վարչապետ, արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Հովի. Քաջազնունուն՝ առաջարկելով Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետության ժամանակավոր ներկայացուցիչ նշանակել պատվիրակության քարտուղար-թարգմանիչ Ֆ. Թախտաչյանին[609]:

Հունիսի 20-ին օսմանյան Թուրքիայի մայրաքաղաքում Գերմանիայի դիվանագիտական ներկայացուցչությունը հայկական պատվիրակությանը փոխանցեց Բեռլինից Հ. Օհանջանյանի և Ա. Զուրաբյանի ստորագրությամբ երկու հեռագրեր[610], որոնցով տեղեկացվում էր հայ դիվանագետներին այն մասին, որ ա. կայսերական Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը «ուզում է բարելավել իր վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ… և մեզ բարեկամ են համարում»[611], բ. Կոստանդնուպոլսի խորհրդաժողովի անցկացումը ձգձգվում է, և այն հավանաբար իր աշխատանքները կսկսի երեք շաբաթից ոչ շուտ[612]: Խորհրդաժողովի ձգձգման պայմաններում ընդունելի էր քննարկման ենթակա կարևորագույն հարցերը արծարծել օսմանյան Թուրքիայի և անդրկովկասյան նորանկախ

---

[609] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 294, ց. 2, գ. 12, թ. 102:
[610] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 39:
[611] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 117:
[612] Տե՛ս նույն տեղը:

հանրապետությունների ներկայացուցիչների մասնավոր հանդիպումների և դիվանագիտական անջատ բանակցությունների ժամանակ[613]: Ալ. Խատիսյանը նշում է, որ Կոստանդնուպոլսում հայկական պատվիրակության բազմաթիվ հանդիպումների և դիվանագիտական բանակցությունների ռազմավարական **«գլխաւոր առարկաները չորս ամսւայ ընթացքին եղան երեք. Ա) Նպատակայարմար սահմաններ կենսունակ Հայաստանի մը ստեղծման համար. Բ) Պոլսոյ խորհրդաժողովը. Գ) Հայերու անտանելի վիճակը Կովկասի մէջ: Այս հարցերու մասին էր, որ կը խօսէինք շարունակ այն բոլոր պաշտօնական թէ անպաշտօն անձերուն հետ, որոնց հետ առիթ ունեցանք տեսնուելու Պոլսոյ մէջ»**[614]: Ըստ Ալ. Խատիսյանի՝ հետաձգվող խորհրդաժողովի պայմաններում հայկական պատվիրակությունը հետամուտ եղավ իր ռազմավարական նպատակներին հասնելու **դիվանագիտական երեք հիմնական մարտավարական ուղղություններով. «Ա) Մեր յարաբերութիւնները թուրք նախարարական խորհուրդին հետ,** Թալէաթ փաշայի եւ Էնվէր փաշայի գլխաւորութեամբ. **Բ) Մեր յարաբերութիւնները օտար դեսպաններու հետ,** Գերմանիոյ դեսպան Կոմս Պէրնստորֆի, Աւստրօ-Հունգարիոյ դեսպան Մարքիզ Բալավաչինիի եւ Պուլկարիոյ դեսպան Քօլշեֆի, ինչպէս նաեւ **չեզոք պետութեանց՝ Պարսկաստանի եւ Շուէտի դեսպաններուն հետ. Գ) Մեր յարաբերութիւնները երիտասարդ թուրքերու կոմիտէի, ինչպէս նաև թուրք պետական ազդեցիկ գործիչներու եւ մամուլի ներկայացուցիչներու հետ. ասոնց մէջն էին, ի միջի այլոց, Ահմէտ Ռիզա պէյը, «Թանին»ի խմբագիր Հիւսէին Ճահիտ պէյը եւ ծովային**

---

[613] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 68, թ. 1-4:

[614] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, դեկտեմբեր, էջ 100:

**նախարար Ռէուֆ պէյը: Ատկէ զատ մենք տեսակցութիւն ունեցանք Սուլթանին հետ, որուն մեզ ներկայացուց Էնվէր փաշան: Մեր խօսակցութեան նիւթն էր հայկական հարցը»[615]:**

Ինչպես նշվեց, Կոստանդնուպոլսի պատվիրակության հետ համախորհուրդ դիվանագիտական ռազմավարական և մարտավարական նույնպիսի դժվարին գործունեություն էր ծավալում նաև Բեռլինի հայկական պատվիրակությունը ինչպես Գերմանիայում, այնպես էլ եվրոպական այլ պաշտոնական մայրաքաղաքներում: Պատվիրակությունը դիվանագիտական այցելություններ էր կատարում և բանակցություններ էր վարում Քառյակ միության պետությունների ղեկավարների, ինչպես նաև Բեռլինում Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Իոֆֆեի և այլոց հետ: Ըստ այդմ՝ դրանց ընթացքի մասին պարբերաբար տեղեկացնում էր Կոստանդնուպոլսի հայկական պատվիրակությանը:

Կարևոր է նշել, որ խորհրդաժողովի ձգձգման պայմաններում Հայկական հարցին և ընդհանրապես Անդրկովկասին վերաբերող բոլոր կարևորագույն հարցերը քննարկվում էին գլխավորապես Բեռլինում[616], որտեղ մասնակիցներից յուրաքանչյուրը, մասնավորապես գլխավոր դաշնակիցներ կայսերական Գերմանիան և օսմանյան Թուրքիան հետևողականորեն ու ջանադրաբար հետապնդում էին իրենց աշխարհաքաղաքական և տնտեսական շահերը տարածաշրջանում: Ընդ որում, Կոստանդնուպոլսում քննարկվում էին Օսմանյան կայսրության և անդրկովկասյան նորանկախ հանրապետությունների միջև վիճելի սահմանների հստակեցման հարցեր և

---

[615] Նույն տեղում:

[616] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 59:

այլն: Փաստորեն, Բեռլինի և Կոստանդնուպոլսի հայկական պատվիրակությունների դիվանագիտական ռազմավարական ու մարտավարական գլխավոր նպատակը Հայկական հարցը լուծելն էր:

Հայկական պատվիրակությունը Կոստանդնուպոլսում երեք օր հանգիստ առնելուց և դիվանագիտական նախապատրաստական որոշ աշխատանքներից հետո հունիսի 22-ից հուլիսի 3-ը հանդիպումներ ունեցավ և բանակցություններ վարեց Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարության մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների, թուրք քաղաքական ու պետական ազդեցիկ գործիչների և մամուլի հայտնի ներկայացուցիչների հետ[617]: Հայկական պատվիրակությունը պարբերաբար փոխադարձ այցելություններ և հանդիպումներ ունեցավ նաև Կոստանդնուպոլսում հավատարմագրված՝ Քառյակ միության պետություններ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի, չեզոք երկրներ Պարսկաստանի (Իրանի), Շվեդիայի, Դանիայի, Հոլանդիայի, Նիդեռլանդների, Իսպանիայի դեսպանների, ինչպես նաև դիվանագիտական այլ ներկայացուցիչների հետ: Պատվիրակության հիմնական նպատակն էր ներկայացնել Հայկական հարցը և ակնկալել նրանց ակտիվ միջնորդական աջակցությունը՝ իրենց կառավարությունների միջոցով ազդելու օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության վրա՝ ընդարձակելու Հայաստանի Հանրապետության սահմանները, որպեսզի վերջինս ի վիճակի լիներ ընդունելու Հայոց ցեղասպանության հետևանքով հայրենազրկված վեց հարյուր հազար հայ փախստականներին և հնարավորություն տար նրանց գոյատևելու ու

[617] Տե՛ս նույն տեղը, ց. 1, գ. 8, թ. 117, ց. 2, գ. 12, թ. 40-41:

ապրելու պետական կյանքով և այլն: «Ընդհանրապէս պիտի ըսեմ, - գրում է Ալ. Խատիսյանը, - որ դերերը մենք առաջուընէ կը բաժնէինք իրարու միջեւ եւ ամէն մէկը յանձն կառնէր խոսիլ որոշ նիւթերու վրայ»[618]:

Պատվիրակությունն առաջինն այցելեց օսմանյան Թուրքիայի նախարարների խորհրդի մեծ վեզիր Թալեաթ և ռազմական նախարար Էնվեր փաշաներին, ապա արտաքին գործերի նախարար Նեսիմի բեյին, ռազմածովային ուժերի նախարար Ջեմալ փաշային, արդարադատության նախարար Հալիլ բեյին[619] և ուրիշների: «Հասկանալի է իհարկե, - գրում է «Զանգ» լրագիրը, - հոգեկան այն ծանր վիճակը, որ պիտի ապրէր մեր պատուիրակութիւնը այդ պահուն»[620]. այցելություններ, դիվանագիտական բանակցություններ օսմանյան Թուրքիայի՝ բացառապես պետական քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում և հայաբնակ բազմաթիվ այլ վայրերում ավելի քան մեկուկես միլիոն հայության զանգվածային ցեղասպանությունն ու վեց հարյուր հազարից ավելի հայերի հայրենազրկությունը ծրագրողների և գործադրողների մի մասի հետ, «որոնք այսօր էլ հետամուտ էին փոքրիկ հանրապետության սահմաններում սովով բնաջնջել մնացած հայությանը»[621]:

**Անվիճելի իրողություն է այն, որ օսմանյան Թուրքիան պետական մակարդակով ծրագրեց և գործադրեց Արևմտյան Հայաստանում ու կայսրության հայաբնակ բազմաթիվ այլ վայրերում զանգվածային ցեղասպանության և հայրենա-**

---

618 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, դեկտեմբեր, էջ 101:
619 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 117, տե՛ս նաև **Ա-դո,** նշվ. աշխ., էջ 538:
620 «Զանգ» լրագիր, Երևան, 1 դեկտեմբերի, 1918.:
621 **Ա-դո,** նշվ. աշխ.., էջ 540:

զրկության ռազմավարությունն ու մարտավարությունը: Թուրքերը հայ ազգաբնակչությանը դիտարկում էին որպես սեպ, որը բաժանում էր օսմանյան Թուրքիան Կովկասի և Ռուսաստանի թյուրքալեզու ժողովուրդներից և խանգարում էր համաթուրանական ծավալապաշտական ծրագրերի իրականացմանը: Այդ խոչընդոտի վերացումն էլ դարձավ Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարության՝ Հայոց ցեղասպանության և հայրենազրկության պետական քաղաքականության նպատակը, որն էլ իրականացվեց Առաջին աշխարհամարտի տարիներին: 1918 թ. օսմանյան Թուրքիան, ներխուժելով Անդրկովկաս, շարունակեց իր որդեգրած ցեղասպան քաղաքականությունը արևելահայության նկատմամբ:

Հունիսի 22-ի կեսօրին, օսմանյան Թուրքիայի արտաքին գործերի նախարարության հատուկ ներկայացուցիչ Մուխթար բեյի ուղեկցությամբ հայկական պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանը, արտաքին գործերի նախարար Ալ. Խատիսյանը և պատվիրակության ռազմական խորհրդական գեներալ Գ. Կորգանյանը այցելեցին Թալեաթ փաշային[622]:

Դիվանագիտական փոխադարձ հաճոյախոսություններից հետո նախագահ Ավ. Ահարոնյանը մեծ վեզիրին ներկայացրեց պատվիրակության հիմնական նպատակները. «Մեր տարածքը շատ սուղ և սահմանափակ է … կստեղծի (Օսմանյան կայսերական կառավարությունը – Գ. Պ.) հնարավորություն՝ մեր պետության համար ապահովելու տարածքային սահմաններ՝ բավարարելով մեր օրինական ձգտումները, որը արդարության և ազգագրական սկզբունքներին գոհացում տալով՝ հայկական նոր պետությունը կդարձնի կենսունակ և ընդունակ

[622] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 39:

քաղաքական ու տնտեսական … զարգացման ճանապարհի»[623]: Իբրև պատասխան՝ Թալեաթ փաշան քաղաքավարական ձևերի տակ թաքնված կեղծ սիրալիրությամբ ողջունեց հայկական պատվիրակությանը՝ հավաստիացնելով. «Կայսերական կառավարությունը ամբողջապես կիսում է հայ ժողովրդի զգացումները, հույսերը, և երիտասարդ հանրապետությունը կարող է ապահով լինել, որ Օսմանյան կայսրությունը ամեն կերպ կաջակցի և անհրաժեշտը կանի, որպեսզի այդ ուժեղ և աշխատասեր ժողովուրդը կարողանա իրագործել իր ծրագրերը»[624]: Ապա պատասխանելով պատվիրակության շոշափած՝ ցեղասպանության հետևանքով հայրենազրկված հայ փախստականների իրենց հայրենի օջախներ վերադարձի և ներքին կարգավորման մի շարք խնդիրների վերաբերյալ հարցին՝ մեծ վեզիրը, բացահայտորեն նենգափոխելով ամբողջ պատմական իրողությունը և ճշմարտությունը, հրապարակայնորեն հայտարարեց. «**Հայ և օսմանյան ժողովուրդների միջև տեղի են ունեցել թյուրիմացություններ, որոնք շատ ցավալի հետևանքների են հանգեցրել»**[625]: Ահա այսպես էր արտահայտվում հայոց զանգվածային ցեղասպանությունը և հայրենազրկությունը ծրագրող ու գործադրող գլխավոր գործիչներից մեկը՝ Թալեաթ փաշան:

Դիվանագիտական քննարկումների ժամանակ Թալեաթ փաշան միտումնավոր շրջանցեց և շեղեց հայ դիվանագետների ներկայացրած հիմնական հարցադրումները՝ դարձյալ փորձելով նենգափոխել ամբողջ պատմական ճշմարտությունը: Պատվիրակության անդամ Ալ. Խատիսյանը այդ առնչու-

---

[623] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 7:
[624] Նույն տեղում, ց. 1, գ. 13, թ. 7-8:
[625] Նույն տեղում, թ. 8:

թյամբ գրում է. «Հարկաւ, իր **առաջին իսկ խոսակցության ատեն** (Թալեաթ փաշան – Գ. Պ.) **ջանաց նետել իր վրայէն ռեւէ պատասխանատուութիւն հայկական եղեռնին համար: Ամբողջ պատասխանատուութիւնը կը ձգէր զինուորական իշխանութեան, քրդերու եւ տեղական իշխանութիւններու վրա:** «Ահա դուք պիտի տեսնէք ինքներդ, կըսեր ան, թէ ինչպէս երբեմն պաշտոնեաները կամայական կերպով կաղաւաղեն վերէն եկած հրամանները»: Ան կը պատմէր, թէ ինչպէս պատերազմի առաջին օրերուն ինք խնդրած էր խորհրդարանի անդամ Վարդգէսէն Թուրքիոյ կողմը բռնել եւ ինչպէս Վարդգէսը իր այդ խնդրանքին պատասխանած էր լռութեամբ: «Մեր թշնամիները ռուսերն էին, կըսեր Թալէաթ, բայց երբ անոնք իրենց հրացանները կը պարպէին մեր զինուորներուն վրա, անոնց փամփուշտները կը դպչէին մեր զինուորներուն ոտքերուն: Իսկ երբ սկսեցան կրակել թրքահպատակ հայերը, իրենց հայրենիքի դաւաճանները, այն ատեն փամփուշտները կը դպչէին մեր զինուորներու սրտին»»[626]: «Այս տեսակցութիւնը, - շարունակում է Ալ. Խատիսյանը, - հարկաւ տանջանք էր մեզ համար: … Աշխատեցանք մեր խօսակացութեան նիւթը անցեալէն փոխադրելու ներկայի հրատապ հարցերուն վրա: … Թալէաթի արտաքինը իրեն համար նպաստաւոր տպաւորութիւն մը չէր ձգէր. իր ամբարտաւան երեւոյթը, ոչ-մտաւորականի դէմքը, մարմնեղ կազմուածքը, իր ձայնը, որ կեղծ բարեկամութեան մը շեշտը կառնէր, չէին կարող նպաստաւոր ըլլալ: Ի վերջոյ, ան խնդրեց գրաւոր կերպով ներկայացնել իրեն հայկական պահանջները, զեկուցանելու համար նախարարական խորհուրդին եւ խոստացաւ խօսիլ արտաքին գործերու նախարարին

[626] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, դեկտեմբեր, էջ 101:

հետ: Թալէաթ փաշան խօսքով իր հաւանութիւնը կուտար մեր պահանջներուն, **բայց կըսէր թէ բոլոր հարցերն ալ խորհրդաժողովը պիտի որոշէ»**[627]: Թալեաթը հայ դիվանագետներին հայտնեց նաև. «Կոնֆերանսը կսկսվի հավանորեն մեկ շաբաթից»[628]:

Ինչպես տեսնում ենք, բնավ էլ պատահական չէր, որ Թալեաթ փաշան հայկական պատվիրակությանն ակնհայտորեն նպատակաուղղված մղում էր դիվանագիտական փակուղի: Բանն այն է, ինչպես արդեն ասվել է, որ Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարության դիվանագիտական մարտավարությունը Կոստանդնուպոլսում հրավիրվելիք խորհրդաժողովը խափանելն էր:

Պատվիրակությունը հաջորդիվ դիվանագիտական այց կատարեց օսմանյան Թուրքիայի ռազմական նախարար Էնվեր փաշային: Ուշագրավ է պատվիրակության անդամ Ալ. Խատիսյանի հիշատակած հետևյալ պերճախոս փաստը թուրքական դիվանագիտության վարքագծի և որոշ յուրահատկությունների մասին. «Երբ մենք մտանք ընդունելության մեծ սրահը, մեր ուշադրությունը գրավեց դիմացի պատից կախված թրերի հսկայական հավաքածուն, որտեղ ոսկե տառերով արաբերենով մակագրված էր. «Թրերի շղթաների ներքո կգտնես քո դրախտը»»[629]: Ալ. Խատիսյանը շարունակում է. «Էնվէր փաշա անմիջապէս ընդունեց մեզ. միջահասակ եւ վայելչակազմ մէկն էր, որ առաջին անգամէն քաշուող, վերաբերմունքի մէջ պարզ եւ շատ զուսպ մարդու տպաւորութիւն մը կը ձգէր. դէմքը շատ խիստ էր եւ հանդարտ, աչքերը՝ խորա-

---

627 Նույն տեղում, էջ 101-102:
628 ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 34, թ. 2:
629 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 117:

թափանց եւ խոհուն. ընդհանրապէս գրաւիչ էր արտաքինով: **Այս մարդուն նայելով դժուար էր հաւատալ, թէ ընդունակ է հանդարտ սրտով հարիւր հազարաւոր մարդիկ մահւան գիրկը նետել: Այդքան խաբուսիկ է թուրքերուն երեւոյթը. Ատոր համար է, որ եւրոպացիները այնքան դիւրաւ կը խաբւին անոնց անուշ եւ գրաւիչ ձեւերէն»**[630]:

Պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանը, ողջունելով Էնվեր փաշային, հրապարակեց հիմնական և առանցքային այն խնդիրները, որոնք ներկայացրել էր Թալեաթ փաշային: Էնվերը, շնորհակալություն հայտնելով և փոխադարձ զգացումներ արտահայտելով, ասաց. «Այդ էլ սպասում էին ձեզնից: Ճշմարտությունն այն է, որ դուք ձեր հույսը դրել էիք Ռուսաստանի, ավելի շուտ Անգլիայի վրա: Թուրքիան այժմ ձեզ անկախություն տվեց և տվեց այդ ձեր դրության մասին երկար մտածելուց հետո: Իմ ստորագրությունը կա և երբեք չի ջնջվի: Դուք կարող եք լինել ոչ միայն մեր լավ բարեկամները, այլև մեր դաշնակիցները: Դուք էլ պիտի այդ եզրակացությանը հանգեք և կտեսնեք, որ դա ամենալավ արդյունքները կբերի հասարակական բարօրության համար:

**Փախստականների հարցը. արդարև, շատ տխուր ու ցավոտ է, ինչպես և պատերազմը, բայց բոլորն էլ դրանից տանջվել են:** Հայերն ուժեղ, աշխատող և եռանդուն ժողովուրդ են: Շնորհիվ այդ հատկությունների՝ ինչ վերքեր, որ ստացել է ձեր ազգը պատերազմից, բուժելի են և պիտի բուժվեն: **Վստահ ենք, որ Կովկասի մեր զորքերը, համաձայն տրված հրամանի, բոլորովին կոռեկտ պիտի վարվեն: Կարող եմ ասել, որ թուրք ազգաբնակչությունը նույնպես փախել է Տրապիզոնից և այլ քա-**

[630] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, դեկտեմբեր, էջ 102:

**ղաքներից մինչև Ուրֆա և Ադանա,** ուստի մենք էլ ուզում ենք խաղաղություն և հանգստություն»[631]: Ահա այսպես էր արտահայտվում հայոց զանգվածային ցեղասպանությունը և հայրենազրկությունը ծրագրող ու գործադրող մյուս գործիչը՝ Էնվեր փաշան:

Էնվեր փաշան, անդրադառնալով նաև հայ դիվանագետների՝ Հայաստանի սահմանների ընդարձակման և կենսունակ հայկական պետություն ստեղծելու պահանջին, հակադարձեց. «Մենք չենք կարող մտածել սահմաններու ընդարձակման մասին, որովհետեւ ես յաջողեցայ ընել այն, ինչ-որ կենսական անհրաժեշտութիւն մըն է Թուրքիոյ համար: Ես եւ իմ ընկերներս ստեղծեցինք Հայաստանը եւ ատով զոհացում տուինք հայերու ազգային ձգտումներուն եւ լուծեցինք հայկական հարցը: Միեւնոյն ատեն մենք այդ ըրինք Թուրքիոյ սահմաններէն դուրս, ռուսական հողին վրայ, եւ ունեցանք երկու յաջողութիւն. ա. ստեղծեցինք Հայաստանը եւ բ. անվթար պահեցինք Թուրքիոյ հողը: Միայն այդ գնով է որ մենք համաձայնեցանք հաշտուիլ հայկական հանրապետութեան գոյութեան հետ: Արդ, ի՛նչպէս կարելի է այժմ պահանջել, որ նոր հողամասեր կցենք Հայաստանին. չէ՞ որ այդ չենք կրնար ընել առանց դպչելու հին եւ նոր Թուրքիոյ հողերուն: Կարսը, Արտահանը եւ Պաթումը նոր միայն վերադարձան իրենց հին հայրենիքին գիրկը»[632]:

Ինչպես վերը նշվեց, պատասխանելով պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանին՝ Էնվեր փաշան, իհարկե խուսանավելով և անուշադրության մատնելով հայ դիվանագետ-

---

[631] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 5-6:

[632] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, դեկտեմբեր, էջ 102:

ների ներկայացրած հիմնական պահանջների դիվանագիտական քննարկումը, ոչ միայն բարեկամություն հաստատելու, այլև դաշնակցելու կոչ արեց: Փաստորեն, նա դարձյալ շրջանառեց Հայաստանի հետ ռազմական դաշինք (entente) ստեղծելու առաջարկը[633]: Դեռևս 1918 թ. հունիսի սկզբին Բաթումի դիվանագիտական բանակցությունների ընթացքում թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշան խնդրանքով բազմիցս դիմել էր հայկական պատվիրակության նախագահ Ալ. Խատիսյանին, որ «իրենք հաճույքով հայերի հետ ռազմական դաշինքի կգնան, ինչպես դա արել են բուլղարների հետ, և որ Հայաստանը դրանից կարող է մեծ շահ ունենալ»[634]: Իրականում այդ առաջարկի հիմնական նպատակն էր 10 հազար հայ զինվորի ընդգրկելու իրենց զորքերի կազմում՝ Համաձայնության (Անտանտ) պետությունների դեմ կռվի նետելու համար այն պահին, երբ մոտենում էր Քառյակ միության մոտալուտ պարտությունը Առաջին աշխարհամարտում: Սակայն հայկական պատվիրակությունը դիվանագիտորեն խուսանավել էր՝ հաշվի առնելով այդ առաջարկի խիստ վնասակար և անդառնալի հետևանքները հայության համար:

Էնվեր փաշան, գիտակցելով հայ դիվանագետների մտավախությունը և անվստահությունը Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարության նկատմամբ, Կոստանդնուպոլսում առաջարկեց այլ պայմաններ, որոնց վրա պետք է հիմնվեր իր ենթադրած ռազմական դաշինքը: «Մենք զինակից

---

633 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 117:

634 Նույն տեղում, թ. 116, մանրամասն տե՛ս **Գ. Պետրոսյան,** Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. հայոց անկախ պետականության կերտումը (1917 թ. փետրվար – 1918 թ. հունիս), էջ 224-225:

դառնալով, - ասում է նա, - չենք կարող ձեզնից պահանջել, որ դուք մեր շարքերում, մեզ հետ միասին կռուէք անգլիացոց դեմ: Մենք գիտենք, որ այդ դուք չէք անի: Բայց մենք ուզում ենք ապահով լինել, մեր զօրքի թիկունքը, երբ նա շարժուեց անգլիացոց կողմը, դեպի Պարսկաստան - ձեր կողմից չի կարող վտանգված լինել»[635]: Սակայն հայկական պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանը դիվանագիտորեն խուսանավեց՝ ասելով. «Դա մի խնդիր է, որի մասին ինքը չունի իր կառավարութեան հրահանգները, և առանց դրան նա իրեն իրաւունք չի համարում որևէ վերաբերմունք ցույց տալ դեպի խնդիրը»[636]:

Սրանով ավարտվեցին հայկական պատվիրակության առաջին դիվանագիտական այցելությունը և բանակցությունները օսմանյան Թուրքիայի ռազմական նախարար Էնվեր փաշայի հետ: Եվ այնուամենայնիվ, Կոստանդնուպոլսում տեղի ունեցող հայ-թուրքական դիվանագիտական բանակցություններում Օսմանյան կայսրությունը ջանադրաբար շարունակեց Հայաստանի Հանրապետության հետ ռազմաքաղաքական դաշինք ստեղծելու վերաբերյալ քննարկումները: Մինչդեռ 1918 թ. հուլիսին կայսերական Գերմանիան պահանջել էր իր դաշնակից օսմանյան Թուրքիայից ընդհատել այդ դաշինքի ստեղծման շուրջ քննարկումները հետևյալ հիմնավորումով. Օսմանյան կայսրությունը չի կարող առանձին, անջատ կնքել դաշնագրեր, համաձայնագրեր այլ երկրների հետ՝ առանց Քառյակ միության պետությունների փոխադարձ համաձայնության[637]:

---

[635] «Զանգ» լրագիր, Երևան, 1 դեկտեմբերի, 1918 թ.:
[636] Նույն տեղում:
[637] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657 (2-րդ մաս), թ. 121-127:

Կոստանդնուպոլսում տասն օրերի ընթացքում (հունիսի 22-ից հուլիսի 3-ը) հայկական պատվիրակությունը շարունակեց իր դիվանագիտական հանդիպումները և բանակցությունները օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության մյուս բարձրաստիճան պաշտոնյաներ՝ արդարադատության նախարար Հալիլ, արտաքին գործերի նախարար Նեսիմի բեյերի, ռազմածովային ուժերի նախարար Ջեմալ փաշայի և մի քանի այլ նախարարների հետ[638]: Հունիսի 22-ին օսմանյան Թուրքիայի արտաքին գործերի նախարարության հատուկ ներկայացուցիչ Մուխթար բեյի ուղեկցությամբ հայկական պատվիրակությունն այցելեց արդարադատության նախարար Հալիլ բեյին, որը 1918 թ. մայիս-հունիսին Բաթումի թուրքական պատվիրակության նախագահն էր և առաջիկայում պատրաստվում էր նախագահելու Կոստանդնուպոլսի խորհրդաժողովը[639]: Երեք օր անց՝ հունիսի 25-ին, Հալիլ բեյը փոխադարձ այցելություն կատարեց հայ դիվանագետներին, որոնց միացել էր Կոստանդնուպոլիս ուշ ժամանած հայկական պատվիրակության անդամ Մ. Պապաջանյանը (1918 թ. մայիսին Բաթումի անդրկովկասյան պատվիրակության անդամ, մայիսի 29-ից հունիսի 4-ը հայ-թուրքական բանակցությունների հայկական պատվիրակության անդամ): Ալ. Խատիսյանը (1918 թ. փետրվարից Տրապիզոնի, մայիսի 11-26-ը՝ Բաթումի անդրկովկասյան պատվիրակության անդամ, մայիսի 29-ից հունիսի 4-ը հայ-թուրքական բանակցությունների հայկական պատվիրակության նախագահ) և Մ. Պապաջանյանը, ինչպես տեսնում ենք, դիվանագիտական շփումներ են ունեցել

638 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 117, ց. 2, գ. 12, թ. 40:
639 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 40:

Հալիլ բեյի հետ դեռևս Բաթումի թուրք-անդրկովկասյան և հայ-թուրքական բանակցությունների ժամանակ:

Ինչպես բազմիցս նշել ենք, 1918 թ. հունիսի 3-ին Հալիլ բեյը օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության անունից պահանջել էր հայկական պատվիրակության նախագահ Ալ. Խատիսյանից ստորագրել թուրքանպաստ մի փաստաթուղթ և ստանձնել որոշակի պարտավորություն. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է պատերազմի (Առաջին աշխարհամարտ – Գ. Պ.) ամբողջ ընթացքում չպահպանել և ոչ մի տեսակի դիվանագիտական կապեր այն պետությունների հետ, որոնք գտնվում են պատերազմական վիճակում Օսմանյան կայսրության հետ»: Հաջորդ օրը՝ հունիսի 4-ին, ստորագրվել էր Բաթումի հայ-թուրքական «հաշտության և բարեկամության» դաշնագիրը: Օսմանյան Թուրքիայի կողմից ստորագրել էին թուրքական պատվիրակության նախագահ Հալիլ բեյը, թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշան, իսկ Հայաստանի Հանրապետության անունից՝ Ալ. Խատիսյանը, Հովհ. Քաջազնունին և Մ. Պապաջանյանը: Իրականում, Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի հետ կնքված Բաթումի հաշտության դաշնագրերով օսմանյան Թուրքիան լայն հնարավորություն էր ստանում ապահովելու իր ռազմաքաղաքական և տնտեսական ազդեցությունն ամբողջ տարածաշրջանում:

Ալ. Խատիսյանը փաստում է, որ Կոստանդնուպոլսում փոխադարձ դիվանագիտական հանդիպումների ժամանակ «Խալիլ պէյ մեզ ընդունեց շատ սիրալիր կերպով. մեր խօսակցութեան առարկան եղաւ առաջիկայ խորհրդաժողովը, անոր օրակարգը եւ այն միջոցները, որոնք անմիջապես պէտք է առնուին հայերու վիճակը Կովկասի մէջ բարելաւելու համար:

Մեր հիմնական միտքը հետեւալն էր, որ որոշ կերպով արտայայտեցինք խօսակցութեան ընթացքին. «Կամ Հայաստանը պիտի ապրի, ըսինք մենք Խալիլ պէյին, **այն ատեն տուէք անոր յարմար սահմաններ**, կամ չպիտի ապրի, այն ատեն մեր բոլոր խոսակցութիւնները աւելորդ են»»[640]: Սակայն Հալիլ բեյը բանակցությունների ժամանակ վերացական և խուսափողական պատասխան տվեց հայ դիվանագետների առանցքային և գործնական հարցադրումներին և, վկայակոչելով Բաթումի հաշտության դաշնագիրը, շեշտեց. «Դաշնագիրն արդեն ստորագրված է, պետք է միայն տերությունները (Քառյակ միության պետությունները – Գ.Պ.) **նույնպես ձևականորեն ստորագրեն**»[641] (վավերացնեն – Գ. Պ.): Այս հայտարարությունը, իհարկե, աննպատակ չէր: Դրանով Հալիլ բեյը հասկացնել տվեց հայ դիվանագետներին, որ օսմանյան Թուրքիան, համաձայն Բաթումի հաշտության դաշնագրով ամրագրված սահմանների և պայմանների, չի կարող տարածքային որևէ զիջում կատարել Հայաստանի Հանրապետությանը:

Հուլիսի 4-ին լրանում էր օսմանյան Թուրքիայի՝ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի հետ ստորագրված Բաթումի հաշտության դաշնագրերը Կոստանդնուպոլսում վավերացնելու համար սահմանված մեկամսյա ժամկետը: Հունիսի 25-ին հայ դիվանագետներն այլ աղբյուրներից տեղեկացան, որ դաշնագրերի վավերացման քննարկումների «գլխաւոր կենտրոնը ներկայումս Բեռլինն է»[642]: Ուստի նույն օրը՝ երեկոյան, Կոստանդնուպոլսում հայկական պատվիրակությունը գումարեց խորհրդակցություն, որին ներկա էին նախագահ

[640] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, դեկտեմբեր, էջ 100:
[641] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 117:
[642] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 59:

Ավ. Ահարոնյանը, անդամներ Ալ. Խատիսյանը, Մ. Պապաջանյանը և պատվիրակության դիվանի կառավարիչ-առաջին քարտուղար Հ. Քոչարյանը: Առաջին նիստում Ալ. Խատիսյանն առաջարկեց քննության դնել Բաթումի հաշտության դաշնագրի վավերացման խնդրի վերաբերյալ պատվիրակության դիվանագիտական մարտավարությունը, այսինքն՝ **վավերացնելու կամ չվավերացնելու հարցը:** Երկարատև քննարկումների արդյունքում խորհրդակցությունը որոշեց. «Գրել կամ հեռագրել Բերլին՝ մեր ներկայացուցիչներին և իմանալ նրանց կարծիքը, խնդրելով բանակցել այդ մասին գերման. պաշտ. շրջանների հետ:

Միևնոյն ժամանակ անհրաժեշտ է գտնում հեռագրով դիմել Թիֆլիզ՝ Ազգ. Խորհրդին և խնդրել անմիջապէս ուղարկել պատգամաւորութեան անունով, յատուկ կուրիերով, **երկու թուղթ, որոնցից մէկով Ազգ. Խորհուրդը հաստատում է Բաթումի դաշնագիրը, իսկ միւսով մերժում է: Պատուիրակութիւնը կունենայ այդ երկու** (պաշտոնական – Գ. Պ.) **գրութիւնները իր ձեռքի տակ, և ապա, ամբողջ յետագայ իրադարձութիւնը ի նկատի ունենալով կօգտուի դրանցից մէկից կամ միւսից**»[643]:

Ինչպես արդեն ասվել է, իրականում Բաթումի հաշտության դաշնագրերի վավերացումների հարցը դիվանագիտական ճանապարհով լուծելու այլընտրանք չկար, և այդպես էլ դրանք ուժի մեջ չմտան: Ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունում Գերմանիան և Ավստրո-Հունգարիան, ղեկավարվելով տարածաշրջանում աշխարհաքաղաքական և տնտեսական շահերով, պահանջում էին դաշնակից օսմանյան Թուրքիայից՝ 1. հրաժարվել Բաթումի հաշտության դաշնա-

[643] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 59:

գրերը վավերացնելուց, 2. տեղակայված թուրքական զորքերը ետ քաշել կովկասյան գրավված տարածքներից մինչև Կարս, Արդահան, Բաթում՝ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով ամրագրված սահմանները, 3.անհապաղ դադարեցնել տարածաշրջանում շարունակվող թուրքական ռազմական ներխուժումներն ու տարածքային բռնազավթումները: Այսուհանդերձ, Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարությունը բացահայտորեն հրաժարվել էր կատարել իր դաշնակիցների այդ պահանջները: Հարկ է նշել, որ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան թե՛ միմյանց միջև, թե՛ դաշնակից օսմանյան Թուրքիայի հետ Կովկասի գլխավոր խնդիրների շուրջ դեռևս համաձայնության չէին եկել:

Առաջին աշխարհամարտում Արևմտյան ռազմաճակատի գերմանա-թուրքական տարբեր խմբավորումների ռազմական նոր անհաջողություններով պայմանավորված՝ թուրքերը «հայեացքները ուղղած էին դէպի արեւելք, - գրում է Ալ. Խատիսյանը: Կորսնցնելով Պալքանները, արաբական երկրները՝ յոյս ունէին թէ իբրեւ փոխհատուցում պիտի ստանան կենդանի ուժ եւ հող Կովկասի, Թուրքիստանի եւ պարսկական Ատրպատականի մէջ»[644]: Ստեղծված պայմաններում օսմանյան Թուրքիան ձգտում էր իրականացնել համաթուրանական ռազմավարական և մարտավարական երկու հիմնական ծրագրեր. «Առաջին՝ ենթարկել Կովկասը Թուրքիոյ, յենուելով մուսուլմանական մեծամասնութեան վրայ եւ իջեցնել հայերու եւ վրացիներու ուժը նուազագոյն չափի մը. տարածուիլ Թուրքիստանի վրա եւ Մակուի վրայով նորէն պարսկական Ատրպատականի վրա: Երկրորդ՝ ստեղծել Կովկասի մէջ կով-

[644] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 84:

կասեան պետութեանց զօրեղ դաշնակցութիւն (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Հյուսիսային Կովկաս – Գ. Պ.) մը եւ այսպիսով ուժեղ պատուար մը առաջ բերել Թուրքիոյ դարեւոր թշնամիին՝ Ռուսիոյ դէմ: Թուրքերէն ոմանք կը ջանային այս երկու ծրագիրները միացնել. այդպէս էր օրինակ Հիւսէին Ճահիտ պէյը, որ կ՚ուզէր ստեղծել կովկասեան զօրաւոր դաշնակցութիւն մը Թուրքիոյ հովանաւորութեան տակ»[645]:

Հայկական պատվիրակությունները շաբաթներ ու ամիսներ շարունակ գրեթե տեղյակ չէին Կոստանդնուպոլսում և Բեռլինում անդրկուլիսային կամ բացահայտ դիվանագիտական ռազմավարական և մարտավարական սուր բախումների իրողություններին, որոնք գնալով ավելի ու ավելի էին թեժանում՝ պայմանավորված Առաջին աշխարհամարտում Քառյակ միության մոտալուտ պարտությամբ: Ա-Դոն վկայում է. «Կոնֆերանսը, որի համար հատկապես եկել էին պատվիրակությունները, չէր կայանում. ինչու էին ձգձգվում, հասկանալի չէր լինում…»[646]:

Հայկական պատվիրակությունը հաջորդիվ դիվանագիտական այց կատարեց նաև օսմանյան Թուրքիայի արտաքին գործերի նախարար Նեսիմի և ներքին գործերի նախարար Զանփոլադ բեյերին[647]՝ նրանց ներկայացնելով պատվիրակության Կոստանդնուպոլիս գալու նպատակների մասին: Սակայն հայ դիվանագետների ներկայացրած գործնական պահանջները զանազան պատրվակներով չարժանացան թուրք նախարարների ուշադրությանը և քննարկմանը: Պատվիրակության անդամ Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ երկու նա-

---

[645] Նույն տեղում, էջ 84-85:
[646] **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 543:
[647] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 40, **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 84:

խարարների հետ դիվանագիտական հանդիպումները նույնպես «շատ քիչ բան աւելացրին նախորդ տպաւորութիւններուս վրա: Բոլոր թուրքերն ալ իրենց խոսակցութիւններուն մէջ շարունակ կը շեշտէին այն միտքը, թէ հայերն ու թուրքերը բաժանողը Անգլիան եւ Ռուսիան են, որոնք երկու հարեւան ժողովուրդները իրար հետ կռուեցնելով՝ պղտոր ջուրի մէջ ձուկ կ'որսան»[648]:

Օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության բարձրաստիճան պաշտոնյաների հետ դիվանագիտական հանդիպումներից և բանակցություններից բացի, հայկական պատվիրակությունը հանդիպեց մի շարք հասարակական, քաղաքական գործիչների հետ: «Նկատելով, որ մեր խորհրդաժողովը ձգձգումներու կենթարկուի, - գրում է Ալ. Խատիսյանը, - մենք կը ջանայինք գրաւել մեր կողմը Թուրքիոյ հանրային կարծիքը՝ աշխատելով ցոյց տալ թուրք հասարակական գործիչներուն, որ համաձայնութիւնը հայերու հետ թուրքերու համար ալ օգտակար է: Մեր պատճառաբանութիւնները հետեւեալներն էին. Առանց ժխտելու մեր պրոպականտը արտասահմանի մէջ, ինչպէս նաև հայասէրներու գործունէութիւնը ամենուրեք, մենք կը յայտնէինք թէ այդ բոլորը պիտի շարունակուի ի վնաս թրքական վարկին, որքան ատեն որ հայկական հարցը լուծուած չէ գոհացուցիչ կերպով: Միւս կողմէ մենք կը խոստանայինք բարոյական աջակցութիւն Թուրքիոյ վերաշինութեան գործին մէջ, ցոյց կուտայինք, որ անկախ Հայաստանի, Վրաստանի եւ Ատրբէջանի գոյութիւնը ապահով սահմաններ կը ստեղծէ Թուրքիոյ համար…»[649]:

---

[648] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 84:

[649] Նույն տեղում:

Հայ հրապարակախոս Տիգրան Զավենի ուղեկցությամբ հայկական պատվիրակությունն այցելեց թուրք հասարակական, քաղաքական հայտնի գործիչ Հուսեյին բեյին: Հայ դիվանագետները նրան ներկայացրին Կոստանդնուպոլիս ժամանելու նպատակների մասին: «Ան պատասխանեց մեզ, - գրում է Ալ. Խատիսյանը, - որ ինքը կառավարական կուսակցութեան չի պատկանիր եւ ընդդիմադիր մէկն է, ուստի հազիւ թէ կարողանայ գործնական օգտակարութիւն ցոյց տալ մեզ, բայց իբրև հանրային գործիչ մը ան անհրաժեշտ կը գտնէ գոհացում տալ հայերուն: Ան ըսաւ. «Դուք պէտք է ձեզ հաշիվ տաք եւ ըմբռնէք նաեւ մեր ազգային կենսական պահանջները»: Եւ սկսաւ մեզ ներկայացնել զանոնք: Վերցուց քարտէսը եւ սկսավ պարզել այն տեսութիւնը, թէ Թուրքիոյ մէջ պատերազմէն յետոյ հազիւ թէ 6 միլիոնէն աւելի թուրքեր կը մնան: «Մեզ պէտք են կենդանի ուժեր, ըսաւ ան, **եւ հայերը պէտք չէ որ մեր ճամբան փակեն դէպի մեր եղբայրները»: Եւ ցոյց տուաւ երկու ճանապարհներ, որոնք կը տանին դէպի այդ եղբայրները. առաջին՝ Զանգեզուր-Ղարաբաղ** (Սյունիք-Արցախ – Գ. Պ.) **ճամբան, եւ, երկրորդ՝ Ախալքալաք-Բորչալու գիծը**: «Ասոնցմէ մէկն ու մէկը, եզրակացուց ան, պէտք է բաց մնայ մեզ համար, բայց ասոր զուգընթաց պէտք է որոշ գոհացում տալ նաեւ ձեզ»»[650]: Ինչպես տեսնում ենք, Հուսեյին բեյն առանց վարանելու վերահաստատում է, որ Օսմանյան կայսրության որդեգրած ազգայնական, համաթուրանական ծավալապաշտական ռազմավարությունն ու մարտավարությունը դարձել են Թուրքիայի պետական քաղաքականության առանցքը:

---

[650] Նույն տեղում, էջ 85:

Թուրքիան այն հետևողականորեն շարունակում է մինչև մեր ժամանակները՝ պայմանավորված տարածաշրջանում ժամանակ առ ժամանակ աշխարհաքաղաքական զարգացումների, սուր հակասությունների, ռազմաքաղաքական և տնտեսական շահերի բախումների իրողություններով՝ իրականացնելու իր ազդեցությունը Հարավային Կովկասից մինչև Կենտրոնական Ասիա, Չինաստան և այլն: Այսօր այդ ծրագրի իրականացման մի մասը Արցախի և Սյունիքի բռնազավթումն է Ադրբեջանի կողմից, որը ձգտում է իրականացնել Թուրքիայի անմիջական նախաձեռնությամբ ու ակտիվ օժանդակությամբ:

Կոստանդնուպոլսում թուրք հասարակական, քաղաքական այլ գործիչների հետ հանդիպումների ընթացքում թուրքերը հայկական պատվիրակությանը միշտ ընդունում էին առերես սիրալիրությամբ՝ հավաստիացնելով, որ թուրքական իշխանություններն անկեղծ ցանկություն ունեն բարիդրացիական հարաբերություններ հաստատելու Հայաստանի Հանրապետության հետ: Մինչդեռ իրականությունն այլ էր: Թուրք գործիչները զանազան պատրվակներով հայ դիվանագետների առանցքային գործնական բազմաթիվ հարցադրումներին շարունակ տալիս էին վերացական և խուսափողական պատասխաններ, սակայն հրամցնում էին նախապայման-պարտադրանք՝ հայկական կողմի զիջման գնով օսմանյան Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու կեղծ լոզունգը: Իրականում, հայ-թուրքական բարեկամություն չի եղել և չէր կարող լինել, որովհետև Հայաստանի և Թուրքիայի շահերը տրամագծորեն հակադիր են:

Անդրադառնանք ուշագրավ մի իրողության ևս: Հայկական պատվիրակությունը մեծ հույսեր էր կապում Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարության հավաստիա-

ցումների և աջակցության հետ, ուստի հունիսի 23-ին և 26-ին նախագահ Ավ. Ահարոնյանը և անդամ Ալ. Խատիսյանն այլ երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների շարքում առաջինը այցելեցին Կոստանդնուպոլսում գերմանական դեսպան Ի. Բերնսդորֆին[651]: Ալ. Խատիսյանը փաստում է. «Մեր առաջին տեսակցութիւնը, ի հարկէ, եղաւ գերման դեսպան Կոմս Պէրնստորֆի հետ, որ կ՚ապրէր Վոսփորի իր ապարանքին մէջ: Պէտք է խոստովանիմ, որ գերման դեսպանատունը, ուր մենք եղանք քսան անգամէն աւելի, չափազանց ուշադիր վերաբերմունք և գործնական օգնութիւն ցոյց տուաւ մեզ: Մեր տրամադրութեան տակ դրուեցաւ ուղիղ հեռագրութելը Պոլսոյ եւ Պերլինի միջեւ, ու մենք քանի մը անգամ խօսեցանք Պերլին գտնուող մեր ընկեր Տօքթ. Համօ Օհանջանեանի հետ: Գերման սուրհանդակները կը տանէին մեր նամակները Պերլին, գերման դեսպանատան քարտուղար Ֆոն Տիքով գիշեր ու ցերեկ պատրաստ էր մեր հեռագիրներն ու նամակները հասցնել ուր որ անկ էր: Ինքը, Կոմս Պէրնստորֆը ուշադրութեամբ լսեց մեզ, ընդունեց, որ մեր պահանջները միանգամայն արդար են եւ հաղորդեց զանոնք իր կառավարութեան: Լեփսիուսի հրատարակած «Գերմանիա և Հայաստան» գրքին մէջ տպուած են անոր բազմաթիւ հեռագիրները, որոնք կ՚ապացուցանեն իր բարեացակամ վերաբերմունքը մեզ հանդէպ: Հեռագրական դիմումներէն բացի, գերման դեսպանը քանի մը անգամ անձամբ գնաց Թալէաթ փաշայի մոտ եւ պաշտպանեց մեր պահանջները: Սակայն, ինչպէս միշտ, այդ դիմումն ալ արդիւնք չտուաւ: Պէտք է ըսել ընդհանրապէս, որ այդ ատեննե-

[651] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 117, ց. 2, գ. 12, թ. 40-42, գ. 13, թ. 1-4, գ. 34, թ. 1-3:

ը թուրքերը արդէն սկսած էին արհամարհանքով վերաբերուիլ դէպի Գերմանիան և կը ջանային ազատուիլ գերման խնամակալութենէն»[652]:

Հունիսի 23-ի առավոտյան ժամը 11-ին, հայ դիվանագետների հետ առանձնազրույցի ընթացքում դեսպանը ներկայացրեց Գերմանիայի մոտեցումները տարածաշրջանին վերաբերող տարբեր հարցերում և հավաստեց իր անձնական «բարեկամական» վերաբերմունքն ու աջակցությունը հայկական պետությանը: Մինչդեռ իրականում նա «բարեկամության» քողի տակ դիվանագիտական հնարամտություններով մատուցեց տարածաշրջանում Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարության նախապես ուրվագծած ոչ հայանպաստ ծրագրերը: Անշուշտ, դեսպան Ի. Բերնսդորֆի «անձնական» մոտեցումները, կարծիքները, խորհուրդները և առաջարկությունները միանշանակ պետք է ընդունել որպես տարածաշրջանում պաշտոնական Բեռլինի ռազմաքաղաքական և դիվանագիտական մարտավարության շահախնդրական դրսևորում:

Գերմանական դեսպանի առանձնազրույցը հակիրճ արձանագրվել է Կոստանդնուպոլսի հայկական պատվիրակության օրագրության մեջ. «Գերմանիան հատկապես հետաքրքրվում եր Վրաստանով այն պատճառով, վոր նրա յեվ Վրաստանի միջեվ վաղուց ի վեր գոյություն ուներ առանձին համաձայնություն, իսկ Հայաստանի վերաբերմամբ այդպիսի բան չկար: Գերմանիան կանգնած ե Բրեստ-Լիտովսկի դաշնագրի (1918 թ. մարտի 3 – Գ. Պ.) տեսակետի վրա: Բայց պետք ե հնարավորությունն լինի նրա վրա պնդելու համար: **Շատ**

[652] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 88:

**լավ կը լիներ, յեթե Վրաստանը յեվ Հայաստանը փոխադարձ համաձայնությամբ միանային վորեվե հիմունքներով:**

**Առհասարակ Գերմանիան կարծում է, վոր նա պետք է հովանավորի Արեվելքի քրիստոնեաներին: Յեվ, նա, դեսպանը, չի կամենում վոր նույն իսկ մի հայ տուժի իր դեսպանության որով: Այդ է պահանջում յեվ գերմանական կառավարությունը, յեվ հասարակական կարծիքը:** Բայց նա չի հավատում Տաճկաց կառավարության խոստումներին, վորովհետեվ Թալեաթ փաշան քսան անգամ իրեն խոստացել է ներումն հրատարակել Թյուրքիայի հայերի համար, բայց մինչեվ այժմ վոչինչ չի արել: Մինչեվ անգամ, յերբ նրա պաշտոնական խոսքերի հիման վրա ինքը հեռագրել է Բեռլին յեվ Ռեյխստագում խոսք է յեղել Թյուրքիայի խոստումների վերաբերմամբ, այդ մասին արգելեցին Պոլսում տպել լրագրերում վորեվե բան:

Նույնպես յեվ Ալեքսանդրապոլի ռմբակոծման յեվ քաղաքը վերցնելու խնդրում՝ թյուրքերը անցան իրենց տված իրավունքների սահմաններից*: Գերմանիան պահանջում եր առանց հետաձգելու թույլ տալ զորքերի տեղափոխությունը յերկաթուղով դեպի Պարսկաստան, բայց Վեհիբ փաշան հավատացնում եր, վոր առանց կռվի հայերը չեն զիճի այդ. յեվ նրանք դրանից ոգտվեցին յերկիրը գրավելու համար:

Մեր գլխավոր զինվորական մարմինը այժմ պահանջում է անմիջապես տեղափոխել զորքերը դեպի Միջագետք, բայց նրանք դեռ ձգձգում են: Առհասարակ մենք պետք է վերջ դնենք

---

* Մինչդեռ իրականում Հայոց ցեղասպանության և հայրենազրկության մեղսակից կայսերական Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարության որոշումով ու տված իրավունքով էր կատարվել նաև Ալեքսանդրապոլի ռմբակոծումը և թուրքական զորքերի հետագա առաջխաղացումը: Տե՛ս **Ա-Դռ,** նշվ. աշխ., էջ 542:

ամեն տեսակ տարաձայնություններին Թյուրքիայի յեվ Գերմանիայի մեջ:

Հազիվ թե կարիք լինի դարձյալ Ձեզանից (Կոստանդնուպոլսի հայկական պատվիրակություն - Գ. Պ.) մեկին այստեղից գնալ Բեռլին... համենայն դեպս ես կը հարցնեմ, - քանի վոր ձեր յերկու ներկայացուցիչները այնտեղ (Բեռլին - Գ. Պ.) են յեվ գործում են մեզ հետ համաձայնությամբ:

Բագուի հարցը շատ բարդ խնդիր ե, քանի վոր Թյուրքիան ուզում է նրան ձեռք գցել Ադրբեյջանի համար, վորովհետեվ նա փաստորեն կը տիրանա Ադրբեյջանին, - բայց դա նրա գործն ե: **Մեզ առանձնապես հետաքրքրում են քրիստոնեա ազգերը**: Համենայն դեպս մեզ զարմացրեց, վոր Թյուրքիան, վոր ութ որ առաջ լսել անգամ չեր ուզում Հայաստան ստեղծելու մասին (մանավանդ Ենվեր յեվ Թալեաթ փաշաները) հանկարծ համաձայնություն տվեց, յեվ իմ հայտնած զարմանքին նրանք պատասխանեցին, վոր յերկար մտածելուց հետո՝ նրանք վճռեցին, վոր այդպես ավելի լավ կը լինի: Մի հուսահատվեք, ամեն ինչ կարգի կը գա:

**Յես կուզեյի նայեվ ավելացնել, վոր Բագուն յեվ Բաթումը մենք կարող եյինք ազատ քաղաքներ դարձնել: Ինչ վերաբերում ե Վրաստանի յեվ Հայաստանի միացնելուն, - ինձ այդ միտքը թելադրում ե այն հանգամանքը** (դա իմ անձնական կարծիքն ե), **վոր ինչպես ասում են, Վրաստանը առանց հայերի յեվ հայկական ույժերի յեվ կապիտալի չի կարող գոյություն ունենալ: Մենք հետաքրքրվում ենք Վրաստանով նրա համար, վոր Գերմանիայի յեվ Թյուրքիայի մեջ նոտաների փոխանակություն ե տեղի ունեցել, վորոնց և հետեվանքը՝ մենք պարտավորվել ենք ճանաչել Վրաստանի անկախությունը, յեթե նա այդ հայտարարի**:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, մենք վոչ մի դեպքում չենք ուզում նրա հետ կռվել յեվ դրա համար մենք պետք է խույս տանք այն ամենից, ինչ վոր մեզ կարող է բաժանել:

Ահա ելի մի կարեվոր հանգամանք, վոր յես կը կամենայի պարզել. մի՞թե Ախալցխայի գավառում յեվ Բաթումի շրջանում վրացի քիստոնեաները յեվ վրացի մահմեդականները հավասարապես համարում են իրանց վրացիներ, չէ՞ վոր կրոնական հիմքը ավելի ուժեղ է, քան ազգայինը: Յես լավ հասկանում եմ, վոր հայերը անցյալներում, մնացած լինելով մենակ պետք է ռսական որիենտացիա ունենային, դա հասկանալի յեր, յեվ դրա համար մենք նրանց չենք մեղադրում, բայց այժմ մենք հավատում ենք, վոր Ռուսաստանը արդեն բոլորովին անցել գնացել է, յեվ այդ պատճառով մենք կարող ենք Ձեզ հետ ազնվորեն մոտենալ: **Մենք հասկանում ենք մեր պատասխանատվությունը հայերի առաջ, բայց իր ժամանակին (յերեք տարի առաջ) մեր բողոքները, ինչպես յեվ ավստրիացոց յեվ բուլղարացոց բողոքները կոտորածների դեմ՝ վոչինչ հետևանք չունեցան: Այդ լավ է, վոր դուք ուղղակի հիշատակել եք Թյուրքիային Ձեր սահմանների անբավարարության մասին, - խնդրեմ ինձ ուղարկեցեք Ձեր ճառը, - վորովհետև Խալիլ-բեյը ասում է, թե հայերը հաճությամբ ստորագրեցին** (Բաթումի հայ-թուրքական հաշտության – Գ. Պ.) **դաշնագիրը յեվ նրանց այլևս վոչինչ չի հարկավոր: Կոնֆերանսի** (Կոստանդնուպոլսի – Գ. Պ.) **ժամանակ կաշխատենք բավարարել Ձեզ վորքան վոր հնարավոր կը լինի»**[653]:

Ուշագրավ է, որ գերմանացի դեսպանը հունիսի 23-ի առավոտյան առանձնազրույցի ընթացքում ջանադրաբար և

[653] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 13, թ. 1-3:

հետևողականորեն փորձում էր համոզել և հիմնավորել հայ դիվանագետներին, որ տարածաշրջանում կայուն և երկարատև խաղաղություն ու կարգուկանոն ապահովելու համար անհրաժեշտ է Անդրկովկասը բաժանել քրիստոնեական և մահմեդական մասերի՝ քրիստոնյաներին առնելով Գերմանիայի, իսկ մահմեդականներին՝ Թուրքիայի հովանու տակ: Դիվանագիտական մարտավարական այդ քայլը արդարացնելու համար նա առաջարկում էր հայ դիվանագետներին, որ «**շատ լավ կլիներ, եթե Վրաստանն ու Հայաստանը փոխադարձ համաձայնությամբ որևէ հիմունքներով միանային**»: Ի. Բերնսդորֆը նշեց, որ Գերմանիան հետաքրքրված է հատկապես Վրաստանով այն պատճառով, որ իր կառավարության և Թիֆլիսի միջև դեռ վաղուց՝ 1914 թվականից[654], գոյություն ունի առանձին համաձայնություն, որով Բեռլինը պարտավորվել է ճանաչել Վրաստանի անկախությունը, իսկ Հայաստանի վերաբերյալ այդպիսի բան չկա: Բազմիցս նշել ենք, որ Առաջին աշխարհամարտի տարիներին բախվեցին Քառյակ միության երկու գլխավոր դաշնակիցների՝ օսմանյան Թուրքիայի և կայսերական Գերմանիայի աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերը տարածաշրջանում: Գերմանիայի քաղաքական, տնտեսական շահերն անհրաժեշտաբար վերջինիս մղեցին իր հովանավորության տակ առնելու Վրաստանը[655]:

Ի. Բերնսդորֆը, ղեկավարվելով իր երկրի շահերով, առանձնազրույցում ձգտում էր հայ դիվանագետներին հավաստիացնել, թե իրենց մղումներում անկեղծ են. «**Առհասարակ, Գերմանիան կարծում է, որ ինքը պետք է հովանավորի**

---

654 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 13, թ. 58:

655 Տե՛ս մանրամասն РГ ВА, ф. 39720, оп. 1, д. 49, л. 1-5, 10-12:

**Արևելքի քրիստոնյաներին, և դեսպանը չի կամենում, որ նույնիսկ մի հայ տուժի իր դեսպանության օրով: Այդ է պահանջում գերմանական կառավարությունը և հասարակական կարծիքը**»: Մինչդեռ իրականությունն այլ էր:

Հարց է ծագում՝ ինչո՞ւ էր Ի. Բերնսդորֆը համառորեն պնդում Անդրկովկասը բաժանել քրիստոնեական և մահմեդական մասերի, և որո՞նք էին Վրաստանի և Հայաստանի «փոխադարձ համաձայնությամբ որևէ հիմունքներով» միացման քողարկված ռազմավարության և մարտավարության հիմնական դրդապատճառներն ու հետևանքները: Փորձենք պատասխանել այս հարցերին:

Բանն այն է, որ **այդ քողարկված առաջարկն իրականում ենթադրում էր ոչ թե հայ-վրացական դաշնության կամ համադաշնության ստեղծում, այլ պարզապես իր ամբողջ տարածքով Հայաստանի ներառում Վրաստանի կազմ: Այս մարտավարական քայլն իհարկե ամենևին էլ պատահական չէր: Ի. Բերնսդորֆը հայ դիվանագետներին անթաքույց ասում էր, որ Վրաստանն առանց հայերի, հայկական ուժերի ու կապիտալի չի կարող գոյություն ունենալ**: Դա ինքնին ենթադրում էր.

1. **Ստեղծվելու էին բարենպաստ պայմաններ ու լայն հնարավորություններ Վրաստանի տնտեսության արագ զարգացման համար, որով Գերմանիան ապահովելու էր իր քաղաքական, տնտեսական ապագա գերիշխանությունն ու վերահսկողությունը տարածաշրջանի մեծ մասում**: Հունիսի 26-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանն ուղղված իր տեղեկագրում դեսպանը հայտնում է. «Չնայած վրացիները վերոնշյալ լուծման դեմ մի քիչ կըմբոստանան, սակայն ի վերջո տեղի կտան՝ ընդունելով, որ իրենք տնտեսության մեջ հայերի

կարիքն ունեն, և նաև կկամենան նրանցից շատերին ներառել իրենց (Վրաստանի – Գ. Պ.) պետության կառավարման մեջ»[656]:

2. **Հայաստանի՝ Վրաստանի հետ միավորումը կբացառեր գերմանա-թուրքական հարաբերությունների վտանգումը, որովհետև խոսք լինել չէր կարող ոչ միայն կենսունակ Հայաստանի Հանրապետության ստեղծման մասին, այլև այդ քայլը բնականաբար հանգեցնելու էր հայկական անկախ պետականության վերջնական վերացմանը, ինչն անառարկելիորեն ընդունելի էր Օսմանյան կայսրության համար:**

3. **Դեսպանը գերմանա-թուրքական հարաբերությունները չվտանգելու նպատակով փորձեց օգտագործել օսմանյան Թուրքիայի թշնամական վերաբերմունքը հայության և Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Ի. Բերնսդորֆը հիշեցնում էր. «Մշտապես թուրքերի մոտ բախվում ես հայերի հանդեպ ունեցած պաթոլոգիական ատելությանն ու վախին»[657]: Հետևաբար, Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը հայկական անկախ պետականության վերջնական վերացմամբ և հայերի հանդեպ թուրքերի բացահայտ թշնամանքի իրողությունն օգտագործելով՝ փորձում էր հակակշռել օսմանյան Թուրքիայի հետ հարաբերությունները՝ ոչ միայն չվտանգելու այն, այլև ապահովելու իր տնտեսական ապագա գերիշխանությունը և վերահսկողությունը տարածաշրջանի մեծագույն մասի վրա: Ավելորդ է ասել, որ յուրաքանչյուրը՝ թե՛ կայսերական Գերմանիան, թե՛ օսմանյան Թուրքիան հետապնդում էին ռազմավարական և մարտավարական միան-**

---

[656] **Աշոտ Հայրունի,** Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 56:

[657] «Армянский вопрос и Геноцид армян в Турции (1913-1919)», էջ 542-543:

**զամայն տարբեր նպատակներ, սակայն երկուսն էլ՝ ի հաշիվ Հայաստանի ու հայության:**

4. Կարծում ենք՝ ամենևին էլ պատահական չէր, իհարկե չբացառելով նաև այլ դրդապատճառներ, որ Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը, հայկական պատվիրակությունների վրա դիվանագիտական ճնշումներ գործադրելով, բացահայտորեն հայտարարում և հավաստիացնում էր, որ Բեռլինը պաշտոնապես ճանաչելու է միայն Վրաստանի անկախությունը, իսկ Հայաստանի Հանրապետությանն ու Ադրբեջանինը, միևնույնն է, չի ճանաչելու՝ անկախ Կոստանդնուպոլսում հրավիրվելիք Բաթումի հաշտության դաշնագրերի խորհրդաժողովում վավերացվելուց կամ չվավերացվելուց: Դիվանագիտական այս քայլով Գերմանիան ճնշում էր գործադրում հայկական պատվիրակությունների վրա, որպեսզի կատարեն իր պահանջը՝ համաձայնեն Հայաստանը միացնել Վրաստանին:

Կարևոր է արձանագրել նաև, որ Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը անթաքույց հասկացնում էր հայ դիվանագետներին, որ տարածաշրջանում ստեղծված բարդ ու հակասական իրադրությունում չի կարող հանուն հայերի վտանգել իր հարաբերությունները դաշնակից Թուրքիայի հետ: Արտաքին գործերի նախարարի օգնական Հ. Գյոպտերտը նույնիսկ նպատակահարմար չէր համարում հայկական պատվիրակության ներկայությունը Բեռլինում՝ նշելով, թե դրանով հայ դիվանագետները «գրգռած կլինեն տաճիկներին»[658]: Բեռլինում հայկական պատվիրակության նախագահ Հ. Օհանջանյանը փաստում է, որ Գերմանիայի արտաքին գոր-

[658] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 656, թ. 49-50:

ծերի նախարարությունը խոչընդոտում էր հայ դիվանագետներին՝ տարածելու Հայաստանի սահմաններով պատրաստած գունավոր քարտեզի, հուշագրերի ու հայանպաստ դիվանագիտական այլ նյութերը Ռայխստագի պատգամավորների, Բեռլինում հավատարմագրված տարբեր երկրների դեսպանների, ինչպես նաև պետական, քաղաքական ու հասարակական մի շարք գործիչների շրջանում[659]: Ավելին, նրանք ակնհայտորեն հասկացնում էին նաև հայ դիվանագետներին, որ իրենց հաճելի չէ, և «շատ հակառակ են, որ մի որևէ բան տպվի (մամուլում – Գ. Պ.) տաճիկների դեմ»[660]: Ինչպես տեսնում ենք, Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը այդ հակահայկական մարտավարությունը ներկայացնելով որպես դաշնակցային հավատարմություն՝ միաժամանակ փորձում էր դիվանագիտական հնարամտություններով «սիրաշահել» օսմանյան Թուրքիային, որպեսզի իրականացնի իր ռազմավարական հեռահար տնտեսական ծրագրերը տարածաշրջանում:

Փաստորեն, Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարությունն իրականում մտահոգված էր ոչ թե հայերին և Հայաստանին հուզող հարցերին արդար լուծումներ տալով, այլ տարածաշրջանում սեփական քաղաքական ու տնտեսական շահերը Թուրքիայի նկատմամբ չափակշռելու և ճշտելու դիվանագիտական ուղիներ որոնելով:

Ուշագրավ է, որ հայ դիվանագետները հունիսի 23-ի առանձնազրույցի ընթացքում չէին առարկել Գերմանիայի դեսպանի այդ «անձնական» խորհուրդների և պահանջների դեմ, ինչը վերջինիս հիմք էր տվել հաղորդելու արտաքին գոր-

---

[659] Տե՛ս նույն տեղը, թ. 42:

[660] Նույն տեղը, թ. 43:

ծերի նախարարությանը, թե իբր հայկական պատվիրակությունը «դրա հետ համաձայն է»[661]: Անշուշտ, Ի. Բերնսդորֆը Հայաստանի և Վրաստանի միացումը ներկայացրել էր ոչ թե «դաշնության, համադաշնության կամ մեկ այլ միջոցով», այլ պարզապես քողարկել էր «զուտ հայկական շրջանները Վրաստանին միացնելու» դիվանագիտական մարտավարությամբ: Նույն օրը՝ հունիսի 23-ի երեկոյան, հայ դիվանագետները այլ աղբյուրներից և Թիֆլիսի մամուլից տեղեկացան այդ հակահայկական ծրագրերի մասին և մի քանի օր անց՝ հունիսի 26-ին, բողոք ներկայացրին Ի. Բերնսդորֆին՝ հայտնելով, որ հայկական պատվիրակությունը բացահայտորեն հրաժարվում է կատարել դեսպանի առաջարկներն ու պահանջները, որոնք անհամատեղելի են հայոց շահերին և նպատակներին[662]:

Եվ այնուամենայնիվ, Բեռլինի ու Կոստանդնուպոլսի հետագա դիվանագիտական բանակցությունների ընթացքում Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը ջանադրաբար շարունակեց արդեն «Հայաստանը և Վրաստանը «դաշնային, համադաշնային մեկ այլ միջոցով միավորման»» հարցի քննարկումները:

Այսպիսով, տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական չափազանց բարդ ու լարված պայմաններում հայկական պատվիրակությունները թե՛ Բեռլինում և թե՛ Կոստանդնուպոլսում չկարողացան իրատեսորեն գնահատել Գերմանիայի և նրա դաշնակից Թուրքիայի միջև խորը հակասու-

---

[661] **Աշոտ Հայրունի,** նշվ. աշխ., էջ 55-56:
[662] Տե՛ս նույն տեղը:

թյունների և շահերի բախումից սպասվող ոչ նպաստավոր հետևանքները հայության համար:

Խորհրդաժողովի ձգձգման պայմաններում հունիսի 23-ից հուլիսի 3-ը հայկական պատվիրակությունը պարբերաբար փոխադարձ այցելություններ և հանդիպումներ ունեցավ նաև Կոստանդնուպոլսի թուրքական մամուլի հայտնի ներկայացուցիչների և թերթերի խմբագիրների հետ[663]: Օրինակ, հայկական պատվիրակությանն այցելեց «Վաքիթ» թերթի խմբագիր Էմին բեյը: Նա հավաստիացրեց հայ դիվանագետների, որ «նոր ճամբաներ կը փնտռէր հայ-թրքական մերձեցման համար, - գրում է Ալ. Խատիսյանը, - ան բարեխղճօրեն ներկայացուց մեր պահանջները իր թերթին մէջ, **պաշտպանելով զանոնք, «առանց սակայն վնաս մը հասցուցած ըլալու թրքական շահերուն»**»[664]: Թերթի հունիսի 27-ի համարում Էմին բեյը հրապարակեց «Հայաստանը» հոդվածը, որտեղ մասնավորապես ասում է. «… Հայկական հարցի ծագումը զրկում էր երկիրն (Թուրքիան – Գ. Պ.) ամենաարժեքավոր և ամենակարող տարրի օգնությունից: Ոչ ոք չի կարող ժխտել, որ հայերը բազում ծառայություններ են մատուցել մեր երկրում եվրոպական գաղափարների և հաստատությունների տարածմանը:

Չնայած մեր երկրի հասարակական կյանքում Հայկական հարցի ունեցած վատթար հետևանքներին, մենք հայերի հանդեպ որևէ թշնամանք չունեինք: Առ այսօր ի հայտ եկած բոլոր իրադարձությունները եղել են երկու կողմերի հսկողության բացակայության, ինչպես նաև օտարերկրացիների հրահրած գերլարվածության արդյունքը: Եթե այդչափ դառը փորձու-

---

[663] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 116:

[664] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 86:

թյուններից հետո գործն ավարտի հասցվի երկու կողմերին պայմանավորվածության հանգեցնելով, և ամբողջ հարցը լրջորեն և վերջնականապես կարգավորելու ցանկության դրսևորմամբ, այդ կնշանակի, որ վերջ է տրվել օտարերկրյա մեքենայությունների ազդեցությանը: Լավագույն փաստը, որ մենք հայերի նկատմամբ որևէ թշնամանք չենք տածում, հենց այն է, որ մենք առաջիններն ենք քաջալերում հայկական անկախ պետության կազմավորումը: Այսօր մենք ուրախությամբ և ողջամտորեն սատարում ենք հայկական ձգտումները, որոնք դեռևս երեկ, մեր շրջանում համընդհանուր կասկածամտության պատճառն էին իրենց անհեթեթ և ցնորական տեսքով:

Հայերն առաջինները պետք է ըմբռնած լինեն այն չարիքները, որոնց հանգեցնում է հնազանդությունը սադրանքներին և անիրագործելի քմահաճույքներին: Նրանք հասկացել են, որ տերությունները, որոնք նրանց հրահրում էին, չունեին որևէ այլ շարժառիթներ, քան իրենց սեփական շահերը»[665]:

Կոստանդնուպոլսի մամուլի մյուս օրգանները հրապարակում էին բացառապես հակահայկական հոդվածներ: Օրինակ. «Թասվիրը Էֆքեարը» եւ «Ազշամ»-ը բուռն կերպով հակառակ կ'արտայայտուէին մեզ»[666], «Թուրքերը ոչինչ չեն տալիս և մամուլում միայն ողջունում են «Հայկական հարցի վերջնական լուծումը», վկայակոչելով, որ իրենք են ստեղծել Հայաստանը (անկախ պետականությունը – Գ. Պ.) և դրա համար էլ հարցն սպառված են համարում»[667], - գրում է Ալ. Խատիսյանը:

---

[665] Մեծ տերությունները. Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հատոր II, էջ 354:
[666] **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 86:
[667] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 116:

Հուլիսի սկզբին ավարտվեցին հայկական պատվիրակության համարյա ամենօրյա առաջին դիվանագիտական հանդիպումներն ու բանակցությունները օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես նաև հասարակական, քաղաքական մի շարք գործիչների, մամուլի հայտնի ներկայացուցիչների և թերթերի խմբագիրների հետ: Հայկական պատվիրակությունը դիվանագիտական բանակցային գործընթացների ժամանակ փորձեց արծարծել Բաթումի հայ-թուրքական հաշտության դաշնագիրը վերանայելու հարցը՝ նպատակ ունենալով համաձայնություն ձեռք բերել թուրքերի կողմից բռնազավթված հայկական պատմական հայրենիքի տարածքների մի մասը վերամիավորելու Հայաստանի Հանրապետության հետ՝ կենսունակ պետություն ստեղծելու համար: Բայց հայ դիվանագետների ջանքերը զուր էին, նրանց ներկայացրած գործնական պահանջներին թուրքերը վերաբերվում էին հույժ զգուշավորությամբ, բացառապես սեփական շահախնդրական դիրքերից: Դրա վկայությունն էր բանակցությունների ընթացքում հայկական պատվիրակությանը հուզող բազմաթիվ հարցերին թուրքերի կողմից դիվանագիտական անորոշ պատասխաններ կամ մերժում ստանալը:

Պատվիրակության անդամ, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ալ. Խատիսյանը, ամփոփելով հայ դիվանագետների առաջին հանդիպումների և բանակցությունների արդյունքները թուրք բարձրաստիճան ղեկավարների ու հասարակական, քաղաքական այլ գործիչների և թերթերի խմբագիրների հետ, գրում է. «Ընդհանուր առմամբ

ռեւէ դրական արդիւնք չտւին»[668], «թուրքերը ատամներ կը կրճտացնէին մեր դէմ, բայց ժպիտով ու անուշ հայեացքով կը խօսէին մեզ հետ»[669]: Այդ առնչությամբ ուշագրավ է նաև Ա. Խաչատրյանի հետևյալ իրատեսական գնահատականը. «Թուրք դիւանագիտութեան ընթացքն արդէն ծանօթ է մեզի, անոնց շողոմ ու մեղրանուշ լեզուն ու համբաւ հանած հիւրասիրութիւնը խոդրնակ համեմատութեան մէջ եղեր է միշտ իրենց իրական գործունէութեան հետ: Թուրքիան միշտ խոստացեր է ամէն բան, բայց կատարեր է ոչինչ, ամէնէն մտերիմ ու անուշ լեզուով կը խոսի, բայց կը գործէ ոխերիմ թշնամիի մը պէս: Այսպէս պիտի վարուէր և հայ պատւիրակութեան հետ. փառաւոր ընդունելութիւն, սիրալիր վերաբերում և խոստումներ, բայց իրականի մէջ ինչ կը տեսնուի»[670]:

Հուլիսի սկզբին թուրքական կողմի հետ առաջին հանդիպումներից և բանակցություններից հետո հայ դիվանագետներն ակնկալում էին, որ խորհրդաժողովը կսկսի իր աշխատանքները: Սակայն հայկական և կովկասյան մյուս պատվիրակություններին հայտնի դարձավ, որ խորհրդաժողովի գումարումը դարձյալ հետաձգվում է, և այն, հավանաբար, իր աշխատանքները կսկսի հուլիսի 15-ից ոչ շուտ[671]: Եվ այնուամենայնիվ, հայ դիվանագետներին շարունակ հասկանալի չէր, որ Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարության դիվանագիտական մարտավարությունը նպատակաուղղված էր Կոստանդնուպոլսում հրավիրվելիք խորհրդաժողովի խափանմանը: Դրանով հայկական պատվիրակու-

---

668 **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 84:
669 Նույն տեղում, էջ 87:
670 **Ա. Խաչատրյան,** նշվ. աշխ., էջ 118-119:
671 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 116:

թյունն ակնհայտորեն մղվում էր դիվանագիտական փակուղի: Չնայած Բեռլինի և Կոստանդնուպոլսի հայկական պատվիրակությունների մեծ ջանքերին՝ նրանք չունեին բանակցային գործընթացների վրա ներազդման դիվանագիտական գործնական որևէ միջոց, ինչն անշուշտ պատահական չէր և պայմանավորված էր օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք պատճառներով: Օրինակ՝ հիշատակության է արժանի Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանի հետևյալ գնահատականը. «Ե՞րբ եւ որտե՞ղ պէտք է նրանք իւրացնէին դիւանագիտական յարաբերութիւնների «նրբութիւնները», վարչական իշխանութեան արտաքին մեքենականութիւնը եւ ներքին գաղտնածածուկ կողմերը: Ե՞րբ եւ որտե՞ղ պէտք է նրանք հմտանային այն բոլոր խարդախութիւնների, խորամանկութիւնների եւ խաբեբայութիւնների մէջ, որոնք ժամանակակից պետական գործիչների անհրաժեշտ յատկանիշներն են համարւում, … ուր սուտն ու կեղծիքը բացայայտօրէն դաւանում են իբրեւ պետական իմաստութեան գերագոյն հրամայականներ, այլ եւ մնացած մեծ ու փոքր պետութիւնների մէջ, որոնք դեռ եւս բավականաչափ «պարկեշտութեան զգացում» ունին՝ իրենց խաբեբայութիւնները թզենու տերեւով ծածկելու համար…»[672]:

Խորհրդաժողովի ձգձգման պայմաններում թուրքական կողմը, դիվանագիտական ճնշմանը զուգահեռ, այնպես էր անում, որ ժամանակը հայկական, ինչպես նաև կովկասյան մյուս պատվիրակությունների ներկայացուցիչների համար «ձանձրալի» չլիներ: Օրինակ՝ հունիսի 30-ին օսմանյան Թուրքիայի արտաքին գործերի նախարարության հատուկ ներկա-

[672] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, հուլիս, էջ 73:

յացուցիչներ Ռաուֆ (Տրապիզոնի բանակցություններում թուրքական պատվիրակության նախագահ) և Մուխթար բեյերը հատուկ նավով նրանց հրավիրեցին շրջագայության «...օսմանյան բարձր նաւային դպրոցը Հալկի կղզու վրա. Ա. Ահարոնեան, Ա. Խատիսեան, գեն. Կօրգանով (Կորգանյան – Գ. Պ.), Մ. Բունիաթեան, Գ. Խատիսեան և Յ. Քոչարեան, - ասվում է հայկական պատվիրակության օրագրության մեջ: – Ժամը 10-ին գնացին … կղզիներ, … ժամը 1-ին նախաճաշ ծովային դպրոցում, ապա այցելութիւն դպրոց: … Թէյ շոգենաւի վրա»[673] և այլն:

Ակնհայտ է նաև, որ Կոստանդնուպոլսում հունիսից սկսած հայ-թուրքական փոխադարձ այցելությունների և բանակցությունների ժամանակ թուրքական կողմը շարունակ տարբեր պատրվակներով փորձում էր խաթարել հայկական պատվիրակության դիվանագիտական աշխատանքը: Ա. Խաչատրյանը այդ առնչությամբ գրում է. «Թուրքերու առաջին գործն եղեր էր կղզիացնել պատւիրակութիւնը Մայր երկրէն, ուստի և ոչ մեկ լուր կամ հաղորդակցութիւն: Եւ այս շատ հասկանալի է. Հայաստանի մէջ կատարուածը հակադիր էր միանգամայն իրենց խոստումներուն և բնաւ չէր համապատասխանէր իրենց բարեկամական վերաբերումին, ուստի պետք չէր, որ իմանային հայ պատւիրակները՝ Պոլսում աղմուկ չհանելու համար»[674]:

Հարկ է նշել նաև, որ հայ-թուրքական բանակցությունների ընթացքում թուրքական կողմն առիթը բաց չէր թողնում հայկական պատվիրակությանը մշտապես պահելու դիվանագի-

---

[673] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 44:

[674] **Ա. Խաչատրյան,** նշվ. աշխ., էջ 119:

տական և հոգեբանական ճնշումների ու խիստ վերահսկողության պայմաններում՝ դնելով նրա առաջ այս կամ այն նախապայման-պարտադրանքը: Օրինակ՝ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի՝ հուլիսի 14-ին Ֆրանսիայի նախարարների խորհրդի նախագահ (վարչապետ), ռազմական նախարար Ժորժ Կլեմանսոյին ուղղված նամակը դարձավ թուրքական կողմի շահարկումների լուրջ առիթ: Այդ նամակում Պողոս Նուբար փաշան գրում է. «Բոլշևիկյան դավաճանության շնորհիվ արևմտահայ նահանգները վերագրավելուց (1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով - Գ. Պ.) հետո, նախքան անգլիացիների օգնության հասնելը, ջարդել է Կովկասի հայերին, և այժմ նրանք ստիպված են ենթարկվել Պոլսում գումարված կոնֆերանսի հարկադրական պայմաններին և սեղմվել մի փոքրիկ հանրապետության մեջ, որն իբրև թե անկախ է, սակայն, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ Գերմանիայի ավատը:

Հայաստանի կոտորածներից ազատված մի բուռ հայեր՝ 25000 հոգի, այժմ մենակ են մնացել այդ ճակատամարտում, հուսահատական թափով և հարգանք հարկադրող քաջությամբ: 900 կամավորներից, որոնք պատերազմի սկզբից մտել էին օտարահպատակների լեգեոն, հազիվ հիսուն կռվողներ են մնացել: Մյուսները սպանվեցին ֆրանսիական ճակատում՝ ամենափառավոր գովեստների արժանանալով իրենց արիության և ռազմական հազվագյուտ հատկությունների համար:

Եգիպտոսից և Ամերիկայից եկած կամավորները կազմեցին Արևելքի լեգեոնի գումարտակներ և այս բոպեիս ճանապարհ են կտրում դեպի Պաղեստին, ուր կռվել են ֆրանսիական զորաշարքերում: Նրանք գնացին այն հույսով, որ դաշնա-

կիցները կնպաստեն վերջապես իրենց հայրենիքի ազատագրմանը:

Բայց նրանք, նրանց Վանի ու Էրզրումի կռվող եղբայրները, ինչպես և բոլոր հայերը հուսալքման այս օրերին կարոտ են Ձեր խրախուսող մեկ խոսքի, Ֆրանսիայի քաջալերության խոսքին: Ահա այս է իմ խնդրանքը»[675]:

Ժ. Կլեմանսոն, հուլիսի 23-ին արձագանքելով Պողոս Նուբարի նամակին, գրում է. «Թվելով ձեր հայրենակիցների հերոսական ընթացքը՝ Դուք պահանջում եք ինձնից օգտվել մի առիթից՝ խրախուսելու նրանց ճիգերը և հայտարարելու, որ Պոլսի կոնֆերանսի հարկադրական պայմանները չեն ընդունվելու հանրապետության (Ֆրանսիայի – Գ. Պ.) կառավարության կողմից: Ֆրանսիան, ճնշված անարդարությունների երեսից, իր դրոշակի վրա արձանագրել է ճնշված ազգերի ազատագրումը: Եվ լինելով ավանդական պաշտպան այդ ժողովուրդների, շատ անգամ իր համակրանքն է ցույց տվել հայերի նկատմամբ: Ու այսօր տոգորված է նրանց օգնության գալու տենչով:

Հայերի անձնազոհ ոգին, նրանց հավատարմությունը Դաշնակիցների հանդեպ օտարահպատակների լեգեոնում, Կովկասյան ճակատում և Արևելյան լեգեոնում, ամրապնդել է այն կապը, որ նրանց միացնում է Ֆրանսիային: Ես բախտավոր եմ ձեզ հավատացնելու, որ Հանրապետական կառավարությունը չի դադարել հայ ազգը դասելու այն ժողովուրդների թվում, որոնց ճակատագիրը հույս ունեն կարգավորել մարդա-

---

[675] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 80, թ. 306, Մեծ տերությունները. Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հատոր II, էջ 336-337, **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 544:

սիրության և արդարության գերագույն օրենքների համաձայն»[676]:

Հուլիսի 25-ին ֆրանսիական բոլոր թերթերը տպագրեցին Պողոս Նուբար փաշայի նամակը՝ հասցեագրված Ժ. Կլեմանսոյին, և վերջինիս պատասխանը: Թուրքական բոլոր թերթերն արտատպել էին այդ լուրը, որը «հայկական պատվիրակությունների համար բազմաթիվ անախորժությունների և հարձակումների պատճառ դարձավ թե՛ Բեռլինում, թե՛ Կոստանդնուպոլսում»[677]:

Օգոստոսի 21-ին օսմանյան Թուրքիայի ռազմական նախարարության քաղաքական բաժնի պատասխանատու Համի բեյն այցելեց Ալ. Խատիսյանին՝ իբրև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի և պատվիրակության անդամի[678]: Հաջորդ օրը՝ օգոստոսի 22-ի երեկոյան, պատվիրակության խորհրդակցության 15-րդ նիստում Ալ. Խատիսյանը քննարկման դրեց նախընթաց օրվա զրույցի ընթացքում Համի բեյի ներկայացրած նախապայման-պարտադրանքը: Ըստ Ալ. Խատիսյանի՝ նա շատ հուզված էր խոսում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կողմնորոշման մասին ու հայտնեց, որ Թուրքիայի ռազմական նախարարության քաղաքական բաժինը և առհասարակ թուրքական ազդեցիկ շրջանները շատ դժգոհ են, որ Պողոս Նուբար փաշան ամբողջ հայ ժողովրդի անունից դիմել է Ժ. Կլեմանսոյին: Համի բեյն ասել էր նաև, որ Հայաստանի Հանրապետու-

---

[676] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 80, թ. 306, Մեծ տերությունները. Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հատոր II, էջ 341-342, **Ա.-Դո**, նշվ. աշխ., էջ 544-545:

[677] **М. Туманян**, նշվ. աշխ., էջ 50:

[678] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 121:

թյան կառավարությունը չորս ճակատի վրա է գործում՝ Անտանտի, Գերմանիայի, Թուրքիայի, բոլշևիկյան Ռուսաստանի՝ աշխատելով բոլորին սիրաշահել: Դրանից առաջանում է անվստահություն դեպի հայերը, **ուստի պատվիրակությունը պիտի որոշակի հայտարարի, որ Պողոս Նուբար փաշան լիազորված չէ խոսելու Հայաստանի Հանրապետության անունից**[679]: Հայ դիվանագետները մտահոգված էին, որ եթե այդ նամակն անպատասխան մնա պատվիրակության կողմից, ապա թուրքական խորհրդարանը կարող է վերջնականապես կասեցնել Առաջին աշխարհամարտի տարիներին հայրենազրկված փախստական հայերի և ռազմագերիների վերադարձը հայրենի օջախներ, ինչպես նաև Արցախի, Սյունիքի և բազմաթիվ այլ հարցերի շուրջ բանակցությունները[680]:

Քննարկումների արդյունքում պատվիրակության խորհրդակցությունը միաձայն որոշեց. «Կարևոր է մի կերպով տալ բացատրութիւն հետաքրքրուող շրջանների համար՝ այն մտքով, որ ֆրանսիական լրագրներում երևացած լուրը Նուպար փաշայի Կլիմենսոյին արած դիմումի մի մասին, արտատպուելով տեղական թերթերի մէջ առաջ է բերել թիւր կարծիքներ և եզրակացութիւններ, **ուստի դրանց առաջն առնելու համար պատուիրակութիւնը յայտարարում է, որ Հայկական կառավարութեան կողմից որևէ յայտարարութիւններ անել կարող են միայն այն անձինք և պատուիրակութիւնները, որոնք յատկապէս լիազօրուած են նրա կողմից, և որ Նուպար փաշան Հայկ. կառավարութեան անունից յայտարարութիւն-**

---

[679] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 121, ց. 2, գ. 12, թ. 45, **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 545:
[680] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 45:

**ներ անելու լիազօրուած չէ»**[681]: Իբրև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար և պատվիրակության անդամ՝ Ալ. Խատիսյանը օգոստոսի 30-ին Կոստանդնուպոլսի մամուլին տված հարցազրույցի միջոցով, որպես պատասխան թուրք պաշտոնյայի հարցումի՝ հայտարարեց, որ հանրապետության պաշտոնական ներկայացուցիչներն են միայն լիազորված պատասխանատու հայտարարություններ անելու: Ըստ այդմ՝ Նուբար փաշան, քանի որ չունի Հայաստանի Հանրապետության մանդատը, նրա արած հայտարարությունը չի կարելի ընդունել Հայաստանի Հանրապետության անունից[682]:

---

[681] Նույն տեղը, թ. 46:

[682] Տե՛ս **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 545-546, **М. Туманян**, նշվ. աշխ., էջ 50:

# ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
# ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ (ՀԱԿԱԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԵՏ

## 1. Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու պատմական անհրաժեշտությունը: Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու հանրապետության փորձերը

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը հարևան և այլ պետությունների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելն էր, ինչի լուծումը գտնելն այնքան էլ դյուրին չէր: Հայաստանի փոխհարաբերությունները բարդ ու հակասական էին անմիջական հարևանների՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ: Վերջինս (անվերապահորեն) և Վրաստանը (աննշան վերապահումներով) ձգտում էին կապվել օսմանյան Թուրքիայի հետ՝ Ռուսաստանի դեմ ընդհանուր ճակատ կազմելու համար, մինչդեռ Հայաստանը Թուրքիայի գերիշխանությունը համարում էր «ոչ միայն վտանգաւոր, այլեւ պարզապէս մահացու իր գոյութեան համար»[683]: Գերմանիան պաշտպանում էր Վրաստանի, իսկ Թուրքիան՝ Ադրբեջանի շահերը, երկուսն էլ՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության:

---

683 **Հովհ. Քաջազնունի**, Ռուսաստա՞ն թէ՞ Թիւրքիա, բաց նամակ Z-ին, Պուքրեշ, 1924, էջ 11:

Հայտնվելով մեկուսացման ու շրջափակման մեջ՝ սկզբնական շրջանում Հայաստանի Հանրապետությունն իր հայացքն ուղղեց դեպի Ռուսաստան, որտեղ քաղաքական իրադրությունը երերուն էր, խառը և տակավին անկանխատեսելի: 1918 թ. ամռանը չկար միասնական հզոր Ռուսաստան: Այն ցնցվում էր ներքին քաղաքական հակամարտություններից. մի կողմում Խորհրդային Ռուսաստանն էր, մյուս կողմում՝ գեներալ Ա. Դենիկինի ու ծովակալ Ա. Կոլչակի ղեկավարությամբ ոտքի ելած հակախորհրդային ուժերը, որոնք ստեղծել էին ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումներ: Հակամարտող ուժերից որևէ մեկի վերջնական հաղթանակը դեռևս անկանխատեսելի էր: **Այդ պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարությունը կանգնած էր երկընտրանքի առջև՝ դեպի ո՞ւր գնալ, ո՞ր Ռուսաստանի հետ կապեր հաստատել**: Հայաստանի անկախացման առաջին ամիսներին երկրի համար ստեղծված ներքին և արտաքին ծայրաստիճան աննպաստ պայմաններում հայ քաղաքական և հասարակական լայն շրջաններում գերակայում էր Ռուսաստանի հետ բարեկամական, բնականոն դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մտայնությունը՝ անկախ նրա պետական-քաղաքական կառուցվածքից:

Արտաքին աշխարհից լրիվ կտրված Հայաստանի Հանրապետությունը, հարկադրաբար խախտելով Բաթումի 1918 թ. հունիսի 3-ի պարտավորագիրը և հունիսի 4-ի դաշնագրի կետերը, խիստ գաղտնի և զգուշորեն փորձում էր ուղիներ որոնել հարաբերություններ հաստատելու Ռուսաստանի թե՛ խորհրդային և թե՛ ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ՝ անտեսելով այդ երկրում ընթացող քաղաքացիական արյունալի պատերազմը: Ռուսաստանի հետ հարաբե-

րություններ հաստատելու դրդապատճառներն ու անհապաղ լուծում պահանջող խնդիրներն այնքան ծանրակշիռ ու բազմազան էին, որ չէին կարող անուշադրության կամ անտարբերության մատնվել Հայաստանի խորհրդի և կառավարության կողմից:

1. Կարևոր էր այն, որ ապավինելով Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքին՝ Հայաստանի Հանրապետության նորակազմ կառավարությունը փորձում էր ճանաչել տալ սեփական պետության անկախությունը և ապահովել ինչպես խորհրդային, այնպես էլ ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ բարեկամական հարաբերությունները:

2. Հույսեր էին տածում, թե Ռուսաստանը որևէ կերպ կթեթևացնի Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ու Վրաստանի ճնշումներն ու թշնամանքը:

3. Կչեզոքացնի օսմանյան Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետությանը մշտապես սպառնացող վտանգը:

4. Շրջափակման մեջ հայտնված Հայաստանի Հանրապետությունը ակնկալում էր Ռուսաստանից ներկրել հացահատիկ, զենք, զինամթերք և կենսականորեն անհրաժեշտ այլ ապրանքներ:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությունը մտահոգված էր Առաջին աշխարհամարտի տարիներին արևմտյան ռազմաճակատից, գերմանական ու ավստրո-հունգարական գերությունից տուն վերադարձող նախկին ցարական բանակի հազարավոր հայ սպաներին ու զինվորներին, որոնք կուտակվել էին Ռուսաստանի հարավում՝ հայրենիք տեղափոխելու ուղիներ որոնելու հարցով:

6. Կարևորվում էր նաև Խորհրդային Ռուսաստանի և հարավի՝ Դոնի, Կուբանի, Թերեքի և Հյուսիսային Կովկասի հայ

համայնքներին օժանդակելու, ինչպես նաև նրանց մտավոր ուժն ու նյութական միջոցները հայրենիքի համար օգտագործելու խնդիրը: Հայաստանի Հանրապետության և Կուբանի երկրամասի, Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» միջև ապրանքափոխանակություն իրականացնելը անհետաձգելի լուծում պահանջող խնդիրներից էր: Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախատեսում էր Եկատերինոդար ուղարկել հայկական կոնյակ, սպիրտ, բամբակ, կաշի և այլն, իսկ Եկատերինոդարից ստանալ հաց, սննդամթերք, զենք և անհրաժեշտ այլ ապրանքներ:

7. Ռուսաստանի հետ կապեր հաստատելու կարևոր նպատակներից մեկը, անշուշտ, գաղթականության խնդրին հրատապ և հիմնավոր լուծում տալն էր:

Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական սպանդից փրկված հայ ժողովրդի մի հատվածը հարկադրված թողել էր հայրենիքը և հաստատվել մերձակա ու հեռավոր երկրներում, այդ թվում նաև Ռուսաստանում: Խորհրդային Ռուսաստանի տարբեր շրջաններում կուտակվել էին շուրջ 30 հազար հայ գաղթականներ[684]: Իսկ Ռուսաստանի հարավի՝ Դոնի, Կուբանի, Թերեքի երկրամասերի և Հյուսիսային Կովկասի մի շարք բնակավայրերում հանգրվանել էին 100 հազարից ավելի հայ գաղթականներ ու մի քանի հազար նախկին ռազմագերիներ[685], որոնք գտնվում էին ծանր ու բոլորովին անօգնական վիճակում: Այդ ողբերգական իրավիճակի ականա-

---

[684] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս II, թ. 458:

[685] Տե՛ս Архив внешней политики Российской Федерации (այսուհետև՝ АВП РФ), ф. 148, оп. 3, номер папка №2, д. 14, л. 3,4,5, նաև ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, մաս I, թ. 129, ֆ. 198, ց. 1, գ. 12, թ. 5, ֆ. 205, ց. 1, գ. 544, թ. 3, գ. 555, մաս I, թ. 144., ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 23:

տես Ռուբեն Դարբինյանը իր հուշերում գրում է, թե Արևմտյան Հայաստանից Առաջին աշխարհամարտի տարիներին հարավային Ռուսաստան և Հյուսիսային Կովկաս գաղթած հայերը այնքան շատ էին, որ ամենուր լսվում էր մայրենի լեզուն. ***«Երբէմն կթվէր, թէ կը գտնուէիր ոչ թէ Ռուսաստանի, այլ Հայաստանի մէջ»***[686]:

«Հորիզոն» պարբերականը, անդրադառնալով գաղթականության ծանր ու ողբերգական վիճակին, տեղեկացնում է, որ Եկատերինոդարում, Վլադիկավկազում, Արմավիրում ապաստանած՝ համապատասխանաբար 8 հազար, 10 հազար և 18 հազար հայ գաղթականներ անօթևան են և անօգնական, մնացել են բաց երկնքի տակ, և ամեն օր սովից ու հիվանդություններից մահանում են տասնյակ մարդիկ[687]: Դոնի և Հյուսիսային Կովկասի հայ զինվորականների կոմիսար Ս. Գրիգորյանը, Կիևից Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Ձամոյանը[688] և այդ շրջանների հայ ազգային կազմակերպությունների մի շարք ներկայացուցիչներ տագնապով դիմում են Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդին, Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ խնդրելով շտապ միջոցներ ձեռնարկել գաղթականներին, ռազմագերիներին օգնելու և նրանց հայրենիք վերադարձնելու համար: Ս. Գրիգորյանը 1918 թ. հունիսի 28-ին Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդին ուղղված նամակում տեղեկացնում է. «Ձափից դուրս վատ վի-

---

686 «Հայրենիք» ամսագիր, թիվ 8, Բոստոն, 1960, օգոստոս, էջ 25-26:

687 Տե՛ս «Հորիզոն» լրագիր, Թիֆլիս, 21, 25 օգոստոսի, 4, 13, 24, 29 սեպտեմբերի, 1918 թ.:

688 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, մաս I, թ. 128-129, գ. 210, թ. 8, նաև «Աշխատավոր» լրագիր, Թիֆլիս, 20 մայիսի 1919 թ.:

ճակի մէջ են գտնուում գաղթականները: Շէնքերի բացակայութիւն, հացի, ջրի պակասը, լաւ կազմակերպողներ չլինելը և մանաւանդ տեղական իշխանութիւնների և ռուս ժողովրդի անբարեհաճ վերաբերմունքը ստեղծում են սոսկալի ծանր վիճակ հայ գաղթականների համար: Շատ յաճախ հազարաւոր մարդիկ թափուած են մնում որևէ երկրորդական կայարանում, ուր ոչ հաց է գտնուում, ոչ ջուր և տեղական իշխանութիւնը չի թողնում նրանց գնալու իրենց նշանակուած տեղը:… Կան սովամահութեան դէպքեր: Դրանց մի մասը մինչև օրս թափուած են մնում … կայարաններում:

Սոսկալի պրօվոկացիա է սկսված գաղթականների դէմ: Հալածում են, անուանելով նրանց աւտօնօմիստներ և ռուսներին Կովկասում թալանողներ, կոտորողներ և նրանց այնտեղից դուրս վռնդողներ:

Տեղական հայ կոմիտեները անկարող են գաղթականական գործը կառավարել, չունեն լաւ ոյժեր և կազմակերպողներ:

Հարկաւոր է միջոցներ ձեռք առնել, քանի ուշ չէ»[689]:

Ծանր էր ու աղետալի հայ գաղթականների ու ռազմագերիների վիճակը հատկապես այն վայրերում, որտեղ չկային ազգային կազմակերպություններ կամ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններ:

Ապավինելով Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը փորձում էր հասնել նրա կողմից սեփական պետության անկախության ճանաչմանը և ապահովել երկու երկրների միջև բա-

---

[689] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 40-42, 48-49, նաև «Հորիզոն» լրագիր, Թիֆլիս, 21 օգոստոսի, 1918 թ.:

բեկամական հարաբերությունները՝ օգտագործելով դրանք մի շարք հրատապ խնդիրներ լուծելու համար: Այդ կապակցությամբ Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է. «… երկուութիւն չպիտի համարել այն երեւոյթը, որ երբ Դենիկինի և Կոլչակի մօտ փորձը կը լինէին բարեկամութեան, նոյն փորձերը միաժամանակ կը կատարուէին բոլշեւիկների հետ: Սա բխում էր ժամանակի իրականութիւնից. Լենինը նոյնքան հաւանականութիւն ունէր Ռոսիոյ տէրը դառնալու, որքան Կոլչակ կամ Դենիկին: Իսկ մեր նպատակը լինելով, որքան այսօրուան օգուտը, նոյնքան և վաղուանը հետապնդել, բնականօրեն պիտի փորձէինք հեռաւոր Մոսկովեան Լենինների հետ մի լեզու գտնել եւ ապահովել Ռուսաստանի կողմից մեր այսօրուան և վաղուան անկախութիւնը[690]»:

Ուստի երկրի անկախացման առաջին ամիսներին Ռուսաստանի խորհրդային և ոչ խորհրդային երկրամասեր ու քաղաքներ էին գաղտնի գործուղվում հայկական տարբեր պատվիրակություններ ու սուրհանդակներ՝ Հայաստանի Հանրապետությանն առնչվող բազմաթիվ խնդիրներ լուծելու նպատակով:

Իրողություն է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքական ուժերի համար բոլշևիկյան գաղափարախոսությունն անընդունելի էր, սակայն նրանք ուղիներ էին որոնում Խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամական, բնականոն հարաբերություններ հաստատելու:

Հայաստանի անկախացման առաջին օրերին Մոսկվայում էին գտնվում Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Չիլինգարյան), Սարգիս Հակոբյանը (Լիպարիտ Նազարյան) և բժիշկ

---

690 **Ռուբէն**, նշվ. աշխ., էջ 262:

Հակոբ Զավրիևը (Մոսկվայում էր դեռևս 1918 թ. մայիսի 27-ից[691]), որոնք փորձում էին կանոնավոր հարաբերություններ հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ, իրավաբանորեն (de jure) ճանաչել տալ Հայաստանի Հանրապետությունը իբրև անկախ պետություն և օգտագործել նրա հնարավորությունները հայ ժողովրդին օգնելու համար: Սակայն Ռուսաստանի խորհրդային իշխանությունների հետ անմիջական կապեր հաստատելու հնարավորությունները սահմանափակ էին, և բանակցությունները շոշափելի դրական արդյունք չտվեցին: Այդ կապակցությամբ պատվիրակության անդամ Ս. Հակոբյանը գրում է. «Թիւրքերը մեկ կողմէն երկաթէ օղակի մէջ կառնէին Հայաստանը, իսկ միւս կողմէն զարհուրելի հարուած մը կը պատրաստէին Բագուի դէմ: Հայաստանը դուրսէն օգնութիւն ստանալու ոչ մէկ յոյս ունէր, մինչ գիշատիչ դրացիները իր ծւատուած մարմինը անդամատելու ծրագիրներ կորոճային:

Այս պայմաններու մէջ նայուածքը ակամայ պիտի ուղղուէր նորէն դեպի Մոսկւա:

Խորհրդային իշխանութեան հետ կանոնաւոր յարաբերութիւններ մշակելու մեր առաջին փորձին ձախողումը չյուսահատեցուց: Նկատի ունենալով, որ հայ ազդեցիկ կոմունիստներէն Սահակ Տէր-Գաբրիէլեան իր շատ մը կուսակիցներու պէս անտարբեր չէր հայութեան սպառնացող վտանգին հանդէպ ու, միևնոյն ատէն, բաւական մօտ էր Լենինին, խնդրեցինք, որ ջանայ յաջողեցնել մեր այնքան փափագած խորհրդակցութիւնը: Տէր-Գաբրիէլեանի դիմումին վրա Լենին կը հաւանի կազմել երկու կուսակցութեանց ներկայացուցիչներէն յանձնախումբ մը և ինքը կանուանէ անոր երեք բոլշևիկ

[691] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 35, թ. 15:

անդամները, այն է՝ Կամենեւ (իբրև յանձնախումբի նախագահ), Աւանեսով և Տէր-Գաբրիէլեան: Դաշնակցութեան կողմէն ընտրուեցան Զաւրեան, Չիլինգարեան և ես:

Առաջին նիստը նշանակուած էր օգոստոսի 27-ին Աւանէսովի մօտ: Որոշուած ժամին մենք երեքս գնացինք հոն, երկար սպասեցինք, բայց բոլշևիկներէն ոչ ոք չեկաւ: Նոյն գիշերը Զաւրեան և ես ձերբակալուեցանք… Ամիսներ յետո, երբ արդէն ելած էի բանտէն, կարևոր բոլշևիկ մը վրդովումով կը պատմէր ինձի, թէ Աւանեսովը և իր արբանեակները յաջողած էին ոչ միայն անգամ մը ևս վիժեցնել խորհրդակցութիւնը, այլ և մեզ ձերբակալելու արտօնութիւնը ստանալ:

Մեր դէմ գործ դրուած այս բացառիկ միջոցի ձևական առիթը հետևեալն էր. երբ անգլիացիները 1918-ի ամռանը Բագուի մէջ ձերբակալեցին Ս. Շահումեանը և իր ընկերները, Մոսկուայի մէջ կարգ մը բոլշևիկներ պահանջեցին իբրև պատանդ առնել հոն գտնուող ծանօթ մենշևիկները, էսերները և դաշնակցականները, վասնզի այդ կուսակցութեանց ներկայացուցիչներէն կազմուած Բագուի կառավարութիւնը կը նպաստէր եղեր անգլիացիներուն: Այս պահանջը փութաց կատարել միայն «հայկական կոմիսարիատը» ու ձերբակալել տուաւ դաշնակցականները[692]:

---

[692] Շաբաթներ անց հայտնի դարձաւ, որ խորհրդային իշխանությունը հանիրավի ձերբակալել էր Հակոբ Զավրիևին, Սարգիս Հակոբյանին (Լիպարիտ Նազարյանին) և շատ ուրիշ հայ ազգային գործիչների: ՀՅԴ կուսակցությունը որևէ առնչություն չուներ Բաքվի կոմունայի անկման և 26 կոմիսարների ձերբակալման հետ: Հայկական գործերի կոմիսարի տեղակալ, բանաստեղծ Վահան Տերյանի միջամտությունից հետո միայն նրանք մեկ տարի անց ազատվեցին բանտից:
Մանրամասն տե՛ս **Ռիչարդ Հովհաննիսյան,** Հայաստանի Հանրապետություն. Առաջին Տարին, 1918-1919, հատոր I, Երևան, 2005, էջ 432-437:

Մենք մնացինք բանտը մինչև 1919 թ. մարտ ամիսը, միշտ գնդակահարման սպառնալիքի տակ: Ապա մէկ ամբողջ տարի ալ պահեցին մեզ Մոսկւայի մէջ ու միայն 1920-ի գարնան իրաւունք տին մեկնելու արտասահման: Դժբախտաբար այդ իրաւունքէն կարողացայ օգտուել միայն ես, իսկ հէք Զաւրեանը, որը կաշխատէր հիւանդանոցի մը մէջ, վարակվեցաւ բծաւոր տիֆէ ու մեռաւ»[693]:

Խորհրդային իշխանության ներկայացուցիչների և Հայաստանի Հանրապետության պատվիրակների միջև բանակցություններ էին ընթանում նաև Բեռլինում: 1918 թ. օգոստոսի 19-ին Հայոց ազգային կենտրոնական խորհրդին և կառավարությանը ուղղված նամակում հայկական պատվիրակության նախագահ Հ. Օհանջանյանը գրում է, որ «…անկախությանը (Հայաստանի Հանրապետության-Գ.Պ.) հակառակ է Ռուսաստանը»[694]: Նույն խնդրով 1918 թ. հոկտեմբերի 1-ին Հ. Օհանջանյանը և Գ. Ջամոյանը Բեռլինում հանդիպում ունեցան խորհրդային դիվանագետ Ադոլֆ Իոֆֆեի հետ, որը նույնպես ավարտվեց անարդյունք: «…Մենք Ձեզ՝ հայերիդ, ասում է Իոֆֆեն, փրկում ենք կոտորածից և ոչնչանալուց և հիմա սպասում ենք, որ դուք խոսք չեք բարձրացնի անկախության մասին, ոչ էլ զանազան դրամներ պահանջեք մեզնից, իբրև մի առանձին մարմին: Երբ ես նրան ասացի, - գրում է Հ. Օհանջանյանը, - որ ստացել եմ առաջարկություն արտաքին գործոց նախարարությունից բողոքելու այն բանի դեմ, որ Ռուսաստանը մեր անկախությունը չի ընդունում – ուղղակի կատաղեց և փրփուրը բերանին սկսեց ճառախոսել, որ մենք իրենց օգնելու փոխարեն՝

---

[693] «Դրօշակ» ամսագիր, Բոստոն, № 8-9, 1928 օգոստոս-սեպտեմբեր, էջ 233:
[694] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 135, թ. 6:

Հայաստանը փրկել տաճիկների կոտորածից, մտածում ենք անկախության մասին և մտածում ենք մեր դասակարգային մանր բուրժուական շահերը ապահովել հայ բանվորության և աշխատավոր գյուղացիության հանդեպ և այլն և այլն: Սկսվեց երկուս և կես ժամվա տաք վիճաբանություն, որից կարելի է գալ այն եզրակացության, որ այդ հաստագլուխներին ոչինչ չի կարելի հասկացնել, և նրանք անկախություն ընդունելու մասին, առանց դրսի ազդեցության, չեն էլ մտածի երբեք: … դուրս եկանք ոչինչ չը ստացած և նույնիսկ մի բան էլ մենք պարտք մնացինք, որ խանգարում ենք իոֆֆեներին փրկել Հայաստանը Տաճկաստանի ճանկերից»[695]: Այդ բանակցությունները նույնպես չտվեցին դրական արդյունք. Խորհրդային Ռուսաստանը չճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը և փաստորեն մերժեց նրա հետ հարաբերություններ հաստատելու փորձը, որը ձեռնարկել էր հայկական կողմը:

Վերը բերված վավերագրերը և նյութերը հերքում են խորհրդային շրջանի մի շարք հեղինակների այն կարծիքը, թե Խորհրդային Ռուսաստանի հետ մերձենալու համար Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը գործնական քայլեր չի կատարել:

Ավելին, նրանք Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում էին որպես միջազգային իմպերիալիզմի գործակալ, իսկ Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների հետ ունեցած կապը դիտում էին Խորհրդային Ռուսաստանի դեմ պայքարի տեսանկյունից: Ավելորդ է անգամ անդրադառնալ այն խնդրին, որ

---

[695] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 73, տե՛ս նաև 1918 թ. հոկտեմբերի 13-ին Կիևից Գ. Ջամոյանի նամակը՝ ուղղված Թիֆլիս՝ Արշակ Ջամալյանին, ՀԱԱ ֆ. 200, ց. 1, գ. 73, մաս I, թ. 68:

Հայաստանի Հանրապետությունը չի մասնակցել Խորհրդային Ռուսաստանի դեմ մղվող պայքարին: Կառավարությունը դեռ անկախության առաջին օրերին որոշում էր ընդունել պահպանել չեզոքություն բոլշևիկների և Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների միջև մղվող պայքարում[696]: Որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը այդպիսի դիրքորոշում ուներ Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ, հաստատված է բազմաթիվ փաստերով: Այսպես, օրինակ, 1918 թ. նոյեմբերի վերջին Երևանում գնդապետ Լեսլին Հայաստանի Հանրապետության իշխանություններին հանձնեց գեներալ Ա. Դրագոմիրովի նոյեմբերի 8-ի պաշտոնական նամակը՝ ուղղված արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին:

Այս նամակում գեներալ Ա. Դրագոմիրովը Հայաստանի Հանրապետությունից պահանջում էր պատվիրակություն ուղարկել Ռումինիայի Յասսի քաղաքում նոյեմբերի 16-ին կայանալիք խորհրդակցությանը մասնակցելու համար, որտեղ քննարկվելիք հարցն էր «Ռուսաստանի շահերի պաշտպանությունը»[697]: Հայաստանի Հանրապետության կառավարությունը այս դեպքում ևս ցուցաբերեց խիստ զգուշավորություն: Անհրաժեշտ էր նախ՝ հստակեցնել հրավիրվող խորհրդակցությունում քննարկվելիք հարցերի նպատակը և ապա՝ Հայաստանի Հանրապետության մասնակցության նպատակահարմարությունը:

Մինչև Յասսիի խորհրդակցությանը մասնակցելու հրավեր ստանալը նման առաջարկություն էր արել Կուբանի երկ-

---

[696] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 120, թ. 117:
[697] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 199:

բամասի կառավարության նախագահ Լ. Բիչը: Ուկրաինայի Կենտրոնական ռադային կից Հայաստանի կոմիսարիատի կոլեգիայի անդամ կապիտան Աշոտ Տոնյանցը Գ. Ջամոյանի հոկտեմբերի 13-ի հանձնարարականով Երևան մեկնելիս[698] հոկտեմբերի 20-ին Եկատերինոդարում հանդիպում է Կուբանի երկրամասի կառավարության նախագահ Լ. Բիչին, քննարկում 1918 թ. նոյեմբերին Ռուսաստանի հարավի և ինքնավար մարզերի ապագա կոնֆերանսին Հայաստանի Հանրապետության մասնակցության հարցը: 1918 թ. նոյեմբերի 7-ին ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղված պաշտոնական գրության մեջ Ա. Տոնյանցը գրում է. «Պարոն Բիչը, իմանալով այն մասին, որ ես ուղևորվում եմ Երևան, խնդրեց հայտնել Հայաստանի կառավարությանը, որ Կուբանը չափազանց կցանկանար տեսնել Հայաստանի ներկայացուցչին Ռուսաստանի հարավի ինքնավար մասերի ներկայացուցիչների ապագա կոնֆերանսում: Այդ կոնֆերանսի անհրաժեշտության և նրա խնդիրների մասին, պարոն Բիչի ասելով, տեղեկացված են Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կառավարությունները»[699]:

Արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը Ա. Ջամալյանի միջոցով պարզեց է, որ հրավիրվող կոնֆերանսի գլխավոր նպատակն էր «***ծավալել պայքար բոլշևիզմի դեմ***»[700]: Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չհամարեց պատվիրակություն գործուղել Եկատերի-

---

698 Տե՛ս **Գ. Պետրոսյան,** Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920 թթ.), Երևան, 2002, էջ 34:

699 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 154, թ. 10:

700 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 154, թ. 38, ց. 2, գ. 24, թ. 5, ֆ. 276, ց. 1, գ. 10, թ. 57:

նոդար, որովհետև դա չէր բխում հանրապետության արտաքին քաղաքական շահերից, ավելին՝ բուն Հայաստանի Հանրապետությունում բոլշևիզմը թույլ էր և սպառնալիք չէր երկրի անվտանգությանը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնպահ մնաց նաև Յասսիում հրավիրվող խորհրդակցությանը Հայաստանի պատվիրակության մասնակցության հարցում: Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո Յասսիում հրավիրվեց խորհրդակցություն Ռուսաստանի հակախորհրդային ուժերի և Համաձայնության պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում պետք է քննարկվեր խորհրդային իշխանության դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու հարցը, ու հստակեցվեին պայքարի հետագա ուղիները[701]:

Յասսիի խորհրդակցությանը մասնակցում էին ռուսական նախկին կայսրության անվանի պետական, քաղաքական գործիչներ Պ. Միլյուկովը, Ի. Նովիկովը, Ն. Ներատովը, Ա. Գուչկովը, Ն. Խոմյակովը, Ա. Տիտովը, Ս. Տրետյակովը, Վ. Շուլգինը, Մոսկվայի և Կիևի նախկին քաղաքագլուխներ Ռուդնևը և Դեմչենկոն, շուրջ 50 մարդ[702]:

Յասսիի խորհրդակցությունում քննարկվող հարցերի և այդ խորհրդակցությանը Հայաստանի Հանրապետության պատվիրակության մասնակցության անհրաժեշտությանն է անդրադարձել Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Ջամոյանը: 1918 թ. նոյեմբերի 14-ին արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյա-

---

[701] Տե՛ս **П. В. Милюков,** Воспоминания, Москва, 1991, էջ 7:
[702] Տե՛ս РГА СПИ, ф. 71, оп. 34, д. 1839, л. 156:

նին ուղղված նամակ-զեկույցում նա գրում է. «Ներկայումս Յասսի քաղաքը դարձել է Համաձայնության երկրների դիվանագիտական գործունեության կենտրոն: Յասսիում կայացան մի շարք խորհրդաժողովներ, որոնց մասնակցում էին ռուս հայտնի հասարակական գործիչներ, ինչպես նաև Կամավորական բանակի ներկայացուցիչներ: Վերջիններիս Համաձայնության երկրները խոստացել են մեծ օգնություն ցուցաբերել: Համաձայնության երկրները որոշել են վերականգնել Ռուսաստանը իր նախկին սահմաններում՝ բացառությամբ Լեհաստանի և Ֆինլանդիայի: Ռուսաստանի պետական կառավարման վերջնական ձևը կորոշի դեմոկրատական սկզբունքներով ընտրված Սահմանադիր ժողովը: Ռուսաստանից բոլշևիզմի վտարման համար Համաձայնության երկրները որոշել են նրա տարածքում ձևավորված բոլոր բանակներից ստեղծել Կամավորական բանակի հրամանատարությամբ գործող մեկ ճակատ:

Հստակորեն զգացվում է, որ Ռուսաստանից բոլշևիզմի վտարումից հետո դեմոկրատիայի և միապետության միջև համառ պայքարը կշարունակվի, և այն չի սահմանափակվի հրապարակախոսությամբ, քանի որ երկու կողմերն էլ ունեն իրական ուժեր՝ տարբեր բանակներ, ջոկատներ և այլն: Երևում է, որ Ռուսաստանի պետական կյանքում ցնցումները դեռ երկար կշարունակվեն: Ներկայումս Յասսիում լուծում է ստանում Ռուսաստանի վերածնման հարցը, և դրա հետ կապված՝ որոշվում է նաև Անդրկովկասի ճակատագիրը: Ահա թե ինչու մեր շահերի պաշտպանության և Ռուսաստանի նկատմամբ դիրքորոշումը ճշտելու համար մենք Յասսիում պետք է անպայման լիազոր ներկայացուցիչներ ունենանք:

… Ավարտելով իմ զեկույցը՝ խնդրում եմ շտապ պատվիրակություն ուղարկել Ուկրաինա՝ Յասսի այցելելու իրավունքներով, եթե մինչ այդ դիվանագիտական խորհրդակցության կենտրոնը չտեղափոխվի մեկ այլ վայր»[703]:

Գ. Զամոյանի նամակ-զեկույցից հստակ երևում է, որ հրավիրվող խորհրդակցությունում լուծվելու էր հակախորհրդային ուժերի ընդհանուր ճակատի ստեղծման խնդիրը, որին ակտիվորեն աջակցելու էին Համաձայնության պետությունները, և իրականացվելու էր «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագիրը. կայսրությունից անջատված Անդրկովկասի անկախ հանրապետությունները վերամիավորվելու էին Ռուսաստանին: Այնուհետև իր զեկույցում Գ. Զամոյանը տեղեկացնում է նոյեմբերի 12-ին Եկատերինոդարից վերադարձած Պ. Միլյուկովի հետ իր հանդիպման ու զրույցի մասին: Պ. Միլյուկովը ասել էր. «Այս պատերազմում հայ ժողովուրդը ապացուցեց, որ Անդրկովկասի ազգություններից միակն է, որ պետական գիտակցություն և կայուն ոգի ունի: Պետք է վերականգնվեն 1914 թ. օգոստոսի 1-ի դրությամբ եղած Ռուսաստանի սահմանները: Ցանկալի է վերականգնել միացյալ Անդրկովկասը, որպեսզի հայերը ազդեն Անդրկովկասի մյուս բաղադրիչ մասերի՝ Վրաստանի և Ադրբեջանի վրա: Վերջին իրադարձությունները ապացուցեցին, որ վրացիներին և մահմեդականներին վստահել չի կարելի: Ինքնավար, միացյալ Անդրկովկասի ստեղծումը հայերի համար նպաստավոր է նաև այն պատճառով, որ այդ դեպքում Թիֆլիսը կլինի հայերի անմիջական ազդեցության ներքո: Վրաստանի նկատմամբ Կամավորական բանակի վերաբերմունքը

[703] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 52, թ. 58-59:

խիստ բացասական է: Վրացական պետությունը ստեղծվել է գերմանական քաղաքականության կողմից և պետք է լուծարվի:

Կոնգրեսում Ռուսաստանը պետք է հանդես գա միացյալ պատվիրակությամբ և բոլոր միջոցներով պետք է խոչընդոտի Ռուսաստանի առանձնացած մասերին իրենց ներկայացուցիչներն ունենալու հարցում: Եվս մեկ անգամ հայտարարում եմ, որ Հայաստանի նվիրվածությունը Ռուսաստանին երբեք չի մոռացվի, և ես անձամբ ամենուր կպաշտպանեմ հայ ժողովրդի շահերը»[704]:

Գ. Ջամոյանը 1919 թ. հունվարի 23-ին Ս. Տիգրանյանին ուղղված նամակ-զեկույցում տեղեկացնում է, որ առանց անդրկովկասյան հանրապետությունների պատվիրակությունների մասնակցության՝ ռուս պատգամավորությունը, Յասսիի խորհրդակցությունում 1918 թ. նոյեմբերի 18-ին քննելով Կովկասի հարցը, հայտնել է հետևյալ կարծիքը. «Առանձին տեղ է բռնում հայկական հարցը, որի մէջ Ռուսաստանը չի կարող իր ձայնն չունենալ (Միլյուկովի կարծիքը): Պատգամաւորութիւնը անհրաժեշտ է գտել բացասական վերաբերմունք ցոյց տալ դէպի Վրաստանի պահանջները և հարց չբարձրացնել հայերին Ռուսաստանին միացնելու մասին»[705]:

Հայաստանի Հանրապետությունը հրաժարվեց մասնակցել նաև Մարմարա ծովի Իշխանաց կղզիներում (1919 թ. փետրվար)[706], Վարշավայում (1919 թ. դեկտեմբեր)[707] և Եկատե-

---

[704] Նույն տեղում, թ. 59:

[705] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, մաս I, թթ. 118-119, 148, **Գ. Պետրոսյան,** Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ., հունիս-նոյեմբեր), էջ 85:

[706] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 150, մաս I, թ. 80, գ. 193, մաս I, թթ. 47-50:

րինոդարում (1918 թ. նոյեմբեր, 1919 թ. դեկտեմբեր) հրավիրված վեհաժողովներին, որովհետև օրակարգում քննարկվում էին բոլշևիզմի դեմ միասնական ճակատ ստեղծելու և միասնական Ռուսաստանի վերակերտման մասին հարցերը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության գոյության առաջին շրջանում (1918 թ. մայիս-նոյեմբեր) թեև Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու կառավարության դիվանագիտական ջանքերը, ցավոք, հաջողություն չունեցան, այդուհանդերձ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ելնելով երկրի արտաքին քաղաքական շահերից, չմասնակցեց Խորհրդային Ռուսաստանի դեմ մղվող պայքարին:

[707] Տե՛ս նույն տեղը, գ. 440, թ. 2, 105, ֆ. 276, ց. 1, գ. 196, թ. 121:

## 2. Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների հետ հարաբերություններ հաստատելու առաջին քայլերը: Կամավորական բանակի և դրան կից «Հատուկ խորհրդակցության» ներկայացուցիչը պաշտոնական Երևանում

Հայաստանի Հանրապետության կառավարությունը լուրջ ջանքեր գործադրեց Կուբանում հակախորհրդային երկրամասային կառավարության և Ռուսաստանի հարավի նոր ձևավորված զինված ուժերի հրամանատարության հետ կապեր հաստատելու ուղղությամբ՝ ակնկալելով նրանց աջակցությունը հայ ռազմագերիներին և գաղթականներին հայրենիք տեղափոխելու, հաց, սննդամթերք, ռազմամթերք ներկրելու և այլ խնդիրներ լուծելու գործում:

Դեռևս 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջման օրերին Պետրոգրադից փախուստի դիմած և Նովոչերկասկում հաստատված գեներալ Միխայիլ Ալեքսեևը անմիջապես կազմակերպեց հակախորհրդային զինված ուժեր, որը պաշտոնապես կոչվեց Կամավորական բանակ, որին ակտիվորեն աջակցեց Դոնի զինվորական կառավարության ղեկավար, ատաման Կալեդինը՝ միասնական ուժերով բոլշևիկներին հարվածելու համար[708]: Կամավորական բանակը բոլշևիզմի դեմ պայքարի հավաքատեղի ընտրեց Դոնը, որտեղից հարձակվելու էր Կուբանի խորհրդային իշխանության վրա: 1918 թ. հունիսին Կուբանի դեմ Կամավորական բանակի սկսած 2-րդ արշավանքն

[708] Տե՛ս **Г. А. Трукан,** Антибольшевистские правительства России, Москва, 2000, էջ 124:

ավարտվեց հաղթանակով. օգոստոսի 3-ին գրավվեց Եկատերինոդարը (Կրասնոդար), որը դարձավ հակախորհրդային Կամավորական բանակի հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցության» մայրաքաղաքը[709], ինչպես նաև Կամավորական բանակի քաղաքական, տնտեսական, ռազմական ու դիվանագիտական գործունեության կենտրոնը: Օգոստոսի 18-ին գեներալ Մ. Ալեքսեևը հաստատեց Վ. Շուլգինի կազմած «Հատուկ խորհրդակցության» կանոնադրությունը:

«Հատուկ խորհրդակցության» նպատակն էր ամբողջությամբ վերականգնել Ռուսաստանից անջատված անկախ պետական կազմավորումների նախկին կարգավիճակը, պետական միասնական կառավարումը և տեղական մարմինների գործունեության ենթակայությունը Կամավորական բանակի «Հատուկ խորհրդակցությանը»[710]: «Հատուկ խորհրդակցության» նախագահ, գեներալ Մ. Ալեքսեևի տեղակալներ նշանակվեցին գեներալներ Ա. Դենիկինը, Ա. Դրագոմիրովը, Ա. Լուկոմսկին: Փաստորեն, Ռուսաստանի հարավում ստեղծվեց Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցությունը»՝ որպես նրա քաղաքական մարմին: Վերջինս կատարում էր թե՛ օրենսդիր մարմնի, թե՛ գործադիր իշխանության գործառույթներ՝ ներառելով արտաքին և ներքին գործերի, արդարադատության, ֆինանսների, ճանապարհաշինության, առևտրի ու արդյունաբերության և այլ նախարարություններ[711]: 1918 թ. հոկտեմբերի 8-ին մահացավ գեներալ Մ. Ալեքսեևը: Դրանից հետո՝ հոկտեմբերի 11-ին, Ա. Դենիկինը վերակազմավորեց Կամավորական բանակը և ընդունեց գլխավոր հրամանատա-

---

[709] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 1, д. 19, л. 2:
[710] Տե՛ս **Г. А. Трукан,** նշվ. աշխ., էջ 132:
[711] Նույն տեղում, էջ 134-137:

րի պաշտոնը՝ իր ձեռքում կենտրոնացնելով ռազմական և վարչաքաղաքացիական իշխանությունը: «Հատուկ խորհրդակցության» նախագահ նշանակվեց գեներալ Ա. Դրագոմիրովը՝ ենթակայությամբ գլխավոր հրամանատար Ա. Դենիկինի: Դոնի, Կուբանի երկրամասերի քաղաքացիական և ռազմական իշխանությունները կենտրոնացնելով իր ձեռքում՝ գեներալ Ա. Դենիկինը ձգտում էր միասնական ճակատով պայքար ծավալել խորհրդային իշխանության դեմ: 1918 թ. դեկտեմբերի 26-ին նա հռչակվեց Ռուսաստանի հարավի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար[712], իսկ 1919 թ. հունվար 1-ին Կամավորական բանակի հրամանատարությունը հանձնվեց գեներալ Պ. Վրանգելին:

Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցության» գլխավոր նպատակը հակախորհրդային ուժերի միավորումն էր, իսկ քաղաքական կարգախոսը՝ «Անբաժանելի միացյալ Ռուսաստանի» վերականգնումը 1914 թ. օգոստոսի 1-ի սահմաններով:

Գեներալ Ա. Դրագոմիրովը 1918 թ. դեկտեմբերի վերջին ներկայացնում է «Հատուկ խորհրդակցության» գործունեության ծրագիրը.

1. Մշակել Կամավորական բանակի ազդեցության տակ գտնվող տարածքներում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերականգնմանը վերաբերող հարցերը:

2. Ընդունել վերոհիշյալ տարածքների կառավարմանն ու Ռուսական կայսրության վերականգնմանն օժանդակող ժամանակավոր օրենքներ:

---

[712] Տե՛ս **С. Волков,** Белое движение, Энциклопедия гражданской войны – СПб., Москва, «Нева», 2003, էջ 158:

3. Գնահատելով նախկին Ռուսական կայսրության բոլոր նահանգներում տիրող իրավիճակը և նրանց կառավարությունների ու քաղաքական կուսակցությունների հետ հարաբերություններ հաստատելով՝ կազմակերպել մեծ Ռուսաստանի վերականգնմանն ուղղված համատեղ աշխատանքներ:

4. Հարաբերություններ հաստատել Համաձայնության երկրների ներկայացուցիչների հետ և մշակել Կամավորական բանակի հիմնական նպատակների իրագործմանը նպաստող գործողությունների ծրագիր:

5. Պետության կառուցման գործընթացում ներգրավել հայտնի պետական գործիչների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, առևտրի, արդյունաբերության և ֆինանսների ոլորտների ներկայացուցիչների[713]:

«Հատուկ խորհրդակցության» կազմում տարբեր բնագավառների բաժնի պետեր նշանակվեցին նախկին Ռուսական կայսրության արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովը (դիվանագիտության բնագավառ), Գ. Գեյմանը (ֆինանսական), Վ. Լեբեդևը (առևտրի, արդյունաբերության և մատակարարման), Է. Շուբերսկին (ճանապարհների և հաղորդակցության), գեներալ Ա. Մակարենկոն (արդարադատության), գեներալ Ա. Լուկոմսկին (ռազմածովային), Վ. Ստեպանովը (պետական վերահսկողության): Հրավիրեցին նաև պետական, քաղաքական մի շարք անվանի գործիչների՝ Վ. Մակլակովին (Լոնդոնում ժամանակավոր կառավարության նախկին դեսպան), Ա. Իզվոլսկուն (նախկին դեսպան Փարիզում), Ա. Նեստորովին, Վ. Շուլգինին, Մ. Վինավերին, Ն. Աստրովին, Պ.

[713] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 198:

Նովգորոդցևին, Գ. Տրուբեցկոյին, Պ. Միլյուկովին և շատ ուրիշ-ների[714]:

1918 թ. նոյեմբերին Համաձայնության պետությունները սկսեցին հովանավորել գեներալ Ա. Դենիկինի Կամավորա-կան բանակը, որը լուրջ սպառնալիք դարձավ բոլշևիկների համար[715]:

Կուբանի երկրամասի կառավարության և Կամավորա-կան բանակի գլխավոր հրամանատարության ու դրան կից «Հատուկ խորհրդակցության» միջև գոյություն ունեին ներքին տարաձայնություններ: Թեև Կուբանի երկրամասի զինված ու-ժերը գտնվում էին գեներալ Ա. Դենիկինի ընդհանուր հրամա-նատարության տակ և համատեղ պայքարում էին բոլշևիզմի դեմ, սակայն Կուբանի երկրամասի կոզակությունը ձգտում էր անկախության[716]: Այդ առիթով իրավացի է Ռուբեն Դարբինյա-նի դիտարկումը. «Կուբանցիք «ուկրայնական օրիենտացիա» ունէին և կը ձգտեն անկախութեան: Զոր. Դենիկինը, որ ռուս կայսերապաշտ մըն է և իրականի մէջ կը ձգտէր վերականգնել ցարական Ռուսաստանը ամբողջութեամբ, անհաշտ թշնամի էր Կուբանի նախագահի անկախութեան գաղափարին, բնա-կանաբար: Ու թէև Կուբանի զորքը ենթակայ էր Զոր. Դենիկինի ընդհանուր հրամանատարութեան և Կամաւորական բանակի հետ միասին կկռվեր բոլշևիկներուն դէմ, բայց խուլ հակամար-տութիւն կար Կուբանի և Զոր. Դենիկինի միջև: Կուբանը, թէև առերես բարեկամ էր անոր, բայց փաստօրեն սապօթաժի կեն-թարկեր անոր բոլոր ձեռնարկները»[717]:

---

[714] Տե՛ս նույն տեղը:

[715] Տե՛ս **Г. А. Трукан,** նշվ. աշխ., էջ 138:

[716] Տե՛ս **Л. И Петрушева,** Россия антибольшевистская: из белогвардейских и эмигрантских архивов, Москва, 1995:

[717] «Հայրենիք» ամսագիր, թիվ 8, Բոստոն, 1960, հուլիս, էջ 37-38:

* * *

Կուբանի երկրամասի կառավարության և Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցության» վերաբերմունքը Անդրկովկասի անկախ հանրապետությունների նկատմամբ միանշանակ չէր: Առաջինը պաշտպանում էր Ֆեդերատիվ Ռուսաստանի տեսակետը և իր մերձավոր խնդիրն էր համարում Կովկասի բոլոր պետությունների միությունը, այդ թվում նաև Ադրբեջանի՝ բոլշևիզմի դեմ միասնական ճակատ ստեղծելու համար[718]: Մինչդեռ Կամավորական բանակը և նրան կից «Հատուկ խորհրդակցությունը» դեմ էր Ռուսաստանի մասնատմանը և նպատակ ուներ միավորել նրա բոլոր անջատված մասերը: Կամավորական բանակի հրամանատարությունը Ռուսաստանի պետական բոլոր նոր կազմավորումները դասակարգում էր միայն ըստ միացյալ Ռուսաստանի գաղափարի նկատմամբ նրանց դրական կամ բացասական վերաբերմունքի և ռուսական պետության միավորմանը սատարելու հնարավորության ու կարողության: 1918 թ. նոյեմբերի 29-ին Կուբանի երկրամասում Հայաստանի Հանրապետության «տեղեկատվական բյուրոյի» պետ Ա. Մալխազովի (Մալխասյան) զեկույցում նշվում է. «Այդ տեսակետից Հայաստանը դիտվում է որպես, անկասկած, բարեկամական կազմավորում, որն առաջին իսկ հնարավորության դեպքում կգնա դեպի վերամիավորում, Վրաստանը, ի դեմս նրա կառավարության, համարվում է, անկասկած, թշնամական կազմավորում, իսկ Ադրբեջանը պետական միավոր չի համարվում՝ հաշվի առնելով պետա-

[718] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 12, թ. 16, ֆ. 200, ց. 1, գ. 143, թ. 203:

կան կազմավորման համար պատմական և ազգագրական հիմնավորման բացակայությունը, և այն համարվում է ավելի եկեղեցական, քան թե քաղաքական միասնություն»[719]:

Կամավորական բանակի վերաբերմունքը Անդրկովկասի նորաստեղծ անկախ հանրապետությունների նկատմամբ հստակ արտահայտվեց 1918 թ. նոյեմբերի 1-ին գեներալ Ա. Դենիկինի ճառում, որը նա արտասանեց Կուբանի երկրամասային ռադայի հանդիսավոր նիստում[720]:

Ինչպես վերը նշվեց, Կամավորական բանակը չէր ընդունում ռուսական նախկին կայսրության կազմից անջատված անկախ պետությունների գոյությունը: Այդ խնդրի վերաբերյալ Գ. Չալխուշյանը վկայում է. «Կամավորական բանակը չէր ճանաչում սկզբունքով Հայաստանի Հանրապետությունը, դա պարզ էր բոլորիս համար: «Միասնական և անբաժանելի Ռուսաստանի» գաղափարը չէր կարող մարսել փոքր, անկախ հանրապետությունների գոյությունը երկրի նախկին սահմաններում: … Չկար ոչ մի տարակուսանք, որ Կամավորական բանակը ցանկանում էր կենդանացնել հին, մեռած ցարական ռեժիմը, և նրա կողքին չէին կարող բսնել, ապրել, զարգանալ մի նոր թոյլ, երիտասարդ հանրապետության ծիլերը»[721]: Այս առնչությամբ Կամավորական բանակը անբարյացակամորեն ընդունեց Հայաստանի Հանրապետության անկախության մասին Ռ. Բերբերյանի հոդվածները, որոնք 1918 թ. հուլիսի սկզբին հրապարակվեցին «Դոնսկայա Ռեչ» թերթում: Ռ. Բերբերյանն այդ իրողության վերաբերյալ գրում է. «Մի օր խմբագրատուն է գալիս զօրավար Դենիկինի աշխատակից, զինուորա-

---

[719] Նույն տեղում:

[720] Տե՛ս Отдельный оттискъ изъ N 63 газеты »Россия», 1918:

[721] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 295, թ. 30:

կան դատախազ զօրավար Ռոմանովսկին եւ երկար խօսակցութիւն է ունենում խմբագրի եւ Բերբերեանի հետ: Ռուս զօրավարը հայտնում է նրանց, որ Կամաւորական բանակի գլխաւոր նշանաբանն է «Մէկ, մեծ եւ անբաժան Ռուսաստան» եւ յանձնարարում է զգոյշ լինել եւ թերթի մեջ շատ մեծ տեղ չտալ անկախութիւնների յայտարարման, օրինակ, ինչպէս վերջերս եղած է, Հայաստանի վերաբերեալ»[722]: Ռ. Բերբերյանը բացատրում է, որ թերթը պարտավոր է արձագանքել կատարված պատմական փաստերին: Հայաստանի Հանրապետության անկախությունը մի այդպիսի փաստ է: Ինչպե՞ս կարող է խմբագրությունը չտեղեկացնել այդ մասին տեղի հայությանը, մանավանդ որ այդ ազատությունը ձեռք է բերել հերոսական պայքարի շնորհիվ[723]: Գեներալ Ռոմանովսկին պատասխանում է. «Իմ մէջ կայ եւ զինուորականը եւ օրէնքի մարդը: Իբրև զինուորական ես ամենամանրամասն տեղեկութիւններ ունեմ, թե ինչպիսի ***եզակի քաջութիւն*** են ցոյց տուել հայ կամաւորական գնդերը Սարդարապատ եւ Ղարաքիլիսէ կոչուած վայրերում: Արտակարգ ոգեւորութեամբ, անտեսելով զոհողութիւնները՝ ջարդել եւ յաղթել են գերազանցօրէն իրենցից շատ լավ զինուած թուրք զօրքերին… Իմ մէջ զինուորականը ասում է. ով իր քաջութեամբ եւ արիւնով ձեռք բերեց իր ազգի յաղթութիւնը, նա իրաւունք ունի իր ազգի անկախութեան: Բայց իբրև օրենքի մարդ, պէտք է ասեմ, որր առանց ռուս պետութեան հետ համաձայնութեան գալու, դուք չէք կարող միակողմանի որոշումներ տալ:

---

722 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1940, հոկտեմբեր, էջ 87, նույնի՝ 1952, դեկտեմբեր, էջ 15:
723 Տե՛ս նույն տեղը:

Խօսակցութեան վերջին, զօրավարը խնդրում է, որ այլազգիների անկախութեան հարցում, թերթը այսուհետեւ գործածէ հանգիստ լեզու եւ չգայթակղեցնող շեշտ ու դիրք»[724]: Հարկ չկա ապացուցելու, որ Կամավորական բանակը չէր ընդունում նախկին Ռուսական կայսրության կազմից անջատված անկախ պետությունների գոյությունը, չէր ճանաչում նաև Հայաստանի Հանրապետության անկախությունը: Այնուամենայնիվ, արտաքին աշխարհից ամբողջովին մեկուսացած նորանկախ Հայաստանի Հանրապետությունը փորձում էր ուղիներ որոնել՝ Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու:

Կուսակցական և պետական գործիչ Սիմոն Վրացյանը 1918 թ. հունիսի վերջին հատուկ առաքելությամբ Թիֆլիսից մեկնում է Ռուսաստանի տարբեր շրջաններ և մինչև հոկտեմբերի վերջը լայն գործունեություն է ծավալում Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի հետ կապ ստեղծելու համար, որը «… կարող էր անմիջական օգնություն հասցնել Հայաստանին»[725]: Նա բազմաթիվ հանդիպումներ է ունենում Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի հրամանատարական կազմի հետ և առանձնապես ջերմ ընդունելության է արժանանում գեներալ Մ. Ալեքսեևի կողմից, որի «վերաբերմունքը եղել է դեպի հայերը չափազանց բարեկամական»[726]: Սակայն Կամավորական բանակի հետ կապերի հաստատումը պայմանավորված էր բազմաթիվ դժվարությունների հաղթահարմամբ: 1919 թ. հոկտեմբերի 19-ին Հ. Յ. Դաշնակցության Կենտրոնական կոմիտեին ուղղված նամակում Ս. Վրացյանը

---

[724] Նույն տեղում:

[725] Տե՛ս **Ս. Վրացյան,** Կեանքի ուղիներով, Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ, Ե հատոր, Բէյրութ, 1966, էջ 14:

[726] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 21:

գրում է. «Ազգային Խորհրդի որոշումով գնացել էի Կամաւորական բանակի մօտ: Եղայ Սոչի, Եկատերինոդար, Ռոստով, Նոր Նախիջևան: Ամէն տեղ ընդունելութիւնը շատ լաւ էր, Կամաւորական բանակի մէջ ջերմ հետաքրքրութիւն կայ դէպի Հայաստանն ու հայերը և գործնական հնարաւորութիւններ չկան: Նախ՝ Հայաստանի և Կամավորական բանակի միջեւ ընկած է թշնամի Վրաստանը, որ թոյլ չի տար իր հողի վրայով որեւէ օգնութիւն հասցնել Հայաստանին: Երկրորդ՝ Կամավորական բանակը ինքն ալ այնքան կազմակերպուած եւ ուժեղ չէ, որ ընդունակ լինի իր կամքը պարտադրելու: Բուն Կամաւորական բանակի եւ կազակներու յարաբերութիւններն ալ շատ լաւ չեն: Երկուսի վերաբերումն էլ մեր հանդէպ շատ լաւ է: Կամաւորական բանակէն խոստացան մեզ հասցնել որոշ քանակութեամբ փամփուշտ: Կազակներէն էլ կըստանանք ալիւր, եթե փոխադրութեան միջոց ապահովենք, որ անկարելիութեան չափ դժուար է»[727]:

Կամավորական բանակի հրամանատար գեներալ Մ. Ալեքսեևը խոստանում է Կուբանից Հայաստանի Հանրապետություն ուղարկել մեկ միլիոն ռուբլու հաց, Ուկրաինայից՝ մեկ միլիոնի և 100 հազար ռուբլու շաքար, պայմանով, որ «հայերը մի ֆունտ անգամ չտան դրանցից վրացիներին»[728]: Վրացիները թույլ չէին տալիս այդ ապրանքները Հայաստան տեղափոխել: Այնուամենայնիվ, մեծ դժվարություններով Հայաստանի Հանրապետությունը որոշ օգնություն ստացավ Կամավորական բանակից[729]:

---

[727] Տե՛ս **Ս. Վրացյան,** Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962, էջ 266:

[728] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 21:

[729] Տե՛ս **Ս. Վրացյան,** Կեանքի ուղիներով..., էջ 24:

Ինչպես փաստում են արխիվային վավերագրերը և նյութերը, Ռուսաստանի հարավից Հայաստանի Հանրապետություն հաց, սննդամթերք և անհրաժեշտ այլ ապրանքներ առաքելու համար հարկավոր էր հաղթահարել լուրջ խոչընդոտներ: Գ. Չալխուշյանը, որին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հանձնարարել էր Կուբանում հացահատիկ գնելու գործը, գրում է. «Հայաստանին պետք էր հաց: Մենք ցանկանում էինք գնել դրամով: Հացի պահեստը պատկանում էր Ղուբանի (Կուբանի – Գ. Պ.) կառավարությանը, փոխադրական միջոցները և արտահանելու իրավունքը կախված էին Կամավորական բանակից: Ղուբանի կառավարությունը մեզ ասում էր. «Հայերդ վրացիների թշնամիներն եք, իսկ վրացիները մեր բարեկամներն են, եթե մի մասը կհանձնեք Վրաստանին, մենք Ձեզ կվաճառենք հաց», իսկ զորավար Դրագոմիրովը մեզ ասում էր. «Վրացիները Կամավորական բանակի թշնամիներն են, մենք վախենում ենք, որ դուք հացի մի մասը կհանձնեք նրանց: … Կառավարությունը (Հայաստանի – Գ. Պ.) ուղարկեց հատուկ պատգամավորություն, որը կորցրեց իր ժամանակը, Հայաստանի դրամը և հաջողություն չունեցավ»»[730]: Այդ գործընթացին խանգարեց նաև ռուս-վրացական հարաբերությունների սրումը, որի հետևանքով Կամավորական բանակի «Հատուկ խորհրդակցությունը» արգելեց հացի և այլ ապրանքների առաքումը Վրաստան, որից տուժեց նաև Հայաստանի Հանրապետությունը[731]: Բայց և այնպես, Կամավորական բանակը հաց էր վաճառում Հայաստանին, իսկ

[730] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 295, թ. 18, 30:
[731] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 12:

Վրաստանը պահանջում էր իր մասը, հակառակ դեպքում բաց չէր թողնում[732]:

1918 թ. սեպտեմբերի 25-26-ը Եկատերինոդարում տեղի ունեցավ հանդիպում Կուբանի երկրամասի կառավարության, Կամավորական բանակի ու Վրաստանի կառավարության արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորու գլխավորած պատվիրակության միջև[733]: Բանակցություններն ընթանում էին լարված մթնոլորտում: Գեներալ Մ. Ալեքսեևը վրացական պատվիրակությունից վերջնագրով պահանջեց, որ վրացական զորքը անհապաղ դուրս բերվի սևծովյան ափերից: Այնուհետև Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցությունը» Վրաստանին մաքսային և պարենային պատերազմ հայտարարեց[734]:

Հոկտեմբերին գեներալ Ա. Դենիկինը ստանձնեց Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնը, Եկատերինոդար ժամանեցին հայկական պատվիրակություններ, սուրհանդակներ Ուկրաինայից, Վրաստանից և այլ վայրերից՝ սովյալ Հայաստանի Հանրապետությանը հաց, սննդամթերք և այլ ապրանքներ առաքելու խնդրով: Այդ նպատակով Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Ջամոյանը ևս Կիևից Եկատերինոդար գործուղեց Ս. Սիրինին, գնդապետ Կորիտինին և կապիտան Ա. Տոնյանցին: Ա. Ջամալյանի հանձնարարականով Թիֆլիսից Եկատերինոդար մեկնեցին

---

732 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 27:

733 Տե՛ս Документы, матерьялы по внешней политике, Закавказья и Грузии, Тифлис, 1919, էջ 391-414, նաև газета «Борьба», Тифлис, 11 октября 1918 г.:

734 Տե՛ս ГА РФ, ф. 39720, оп. 1, д. 44, л. 13, ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 186, նաև Архив русской революции, т. 5-6, Москва, 1991, с. 104-105:

Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական Լ. Թումանովը (Թումանյան), Ա. Բարակոզյանը և Ա. Մալխազովը: Ա. Ջամալյանի խնդրանքով Եկատերինոդար ժամանեցին նաև Անդրկովկասի ռուսական Ազգային խորհրդի ներկայացուցիչները Մ. Ավդիևի գլխավորությամբ՝ նպատակ ունենալով միջնորդ դառնալ Կուբանի երկրամասի կառավարության և Կամավորական բանակի ու Հայաստանի Հանրապետության միջև՝ ապրանքափոխանակություն իրագործելու համար: Եկատերինոդար հասած հայկական պատվիրակությունները տեղի Հայոց ազգային խորհրդի նախագահ Նիկոլայ Սաթունյանի առաջարկով ստեղծեցին ժամանակավոր կոլեգիալ մարմին՝ Հայաստանի Հանրապետությանը հաց, սննդամթերք և այլ անհրաժեշտ ապրանքներ առաքելու նպատակով: Ն. Սաթունյանի առաջարկով Ա. Մալխազովը և Ս. Սիրինը 1918 թ. նոյեմբերի 4-ին այդ մասին գրավոր տեղեկացրին Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովհ. Քաջազնունուն. «Արշակ Մալխազովը և ես (Ս. Սիրին – Գ. Պ.) դիմում ենք Ձեզ տեղեկացնելու, որ Եկատերինոդարում ստեղծվել է ժամանակավոր կոլեգիալ մարմին՝ Հայաստանի Հանրապետության բնակչությանը հաց մատակարարելու խնդրով: Կուբանի երկրամասի կառավարությունը և Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը Հայաստանի Հանրապետությանը հաց տալու խնդրանքին վերաբերվել են բարյացակամորեն և սկզբունքորեն պատրաստակամություն են հայտնել թույլատրել նրա արտահանումը»[735]: Սակայն ինչպես հայտնի է, հացը տեղ հասցնելու ճանապարհին կային լուրջ խոչընդոտներ,

[735] ՀԱԱ, ֆ. 43, ց. 1, գ. 100, թ. 16:

հատկապես Վրաստանով անցնելիս: Կամավորական բանակի ղեկավարությունը կտրուկ դեմ էր, որ հաց տրվի վրացիներին: Նա որպես պարտադիր պայման դնում էր երաշխիքների ստացումը Վրաստանից, գերմանացիներից և թուրքերից, որ հացը «…այլ պետքերի համար չի օգտագործվի, բացի Հայաստանի պահանջներից»»[736]: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև Կամավորական բանակի «Հատուկ խորհրդակցության» և Հայաստանի Հանրապետության միջև ապրանքափոխանակություն սկսելու մասին: Այդ կապակցությամբ զեկուցագրում նշվում է. «Մենք նպատակահարմար ենք գտնում անմիջապես սկսել ապրանքափոխանակումից և դրանով իսկ ճանապարհ հարթել հետագա պարենային գործարքների համար: Դրա համար անհրաժեշտ է Էրիվանից Եկատերինոդար ուղարկել բամբակ, կաշի, սպիրտ, կոնյակ և այլն: Ապրանքափոխանակության իրականացման գործում մեծ է Անդրկովկասյան ռուսական Ազգային խորհրդի միջնորդական դերը»[737]: Չնայած ձեռնարկված միջոցներին՝ Հայաստանի Հանրապետություն էր հասնում հացի, սննդամթերքի և այլ ապրանքների փոքր խմբաքանակ: Վրաստանը Կուբանից առաքված ապրանքի մի մասը վերցնում կամ ամբողջովին բռնագրավում էր: 1918 թ. նոյեմբերի վերջին հաջողվեց Վրաստանով՝ տարանցիկ ճանապարհով, Կուբանի երկրամասից Հայաստանի Հանրապետություն փոխադրել 100.000 փութ հացահատիկ, որ անհնշան քանակություն էր երկրի ծով կարիքները բավարարելու համար[738]:

---

[736] Նույն տեղում:
[737] Նույն տեղում, թ. 17:
[738] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 553, թ. 14, ֆ. 4033, ց. 2, գ. 963, թ. 103:

* * *

Հարկ է նշել, որ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության «Հատուկ խորհրդակցության» և Հայաստանի Հանրապետության միջև ամենից առաջ հաստատվեցին ռազմական բնույթի կապեր: Կովկասյան ռազմաճակատի փլուզումից հետո բազմաթիվ ռուս սպաներ և զինվորներ ծառայության անցան հայկական բանակում[739]: «Հայաստանում, - գրում է գեներալ Ա. Դենիկինը, - ռուսների նկատմամբ ավելի լավ էին վերաբերվում, քան նոր կազմավորված մյուս հանրապետություններում: Մտավորականությամբ և տեխնիկական ուժերով աղքատ երկիրը օգտվում էր ռուսական մասնագետների ծառայությունից և մասնավորապես ռուս սպաներին ներգրավում էր իր բանակի շարքերը»[740]: Հակառակ դրան՝ վրացական կառավարությունը ոչ միայն բռնագրավել էր Կովկասյան ռազմաճակատի համարյա միլիարդանոց ունեցվածքը, զինվորական ու երկրամասային կառավարչությունների մեծաքանակ վարկերն ու կանխիկ գումարները և անհրաժեշտ չէր համարել ռուսական այդ ժառանգության արդար բաժանումը, այլև ամենևին չէր հոգացել ռուս քաղաքացիական բնակչությանը Ռուսաստան անվտանգ տեղափոխելու մասին[741]:

Ռուսական զորամասերը Կովկասյան ռազմաճակատից զանգվածաբար հեռանալ սկսեցին 1918 թ. հունվարի սկզբներին: Անդրկովկասի տարածքով անցնելիս նրանք ստիպված էին հաղթահարել վրացիների և կովկասյան թաթարների կա-

---

[739] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 56, թ. 13, ֆ. 276, ց. 1, գ. 116, թ. 127:
[740] **А. И. Деникин,** Очерки русской смуты, Москва, 1991, с. 146-147.
[741] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 136, л. 86:

տաղի դիմադրությունը, որը հաճախ վերածվում էր իսկական ճակատամարտի: Վրացիներն ու թաթարները ցանկանում էին տիրանալ հեռացող զորամասերի զենքին ու զինամթերքին[742]:

Հր. Սիմոնյանն իրավացիորեն նկատում է. «Ռուսներին զինաթափելու և նրանց զենքերը խլելու նպատակով մուսավաթականները և վրաց մենշևիկները մտան արյունալի գործարքների մեջ: Փակելով երկրամասի հաղորդակցության կարևոր գծերը՝ կովկասյան թաթարները պաշարում էին գնացքները, զինաթափում և հաճախ էլ կոտորում տուն վերադարձող ռուս զինվորներին»[743]: Հայկական բանակի գլխավոր շտաբի պետ, գնդապետ Մ. Զինկևիչը Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանն ուղղված գաղտնի զեկուցագրով տեղեկացնում է, որ «***վրացիները ռուսների նկատմամբ իրենց վայրագություններով գերազանցեցին բարբարոս թուրքերին***»[744]: Հայերը ռուս զինվորների նկատմամբ ցուցաբերեցին ու պահպանեցին ավանդական բարեկամական վերաբերմունքը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը օգտագործեց բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի ռուս զինվորները ապահով վերադառնան հայրենիք: Երևանի Ազգային խորհրդի Հատուկ կոմիտեի անդամ Ար. Աստվածատրյանը գրում է. «… բուն Հայաստանում եղած ռուս զինվորներին պարենով կամ դրամով բավարարելուց հետո, հայոց կառավարությունը բարոյապես հարկադրվեցավ Թիֆլիսում գտնված հազարավոր զինվորներին էլ նպաստ և ճանապարհածախս տալ՝ սպառելով իր վերջին կոպեկները այդ

---

[742] Տե՛ս **С. Семен,** Правда о Шамхоре 7-12 января 1918 г., Тифлис, 1927:

[743] **Հր. Սիմոնյան,** Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, գիրք Բ, Երևան, 1996, էջ 4:

[744] ՀԱԱ, ֆ. 277, ց. 2, գ. 5, թ. 48:

գործի վրա»[745]: Այնուհետև շարունակում է. «…ես անձնապես պիտի վկայեմ, որ Հայաստանի կառավարությունը մարդկային վերաբերմունք ցույց տվեց ոչ միայն դեպի ռուս զինվորականները, այլև դեպի ռուս պաշտոնյաները, որոնց թիվը քիչ չէր Երևանում: Վերջը, երբ այդ ռուս պաշտոնյաները դիմեցին մեր իշխանությանը, խնդրելով հնարավորություն տալ իրենց հայրենիք (Ռուսաստան) վերադառնալու, նրանց տրամադրվեց հատուկ գնացք՝ հոգալով նրանց բոլոր ծախքերը: Հիշում եմ, թե նրանք որպիսի երախտագիտական զգացմունքով հեռացան Երևանից: «Մենք՝ ռուսներս, երբեք չենք մոռանալ այդ ջերմ վերաբերմունքը, որ ցույց տրվեց մեզ Հայաստանում»,- բաժանման ժամին ասում էր ինձ Երևանի նահանգի ժողովրդական դպրոցների վերատեսուչ, իսկ Հանրապետության օրերին ռուս Ազգային խորհրդի նախագահ Զորինը»[746]:

* * *

Հայտնի է նաև, որ բազմաթիվ հայ սպաներ ծանոթ չէին հայրենիքին, չգիտեին մայրենի լեզուն, ժողովրդի հոգեբանությունը և հայոց պատմությունը. «Այս հասկացողութեամբ հայ սպայութիւնը, երբ ինքզինք գտաւ իր մայրենի հողի վրա, ազգային պետութեան ծառայութեան մէջ՝ անծանօթ էր տեղական լեզուին, ուստի չկրցաւ ընել այն, ինչ որ հայ ժողովուրդը կը սիրէր սպասել եւ, թերեւս այն, ինչ որ ինքն ալ կենթադրէր, թէ

---

[745] «Հայրենիք» ամսագիր, № 12, Բոստոն, հոկտեմբեր, 1928, էջ 130-131, նույնի՝ № 5, 1959, մայիս, էջ 68-69:
[746] Նույն տեղում:

պիտի կրնար իրագործել»,– գրում է Վահե Արծրունին[747]: Հայ սպաները կրթություն էին ստացել ռուսական կայսրության զինվորական դպրոցներում ու ակադեմիաներում, զինվորների մեծ մասը ծառայել և վարժվել էր ռուսական բանակում, դաստիարակվել ռուսական ոգով և իրենց տրամադրությունները հայկական բանակում արտահայտում էին հօգուտ Կամավորական բանակի: Այդ մասին Գ. Չալխուշյանը գրում է. «Զորավարներ Նազարբեկով, Սիլիկով, Գամազով, Հովսեփյան, Փիրումյան, Հովհաննես Հախվերդով, գնդապետ Վեքիլով լավ գիտին հին ցարական բանակը… սակայն կապված չէին սերտ կապերով հայ զինվորների հետ: Հասարակ սպանները, որ պիտի լինեին միջնորդ զորավարների և զինվորների միջև, ռուս Կամավորական բանակի զինվորներ էին… որ ծանոթ չէին բնավ հայկական տագնապին և հայ իրականության, չէին հավատում Հանրապետության հաստատ լինելուն, երազում էին վերադառնալ Ռուսաստան՝ համոզված լինելով, որ նորից կհաստատվեն հին կարգերը»[748]:

Հայաստանի Հանրապետության բանակը կազմված էր ռուսական բանակի սկզբունքներով և կառավարվում էր ռուսական զինվորական կանոնագրքով[749]: Եվ ամենևին պատահական չէր, որ Հայկական բանակը համարվում էր Կամավորական բանակի մի մասը: «Զինուորական նախարարութիւնը, - գրում է Ռուբեն Տեր-Մինասյանը, - պարզ մանրանկարն էր ռուս զինուորական նախարարութեան, իսկ բանակը իր ոգուով, իր վարժութեամբ եւ գործելակերպով, նոյնն էր ինչ ռուսա-

---

[747] **Վահէ Արծրունի,** Տաճկական պատերազմը, Հայ սպայութիւնը, Շատախ, Երևան, 2002, էջ 376:
[748] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 293, թ. 53:
[749] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 33:

կան որեւէ զօրաբաժին: Ի զուր չէ, որ հայկական բանակը կը համարէին Դենիկինի բանակի մի մասը. նմանութիւնը մեծ էր թէ կազմակերպութեան, թէ ձգտումների մէջ: … Զինուորական բաժինների գլուխ կը գտնուէին մասնագէտ զօրավարներ, որոնք բազմամեայ փորձառութիւն ունէին ռուսական ծառայութեան մէջ, նրանցից ոմանք յայտնի էին նոյնիսկ ռուսական բանակում: Երբ չէին գտնուում հայ ծագումով ղեկավարներ, ռուս ղեկավարներ էին գործում, որոնց թիւը 400-ի կը հասնէր, չհաշուած հասարակ պաշտօնեաներն ու զինուորները (որոնք փոքրաթիւ էին համեմատած ռուս ծագումով բարձր պաշտօնեաների): Այդպիսով Հայաստանի բանակը կազմակերպուած էր զինուորական մասնագիտական տուեալների վրայ. նա ունէր իր արժանիքները զիտական տեսակետից, բայց ունէր իր թերութիւնները ոգու և ազգային տեսակետից»[750]: 1918 թ. (ամիսը և օրը չեն հիշատակվում) «Հատուկ խորհրդակցության» նախագահ գեներալ Ա. Դրագոմիրովին ուղղված գաղտնի զեկուցագրում կոմս Բիլինբրիչը[751] գրում է. «Հայկական բանակը, որտեղ մեծ է ռուս սպաների թիվը, շատ լավ է տրամադրված: ***Բոլորովին չեն ճանաչում խորհրդարանի և կառավարության*** (Հայաստանի – Գ.Պ.) ***իշխանությունը և առիթի դեպքում կարող են հեղաշրջում կատարել***»[752]:

Գեներալ Ա. Դենիկինը հայկական բանակը համարում էր Անդրկովկասում Կամավորական բանակի պահեստի ուժը: Եվ ամենևին պատահական չէր այն, որ գնդապետ Շատիլովը 1918 թ. սեպտեմբերի վերջերին Կամավորական բանակի

---

[750] **Ռուբէն,** նշվ. աշխ., էջ 332-333:

[751] Հայաստանի Հանրապետությունում Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ներկայացուցիչ Լեսլիի ծածկանունն է:

[752] ГА РФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 33:

հանձնարարականով Եկատերինոդարից եկավ Թիֆլիս՝ նախկին ցարական բանակի սպաներին և զինվորներին հավաքագրելու՝ Կամավորական բանակում ծառայելու համար, իսկ հայ ռազմագերիների և Կամավորական բանակում ծառայող հայ սպաների ու զինվորների նկատմամբ հակառակ վերաբերմունք դրսևորվեց: Ցանկացողներին նա առաջարկեց ու թույլատրեց իրենց զենքով ու ճանապարհի սնունդով մեկնել Հայաստանի Հանրապետություն և ծառայել միայն հայկական բանակում[753]:

Հայկական բանակի գլխավոր շտաբի պետ, գնդապետ Մ. Զինկևիչը Երևանի ռուսական Ազգային խորհրդի գործուն աջակցությամբ Երևանում ստեղծեց հետախուզական գաղտնի խումբ՝ իր գործակալներով, որն անմիջական կապի մեջ էր Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության», Թիֆլիսում Անդրկովկասի Ռուսական ազգային խորհրդի հետ[754]: Այդ խմբի քաղաքական կարգախոսը «Միասնական, անբաժանելի Ռուսաստանի» վերականգնում էր[755]: Խումբը կանոնավոր կերպով տեղեկություններ էր հաղորդում Կամավորական բանակին և նրան կից «Հատուկ խորհրդակցությանը» հայկական բանակի, հանրապետության ներքին ու արտաքին քաղաքական դրության մասին[756]: Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը կոնկրետ փաստեր ուներ ռուսական

---

[753] Տե՛ս РГ ВА, ф. 39720, оп. 1, д. 49, л. 4, Тифлисский Листок, 25 сентября 1918, նաև ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291, մաս II, թ. 220:

[754] Տե՛ս ГА РФ, ф. 439, оп. 1, д. 35, л. 2:

[755] Տե՛ս Российский государственный архив социально-политической истории (այսուհետև՝ РГА СПИ), ф. 71, оп. 35, д. 195, л. 188:

[756] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 33:

հետախուզական խմբի գոյության ու գործունեության մասին[757], սակայն կառավարությունը դրսևորում էր զսպվածություն նախ այն պատճառով, որ մի կողմից՝ տվյալ պահին այն վտանգ չէր ներկայացնում երկրի անկախությանը, իսկ մյուս կողմից՝ նոր-նոր ձևավորվող հայ-ռուսական հարաբերությունները չխաթարելու համար:

Հայկական բանակում ձևավորված դրական տրամադրվածությունը Կամավորական բանակի նկատմամբ լավ հնարավորություն ստեղծեց Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ հարաբերություններ հաստատելու համար: Այդ ուղղությամբ ձեռնարկվեցին գործնական քայլեր: Հայկական բանակի շտաբի պետի օգնական փոխգնդապետ Վլասևը, իր դիմումի համաձայն, զինվորական նախարար Հ. Հախվերդյանի 1918 թ. հոկտեմբերի 1-ի № 21 հրամանով ազատվեց զբաղեցրած պաշտոնից և գործուղվեց Եկատերինոդար՝ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցության» հետ կապ հաստատելու նպատակով[758]: Փոխգնդապետ Վլասևի այցը Եկատերինոդար կիսապաշտոնական և գաղտնի բնույթի էր, որովհետև իր ուժը պահպանում էր Բաթումում Հայաստանի Հանրապետության պատվիրակության 1918 թ. հունիսի 3-ին Թուրքիայի նկատմամբ ստանձնած պարտավորությունը, ուժի մեջ էր նաև հունիսի 4-ի հայտնի դաշնագիրը: Ահա թե ինչու Հայաստանի Հանրապետության կառավարության և զինվորական նախարարության կողմից Վլասևին համապատասխան հավատարմագիր կամ վկայական չտրվեց:

---

[757] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 376, ց. 1, գ. 1, թ. 13:
[758] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 41, թ. 23:

1918 թ. հոկտեմբերի սկզբին Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության շտաբի գրասենյակը փոխգնդապետ Վլասևին ծառայողական բնույթի գրավոր հանձնարարականով այնուամենայնիվ գործուղեց Հյուսիսային Կովկաս: Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար գեներալ Հ. Հախվերդյանը Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանին ուղղված նամակում տեղեկացնում է. «Սույն նամակ ներկայացնողը՝ Հյուսիսային Կովկաս մեկնող փոխգնդապետ Վլասևը, ծառայողական բնույթի հանձնարարություն ունի, ուստի խնդրում եմ Ձեզ իրենից փաթեթ ստանալու դեպքում դրանք ուղարկել Էրիվան…»[759]: Նամակից ակնհայտ է դառնում, որ Վլասևը Կամավորական բանակի կապը հայկական բանակի հետ պետք է իրականացներ Ա. Ջամալյանի միջոցով: Իր առաքելության վերաբերյալ Ա. Ջամալյանին ուղղված՝ 1918 թ. հոկտեմբերի 25-ի № 3 նամակում փոխգնդապետ Վլասևը գրում է. «***Ինձ տրված հանձնարարությունը Կամավորական բանակի հետ կապ հաստատելու ուղղությամբ ես կատարեցի…*** Կամավորական բանակի բարձրագույն հրամանատարության կողմից հայ ժողովրդի նկատմամբ վերաբերմունքը շատ բարյացակամ է, ինչի լավագույն ապացույցն է այն ողջույնը, որով հայկական կառավարության միջոցով հայ ժողովրդին դիմել էր Կամավորական բանակի գլխավոր հրամանատար գեներալ Ա. Դենիկինը: Այդ ողջույնի տեքստը ինձ փոխանցված է, և ես այն ուղարկում եմ մի խնդրանքով, որ քանի դեռ ստացված չէ բնօրինակը, այն չհրապարակել: Հայկական կառավարությանն ուղղված ող-

[759] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 6, թ. 56:

ջույնի տեքստը[760] կփոխանցի այդ նպատակի համար հատուկ գործուղված Կամավորական բանակի սպա»[761]: 1918 թ. դեկտեմբերի 13-ին վարչապետ Հովհ. Քաջազնունին Հայաստանի խորհրդի նիստում հրապարակեց գեներալ Ա. Դենիկինի ողջույնը՝ ուղղված հայ ժողովրդին: Հայաստանի խորհուրդը որոշեց. «…փոխադարձ ողջույն ուղարկել Ռուսաստանին ի դեմս գեներալ Ա. Դենիկինի»[762]:

Փոխգնդապետ Վլասևը Եկատերինոդարում գործում էր որպես Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության «Հատուկ խորհրդակցությանը» կից հայկական բանակի ներկայացուցիչ[763]:

Փոխգնդապետ Վլասևն իր գործունեությունը ծավալում էր մի քանի ուղղություններով: Նրան նաև հանձնարարված էր Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության միջոցով հայտնաբերել Ռուսաստանի հարավում կուտակված նախկին ցարական բանակի այն հայ սպաներին և զինվորներին, որոնք վերադարձել էին գերմանական և ավստրո-հունգարական գերությունից, և ուղիներ փնտրել՝ նրանց հայրենիք տեղափոխելու: Վլասևը պետք է հացահատիկ, սննդամթերք, զինամթերք և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ ուղարկեր Հայաստան: Այդ խնդրով փոխգնդապետ Վլասևը, դիմելով Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարին, գրում է. «Այժմյան պայմաններում հայերի

---

760 Ո՛չ Հայաստանի Հանրապետության և ո՛չ Ռուսաստանի Դաշնության արխիվներում մեզ չհաջողվեց գտնել գեներալ Ա. Դենիկինի և Հայաստանի Հանրապետության խորհրդի (խորհրդարանի) փոխադարձ ողջույնի տեքստերը:

761 ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 52, թ. 54:

762 «Զանգ» լրագիր, Երևան, 5 դեկտեմբերի, 1919:

763 Տե՛ս РГ ВА, ф. 39720, оп. 1, д. 62, л. 3:

հետ կապերը ամրապնդելու նպատակով առաջարկում եմ դիմել հետևյալ քայլերին.

1. կազմակերպել և Բաթումի վրայով Հայաստան ուղարկել ինքնուրույն գործողություններ իրականացնելու ունակ ջոկատ,

2. հաց, յուղ, օճառ և այլ մթերքներ, ինչպես նաև զինամթերք ուղարկել Հայաստան,

3. համակողմանի օգնություն ցուցաբերել Հյուսիսային Կովկասի հայ գաղթականներին,

4. Գերմանիայից և Ավստրիայից ժամանած հայ ռազմագերիներին անհապաղ ուղարկել հայրենիք»[764]:

Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցությունը» դրականորեն ընդունեց փոխգնդապետ Վլասևի առաքելությունը Եկատերինոդար և խոստացավ օժանդակել՝ լուծելու նրա առաջադրած խնդիրները: 1918 թ. նոյեմբերի 23-ին Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» նախագահ գեներալ Ա. Դրագոմիրովի հրամանով առաջին խումբ հայ գաղթականները հնարավորություն ստացան Նովոռոսիյսկից, Անապայից մինչև Բաթում, ապա Երևան մեկնել անվճար. ճանապարհի համար յուրաքանչյուր անձի տրամադրվեց 5 փութ ալյուր[765]:

Հանրապետությունում տիրող սովը մեղմելու նպատակով Ա. Ջամալյանը փորձեց փոխգնդապետ Վլասևի միջոցով Ռուսաստանի հարավից Հայաստան ներկրել հացահատիկ և անհրաժեշտ այլ ապրանքներ:

Նույն մտահոգությամբ հայկական բանակին անհրաժեշտ հաց և զինամթերք մատակարարելու նպատակով Հայաստա-

---

[764] РГ ВА, ф. 39720, оп. 1, д. 62, л. 3, ГА РФ, ф. 446, оп. 1, д. 9, л. 3:

[765] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 10:

նի Հանրապետության զինվորական նախարար Հ. Հախվերդյանը 1918 թ. նոյեմբերի 30-ին նամակով դիմեց Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» շտաբի պետ գեներալ Ի. Ռոմանովսկուն. «Երկարատև պատերազմից քայքայված և փախստականներով լեցուն Հայաստանը պարենի, առանձնապես հացի կարիք ունի:

Պարենային ճգնաժամը սուր արտահայտություն է գտել նաև բանակի շրջանում … մտահոգվելով զորքը պարենով ապահովելու հարցով՝ խնդրում եմ գլխավոր հրամանատարի թույլտվությունը՝ աջակցելու Նովոռոսիյսկից Փոթի կամ Բաթում հացի փոխադրման և Վրաստանի տարածքով ազատ ելքի հարցում:

Իմ խնդրանքի կատարումով մեծ օգուտ կտաք հայկական զորքերին, որոնք մեծ կարիք ունեն ոչ միայն պարենի, այլև մատակարարման բոլոր ապրանքների՝ արտաքին աշխարհից գրեթե լրիվ մեկուսացված լինելու պատճառով»[766]:

Կամավորական բանակին կից «Հատուկ խորհրդակցության» նախագահ գեներալ Ա. Դրագոմիրովը 1918 թ. նոյեմբերի 21-ի № 747 գրությամբ նշում է, որ «գլխավոր հրամանատարությունը չի փոխում իր վերաբերմունքը Վրաստանի նկատմամբ: Չթույլատրել հացի ներկրումը, արգելել ապրանքաշրջանառությունը Վրաստանի հետ»[767]: Թեև Կամավորական բանակը թույլատրում էր Հայաստանի Հանրապետությանը ապրանքներ առաքել, սակայն Վրաստանը և Ադրբեջանը, կասկածելով Եկատերինոդարի և Երևանի միջև գաղտնի կապի առկայությանը, ամեն կերպ խոչընդոտում էին հաղորդակցման իրականացումը: Երևան ուղարկվող բեռները շատ հաճախ վրա-

[766] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 61-62:
[767] Նույն տեղում, д. 33, л. 12:

ցական սահմանից վերադարձվում էին Կուբան կամ էլ թալանվում ու առգրավվում էին Վրաստանի և Ադրբեջանի հյուսիսային սահմաններում: Գեներալ Ա. Դենիկինը, համոզվելով, որ Հայաստանի Հանրապետություն ուղարկվող հացի և այլ ապրանքների չնչին մասն է տեղ հասնում, դեկտեմբերի սկզբին արգելեց հետագա առաքումները:

Կամավորական բանակի բարձրագույն հրամանատարությունը և «Հատուկ խորհրդակցությունը», ինչպես վերը նշվեց, դրական վերաբերվեցին փոխգնդապետ Վլասևի առաքելությանը:

1918 թ. նոյեմբերին որպես Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ներկայացուցիչ Երևան գործուղվեց գնդապետ Լեսլին[768]:

Նոյեմբերի 6-ին Գլխավոր շտաբի ռազմածովային նավատորմի բաժնի պետ գեներալ Ա. Լուկոմսկին գնդապետին վկայական է հանձնում, որով Լեսլին օժտվում է հայկական բանակում Կամավորական բանակի զինվորական ներկայացուցչի լիազորություններով[769], իսկ նոյեմբերի 8-ին «Հատուկ խորհրդակցության» նախագահ գեներալ Ա. Դրագոմիրովը հանձնում է մեկ այլ վկայական, որով իրավունք է վերապահում նրան «քաղաքական բոլոր հարցերով հարաբերությունների մեջ մտնելու Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչների հետ»[770]: Գնդապետը միաժամա-

---

[768] Գնդապետ Լեսլին Հայաստանի Հանրապետությունից հեռացել է 1919 թ. հուվարի 9-ին Բրիտանական զինվորական հրամանատարության պահանջով, տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 130:

[769] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 7:

[770] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 6: Տե՛ս նաև «Вопросы Истории», № 2, 1994, էջ 10, **А. Деникин,** Очерки русской смуты, Вооруженные силы юга России, Распад Российкой империи, Октябрь 1918 – январь 1919 (Воспоминания, Мемуары), Минск, 2002, էջ 319-320:

նակ զինվորական ծառայության էր անցնելու հայկական բանակի գլխավոր շտաբում[771] և գաղտնի գործող ռուսական հետախուզական խմբում (ծածկանունը՝ Юрий граф Биленбричъ)[772]:

Գնդապետ Լեսլին գործուղվեց Երևան այն ժամանակ, երբ ավարտվել էր Առաջին աշխարհամարտը, տարածաշրջանում հիմնովին փոխվել էր քաղաքական իրադրությանը: Նոր աշխարհաքաղաքական պայմաններում «Միասնական, անբաժանելի Ռուսաստան» ծրագրով Երևան գործուղված գնդապետ Լեսլին սառը ընդունելություն գտավ հայկական պաշտոնական շրջաններում: Նա Երևանում «հանդիպել էր չափազանց սառը ընդունելության, - գրում է գեներալ Ա. Դենիկինը: - Հայ դիվանագետները նրան ուղղակի հասկացրել էին, որ ավելի լավ է առանց խաղաքարտերը բացելու սպասել, քանի որ հայտնի չէ՝ ո՞վ է ավելի ուժեղ, ո՞վ է իրական Ռուսաստանը դո՞ւք, Կոլչա՞կը, թե՞ բոլշևիկները»[773]: Այդ մասին գնդապետ Լեսլին 1919 թ. մարտի 2-ին գեներալ Ա. Դրագոմիրովին ուղղված նամակում գրում է. «1918 թ. նոյեմբերին ինձ գործուղեցիք Հայաստան՝ որպես Կամավորական բանակի քաղաքական և ռազմական հարցերով ներկայացուցիչ: Դրա հետ մեկտեղ՝ ես պետք է ծառայության անցնեի Հայաստանի գլխավոր շտաբում: Եկատերինոդարից մեկնելուց առաջ գնդապետ Վլասևը (հետագայում պարզվեց, որ նա Հայաստանի ռազմական նա-

---

[771] Տե՛ս ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 68:

[772] Տե՛ս РГА СПИ, ф. 71, оп. 35, д. 195, л. 203:

[773] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 27, «Вопросы Истории», N 2, 1994, с. 105, **А. Деникин,** Очерки русской смуты, Вооруженные силы юга России, Распад Российкой империи, Октябрь 1918 – январь 1919 (Воспоминания, Мемуары), с. 320, **А. Деникин,** Очерки русской смуты: В 3 книгах.- Книга 3/Т. 4, т. 5. Вооруженные силы юга России. Москва, 2003, с. 252:

խարարության հետախույզ է) տեղեկացրեց, որ իբր ինձ ուղարկում են մի երկիր, որտեղ ոչ միայն ողջ ժողովուրդը, այլև կառավարությունը անհամբերությամբ սպասում են մեզ և ցանկանում են ամուր կապեր հաստատել Կամավորական բանակի հետ:

Երևան ժամանելու առաջին իսկ պահից ես հասկացա, որ Եկատերինոդարում ստացված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը: Ճիշտ է, ժողովուրդը և բանակը որոշակիորեն կողմնորոշված են դեպի Կամավորական բանակը, բայց առաջինը քաղցած և հյուծված է, իսկ երկրորդը երկրում ոչ մի դեր չի խաղում, քանի որ ավելի քիչ ռազմական և ֆինանսական միջոցներ ունի, քան ներքին գործերի նախարարությունը»[774]:

1918 թ. նոյեմբերի վերջին Երևանում գնդապետ Լեսլին իր վկայականներ հետ հանձնեց նաև գեներալ Ա. Դրագոմիրովի նոյեմբերի 8-ի պաշտոնական նամակը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին: Դա առաջին պաշտոնական փաստաթուղթն էր, որը, ներկայացնելով «Հատուկ խորհրդակցության» նպատակը և վերջինիս կազմում ընդգրկված տարբեր բնագավառների անվանի անձանց ազգանունները, Հայաստանի Հանրապետությանը առաջարկում էր դաշնակցել Կամավորական բանակի հետ: «Նպատակ ունենալով միավորել ռուսական հողերը, - ասվում էր նամակում, - Կամավորական բանակը կոչ է անում «Անբաժանելի, միասնական Ռուսաստան» ճանաչող նախկին ռուսական կայսրության բոլոր նահանգներին համախմբվելու իր շուրջը՝ բոլշևիկների դեմ համատեղ պայքարելու:

---

[774] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 39, л. 68:

***Կամավորական բանակը առաջարկում է Հայաստանի Հանրապետությանը դաշնակցել իր հետ:*** Նման դաշինքներ կնքվել են Դոնի, Կուբանի, Թերեքի, Ղրիմի և Անդրկասպյան մարզերի հետ»[775]:

Նկատի ունենալով հայության ռուսական անվարան կողմնորոշումը, ինչպես նաև թուրքերից պաշտպանվելու համար Հայաստանի Հանրապետության ձգտումը՝ կապվելու Ռուսաստանի հարավի հետ, անկախ նրա հասարակական-քաղաքական կառուցվածքից, Կամավորական բանակի ղեկավարությունը և նրա «Հատուկ խորհրդակցությունը» համոզված էին, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ չէր լինի այդ դաշինքին: Ուստի առաջարկվում էր դաշնակցել Կամավորական բանակի հետ: Սակայն այդ դաշինքի ընդունումը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող էր անցանկալի հետևանքների հանգեցնել արտաքին աշխարհից կտրված երկրի համար: Հակառուսական դիրքորոշում որդեգրած Վրաստանի համար անընդունելի էր Եկատերինոդար-Երևան հարաբերությունների հաստատումը, այն դեպքում, երբ Ռուսաստանի հարավի հետ միակ կապը Հայաստանի Հանրապետությունը իրականացնում էր Վրաստանի տարածքով: Հայաստանի Հանրապետության կառավարության համար գոյություն ուներ նաև մեկ այլ մտահոգիչ հանգամանք: Դեռևս 1918 թ. հոկտեմբերի 29-ի № 1442 նամակով Ա. Ջամալյանը Թիֆլիսից արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին տեղեկացնում էր. «… Գեներալ Դենիկինը արդեն պատրաստություններ է տեսնում այդ քաղաքին (նկատի ունի Բաթումը – Գ. Պ.) տիրանալու: … Այս քանի օրն ինձ

[775] ГА РФ, ф. 446, оп. 2, д. 33, л. 198:

հետևյալ առաջարկը պետք է անեն (նկատի ունի Կամավորական բանակի ներկայացուցչին – Գ. Պ.), - ***եթե գեներալ Դենիկինը Բաթումը գրավելիս դժվարությունների հանդիպե վրացիների կողմից, արդյոք Դենիկինը կարո՞ղ է հուսալ, որ հայերը վրաց սահմանագլխին այնպես կպահեն իրենց, որ Վրաստանը չկարողանա իր բոլոր զինվորական ուժերը կենտրոնացնել գեներալ Դենիկինի դեմ***»[776]: Այնուհետև Ա. Ջամալյանը նամակում արտահայտում է իր դիրքորոշումը այդ հարցում՝ նշելով, որ «… մենք միանգամայն հեռու ենք գտնվում մեր հարևաններին թիկունքից հարվածելու մտադրությունից, այդ պարզ է ինձ համար:

Սակայն ինչ պատասխան պետք է տալ, եթե այդպիսի մի առաջարկ լինի ինձ, որպեսզի ռուս զորականությունը մեր դեմ ևս չգրգռվի, որ նրանց հաջողության դեպքում կարող էր ծանր հետևանքներ ունենալ մեզ համար: Խնդրում եմ այս մասին ևս որոշ հրահանգներ տալ»[777]:

Ճիշտ է, Բաթումի վրա Կամավորական բանակի հարձակումը ձգձգվեց, և նրա ներկայացուցիչները որևէ առաջարկություն չարեցին, սակայն Հայաստանի Հանրապետության կառավարության համար խիստ մտահոգիչ և զգաստացնող հանգամանք էր նման առաջարկության գաղափարն անգամ, որին երբեք տուրք չտվեցին երկրի իշխանությունները: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հակառակ Կամավորական բանակի պահանջների, պաշտոնական ներկայացուցիչ չգործուղեց Եկատերինոդար, այլ փորձեց օգտագործել հնարավոր բոլոր դիվանագիտական

---

[776] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 66, թթ. 95-96:
[777] Նույն տեղում, թ. 96:

հնարքները նրա հետ հարաբերությունները իրականացնելու գլխավորապես տնտեսական, առևտրական ոլորտներում:

Այսպիսով, հանրապետության գոյության առաջին շրջանում (1918 թ. հունիս - նոյեմբեր) Հայաստանի կառավարությունը, մի շարք լուրջ դրդապատճառներից ելնելով, մի կողմից՝ ձգտել է հարաբերություններ հաստատելու Ռուսաստանի հարավի հետ, իսկ մյուս կողմից՝ նրանց նկատմամբ դրսևորելու խիստ զգուշավորություն: Հայաստանի Հանրապետությունը խուսափում էր Ա. Դենիկինի Կամավորական բանակի հետ որևէ քաղաքական դաշինք կնքելուց և փորձում էր հարաբերությունները սահմանափակել առևտրատնտեսական շրջանակներով:

Ռուսաստանի հարավի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունները պահպանվեցին մինչև Անդրկովկասում բրիտանական զորամասերի հայտնվելը: Նոր պայմաններում այդ հարաբերությունները այլ ընթացք ստացան:

## 3. Հարաբերությունները Ուկրաինայի հետ

Նորանկախ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարևոր նվաճումն էր Ուկրաինայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելը, ինչը ձեռք բերվեց զգալի դժվարություններ հաղթահարելու գնով[778]: Ուկրաինական կողմը հենց սկզբից ողջունեց Հայաստանի Հանրապետության ծնունդը և պատրաստ էր նրա հետ հաստատելու բազմակողմանի կապեր: Հայ և ուկրաինացի ժողովուրդների միջև շփումները դարերի պատմություն ունեն: Պատմական հանգամանքների բերումով հայ ժողովրդի մի հատվածը վաղ ժամանակներից հարկադրված թողել է իր հայրենիքը և հաստատվել մերձակա ու հեռավոր երկրներում, այդ թվում և Ուկրաինայում՝ վայելելով ուկրաինացի ժողովրդի բարյացակամ վերաբերմունքը:

Հայ-ուկրաինական կապերը որակապես նոր աստիճանի բարձրացան, երբ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ: Դրանք կյանքի կոչելու դժվարությունները պայմանավորված էին ինչպես պատմական բարդ ժամանակաշրջանով, այնպես էլ Ուկրաինայում և Հայաստանում նոր ու անկախ պետական կազմավորումների ստեղծմամբ:

Ուկրաինայի հետ հարաբերություններ հաստատելու որոշակի քայլեր կատարել էին Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդի պատվիրակներ Արշակ Ջամալյանն ու Գևորգ Մելիք-Ղարագյոզյանը. Բեռլինից վերադարձի ճանա-

---

[778] Տե՛ս մանրամասն **Գ. Հ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918 – 1920 թթ.), Եր., 2002:

պարհին նրանք հանդիպել էին Կիևի, Խարկովի, Ռոստովի Հայոց ազգային խորհուրդների, ինչպես նաև հայկական ազգային այլ կազմակերպությունների ու միությունների ներկայացուցիչների և հայ հասարակության լայն շրջանների հետ[779]: Նրանք Կիևի հայկական կոմիսարիատի անդամների հետ համատեղ նիստում հանգամանորեն քննարկեցին Հայաստանի անկախությունից հետո ստեղծված քաղաքական նոր իրավիճակը և Ուկրաինայում հայկական կոմիսարիատի հետագա գործունեության հարցը: Համատեղ մշակվեց և 1918 թ. հունիսի 16-ին հաստատվեց հայկական կոմիսարիատի գործունեության հատուկ հրահանգը, որը սահմանում էր նրա կազմակերպչական նոր կառուցվածքն ու հիմնական խնդիրները: Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղարկած գրության մեջ Գ. Մելիք-Ղարագյոզյանը նշում է. «Հարկավոր եմ համարում հիշեցնել, որ ես և Ա. Ջամալյանը մեր վերադարձի ճանապարհորդության ժամանակ հարկավոր համարեցինք վերափոխել հայկական կոմիսարիատը ժամանակավոր կերպով (երկու ամսով, մինչև սեպտեմբերի մեկը) ներկայացուցչության Հայաստանի Հանրապետության… կազմեցինք սրանց համար մի նակազ… հարմարեցնելով նրան այնտեղի իրերի դրությանը և ավելի հեղինակություն տալու համար մեր ներկայացուցիչներին: Այժմ թող կառավարությունը որոշի նրանց դրությունը, սկզբունքորեն որոշի՝ ցանկանո՞ւմ է արդյոք Ուկրաինայում քաղաքական ներկայացուցչություն ունենալ, թե՞ ոչ»[780]:

Հունիսի 16-ի հատուկ հրահանգի համաձայն՝ Կիևի հայկական կոմիսարիատը վերափոխվեց «Ուկրաինայի Կենտրո-

---

[779] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 132, թ. 20:
[780] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, մաս I, թ. 46:

նական ռադայի կառավարությանը կից Հայաստանի կոմիսարիատի կոլեգիայի», որը պաշտոնապես ճանաչվեց Ուկրաինայի Կենտրոնական ռադայի կառավարության կողմից: Կոլեգիայի նախագահ հաստատվեց գնդապետ Միքայել Քրիստափորի Լոմիզեն, անդամներ՝ փոխգնդապետ Մակար Բոգդանի Պոպովը և կապիտան Աշոտ Նիկոլայի Տոնյանցը: Ինչպես տեսնում ենք, բոլորն էլ զինվորականներ էին, և դա բնական է, քանի որ Ուկրաինայում գործող հայկական համայնքի առավել ակտիվ, կազմակերպված ու քաղաքական բարձր գիտակցությամբ մարդիկ զինվորականներ էին:

Կոմիսարիատի կոլեգիան հարաբերությունների մեջ է մտնում Ուկրաինայի կառավարական, հասարակական և ազգային բոլոր հիմնարկների ու կազմակերպությունների հետ: Այն յուրատեսակ կապող օղակ էր Կենտրոնական ռադայի և Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդի միջև՝ ղեկավարվելով վերջինիս հրահանգներով ու ցուցումներով: Իսկ 1918 թվականի սեպտեմբերի 15-ին Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդի գործունեության դադարեցումից հետո կոմիսարիատի կոլեգիան Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության միջոցով կապվում է ՀՀ կառավարության հետ և ստանում հրահանգներ ու ցուցումներ: Ինչպես նշվել է, հուլիսի 22-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ էր նշանակվել Արշակ Ջամալյանը[781], որն էլ իրականացնում էր կապը Կիևի հայկական կոմիսարիատի կոլեգիայի և Հայաստանի Հանրապետության միջև:

[781] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 26, թ. 5:

Իր նոր կարգավիճակին համապատասխան՝ որոշվեցին կոմիսարիատի կոլեգիայի խնդիրները. «ա) հարաբերություններն Ուկրաինայի կառավարության, ինչպես նաև Ուկրաինայում գտնվող դիվանագիտական և ազգային ներկայացուցիչների հետ, բ) հարաբերությունները բոլոր պետական, հասարակական և այլ հիմնարկությունների հետ, գ) տեղեկություններ հայտնելը պարբերական մամուլին ըստ կոմիսարիատի կոլեգիայի հայեցողության, ինչպես նաև հետևելը մամուլում ընդհանուր քաղաքական և հատկապես հայ ժողովրդին առնչվող հարցերին, դ) ռուսական բանակի հայ ռազմագերիների, նախկին սպաների, բժիշկների, զինվորների և հայ քաղաքացիների հայրենիք տեղափոխելու խնդիրը և այլ պարտականությունները»[782]:

Առաջադրված խնդիրները հաջողությամբ լուծելու նպատակով կոմիսարիատի կոլեգիայի կառուցվածքում ստեղծվեցին գաղթականական և սոցիալական օգնության, տեղեկատվության, ռազմագերիների, հրատարակչական, վիճակագրական, կուլտուր-լուսավորական և որ կարևոր է՝ Հայաստանի և Ուկրաինայի միջև առևտրատնտեսական, ապրանքափոխանակման բաժիններ: Նման ենթակառուցվածքների ստեղծումն ինքնին վկայում է ստեղծված նոր պայմաններում կոմիսարիատի կոլեգիայի ծրագրած լայն գործունեության մասին:

Կոմիսարիատի կոլեգիան խորապես գիտակցում էր, որ ինքը հանդես է գալիս որպես նորաստեղծ հայկական պետության ներկայացուցիչ և այդ դիրքերից էլ կազմակերպում էր իր գործունեությունը: Կոմիսարիատի կոլեգիայի որոշմամբ նախագահ Միքայել Լոմիզեն ուղերձով դիմում է Ուկրաինայի

---

[782] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, մաս I, թ. 70:

Կենտրոնական ռադայի արտաքին գործերի նախարար Դմիտրի Դորոշենկոյին. «Պարոն նախարա՛ր, թույլ տվեք ինձ, որպես Ուկրաինայի կենտրոնական ռադայի կառավարությանը կից Հայաստանի կոմիսարիատի կոլեգիայի նախագահի, հանձին Ձեզ ողջունել անկախ Ուկրաինայի գոյությունը… Անդրկովկասյան Սեյմի (1918 թ. մայիսի 26 - Գ.Պ.) ցրումով Հայաստանը Վրաստանից և Ադրբեջանից հետո իրեն հռչակել է անկախ հանրապետություն, և այժմ նրա հայացքն ուղղված է դեպի եղբայրական Ուկրաինան, որի հետ հայկյան ժողովուրդը դարերի տնտեսական ու մշակութային կապեր է ունեցել: Թույլ տվեք հավատալ, պարոն նախարար, որ Ձեր կողմից աջակցություն կցուցաբերվի միջազգային ծանր վիճակում գտնվող Հայաստանի և հայ ժողովրդի կարիքների նկատմամբ»[783]: Իր պատասխան ուղերձում Ուկրաինայի արտաքին գործերի նախարարը, շնորհավորելով Հայաստանի Հանրապետության հռչակումը, պատրաստակամություն հայտնեց «… ամենայն աջակցություն ցուցաբերել Հայաստանի կոմիսարիատի կոլեգիայի գործունեությանը և առհասարակ Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի նկատմամբ»[784]:

Անկախ Հայաստանի Հանրապետությանը հատուկ ուղերձով ողջունեց Անդրկովկասում Ուկրաինայի Կենտրոնական ռադայի ներկայացուցիչ Վլադիմիր Գիրչենկոն՝ հավաստիացնելով, որ Ուկրաինան սիրով կպարենավորի Հայաստանը և կբացի բարձրագույն դպրոցների դռները հայ երիտասարդության առջև: Բացի այդ՝ Վ. Գիրչենկոն երկու հանրապետությունների միջև առևտրական հարաբերություններն ամրաց-

783 Նույն տեղում, թ. 24:

784 Նույն տեղում:

նելու համար անհրաժեշտ էր համարում հիմնել ուկրաինա-հայկական առևտրական պալատ: «Մենք ցանկանում ենք, - նշում է Գիրչենկոն, - որ հայ հասարակությունը և ուկրաինա-կան ժողովրդի լայն խավերը ապրեն այն գիտակցությամբ, թե Հայաստանը հենց իր շահերի տեսակետից պետք է աշխատի հարևան ուկրաինական ժողովրդի հետ եղբայրական համա-ձայնությամբ: Մենք հավատում ենք, որ մեր բարեկամական զգացմունքները արձագանք կգտնեն հայ ժողովրդի մեջ, որին մեր ամբողջ հոգով բարեմաղթում ենք բարգավաճում և եր-ջանկություն»[785]:

Ուղերձների փոխանակումն ու ողջույնի խոսքերը գրեթե պաշտոնական, դիվանագիտական մակարդակի էին, ինչը վկայում է հայկական և ուկրաինական հանրապետություններ-ի միջև պետական հարաբերությունների ձևավորման ոչ սո-վորական գործընթացի մեկնարկի մասին:

Ինչպես տեսանք, Ուկրաինայում Հայկական կոմիսարիա-տի կոլեգիայի կարգավիճակի և գործունեության ոլորտների որոշման հարցը թողնված էր Հայաստանի կառավարությանը, որը անհասկանալի պատճառներով ձգձգում էր դրա լուծումը, իսկ այդ ընթացքում Հայաստանի կոմիսարիատի կոլեգիան շարունակում էր ակտիվորեն գործել: 1918 թվականի սեպտեմ-բերի 2-ին Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդին կոմիսարիատի ուղարկած զեկուցագրում նշվում է, որ գործու-նեության երկու ամսվա ընթացքում զգալիորեն կարգավորվել է կոլեգիայի ապարատի աշխատանքը, ամուր կապ է հաս-տատվել Կենտրոնական ռադայի բոլոր նախարարություններ-ի հետ, «…թե Ուկրաինայի Կենտրոնական ռադայի իշխանու-

[785] «Զանգ» լրագիր, Երևան, 28 օգոստոսի, 1918 թ.:

թյունների և թե ուկրաինական ժողովրդի կողմից ամենայն ուշադրություն և պատրաստակամ վերաբերմունք է ցուցաբերվում կոմիսարիատի ներկայացուցիչների և առհասարակ հայ ժողովրդի նկատմամբ»[786]: Հայկական կոմիսարիատի կոլեգիայի ակտիվ աշխատանքի մասին է վկայում նաև Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանին Վ. Գիրչենկոյի հղած նամակը, որտեղ ասված է. «Կիևում ես կապի մեջ մտա Հայաստանի կոմիսարի հետ: Ձեր կոմիսարի գործունեությունը բարձր է ամեն ինչից… մեծ հեղինակություն է վայելում Ուկրաինայում»[787]:

Կոմիսարիատի կոլեգիային և նրա նախագահ Միքայել Լոմիզեին հաջողվել էր լուծել մի շարք հարցեր, որոնցից ամենակարևորը, թերևս, Առաջին աշխարհամարտի տարիներին հատկապես Արևմտյան Հայաստանից և այլ վայրերից Ուկրաինայում ապաստանած տասնյակ հազարավոր հայերի իրավունքները հարգելու և քաղաքացիություն շնորհելու հարցն էր: Այդ խնդրով Մ. Լոմիզեի առաջարկը Կենտրոնական ռադայի արտաքին գործերի նախարար Դորոշենկոյի կողմից հարգվեց, կայացվեց համաձայնություն, ըստ որի՝ Ուկրաինայում ամբողջ հայ բնակչության կյանքի բոլոր հարցերի տնօրինությունն անցնում էր կոմիսարիատի կոլեգիային: Վերջինիս իրավունք էր տրվում հայ քաղաքացիներին հանձնել վեցամսյա ժամկետով հատուկ վկայականներ, որոնք փոխարինելու էին օրինական անձնագրին[788]: Դա ինչ-որ չափով թեթևացնում էր փախստական հայության վիճակը, իրավական հիմք ստեղծում Ուկրաինայում նրա գոյության համար: Հայ

---

[786] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, մաս I, թ. 23:
[787] Նույն տեղում, թ. 59:
[788] Տե՛ս նույն տեղը, թ. 24:

բնակչության իրական վիճակը ու նրա կենսական խնդիրները պարզելու նպատակով կոմիսարիատի կոլեգիան ամրապնդեց կապը Կիևի, Օդեսայի, Խարկովի, Նիկոլաևի և մյուս քաղաքների Հայոց ազգային խորհուրդների, զանազան ազգային մարմինների՝ միությունների, կազմակերպությունների հետ, նրանց համախմբեց իր շուրջը: Միաժամանակ ազգային մարմիններ ստեղծվեցին հայաբնակ այն քաղաքներում, որտեղ զգացվում էր դրանց անհրաժեշտությունը: Այնուհետև կոմիսարիատի կոլեգիան որոշեց Կիևում գումարել Ուկրաինայի և Մոլդովայի հայ համայնքների ներկայացուցիչների համագումար՝ Հայոց ազգային խորհուրդների գործունեությունը համակարգելու, միացյալ կազմակերպություններ և դրանց ղեկավար կենտրոններ ստեղծելու հարցերը քննարկելու համար: Կոլեգիայի մշակած նախագիծը լայն արձագանք գտավ հայաբնակ վայրերում: Թեև 1918 թ. Ուկրաինայում ստեղծված օբյեկտիվ դժվարությունների հետևանքով համագումարը չկայացավ, բայց կոմիսարիատի կոլեգիան շարունակում էր իր ակտիվ գործունեությունը՝ հաղթահարելով տնտեսական, քաղաքական, տեխնիկական և ֆինանսական մի շարք դժվարություններ: Հարկ է նշել, սակայն, որ կոմիսարիատի կոլեգիայի լիարժեք գործունեության ամենամեծ խոչընդոտն այն էր, որ չուներ դիվանագիտական ներկայացուցչության կարգավիճակ ու լիազորություններ: Ավելին՝ որպես կոմիսարիատ էլ նրա լիազորությունները սահմանափակ էին, պահանջվում էր ընդլայնել դրանք մինչև Ուկրաինայում դիվանագիտական ներկայացուցչություն բացելը: Ըստ այդմ՝ կոմիսարիատի կոլեգիայի հանձնարարությամբ նախագահ Մ. Լոմիզեն Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդին հղեց երկու զեկուցագիր (1918 թվականի սեպտեմբերի 1-ի № 1136 և սեպտեմբե-

րի 2-ի № 1137), որոնցում ներկայացնելով կոմիսարիատի կոլեգիայի երկամսյա գործունեությունը՝ պահանջում էր, որ իրեն, որպես Ուկրաինայում անկախ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ, օժտեն նոր լիազորություններով: Տարօրինակ է, բայց կոմիսարիատի կոլեգիան կարծում էր, որ հավատարմագրված անձերի, դեսպանների նշանակումն այդ պահին կլինի ժամանակավրեպ, և որ դեռևս կարելի է բավարարվել միայն կոմիսարիատի՝ որպես հայ ժողովրդի շահերի պաշտպանի գործունեությամբ[789]: Սովորաբար վկայակոչվում էր հանրապետության հետ անմիջական կապի ու ճանապարհների բացակայությունը, մատնանշվում էին գլխավորապես տեխնիկական խոչընդոտները: Անշուշտ, դրանք կային, և դիվանագիտական ներկայացուցչություն ունենալու համար պետք է ստեղծվեին գործունեության անհրաժեշտ պայմաններ: Այդուհանդերձ, նման իրավիճակում էլ կարելի էր Ուկրաինայում ունենալ Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչ: Այլապես, ինչպես երևում է կոլեգիայի վերոհիշյալ զեկուցագրերից, կոմիսարիատի կոլեգիան ինչքան էլ մեծ լիազորություններ ունենար, դեռևս չէր արտահայտում և ընդգծում Հայաստանի Հանրապետության սուվերենությունը (ինքնիշխանությունը) որպես անկախ և ինքնուրույն պետություն: Կոմիսարիատի կոլեգիայի զեկուցագիրը ուղարկվեց Հայաստանի Հանրապետության կառավարություն, որը 1918 թվականի հոկտեմբերի 8-ի նիստում քննարկեց Ուկրաինայի Կենտրոնական ռադայի կառավարությանը կից Հայաստանի կոմիսարիատի կոլեգիային լիազորություններ տալու հարցը և, առանց խորամուխ լինելու խնդրի կարևո-

[789] Տե՛ս նույն տեղը, թ. 23-24:

ության մեջ, որոշեց. «Ի նկատի ունենալով այն, որ հաղորդակցությունը Կիևի և Երևանի միջև խիստ դժվար է, արդի պայմաններում Ուկրաինայի կառավարությանը կից ունենալ Հայաստանի ներկայացուցչություն, անհարմար է: Առաջարկել Կիևի կոմիսարիատին պահպանել իր գոյությունը իբրև ազգային ներկայացուցչություն տեղական հայերի կարիքները բավարարելու համար, այլ ոչ իբրև Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն, որը կոչված լինի դնել և լուծել քաղաքական բնույթ կրող հարցեր:

Խնդրել կոմիսարիատին շարունակել Ուկրաինայում շաքար և ցորեն գնելու իրավունք ստանալու նախապատրաստական աշխատանքները:

Այս գործը հնարավորելու համար հանձնարարել Ներքին գործերի նախարարին, ֆինանսների նախարարի հետ մեկտեղ ուղարկել Կիև մի հատուկ մարդ՝ անհրաժեշտ լիազորություններով օժտված»[790]:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, փոխանակ ընդլայնելու Կիևի հայկական կոմիսարիատի կոլեգիայի լիազորությունները, կրճատեց դրանք՝ այն դիտելով սոսկ տեղական հայերի կարիքները բավարարող ազգային ներկայացուցչություն: Մինչդեռ, ինչպես նշեցինք վերևում, արդեն որոշակի քայլեր էին կատարվել կոմիսարիատի կոլեգիան Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության վերածելու ուղղությամբ: Կառավարությունն ինքն էլ գիտակցում էր, որ արտերկրում որևէ հարց լուծելու համար Հայաստանն անպայման պետք է ունենա հատուկ լիազորություններով օժտված մարմին: Ուստի նա Կիևի հայկական կո-

[790] ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 2, թ. 60:

միսարիատի կոլեգիային խնդրում է նախապատրաստական աշխատանքներ տանել Ուկրաինայում շաքար և ցորեն գնելու իրավունք ստանալու համար, այնինչ կոմիսարիատի կոլեգիան նման լիազորություններ չուներ: Դրա համար էլ որոշվում է Կիև ուղարկել անհրաժեշտ լիազորություններով օժտված մեկին:

Հայաստանի Հանրապետության կառավարության այս որոշումը, փաստորեն, կասեցրեց Ուկրաինայում պաշտոնական դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու արդեն սկսված գործընթացը: Այն պատճառ եղավ կրկին ապավինելու տեղական, մասնավոր անձանց գործունեությանը: Այնուամենայնիվ, հենց մասնավոր անձանց նախաձեռնությամբ էլ սայլը տեղից շարժվեց՝ արձանագրելով որոշակի առաջընթաց: Այս տեսակետից մեծ է Գրիգոր Սերգոյի Զամոյանի մատուցած ծառայությունը: 1918 թ. հուլիսի կեսերին Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդի հատուկ հանձնարարականով նա մեկնեց Մոսկվա՝ Աստրախանում հավաքված 30 հազար հայ գաղթականներին Հայաստան տեղափոխելու համար խորհրդային կառավարության հետ բանակցելու առաքելությամբ: Օբյեկտիվ պատճառով Գ. Զամոյանը չկարողացավ կատարել այդ հանձնարարությունը, բայց ճանապարհին մնաց Կիևում և զբաղվեց կոմիսարիատի կոլեգիայի գործերով: Բանն այն է, որ Գ. Զամոյանը Կիևում հանդիպեց Խորհրդային Ռուսաստանի խաղաղարար պատվիրակության ղեկավար Ռակովսկուն և նրանից Մոսկվա մեկնելու թույլտվություն խնդրեց՝ իրեն հանձնարարված գործը կատարելու համար: Ռակովսկին թեև Գ. Զամոյանին ընդունեց շատ սիրալիր, բայց խորհուրդ չտվեց մեկնել Մոսկվա՝ պատճառաբանելով, որ Բաքվի 26 կոմիսարների ձերբակալման և խորհրդային զորքե-

րի զինաթափման գործողությունների հետևանքով խորհրդային կառավարությունը փոխել է իր վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ռակովսկին միաժամանակ խոստանում է հարցում անել Կենտրոն, բայց Մոսկվայից պատասխանի ուշանալու պատճառով Գ. Ջամոյանը որոշում է մնալ Կիևում և զբաղվել կոմիսարիատի կոլեգիայի խնդիրներով: Նա նամակով դիմում է Մոսկվայում գտնվող Հակոբ Զավրիևին, որպեսզի վերջինս ժամանի Կիև, և միասին քննարկեն կոմիսարիատի կոլեգիայի հետագա գործունեության ուղղությունները[791]:

Գ. Ջամոյանը կոմիսարիատի կոլեգիայի գործունեությանը մեծապես աջակցեց հատկապես Հայաստանին պարեն, շաքար ու ցորեն ուղարկելու հարցերում: Բայց այդ ընթացքում նա խորապես համոզվեց, որ Ուկրաինայի Կենտրոնական ռադայի կառավարությանը կից Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիվանագիտական ներկայացուցչության բացակայությունը մեծապես խոչընդոտում է առաջադրված խնդրի լուծումը: Ըստ այդմ՝ 1918 թվականի սեպտեմբերի կեսին նա մեկնում է Բեռլին՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Համո Օհանջանյանի և մյուս անդամների հետ խորհրդակցելու: Ստանալով Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ ունենալու մասին Հ. Օհանջանյանի համաձայնությունը՝ Գ. Ջամոյանը վերադառնում է Կիև և հոկտեմբերի 12-ին հեռագրում Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանին՝ տեղեկացնելով, որ «Համո Օհանջանյանը առաջարկել է ղեկավարել ներկայացուցչությունը Ուկրաինայում մինչև կառավարության կարգադրու-

[791] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, մաս I, թ. 37:

թյունը, որի մասին հաղորդել է Խատիսովին»[792]: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 13-ին, Գ. Ջամոյանը կոմիսարիատի կոլեգիայի անդամ Աշոտ Տոնյանցի միջոցով Ա. Ջամալյանին ուղարկում է մի զեկուցագիր, որտեղ ներկայացնում է Ուկրաինայի քաղաքական կացությունը, կոմիսարիատի կոլեգիայի գործունեությունը և այն դիվանագիտական ներկայացուցչության վերածելու ուղղությամբ իր ձեռնարկած առաջին քայլերը: Մինչ այդ՝ հոկտեմբերի 1-ին, Հ. Օհանջանյանը Բեռլինից նամակ է հղում Կոստանդնուպոլսում գտնվող Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամ, արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանին. «Կիևում մենք չունենք պաշտոնական ներկայացուցչություն, որը շատ կարևոր է, որովհետև Կիևը հիմա դառել է կենտրոն ամբողջ Ռուսաստանի բոլոր հոսանքների… Դեպի մեզ վերաբերումը Ուկրաինայի կառավարության կողմից և հասարակության կողմից՝ շատ լավ է: Հարկավոր է ունենալ այնտեղ ներկայացուցիչ, որ կարող է շատ բան անել: Ես խնդրեցի Գ. Ջամոյանին, որ միառժամանակ մնա այնտեղ, մինչև որ արտաքին գործոց նախարարը նշանակե պաշտոնապես կամ իրեն՝ Գ. Ջամոյանին, կամ ուրիշին: Խնդրում եմ ուղարկել ինձ նրա համար մի պաշտոնական գրություն, որով նա կարողանա ներկայանալ իբրև մեր կառավարության ներկայացուցիչ»[793]:

1918 թ. հոկտեմբերի 15-ին Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը իր խորհրդակցության 32-րդ նիստում քննարկեց Համո Օհանջանյանի ստորագրությամբ հոկտեմբերի 1-ի նամակը և որոշեց «… ուղարկել մի գրություն Գ. Ջամոյանի անվամբ, նշանակելով նրան

---

[792] Նույն տեղում, թ. 63:

[793] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 72:

ներկայացուցիչ Ուկրաինայի համար»[794], իսկ նոյեմբերի սկզբին Կոստանդնուպոլսից Ալեքսանդր Խատիսյանը Գ. Զամոյանի անվամբ հավատարմագիր ուղարկեց Կիև.

«*Ուկրաինայի արտաքին գործերի նախարարին*

*Ձերդ գերազանցություն*

Պատիվ ունեմ Ձեզ տեղեկացնելու, որ իրավաբանության դոկտոր պարոն Գրիգոր Զամոնը (Զամոյան - Գ. Պ.) Հայաստանի Հանրապետության հավատարմատարն է Ուկրաինայի կառավարությունում՝ լիազորված լինելով զբաղվել Հայաստանին առնչվող բոլոր խնդիրներով:

Ընդունեք խնդրեմ,

Ձերդ գերազանցություն,

Լավագույն հարգանքների հավաստիքը

*Կոստանդնուպոլիս 1918 թ. հոկտեմբերի 22*

*Հայաստանի Հանրապետության*

*Արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյան»*[795]:

Նոյեմբերի 19-ին Գ. Զամոյանն իր հավատարմագիրը հանձնեց Ուկրաինայի նորանշանակ արտաքին գործերի նախարար Գ. Աֆանասևին: Այդ պահից Կիևում Հայկական կոմիսարիատի կոլեգիան դադարեց գործելուց՝ վերակառուցվելով Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության[796]:

Ուկրաինայի իշխանությունները ջերմորեն ընդունեցին Կիևում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչի նշանակումը, որի մասին Գ. Զամոյանը տեղե-

---

[794] Նույն տեղում, գ. 12, թ. 100:

[795] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, մաս I, թ. 78:

[796] Տե՛ս «Кавказское дело», 11 декабря 1918:

կացրել է. «Հետմանի ժամանակվա մինիստրական խորհուրդը միշտ խանդավառ կերպով է վերաբերվում դեպի Հայաստանը: Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը ընդունվեց դիվանագիտական կորպուսի մեջ իբրև հավասարազոր անդամ և ոչ ոք այդ դիվանագիտական խորհրդի անդամներից կասկած չհայտնեց: Մեր կառավարության ներկայացուցչին ընդունում են այնպես, ինչպես Շվեյցարիայի, Իտալիայի, Բուլղարիայի և այլ նման պետությունների ներկայացուցիչներին»[797]: Դա ինքնին վկայում էր Հայաստանի նորաստեղծ պետության միջազգային ճանաչման մասին, քանզի նա դառնում էր համաշխարհային հանրության անդամ՝ որպես ինքնուրույն, սուվերեն հանրապետություն՝ իր միջազգային կապերով, որը, անշուշտ, պատմական կարևոր իրողություն էր երկու երկրների քաղաքական, դիվանագիտական հարաբերությունների պատմության մեջ:

Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը կազմակերպման առաջին օրվանից որոշեց իր կազմը, կառուցվածքն ու խնդիրները: Ներկայացուցչության կազմի մեջ մտնում էին՝

1. Դիվանագիտական ներկայացուցիչ՝ Գ. Զամոյան,
2. Խորհրդական առևտրատնտեսական գծով՝ Մ. Լոմիզե,
3. Քարտուղար՝ Օ. Խազիզյան,
4. Զինվորական կցորդ՝ Ա. Տոնյանց,
5. Սպասարկող անձնակազմ՝ թարգմանիչ, մեքենագրուհի, սուրհանդակ, գանձապահ:

Իբրև հաջորդ քայլ՝ հյուպատոսական հիմնարկներ բացվեցին Կիևում, Օդեսայում, Խարկովում:

---

[797] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, մաս I, թ. 117:

Առանց հապաղելու դիվանագիտական ներկայացուցչությունը ձեռնամուխ եղավ իր առաջնահերթ խնդիրները լուծելուն՝ Ուկրաինայում հայ քաղաքացիների, գաղթականների, ռազմագերիների իրավունքների ու շահերի պաշտպանություն, Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև բարեկամական, քաղաքական, դիվանագիտական, առևտրատնտեսական հարաբերությունների հաստատում և զարգացում: Հարկ է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը ստիպված էր գործել Ուկրաինայի ներքին և արտաքին բավականին լարված ու ծանր պայմաններում, իսկ դա, ինչ խոսք, բացասաբար էր անդրադառնում նրա աշխատանքի վրա:

Այս տեսակետից վիճակն ավելի վատթարացավ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների հետևանքով. զրկվելով գերմանական զորքերի աջակցությունից՝ հետման Սկորոպադսկին կորցրեց իշխանությունը Ուկրաինայում: 1918 թվականի դեկտեմբերի 14-ին Կիևում իշխանությունը վերցրեց Դիրեկտորիան, և Ուկրաինան հռչակվեց ժողովրդական հանրապետություն: Ամբողջ իշխանությունը կենտրոնացվեց հինգ հոգուց բաղկացած Դիրեկտորիայի ձեռքում՝ Վիննիչենկոյի նախագահությամբ: Սակայն դրանից հետո էլ երկրում քաղաքական կայունություն չհաստատվեց: 1919 թ. Ուկրաինան հայտնվեց այնպիսի քաոսային իրավիճակում, որպիսին չի տեսել եվրոպական և ոչ մի երկիր: Բավական է ասել, որ նրա տարածքում միաժամանակ գործում էին թշնամական վեց բանակներ՝ ուկրաինական, բոլշևիկյան, Սպիտակ, Անտանտի, լեհական ու անարխիստների: Մեկ տարուց պակաս ժամանակահատվածում Կիևը հինգ անգամ ձեռքից ձեռք անցավ: Քաղաքներն ու ամբողջ շրջաններ

կտրված էին իրարից բազմաթիվ ռազմաճակատներով: Կապն արտաքին աշխարհի հետ գրեթե խզված էր[798]: Կային քաղաքներ, որոնք բաժանված էին մասերի, և ամեն մի մասում տիրում էր մի անկախ իշխանություն: Օրինակ՝ Եկատերինոսլավում երկաթուղու կայարանն ու երկաթգիծը գտնվում էին գերմանացիների, քաղաքի կենտրոնը՝ հետմանի, միջին տարածությունը՝ գեներալ Ա. Դենիկինի, իսկ մնացած մասը՝ բոլշևիկների ձեռքում:

Հասկանալի է, որ նման իրավիճակում Ուկրաինայի նոր իշխանությունը՝ Դիրեկտորիան, չէր կարող հսկողություն իրականացնել ամբողջ երկրի նկատմամբ, վարել ներքին և արտաքին ճիշտ ու արդյունավետ քաղաքականություն:

Ահա այդպիսի պայմաններում էր գործում Կիևում նորաստեղծ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը, որի նկատմամբ ուկրաինական նոր իշխանությունը ևս դրսևորեց բարյացակամ վերաբերմունք: Այդ մասին Գ. Ջամոյանը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ներկայացրած 1919 թ. հունվարի 23-ի զեկուցագրում տեղեկացնում է. «Մինիստրական պարապմունքներն սկսելուն պես՝ ես այցելեցի արտաքին գործերի նախարար Վլադիմիր Չեխովսկուն, որն ինձ ընդունեց սիրալիր կերպով և ուշադիր վերաբերմունք ցույց տալով, խնդրեց իր ողջույնը հայտնել ազատասեր հայ ժողովրդին, ավելացնելով, որ նոր իշխանությունը անպայման ընդունում է Հայաստանի Հանրապետության անկախությունը և ցանկալի է համարում սերտ կապ հաստատել երկու հանրապետություն-

[798] Տե՛ս **Орест Субтельный,** Украина: История, Киев, 1994, էջ 455-456:

ների միջև»[799]: Նույն թվականի փետրվարի 8-ին արտաքին գործերի նախարար Վ. Չեխովսկին Հայաստանի Հանրապետությունում իր երկրի արտակարգ դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար նշանակեց Ժան Կրասկովսկուն:

Յուրաքանչյուր դիվանագիտական ներկայացուցչության արդյունավետ գործունեության կարևորագույն պայմաններից մեկը իր երկրի հետ ունեցած կապի և հաղորդակցության միջոցների անխափան աշխատանքն է: Սակայն նշված ժամանակահատվածում Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության և Հայաստանի կառավարության միջև այդ կապը շատ թույլ էր, ինչը խիստ բացասաբար էր անդրադառնում նրա գործունեության վրա: Եվ բնավ պատահական չէ, որ հունվարի 23-ի իր զեկուցագրում Գ. Զամոյանը դժգոհությամբ հայտնում էր, որ «… չորրորդ զեկուցումն է գրում առանց ստանալու կառավարությունից ղեկավարող ցուցումներ»[800]: Ահա թե ինչու իր բոլոր զեկուցագրերում նա խնդրում է իրեն ազատել նման ծանր պարտականությունից:

Ոչինչ չկա զարմանալի. Գ. Զամոյանի պես եռանդուն գործչի նյարդերը նույնպես տեղի էին տալիս: Բանն այն է, որ դժվարությունները ոչ միայն օբյեկտիվ էին, այլև սուբյեկտիվ: Ընդ որում՝ դրանք բխում էին ոչ միայն Ուկրաինայի իրավիճակից, այլև Հայաստանի: Օրինակ՝ ներկայացուցչության ստեղծումից անցել էր վեց ամիս, բայց դեռ չկար այդ մասին նախարարների խորհրդի որոշումը: Իսկ ամենից ծանրը, իհարկե, ներկայացուցչության ֆինանսական կացությունն էր: Ճիշտ է, կառավարությունը վաղօրոք նախատեսել էր հատ-

---

[799] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, մաս I, թ. 117:
[800] Նույն տեղում, թ. 119:

կացնել չնչին մի գումար՝ ամսական 15 հազար ռուբլի, բայց դա էլ չէր հաստատվել ու չէր ուղարկվում: Այս տեսակետից խիստ հատկանշական էր, որ Գ. Զամոյանը իր գրություններից մեկում դժվարությամբ ստեղծածը կորցնողի ցավով ու ափսոսանքով խնդրում էր կառավարությանը «առանց հաշվի առնելու Ուկրաինայում քաղաքական փոփոխությունները պահել արդեն կարգի դրած ապարատը և աջակցել նրանց և՛ նյութապես, և՛ բարոյապես»[801]: Որպես փրկության վերջին հույս՝ Գ. Զամոյանը մի հանգամանալից զեկուցագիր կազմեց դիվանագիտական ներկայացուցչության և Օդեսայի գլխավոր հյուպատոսական հիմնարկի կազմի ու խնդիրների մասին և ուղարկեց Հայաստանի կառավարության հաստատմանը:

Զեկուցագիրը դիվանագիտական ներկայացուցչության զինվորական կցորդ Ա. Տոնյանցը մարտի 20-ին հանձնում է արտաքին գործերի նախարար Սիրեկան Տիգրանյանին, որը նույն օրը ներկայացնում է Նախարարների խորհրդի նիստի քննարկմանը: Հարցը լսելուց հետո որոշվում է՝ «հանձնարարել Արտաքին գործերի նախարարին՝ նախահաշիվ և օրինագիծ ներկայացնել Նախարարների խորհրդին»[802]: Դրանից հետո անցավ ավելի քան երկու ամիս, և, ի վերջո, նույն թվականի մայիսի 24-ին Նախարարների խորհուրդը հաստատեց Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կազմը[803]:

Ցավոք, այդ որոշումն արդեն ուշացած ու ժամանակավրեպ էր, որովհետև մինչ այդ Ուկրաինայում տեղի ունեցած քաղաքական կտրուկ փոփոխության հետևանքով շուրջ

---

[801] Նույն տեղում:
[802] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 48:
[803] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 48, թ. 18:

մեկ ամիս առաջ՝ ապրիլի վերջերին, Ուկրաինայից հեռացել էր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը: Իսկ թե ի՞նչն էր դրա հիմնական պատճառը, սպառիչ պատասխանը կարդում ենք 1919 թ. ապրիլի 30-ին Հայաստանի Հանրապետության արտգործնախարարին Գ. Ջամոյանի ներկայացրած զեկուցագրում. «Ես անձամբ ինձ համար հնարավոր չհամարեցի մնալու Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցիչը Խորհրդային իշխանության մոտ, առանց այդ մասին իմ կառավարությունից պաշտոնական լիազորություն ունենալու: Իմ կարծիքով Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ մնալը խորհրդային իշխանության մոտ այն ժամանակ, երբ Անտանտան Հայաստանը նկատում է իբրև դաշնակից և կռվող կողմ աննպատակահարմար կլիներ և կհակասեր Հայաստանի արտաքին քաղաքականության ոգուն: Ահա այս նկատառումներից ելնելով ես հարկադրված ժամանակին հեռացա Օդեսայից և եկել եմ Ձեզ պարոն նախարար զեկուցում տալու և Ձեզանից հրահանգներ ու ցուցումներ ստանալու»[804]: 1919 թվականի հունիսի սկզբին Գ. Ջամոյանը Հայաստանի կառավարությանը հաշվետվություն ներկայացրեց Ուկրաինայում հայկական դիվանագիտական առաքելության կատարած աշխատանքների մասին: Բարձր գնահատելով Ուկրաինայում կատարած աշխատանքը՝ Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը 1919 թվականի հունիսի 30-ին որոշեց Գրիգոր Սերգոյի Ջամոյանին նշանակել Սիբիրի (ծովակալ Կոլչակի)

[804] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 73, մաս I, թ. 128:

կառավարությանը կից Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ[805]:

Այսպիսով, Ռուսաստանի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների և Ուկրաինայի հետ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կապերի հաստատումն ու տարատեսակ հարաբերությունների ձևավորումն ունեցան դրական նշանակություն Հայաստանի և հայ ժողովրդի քաղաքական անվտանգության և առևտրատնտեսական ու հումանիտար օժանդակության տեսակետից:

[805] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս I, թ. 148:

# ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ


**Ա**

Աբաշիձե Կ. – 23
Աբդուլ Համիդ – 87
Աբեղյան Արտաշես
Ա-Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) – 181, 188, 272, 368
Ահարոնյան Ավետիս – 31-32, 106, 120-122, 126, 187-188, 190, 195, 207-208, 212, 220, 238, 244-245, 251, 317, 337, 341, 345, 347-348, 350, 355, 359-360, 362, 366, 372
Աղաբաբյան Ա. – 342
Աղբալյան Նիկոլ – 28, 31, 190
Անդրանիկ – 180, 237
Առաքելյան Վարդան – 310-311
Աստվածատրյան Ար. – 427
Աստրով Ն. – 415
Ավագյան Արսեն – 71
Ավագյան Գ. – 26
Ավալով Զ. – 118, 128, 130, 134-135, 137, 141-142, 145-146, 150, 168
Ավանեսով - 402
Ավդիև Մ. – 424
Ավետիսյան Հ. – 57, 131-132, 135, 152, 191, 202, 209, 234, 346
Արամ – 210
Արամյանց – 190
Արծրունի Վահե – 429
Աֆանասև Գ. – 456

**Բ**

Բաբալյան Արտաշես – 276
Բահաեդդին Շաքիր բեյ – 140, 225
Բամմատով Հայդար բեյ – 135
Բայբուրդյան Վահան – 70
Բարակոզյան Ա. – 424
Բերբերյան Հ. – 342, 348
Բերբերյան Ռ. – 418-419
Բերնստորֆ Իոհան – 337, 345, 372373, 377, 382
Բիչ Լ. – 406
Բորյան Բագրատ – 221
Բունիաթյան Մ. – 46, 342, 347, 388

**Գ**

Գամազով Հ. – 429
Գեգեչկորի Ե. – 35, 49, 94, 97, 99, 101-103, 112, 150, 423
Գեղևանով – 96
Գեյման Գ. – 415
Գեորգաձե Գ. – 320
Գևորգ Ե կաթողիկոս – 162
Գիրչենկո Վլադիմիր – 447-449
Գյոզալյան Տիգրան – 268
Գյոպտերտ Հ. – 222, 380
Գուչկով Ա. – 407
Գվազավա Գ. – 81-82
Գրիգորյան Ռ. – 26
Գրիգորյան Ս. – 398

Գրինֆիլդ Ջեյմս – 347

**Դ**

Դարբինյան Ռուբեն (Չիլին-գարյան Արտաշես) – 398, 400, 416
Դեմիրխանով Զ. – 135
Դեմչենկո – 407
Դենիկին Ա. Ի. – 33, 318, 395, 400, 413-414, 416, 418, 423, 426, 430, 433-434, 437-438, 440-442, 459
Դորոշենկո Դմիտրի – 447, 449
Դուրնով – 321
Դրագոմիրով Ա. – 405, 413-414, 422, 430, 435-439

**Ե**

Ենոքյան Ա. – 126
Եսայան Ա. – 111, 233
Եվանգուլյան Լևոն – 259, 266
Երզնկյան Ա. – 117

**Զ**

Զավեն Տիգրան – 370
Զավրիև Հակոբ – 401-402, 454
Զաքարյան Պ. – 289
Զինկևիչ Մ. – 427, 431
Զոհրաբյան Է. – 146, 277
Զոհրապ Գրիգոր – 142
Զորին – 428
Զուբյան Դ. – 289
Զուրաբյան Ա. – 346, 350

**Է**

Էմին բեյ – 383
Էնվեր փաշա – 42, 132-133, 142, 220, 343-344, 354, 358-362

**Թ**

Թալեաթ փաշա – 132, 187, 221, 224, 227, 341, 354-359, 374-375
Թախտաչյան Ֆ. – 226, 342, 350
Թերֆիլատիս – 52
Թեֆիկ Սելիմ – 134
Թումանյան Միքայել – 35, 46, 56, 265
Թումանով (Թումանյան) Լ. – 115, 424,

**Ժ**

Ժորդանիա Նոյ – 169, 174, 261, 317-318

**Ի**

Իզվոլսկի Ա. – 415
Ինգորավա Յ. – 85
Իոֆֆե Ադոլֆ – 352, 403
Իսահակյան Ավետիք – 222, 224, 347
Իսմայիլ Համի բեյ – 68
Իրազեկ Յ. – 118, 127, 137
Լ
Լասխիշվիլի Գ. – 72-74, 80, 83
Լեբեդև Վ. – 415
Լեբեդինսկին Ե. – 46-47, 55
Լենին – 33, 400-401
Լեո – 25, 85, 202, 324, 327
Լեսլի (կոմս Բիլինբրիչ) – 405, 437-439

Լեփսիուս Յ. – 79, 372
Լիսիցյան Լ. – 342
Լյուդենդորֆ Էրիխ – 129, 343
Լոմիզե Միքայել Քրիստափորի – 445-446, 449-450, 457
Լուկոմսկի Ա. – 412, 415, 437

**Խ**

Խազիզյան Օ. – 457
Խաչատրյան Ա. – 197, 199, 219, 329, 339, 386
Խաչատրյան Կ. Հ. – 183, 239
Խառլամով Վ. – 23
Խաս-Մամեդով – 81
Խատիսյան (Խատիսով) Ալեքսանդր – 24, 28, 30, 42, 44, 46, 51, 55, 57, 60, 65-66, 68, 71-72, 77-79, 82-83, 86, 89, 93-94, 96, 102-104, 106, 113, 117-118, 127, 130-131, 134, 139-142, 151, 155-158,, 161, 163, 165, 169, 174-175, 179, 182-183, 186-187, 190, 200, 203-205, 207-208, 210, 215, 217-218, 220, 226-228, 230, 232-233, 239, 243-244, 246-247, 249, 252, 309, 317, 329, 337, 339, 341-342, 345, 349, 351, 354-358, 361, 363-364, 366-370, 372, 383-385, 391-392, 455-456
Խատիսյան Գ. – 342
Խոմյակով Ն. – 407
Խոնդկարյան Արշամ – 112, 296

**Ծ**

Ծերեթելի Ի. – 74-75, 94, 97, 99, 318-319

**Կ**

Կալեդին – 412
Կամենեւ – 402
Կարախան Լ. – 47
Կարճիկյան Խ. – 35, 64, 74, 101, 107-109, 164, 185, 207, 212, 247, 317-318
Կիրակոսյան Ջ. Ս. – 48, 236
Կիրիմյան Ա. – 26
Կլեմանսո Ժորժ – 389-391
Կոլչակ Ա. – 33, 395, 462
Կորգանյան (Կորգանով) Գ. – 210, 342, 355, 388
Կորիտին – 423
Կրասկովսկի Ժան – 460

**Հ**

Հալիլ բեյ – 134, 139-140, 142-143, 145, 148-152, 155-158, 162, 164-167, 171-172, 177-180, 182, 190, 200, 203-204, 206-207, 218, 226, 228, 230-231, 233, 241, 320, 341, 354, 363-365
Հախվերդյան (Հախվերդով) Հովհ. – 247, 317, 429, 432-433, 436
Հակոբյան Ս. – 401
Հակոբյան Սարգիս (Նազարյան Լիպարիտ) – 402, 400
Համի բեյ – 391

Հայդարով Ի. – 72-73
Հայրունի Ա. – 131, 343, 379, 382
Հաջինսկի Մ. – 64, 81, 134
Հարությունյան Ա. – 342
Հարությունյան Մ. – 100, 117
Հիւսէին Ճահիտ պէյ - 351
Հովհաննիսյան Ռիչարդ – 402
Հովսեփյան – 429
Հուսեյին բեյ – 370
Հուսեյն Ռաուֆ բեյ – 54-55, 57-58, 60-62, 67-72, 76, 87-89, 94-95, 103

## Ձ

Ձամոյան (Ձամոն) Գրիգոր – 398, 403-404, 406-407, 409-410, 423, 453-457, 459-462

## Ղ

Ղազիյան Ա. – 316

## Մ

Մալխազով (Մալխասյան) Ա. – 266, 417, 424
Մակարենկո Ա. – 415
Մակլակով Վ. – 415
Մամիկոնյան Ս. – 121, 285, 299
Մանուկյան Ա. – 191, 247, 449
Մարքիզ Բալավաչինի – 351
Մդիվանի Ս. – 96, 260
Մելիք-Ղարագյոզյան Գևորգ – 254, 443-444
Մելիքյան Վ. Հ. – 23, 35, 37-38, 114, 299
Մելքոնյան Աշոտ – 205, 318
Մեհմեդ Վեհիբ փաշա – 37, 42-44, 49, 53
Մեհմեդ-Ալի փաշա – 226
Մեհտին Մ. – 74
Միլյուկով Պ. – 407, 409, 410, 416
Միխայիլ Ալեքսեև – 412
Միկոյան Ա. – 27
Միհրբախ – 116, 135
Մինախորյան Վահան –154, 165-166
Միրզայան Տ. – 342
Միրզոյան Ս. – 316
Մխիթարյան Ա. – 29, 298
Մյուլման Կարլ – 344
Մուխթար բեյ – 348, 355, 363, 387

## Ն

Նազարբեկյան Թ. – 39, 184, 189, 191, 210, 212
Նազարյան Լ. – 342, 400, 402
Նասրեդդին բեյ – 134
Նաքի Քեյքուրուն – 172
Նեսիմի բեյ – 354, 363, 368
Նեստորով Ա. – 415
Ներատով Ն. – 407
Նիկոլաձե Ն. – 134
Նովգորոդցև Պ. – 416
Նովիկով Ի. – 407
Նուրի փաշա – 133

## Շ

Շահբազյան – 342, 348
Շահխաթունյան (Շահխատունի) Ա. – 30

Շահումյան Ստեփան – 172, 198
Շանթ Լևոն – 39, 40, 333
Շատիլով – 430
Շեֆքի փաշա – 212, 254
Շուբերսկի Է. – 415
Շուլգին Վ. – 407, 413, 415

Չ

Չալխուշյան Գրիգոր – 285, 418, 422, 429
Չեխովսկի Վլադիմիր – 459-460
Չիլինգարեան – 402
Չիչերին Գեորգի – 135
Չխենկելի Ակակի – 116-117, 127, 130, 134, 145, 148-151, 155, 158, 162, 166-168, 171, 174, 319
Չումբաձե Ա. – 260

Պ

Պապաջանյան (Պապաջանով) Միքայել – 23, 106-107, 134, 165, 176, 180, 190, 200, 203, 207, 220, 230, 246, 341, 347, 363-364, 366
Պեյլերյան Ա. – 334
Պետրոսյան Գեղամ – 120, 181, 192, 201, 228, 246, 256, 266, 284, 301, 308, 338, 361, 406, 410, 443
Պետրոսյան Մ. – 268
Պերկերզև Պ. – 23
Պողոս Նուբար փաշա – 195, 389-392
Պողոսյան Վ. – 334
Պոպով Մակար Բոգդանի – 445
Պրժևալսկի Մ. – 37

Ջ

Ջամալյան Արշակ – 259, 261, 263-264, 268, 274, 277-278, 280-281, 284, 307, 310, 342, 387, 404, 406, 423-424, 433, 435, 440-441, 443-445, 454, 456
Ջանփոլադ բեյ – 368
Ջաֆարով Մ. – 23
Ջեմալ փաշա – 124-125, 135, 138, 140-142, 354, 363
Ջունկովսկի – 321

Ռ

Ռակովսկի – 453-454
Ռամիշվիլի Նոյ – 94, 101, 112, 261, 263, 317
Ռասուլ-Զադե Մ. – 134
Ռիխիլաձե – 134
Ռոմանովսկի – 149
Ռոմանովսկի Ի. – 436
Ռուբենաու – 321
Ռուդնև – 407

Ս

Սազոնով Ս. – 415
Սաթունյան Նիկոլայ – 424
Սահակյան Ա. – 117
Սահակյան Ավետիք (հայր Աբրահամ) – 287-289, 298
Սահակյան Արմենակ – 252

Սահակյան Վաղարշակ – 268
Սասունի Կ. – 24, 468
Սարգսյան Ե. – 234, 336, 344
Սիլիկով – 429
Սիմոնյան Ա. – 172
Սիմոնյան Զ. – 342
Սիմոնյան Հր. – 199, 217, 230, 237, 427
Սիրին Ս. – 423-424
Սկորոպադսկի – 458
Սյուրմելի Ս. – 163
Սուլթանով – 153
Սուքիասյան Հ. Կ. – 183, 239
Ստեպանով Վ. – 415
Ստեփանյան Գ. – 198
Սրվանձտյան Համազասպ – 198

Վ

Վաղարշյան Արթուր – 289
Վարդգես (Թուրքիայի խորհրդարանի անդամ) – 357
Վեքիլով – 429
Վինավեր Մ. – 415
Վիննիչենկո – 458
Վիշինսկի Ե. – 38
Վիրաբյան Ա. Ս. – 26, 183, 239, 249
Վլասև – 432-435, 437-438
Վրանգել Պ. – 414
Վրացյան Սիմոն – 110, 153, 183, 1491-192, 250, 276, 285, 420

Տ

Տեր-Գաբրիելյան Սահակ – 401
Տեր-Խաչատրյան Գր. – 289
Տեր-Հակոբյան Ալեքսանդր – 254, 269
Տեր-Հարությունյանց Գեղամ – 265
Տեր-Ղազարյան Գ. – 35
Տեր-Մինասյան Ռուբեն – 33, 37, 40, 46, 284, 400, 429
Տերյան Վահան – 402
Տեր-Պետրոսյան Գ. – 247
Տիգրանյան Սիրեկան – 249, 253-254, 266, 405-407, 410, 439-440, 461
Տիտով Ա. – 407
Տոնյանց Աշոտ – 406, 423, 445, 455, 457, 461
Տրետյակով Ս. – 407
Տրուբեցկոյ Գ. – 416

Փ

Փիշնամազզադե Ախունդ մոլլա Մուհամմեդ – 92
Փիրումյան – 429

Ք

Քաջազնունի Հովհաննես (Իգիթխանյան Ռուբեն) – 112, 114-115, 117, 138, 151-152, 238-240, 242, 244, 246-248, 252, 258-260, 264, 268, 273-274, 280-285, 287-289, 291, 293-294, 296, 299-302, 304, 307-309, 311-313, 315-317, 330, 350, 364, 424, 434
Քիշմիշև Ի. – 266
Քոչարյան Հ. – 342, 366
Քոչարյան Հակոբ – 348

Քոլշեֆ – 351

О
Օդիշելիձե – 43, 47, 169
Օդիշիլիձե Ի. – 47, 117
Օզանյան Անդրանիկ – 199, 217, 230
Օհանջանյան Հ. – 35, 134, 165, 221, 249-250, 269, 330, 346-347, 350, 372, 380, 403, 454-455

Ֆ
Ֆոն Լոսով Օ. – 135, 155-156, 159-161, 164, 165, 167-168, 175, 319, 330, 347
Ֆոն Շուլենբուրգ Վ. – 135
Ֆոն Վեզենդոկ Օ. – 135
Ֆոն Տիքով – 372

Б
Биленбричъ Юрий – 438

В
Волков С. – 414

Д
Деникин А. И. – 426, 437-438

З
Завриев Д. – 234, 336

Л
Людендорф Э. – 129, 133, 343

М
Микаелян В. – 349
Милюков П. В. – 407

П
Петросян Г. – 230, 243, 347
Петрушева Л. И. – 416
Пипия Г. – 132

С
Семен С. – 427
Ставроский А. – 100
Субтельный Орест – 459

Т
Тевотросян А. Р. – 292
Трукан Г. А. – 412-413, 416
Туманян М. – 224, 335, 391, 393

A
Atatürk – 159, 163, 175

L
Leipzig – 344
Lepsius Johannes – 160

M
Mühlmann C. – 344

N
Naki Keykurun – 172, 175

P
Potsdam – 160

S
Serpil Sürmeli – 159, 163, 175

# ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ


Ա
Ադանա – 360
Ադրբեջան – 91, 132, 137, 148, 153, 172, 190, 193, 197, 218, 224, 235, 276, 294, 308, 315-316, 318, 322-323, 325-326, 331-332, 334-335, 348, 364-365, 368, 371, 380, 394, 396, 406, 409, 417, 436-437, 447
Աթենք – 24, 348
Ալագյազի գագաթ – 211
Ալագյազի լանջեր – 208
Ալաշկերտ – 77
Ալեքսանդրապոլ – 27, 41, 51, 106-107, 110, 132, 152, 156-157, 159-160, 162, 164-166, 189, 210, 219, 234, 304, 312, 332, 336, 374
Ալեքսանդրապոլի գավառ – 178, 202, 303, 318
Ալեքսանդրեթ – 72
Ախալցխա – 36, 157, 160, 205, 376
Ախալքալաք – 37, 114, 157, 159, 205, 209, 211, 213, 275, 303, 318, 370
Ախուրիի շրջան – 205
Աղ-Բուլաղ կայարան – 211
Աղդաշի շրջան – 92
Ամերիկա – 239, 279, 284, 389
Անապա – 435
Անատոլիա – 285
Անատոլուի նահանգներ – 227
Անգլիա – 72, 188, 226, 308, 311, 343, 359, 369
Անդրկասպյան մարզեր – 440
Անդրկովկաս – 35, 37, 51-76, 78-106, 108-122, 124-130, 132-141, 143-161, 163-164, 166-173, 175-178, 180-187, 190, 197, 201, 204, 216, 234, 237, 245, 251, 256, 275-276, 290, 294, 304, 309, 312, 315-316, 322-323, 325-328, 330-332, 334, 338, 343-345, 350, 352, 355, 363, 364, 377-378, 408-410, 417-418, 424-426, 430-431,, 442, 447
Անդրկովկասի Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետություն – 115
Անդրկովկասյան Թաթարստան – 316
Աշտարակ – 209
Ապարան – 208
Աստրախան – 453
Ավստրիա – 319, 435
Ավստրո-Հունգարիա – 44, 47, 95, 241, 244, 323 328, 337-339, 353, 366-367
Արագած – 152
Արարատ լեռ – 48
Արարատյան դաշտավայր – 162, 178, 202, 309, 311

«Արարատյան» հանրապետություն – 196
Արաքս – 303, 311
Արդահան – 36, 48-49, 53, 56, 58, 61, 63-65, 67, 74, 86, 89-90, 93, 118, 124, 126, 144, 148, 163, 178, 325, 338, 345, 367
Արդվինի շրջան – 89, 91
Արեշ – 278, 279
Արևելյան Անատոլիա (տե՛ս Արևմտյան Հայաստան) – 45, 48, 67, 78, 216-217, 303-304
Արևելյան Հայաստան – 11, 39, 41, 48, 63, 68, 130, 176, 182, 194-195, 216, 234, 237, 272, 303, 331-332
Արևմտյան Հայաստան – 78-83, 125, 128, 131, 141, 182, 196-197, 201, 216-217, 233, 303, 324, 325, 354, 398, 449
Արմավիր – 398
Արցախ – 370-371, 392
Արփա – 211
Արփաչայ – 85, 162
Ափրիկէ – 213

Բ

Բաթում – 2, 11, 36, 41, 48-49, 53-54, 56, 58, 61-65, 67, 74, 84-87, 89-90, 92-93, 96-98, 102-104, 111, 118-119, 124, 126-128, 130, 133-138, 140, 142-144, 147-148, 150, 153-154, 160, 162-171, 173-174, 176-180, 182, 186, 190-191, 197-201, 203, 205-206, 210-212, 217, 219, 220, 222, 224-226, 229-230, 233, 235, 237-238, 240-241, 244-245, 258, 295, 297-299, 303-304, 306-307, 309-310, 316-318, 324-325, 328, 334, 336-338, 341, 345-346, 361, 363-367, 375-376, 380, 385, 395, 432, 435-436, 440-441
Բալկաններ – 87
Բայազետի սանջակ – 77
Բաշ-Ապարան – 167, 179, 206, 327
Բասարագէչար - 153
Բատմանսու – 77
Բաքու – 100, 129, 132-133, 163, 172, 179, 198-200, 209-210, 214-215, 235-236, 311, 317, 329-330
Բաքվի նահանգ – 128-129, 132-133, 156, 159, 176, 199, 234, 311, 333
Բելոռուսիա – 47
Բեյրութ – 276
Բեռլին – 131, 147, 155, 159, 162, 175, 221-222, 330-334, 340-347, 350, 352-353, 368, 373-375, 377, 380, 382, 386, 391, 403, 443, 454-455
Բիթլիսի վիլայեթ – 77
Բոստոն – 42, 51, 140, 142, 154, 160-161, 204, 233, 277, 281, 285, 307, 310, 318-319, 329, 340, 351, 354, 357, 359-360,

365, 387, 398, 403, 416, 419, 428
Բորչալու – 213, 370
Բորչալուի գավառ – 37, 209, 317-318
Բուլղարիա – 44, 47, 64, 95, 241, 244, 323, 353, 457
Բրեստ – 47, 65, 107, 109, 345
Բրեստ-Լիտովսկ – 47, 49, 56, 59, 61, 67, 88, 90-91, 93-95, 98, 99-101, 104-106, 108, 110, 116-118, 122, 124-128, 133, 148-152, 158-159, 161-162, 175 178-179, 198, 201, 204, 228, 242, 303, 325, 331, 335-338, 343, 345-346, 367, 373, 389

Գ
Գահիրե – 277
Գանձակ (Գյանջա) – 37, 172, 183, 213, 275
Գանձակի նահանգ – 36
Գերմանիա –44, 47, 59, 95, 113, 128-133, 135, 144-147, 154, 158-162, 165, 168-171, 175-176, 188, 199-200, 204, 220-222, 224, 226, 234, 241, 244, 308, 312-313, 317, 319-321, 323, 325-326, 328, 330-332, 335, 337-340, 343-346, 350, 352-353, 362, 366-367, 371-375, 377-382, 389-391, 394, 435
Գորի – 36

Դ
Դաղստան – 36, 135
Դանիա – 94, 244, 353
Դարալագյազ – 234, 336
Դիլիջան – 199, 211-212, 217
Դուշեթ – 36

Ե
Ելիզավետպոլ – 312, 316
Եկատերինոդար (Կրասնոդար) – 397-398, 406, 409-410, 413, 421, 423-425, 431-432, 434-436, 438-441
Եկատերինոսլավ – 459
Եվրոպա – 87, 239, 180, 284
Երևան – 153, 187, 189, 199, 202, 207-208, 210, 212, 225, 231, 234, 239-240, 243, 246, 259-260, 268, 271, 275, 277, 287, 303, 307, 330, 350, 405-406, 412, 427-428, 431, 435-440, 452
Երևանի գավառ – 234, 303
Երևանի նահանգ – 36, 183-184, 208-209, 312, 317, 428
Երզնկա – 38-39, 41-43, 48, 163

Զ
Զանգեզուր – 213, 330, 370
Զանգիբասար – 193
Զաքաթալա – 36
Զեքարի շրջան – 205

Է
Էջմիածին – 153, 157, 178, 189, 202, 211, 231

Էջմիածնի գավառ – 152, 178, 202, 336
Էրզրումի վիլայեթ – 77
Էրիվան – 425, 433

Թ
Թավրիզ – 157
Թելավ – 36
Թեհրան – 33
Թերեք – 396-397, 440
Թիանեթ – 36
Թիֆլիս – 23, 26-28, 31, 34, 36-37, 42-43, 45, 49, 72-73, 76, 89, 92-93, 95, 97, 101-104, 107, 110, 113, 117, 120, 123, 134, 143, 147, 152, 159-160, 169, 170, 173-174, 176, 178, 180, 182-183, 187, 190-191, 200, 205, 207, 209, 212, 231, 233, 238-241, 244, 246-247, 251, 258-262, 264-268, 275, 279, 287, 289, 317, 319, 321, 346-347, 377, 382, 398, 409, 420, 423, 427, 431, 440, 443, 445, 448, 450, 453
Թուրքահայաստան – 70, 80, 195
Թուրքիա – 10-11, 28, 35, 40-42, 44, 45-51, 56-59, 61-64, 67-72, 74-84, 86-90, 92-93, 97-98, 100-101, 104, 107, 109-113, 116-118, 122, 124-133, 135, 138, 141-145, 147-149, 151-154, 158-159, 161-163, 165, 172, 174-179, 181, 186-187, 190, 193, 197-198, 200-201, 205-206, 211-212, 214-218, 220, 222, 224-226, 228-230, 232-235, 237, 240-241, 243-245, 258, 274, 288-295, 297, 299-300, 302-306, 308-309, 311-318, 320-326, 328-334, 336, 338-339, 341, 343-344, 346, 348, 350, 352-355, 358-359, 362-371, 377, 379-384, 386-387, 391, 394, 396, 432
Թուրքիստան – 213, 367

Ի
Իգդիր – 277
Իշխանաց կղզիներ – 410
Իսպանիա – 244, 353
Իտալիա – 457
Իրան – 127-128, 132, 153, 157, 159, 168, 166, 244, 311-312, 325, 330, 353
Իրանական Ադրբեջան – 312

Լ
Լեհաստան – 408
Լիտվա – 47
Լոնդոն – 415
Լոռի – 234

Խ
Խաթունարխ – 307
Խարկով – 246, 444, 450, 457
Խորհրդային Ռուսաստան – 11, 47-48, 59, 61, 133, 135,

229, 323, 335, 352, 394-397, 400-401, 404-405, 411, 453

Կ

Կ.Պոլիս – 28, 334
Կաղզվան – 86, 234, 303
Կարագյոզներ – 204
Կարին (Էրզրում) – 46-47, 48, 54, 64, 77, 163, 189, 219, 304, 389
Կարյագինո – 37
Կարս – 48-49, 53, 58, 62-65, 74, 84-86, 88, 90-91, 93-94, 103, 106-108, 117-119, 124, 126-128, 132, 144, 148, 150, 152, 159-160, 163, 178, 189, 193, 202, 210, 213, 219, 234, 303-304, 325, 330, 332, 338, 345, 360, 367
Կարսի նահանգ – 36, 56, 61, 64, 67, 89, 91, 110
Կենտրոնական Անդրկովկաս – 312
Կենտրոնական Ասիա – 153, 325, 371
Կիև – 246, 398, 404, 407, 423, 444-445, 449-450, 452-459
Կոստանդնուպոլիս – 52, 54, 64, 72, 87, 100, 131-132, 144, 158-159, 204, 206, 208, 220, 222, 225-226, 241-242, 244, 246, 295, 301, 323, 328, 332-335, 337-341, 344-345, 347-353, 358, 361-365, 368, 370-373, 375-376, 380, 382-384, 386, 388, 391-392, 455-456
Կովկաս – 22-24, 33-34, 38, 40-42, 47-48, 60-62, 63-64, 65-66, 102-108, 135, 138-139, 148, 159-160, 163, 172, 180-181, 191, 197, 200, 205, 214, 216, 222, 226-227, 231, 241, 315, 318, 329, 334, 335, 341, 343, 349, 351, 355, 359, 364, 367-368, 371, 389-390, 396-399, 410-417, 426, 433, 435
Կուբան –396-397, 406, 412, 416, 422, 425, 437, 440
Կուբանի երկրամաս – 397, 405-406, 414, 416-418, 423-425
Կուռլանդիա – 47
Կուրի հովիտ – 213

Հ

Համամլու – 209
Հայաստան – 38-39, 41, 43, 45, 48, 63, 67-72, 76-83, 87, 125, 128, 130-131, 141, 147, 152, 159-160, 165, 174-176, 178-782, 191-197, 199-203, 205-206, 208-209, 211, 213-217, 223-228, 230-241, 246, 248, 251, 255-264, 267, 269-270, 272-274, 276, 278-289, 292, 294-296, 298-299, 302-303, 306, 309-319, 321, 323-325, 330-335, 341-342, 344-345, 349, 351, 354,

360-361, 364-365, 368-369, 371-375, 377-384, 388-389, 394-396, 398-401, 404, 406-407, 410, 417, 419-422, 425-428, 430, 434-436, 438, 442-449, 451-454, 456-457, 460-463
Հայաստանի Հանրապետություն – 1, 2, 9-13, 192-196, 207, 226, 228-239, 242-250, 253-261, 263-274, 277, 281-282, 284-285, 287-288, 290, 299-302, 304-311, 314-316, 321-324, 330, 332, 336-337, 341-342, 345, 347, 349-350, 353, 362, 364-365, 371, 379-380, 385, 387, 391-407, 410-412, 417-427, 429-437, 439-445, 447, 449, 451-463
Հայկական Տավրոս – 48
Հարավային Կովկաս – 92, 197, 205
Հյուսիսային Իրան – 132, 153, 311
Հյուսիսային Կովկաս – 135, 200, 276, 368, 346-348, 433, 435,
Հյուսիսային Կովկասի Լեռնականների Հանրապետություն – 335
Հոլանդիա – 244, 353

Ղ
Ղազախ – 37, 199, 211, 213, 318
Ղամարլու – 277
Ղարաբաղ (Արցախ) – 330, 153, 275, 278-279, 370
Ղարաքիլիսա – 162, 167, 179, 189, 206-207, 212, 218-219, 303, 327
Ղարաքիլիսայի գավառ – 234
Ղուբան – 422
Ղրիմ – 440

Ճ
Ճիաթուրի – 129-130

Մ
Մակու – 367
Մարմարա ծով – 410
Մերձավոր Արևելք – 128, 330
Միջագետք – 312, 374
Միջին Ասիա – 128, 200, 214, 329
Մոլդովա – 450
Մոսկվա – 31, 116, 135, 216, 222, 371, 400-401, 407, 453-454,
Մուշ – 48, 77
Մուշի սանջակ – 77

Յ
Յասսի – 405, 407-410

Յ
Նախիջևան – 152, 193, 234, 275, 330
Նեջիրլու – 307
Նիկոլաև – 450
Նոթանեբ – 205, 207, 210
Նովոչերկասկ – 412
Նովոռոսիյսկ – 435-436
Նոր Բայազետ – 234

Նոր Նախիջևան – 31, 421
Նուխի – 278, 279

Շ
Շատախ – 278, 429
Շարուր – 336, 152, 193, 211, 213, 234, 275, 280
Շիրակի դաշտավայր – 178, 202, 303
Շուշի – 37
Շվեդիա – 344, 353
Շվեյցարիա – 457

Չ
Չինաստան – 325, 371
Չոբանքեարա – 307

Պ
Պարսկական Ատրպատական – 367
Պարսկաստան – 209, 213, 325, 351, 353, 362, 374
Պետրոգրադ – 30-31, 412
Պուքրեշ – 394

Ջ
Ջալալօղլի – 303
Ջաջուռ – 162
Ջավախք – 205, 318
Ջիվանշիր – 37
Ջուլֆա – 132, 152, 156-157, 159-160, 162, 164, 166, 209, 211, 219, 234, 312, 330, 332
Ջուղա – 311

Ռ
Ռոստով – 31, 421, 444
Ռումինիա – 129, 405
Ռուսաստան – 72, 344, 172, 398, 426
Ռուսաստանի Դաշնություն – 434

Ս
Սարդարապատ – 167, 179-180, 206, 218-219, 277, 307, 310, 327, 419
Սարիղամիշ – 90, 163, 234
Սև ծով – 36, 38, 64
Սևանա լիճ – 152, 202
Սիբիր – 462
Սղնաղի – 36
Սյունիք – 330, 370-371, 392
Սոչի – 421
Սուխում – 36
Սուրմալու – 336, 48, 52, 157, 193, 210, 234, 275, 303, 330
Ստամբուլ – 91, 116

Վ
Վան – 77, 213, 389
Վանա լիճ – 38, 77
Վարշավա – 410
Վեդի – 193
Վեդի-Բասարը – 280
Վիեննա – 112, 191, 340-341, 345, 347
Վլադիկավկազ – 398
Վորոնցովկա – 205
Վրաստան – 39, 79, 94, 102, 112, 129-130, 132-134, 143-147, 154, 160-161, 165,

168-171, 174-177, 182, 186, 190-191, 197, 204-205, 209, 223-224, 226, 234, 258-267, 270, 274, 276, 294, 308, 315-323, 325, 330-335, 344-345, 348, 364-365, 368-369, 373-375, 377-380, 382, 387, 394, 396, 406, 409-410, 417, 421-425, 433, 436-437, 440-441, 445, 447, 454

Տ

Տաճկաստան – 64, 108, 221, 288, 349, 404

Տրապիզոն – 51-54, 56, 59-60, 64-67, 70-71, 7377, 83-84, 87, 92, 97,101, 103-104, 106, 117, 126-127, 130, 137-138, 141, 143, 148-150, 152, 154-155, 181, 197, 222, 304, 334, 338, 359, 363, 387

ՈՒ

Ուկրաինա – 26, 47, 246, 256, 406, 443-463

Ուրմիա լիճ – 39

Ուրֆա (Կիլիկիա) – 72, 360

Փ

Փամբակ – 114, 318

Փարիզ – 25, 38, 112, 126, 192-193, 195, 415,

Փոթի – 146-147, 168, 171, 175, 317, 319-320, 436

Քութայիս – 36, 102, 143, 152, 178

Օ

Օդեսա – 246, 450, 457, 461-462

Օլթի – 36, 86

Օսմանյան Թուրքիա – 10-11, 46, 48, 51, 84, 92, 93, 98, 111, 116, 117-118, 128, 167, 172, 174-175, 179, 181, 187, 190, 197-198, 200-201, 211-215, 218-220, 222, 224-226, 228-230, 233-235, 237, 240, 243245, 274, 299-300, 302-306, 309, 312, 314-315, 320-326, 328-334, 338, 341, 343-344, 348, 350, 352-355, 358, 362, 369, 371, 377, 379, 381, 384, 387, 391, 394, 396

Օսմանյան կայսրություն – 37, 48, 54, 57-58, 62, 67, 69, 82, 88, 125, 152, 205, 217, 219, 228-232, 235, 241, 245, 258, 294, 310, 324, 328, 329, 332, 334, 336-337, 339, 343, 348, 352-353, 355-356, 354, 361-362, 364, 367, 370, 379, 386

Ֆ

Ֆեդերատիվ Ռուսաստան – 417

Ֆինլանդիա – 408

Ֆրանսիա – 72, 188, 226, 390

Ֆոն Տիքով – 372

Г
Грузия – 45, 52, 55, 67, 71, 72, 74, 84, 88, 95, 98, 99, 100, 101, 115, 116, 118, 149, 155, 166, 171, 423

З
Закавказье – 15-16, 45, 55, 67, 71-72, 74, 48, 84, 88, 95, 97-98, 100, 101, 115-116, 118, 132, 149, 155, 166, 171, 243, 423

К
Киев – 459

Л
Ленинград – 100

М
Минск – 437
Москва – 100, 129, 132, 407, 412, 414, 416, 423, 426, 438

Р
Республика Армения – 3, 4, 14-17, 224, 230, 321, 347
Российская империя – 437, 438
Российская Федерация – 397
Россия – 416, 418

Т
Тбилиси – 132, 234, 336,
Турции – 16, 234, 336, 346, 379

У
Украина – 459

Ш
Шамхор – 427

A
Ankara – 159, 163, 175
Armenien – 160
Azerbaycan – 92, 172, 175
de I´Arménie – 126, 200

D
Deuschland – 160

E
East and North Africa – 328

I
İstanbul – 92, 172, 175

P
Paris – 52

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանի փոխարեն ..... 9
Вместо предисловия ..... 14
Instead of a Preface ..... 18

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ ..... 22
1. Հայոց ազգային ժողովի և Հայոց ազգային խորհրդի ստեղծումը (1917 թ. փետրվար-հոկտեմբեր) ..... 22
2. Անդրկովկասի ներքին և արտաքին քաղաքական դրությունը (1917 թ. հոկտեմբեր – 1918 թ. փետրվար) ..... 33

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԹՈՒՐՔ-ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՐԱՊԻԶՈՆՈՒՄ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ ..... 50
1. Տրապիզոնի բանակցություններում թուրքերի կողմից Անդրկովկասն անկախ հռչակելու շարժառիթներն ու նպատակները. Հայկական հարցի արծարծումները ..... 50
2. Թուրքիային տարածքային զիջումներ անելու հարցը Տրապիզոնի բանակցություններում ..... 84
3. Պատերազ և հաշտության հարցը Ալեքսանդրապոլի արտակարգ խորհրդակցությունում. Անդրկովկասի անկախացումը ..... 104

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԲԱԹՈՒՄՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ. ԵՐԵՔ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ..... 124
1. Անդրկովկասի արտաքին քաղաքական դրությունը Բաթումի դիվանագիտական բանակցությունների նախօրեին ..... 124
2. Անդրկովկասյան պետության կազմալուծումը. երեք անկախ հանրապետությունների ստեղծումը (1918 թ. մայիս) ..... 134

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ. ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ. ԲԱԹՈՒՄԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ..... 174
1. Բաթումի բանակցությունները. Հայաստանի անկախացումը ..... 174
2. 1918 թ. հունիսի 3-ի Բաթումի պարտավորագիրը, հունիսի 4-ի հաշտության դաշնագիրը. Թուրքիայի կողմից Հայոց անկախ պետության ճանաչման շարժառիթներն ու նպատակները ..... 197

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՀԱՅՈՑ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՈՒՄԸ. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ..... 238
1. Արտաքին գործերի նախարարության ստեղծումը ..... 238

2. Արտասահմանյան մշտական դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների հիմնադրումը ..... 255

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1918 Թ. ՀՈՒՆԻՍ-ՆՈՅԵՄԲԵՐ) ..... 272

1. Հայաստանի ներքին և արտաքին քաղաքական դրությունը ..... 272

2. Հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու ժամանակավոր կառավարության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները ..... 287

3. Հայաստանի հարաբերությունները Ադրբեջանի և Վրաստանի հետ ..... 315

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՌՅԱԿ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ..... 323

1. Քառյակ միության պետությունների շահերի բախումը Անդրկովկասում և իրադրությունը Հայաստանում. Կոստանդնուպոլսում հրավիրվելիք խորհրդաժողովի ձախողման դրդապատճառները ..... 323

2. Հայկական պատվիրակությունների բանակցային գործընթացները Կոստանդնուպոլսում, Բեռլինում և Վիեննայում ..... 341

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ (ՀԱԿԱԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԵՏ ..... 394
1. Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու պատմական անհրաժեշտությունը: Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու հանրապետության փորձերը ..... 394
2. Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային (հակաբոլշևիկյան) պետական կազմավորումների հետ հարաբերություններ հաստատելու առաջին քայլերը: Կամավորական բանակի և դրան կից «Հատուկ խորհրդակցության» ներկայացուցիչը պաշտոնական Երևանում ..... 412
3. Հարաբերությունները Ուկրաինայի հետ ..... 443
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ ..... 464
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ ..... 471

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1918-1920 ԹԹ.

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ГЕГАМ ПЕТРОСЯН

# МЕЖДУНАРОДНОЕ ПОЛОЖЕНИЕ И ВНЕШНЯЯ ПОЛИТИКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В 1918-1920 ГГ.

КНИГА ПЕРВАЯ

GEGHAM PETROSYAN

# INTERNATIONAL SITUATION AND FOREIGN POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA IN 1918-1920

BOOK ONE

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Հրատ. խմբագրումը՝ Ա. Հովակիմյան

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am

**Գեղամ Հարությունի Պետրոսյան**

*պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերություններ ֆակուլտետի դեկան*

Պրոֆեսոր Գ. Պետրոսյանը հեղինակ է Հայաստանի միջազգային դրության ու արտաքին քաղաքականության (1918-1920 թթ.) ամենաբարդ ու խճճված հիմնահարցերին նվիրված տասը մենագրությունների և շուրջ հարյուր գիտական հոդվածների, որոնց շարքում հիշարժան են հատկապես «Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920 թթ.)» (Եր., 2002), «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.)» (Եր., 2011, ռուս.՝ Եր., 2012) մենագրությունները:

Անվանի գիտնականը ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում երկար տարիներ վարում է մասնագիտական դասընթացներ, նաև ԵՊՀ գործող ՀՀ ԲՈԿ-ի 056 «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն» գիտական հանդեսի գլխավոր խմբագիրը, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում գործող «Ռուսաստանյան հետազոտությունների կենտրոնի» գիտական ղեկավարը: